


ՓԱՆՈՍ
ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ

Կյանքիս հուշերը




ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՍԵԶՅԱՆ
Կյանքիս հուշերը

Հրատարակչություն

ՄԵԼԱԿՈՒԹՅՈՒՆԻ ԿՆՈՒԹՅԱՆ

Երևան 2017



016
7-53
47

9699

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՍԵԶՅԱՆ Կյանքիս հուշերը

Հրատարակչություն

«ԹԵՐԵՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ

Երևան 2017



ԳԼՈՒԿ ԳԼՈՒԿ
ԳԼՈՒԿ ԳԼՈՒԿ
ԳԼՈՒԿ ԳԼՈՒԿ

Հրատարակչություն
«ԹԵՐԵՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ
Երևան 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎ

Հանրային գրադարանի և փոփոխականության կենտրոնի
ՄԱՍԻՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՏԴ 75
ԳՄԴ 85.14
Թ 531

Թերլեմեզյան Փանոս
Թ 531 Կյանքիս հուշերը/ Փ. Թերլեմեզյան;
- Եր.: Տիգրան Մեծ, 2017.- 420 էջ:

*Բնագիրը հրատարակության պատրաստեց,
ատաջաբանը և ծանոթագրությունները գրեց՝*

ԵՐՎԱՆԻ ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Հրատարակիչները խորին շնորհակալություն են հայտնում
Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրինությանը
Փանոս Թերլեմեզյանի հուշերի անտիպ ձեռագիրը
սիրահոժար տրամադրելու և
բարեհաճ համագործակցության համար:

ՀՏԴ 75
ԳՄԴ 85.14

ISSN 978-9959-0-2241-3

Գրքի մասին հարմարեցրած մեջբերումները հարկադրաբար չեն կարող
դրույթի տեղում լինել՝ զգուշանալով մասնավորապես հրատարակչի
պատկերասրահի մասին և հարկադրաբար չեն կարող հանդիսանալ
պատկերասրահի մասին մեջբերումները հարկադրաբար չեն կարող
լինել մեջբերումները հարկադրաբար չեն կարող լինել մեջբերումները
հարկադրաբար չեն կարող լինել մեջբերումները հարկադրաբար չեն կարող
լինել մեջբերումները հարկադրաբար չեն կարող լինել մեջբերումները

ՆԿԱՐԻՉԸ, ԻՐ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԻՐ ՀՈՒՇԵՐԸ

Մեր կորսված հայրենիքն ու մեր կորսված հայրենիքի
կյանքի ժամանակը մնացին գրեթե ում և զանազան
գրվածքներում: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի
սկզբի հայկական կյանքի պատկերը այսօր էլ մնում է թերի ու ան-
կատար: Եվ անավարտ, որովհետև անկատար եղավ ինքը՝ կյան-
քը, դաժանորեն ընդհատված ու սպանված: Դառնաղի է, թե ինչ-
քան քիչ բան մնաց: Խաղաղ կյանքի արձանագրումներ, առօրյա
կյանքի ու կենցաղի առտնին պատմություններ գրեթե չմնացին:
Ինչ որ մնաց՝ մնաց միայն գեղարվեստական ստեղծագործու-
թյուններում՝ վեպերում, վիպակներում, պատմվածքներում...
Մարդիկ չհասցրեցին իրենց կյանքն ապրել, մեծ մասը չհասավ իր
կյանքի նույնիսկ կեսին, ուրեմն՝ էլ ի՞նչ հուշ ու ի՞նչ հիշողություն,
ինչ բան:

Հուշերն ու հիշողությունները գրվեցին հետո, տասնամյակներ
անց, երբ արդեն ոչ երկիրը կար և ոչ իր բնակիչները: Հուշագիրնե-
րը իրենց հուշերում և զանազան այլ նման գրություններում ձգ-
տում-ջանում էին հարություն տալ անցյալին, գոնե իրենց գրու-
թյուններում այլևս անցյալ դարձած երկրում և անցյալ դարձած
ժամանակում ինչ-որ կարճ մի պահ հայտնվելու, այնտեղ լինելու և
այնտեղ ապրելու համար:

Հուշեր և հիշողություններ գրվեցին տասնամյակներ անց, երբ կորստի ցավից ամեն բան փոխում էր տեսքը, ձևը, գույնը, կերպը, նկարագիրը... Ինչքան բան աղոտում էր, ինչքան բան կորած էր-կորչում էր անհետ, և ամեն, ամեն բան այրում էր հուշագրողի էությունը անվերադարձ կորստի կրակով... Եվ այնուամենայնիվ մեզ համար միշտ բանկ է այդ հուշերի ամեն մի հատվածը, ամեն մի տողը, ամեն մի բառը, որովհետև այն մեզ տանում է միացնելու մեր կորսված, մեր միակ հայրենիքին... Անկեղծորեն ու սիրով գրված ամեն մի տողը թվում է, թե վերադարձնում է հեռացող հայրենիքի ներկայությունը, նրա գոյությունը դարձնում առարկայական ու շոշափելի:

Առավել բանկ են այն մարդկանց հուշերը, որոնք անցել են դառն ու ծանր ժամանակների թոհուրոհի միջով և որոնց միջով անցել է իրենց կյանքի ժամանակը: Նրանք իսկապես իրենց ժամանակի վկաներն են, հայկական կյանքի հավերժական ժամանակակիցները, մեր գալիք բոլոր ժամանակների, գալիք բոլոր սերունդների ժամանակակիցները: Նրանցից մեկն էլ մեծ նկարիչ Փանոս Թերլեմեզյանն է, քաջարի մի մարդ, առասպելական մի անձնավորություն, մեր ժողովրդի մեծագույն զավակներից մեկը:

Իր կյանքի վերջին տարիներին, «1938 թվի մի լուրջ հիվանդությունից հետո», երբ նկարչի ձեռքերը այլևս սկսում են դողալ, երբ այլևս չի կարողանում վրձին բռնել, Փանոս Թերլեմեզյանը որոշում է գրի առնել իր հուշերը, ինչպես ինքն է ասում, «փոթորկալից կյանքի, միջավայրի և էպոխայի մտայնության մասին»: Եվ գրի է առել ու խորագրել «Կյանքիս հուշերը»:

Նկարիչը իր հուշերը գրել է 1939-1941 թվականներին, մեր երկրի ու մեր ժողովրդի համար շատ ծանր ժամանակներում: Պատկերացրեք, 1937 թվականից հազիվ մեկ-երկու տարի անց մարդը գրիչ է առնում գրելու իր կորսված հայրենիքի, առհասարակ Արևմտյան Հայաստանի ու մեր ժողովրդի կյանքի ճակատագրական ժամանակների ու ճակատագրական իրադարձությունների մասին: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ էր ունենալ բարոյական բարձր նկարագիր և հոգեկան մեծ արիություն: Նկա-

րիչը, անշուշտ, ուներ այդ հատկությունները, բայց և փորձում է դիվանագետ լինել իր շարադրանքում և ուղղակի հայտարարում է այդ մասին, ասելով՝ «պիտի ջանամ դիտել ժողովրդի շահերի տեսանկյունից ու պիտի աշխատեմ պարուրել մեր ժամանակաշրջանի շունչով»:

Փանոս Թերլեմեզյանի հուշերը անկեղծ, ժողովրդի մարդու հոգով ու սրտով գրված հուշեր են, և լավ է, որ «ժամանակաշրջանի շունչով» շատ քիչ են պարուրված, միայն տեղ-տեղ՝ մեկ-երկու կարգախոսական-գաղափարական նախադասությամբ, մեկ-երկու պահպանիչ-ապահովագրող դարձվածով կամ ձևակերպումով: Մնացյալ ամեն բան ընտիր է:

Ավելի քան յոթանասունհինգ տարի այդ հուշերը մնացել են անտիպ: Այսօր դրանք դրվում են ընթերցողի սեղանին և ամենևին չվախենալով վերամբարձ կամ ճոռոն համարվելուց՝ ես ասում եմ, որ այսօր դրանք ընծայվում են ընթերցողին:

...Ուրեմն՝ 1938 թվականին Փանոս Թերլեմեզյանը ծանր հիվանդանում է: Ապաքինվելուց հետո այլևս չի կարող նկարել՝ ձեռքերը դողում են: Միքելի գործը, որ լցնում էր արվեստագետի օրվա պարապը, իմաստավորում էր կյանքը, դառնում է այլևս անկարելի ու անհնարին: Վրա է հասնում ամենասարսափելին՝ բացարձակ մենակության ահավոր զգացումը:

Մինչ այդ էլ ծերունագարդ նկարիչը մենակ էր ապրում. ապրում էր միայնակ, առանց ընտանիքի: Բայց փոխարենը կար իր գործը, իր նկարչությունը, իր վրձինն ու իր ներկապնակը: Հիմա ամեն բան այլ էր: Դժվար չէ պատկերացնել նկարչի կենսավիճակն ու հոգեկան դրությունը: Քաղաքական տարբեր ռեժիմներ տեսած, քաղաքական դժվարին կյանքի և բուռն գործունեության բովով անցած նկարիչը ապրում էր Երևանում, խորհրդային երկրում և անշուշտ տեսնում էր այն ամենը, ինչ կատարվում էր իր շուրջը: Ազգային ոգով ներշնչված ու համակված և ազգային գիտակցությամբ ապրող արվեստագետը ինչ հոգեվիճակում պետք է

լիներ 1937 թվականից՝ հայ մտավորականության երկրորդ, այս անգամ՝ խորհրդային, եղեռնից հետո: Բնական է, որ նկարչի հոգին պատասպարան ու հոգեկան սփոփանք պիտի փնտրեր: Եվ նկարիչը գտնում է ելքը՝ ծանր ու ճնշող իրականությունից հնարավոր է փրկվել միայն փախուստով, - ինքը ի՛նչ բանտերից էր փախել, - բայց՝ փախուստով՝ դեպի անցյալ: Հսկա ժայռաբեկորին, երբեմնի անասան ու քաջարի, իսկ հիմա, ավա՛ղ, հիվանդկախ մարդուն մի սփոփանք է մնում՝ մտովի վերապրել իր նախկին կյանքը, հուշերի ճանապարհով վերադառնալ Վան, վերադառնալ դրախտ՝ մանկություն, հայրենական տուն...

Եվ նկարիչը սկսում է գրի առնել իր կյանքի հուշերը: Եվ քանի որ մտովի վերապրում է իր կյանքը, իր խոսքը դառնում է շատ բնական, վերածվում է մեղմ ու անկաշկանդ գրույցի, գրավիչ ու հուզիչ պատմության: Առանձին հատվածներ պարզապես խոստովանություն են հիշեցնում: Այս հուշերի առաջին և կարևորագույն հատկանիշը այն է, որ պատմողը գրեթե մոռանում է իր անձը և իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է տեղի ու միջավայրի վրա:

Իր պատմությունը Թերլեմեզյանը սկսում է իր ծննդյան թվականի հավաստումով՝ 1865 թվականի մարտի 11: Այնուհետև նկարիչը պատմում է իր ընտանիքի պատմությունը: Նախնիները մոկացիներ են, Մոկքից են տեղափոխվել Վան: Եվ այս փոքրիկ մանրամասնը ճշտում է Փանոս Թերլեմեզյանի առասպելական կերպարի ուրվագիծը. նա ինքը կարծեք մեր Մոկաց վեպի առասպելյալ հերոսներից մեկը լինի՝ խիզախ ու քաջարի մարդու իր նկարագրով, որը, սակայն, արվեստագետի փխրուն ու նուրբ հոգի ունի: Սքանչելի են մանկությունը պատկերող հատվածները, հայրենական տան, իրենց կյանք ու կենցաղի նկարագրությունը:

Տոհմիկ հայկական կյանքի հավաստի ամեն մի նկարագրություն այսօր բացառիկ արժեք ունի: Մենք չկարողացանք պահպանել, ժամանակի ամենակուլ երախից փրկել շատ բան: Անցյալի գիրկն անցան հայ գեղջկական առօրյա կյանքի անբաժանելի անգատելի քանի՛ երևույթ՝ ասենք, օրինակ, գութանը, կալը և ջրաղացը, և իրենց հետ անվերադարձ մոռացության, ուղղակի

կորստի տրվեցին գութանի, կալի ու ջրաղացի հետ կապված առարկայական անուններն ու անվանումներ, աշխատանքի կարգ ու ընթացք ներկայացնող բառերը, մանավանդ բարբառային գեղեցիկ և հարուստ խոսքով: Մեր բարբառների բառապաշարը ներկայացնող բառարանները, որոնք որ կան, թող թույլ տրվի ասել՝ շատ խղճուկ են և աղքատ: Սա ես վստահորեն եմ ասում՝ իբրև Խոյի բարբառի կրող, մանավանդ որ ժամանակին աշխատանք եմ գրել Ուրմիայի (Խոյի) բարբառի մասին, ու նաև նույնն եմ պնդում Վանի (Շատախի) բարբառի շուրջ, որին շատ առնչվեցի այս գիրքը տպագրության պատրաստելիս:

Թերլեմեզյանի հուշերում Վանի կյանքի և կենցաղի հրաշալի մանրամասներ կան, մանրադեպեր ու դրվագներ, որոնք առանձնակի գրավչություն են տալիս իր պատմությանը: Հուշագրողի խոսքը գունեղ է ու տարողունակ, և ինչպես վայել է իսկական նկարչին, մի քանի բառով, մի քանի խոսքով, մեկ-երկու հատու վրձնահարվածով կերպար է ստեղծում և կենդանություն տալիս իր ստեղծած կերպարին, ինչպես ասենք՝ «Ներսիկ ախպեր», «Յուկանետով» և այլ հատվածներում: Ի դեպ, տեղին է ասել, որ Թերլեմեզյանի հուշերը թեպետև շարադրված են մաքուր գրական հայերենով, սակայն իր խոսքում ակնհայտորեն զգացվում է Վանի բարբառի, Վանի խոսվածքի գունեղանգը, շեշտը, հնչողությունը: Դա երևում է ոչ միայն Վանի բարբառի առանձին բառերի օգտագործումով, այլև երբեմն որոշիչ հոդի բացակայությունից, նախադասության կառուցվածքից, յուրօրինակ շարակարգությունից ու շարահյուսությունից: Եվ դա Թերլեմեզյանի խոսքին տալիս է առանձնակի հմայք ու գրավչություն, պատմությանը՝ անկեղծություն և բնականություն:

Ինչպես ասացի, ծերունագարդ արվեստագետը իր պատմության մեջ հաճախ է «մոռանում» իր անձը: Եվ դա իր հուշերի կարևորագույն արժանիքն է: Փոխարենը նա վայրկյան անգամ չի մոռանում Վանը՝ իր շրջակայքով, իր հեքիաթային բնութայնք, իր հնօրյա պատմությանը, Այգեստանով ու Հանկույսների ձորով, իր կենցաղով ու սովորություններով, վարքով ու բարքով:

Վանի կարոտը Թերլեմեզյանին ստիպում է մանրամասն հիշել սիրով ու խանդաղատանքով պատմել Վանի հետ կապված ամեն բան. Վանում ինչպե՞ս էին մատաղ անում, ի՞նչ գեղեցիկ ծես էին տոհմիկ հարսանիքները, ի՞նչ հագուստներ էին հագնում վանեցիները, ի՞նչ էին ուտում, ինչպե՞ս էին նստում-վերկենում, ի՞նչ արհեստներ էին բանեցնում և այլն, և այլն,- այս ամենը Թերլեմեզյանը գրում-պատմում է ոչ միայն սիրով ու ներքին ջերմությամբ, այլև արվեստագետի տեսնող-արձանագրող-նկարող աչք ու հայացքով և, կարելի է ասել, ազգագրական ճշգրտությամբ:

Թերլեմեզյանը հրաշալի է պատմում Վանի դպրոցների ու դպրոցական կյանքի մասին: «Վարժարան-սպանդանոց» հատվածը մի նոր գիծ է ավելացնում տերթոդիկյան դպրոցի հայտնի տեսակին: Փոխարենը Վանի Կենտրոնական դպրոցը, ուր ընդունվում է պատանի Փանոսը, եղել է միանգամայն արժանի ու պատշաճ կրթական հաստատություն: Եվ այստեղ էլ առանձին մանրամասները իր պատմությունը դարձնում են կարևոր ու հետաքրքրական:

Վանի կյանքն ու կենցաղը պատկերող բազմաթիվ ու բազմապիսի գրքեր կան՝ թե՛ գեղարվեստական և թե՛ նկարագրական-ազգագրական: Բայց ահա այս պատմությունը, իր առանձին մանրամասներով ու միջադեպերով, նոր գծեր ու նոր գույներ է հաղորդում Վան քաղաքի առասպելական գոյությանը:

Դպրոցավարտ, երիտասարդության սեմին հասած Թերլեմեզյանը արհեստներ և զբաղմունք է փոխում, ուսուցչություն է անում: Հետո պատմում է իր որսասիրության և որսորդության մասին և այդտեղից սահուն անցում է անում (զենք, հրացան, կրակոցներ) դեպի իր քաղաքական-հասարակական գործունեության սկիզբը: «Հրաժարվեցի ուսուցչությունից և աշխատեցի լինել պրոֆեսիոնալ հեղափոխական, այսինքն՝ կազմակերպող, պրոպագանդիստ, գիտենալ ինչպես կայունացնել տատանվող տարրերը և գիտենալ ինչպես խուսափել ոստիկանությունից ու շեղել նրա հետապնդումները»,- գրում է Թերլեմեզյանը:

Թերլեմեզյանը չի խոսում իր կուսակցական պատկանելության մասին, խոհեմաբար լռում է և շրջանցում է այդ խնդիրը: Մինչդեռ

իրողությունը այն է, որ Փանոս Թերլեմեզյանը դեռևս պատանի հասակից, այն է՝ 1880-ական թվականների առաջին տարիներից, տարված է եղել, ինչպես ինքն է խոստովանում, հեղափոխական գործունեությամբ, իսկ 1885 թվականին դարձել է Վանում հիմնված Արմենական կազմակերպության առաջին անդամներից մեկը:

1884 թվականի ամռանը Սկրտիչ Փոքրուգայանը իր հիմնած վարժարանի տասներկու շրջանավարտներով հիմնում է «Գործակցական միություն» անունով մի կազմակերպություն, որ հիմնականում պետք է զբաղվեր մանկավարժական, հայրենասիրական-դաստիարակչական գործունեությամբ: Մակայն երիտասարդ շրջանավարտները չեն գոհանում այդ ծրագրով. նրանք ձգտում են հայրենասիրական-հեղափոխական գործունեության: Եվ այդ «Գործակցական միությունն» էլ դառնում է Արմենական կազմակերպության կորիզը: Կազմակերպության բոլոր հավաքները տեղի են ունենում Սկրտիչ և Գրիգոր Թերլեմեզյանների հորենական տան այգու հնձանում: Կարճ ժամանակ անց այդ տասներկու հոգուն միանում են ևս երեք հոգի՝ Հովհաննես Ազրիպասյան, Փանոս Թերլեմեզյան և Մանուկ Շատվորյան:

Ուշադիր ընթերցողը այս հանգամանքի հետ կապված հակասություններ կտեսնի Թերլեմեզյանի հուշերում և, մանավանդ, առանձին կարուկ դատողություններում: Մի կողմից՝ նա ջատագովում է թուրքական իշխանության դեմ զինված ընդվզումը, իր ասած և այսպես կոչված հեղափոխական գործունեությունը («Մի կարգ վանեցի հեղափոխական տրամադրությամբ երիտասարդները, որոնց հետ և ես, ազատության գաղափարով արբշիռ, պատրաստ զոհողության և ամենահանդուգն գործունեությանց...»), մյուս կողմից՝ քանիցս դատապարտում է տարբեր կուսակցությունների մարդկանց՝ նույն նպատակներին ուղղված գործունեությունն ու առանձին արարքները: Պետք է ենթադրել, որ Թերլեմեզյանը նկատի է առել իր ժամանակը, խորհրդային իրականությունը և ցանկացել է հեռու մնալ վտանգից, ապահովել իրեն: Ահա այստեղ էլ ծնվում են հեղափոխություն երևույթի շուրջ եղած իր փառաբանությունները, թվում է՝ ներքուստ ակնարկելով նաև

բուշևիկների հեղաշրջումը. «...այն օրերին չէինք կարող մտածել, որ կապիտալիզմի և պրոլետարիատի զարգացումն է միայն, որ հնարավոր պայմաններ պիտի ստեղծի իրական ազատագրության հասնելու մեր բուռն ցանկություններին»:

Թերլեմեզյանը բավականին մանրամասնությամբ է պատմում իր հեղափոխական գործունեության մասին՝ ընթացքում անելով շատ հետաքրքրական դիտարկումներ, ուղղամիտ վերլուծություններ և անակնկալ բացահայտումներ:

Այսպես, օրինակ, ահա թե ինչ է գրում նկարիչը իր հայրենակից վանեցիների մասին. «Որքան ես նկատել եմ՝ այն ժամանակվա վանեցիները հոգեբանորեն երկու խավի էին բաժանվում: Առաջին խավից եղողները վերին աստիճանի մաքուր, անձնուրաց, իրենց նվիրական սուրբ գաղափարների համար, մեծագույն զոհողությանց պատրաստ, նման էին թուխ ու չարաշուք ամպակույտերի մեջ ընկած լուսավոր մի շերտի: Իսկ երկրորդ՝ գերակշռող խավը ստոր, գծուծ և կոռոշվ ծախվելու պատրաստ մի ոհմակ էր»:

Շատ հետաքրքրական են հայերի, թուրքերի և քրդերի միջև եղած հարաբերությունների իր վերլուծությունները: Դրանք արդարացիորեն խորհելու տեղիք են տալիս և հարկադրում են այլ աչքով նայելու անցյալ դարձած պատմական իրականությանը:

Թերլեմեզյանը մանրամասնորեն խոսում է երեք կուսակցությունների՝ հնչակյանների, դաշնակցության և ռամկավարների մասին և, մանավանդ, Վանում նրանց գործունեության մասին: Իր դատումների մեջ Թերլեմեզյանը ուղղախոս է, շիտակ և ուղղամիտ: Գաղտնիք չէ, որ մեր ազգային կուսակցությունները իրենց պատմությունը շարադրելիս կամ թե իրենց գործունեության որևէ շրջանը, որևէ հատվածը ներկայացնելիս խնամքով շրջանցում են իրենց գործունեության անցանկալի դրվագները, լուրջան են մատնում շատ բան, չքմեղանում իրենց ձախողակ ու ձախավեր, անխոհեմ ու անհեռատես արարքների մասին խոսելիս: Թերլեմեզյանը իր պատմության էջերում նաև խիստ է, անզիջում և անկաշառ. նա դրվագներ և միջադեպեր է պատմում տարբեր կուսակցությունների գործունեությունից, առանձին կուսակցական-

ների մտայնությունից և դիրքորոշումներից, որոնք ընթերցողին մեծ ցավ են պատճառում և ստիպում են խորհել այդ կուսակցությունների բռնած դիրքի և առանձին կուսակցականների «հարեմանապատ և հայանապատ» «գործունեության» իրական արժեքի շուրջ: Թերլեմեզյանը մի առանձնակի դառնությամբ է խոսում այն մասին, թե հայ «հեղափոխական գործիչները» ինչ մանկամիտ արարքներ էին իրագործում՝ իբրև թե եվրոպական մեծ տերությունների ուշադրությունը Հայաստանի վրա դարձնելու, նրանց միջոցով հայերի ազատագրության հարցը լուծելու համար: Միամտությամբ, թե՞ կարճամտությամբ գործված արարքները բուներանգի նման հարվածում էին հայությանը, այն էլ՝ տասնապատիկ ու հարյուրապատիկ անգամ բազմապատկված ուժով, իսկ հայերի և հայության վիճակը գնալով ոչ թե թեթևանում էր, այլ ավելի էր ծանրանում: Թուրքական իշխանություններին, թուրքական պետությանը իրենց շատ հեռուն միտող, շատ հեռուն գնացող ծրագրերը իրագործելու, Թուրքիան հայերից դատարկելու, հայերի պատմական հայրենիքը խլելու համար առիթներ էին պետք, և «խելք» հայերը տալիս էին այդ պատեհ առիթները: Լավագույն օրինակները Բաբը-Ալիի ցույցը, Բանկ-Օթոմանի գրավումը և նման այլ խոհեմ ու անմիտ իրագործումներն էին:

1890-ական թվականներին Թերլեմեզյանի կյանքը իրոք հախուռն ու փոթորկալից է: Ձերբակալություններ, բանտեր և պատժարաններ, մահվան դատավճիռներ, փախուստներ բանտերից, անտուն, անընտանիք, աստանդական կյանք:

Եվ մի օր էլ Թերլեմեզյանը իրոք գոգենյան քայլ է անում. արդեն երեսուն տարեկան դարձած մարդը որոշում է նկարչություն սովորել և մեկնում է նախ՝ Թիֆլիս և հետո՝ Պետերբուրգ: Շուտով նա դառնում է Կայսերական նկարչական դպրոցի ուսանող, ինքնասում է՝ աշակերտ: Ահա այս «աշակերտություն»-ն էլ դառնում է Թերլեմեզյանի բնավորության և էության, - քանի որ բնավորությունը երկրորդ էությանն է մարդու, - գլխավոր գիծը՝ անվերջ սովորել և սովորել, սովորել ամենից, սովորել կյանքից, սովորել նույնիսկ թշնամուց...

Թերլեմեզյանի ուսանողական կյանքը Պետերբուրգում լեցուն է հետաքրքրական միջադեպերով և հանդիպումներով: Բայց այդ հետաքրքրական կյանքը շուտով դրամատիկական վերջաբան է ունենում. 1897 թվականին Թերլեմեզյանը մի լատիշ ուսանողի հետ մեկնում է Էստլանդիա՝ էտյոդներ անելու: Այստեղ էլ նրան, թուրքական իշխանությունների պահանջով, ձերբակալում են և նետում են Ռևելի (Տալլին) բանտը: Վեց ամիս հետո նրան, իբրև շատ վտանգավոր քաղաքական հանցագործի, տեղափոխում են հարավ, անց են կացնում քանի՜ բանտերով և դեպի հարավ ճանապարհին նետում են Մետեխի բանտը (Թիֆլիս): Այստեղ նրան նորից մահվան են դատապարտում, հիմա արդեն՝ երրորդ անգամ: Տառապանքներն ու տանջանքները շարունակվում են. հիվանդ, հյուծված, թուլացած, տանջահար ու չարչրկված Թերլեմեզյանին Թիֆլիսից տեղափոխում են Պարսկաստան իբրև պարսկահպատակի (պարսկահպատակի անձնագիր ուներ): Ծանր հիվանդությունից և մի քանի ամիս Երևանի բանտի հիվանդանոցում ծանրագույն պայմաններում անցկացնելուց հետո Թերլեմեզյանին, այլ ձերբակալվածների հետ միասին, տեղափոխում են Պարսկաստան: Այստեղ նա հանդուգն միտք է հղանում. կարողանում է փախչել բանտից, նոր անցագիր է ձեռք բերում և որոշում է մեկնել Փարիզ՝ նկարչություն սովորելու: Եվ կարողանում է իրագործել մտածածը: Իր կյանքի բարդ ելևէջումների մասին Թերլեմեզյանը գրում է պարզությամբ և թեթևությամբ, առանց իր անձը մասնավորապես ընդգծելու, առանց հավակնոտության, առանց առաձնակի նշանակություն տալու իր հոգեկան արիությանն ու դիմակայելու ներքին գործը կարողությանը: Խրինյան Հայրիկի օրհնությամբ և օժանդակությամբ Թերլեմեզյանը մեկնում է Փարիզ: Այստեղ նա ընդունվում է Ժյուլիեն ակադեմիան: 1898 թվականն է, դարը ավարտվում է, սակայն Թերլեմեզյանի նկարչության ժամանակը նոր է սկսվում: Այստեղ սովորում է մինչև 1904 թվականը: Թերլեմեզյանը ակադեմիայի և իր ուսման մասին պատմում է բավական մանրամասնորեն, պատմում է պարզությամբ և անկեղծությամբ: Եվ այդ պատմության

մեջ այսօր մեզ՝ ժամանակակից ընթերցողներին համար շատ խոսուն և հետաքրքրական է մի ուշագրավ հանգամանք: Պետերբուրգում Թերլեմեզյանը սովորել էր ռեալիստական նկարչություն: Ժյուլիեն ակադեմիայում նույնպես ուսուցանում էին ռեալիստական նկարչություն: Սակայն դարասկզբի Փարիզի նկարչական կյանքը ամենևին պարփակված չէր ռեալիստական նկարչության սահմաններում: Ճիշտ է, կերպարվեստում մեծ տեղաշարժը - մեծ հեղաշրջումը, կարելի է ասել, դեռ չէր եղել. Սեզանի ետմահու ցուցահանդեսը 1906 թվականին և աֆրիկյան արվեստների մեծ ցուցահանդեսը դարասկզբին տակնիվեր շրջեցին եվրոպական գեղանկարչական մտածողությունը, ինչը վավերացրեց Պաբլո Պիկասսոն իր «Ավինյոնի աղջիկները» (1906-1907) հռչակավոր կտավով, բայց հո կային պոստիմպրեսիոնիստները՝ Սեզանը, Վան Գոգը, Գոգենը, արդեն կար Պիկասսոն, կային ուրիշները...

Մեր նկարիչը անվորով շարունակում է իր ռեալիստական նկարչությունը, նոր հովերն ու նոր մտայնությունները նրան չեն էլ հետաքրքրում, կարծեք թե դրանք չկան, գոյություն չունեն: Եվ դա ոչ թե իր վրիպումն է կամ բացթողումը, այլ իր մտածողության յուրահատկությունը: Նա չափազանց ամուր էր կապված առարկայական իրականությանը: Խոսքը չի վերաբերում առարկայական աշխարհի պարզ հայեցողական ընկալմանը միայն. նկարիչը ողջ էությամբ կապված էր իր երկրին, այն ֆիզիկական և հոգեկան տարածությանը, որ մնացել էր հեռվում և որին հետագայում նույնպես մվիրելու էր իր ողջ կյանքն ու եռանդը, իր ձիրքն ու էությունը:

Բայց, իհարկե, Թերլեմեզյանը գիտի Փարիզը և լավ գիտի: Նա գիտի Փարիզի կյանքը, գիտի թանգարանները, համերգասրահները, թատրոնները, զգում է քաղաքի հմայքը, լսում է քաղաքի սրտի զարկերը...

Ակադեմիան ավարտելուց հետո իր պրոֆեսորները ջանում են նրան պահել Փարիզում, բայց Թերլեմեզյանը որոշում է վերադառնալ հայրենիք, ինքը չէր կարող ապրել առանց հայրենիքի և հայրենիքն էլ սպասում էր իր զավակին:

Հայրենիքում նա տրվում է ստեղծագործության, բայց և մխրճվում է հանրային-քաղաքական կյանքի հորձանուտը: Այս տարիներին, և հետագա իր ողջ կյանքում, Թերլեմեզյանը դրսևորում է իր բացառիկ անհատականության մի կարևորագույն յուրահատկությունը. նա զարմանալիորեն համատեղում է զուտ ստեղծագործական գործունեությունը շատ եռանդուն, խիստ ընդգծված ազգային-քաղաքական գործունեության հետ: Անհնար է պատկերացնել Փանոս Թերլեմեզյանին հայ ազգային-քաղաքական կյանքի փոթորկուն և հողմապտույտային կյանքից դուրս: Այս տարիներին նա ակնդետ հետևում է հայ քաղաքական կյանքի, հայ իրականության բոլոր ելևէջումներին: Դա շատ հստակորեն արտացոլվել է նկարչի հուշերի համապատասխան էջերում: Նկարչի միտքը շատ սքափ է, մտածողությունը՝ հստակ և տրամաբանական, վերլուծումներն ու դատումները՝ համոզիչ ու պատճառաբանված: Նա իրական փաստերի և եղելությունների հիման վրա ցույց է տալիս և՛ թուրքական իշխանությունների՝ հայերի հանդեպ վարած քաղաքականության իսկական էությունը, և՛ եվրոպական տերությունների նենգ ու խարդավանալից վերաբերմունքի իսկական դեմքը, և՛ Ռուսական կայսրության ստոր ու անազնիվ վերաբերմունքը հայերի և Հայաստանի հանդեպ:

Թերլեմեզյանը նույնքան անողոր, նույնքան աններում է նաև հայկական կյանքի հանդեպ: Նա վերլուծում է մեր ազգային կուսակցությունների գործունեությունը, մատնացույց է անում հետաքրքրական իրակություններ ու միջադեպեր, հիշում է կարևոր ու խոսուն մանրամասներ և իր անողոր վճիռներն է կայացնում: Նա ցավով ու դառնությամբ է արձանագրում կուսակցությունների գործունեության մերժելի կողմերը, սխալ քայլերը, վրիպումները, ակնհայտ սխալներն ու քաղաքական կարճատեսությունը:

Թերլեմեզյանի հուշերի այս հատվածները, կարծում են, այսօր պետք է որ ունենան խիստ արդիական նշանակություն և հնչողություն:

Փարիզից վերադառնալուց հետո Թերլեմեզյանը մի շրջանում ապրում է Թիֆլիսում, դասավանդում է Ներսիսյան և Հովնանյան

դպրոցներում: Հաջորդող տարիներին նա բավական ճանապարհորդում է, լինում է Եգիպտոսում, Ալժիրում, հետո անցնում է Ֆրանսիա և երկու տարի ապրում և ստեղծագործում է Փարիզում: Այս ճամփորդությունները կատարել է արվեստագետ մարդը և այն էլ՝ մեծատաղանդ նկարիչ-արվեստագետը: Այն, ինչ տեսել է նկարչի աչքը և արձանագրել է արվեստագետի ձեռքը, կարդացվում է ակնհայտ հետաքրքրությամբ:

1910 թվականին Թերլեմեզյանը հաստատվում է Պոլսում: Այստեղ նա մշակութային և ազգային-քաղաքական կյանքի կենտրոնում է, մեր գրականության և արվեստի լավագույն գործիչների հետ: Ուշագրավ են Պոլսի հայկական կյանքը ներկայացնող էջերը: Եվ առանձնապես թանկ են այն հատվածները, որոնք ներկայացնում են Թերլեմեզյանի և Կոմիտաս վարդապետի բարեկամությունն ու համատեղ կյանքը Բանկալիի իրենց միասնական բնակարանում, միասին Կոմիտաս վարդապետի ծննդավայրը՝ Կուտինա (Քյոթահիա) մեկնելը և այնտեղ ամիսներ անցկացնելը: Տան երկրորդ հարկում Կոմիտաս վարդապետն է, երրորդ հարկում՝ Թերլեմեզյանը իր արվեստանոցով: Շատ տպավորիչ է, օրինակ, այն հատվածը, ուր Թերլեմեզյանը պատմում է, թե ինչպես է սուլթանի արարողապետը այցելում նկարչին՝ նրա նկարները դիտելու: Արվեստանոցից վար իջնելիս արարողապետը ցանկանում է ծանոթանալ Կոմիտաս վարդապետի հետ: Մտնում են Կոմիտասի աշխատանոցը, արարողապետը ծանոթանում է Կոմիտասի հետ, սուրճ խմելուց հետո արարողապետը դիմում է Թերլեմեզյանին. «Չեմ համարձակվում, թե ոչ պիտի խնդրեի Կոմիտաս էֆենտիին որևէ մի բան նվագել կամ երգել»: Խոսում են ֆրանսերեն: Կոմիտաս վարդապետը մատում է դաշնամուրի առջև և երգում է: Թերլեմեզյանը պատմում է, որ Կոմիտաս վարդապետը «երգեց Շուբերտից գերմաներեն մի երգ, այնչափ խորունկ զգացումով, որ մենք քարացել էինք: Նրա վերջացնելուց հետո էլ բավական ժամանակ լուռ էինք, երբ Թյուրքիո ալո նուրբ դիվանագետը՝ ինքզինք չկարողանալով զսպել՝ ձեռքը սեղանին խփեց և ասաց. «Sapristi! (Գրողը տանի (ֆր.) - Ե.Տ.-Խ.) Ուր հարյուր տարվա պետություն ենք և

9699

ցարդ այդպիսի մի արվեստի և արվեստագետների տաճար չունեցանք»:

Այդ սուլթանական գործերը վարող դիվանագետը մեկնեց սրտմտած: Իսկ նրա մեկնելուց հետո ես շնորհավորեցի Կոմիտասին այդ հաղթանակի համար, և վեր կացանք երկուքս միասին «չալիմոնո» պարեցինք»:

Պետք է կարողանալ պատկերացնել մեր մշակույթի երկու մեծերին, երկու ծանրակշիռ ու պատկառելի մարդկանց, Թերլեմեզյանը՝ քառասունյոթ տարեկան, Կոմիտասը՝ նրանից միայն չորս տարով կրտսեր՝ քառասուներեք տարեկան, հայ ոգու իրենց հաղթանակից հետո մանկաբար զվարթ պար՝ «չալիմոնո» պարելիս: Մեզ համար այսօր թանկից էլ թանկ է Կոմիտաս վարդապետի կյանքի ամեն մի մանրամասնը, իր կյանքի ամեն պահն ու ակնբարքը, իրականության ամեն մի փշուրը:

Հուշերի առաջին մասը ավարտվում է Կոմիտասի կյանքի դրվագներով: Խաղաղ կյանքի շրջանը կարծեք թե ավարտվում է, 1912 թվականն է, և համեմատաբար խաղաղ կյանքին մնացել է հազիվ երկու տարի: Անճոնական կյանքի ժամանակը իր տեղը զիջում է ավելի մեծ հարցերի ու խնդիրների:

Հուշերի երկրորդ մասը սկսվում է քաղաքական տագնապալից իրականության վերլուծությամբ: 1914 թվականի մայիսին Թերլեմեզյանը թողնում է Պոլիսը և իր երկու ընկերներով՝ զավառական թերթի թղթակից Գարեգին Գյուլբենկյան և գրող Տիգրան Չյուկյուրյան, ճամփա է ընկնում դեպի Կովկաս: Հասնում են Թիֆլիս, հետո ուղևորվում են Հայաստան, շրջում են Անիում, այցելում են Էջմիածին: Գյուլբենկյանը վերադառնում է Պոլիս, Թերլեմեզյանն ու Չյուկյուրյանը ճամփա են ընկնում դեպի Վան:

Վանում Թերլեմեզյանը գլխովին խրվում է իր ծննդավայրի առօրյա կյանքի հոգսերի և ազգային-քաղաքական կյանքի հորձանուտի, թեև նկատի առնելով իրականությունը, ավելի ճիշտ կլինի ասել, ճահճուտի մեջ: Նկարիչը չի կարող անտարբեր լինել այն ամենի հանդեպ, ինչ կատարվում է իր շուրջը: Վանի, և ամբողջ Արևմտյան Հայաստանի երկինքը ամենևին էլ անամպ չէ. ամպե-

րը կուտակվում են օրեցօր ու ժամ առ ժամ: Սև, մռայլ, ծանր թուխպը կախվում է հայության վրա, և ի վերջո մի օր արշալույսին պայթում է աղետը: Եվ սկսվում է Վանի հերոսական, ուղղակի դյուցազնական ինքնապաշտպանությունը: Թերլեմեզյանը արդարացիորեն այն անվանում է դյուցազնամարտ:

Վանի հերոսական ինքնապաշտպանության մասին հազարավոր էջեր են գրվել և՛ գեղարվեստական գրականության մեջ, և՛ պատմագիտական ուսումնասիրություններում և հետազոտություններում: Թվում է՝ գրեթե ամեն ինչ ասվել և նկարագրվել է: Եվ, այնուամենայնիվ, ինքնապաշտպանությունը կազմակերպած ամենակարևոր դեմքերից մեկի՝ Փանոս Թերլեմեզյանի պատմածն ու նկարագրությունները բացառիկ արժեք ունեն: Այն մանրամասները, որոնք հիշում է Թերլեմեզյանը, այն ճշգրտությունը, որ կա իր շարադրանքում, թվում է՝ չափազանց ճշմարտացի են ներկայացնում կացությունը՝ դյուցազնամարտի նախօրեին և հերոսական դիմակայության առաջին օրերը: Ընթերցողի ուշադրությունն են հրավիրում մի կարևոր հանգամանքի վրա: Թերլեմեզյանը իրեն ներկայացնում է իբրև ինքնապաշտպանական հերոսական պայքարի ընդամենը մի պարզ մասնակից, բոլորից մեկը, մինչդեռ ժամանակակիցներն ու ականատեսները իրենց հուշերում և վկայություններում այլ բան են ասում. նրանք Թերլեմեզյանին ներկայացնում են իբրև հերոսամարտի ամենանշանավոր դեմքերից մեկը, քաջարի, խիզախ, անվախ ու հերոսական անձնավորության:


Եվ ափսոս որ ձեռագիրը այստեղ ընդհատվում է: Ընդհատվում է նկարչի մահվան պատճառով: Սակայն այն, ինչ հասցրել է շարադրել մեծ արվեստագետը, այսօր մեզ համար բացառիկ արժեք և նշանակություն ունի: Այն արժեքավոր է ոչ միայն իբրև մեզ համար այնքան կարևոր պատմական ժամանակի վավերական ու ճշմարտացի պատմություն, իբրև կյանքի և իրականության մի նոր վավերաթուղթ, այլև իբրև գրական խոսքի արտահայտություն: Թերլեմեզյանը իր հուշերում իսկական գրողի հմտությամբ և վարպետությամբ համադրել է գեղեցիկ պատկերավոր նկարագ-

րությունները փաստագրական արձանագրումների հետ: Գեղանկարիչ Թերլեմեզյանը պատմելու և նկարագրելու անուրանալի ձիրք ունի: Ի՞նչ պատկերավոր խոսքով են նկարագրված նկարչի առաջին սիրո՝ մանկամարդ Յողիկի գեղեցկությունը, այգեկուրը պատկերող հատվածները և մանավանդ բազմաթիվ բնապատկերներն ու բնանկարները՝ դեպի Մուշ կատարած ուղևորության ճանապարհին հայրենի բնության տեսարանները, Սևանա լճի հատվածը, բազմաթիվ այլ կտորներ, 1914-ին դեպի Վան վերադարձի ճանապարհի տեսարանները... Պատահական չէ, որ մեր կերպարվեստի նահապետը՝ Մարտիրոս Մարյանը, 1941 թվականին Թերլեմեզյանի մահվան առիթով նրա մասին ասել է, որ նա «հայկական բնանկարի լավագույն ներկայացուցիչն է եղել»: Թերլեմեզյանը իր հուշերում նույն բնանկարը փաստորեն վերստեղծում է խոսքով:


Դարասկզբի մեր դասական նկարիչները եղել են նաև գրի ու գրքի մարդիկ. Վարդգես Սուրենյանցը՝ գրականության հրաշալի գիտակ և թարգմանիչ, Գևորգ Բաշինջաղյանը՝ հետաքրքրական հոդվածների և գրառումների հեղինակ, անգերազանցելի Մարտիրոս Մարյանը՝ «Գրառումներ իմ կյանքից» իր հոյակապ գրքով...

«Կյանքիս հուշերը» գրքով Փանոս Թերլեմեզյանը այսօր լրացնում է այդ շարքը: Ես վստահ ու համոզված եմ, որ ընթերցողը սիրով է ընդունելու այդ գիրքը, և այն իր արժանի տեղն է ունենալու մեր հայրենագիտական և հուշագրական գրականության մեջ:

Երվանդ ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒԲՅԱՆ



Կյանքիս հուշերը



ԱՌԱՋԱԲԱՆ

1938 թվի մի լուրջ հիվանդությունից հետո ձեռներս սկսեցին ավելի դողալ և արգելակել նկարելուս: Ուրեմն նկարչությունը՝ իմ կյանքի լույս տվող այդ ջահը, ինձ համար որոշ չափով աղոտացավ: Տխուր, բայց անվհատ մտածեցի նկարչության պատճառած անսահման հաճույքը մասամբ փոխարինել այլ կերպ: Որքան ինձ համար սպանիչ է անգործությունը, նույնքան օգտակար գործունեությունը երջանկության մղող մի խթան է: Այդ պատճառով նախ՝ առանց ի նկատի ունենալու անվարժությունս՝ սկսեցի գրի առնել հիշողություններս փոթորկալից կյանքի, միջավայրի և էպոխայի մտայնության մասին, որոնք պիտի ջանամ դիտել ժողովրդի շահերի տեսակետից, ու պիտի աշխատեմ պարուրել մեր ժամանակաշրջանի շունչով:

Պիտի ձգտեմ ճշգրտորեն նկարագրել Վասպուրականի իմ կյանքի տարբեր ժամանակաշրջանները և Վասպուրականից դուրս իմ հանդիպումները զանազան հեղափոխական անհատների և արվեստի մարդկանց հետ ու տալ տպավորություններս այս ու այն երկրի, նրանց արվեստի մասին:

Մեծավ մասամբ դեպքերն ու փաստերն են, որ պիտի արձանագրվեն: Եթե տեղ-տեղ խնդիրների վերլուծման նմուշների հանդիպվի էլ, դրանք լինելու են բոլորովին հակիրճ ու սահմանափակ ծավալով:

Այս նոր սերունդը, որ քաջաբար առաջ խոյանալով փոխարինում է մեզ, և որը հավատացած եմ, ուժգին արիությունամբ բարձրագույն նվաճումին ու վաղվա համամարդկային եղբայրության պիտի հասնի, գուցե մի օր պետք ունենա հետադարձ ակնարկ նետելու իր հայրերի և պապերի անցած տառապագին ուղու վրա և նրանց սխալների ու թերությունների անվարագույր ցուցադրումից և հաշվետվու-

թյունից օգտվի: Ականատեսի և մասնակցողի տված թեկուզ փոքրաթիվ փաստերը կարող են նյութ ընձեռել վաղվա պատմաբանին մեր ապրած այն տարերային ոգևորութիանց և հետագա զարհուրելի աղետների մասին:

Բոլոր պատահարները, որոնց հանդգնորեն դիմագրավել, անցել են, բոլոր այն դաժան դժվարությունները, որոնց դեմ պայքարել են՝ սովորելու և անվթար պահելու համար պատիվս ու անկախությունս, կարող է հետաքրքրել այսօրվա զվարթ սերնդին, որ բախտավոր է ունենալով զարգացման և հառաջադիմութիան բոլոր պայմանները:

ՄԵՐ ՍԿԻԶԸԼ

Ըստ հետագա տեղեկությունների՝ ես ծնվել եմ Վանում 1865թ. մարտի 11-ին, մի նահապետական ընտանիքում:

Մեր պապերը 360 տարի առաջ գաղթել էին Մոկաց Թալամազ անուն գյուղից, որից առաջ է եկել մեր ազգանունը՝ Թալամազենց կամ Թալամազյան: Բայց հետագայում, երբ իշխող թյուրքերը հաճախ տարել ծեծել են մեր նախնիք և միշտ հաջողած են փող կորզել, մեր անունը փոխել են Թերլեմեզյան, որի հայերենն է անքիրտյան: Ուրեմն Թերլեմեզյանները Մոկսից եկել և բնակություն են հաստատել Վանի Այգեստան արվարձանում, Ախքեսեն քյազրիզի գլխին:

Այդ լայն փողոցի երկու եզերքներից մի քանի առուներ կանցնեին լեցուն զուլալ և կարկաչուն ջրերով, որոնց ափերին անհայտ ժամանակներում տնկված ու արդեն ծերացած ուռենիներ և բարդիներ, ամառ ժամանակ, հաճելի զովություն էին տալիս և ստվերների մեջ պահում անցորդներին:

Մեր պապերը մեծ գերդաստան էին: Նրանք, իրարմից բաժանված և իրենց այգիներում մեծ-մեծ տներ շինած, կողք-կողքի էին բնակվում: Միայն նրանց մի եղբայրը՝ Մուղղուսի Մուրադը, կենտրոնից հեռու խամուր քեսենի վրա տուն էր շինել և այնտեղ էլ ապրում էր: Հետագային այդ Մուղղուսի Մուրադի ընտանիքից սերեցին երեք հեղափոխական եղբայրներ: Նրանցից Կարապետը զնդաակահարվեց քաղաքում, իսկ Մկրտիչը և Գրիգորը, որոնք Վանի 1896 թ. կռիվներից ճողոպրած 500 երիտասարդներին առաջնորդում էին Պարսկաստան, բոլորը միասին զոհվեցին Բարդուղիմեոս վանքի մոտ եղած կռիվներում, նույն թվին:

Աշխարհ գալես առաջ, մեր հարստութիան ու կալվածքների տեր պապս մեռել էր: Հայրս, որ միջև 30 տարեկանը երկրագործութիամբ էր զբաղվել, հետո ինքզինք արբեցո-

ղուծյան տալով, գործի անընդունակ էր դարձել, այդ պատճառով պապենական Հարստությունը կառավարել է հորս փոքր եղբայրը:

Ունեցել եմ ինն քույր, մի եղբայր, որ հորս ամսաական մեռել է, իսկ ես՝ տասնևմեկերորդս, ծնվելուց հետո, անհանգստացրել եմ աստվածավախ հորեղբորս, որովհետև այն ժամանակվա օրենքով՝ միայն արու զավակները իրավունք ունեին պապենական ժառանգության մասնակցելու: Հինգ ամսական լինելուցս հետո, հորեղբայրս հեռավոր թաղում գնել էր մի խարխուլ տուն այգիով միասին ու մեր ընտանիքը փոխադրել այնտեղ:

Մեզ պապենական ժառանգությունից զրկելու այդ ժամանակավոր փորձը հորեղբորս Հաջողվել է հետո մշտական դարձնել:

Մեր նոր տխուր ու աղքատիկ տան մեջ անցնում էին իմ անհրապույր մանկական օրերը: Երեկոնները, երբ հայրս մեյխանայից (միկիտան) և ժամուց պոկված տուն էր գալիս, նրա միակ գործը իր անգիտակից հայհոյություններն ու աղոթքներն էին. բնավ հայտնի չէր, թե նա հայհոյում է թե աղոթում, որովհետև երկուսն էլ մեջ ընդ մեջ լսվում էին:

Մայրս եղել էր մեծ հարուստի աղջիկ, վարդերի և անուշահոտությունց մեջ մեծացած: Նա հորս տխմարությունց վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում և ժամանակ էլ չուներ ուշադրություն դարձնելու, որովհետև գիշեր ու ցերեկ աշխատանքի մեջ էր. այգին էր մշակում, կոփն էր պահում, խոտ էր քաղում կովի համար, լվացք էր անում և կովի կուրից փթիլ էր թխում և ցան չորացնում ձմեռվա վառելիքի համար և այլն, և այլն: Նրա այդ բոլոր տաժանելի աշխատանքով հագիվհագ մի թշվառ ապրուստ էինք ճարում: Ես հորս չէի սիրում, բայց դրա փոխարեն անսահման պաշտամունք ունեի մորս հանդեպ և իմ միակ մխիթարությունը ազնիվ, աշխատասեր և գուրգուրոտ մորս խնամքն էր:

ԵՐԿՐԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ
ՄՈՐՍ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1840 թ. մոտ թեև թյուրքերը հաղթել էին քյուրդ հուժկու ավատապետ Բաղդրիան բեյին, բայց երկրի մեջ նորից երկիշխանություն է տիրելիս եղել: Քաղաքից դուրս եղած հայերը թե՛ թյուրքերին և թե՛ քյուրդերին հարկ են տվել: Բաղդրիան բեյի գեներալ խան Ավդալը տակավին ասպատակել է երկիրը: Այն օրը, երբ խան Ավդալը Վանից երևացող Շուշանց դյուղը այրել և սրի է քաշել ազգաբնակչությունը, նույն գիշեր 40 զինված ձիավորներով 12 տարեկան մորս եկեղեցի էին տարել պսակելու: Այդ ժամանակ պսակը միայն եկեղեցու սեղանի առաջ պիտի կատարվեր: Ամուսնություն արարողությունից հետո, տուն բերելիս, նկատում են, որ հարսը դողում է (նա դողում էր Շուշանցի մասին լսած սարսափելի լուրերից): Այդ պատճառով հարսին իր թանկագին շորերով կիսով չափ սառած թոնիրն են իջնցնում, որ տաքանա, բայց նա թոնրի մեջ խեղդվելու աստիճանին է հասել: Հարսը խոսելու իրավունք չուներ: Պատահաբար մեկը թոնրի սալը հետ է հրում, և հարսը ձեռքով իմաց է տալիս ու նրան դուրս են քաշում: Մորս հայրը, ոսկերիչ Մուղսի-Փանոս, մեծ կալվածատեր և հարուստ մարդ է եղել: Նա, ի միջի այլոց, ունեցել է երկու արաբական ձիեր, որոնք հայտնի էին եղել հայ և քյուրդ շրջաններում: Պոլսից նոր եկած երկրի թյուրք կառավարիչը պահանջել է, որ այդ ձիերը իրեն տրվեն, բայց Մուղսի-Փանոսը մերժել է: Այդ պատճառով գայմագամը հրամայել է ձմեռ ժամանակ ջուր բաց թողնել Սուրբ Նշան եկեղեցու բակում եղած ձյունների վրա, և մորս հորը 24 ժամ, ոտաբորիկ կանգնեցնում են այդ ձյունների մեջ, որով նա մահանում է և նրա հսկայական կալվածքները՝ ինն առագաստանավերը և ձիերը հարքունիս է գրավվում: Այս դեպքերը մայրս էր պատմում արտասովորով:

Ան Քոփ ստորոտից սկսում էին ջրերի առուներ, լուսավոր, կապույտ ու կտրատվող ժապավենների տեսքով: Մի քիչ հեռու՝ մութ Վոխվի քյահրիզ, հետո այգիներ, այգիներ և այգիներ պտղառատ, որոնց մուգ կանաչների մեջ տեղտեղ երևում էին հում աղյուսով կամ մյուհրայով շինած տների հողե պատեր: Ավելի հեռու՝ Սուրբ Խաչի բլուրները, որոնք թավշանման կանաչով պատված և նորապսակ հարսների պես ծալապատիկ բազմած էին հարյուրերանգ ծաղիկներով վառ մարգագետինների վրա, որոնց մեջ գնբրբուկ, կակաչ և մանուշակը նրբորեն սարսուռում էին՝ նրանց տակից գլգլացող սառնորակ ջրերից:

Այդ բլուրների մեջտեղը ստինքների նմանվող կարմրավուն ժայռեր էին դուրս ցցված, որոնց վրա բուսած ախարանց առուներ և դեղին սուսուներ գրկախառն համբուրվում էին:

Հիշյալ բլուրները նախանձով թաքցնում էին հետևին գտնված իրենցից ավելի գեղեցիկ Հայկաբերդը, Շամիրամա հորդառատ ջրերն ու շատրվանները, ճոխ բուսականություններ պնդված Հայոց ձորը և Անգա Շորորան գետը: Այդ Սուրբ Խաչի բլուրները երկարում էին դեպի արևմուտք մինչև ծով, որոնց ծայրին էր գտնվում այգիների մեջ թաղված հրապուրիչ Արտամետը: Այդ այգիներից դուրս սողացող խնձորենու և կեռասենու ճյուղերը նուրբ վարդագույն ծաղիկներ հագած՝ խաղ էին անում ծովի կապտավուն ջրերի և չարածճի ալիքների հետ:

Ավելի հեռու՝ Ոստանի կոնակից դեպի երկինք էր խոյանում մանիշակագույն Առտոս լեռը, թևանցուկ արած Եղբրովի լեռնապարին: Այդ լեռնափեշի վրա Չազար Սուրբ Նշանի վանքում հանգստանում էր անմահ պատմաբան Եղիշեի աճյունը:

Օ՛հ, ի՛նչ դուռթիչ է այդ հերոսական անցյալով և առասպելներով հարուստ Հայ աշխարհը: Ինչպես իտալացիք ասում են. «Տեսնել Նապոլին և ապա մեռնել», այդպես էլ մեր երկրի ժողովուրդն ասում էր. «Աշխարհում՝ Վան, երկնքում՝ դրախտ»:

Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն - Ս Պ Ա Ն Դ Ա Ն Ո Ց

Վերոհիշյալ տեսարաններից իմ մանուկ հոգին թովչություն էր ենթարկված, երբ մայրս ինձ տարավ հանձնեց Հանկույս ձորի վարժատուն սովորելու: Այն ժամանակ ես հինգ տարեկան էի: Երբ որ եկեղեցու մեծ գրանիտներով շրջանակված, բայց փոքր ու ցած դռնից ներս մտանք, անմիջապես հարցրի մորս, թե ինչու այդպես փոքր են շինել այդ դուռը, նա բացատրեց, եթե մեծ լիներ, թյուրք և քյուրդ աղաներ իրենց ձիերի վրա նստած՝ ներս էին մտնելու եկեղեցին:

Եկեղեցական դպրոցը՝ «ժամու վարժատունը», Հանկույսաներ եկեղեցու երկրորդ հարկում մի մեծ դահլիճ էր, մեջտեղը սյունաշարով: Այդ դահլիճի վերի անկյունը կար մի ընդարձակ թախտ, որի վրա նստում ու երբեմն պառկում էր ննջելու Ավետիս վարժապետը: Աշակերտները (ճփերը) ամեն մեկը իր տնից բերած փոքրիկ դմփիկի վրա կարգով նստում էին պատերի տակ և երկու կարգ էլ՝ մեջտեղի սյուների երկու կողմերը: Մի լայն սանդուղքով բարձրանում էին ուրիշ նեղ ու երկար սրահ, որտեղ մեծ աշակերտների տեղն էր: Տղայոց ընդհանուր թիվը չորս հարյուրի մոտ էր: Այս բոլոր աշակերտների համար մեկ վարժապետ կար:

Երբ աշակերտները հավաքվում էին, վարժապետը նրանց ոտքի էր հանում և բոլորը միասին «Հայր մեր» էին ասում և առանց որևէ ձայն ու ծպտունի նստում էին իրենց տեղերը ու կատարյալ անշարժություն ու լուռություն էին պահում, զի վարժապետը «հանգստանում էր»: Բայց ես անկարող էի քարանալ, հանում էի տակավին գրել չիմացող գրիչս և նրա ծայրին մի կտոր պանիր էի հագցնում ու պարզում հատակի տախտակների արանքից վար: Մկներ գալիս էին պանիրն ուտելու, գրչածայրս խոթում էի նրանց մարմնի մեջ: Վարժապետը պառկած տեղից նշմարելով իմ շարժումները, համրիչը ձգում էր, որ առնեմ և իրեն ներկայանամ: Ստիպված, գլուխ կախ, համրիչը վարժապետին էի տանում: Նա պառկած տե-

դից նստում էր և ձեռքս բռնելով՝ վերցնում էր կողքին դրված սերկևիլի թարմ ճիպոտը (ամեն առավոտ Ցից 10 Հատ բերում էին նրան), սկսում էր խելահեղորեն զարնել փափրիկ տեղերիս վրա: Ես կարկամում էի ու աղիողորմ արտասվում:

Քիչ Հետո ճաշի զանգը հնչում էր: Երեխաներից ոմանք իրենց հացն ու պանիրը, ուրիշներն իրենց հացն ու ժածիկը կամ ցամաք հացն ու տելուց հետո, ավելցուկը թափում էին սրահի մեջտեղ փռված մի մեծ լաթի վրա, այդ հավաքված հացի դեզը լավ փաթաթում ու բարձրացնում էին տնտեսի (վարժարանի ծառա) շայակը, որ տանի Ափետիս վարժապետի տուն:

Ուսումն սկսվում էր գրաբար սաղմոսի առաջին գլխով, որ հեզարան էր կոչվում: Ես ոչ գրել, ոչ կարդալ և ոչ էլ հասկանալ կարող էի: Լավագույն հիշողություն ունեի, այդ պատճառով դասի ժամանակ ինչ որ լսում էի, միտս էր մնում, և դա բավական էր հաջող պատասխաններ տալու: Բայց որպեսզի քաղվածք անելուց ազատվեի, գրքույկի մեջ անցած թուղթերը ճեղքում — նետում էի: Երբ հեզարան վերջացավ, միայն նրա երկու կողերը մնացին, այն էլ երեկոյան մեկնելիս՝ դուրսը գյառի վրա ավազների մեջ թաղեցի ու գնացի տուն:

Հաջորդ առավոտ նորից հացս կապեցի և սկսեցի քայլել դեպի վարժատուն, հասա մինչև ձորը ու երբ տեսա դպրոցի շենքը, ծեծի ու Ֆալախկայի զարհուրանքն ինձ բռնեց: Նստեցի ուռիների տակ, զուլալ ջրերի մոտ և սկսեցի խաղալ ավազների հետ: Փոսեր փորեցի, որոնցից առուից ծծված ջրեր էին դուրս գալիս, և ես կարծում էի, թե աղբյուրներ էի հայտնաբերում: Հեռուից լսեցի վարժատան ճաշի զանգի ձայնը, բացի հացս, կերա և մի ուռեխու տակ կծկված քնեցի: Երագիս մեջ տեսա, թե ինչպես կողբար մի աշակերտ վարժապետի շառաչող ճիպոտի հարվածներից, սարսուռից արթնացա և տեսա, որ երեկոյացած էր, տուն վերադարձա: Այս ձևով դպրոց գնալ իմ ազատաշունչ հոգուն ժպտում էր: Շարունակեցի մի ամբողջ շաբաթ, բայց ութերորդ օրը եկեղեցու ժամկոչը մեր տուն եկավ, որին վարժապետը զրկել էր իմանալու, թե ինչու երեխան դպրոց չի գար: Մայրս շանթահարիչ նայվածքով ինձ դարձավ, ես կանգնած տեղս սկսեցի

հեկեկալ...: Վերջապես ժամկոչը ինձ հասցրեց դպրոց: Վարժապետը, եղելությունը իմանալով, հրամայեց Ֆալախկան բերել: Երբ Ֆալախկայի մեջ պրկված՝ ոտքերս բարձրացրած էին օդի մեջ և միայն գլուխս ու վիզս տախտակին էր կաշու, վարժապետը գոռալով՝ «նզովից արմատ, ա՛ն քեզ խաբել», և թաց սերկևիլի ճիպոտն ուժգնությունը իջավ մերկ ոտներիս տակերին: Ծիչս արցունքներիցս առաջ դուրս ժայթքեց, և ես գետնի վրա գալարվելով գրկում էի տնտեսի ցեխոտ սուլերը, որ օգնեն ինձ: Երբ ազատ արձակեցին, քայլել չկարողանալով, տնտեսը ինձ քաշ տվավ իմ տեղս, ուր հատակի վրա փլած կողբայի:

Երկու վարժապետ էլ բերին դպրոց. մեկը Վարդանը, որ ծեծելու ուրիշ ձև մտցրեց: Նա կաղնի փայտից շինած երկար կոթով մի թաթ ունեւր, որով գլխավորապես աշակերտների ձեռների մեջն էր խփում: Մյուսը վերակացու էր. այս վերջինից թուլյտվություն կառնեինք արտաքնոց գնալու: Յուրաքանչյուր աշակերտ մոտենում էր վերակացուին, թամանդա անելուց հետո, պիտի ասեր. «Վարժապետ, երթամ տյուս»: Նա հաճախ երկար ժամանակ ուշադրություն չէր դարձնեւր, բայց աշակերտը ստիպված էր կրկնել իր խնդիրը նոր թամանդաներով, երբեմն մի ոտ բարձրացնելով, երբեմն մյուսը, մինչև «արտասվել» ...:

Թուլյտվություն ստացողը գնում էր դռան մոտ կանգնում, ուր մի տախտակ կար կախված, որի, մի երեսի վրա գրված էր «գնա», մյուս երեսի վրա՝ «մի երթար»: Հինգ հոգի պիտի հավաքվեին, մեկ աշակերտ կարգապահ էր լինում, մյուսներին շարքով երկու բակերի որոսպայաններից (պատշգամբ) անցկացնելով հասցնում էր հինգ արտաքնոցներին, ուր միակ տեղն էր, որ երեխաները ծեծի ու բռնություն սարսափից ազատ էին զգում իրենց:

Մի քանի տարուց հետո, երբ ես անցել էի արդեն վերի դասարանը, գունավոր մատիտներով ընկերների համար գաղտնի երեքմանկունք նկարելիս, հանկարծ թարմ ճիպոտի մի հարված մատներիս վրա զգացի՝ «ամբարիչտ» գործ կատարելու համար, և ես մատներս բերանս խոթելով անզուսպ լաց եղա:

ՄԱՐՇԻՄՈՆԻ ԱՅՅԸ

Այդ ժամանակները մեր վարժատան աշակերտները փոխադրեցին Նորաչենի դպրոցը, Քոլոզ վարժապետի մոտ, որ նույնպես զարհուրելի ծեծող էր:

Փոխադրվեցինք Նորաչենի դպրոց նրա Համար, որ ասորոց կրօնապետ Մարշիմոնը, իր հետևորդներով, տեղավորվեց Հանկույսների մեր դպրոցում: Կասեին, որ Մարշիմոնին փեշով Մկոն (Խրիմյան) է հրավիրել Վան, որ միասին որոշեն իրենց բռնելիք դիրքը բռնապետության հանդեպ և համագործակցեն:

Մարշիմոնը մեկ ամիս հյուր մնալուց հետո մեկնեց, և մենք նորից, վերադարձանք Հանկույսների վարժատունը: Այդ վարժատան շրջանը ավարտում էր այն աշակերտը, որ Նարեկը վերջացրել էր: Ես Նարեկը վերջացնողներից մեկն էի, բայց բան չէի սովորած, թեև հինգ տարի ժամանակ էի անցկացրած այդ դպրոցում:

Այդ ժամանակները դպրոցը մեծ փոփոխությունաց ենթարկվեց: Ավետիս վարժապետը հեռացվեց, և նոր ուսուցիչներ հրավիրվեցին, որոնցից հիշում եմ Տիգրան Ամիրջանյանի կարկառուն և սև մորուքով դեմքը:

Այդ զգայուն բանաստեղծը և լեզվագետը նոր կարգեր մտցրեց և զրավեց աշակերտներին յուր դասախոսությանց ձևերով ու բովանդակությամբ: Ֆրանսերենի, թյուրքերենի, գեղազրույթյան և աշխարհաբարի դասեր սկսեց տալ: Ազատվելով Ավետիս վարժապետի սպանդանոց-դպրոցից, սկսեցի ոգևորություն մտնել երկու տարի, երբ մայրս, ճարահատ, ինձ դպրոցից հանեց, որպեսզի փող շահելու մասին մտածեմ:

Լսել եմ, որ մինչև 1870 թիվը Վանում ոչ մի գրագետ կին չի եղել, և միայն այդ թվին հիմնվել է Սանդխտյան աղջկանց դպրոցը: Սկզբնական շրջանին մի քանի աշակերտուհիներ միայն քաջուկություն ունեցել են դպրոց գալու,

որովհետև ըլոր կնիկները հակառակ են եղել կրթության, ասելով «Մեր աղջիկները գրել-կարդալ չգիտեն, պակաս խնամախոսներ նուև վեր նուան տուև կբերեն»:

[Faint, mostly illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

ՀՈՐՄ ՄԱՀԸ

Որչափ հիշում եմ, այդ ժամանակները հայրս հիվադացավ: Մի օր մայրս այգում լվացք էր անում, ես էլ տանը հիվանդ հորս կողքին նստել էի. նա տնքաց՝ ասելով, որ շատ է հիվանդ: Ես հիշեցրի իր ասածը, թե հիվանդը նա է, որ մի չամիչը ինն անգամ է կրծում: Նա սկսեց իր բազմահարկանի հայհոյությունները և պահանջեց, որ փլավ տամ ուտելու: Տնից դուրս ելա մորս հարցնելու, նա թույլատրեց: Վերադարձա ու փայտե գդալով ձավարե փլավը հորս բերանը դրի, նրա աչքերը ոլորվեցին և անշարժացան: Վախից գդալը բերանը թողնելով, վազեցի մորս հայտնելու: Երբ միասին վերադարձանք, հայրս արդեն մեռած էր: Մինչև հիմա էլ աչքիս առջևն է այդ յոթանասունամյա մարդու ճերմակ ատամնաշարքը: Ես երբեք չեմ հիշում, որ նա իր ատամները լվացած լիներ:

ՆԵՐՍԻԿ ԱՆՊԵՐ

Մեր թաղում կարճ հասակով և բոլորովին փոքր ու քաշմշկված կազմվածքով մի մարդ կար, որ կոչվում էր Ներսիկ ախպեր: Նա թեև հարյուր տասնհինգ տարեկան, բայց աշխատունակ և աշխույժ էր: Արհեստով երկաթագործ, կողքից կախվող դանակներ էր շինում և հատը տաս փարայի (տաս փարա 2 կոպեկ) ծախում: Զմեռները շաբաթ երկու անգամ մեր տուն էր գալիս գինի խմելու:

Մայրս պատկառանքով էր վերաբերվում այդ մարդու հանդեպ, իսկ ես ուղղակի նրան սիրում էի: Այդ ժամանակ ես կլինեի մոտ ինն տարեկան, բնավորությունս անհանգիստ մի երեխա: Հաճախ քարերն էի ծակծկում, իբր թե ծաղիկներ էի շինում նրանց վրա, դռներն էի փորում ու տաշտշում, փայտի սուրեր և նիզակներ էի շինում և այլն:

Երբ Ներսիկ ախպեր կուզար, տուն չէր մտնում, նստում էր այգիի պատի տակ, մի կտոր ջուլի վրա, դիզված ձյունների կողքին:

Մայրս քասայով գինի և մի ուրիշ հողե քասայով ժափիկ, սոխ և հաց դնում էր նրա առաջ ու միշտ կրկնում էր. «Փարի համար մի մտածե, մի օր երբ կունենաս, կուտաս»: Ներսիկ ախպերն էլ ձեռը դնում էր իմ գլխին և ասում. «Խաթուն, Աստված բալիդ պախի: Հետո նայելով իմ փայտի խանչալին՝ ասում էր. «Որդիդ լավ սանահաթթջար պիտի լինի»:

Սկսում էր հանդարտորեն մի կում գինի խմել ու հետո սոխն ու ժափիկը լավաշի մեջ փաթաթելով կրծել: Ես խնդրում էի նրան, որ երգի. նա մեկ ծունկը գետնին դրած, մյուսը բարձրացնում էր և արմունկը նրան հենելով, ձեռքն էլ երեսին, սկսում էր իր ցածր ձայնով երգել, երբեմն հայերեն, երբեմն էլ քրդերեն, ու բովանդակությունը ինձ պատմել: Երգում էր լալագին կերպով ու նվաղած ձայնով, Սիամանթոյի և Խջեզարեի դրամատիկ երգը: Սիամանթոն, երբ

վարիչն էր, Պոլիս գնալ գալ և ապրանք տեղափոխել նրա գործն էր: Ներսես աղան, որ ջրաղացի և նորատունկերի (այգիների) հսկիչն էր: Չորրորդը՝ Սահակ աղան, որ Վանի խանութի վարիչն էր և որի օգնականն էր նրանից փոքր Միքայել աղան: Այդ Միքայել աղան, միշտ ժպտացող, զվարթ և առևտրականից տարբեր խառնվածքով մեկն էր, որ մեծ թվով զգայուն ոտանավորներ է թողել:

Եղել է մի կարապետ աղա էլ, որ, սուրբ գրքերով շրջապատված, պահեցողությամբ և ծոմապահությամբ էր ժամանակ անցկացրել: Նրա գործն է եղել Հայաստանի անկախության համար աշխատել Վեցհազարյակով, որը մոգությանց գիրք էր: Բայց մի օր գարնանը Հիննորի տունելը (լաղմ) մաքրողները, նրան գտնում են մեռած, նստած դրությամբ, Վեցհազարյակը թևի տակ:

ՄԱՏԱՂ

Մի անգամ, երբ ես Մուղսի Ալխաս աղայենց տուն էի գնացել, Հանդիպեցի նրանց մատաղի օրվան:

Երեկոյան դեմ հավաքված էին եկեղեցու քահանաները, առաջնորդը քաղաքամեջից եկած էր. երեք եզ և ինն ոչխար պիտի մորթվեին մատաղի համար: Առաջնորդը և քահանաները զգեստավորվեցին, եզների կոտոչներին վառած մոմեր փակցրին ու սկսեցին իրենց շարականները և օրհնությունները: Այդ տոնական գիշերը, երբ թոնիրներից դուրս էին քաշում բուրումնավետ լավաշները և մատաղի պղինձների տակ բոցակեզ ճարճատում էին փայտերը, նրանց շուրջը հավաքվողները պարում, երգում և լեցուն տրամադրությամբ զվարճանում էին: Տակավին լույսը չբացված, ժամկոչը իր փայտե կոչնակին տխլ տխլ զարնելով, պղինձների շուրջն էր դառնում:

Սկսվեց մատաղի բաշխումը: Փափուկ մսերը, լավաշների մեջ փաթաթած, տալիս էին փողոցից անցնողներին, իսկ ամբողջ թաղեցիներին մատաղն իր ջրով էին բաժանում:

Այդ հաջի աղաները մինչև որ իրենց ճերմակ ջորիներով եկեղեցի չհասնեին, արարողությունը չէր սկսվում: Նրանց մասին առասպելներ էին պատմում, որ իբր թե նրանց ձեթի կարասները գիշերները աստվածանից լցվում էին ... և այլն:

Արդյոք այդ համբավը իրավացի էր. կասկածում եմ, որովհետև ես տեսել եմ, թե ինչպես հորեղբայրս և թե այդ հաջի աղաները տոկոսների տոկոսներով կողոպտում էին հայ ու քյուրդ գյուղացիներին:

Նրանք և ուրիշ հայ աղաներ, երկրի ամբողջ առևտուրը, դրամական շրջանառությունը ու փոքրիկ արդյունաբերությունը իրենց ձեռքն առած, թյուրքերի և քյուրդերի կողմից մրցակիցներ չունենալով, խաղաղասեր էին և պասսիվ, զի այդ էր պահանջում ու թելադրում իրենց կոպիտ նյութական շահը:

ՀԻՆ ՕՐԵՐԻ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐԸ

Տակավին թարմ են հիշողությունս մեջ իմ մանկության ու պատանեկության ժամանակվա դյուցազնական պարերով հարուստ, զարմանալիորեն ուրախ ու հեքիաթային հարսանիքները, որոնք հաճախ տևում էին յոթ օր և յոթ գիշեր:

Ի՛նչ փարթամ ու ճոխ կերուխում, և ի՛նչ խնթովության հասնող խրախճանություններ:

Առհասարակ այդ ուրախությունները կատարվում էին աշունից սկսած մինչև գարուն, երբ այգիների և գյուղական աշխատանքների դադարած շրջան էր, երբ մարդկանց արդար և համառ աշխատանքով լեփ-լեցուն էին ամբարներն ու մառանները և երբ նկուղների մեջ շիկավուն կարասները, փրփրացող մուգ կարմիր գինիներով կտնքային:

Հարսանիքի նշանդրեքը, նշանօրհնեքը, խինադրեքը, խալավօրհնեքը (հագուստ օրհնելը) և ուրիշ մի կարգ ազգագրական և հետաքրքիր նյութեր զանց պիտի առնեմ, նրա ընդհանուր, գեղեցիկ ու ասպետական բնույթն է, որ պարզ խոսքերով պիտի նկարագրեմ:

Այդ օրերին օրենք կար, որ քահանան գալիս էր նշանվելիք աղջկա մոտ՝ նրա կամքն իմանալու, թե արդյոք նա համաձայն է այսինչ մարդու հետ ամուսնանալու: Կարծում եմ, որ այդ գործողությունը կատարելապես ձևական էր, որովհետև հարյուրից ինսունհինը, թե՛ տղա, թե՛ աղջիկ, իրար տեսնում էին առաջին անգամ եկեղեցում, երբ պսակի արարողություն էր կատարվում:

Աղջկա ու տղայի առուծախը նախօրոք ծնողներն էին կատարում՝ առաջնորդվելով իրենց նախասիրությունից:

Նինադրեքի երեկո ամուրիները հավաքվում և ընտրում էին իրենց գլխավորը՝ ազաբաշին, որ պարերն ու քեֆերը ղեկավարողը պիտի լիներ: Նա ամուրդով էր ստանում իր ձեռքի կոպալը (մահակ) և նրա գլուխը հինայով ներկում:



Գյուղական հարսանիք

(Դայաստանի ազգային պատկերասրահ, հուշածեռագրային բաժին, Փանոս Թերլեմեզյանի ֆոնդ, այսուհետև՝ Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

Քավոր աղայի խորհուրդները դեր ունեին ազաբաշու ղեկավարման գործում:

Երկրորդ երեկո՝ ավելի հեռու ազգականները լուրջ ու ծանրախոհ հասնում էին:

Նրանք սենյակի պատերի տակ փոփած մինդարների վրա ծալապատիկ բազմած՝ ծուլորեն իրենց համրիչներն էին քաշում, երբեմն էլ իրենց առջև դրված օղիից մի կուռ կլեյով՝ մի քանի քիչմիչ և նշի կթուռներ (կուտ) բերաններն էին ձգում՝ իբրև աղանդեր:

Երբ այդ աղանդերը սիգարետ էին ոլորում, դուռն կողքին ձեռները կրծքին կանգնած պատանիները, իրար հետ մրցելով, մանդալներից ունելիքով կրակ էին հասցնում՝ փաթաթված սիգարետները վառելու համար:

Սենյակի վարի ծայրին աթոռի վրա նստում էր փեսացուն, որի կողքին կանգնած պիտի լիներ ազաբաշին՝ իր հինայած կոպալը ձեռքին:

Վարսավիրը մոտենում էր փեսացուին ու ձեռնարկում էր ածիլելու արարողություն: Միևնույն ժամանակ սկսվում էր լսվել մեղմորեն նուրբ ու տխրագին երաժշտություն:

Այդ նուրբ երաժշտության գործիքներն էին քամանչեն, փող, տյուֆ և տամպլայազը:

Նկատված էր, որ հաճախ փեսան ածիլվելու պահին լաց էր լինում՝ հավանաբար ազդվելով տխուր երաժշտությունից և ափսոսալով իր անհոգ կյանքը, որ պիտի թողներ և աշխարհ մտներ:

Երբ փեսան ածիլված ու պատրաստ էր, քավոր աղան և փեսայի հայրը կամ եղբայրը մեկնում էին խնամու տուն՝ հարսին առաջնորդելու եկեղեցին: Իսկ ազաբները, փեսայի շուրջը հավաքված, նրան նոր հագուստներով զարդարում էին և երգում հետևյալ երգը.

Թագվոր, ինչ պիրեմ քի նման,
Քու կանաչ արևուն նման,
Մեր վարդենիսն որ պացվեր,
Պացվեր քու արևուտ նման:
Թագվոր, ինչ պիրեմ քի նման,
Բալասան ծաղիկ որ պացվեր,
Պացվեր քո արևուտ նման... և այլն:

Այսպես երգելով փեսային նմանացնում էին բոլոր ծաղիկներին: Հետո ամուրիները, ազաբաչին, փեսան և աղաները իջնում էին վար՝ այգին, ուր պարում էին գուռնայի ու նաղարայի նվագակցությամբ, որք բացօթյա երաժշտության ամենաբարձր ոգևորությունն առաջացնող գործիքներն էին:

Սկսվում էր գյուվանդ կրոր պարը: Ամեն տարիքի տղամարդիկ և կանայք, կողք կողքի դանդաղորեն շարժվում էին՝ ազաբաչու ղեկավարությամբ և նաղարայի ու թմամով:

Գյուվանդը շրջապատված էր թե հարսնվորներով և թե դրսից հավաքված ամբոխով: Հարսանիքներից մեկում, որին ես մասնակցում էի, ամբոխից դուրս եկավ մի քյուրդ ցեղապետ, որ իր դամասկոսյան կեռ սուրը դուրս քաշելով՝ պահանջեց, որ բերեն պարսկական ամենանուրբ ապրեջումից գործված մի թաշկինակ, որպեսզի ինք ցույց տա իր սուր

գործածելու ուժն ու հունարը, օղին մեջ բռնած այդ թաշկինակը կտրելով: Այդ նրա համար էր, որ գյուվանդի գլուխ կանգնելու իրավունք վաստակի:

Ուկեցե մեկը կարող էր սրի ուժգին հարվածով ոչխարը երկուքի բաժանել, բայց երբ սուր գործածելու նրբություն չէր տիրապետում, այսինքն՝ զարկած ատեն ինչ չեղություն մը և դեպի ինք քաշելու մեծ փորձ չունենր, դժվարանում էր փափուկ ու նուրբ մետաքսը կտրել:

Թաշկինակը բերին, և Քաթիպ աղան մի հարվածով երկուքի բաժանեց, որով գյուվանդի գլուխ կանգնելով սկսեց իր սուրը խաղացնել:

Ամբոխի միջից մի ուրիշ մարդ դուրս եկավ. դա հայտնի Սաթմանից Համբա Կարոն էր: Նա էլ իր դամասկոսյան սուրը շողացնելով՝ պահանջեց մի մետաքսյա թաշկինակ, առաջարկելով, որ մի ձեռքով միայն նրա ճոթից բռնեն օղի մեջ, որով ծալքերով և թույլ թաշկինակի կտրելը ավելի պիտի դժվարանա:



Հարսանեկան կրոր պար (Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

Կարոն երկուքի բաժանեց մետաքսը, և Քաթիլ աղան իր տեղը զիջեց Համբա Կարոյին:

Հետզհետե պարն արագացավ, և ներկաների տրամադրութիւնը բարձրացավ: Բազմաթիվ երեխաներ ու պատանիներ էլ, մեղուների նման գծալով, ուլիկների պես թռչկոտում էին:

Ազաբաշուն լուր եկավ, որ փողոցում սուրերով և վահաններով զինված երիտասարդութիւնը և հետիոտները անհամբերութեան նշաններ են ցույց տալիս:

Ազաբաշին և մի խումբ երիտասարդներով շրջապատված փեսան ու նաղարան շարժվեցին դեպի փողոց՝ եկեղեցի գնալու համար: Հավաքված ամբոխը անտառի նման շարժվեց:

Ջուռնայի և նաղարայի շատ ավելի աշխույժ և հերոսական եղանակներով ձիարշավներ, պարեր և զվարճութիւններ սկսեցին լայն փողոցներում: Եկեղեցուն մոտենալիս, ուր ընդարձակ ու ազատ տարածութիւններ կային, ձիավորները երկու խմբի բաժանվեցին ու սկսեցին կալխան (վահան) խաղը, որը այսպես էր. մի խումբը, ձիեր ու սրեր խաղացնելով, հեռանում էր և որոշ տարածութիւնից քշում և սրահար անում մյուս պաշտպանվող խմբի վահանները, որոնցից կայծեր էին ցայտում: Հետո պաշտպանվող խումբն էր հարձակման անցնում: Ավելի հեռու զինված հետիոտներն էին պարում՝ ասպետական ծափ խաղը: Վերջը՝ զինված ձիավորներ և հետիոտներ երկու խմբի բաժանված, իրենց սրերով կամար էին կապում, որի տակից պիտի անցնեին հարսն ու փեսան և մտնեին եկեղեցի:

Եկեղեցում ազաբաշին վառած մոմեր էր փակցնում իր կոպալի ծայրին, քավոր աղան էլ իր սուրը բռնած հարսն ու փեսայի դիխին՝ կանգնում էր նրանց հետևը:

Երբ ներսը պսակի արարողութիւն էր կատարվում, դրսում երգում էին հարսանեկան երգեր.

Կանաչ-կարմիր կապեցուցին,
Ձեռքը ձեռքին տվեցուվին,
Կարմիր գինին խմեցուցին,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ...:

Երբ քավոր աղան և ազաբաշին հարսն ու փեսային դուրս են բերում եկեղեցուց, դրսում գտնվողները գոռում էին՝ Աստված շնորհավոր անի:

Նաղարան սկսում էր իր աշխույժ դըմբղմբոցը, նորից պարեր և ձիավորների կայտառումներ ու արշավներ:

Արդեն գիշեր էր, երբ ջահերով լուսավորված թափորը առաջանում էր դեպի փեսայի տունը: Դուռն փակված զարնում էին գետնին և մորթում: Ջուռնա, նաղարան լուռ էր, ազաբները կանչում էին փեսայի մոր ու երգում.

Եկեք բարև, հայ եկեք բարև
Մեր շնորհավոր թագավորին,
Թագավորին շատ արև,
Ուր թագուհուն շատ բարև:

Թագվորի մեր, դուս արի,
Քե նուշ, ամպար ենք բերե,
Վարդ ու ծաղիկ ենք բերե,
Մեխակ, շուշան ենք բերե:

Թագվորի մեր, դուս արի,
Տախտ ավլող ենք բերե,
Թոնիր վառող ենք բերե,
Կովդ կթող ենք բերե:

Թագվորի մեր, դուս արի,
Քո գլոխ դմբող ենք բերե,
Շիրիկ շիրվոր ենք բերե,
Խեռ ու խեռնակ ենք բերե:

Թագվորի մեր, պար արի,
Սարի կաքավ ենք բերե,
Սարի մարալ ենք բերե,
Ջուխտակ ջեյրան ենք բերե:

Նուրբ երաժշտութիւնն սկսում էր: Հարսն իրավունք չունենալով խոսելու, նրան ընկերանում էր մի տարիքոտ



Հարսանեկան կլոր պար
(Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

կին, որ կոչվում էր Հարսնաբույր: Նրանք տեղավորվում էին կնիկների սենյակում, իսկ տղամարդիկ՝ կերուխումի համար պատրաստված սեղանների շուրջը, որպեսզի հետո հերթը իգական սեռին գար:

Հղիանալու չափ ուտելուց վերջ՝ սկսվում էին աղջիկների ու կանանց անհատական պարերը:

Կեսգիշերից հետո երիտասարդներն սկսում էին խաղեր, որոնց առթած սրտաբուխ և ուրախ քրքիջներից տունը դղրդում էր:

Այդ խաղերն ու պարերը, զանազան նոր ձևերով, կրկնվում էին ամեն գիշեր:


Քնացողների թիվը շատ քիչ էր, բայց արշալույսներին էգ բարև, այսինքն՝ այգ ողջուն սկսվում էր նուրբ երաժշտությունով՝ տափարակ տանիքների վրա և հոտնկայս: Նվագում էին «Առավոտ լուսոն» և «Սըհարին» մեծ հանդի-

սավորություն, որք լուռությամբ ու պատկառանքով էին լսվում:

Այդ՝ Հավանաբար արևապաշտության ժամանակից մնացած սովորությունն լինե՞ր:

Վերջապես յոթերորդ օրը մեծամեծ պղինձներով փրկավ էին սկսում եփել, այդ նշան էր, թե պետք է ուտել փրկավ և հեռանալ հարսանիքից:

Երիտասարդները բողոքում էին, թե չենք ուզում ուտել փրկավ, չենք երթա, բայց՝ անօգուտ, զի աշխարհում տխրությունների պես ուրախություններն էլ իրենց վերջն ունեն:



ղոմիսայուճ
(սոնադայում վնասված/չստանում)

ՎԱՆԻ ՄԵՋ ԳՈՐԾԱԴՐՎԱԾ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ

Վանում առաջնակարգ արհեստ էր ոսկերչությունը: Մի գերմանացի գիտնական՝ ասորական բևեռագրերից առնելով՝ գրում է, թե Ասուրնագիրբալի հակա կայսրության ոսկի և արծաթի զարդերը հայթայթում էին Ուրարտու Վանյան արհեստավորները:

Դա ապացուցում է, որ ոսկերչական արհեստը հին դարերում ծաղկած է եղել Վանյան թագավորության մեջ: Հավանաբար այդ ավանդություններն են, որ միջև հիմա արտահայտվում են, որ վանեցիները լավ ոսկերիչներ են:

Իմ պատանեկության տարիներին, հիշում եմ, Վանում կային հետևյալ արհեստները՝ պղնձագործություն, հյուս-



Ջուլիակներ
(Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)



Թել մանող կանայք
(Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

նություն, կահագործություն, դերձակություն, համետագործություն, զինագործություն, դարբնություն, քարտաշություն, որմնադրություն, սովորություն, ներկարարություն և տապաղություն: Սուրբի համար տապաղները կես բանված կաշիներ էին պատրաստում, նրանք լավ քյոսալաներ չէին կարող պատրաստել:

Հիշյալ արհեստներից դերձակություն և կահագործություն ես սովորել էի:

ՄԵՐ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ

Մայրս Հագնում էր կապույտ ասվիե տալմա, որ մի տեսակ վերարկու էր՝ մինչև կրունկները երկարող, թևերի և մարմնի վրա կիպ նստած: Տալմայի տակից՝ լավ սիրիական գործվածքից անթարի: Տոն օրերին կապում էր խոշոր և ծանր արծաթյա քյամար տալմայի տակ, որով տալմայի փեշերը բաց էին մնում: Առջևը մուկ չթից գոգնոց էր կապում: Գուլպաները բրգից էին գործված՝ գունզգույն նախշերով: Ոտերին սև սուրբ ուներ: Գլուխը փաթաթում էր մուկ գուլնի յազմայով: Դեմքի վերին մասից Հագիվ Հայկական փայլատակող աչքերն էին երևում: Երբ օտար տղամարդ տեսներ, յազման բարձրանում էր մինչև քթի ծայրը: Կնիկները, երբ տնից փողոց էին դուրս գալիս, նրանք միմեկ (չարշավ) էին ծածկում, որ Հասնում էր մինչև ոտների ճաները և ճերմակ փաթիսկայից էր:

Պետք է նշել, որ Հասակավոր կնիկները, կապույտ տալմայի հետ, բոլորովին մուկ չթից գոգնոց, մուկ յազմա և սև սուրբ ուներին, իսկ երիտասարդ կանայք՝ կարմիր ասվիե տալմա, լուսավոր և գունզգույն չթի գոգնոց, յազմա ու կարմիր սուրբ էին Հագնում:

Բարձրահասակ ու գեղեցիկ քույրս էլ լուսավոր Հագուստներ ուներ, բայց գլուխը Ֆես էր ծածկում, երկար պուխով, որի տակից արախչի կար: Արախչիի եզերքին, ճակատի վրա բյուզանդական փոքր ու թանկարժեք ոսկիներ էին կարված, իսկ Ֆեսի ձախ կողմի վրա մի մեծ ոսկի կար կարված և նրա մոտ մի խոշոր կապույտ ուլնիկ՝ չար աչքից փրկող: Այդ ուլնիկի շուրջը՝ քսանմեկ Հատ քնքուշ դեղնավուն գույնով մարգարիտներ: Երբ քույրս փողոց դուրս գար, նա ապրշումից գեղեցիկ կտորով ծածկում էր գլուխը, որը իջնում էր մինչև ծնկներ և որի անունն էր մետակ:

Քրոջս մագերը իստկում էր (Հյուսեյ) մայրս, վեց թե յոթ ճղանի և կապում էր իրար թելձամով: Այդ թելձամի վրա

կային գունզգույն թանկագին քարեր:

Այդ բոլորը մեր ներկայի թշվառ վիճակին Համապատասխան չէին: Դրանք մնացած էին այն ժամանակներից, երբ Հատ աստվածավախ հորեղբայրս տակավին մեզ զրկած ու կողոպտած չէր:

Ես Հագնում էի կարմիր գպուն. մեջքիս կապում էի մի պարսկական կարմիր շալ՝ ճերմակ նախշերով, վրայից Հագնում էի կապույտ ասվիե սալթա, որ մինչև մեջքս էր երկա-



Վանեցի երիտասարդներ

(Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

րում: Զպուենիս աջ ու ձախ կողմերը մինչև ծնկներս ճեղքված էին, որտեղից երևում էր կարմիր շիլա վարտիքս: Գլուխս ծածկող արախչին գործում էին գյուղացի կանայք, բրդե գուլյնգգուն թելերով, որի տիրապետող տոնը կարմիրն էր: Ոտներին կարմիր չուստեր ունեի և բրդի նախշուն գուլպաներ: Ականջներիցս կախված էին ոսկի գինդեր:

Հայրս հագնում էր գպուն, կապույտ ու ճերմակ գծերով Մեջքին մեծ շալ էր կապում և վրան սալթա հագնում: Զմեռ ժամանակ մեծ մարդիկ աբա էին հագնում: Աբան մուգ դեղին գուլյնով, ոչխարի բրդից գործված հաստ կտոր էր, որի թևերը կարճ էին: Առջևը երկու փեշերի վրա լայն ու ճերմակ երիզներ կային և սրտի մոտ ոսկի թելերով բանված զարդ, որից կախված էին երկու փեշերը միացնող կապերը: Գլխին դնում էր մեծ ծալփող ֆես, որի վրա ոլորում էր սիրիական սև և նուրբ մի կտոր:

Վ Ա Ն Ի Ա Ր Դ Յ Ո Ւ Ն Ա Բ Ե Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Այն ժամանակները եվրոպական ապրանք շատ քիչ էր գալիս Վան: Բամբակը ուղտերի կարավաններով գալիս էր Պարսկաստանից: Տեղացիները նրանից կտավ էին գործում: Ամբողջ ժողովրդի ճերմակեղենը այդ կտավից էր կարվում: Հետո կտավները ներկում էին տորոնով (garance): Տորոնը մի բույսի արմատ էր, որ բուրբ այգիներում մեծ առատությամբ էր գտնվում: Այդ գուլյնը չփոխող կարմիր կտավը շիլա էր կոչվում:

Շմշիր փայտի վրա ոճավորված ծաղիկներ էին փորագրում, որը կոչվում էր դաջ և դրանով դաջում էին շիլան սև ու կապույտ գուլյններով. արտաքին հագուստների համար, որ չիթ էր կոչվում:

Մեծ պատերազմից հետո Լենինգրադից եկած մի խումբ ուսանեք երեք հարյուրի մոտ այդ դաջերից հավաքեցին տարան իրենց հետ:

Բուլսերից ու քարերից գուլյներ պատրաստելու մեծ կուլտուրա կար Վասպուրականում: Այդ գուլյները պատրաստելու գիտությունը, սքանչելի ժողովրդական երգերը, լավագույն թանգարանների զարդ լինելիք աննման ձեռագործները, բարձրորակ մագաղաթյա ձեռագիրները, ճարտարապետական ինքնուրույն կառուցվածքները կորսվեցին և այրվեցին, անտեղի ոչնչացված հայություն հետ: Իմ մանկության տարիներից մի քանի հատուկտոր տեղեկություններս գուլյների մասին բերում եմ: Սև գուլյնը շինում էին ընկույզի և նուռի տերևներից ու կեղևներից, որոնց մեջ ձգում էին փտած երկաթի կտորներ:

1870-73 թ. մոտեր կոտորել էին Դհերի քրդախոս հայերին (Դհերը գտնվում էր Տիգրանակերտի կուսակալության սահմանի վրա): Նրանցից ճողոպրածները Վան էին թափվել ու քաղաքի շատ տները մի դհերցի ընտանիք հյուրընկալելու պարտ էին զգացել, որով մեր խղճուկ տանն էլ տեղա-



Ջուլիակներ

(Փանոս Թերլեմեչյանի հավաքածու)

վորվել էր մի ընտանիք: Նրանք երկու եղբայրներ էին, անմիջապես հորեր զարկին և շալ ու շալվար գործելու դաղգահ պատրաստեցին: Շուտով մքուքների դուրեկան չխչխկոցը սկսվեց լսվել: Նրանք գործում էին ամենագեղեցիկ նախշերով ու գույներով շալվարներ, շալեր այծերի ջուռ մազից, ինչպես Վանի նահանգի շատախցիները:

Այդ գհերցիները մի աման ունեին, ինձ ստիպեցին, որ սրանից հետո միայն այդ ամանի մեջ միգեմ: Վերջը ես իմացա, որ մեզը գործ էր անվում կապույտ գույնը ամրացնելու համար:

Արքայական կարմիրը ստանում էին մի տեսակ միջատներից, որ գլխավորապես Սիրիայի կողմից էին բերվում: Այն ժամանակները մեր կողմերում եվրոպական ալիզարի գույները մուտք էին գործել:



Ջուլիակներ

(Փանոս Թերլեմեչյանի հավաքածու)

Երկրի արդյունաբերության գլխավոր արտադրությունն էր կտավ, շիլա, չիթ, շալ, շալվար, արա, ջեջիմ, ջյուլ և գորգեր: Հին դարերում մեր գորգերը նշանավոր են եղել: Արաբական պատմիչներից իմանում ենք, որ հաճախ հայերը արաբներին տուրք էին վճարում գորգերով: Որոնցից չորս նշանավոր նմուշներ կան Կոստանդնուպոլսի Եֆկաֆի (կրոնական) մուզեում: Նրանց վրա կան հայերեն բառեր և խաչեր գործված:

Բայց երկրի գլխավոր հասույթը ոչխարի և ձիերի արտահանությունն էր, որոնք տարվում էին մինչև Եգիպտոս և Պոլիս:

սկսեցին լուսավորվել կարմիր լույսով: Հետո իմացվեց, որ կառավարութիւնից հրամայված էր, հայոց կալվածքները և շուկան ամբողջովին այրել: Դրա համար պատրաստված խմբերը բերդից տրված ազդանշանի վրա գործի էին անցել: Շուկան ամբողջովին հայերին էր պատկանում, որովհետև միմիայն նրանք էին առևտրով զբաղվող: Առավոտյան ես վազեցի շուկա, արդեն բավական թվով այգեստանցի խանութպաններ հասել էին և այդ սև ու մխացող մոխրակույտերի վրա լռիկ-մնջիկ լաց էին լինում:

Խրիմյանը մի բրոշյուրով սարսռազդեցիկ մի բուռ ջուր է թափում այդ մոխրակույտի վրա իր վան Գուլժով:

Բանտից ազատվեցինք երեք օրից կաշառքով:

[Faint bleed-through text from the reverse side of the page, including words like 'հարկեր', 'միջոց', 'պատճառ', 'հարկ', 'միջոց', 'պատճառ', 'հարկ', 'միջոց', 'պատճառ']

[Faint bleed-through text from the reverse side of the page]

ԶԵՂԾՈՒՄՆԵՐՍ

Երեք անգամ մորս վստահության հանդեպ զեղծում եմ գործել:

Առաջին գաղտնի մի փախը (պղինձ) քառասուն փարանոց, որ հավասար էր ութ կոպեկի, վերցրել եմ մորս սնդուկից, վառող գնելու համար: Ոչխարի սրունքի ոսկորը ծակում էի մեծ դժվարութեամբ, մի քիչ վառող էի լցնում ոսկորի մեջ, վրան ամուր զիջքիկ էի զարնում: Հետո ձեթոտ պատույզ էի տեղավորում վառողին տանող անցքի մեջ, որը ես էի ծակել հերյունով, և կրակ տալով հեռանում: Քիչ հետո այդ իմ ոսկոր թնդանոթը մեծ աղմուկով պայթում էր անհուն հաճույք պատճառելով ինձ:

Երկրորդ զեղծումս էր՝ մի ածելի վերցրի մորս սնդուկից, ուրազով կտրեցի սուր անկյուն ունենալու համար: Դրանով քարերի և դռների վրա անունս և ծաղիկներ էի փորփրում: Դռները փչացնելու համար «դրախտից եկած» ծեծ էի վայելում մորիցս:

Երրորդ զեղծումս այն էր, որ սնդուկից մի ճութ (ոռուսական 20 կոպեկանոց) վերցրի ու գունավոր մատիտներ գնեցի, որոնցով մեր տան եղած ձեռագրներից մինիատյուններ էի ընդօրինակում և ծաղիկներ նկարում:

Հիմա էլ զայրույթից կծկվում եմ, երբ հիշում եմ, որ ամեն առավոտ հայրս այդ մագաղաթյա ձեռագրներից դժվարութեամբ մի երես պոկում էր, մեջը բռնութի լցնում ու ճմութելով խոթում էր իր լայն մեջկապի մեջ ու դուրս գնում:

Վերջապես ինձ տվին դերձակի աշակերտ, որ գնամ արհեստ սովորեմ և ընտանիքին ապրուստ հոգալուն աջակցեմ:

Շուկան Քաղաքամեջն էր, Այգեստանից մեկ ու կես ժամվա ճամփա հեռու: Իսկ քաղաքը չըջապատված էր շամիրամյան լայն պարիսպներով: Բերդին կպած արևելյան մեծ դռնից, որը կոչվում էր Թավրիզարգյահ, ներս էինք մտնում, ապա երկրորդ շարք պարիսպների ուրիշ մեծ դռնից

սկսեցին լուսավորվել կարմիր լույսով: Հետո իմացվեց, որ կառավարութիւնից հրամայված էր, հայոց կալվածքները և շուկան ամբողջովին այրել: Դրա համար պատրաստված խմբերը բերդից տրված ազդանշանի վրա գործի էին անցել: Շուկան ամբողջովին հայերին էր պատկանում, որովհետև միմիայն նրանք էին առևտրով զբաղվող: Առավոտյան ես վազեցի շուկա, արդեն բավական թվով այգեստանցի խանութպաններ հասել էին և այդ սև ու մխացող մոխրակույտերի վրա լռիկ-մնջիկ լաց էին լինում:

Խրիմյանը մի բրոշյուրով սարսուզեցիկ մի բուռ ջուր է թափում այդ մոխրակույտի վրա իր վան Գուլժով:

Բանտից ազատվեցինք երեք օրից կաշառքով:

ԶԵՂԾՈՒՄՆԵՐՍ

Երեք անգամ մորս վստահության հանդեպ զեղծում եմ գործել:

Առաջին գաղտնի մի փախը (պղինձ) քառասուն փարանոց, որ հավասար էր ութ կոպեկի, վերցրել եմ մորս սնդուկից, վառող գնելու համար: Ոչխարի սրունքի ոսկորը ծակում էի մեծ դժվարությամբ, մի քիչ վառող էի լցնում ոսկորի մեջ, վրան ամուր զխքիկ էի զարնում: Հետո ձեթոտ պատույզ էի տեղավորում վառողին տանող անցքի մեջ, որը ես էի ծակել հերյունով, և կրակ տալով հեռանում: Քիչ հետո այդ իմ ոսկոր թնդանոթը մեծ աղմուկով պայթում էր անհուն հաճույք պատճառելով ինձ:

Երկրորդ զեղծումս էր՝ մի ածելի վերցրի մորս սնդուկից, ուրազով կտրեցի սուր անկյուն ունենալու համար: Դրանով քարերի և դռների վրա անունս և ծաղիկներ էի փորփրում: Դռները փչացնելու համար «դրախտից եկած» ծեծ էի վայելում մորիցս:

Երրորդ զեղծումս այն էր, որ սնդուկից մի ճութ (ռուսական 20 կոպեկանոց) վերցրի ու գունավոր մատիտներ գնեցի, որոնցով մեր տան եղած ձեռագրներից մինիատյուններ էի ընդօրինակում և ծաղիկներ նկարում:

Հիմա էլ զայրույթից կծկվում եմ, երբ հիշում եմ, որ ամեն առավոտ հայրս այդ մագաղաթյա ձեռագրներից դժվարությամբ մի երես պոկում էր, մեջը բռնութի լցնում ու ճմռթելով խոթում էր իր լայն մեջկապի մեջ ու դուրս գնում:

Վերջապես ինձ տվին դերձակի աշակերտ, որ գնամ արհեստ սովորեմ և ընտանիքին ապրուստ հոգալուն աջակցեմ:

Շուկան Քաղաքամեջն էր, Այգեստանից մեկ ու կես ժամվա ճամփա հեռու: Իսկ քաղաքը չըջապատված էր շամիրամյան լայն պարիսպներով: Բերդին կպած արևելյան մեծ դռնից, որը կոչվում էր Թավրիզարդյահ, ներս էինք մտնում, ապա երկրորդ շարք պարիսպների ուրիշ մեծ դռնից

անցնում էինք Քաղաքամեջ, ուր գտնվում էր կառավարչատունը և հայոց առաջնորդարանը:

Դերձակի աշակերտ եղած ատենս հաճախ փլված տեղերից բարձրանում էի այդ հոյակապ պարիսպների գլխին և զարմանքով դիտում էի ուղիղ գետնից վեր սլացող բերդաժայռը, որի հղկված կողերի վրա քանդակված բևեռագրերը հետագայում պիտի լուսաբանեին ուրարտական կնճոռտ պատմության շրջանները: Բերդի արևելյան փեշերի վրա կարելի էր բարձրանալ, որտեղ գրանիտների մեջ փորված էին բազմաթիվ կանոնավոր սենյակներ, իբրև գաղտնարաններ, իբրև զանձարաններ իբրև զնդաններ և այլն: Այդ Շամիրամի գեղեցիկ դաստակերտը սքանչելի էր ամեն տեսակետից:

Դերձակությունը չսիրեցի, որոշեցի հաց ճարել մեր այգու մշակությունը, մանկությունից ծանոթ լինելով այդ գործին:

... անցնում էինք Քաղաքամեջ, ուր գտնվում էր կառավարչատունը և հայոց առաջնորդարանը: Դերձակի աշակերտ եղած ատենս հաճախ փլված տեղերից բարձրանում էի այդ հոյակապ պարիսպների գլխին և զարմանքով դիտում էի ուղիղ գետնից վեր սլացող բերդաժայռը, որի հղկված կողերի վրա քանդակված բևեռագրերը հետագայում պիտի լուսաբանեին ուրարտական կնճոռտ պատմության շրջանները: Բերդի արևելյան փեշերի վրա կարելի էր բարձրանալ, որտեղ գրանիտների մեջ փորված էին բազմաթիվ կանոնավոր սենյակներ, իբրև գաղտնարաններ, իբրև զանձարաններ իբրև զնդաններ և այլն: Այդ Շամիրամի գեղեցիկ դաստակերտը սքանչելի էր ամեն տեսակետից: Դերձակությունը չսիրեցի, որոշեցի հաց ճարել մեր այգու մշակությունը, մանկությունից ծանոթ լինելով այդ գործին:

Հայած ծնունդի մեջ քաղաքային կնճոռտ էր անցնում էր:

ԱՅԳԵԳՈՐԾ ԵՎ ՈՐՄՆԱԴԻՐ

Այգու մշակությունը գործը հայրս լավ էր հասկանում, բայց չէր ուզում աշխատել: Մայրս էլ հասկանում էր ու գիշեր-ցերեկ տապալակում էր, այնուամենայնիվ հնարավորություն չունեի բոլոր գործերին հասնելու: Ես մանկությունից հետևում էի այդ գիտություն և պետք է ասել, որ բավականին հասկանում ու սիրում էի: Սկսեցի պարապել, լինելով աշխատասեր, շուտով գործնականին տիրապետեցի: Փորել, ոտել, աղոշխար անել, պատվաստել, հենակներ տալ և այլն և այլն: Այդ բոլորը իմ ուժերից վեր չէին: Այնքան լավ սովորեցի, որ դրացի այգեպանները խնդրում էին, որ ես անեմ իրենց պատվաստները թե ծառերի և թե խաղողի թփերի վրա: Երբ այգու պատերի մի մասը փլչում էր, դրանք ես էի շարում ու նորոգում:

... անցնում էինք Քաղաքամեջ, ուր գտնվում էր կառավարչատունը և հայոց առաջնորդարանը: Դերձակի աշակերտ եղած ատենս հաճախ փլված տեղերից բարձրանում էի այդ հոյակապ պարիսպների գլխին և զարմանքով դիտում էի ուղիղ գետնից վեր սլացող բերդաժայռը, որի հղկված կողերի վրա քանդակված բևեռագրերը հետագայում պիտի լուսաբանեին ուրարտական կնճոռտ պատմության շրջանները: Բերդի արևելյան փեշերի վրա կարելի էր բարձրանալ, որտեղ գրանիտների մեջ փորված էին բազմաթիվ կանոնավոր սենյակներ, իբրև գաղտնարաններ, իբրև զանձարաններ իբրև զնդաններ և այլն: Այդ Շամիրամի գեղեցիկ դաստակերտը սքանչելի էր ամեն տեսակետից: Դերձակությունը չսիրեցի, որոշեցի հաց ճարել մեր այգու մշակությունը, մանկությունից ծանոթ լինելով այդ գործին:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

Մեր խղճուկ տունը, որ այգու հյուսիսային ծայրին էր, մոհրայով էր շինված: Փողոցի դռան վրա երկաթե հաստ ճկիկ կար կախված, որի վրաի ծայրի մոտ մի քառակուսի թանձր երկաթ էր ամրացված: Ներս մտնել ցանկացողը պետք է ճկիկով բախեր դուռը: Երբ դուռը բացվում էր, նախ մտնում էին այգին: Հիսուն քայլ զնալուց հետո հասնում էին բակի դռանը և մտնում էին բակը, որ շրջապատված էր մոհրայով շինած բարձր պատերով: Այդ պատերի հիմքերը մաշված էին, վերին եզերքները տեղ տեղ անձրևներից թափված, իսկ տեղ տեղ էլ քոլոզների նման բարձր էին մնացել: Այդ բարձր դռան դիմացն էր ցանցախի տունը, իսկ աջ անկյունում՝ իմ շինած հավերի բունը: Ձախ կողմում լայն որոսբաց (երեսբաց պատշգամբ) կար, որի մեջտեղ մի հաստ սյուն: Որոսբացի ձախ անկյունը փայխի (ախոո) դուռն էր, իսկ աջ անկյունում տան դուռը: Այդ դռնից մտնում էինք «տանտուն»: Տանտուն կոչվածը թոնրատունն էր: Ներս մտնելիս՝ աջ թևի վրա մի մեծ սենյակի չափ տեղ առանձնացած էր, ուր դտնվում էին երկու թոնիրները. մեկ փոքր՝ ամենօրյա գործածության համար, մյուս մեծը՝ 15 օր մի անգամ հաց թխելու համար: Այդ թոնիրները ես էի շինել կաղճին կոչված հողից և հետո թրծել:

Թոնրատան հատակը հող էր, խսիրով ծածկած և խսիրի վրա ջյուլ փռած, պատի տակ մի մինդար և բարձ:

Հատակին բոլորովին մոտիկ երկու նշաձև պատխաններ կային, իսկ թոնրի մոտ մի մետրի չափ բարձր երկու տոլապներ, որոնց մեջ տեղավորված էին ուտելիք և ամանեղեն: Մյուս պատի վրա, բավական բարձր, նույնպես մի նշաձև պատխան կար, որի մեջ դրվում էր ձեթի հողե պոզիկ և հողե ճրագ և մի բոլորովին սաղր տուփ: Այդ տուփի մեջ լցնում էին այրված լաթի կտորներ, քար, չախմախ, ցողեր: Ցողերը կանափատի ճյուղերից էին պատրաստում և ծայրերը

հալած ծծումբի մեջ թաթախելուց հետո, լցնում էին տուփի մեջ: Չախմախով խփում էին քարին, այրված լաթի կտորները կրակ էին առնում, այն ժամանակ ծծմբոտ ցողը դիպցնելով կրակին, նա կայծկլտալով սկսում էր վառվել և դրանով վառում էին ճրագը:

Ձեթի պատխանը մրոտ էր, իսկ հատակը և ծեփը ձեթով ծծված և սևացած էր:

Վերջում, երբ ես կենտրոնական դպրոցի աշակերտ դարձա, գիշերները այդ ձեթի ճրագը ճրագկալի վրա էի դնում ու նրա մոտ ծունկի իջած գրում էի ու դասերս էի պատրաստում: Այն ժամանակ մեր տանը աթոռի և սեղանի մասին գաղափար չունեինք:

Մեր տանտունը մինիմում 9 մետր բարձր էր: Թոնրատան մասը լուսավորվում էր մի փոքրիկ երդիկից և երկու վաթսուն սանտիմետրանոց պատուհաններից, այդ պատուհաններն էլ առաստաղին բոլորովին մոտիկ էին, հետևապես վարի մասը միշտ մութ էր:

Չմեռ ժամանակ պատուհանների վրա հաստ թուղթ էինք փակցնում շրեշտով, և ձեթոտ լաթի կտորը քսմուս էինք թղթին, որը թափանցիկ դառնալով ապակիի նման լուսավոր էր լինում:

Որպեսզի տան մնացած մասերը հնար եղածին չափ քիչ սևանան ծխից, այդ թոնիրների բաժինը բաժանված էր «տան-տան» մեծ մասից մի հսկա միջնորումով: Գետնից երկու և կես մետր բարձրից հորիզոնական ուղղությամբ գերան էին անցկացրել մի պատից մյուսը, ապա առաստաղի գերաններին և վարի գերանի ուղղահայաց մարտակներ էին բևեռել իրարից մի արշին հեռավորությամբ և այդ մարտակների արանքը հյուսած էին ճյուղերով, ետևիցն էլ ծեփած էին ցեխով: Այդ հնադարյան տան մեջ, առաստաղ միջնորում և պատեր այնքան մուր էին կապել, որ խոնավ եղանակին մրերը կակղելով սկսում էին կաթկթել, աղտոտելով ամեն ինչ: «Տանտան» մյուս մասը չորս անգամ ավելի մեծ էր:

Երբ դրսից ներս էինք մտնում, ձախ թևի վրա ութ աստիճաններով մի սանդուղք կար, որով բարձրանում էինք

Թառաման, որը մի ընդարձակ տեղ էր երկու կողմից ճաղերով շրջապատված: Ճաղերը մի արշին բարձրություն ունեին: Հատակը ծածկված էր խսիրով և ջյուլերով: Նրա հյուսիսային պատի վրա մի բուխարի կար և կողքին՝ մի տոլապ, ուր պահվում էին մեր 10 ձեռագրերը: Տոլապի մոտ դարսված էին մեր անկողինները, որոնք թե մեզ և թե հյուրերին ներքնակով ու վերմակով բավարարում էին, որոնք սավանով ծածկելու սովորությունն չկար: Թառամայի աջ եզրերին և մեջտեղ մի հատ սյուն կար, որ առաստաղի գերանները պահում էր: Թառամայից դեպի աջ պատը մնում էր մի ճանապարհ, որը լուսավորվում էր առաստաղի երդիկից: Իսկ ձախ կողմի պատի վրա բոլորովին վերև կային երկու փոքր պատուհաններ:

Թառաման մեկ ու կես մետր բարձր էր գետնից, որի տակ աստիճաններով կիջնեինք մաղազան (պաղպալ), ուր ավագների մեջ թաղված էին մեծ-մեծ կարասներ, որոնք գարնանը որքան էլ դատարկվեին, այնուամենայնիվ գինին անպակաս էր տան մեջ:

ՇԻՐԱԽԱՆԱ

Երբ մտնում էինք «տանտունը», ուղիղ Թառամայի կողքին եղած անցքից, գնում էինք մինչև հյուսիսային պատը, աջ անկյունի դռնից մտնում էինք շիրախանան, որը սալահատակված էր, ինչպես և նրա պատերը մեկ ու կես մետր բարձրությամբ: Նրա 1/3 մասը քարեթուղով բաժանված էր: Երբ մինչև ծունկներից վեր լվացված մերկ սրունքներով մարդիկ սկսում էին կոխոտել պատերի տակ կուտակված սև խաղողը, հյուլթը հետզհետե հավաքվում և լճանում էր թմբի մեջտեղում եղած անցքի մոտ, որովհետև հատակը երկու կողմից թեքվում էր դեպի այդ անցքը: Երբ անցքը բացում էին, մի հաստատուն քարե ջրհորդանից խաղողի ախորժաբույր նեկտարը վազում էր կախված մաղի մեջ և այնտեղ թողնելով պտուղներն ու չանչերը, թափվում էր գյուղը: Գյուղը երեք մետր խորությունը, սրբատաշ քարերով շինած մի քառակուսի ավազան էր, որի մեջ հավաքվում էր շիրան: Ապա այդ շիրան կժերով տեղափոխում էին մաղազեն և փրփրալից լցնում էին կարասների մեջ:

ՄԵՐ ՄԵՈՒՆ ԴԸ

Վանում առհասարակ թոնիրն սկսում էր վառվել արևածագին: Առավոտյան կանուխ լավ ուտում էին, որպեսզի գործի գնան, ցերեկը չափազանց թեթև, իսկ երեկոյան մթնաշաղին՝ նույնպես լավ:

Բայց ինչ էին ուտում և ինչպես:

Թորվան մոտ դրվում էր 40 սանտիմետր բարձրությամբ, քառակուսի պախր, վրան պղնձե կլոր սինին. սինիի եզերքներին շարում լավաշ հացը, հացի վրա, սեղանի եզերքին, մի քիչ իրար վրա ծալելով, ոլորում էին երկար կապույտ մի լաթ ճերմակ ծաղիկներով, որը սեղանի շուրջը բաղդաշի (ծալապատիկ) նստողները վերցնում էին իրենց ծնկների վրա և գործ էին անում իբրև անձեռոցիկ: Մեծերը ծալապատիկ էին նստում սինիի շուրջը, իսկ փոքրերը չոքում էին:

Մինիի մեջտողում դրված պիտի լինեք պանրի կամ ժածիկի պնակը, որովհետև պանիրով էր սկսվում ու նրանով էլ վերջանում ճաշն ու ընթրիքը: Հետո բերում էին թանապուր, որը նույնպես մշտական կերակուր էր: Թանապուրի վրա ցանում էին չորացած դեղին նարգիզի և կապույտ ծաղկի թերթիկներ: Այդ թերթիկները որևէ համ չունեին, այլ միայն հայկական դեկորատիվ զգայնություն արտահայտություն էին:

Թանից հետո բերում էին Վանի լճի համեղ տառեխ ձուկը, որոնց պոչերը խոթում էին բերանները և այդպես կլորած բերում դնում սեղանի վրա ու դրանով վերջանում էր: Յուղեղեն կերակուրներ հաճախ էին լինում, բայց մսեղեն՝ սակավ: Ցերեկները մայրս ինձ կերակրում էր աշխատելու տեղը՝ այգում, մի քիչ սխտորի ջուր էր բերում, որ հաց թաթախեի մեջը, ուտեի: Երբեմն բակլայի ջուր կամ բակլա և կամ հաց ու ժածիկ: Երեկոյան ընթրիքի մենյուն «ակուսստ»-ի, այսինքն՝ առավոտյան կերածի նման էր: Մրգի ժամանակ ես ուտում էի հնարավորից ավելին:

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱԿՈՒՄՆԵՐՍ

Մորս ներշնչմամբ ես կրոնասեր էի: Եկեղեցի էի գնում, պահք էի պահում, բայց որովհետև բնավորությամբ ըմբոստ և հարցասեր էի, մորս նեղն էի լծում: Մի անգամ նա պատմեց, թե երբ ինքը, շատ վշտացած լինելով հարբեցող հորս այյանդակ վարմունքից, գիշերով գնացել է եկեղեցի և Մարիամ Աստվածածինի պատկերի առաջ, ծնկադիր աղիողորմ լաց լինելիս, Աստվածածինը հանկարծ դուրս է եկել շրջանակից ու մխիթարել նրան: Հաջորդ օրը մութ-մութ եկեղեցի գնացի և չոքեցի Աստվածածնի պատկերի առաջ և մոտ երկու ժամ լաց եղա, խնդրելով, որ գեթ մի անգամ ժպտա ինձ: Աստվածածինը համառորեն չուզեց ու չկարողացավ ոչ պոկվել կտավից և ոչ էլ ժպտալ: Տխուր և հիասթափված տուն վերադարձա ու մորս պատմեցի եղելությունը՝ ավելացնելով. «Միթե հնարավոր է, որ ներկերը մարմին առնեն» և այլն: Մայրս խորին թախիծով գուշակեց, որ իր սիրելի որդին ապագայում անհավատ պիտի դառնա:

Եկեղեցում ինձ շատ էին հետաքրքրում երկու նկարներ, մեկը՝ «Վերջին դատաստանը», մյուսը՝ «Անառակ որդու վերադարձը»: Ես ժամերով կանգնում էի նրանց առջև և զարմանում էի, թե ինչպես էին կարողացել այնպիսի եզան ոտներ նկարել:

Մեծ պահքին ես սիրով վազում էի այն եկեղեցին, որտեղ Վարագա Հուսիկ վարդապետը պիտի քարոզեր: Նա տարօրինակ և ոգևորող մարդ էր, երբեմն աչքերը փակած, վերացած էր խոսում ու հանկարծ ցած ձայնով բացատրություն էր տալիս: Քարոզից հետո վազում էի մորաքրոջս տուն, հավաքում էի նրա չորս աղջիկները, պառավ քեռակինս ու մորաքրոջս գոգնոցը քաշում էի կոնակիս, իբրև փլուռն, թորվան մրոտ շիշը բռնում էի ձեռքիս իբրև վարդապետական դավազան, սկսում էի եկեղեցում լսածս քարոզը կրկնել, նույն շարժումներով, ձայնի նույն ելևեջներով և

նույն բառերով: Լսողները հիանում էին, և ես փառավորվում էի:

Մորս ձեռները և ոտները հողի, քարի, և խոտերի հետ շփվելով, միշտ պատռտված էին, ինչպես ծարավից պապական դաշտերը: Երեկոները նա այծի ճարպով դաղում էր այդ պատռտվածները: Նրա համառ պայքարը բնության դեմ, ինձ ներշնչող օրինակ էր հանդիսանում և իմ սերս պաշտամունքի էր փոխվում դեպի նրա անձնվեր կյանքը:

ՌՈՒՍ-ԹՅՈՒՐ-ՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
1877-78

Բալկաններու արյունոտ դեպքերը արձագանքում էին մեզ մոտ: Չարաշուք հովը կարծես վառողի անախորժ հոտ էր բերում:

Ցարիզմը քրիստոնյա փոքր ազգերի ազատության կեղծ պատրվակով աշխարհակալության էր պատրաստվում:

1877-ի ապրիլին ռուս-թյուրքական պատերազմը սկսվեց: Թյուրք պրոպագանդիստները գրգռում էին քյուրդ և թյուրք խուժանի մոլեռանդութունը և թալանի ախորժակը: Հորդանները հարավից շարժվում էին դեպի Հյուսիս: Խիզանը, որ մինչև 1800-ին հայ կուլտուրայի վայր էր եղել և այդտեղ գրվել էին հայ լեզվով գեղեցիկ մագաղաթյա գրքեր, որոնցից մի քանիսը մեծ տաղանդով օժտված, ծաղկող ծիրանի վրձինով զարդանկարված են, ահա այդ Խիզանը 77-ին Շեյխ Ջելալդինի բնակավայրն էր, որը նույնպես շարժվեց դեպի Բայազետ: Շեյխ Ջելալդի մասին քյուրդերը հավատացած էին, թե նա անխոցելի է, թե նա ռուսների գնդակները որսում է օդի մեջ և իրենց է վերադարձնում: Այդ հրաշագործ Շեյխ Ջելալդը, որ պիտի գնար ռուսներ ոչնչացնելու, թյուրք կառավարութունից առաջադրանք ստացավ նախ ճանապարհի վրա եղած քրիստոնյա հայութունը մաքրելու, որովհետև հայոց համակրանքը ռուսների կողմն էր:

Շեյխ Ջելալդը այնպիսի խժոժութուններ կատարեց Հայաստանում, որ սուլթանի սպասելիքները գլեց անցավ:

Երեկո էր, մորս հետ այգին դուրս եկանք: Նա, տեսնելով հրաշալի վերջալույսը, իր հիացքը հայտնեց, ասելով. «Տես, որդի, էն սքանչելի նարինջ, վարդ ու մանուշակ գույներով ամպերը, ինչպես օղակել են մի պուլյո կանաչավուն երկինքը»:

Հետո հեռավոր հրազենի ձայներ լսելով, ասաց. «Երեսդ դարձրու դեպի Արևելք, խաչ հան և ասա աստված... Դու քեռու (ռուսի) սուրը կտրուն անես»:

Հայուլթյան ձգտումն էր՝ դուրս գալ այն հորձանքից, որի մեջ խեղդվում էր, և դրա փոխարեն անգիտակցաբար օձին պլլվել:

1877-ին ահավոր չարիքների մի վտանգ էր սավառնում ժողովրդի գլխին, իսկ այդ ժամանակի Հայուլթյունը ինչ հոգեբանություն և ինչ ինքնապաշտպանություն հասկացողություն ուներ:

Հայերը, ստվար մեծամասնությամբ, իրենց ապահովությունը ուսանների տիրապետության մեջ էին տեսնում: Նրանք այն տարիներին մի ծեծված, վախլիկ և կես ճորտային վիճակի մեջ էին: Մի շատ փոքրիկ դեպք եմ պատմելու, որից ընթերցողը պիտի կարողանա եզրակացնել նրանց վախկոտության աստիճանը:

Արդեն Շեյխ Ջելադի գինվոր քյուրդերը լցվել էին Վան: Սարսափահար ժողովուրդը տնից դուրս չէր գալիս, պահվտոցիկ էր խաղում: Այն ժամանակվա կուսակալ Հասան փաշան, մի լավ հին թյուրք, որոշ չափով պաշտպանում էր Վանի Հայուլթյունը: Վանեցիները սակայն, թե դրամով, թե ուտեստով և թե հագուստեղենով բռնադատված էին օգնել քյուրդերին:

Մեր տունը կենտրոնից հեռու էր: Լուր հասավ, թե քյուրդերը եկան մեր թաղը: Մայրս և ես բարձրացանք տանիք, ինչպես բոլոր դրացիները: Մեկ էլ իմացրին, որ քյուրդերը շուռ եկան նեղ փողոցը: Այդ փողոցը մեր այգիի ծայրից էր անցնում:

Երբ մայրս խոսում էր դրացիների հետ, ես կամացուկ ծլկվեցի այգին և նրա մյուս ծայրը, մի հաստ տանձի ծառի վրա բարձրացա՝ տեսնելու համար, թե ինչ տեսակ մարդիկ են շեյխի գինվորները: Տանձի ծառից նկատեցի, որ մեր դրացի Պաշկալանցոց յոթ քաջառողջ եղբայրներն էլ տանիքին են բարձրացել, իրենց հետ վերցնելով մոխիր, որ պիտի ձգեին թշնամու աչքերի մեջ և քարեր: Քիչ հետո տեսնեմ երկու քյուրդ կամաց-կամաց գալիս են, ըստ երևույթին մոլորված լինելով: Այդ քյուրդերը մի-մի կեռ դաշույն ունեին իրենց մեջքին:

Այն ժամանակվա ողբալիորեն վախկոտ երիտասարդները իրենց պահվտած տանիքների անկյուններից սարսափահար

դիտում էին երկու խղճուկ քյուրդերին: Մինչդեռ այդ թվից քսան տարի հետո, երբ Նրիմյանի և Փորթուզայանի պրոպագանդն ու օրինակները արդեն որոշ չափով արթնացրած էին ժողովրդին, մի դյուժին գինված թյուրք ժանդարմները, չափազանց զգուշությամբ էին անցնում հայկական թաղերից:

Վերև հիշեցի, որ հայ ժողովուրդը իր հույսը դրել էր ուսանների տիրապետության վրա: Բայց եղել են հատ-հատ անհատներ էլ, որոնք թյուրքերի իշխանությունը նախամեծար են համարել, այն մտքով, որ թույլ թյուրքիայում հայերը պատեհություն պիտի ունենան ապագայում իրենց տնտեսական ու քաղաքական կյանքը բարելավելու:

Պատերազմի ընթացքին, հայերը ամեն տեղ անհաշիվ զոհեր տվին: Միմիայն Ալաշկերտի և Բայազետի ճակատին 30 000 հայեր մորթուվեցին թյուրքերից և քյուրդերից:

Ասիական կողմից ուսական բանակի կենտրոնը Կարինումն էր հաստատված, իսկ առաջավոր ջոկատները Մամախաթունը և Երզնկան գրավել էին: Ռուսական բանակի եվրոպական հատվածը Սան-Սթեֆանո էր հասել, ուր թյուրքերը ստիպված հաշտություն խնդրեցին: Հաշտության գլխավոր պայմանը Սան-Սթեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածն էր, որով ուսական բանակները Ասիայում պիտի մնային իրենց գրաված տեղերը, մինչև որ թյուրքերը ապագայում հայկական նահանգներում բարենորոգումնոր մտցնեին:

Եթե նենգ Անգլիան, հետո թյուրքերի և Գերմանիայի օգնությամբ, չհաջողեր փոխել տալ Սան-Սթեֆանոյի դաշնագիրը, 1914-ի իմպերիալիստական պատերազմի սկիզբներին, մենք թյուրքիայում հինգ միլիոն հայուլթյուն կուսենայինք:

Սան-Սթեֆանոյի դաշնագրից անմիջապես հետո ահա ինչեր պատահեցին:

Թյուրքիայում Միդհատյան խաբուսիկ սահմանադրությունը հռչակվեց, որով երկրի բոլոր ժողովուրդները հավասարապես ազատություն պիտի ունենային: Սուլթան Համիդը քաղաքական հաշիվներով, տվեց այդ մանուկ սահմանադրությունը, որպեսզի քիչ հետո խեղդեր թե՛ մանուկը և թե՛ նրա կնքահայր Միդհատը միասին:

Անգլիան, չուզելով, որ Ռուսաստանը Միջերկրականին մոտենա, ենթադրում եմ՝ Թյուրքերի հետ գաղտնի համաձայնություններ, սկսեց պահանջել Հայաստանի ինքնավարությունը: Անմիջապես Թյուրքիայի բոլոր հայ գավառներում ու գավառակներում, հյուպատոսություններ հաստատեց: Որպեսզի Սան-Սթեֆանոյի դաշնագիրը ոչնչացնի, պահանջեց, որ Թյուրքիայի գործերի առիթով, վեց մեծ պետությունների վեհաժողով գումարով Բեռլինում:

Մեծ պետությունները որոշեցին փոխարինել Սան-Սթեֆանոյի դաշնագիրը Բեռլինի 61-րդ հոդվածով, որով իրենք, բոլորը միասին լիազոր պիտի հանդիսանային՝ հսկել հայկական բարենորոգումների գործադրմանը: Այդպիսով ռուսական բանակը ստիպված կարիսից ետ քաշվեց պատերազմից առաջ եղած իր սահմանների վրա:

Հետո Անգլիան կաշառք ստացավ Կիպրոս կղզին Թյուրքիայից, փակեց հայկական գավառներում եղած իր հյուպատոսարանների մեծ մասը, և դազաղվեց[ին] մեծ աղմուկով պահանջված հայկական բարենորոգումնորը:

Հայերը, իրենց անսահման ուրախությունն այդ օրերին, հանկարծ և նորից ստիպվեցին Թյուրք և քյուրդ յաթաղանի շնորհաց ապավինել:

Ահա «Հայասեր» Անգլիայի հայաջինջ գործերից մեկը, որը պետք էր ուլտրա-անգլիասեր պատրիարք Ներսես Վարժապետյանին և դիպլոմատ համարված Չերազներին շատ բան սովորեցներ: Բայց դժբախտաբար ոչ այդ բթամիտները և ոչ էլ նրանց հաջորդող «ազգի տխմար փրկիչները» շնականորեն էգոիստ և շահամոլ եվրոպական պետությունների վրա դրած իրենց անհիմն հույսերով չարաշահման առարկա լինելուց հետ չկանգնեցին և խելքի չեկան:

Այդ թվերին Վասպուրականի նահանգը 400000 բնակչություն ուներ, որի ուղիղ կեսը հայեր էին կազմում: Իսկ Թյուրք, քյուրդ, ասորի, հրեա (Աղբակում միայն հրեաներ կային), եզդի, գնչու և լազ՝ բոլորը միասին 200000 էին:

ՔՅՈՒՐԴԵՐԸ

Քյուրդերը, չափազանց հետամնաց ժողովուրդ լինելով հանդերձ, հոգով արի և ընդունակ ցեղ են: Տիգրանակերտ նահանգի արևելյան մասը, Բաղեշի նահանգի գրեթե կեսը, ամբողջ Կորդվաց լեռները և Մասիսներից մինչև Մուսուլ (բացի Սիարտիսուբից, որը Ասորեստան էր) քյուրդերով բռնված էին: Անգլիացիները այդ քյուրդերով բնակված վայրերի ժողովուրդը մեկ ու կես միլիոն էին հաշվում:

1902 կամ 1903 թ. էր, Թիֆլիսում հրատարակվող «Երկրի ձայն» թերթի կողմից Փարիզում ինտերվյու ըրի Կահիրեում հրատարակվող «Քյուրդստան» թերթի խմբագրապետին, որը հայտնի Պետրխան Բեյի թոռն էր: Նա, իմիջիայլոց, ասաց. «Մենք էլ շահագրգռված ենք, որ Սուլթանի անարգ լուծը խորտակվի և մենք և հայերը դաշնակցած ունենանք մեր անկախությունը, միայն մի պայմանով, որ քյուրդերը վարեն զինվորական գործը, իսկ հայերը՝ ֆինանսականը»:

Մեր այսօրի և ներստանական միջանդ միայն մի այդ կարևորագույն ժամերին աչքսանես աչքսաների մասերը լուծվեցին: Մի քչի մտազբոսությունը գեղացիները համար պատերից զատվելով մասնաճանաչական զբաղմուլներ: Ինչ տեսնեմ, ուսուցիչները աշակերտների հետ խաղում էին, աչքերս փակվեցին, երևալի ու նայից նայեցի, այդ, ուսուցիչները աշակերտների հետ խաղում էին, աչքներից սմայր «հսկայական» թաղերով թռչում էին, որպեսզի միս մեծ վում էր և այլն, և այլն:

Նոր սրտանոց փրջացավ, մասեցա մի ուսուցիչ և փոստիկ կերպով հասցրի. «Մա էլ կարճ է եմ բնդանելի այս գալուցում»: Նա իր քրտինքն իր սրտում, ժպտալով ասաց ժեհարկի: Ներս տարավ ինձ տեսչի մաս և երկուրդ միասին սկսեցին զրտել իմ աչքսաներում ձեզքրալամ մեռներն ու հագուստները: Փորձու զայլանք ի՞նչ գիրք տվավ, որ կարճամ: Թե՛ն ես 5 տարի Անտոյա փայտալուծի, 2 տա-

ՍՈՎԸ

Ռուս-թյուրքական պատերազմի ավերածությունները գյուղատնտեսության համար աղետալի եղան: Այդ աղետը սաստկացրեց 79 թվի խիստ երաշտը, և ահա կարոտաբեր և մահառիթ մեծ սովը, ուղտերի նման, չոքեց վասպուրական-ցինների դռներին: Տեղացի ունևոր հայերը, պետք է ասել՝ ի պատիվ նրանց, կոմիտե կազմեցին և խոշոր գոհողություններով օգնության հասան ազգաբնակչությանը, որ իհարկե բավարար չէր կարող լինել:

79 թվին պատրիարքարանից Խրիմյանը ուղարկվեց սովելոց հանձնաժողովի նախագահ, որի անվան Պոլսից և Կովկասից առատ նվերներ եկան և այդ ժողովրդասեր մարդը, անխտիր օգնություն բաշխեց թյուրք, քյուրդ և հայ դակահար ժողովուրդներին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Պոլսի ազգային սահմանադրության եռուն շրջանից հետո, ընդհանուր լուսավորչական ուժեղ շարժում սկսվեց Բյուզանդիայի հայ գաղութում: Կազմվեցին կրթական ընկերություններ, որոնցից Արարատյանը 78 թվին Մկրտիչ Փորթուզալյանի միջոցով հիմնեց մի վարժապետանոց Վանի մեջ, որը երկար կյանք չունեցավ: Հետո այդ Արարատյանը, Կիլիկյանը, Դպրոցասիրաց Արևելյանը միանալով, կազմեցին միացյալ ընկերություն հայոց, որ Հայաստանում և Կիլիկիայում 40-ի չափ դպրոցներ ուներ իր խնամքի տակ:

Վանի վարժապետանոցի փակվելուց հետո, որքան հիշում եմ, Մ. Փորթուզալյանը 80 թ., նորից Վան վերադառնալով, իր անձնական նախաձեռնությամբ հիմնեց մի միջնակարգ դպրոց, որ կոչվում էր Կենտրոնական:

Այդ դպրոցը 2 պատրաստական և 4 ուսումնական դասարաններ ուներ:

Մեր այգիի և Կենտրոնականի մեջտեղ միայն մի այգի կար: Ցերեկվա ժամերին աշխատելիս աշակերտների ձայները լսում էի: Մի օր հետաքրքրությունս գոհացնելու համար պատերից ցատկելով մտա Կենտրոնականի զբոսավայրը: Ինչ տեսնեմ, ուսուցիչները աշակերտների հետ խաղում էին, աչքերս փակեցի, ճմռեցի ու նորից նայեցի, այո, ուսուցիչները աշակերտների հետ խաղում էին. տղաներից ոմանք «հսկայական քայլերով» թռչում էին, տրապեզի վրա ճոճվում էին և այլն, և այլն:

Երբ զբոսանքը վերջացավ, մոտեցա մի ուսուցչի և վախլիկ կերպով հարցրի. «Ես էլ կարո՞ղ եմ ընդունվել այս դպրոցում»: Նա իր քրտինքն էր սրբում, ժպտալով ասաց. «Իհարկե»: Ներս տարավ ինձ տեսչի մոտ և երկուսը միասին սկսեցին դիտել իմ աշխատանքում ճեղքրտված ձեռներն ու հագուստները: Փորթուզալյանը ինձ գիրք տվավ, որ կարդամ: Թեև ես 5 տարի Ավետիս վարժապետի, 2 տա-

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԴԵՊԹ

Ես մեծացրի Գրիգոր Արծրունու, Բաֆֆրի և Միքայել Նալբանդյանի ֆոտոգրաֆները, որոնց շատ հավանեցին: Փորթուգալյանը նկարները ուղարկեց Քաղաքամեջ, կահազորձ վարպետների, որ շրջանակներ շինեն: Պատահում է, որ տանողին փողոցում ձեռնում են և նկարները ցխերի մեջ են ձգում: Այդ անողները տաղանդավոր, բայց պահպանողական հոգևորականների մարդիկ են եղել, որոնք հակառակ էին ազատամիտ Փորթուգալյանին և խրիմյանին: Իրենց թայֆայական հասկացողության զոհ զնացին իմ նկարները:

Փորթուգալյանը դատ բացեց և 9 մեջիդիե շահելով ինձ հանձնեց: Ես 2 խոշոր օգուտ ունեցա, մեկ՝ որ հինգ ուղբի քսան կուպեկ ոսկի փող մտավ գրպանս, որ կյանքումս ունեցած չէի, երկրորդ՝ իմ պատանեկան գիտակցությունս արթնացավ տեսնելու համար, որ մարդկանց հարաբերությունները այնքան էլ բարեկամական չեն և հասկացողություններն էլ՝ ներհակ:

Այն ժամանակները ես ուսուսական կոնսուլ Կամսարականի լուսանկարն էլ մեծացրի և իրեն նվիրեցի: Նա շատ ուրախացավ և ինձ տվեց Քյուրքչյանի հանած Անիի 44 լուսանկարները՝ սթերոսկոպով միասին: Այդ լուսանկարները և սթերոսկոպը, Միքայել Նալբանդյանի «Երկրագործության» գրքուկը այգիում թաղեցի, որ թյուրքերը մեր տունը խուզարկելիս չգտնեն, բայց որոշ ժամանակ հետո, երբ բացի, նրանք արդեն փչացել էին խոնավությունից:

ԵՐԵՔ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքակրթությունը ուղտերի դանդաղ քայլերով մուտք էր գործում մեր հետամնաց միջավայրում: Օրին մեկ, երբ ես Քաղաքամեջ էի գնացել, խանութում տեսա մի իր, որ լամպ էր կոչվում: Հարցրի, թե ինչո՞ւ համար է այն, բացատրեցին, թե կազյաղի (նավթ) են լցնում նրա մեջ և վառում, որ շատ լավ է լուսավորում: Ալլա՛հ Ալլահ... Ես գնացել էի Քաղաքամեջ նրա համար, որ իմ մաշված ու ծակծկված ոտնամանիս փոխարեն նոր չուստեր գնեի, բայց ես գնեցի լամպը և մի հողե փարչ նավթի համար: Արագ-արագ վերադարձա և մթնշաղին հասա տուն: Անմիջապես նավթ լցրի լամպի մեջ և սկսեցի վառել: Մայրս և քույրս զարմացած իրար էին նայում: Ես վազեցի դրացի կանանց կանչեցի, նրանք նույնպես զարմացած՝ մեր այս տոնական օրվան մասնակից եղան:

Երկրորդ նորությունը կարտոֆիլն էր:

Մի օր մորաքրոջս տանը տեսա գետնախնձորի նման մի բան: Հարցնում եմ, թե ինչ է սա, նա սկսեց բացատրել, որ փոռտները (բողոքական ամերիկացիներ) բերել են իրենց երկրից, կտրտում ու ցանում են, մեծ քանակությամբ ավելանում է և սննդարար ուտելու բան է: Խնդրեցի մի քնի հատ և անմիջապես բերի, կտրտեցի և ցանեցի այդ գարնանը: Աչնանը մենք մի քանի կիլո կարտոֆիլ ունեցանք, որ մի բարություն էր այդ աղքատ երկրի համար:

Երրորդ նորությունը լուցկին էր, որ ծծմբով էր շինված և վառելիս գեշ հոտ էր տարածում: Բայց այնուամենայնիվ չերազված նորություն էր, որ դյուրացնում էր աշխատանքը: Այդպիսով մենք սև ու աղտոտ ձեթի ճրագից հետո նույնպես ճամփու գրինք վաստակավոր չախմախն ու քարը, մրոտ և այրված լաթի կտորները և ցողերը:

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԸ


Ուսուցիչները երբեմն դասերից հետո մեզ պահում էին դպրոցում և նկարագրում էին հույն և բուլղար հեղափոխականների կյանքը և նրանց մարտնչումները իրենց անկախության համար:

Ասում էին՝ հին պարսիկները Վասպուրական են անվանել Վանի լճի ոլորտքը, որ նշանակում է քաջորդյաց կամ վեհորդյաց երկիր: Մենք՝ այդ քաջորդյաց զավակներս, պետք է գինավարժության, ճիավարության և լողորդության մեջ վարժ ու կոփված լինենք, վաղվա մարտերին լավ ռազմիկներ լինելու համար:

Խոսում էին թյուրք և քյուրդ ժողովրդի դեմ, կամաց-կամաց ներարկելով մեր արյան ու մտայնության մեջ ազգայնական թույնը: Ոչ մի անգամ ես չեմ լսել, որ նրանք ասեին, թե թյուրք և քյուրդ աշխատավորությունը մեզ նման տառապում է սուլթանական բռնություններից: Նրանք նույնպես չահագործվում ու կեղեքվում են բեյերի, աղաների և կալվածատերերի կողմից: Մենք բախտակից ենք այդ թշվառ ամբոխին և լավ պիտի լինեք, որ այդ բոլոր շահագուրծվող ժողովուրդների կամքն ու եռանդը կուտակվեն միասին պայքարելու համար շահագուրծողների դեմ:

ԽՐԻՄՅԱՆ ԵՎ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆ

Այս երկու հայրենասերները հայ ժողովուրդը լուսավորելու և նրա թմրած գիտակցությունը արթնացնելու ճգնաժամով, հախուռն ու տենդագին աշխատանք են տարած 1870-1885 թվերին: Այն ժամանակվա զարգացած հասարակությունը մեծ գովեստով և երախտագիտությունամբ է արտահայտվել նրանց շինարար և օգտակար գործունեության համար:



Մկրտիչ Խրիմյան (Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)



Սկրտիչ Փորթուգալյան
1878, Թիֆլիս
(Փանոս Թերլեմեչյանի հավաքածու)

Խրիմյան՝ Փոքր Ասիայի ճանապարհներից զուրկ խուլ անկյունում՝ Վասպուրականում, մամուլ է բերել ու թերթ հրատարակել: Իր բնական պերճախոսությունը ու անձանձրույթ և նվիրված գործունեությունը հասարակական աշխատանքի ընդունակ նոր մարդիկ է հասցրել:

Հետո Փորթուգալյանի հետ միասին, երկարատև նիրհի ու սարսափի մատնված Հայ ժողովրդի զարթոնքի համար դպրոցներ են բացել և գրական ու բանավոր պրոպագանդայով հաջողել են որոշ չափով հեղափոխական շարժում առաջ բերել:

Բայց նրանց ոգևորությունը իմ կարծիքով տարերային է եղել, որովհետև ժողովրդին առաջնորդելու պատասխա-

նատվություն ունեցողները պարտավոր էին նույն ժողովրդի ապահովության համար զգոն լինելու՝ երբեմն Եվրոպան սարսեցնող Օսմանյան պետության հանդեպ, զի նա զինված էր կառավարելու դարավոր փորձով և խորամանկ, բռնավոր ու աշալուրջ էր:

Թյուրք կառավարությունը թեև նրբորեն հետևում էր այդ լուսավորիչների շարժումներին, բայց տակավին մեր ազգային մշակույթի վրա արգելքներ չէր դրած և անցուղարձ հտեսներու ձևացողի դիրքի մեջ էր:

Կենտրոնական դպրոցի տարեկան մրցանակաբաշխության հանդեսին, Փորթուգալյանի կարգադրությամբ, ես արտասանել եմ Գամառ Քաթիպայի «ՄՎ է Հայ» ոտանավորը, կուսակալի և օտար հյուպատոսների ներկայությամբ:

Սահմանադրության տարեդարձներին, մեծ բազմությունը ժողովուրդը խուժում էր Վարազա վանք, երբ Խրիմյանը վանահայր էր: Այնտեղ հրացանի ձայների հետ՝ ամեն կողմից լսվում էր. «Կեցցե ազգային սահմանադրություն» և միևնույն ժամանակ երգում էին «Չար սուլթանի ոսկի թախտը ջարդվեցավ, փշրվեց, /Թախտի տակից հազար ազգաց ազատություն պարգևեց» երգը: Հիշյալ անխոհեմ փաստերը ապացույց էին մեր առաջնորդների ոչ միայն զգոնություն պակասին, այլ և նրանց միամտության և կացութային թյուր ըմբռնման:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐԸ

Մեր դպրոցի մի խումբ աշակերտներս աշխատում էինք լավ նշանաձիգներ դառնալ, դարձանք: Լողորդության մեջն էլ հաջող էինք, բայց ձիավարության մեջ կաղում էինք:

Գիշերներից մեկում երեք ընկերով դաշտ էինք դուրս եկել, ձյունների մեջ երկար քայլելու, որպեսզի ցրտին և դժվարություններին վարժվեինք: Բարեբախտաբար գայլեր չհանդիպեցին: Առավոտյան դեմ, ցրտից սարսափելի դողով բռնված դաշտերից վերադարձանք և մտանք Նորաշեն եկեղեցին:

Մեծ պասի վերջին՝ Չարչարանաց շաբաթն էր. արարողությունները սկսվեցին. մենք բարձրացանք եկեղեցու տանիքը: Գմբեթը ծածկված էր կապարյա թերթերով: Երբ վարը եկեղեցու մեջ ջերմեռանդ հավատացյալները արտասովախառն տարածում էին իրենց ձեռքերը և աղոթում, մենք էլ վերը գմբեթի վրա էինք տարածում մեր ձեռները՝ պոկելու համար կապարյա թերթերը և նրանցից գնդակներ ձուլելու մեր հրացանների համար:

Ես արդեն լավ նշանաձիգ էի և հոգեհառ՝ հավեր բռնող չների և ճուտեր որսացող կատուների համար:

Գիշերը հավաքվում էինք մեկն ու մեկի տունը և գաղտնի կարդում էինք արգելված գրքեր, զարգանալու համար:

Գլխավորապես Բաֆֆիի գրքերն էր, որ կարդում էինք և նրա հերոսների անունները յուրացնում: Լավ հիշում եմ, որ օգոստոս ամսի մի պայծառ լուսնակ գիշեր, երբ ես պտուղներ պահպանելու համար այգումն էի, պատահաբար ձեռքս ընկավ «Ջալալեդդին» գիրքը. լուսնի լույսով մի գիշերվա մեջ կարդացի: Հետո կարդում էինք թարգմանական գրքեր՝ Վիկտոր Հյուգոյի «Թշվառները», «Գաղտնիք Փարիզին», «Երեք հրացանակիրները», Էժեն Սյուլի գրքերը և այլն:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲՈՒՆՏԸ

Մի քանի օր էր, որ լսում էի վեճեր և վրդովմունք մեր ուսուցիչների մոտ: Ուստիկանները, մի ինչ-որ հայ գյուղում խժդժություններ կատարած լինելով, բողոքները հասել էին Պոլիս Բարձրագույն Դուռ և այնտեղ անախորժություն էին պատճառել:

Վանի կուսակալը պահանջած էր մեր առաջնորդարանից, որ նա իր դիրքը ճշտի: Քաղաքական և կրոնական ժողովները իրենց նախագահ Խրիմյանի հետ միասին խոնարհաբար հեռագրել էին Բարձրագույն Դուռ, որ Վանում գայլն ու գառը միասին կարածին և իրենք կատարելապես խաղաղ ու երջանիկ են, շնորհիվ Սուլթան Համիդի հայրական հոգատարություն:

Ընդհանուր կացությունը, կատարելապես հակառակ լինելով այդ կուսակալի թելադրած հեռագրին, ժողովուրդը գրգռված էր:

Իմացա, որ հաջորդ օրը ցույց պիտի լինի առաջնորդարանի դեմ, և ես մյուս առավոտ, մոռանալով դպրոցն ու ուսումը, կանուխ վաղեցի Քաղաքամեջ և մտա առաջնորդարանի բակը: Շատ քիչ մարդ կար այնտեղ: Մեր դպրոցը հաճախ այցելող մի մարդ ինձ կանչեց և ուղարկեց 3 խանութպանի ու մի պահակի ետևից և պատվիրեց, որ շուտ գան: Հետո նորից ուրիշների ետևից: Վերջին անգամ, երբ ես վերադարձա, առաջնորդարանի բակը արդեն լեփ-լեցուն էր մարդկանցով: Նույնիսկ սանդուղքներն էլ բռնված էին, և ես շատ դժվարությամբ և ճաղերի վրայից մագլցելով հագիվ կարողացա հասնել առաջնորդարանի դռանը, որի առջև կանգնած էին Վանի ամենահայտնի խովարդա (լոթի) երիտասարդները և կովողները: Դուռը փակ էր, և բարապանները թույլ չէին տալիս, որ ոչ ոք ներս մտնի: Երիտասարդներից մեկը, ուսը դռան դեմ արավ և մյուսներն էլ օգնեցին, տեսա, որ դուռը չբխակալեն բացվեց կռնակի վրա: Նախասենյակը լցվեցին,

ԵՐԵՄՅԱՆ

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Ո՞վ էր Երեմյանը:

Համբարձում Երեմյանը մի տաղանդավոր և լավ սովորող պատանի էր, երբ 11 տարեկանում կորցրեց իր տեսողությունը:

Ուրիշների ընթերցումով, նա հմտացավ հայերենի, պատմության և ֆրանսերենի ու նվիրվեց իր սիրած կրթական գործին: Այդ ազնիվ հայր, ունենալով մեծ անհատականություն, մեծ կամք և վարչական կարողություն՝ 78-ի պատերազմից հետո, որբախնամ միություն հավաքած անտեր երեխաներով զբաղվեց և դասախոսեց նրանց: Այդ օրերին որբախնամը լուծվեց, Երեմյանը իր նախաձեռնությամբ և տեղացիների օգնությամբ փոքրերի մի մասը պահելով, որբանոց հիմնեց:

Ապա այդ որբանոցը փոխվեց Երեմյան միջնակարգ դպրոցի: Համբարձումը իր չափազանց զգուշ և պահպանողական խառնվածքով մի հոյակապ աշխատանք կատարեց 36 տարի շարունակ: Շատ աշակերտներ հասցրեց, որոնք առևտրական, ուսուցչական և արհեստների ասպարեզի վրա մեծ տեղ բռնեցին: Սակայն պետք է նշել, որ այդ բազմաթիվ աշակերտությունը պասիվ գործունեություն ուներ: Թուիչք ունեցող, ըմբոստ և հեղափոխական խմորով մարդիկ դուրս չեկան նրանցից, նման կարճո Սանասարյան դպրոցի աշակերտության:

Փորթուգալյանի դպրոցը փակվելուց հետո, ես, որ այդ դպրոցում կահագործություն էլ սովորած էի, անմիջապես այդ գործով պարապեցի: Բայց որսորդությունը իմ շատ սիրած զբաղմունքն էր:

Այդ փնտրանքային գործը իր շնչապատի մեծ տարածությունները լուսավորող մի փարսու էր, որ հանգրեց Սուրբ Բուռնիան և զբաղվում էր անավարտությամբ:

Գրեմք ցանկի (մագալին) յնն գանն յ գործս դո քանա իոյնի ընտանիքի մի անդամի համար ցանկանալով զանցնելու անհատականությունը:

Չմեռ ժամանակ ես հաճախ գնում էի Վարազա լեռ, քարայծ որսալու: Պատահում էր, որ չէր հաջողվում: Ես գիշերը մնում էի լեռ՝ ձյունների մեջ, որպեսզի մյուս առավոտ շարունակեմ որսալ: Ամբողջ գիշերը սրսփալով դողում էի, չէի համարձակվում քնել, գի ձյունի մեջ քնողը հաճախ չի արթնանալ այլևս: Հաջորդ օրն էլ անհաջող անցավ որսը: Ես սառած և անոթի իջա լեռան ստորոտը, բյուլ աղբյուրից ջուր խմեցի և պարտասած պառկեցի նրա կողքին հանգստանալու: Երեկոյան արևի ճառագայթները ոսկեզօծ ու նարնջագույն բիծեր էին շարում ձյունների կապույտ ստվերների կողքին, սև և ամեհի ժայռերի վրա, մեկ էլ տեսնեմ, որ բարձրի մի ցցուն ժայռից դուրս եկած արու քարայծի եղջյուրները և հետո գլուխն ու կուրծքը: Մի բույս ես քարացա, որ չնշարվեմ և երբ նա գլուխը դարձրեց մյուս կողմը՝ փնտրելու իր էգերին, ես պառկած տեղս հրացանը վերցրի ուսիս, նշան բռնեցի, և երբ նա գլուխը դեպի ինձ դարձրեց, իմ գնդակից այրված սրտով թավալ գլոր վայր ընկավ բարձրից՝ դիպչելով զանազան քարերի, որոնց վրա փակած մնաց նրա ճարպի ու աղիքների մեծագույն մասը:

Գիշերները լեռան շրջապատի գյուղերն էի իջևանում: Նրանց փայտի թառամաններում (ախոռի մեջ առանձնացած զրույց անելու տեղ), ուր գյուղացիները հավաքվում ու դանդատվում էին, թե ինչպես վաշխառու հայ և թյուրք աղաները, տոկոսների տոկոսներով նրանց թալանում ու հողերը գրավում են: Թե ինչպես շեյխը կամ հարուստը նրանց ստիպում են իրենց տավարը ու ոչխարը ձրի պահել, թե ինչպես պետություն հարկահանները գալիս ծեծում, ոչխար կամ հավեր մորթում ուտում և հաճախ կանանց անպատվում են և այլն և այլն: Սկսում էին վիճաբանություններ, առաջարկում էին զանազան միջոցներ մեղմացնելու իրենց տաժանելի վիճակը: Մի աշխույժ երիտասարդ տեղից ցատ-

կելով ասաց, որ պետք է մենք մեկ (միաբան) ելնենք զենք, առնենք և ընդդիմանանք այդ թալանչիներին: Մի վաթսուհինոց մարդ, Սարգիս աղբեր, որ սիրվում էր գյուղացիներից, լռեցրեց այդտեղ եղողներին և ինձ խնդրեց, որ ես էլ խոսեմ: Ամենքը լուռ ինձ էին նայում, իսկ ես մտածում էի, թե ինչ ձևով խոսեմ, որ այդ հետամնաց մարդոց ընդունելի լինի:

Ասացի, որ զինվել իր հերթին հարկավոր է, բայց այդ միայն բավարար չէ: Նախ պետք է գիտենալ, թե ինչ լավ բան է ազատությունը, թե ինչ ստեղծագործական ուժեր կան թաքնված ազատության մեջ և թե այն ատեն ինչպես ձեր նյութական միջոցները շատանում են, և դուք երջանիկ եք ապրելու: Ամենից առաջ ձեզ սաստիկ ճնշող կրոնից ու կրոնականներից կամաց-կամաց պիտի ձգտեք ազատվել: Հետո ուսումով գիտակցություն պիտի բերեք ժողովրդին, որ նա ազատության գաղտնի իմանա, այն ժամանակ է՝ որ «Գեղ կը կայնի, գերան կը կտորի»: Ես սաստիկ հոգնած էի, Սարգիս աղբերը ժողովուրդը ցրեց, որ ես քնանամ:

ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՍ

Քաղաքում ինձ առաջարկվեց դասեր տալ: Ես համաձայնեցի երեք դպրոցում այցելու ուսուցչի պաշտոնով ավանդել աշխարհագրության, գեղագրության և գծագրության առարկաները: Երեք տարի շարունակեցի ուսուցչությունս, բայց մի մութ դեպք եկավ վերջ դնելու դրան:

Սանդխտյան աղջիկների դպրոցի հարուստ հոգաբարձու Փանոս աղա Կափամաջյանի կալվածքը կից էր դպրոցին: Նա մի բնակելի տուն շինեց, որի հիմքը դրավ դպրոցի պատի տեղը ու դպրոցի զբոսավայրի վրա մեծ-մեծ պատուհաններ բացեց, տունն էլ վարձու տալ պայմանավորվեց թյուրք պաշտոնեությունը: Ոչ-ոք չամարձակվեց բողոքելու, որ Փանոս աղան պետական օրենքով պետք էր տան հիմքը 3 մետր ներսով դնել: Հիշյալ տունն այրվեց: Շատ մարդիկ ձերբակալվեցին, որոնք հասած էին հրդեհը մարելու, բայց բուն հրդեհողը չգտնվեց:

Երկու ամիս հետո Վանի քաղաքական և կրոնական ժողովը, թեմական առաջնորդի նախագահությամբ, վճռում է ինձ ազատել ուսուցչությունից: Առաջարկում են ինձ հրաժարական տալ, թե նրա համար, որ կառավարությունը ծուռ աչքով էր նայում ինձ, և թե կասկածելով, որ ես կարող է հրդեհած լինեմ Կափամաջյանի տունը: Հրաժարվեցի ուսուցչությունից և աշխատեցի լինել պրոֆեսիոնալ հեղափոխական, այսինքն՝ կազմակերպող, պրոպագանդիստ, գիտենալ ինչպես կայունացնել տատանվող տարրերը և գիտենալ ինչպես խուսափել ոստիկանությունից ու շեղել նրա հետապնդումները:

**ՉՈՒՆ ԿՅԱՏՈՒԿԻ ԴԵՊՔԸ
1889 ՄԱՅԻՍԻՆ**

Այն ժամանակները մի դեպք պատահեց Չուխ Կյատուկում: Այդ Կյատուկը մի լեռնային խոժոռ անցք է, Խոշապի և պարսկական սահմանի մեջտեղում: Դեպքը հետևյալն էր:

Իմ ավագ ընկեր, մի վանեցի վառվռուն և նվիրված երիտասարդ, Օհանես Ազրիպայան, իր հետ առնելով երկու ընկերներ՝ Քոլոշյան (թիֆլիսեցի) և Կուլաքսոյան՝ վանեցի, Սալմաստից ուղևորվում են Վան՝ հեղափոխական գործունեության համար: Բայց Չուխից անցնելիս՝ այնտեղի սահմանապահներին են հանդիպում, որոնք հարձակվելով սպանում են Ազրիպայանին և Քոլոշյանին: Կուլաքսոյանը փախչելով Պարսկաստան՝ ազատվում է:

Սույն երկու նահատակներն էլ, մեր երկիր վերադարձող զարնանային ծիծեռնակների նման, առաջիններն էին, որ եկան, հեղափոխության սեղանի վրա զոհվեցին, որոնք թե՛ ցավի և թե՛ սիրո առարկա դարձան ժողովրդին:

Այդ դեպքը չափազանց ուռցրեց թյուրք կառավարությունը, իր Պոլսի թերթերի մեջ՝ բռնությունները սաստկացնելու նպատակով: Վանի ամենահայտնի հայերից Նաթանյան Կարապետ աղան, որը դիպլոմատ և խելացի մարդու իրավացի համբավ ուներ, նույնպես Չուխի դեպքի համար աղմուկ բարձրացրեց՝ Պոլսի թե հայ և թե օտար թերթերի մեջ՝ հավանաբար հայկական հարցը արթնացնելու նպատակով:

Հիշյալ ազդեցիկ Նաթանյանը, մոտիկ հարաբերության մեջ լինելով այն ժամանակվա նոր հովերով տարվող երիտասարդ կուսակալ Խալիլ բեյի հետ, երկուսը միասին մի ծրագիր էին ներկայացրել Բարձրագույն Դուռը, - հայերից միլիցիական հսկող խումբեր կազմել պետության սահմանների պաշտպանության համար:

Այդ խնդիրը երկար վեճերի առիթ տվեց: Վանի ռեակցիոն և լրտես հարուստների այջակցությամբ կուսակալը պաշտոնանկ եղավ ու Նաթանյանն էլ աքսորվեց Աքրայի բերդը:

Հետագայում Սուլթան Համիդը Նաթանյանի ներկայացրած ծրագիրը իրագործեց ուրիշ կերպ: Քյուրդերից կազմեց համիդիե հեծելազույնը, նրանց հազվեցրեց և զինեց նոր սիստեմի հրացաններով, զինվորական կրթություն տվեց ու տեղական վարչությունից անկախ՝ մի ահեղ ուժ պատրաստեց հայերին ջարդելու համար, որոնք հետագային մեծ դեր ունեցան հայ ժողովրդի բնաջնջման գործում:

Արդեն դպրոցում մենք տարվում էինք փոքր ազգերի ազատագրության համար մղված պայքարներով: Հիմա էլ Չուխու դեպքը, աքսորները և այլ ճնշումները, կրակում շիկացած երկաթի բնույթ էին տալիս մեզ: Երբ մենք կիսատ պուստ ծանոթանում էինք Ֆրանսիական հեղափոխության ականավոր գործիչներին՝ Մարատի, Ռոբեսպիերի և նմանների գործունեությանը, հրդեհվում էին մեր հոգիները և ահռելի ծարավ էինք զգում հեղափոխական գործունեության, որ մեզ պիտի բերեր մարդու և հայրենիքի ազատություն:

ԿԱՐՆՈ ԵՎ ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ԴԵՊՔԵՐԸ

Չուխա տիրալի դեպքից հետո՝ 1890 ին տեղի ունեցավ Կարնո դեպքը և կոտորածը, որը լսածովս հնչակյանների սարքածն էր: Այդ դեպքով իբր թե Եվրոպական պիտի միջամտեր, բայց եվրոպական դեսպանները միայն առ ի գիտություն ընդունեցին:

Հնչակյանները զայրացած Եվրոպայի անտարբերության վրա, Կարնո դեպքից երեք շաբաթ անց, կազմակերպեցին Կ. Պոլսում Գուլ-գափուլի հայտնի ցույցը 1890 թ. հուլիսի 15-ին: Այդ ցույցի ղեկավարն էր վանեցի մի խանութպան՝ Փանատիկ, հայրենասեր և հեղափոխական խառնվածքով՝ Զանկյուլյան ազգանունով: Նա ռեվոլյուցիոն ձևերը իր ընկերներով խուժեց պատրիարքարանը, ուր առավ օսմանյան զինանշանը ու կոխկրտելով ջարդեց և ստիպեց Աշրգյան պատրիարքին կառք նստել և իրեն հետ երթալ Յըլդըզի պալատը՝ պահանջներ անելու սուլթանից: Քիչ հետո թյուրք զինվորները հասան, ազատեցին կառքի մեջ պառկած ուշագնաց պատրիարքին և Զանկյուլյանին էլ ձերբակալելով՝ ցուցարարները ցրվեցին:

Օսմանյան մայրաքաղաքը առաջին անգամ էր տեսնում այսպես անվահեր հանդգնության մի փորձ:

Զանկյուլյանի թողած օրագիրներից երևում է մի մոնումենտալ միամտություն եվրոպական գիշատիչ պետությունների «արդարասիրության» վրա ունեցած հավատքի մասին: Հետո նրանք անգիտակ էջին, թե սուլթանին բացարձակ կերպով պատերազմ հայտարարել ինչ աղետալի կացություն էր ստեղծում բուն Հայաստանի հայության համար:

Շատ պարզ էր, որ շնական և նյութապաշտ իմպերիալիստական պետությունների համար սուլթան Համիդի դյուրին շահագործվելիք ռեժիմը ավելի ձեռնտու էր, քան մի հեղափոխական կացություն:

Թրքո-եվրոպական հարաբերությանց և հայկական հարցի շահագործման մասին հետո:

ԱՎՈՅԻ ՓԱԽՈՒՍԸ

Մեր բանտում մի հայտնի կաշաղ կար, որ շղթայակապ հարյուր մեկ տարվա բերդարգելության դատապարտված էր: 90 թվին Ավոյի բանտից փախցրին: Հակառակ կառավարության խիստ խուզարկության, Վանի երիտասարդությունը նրան պաշտպանելով թաքցրեց, այն հույսով, որ նա քյուրդերին բարեկամ է, ճամփաներին ծանոթ և իր ազատությանը երիտասարդության պարտական, հետևապես կարող է առաջնորդել մի խմբի, որ Պարսկաստանից գեներանցկացնի Վան, և կարող է ծառայել ժողովրդյան քրտինքն ու արյուն ձեռք տղուկներին պատժելու գործին:

Մենք պատրաստեցինք չորս ձի և չորս հրացան, մեր լավագույն երեք փորձառու և տարիքոտ ընկերները Ավոյի հետ մի գիշեր սուրացին դեպի Պարսկաստան, ուր պիտի պատրաստեին ապաստարան նորանոր զնացողներին:

Սահմանազխում քյուրդերը, տեսնելով նրանց, մոտ վախժուկ զինված ձիավոր հետևում, հասնում և պահանջում են անձնատուր լինել: Այն ժամանակ ընկերները թողնում են ձիերը և բարձրանում են ժայռերի մեջ, ու կռվին սկսվում է: Կռվի տաք ժամանակ, երբ մեր ընկեր Գարեգինը արդեն վիրավորված էր, Ավոն սուսիկ-փուսիկ վար է իջնում քարերից ու գնում քյուրդերին հանձնվում: Ավոյի վրա դրված հույսերը չարդարացան: Մեր երկու ընկերները կռվում են մինչև գիշեր և մթության մեջ վերցնելով իրենց վիրավոր ընկերը, ուղղվում են դեպի արևելք: Բայց հաջորդ օրը քյուրդերը նրանց գտնելով բռնում բերում են Աբաղայի ցեղապետի մոտ, և Ավոյի հետ միասին բերում հանձնում են Վանի կուսակալին: Բանտում Ավոն մատնում է բոլոր նրանց, ովքեր իրեն թաքստոց և ուտելիք տվել էին:

ԴԵՊԻ ՄՈՒՇ

Ես կասկածելի էի կառավարութեան համար և հսկողութեան տակ: Ուրեմն մի ժամանակ պետք էր հեռանալ Վանի միջավայրից: Ինքնագլուխ որոշեցի գնալ երկրորդ հայաշատ Բաղեշի նահանգը, այնտեղ կազմակերպություններ առաջ բերելու և կապ հաստատելու նրանց և մի քիչ կանուխ արթնացող վասպուրականցիների մեջ:

Վարդապառի տոնին, Տիգրանակերտից, Յարդինից, Կարինից, Քղիից և ուրիշ շատ տեղերից բազմաթիվ ուխտավորներ հավաքվում էին Սուրբ Կարապետի վանքը: Պետք էր այդ հարմար առիթը օգտագործել, ուստի վճռեցի ուխտավորի անվան տակ Սուրբ Կարապետ գնալ և ընկերացա այնտեղ մեկնող ուրիշների հետ:

Մենք պիտի անցնեինք Վանի ծովի (լիճ) հարավային եզերքով: Այդ ձևով երեք օրվա ճանապարհ էր մինչև Դադվան, որը կապված էր դժվարութեանց և անապահովության հետ, իսկ ծովով ավելի դյուրին էր ճամփորդությունը: Գնացինք Ավանց գյուղ, ուր գտնվում էր նավահանգիստը: Մոտավորապես հարյուր ամենահին ձևի առագաստանավեր կային, որոնց ղեկավարում էին ավանցի հայերը: Նավերը գործածվում էին Արճեշի և Ալջավազի ցորենները Վան տեղափոխելու, նույնպես և Կարճկանի ծովափնյա անտառներից վառելիքայտ ու ճամփորդներ փոխադրելու գործին:

Մտանք նավ և տակավին մեկ և կես կիլոմետր չէինք անցել, երբ հյուսիս-արևելյան քամին սկսեց փչել: Այդ քամին կոչվում էր կարաչխ, որը վտանգավոր էր:

Ավանցիք նշանավոր հայհոյողներ էին. քամին գալուն պես «ծո՛, ենա քո ակը...» և այլն, սկսեցին գունազեղ և բանաստեղծական հայհոյանքներ: Բարեբախտաբար կարաչխը խիստ չէր և ուռցնելով մեր նավի բազմազան կարկատաններով նախշուն առագաստը, մղեց նավը արագորեն սուրալ կապուտակ և խշշացող ջրերի վրա դեպի արևմուտք:

Երեկոյան մոտեցանք Կապույտ կող լեռան: Այդ լեռան գագաթները ալ կարմիր էին հագել, նույնպես կարմիրն էին տալիս զմրուխտյա կանաչների մեջ թաքնված վանքերի ու բերդերի բեկորները:

Իրար մոտիկ ամեն մի ձորակից աղմուկով ծովն էին թափվում փրփրահույզ զուլալ գետակները:

Ավելի բարձր Եղբրովի ճյուղածածկ լեռնաշղթան վարդադույն աչքերով ժպտում էր ծովի հյուսիս-արևմտյան ափին բազմած տիտան Սիփանին, որ իր խոժոռ դեմքը ստվերի մեջ պահելով՝ դամասկոսյան կայծկլտացող սուրերի նման ճառագայթներ էր որսում քովընտի անկողին մտնող հրավառ արևից:

Ես, նավի ծայրին նստած, երանութեան մեջ էի՝ տեսնելով բնութեան չքնաղ և անմրցելի այդ քերթվածը:

Հաջորդ առավոտ արշալույսին հասանք Դադվան հայկական մեծ գյուղը և արևմտյան նավահանգիստը:

Նրա հյուսիս-արևմուտքում բարձրանում էր Նեբրովթ լեռը, որը գագաթից հանքային տաք ջրերի շատրվաններ էին խփում:

Ալեկոծությունից հոգնողները հանգստացան, և մեզ հետ եղած գործի մարդիկ հեռացան. Մնացինք տասն և ութ վանցի երիտասարդներ, որոնցից մեծ մասը զինված էր մեկական ռևոլվերով և մի փոքրիկ տոպրակ ուտելիքով:

Մյուս օրը, տակավին լույսը չբացված, ճամփա ընկանք, որը արդեն ուսումնասիրել էինք:

Անտանելի տոթ էր, մոմի նման հալվում էինք և կարծես թե փափկած մարմիններ քրտինքի էին վերածվում և խառնվում գետնից առատորեն բարձրացած և մեր վրա նստած փոշու հետ:

Հասանք մի լայն ճանապարհորդ առաջանում էր կարավանը: Իմացանք, որ դրանք բաղեցրի ուխտավորներ են, որոնցից յուրաքանչյուր տղամարդ երկու դաշույն և մի ազալի հրացան ունի: Կնիկներ և փոքրեր հեծած էին ձիերի և էշերի վրա, որոնց բեռնած էին նաև անկողիններ և ուտելիք: Առջևից գնում էին նույնպես բաղեցրի երեք թյուրք ձիավորներ, որոնք վարձքով ընկերացած էին կարավանին պաշտպանության հա-

մար: Միայն չկրցինք ըմբռնել, թե ինչու համար էին հրացաններ և դաշույններ, քանի որ երեք թյուրքեր պիտի պաշտպանեին հարյուր հիսուն զինված մարդ: Վերջապես սպանիչ տաքից թուլացած՝ հասանք մի տեղ, որտեղից զուլալ գետ էր բխում և որի վրա քյուրդերի մի թեքքե (ուխտատեղի) էին շինած:

Ընդհանուր հարձակում սկսվեց պազուրակ ջրերի վրա: Արևի տապից և չորությունից լայն պատռվածքներ ունեին շրջապատի դաշտերը, իսկ երկու մետր խորությամբ հսկայական ջուր անօգուտ վազում էր խառնվելու Արածանիին: Գիշերը այնտեղ անցկացրինք: Հաջորդ օրը իջևանեցինք հայկական խոշոր խաս գյուղում: Մեծ հաճույքով ծանոթացա այդ հպարտ ու տոկուն գյուղացիության հետ: Վերադարձիս այն համոզմունքը գոյացավ մեջս, որ Մուշի գյուղացիությունը ավելի բարձր հատկություններ ուներ, քան Վասպուրականի գյուղացիությունը, և Մուշին տոն տվողը գյուղն էր, իսկ Վասպուրականին՝ քաղաքը:

Մշո այդ ընդարձակ և խիստ բարեբեր դաշտի մեծագույն մասը արտադրում էր լավ խաղող, ծխախոտ և սքանչելի ցորեն:

Երրորդ օրը մենք Մուշումն էինք: Լեռան կողի վրա շինված այդ փոքրիկ քաղաքը հետաքրքիր էր. մեկի տան տանիքը ավելի վերի տան տերրասն էր, ամֆիթեատրի ձևով դասավորված:

Մուշում ծանոթացանք երիտասարդության և ինտելիգենցիայի հետ: Այդտեղ ժողովրդի մեջ հեղինակություն վայելող, միջնակարգ կրթությամբ մի շենչող երիտասարդ կար, որի անունը Ստեփան էր: Նա ճանաչում էր Մշո գավառը, Սասունը, լավ տիրապետում էր թյուրքերենին և քրդերենին, ճամփորդել էր Փոքր Ասիա և Պոլիս, զոհող ու անվախ էր ու երեսուն և երեք տարվա փորձառությամբ մի հայրենասեր: Նա անմիջապես ոգևորվեց իմ առաջարկություններից, ինչպես չորացած խոփը հրդեհվում է մի փոքրիկ կայծից: Մշակեցինք մեր անելիքները, և դրվեց առանց անունի հեղափոխական կազմակերպչության հիմքը: Կարծես 1889 թվին էր այդ, երբ տակավին ոչ մի հեղափոխական կուսակցություն ներկայացուցիչ այդ կողմերը չէր եկած: Ապա ընկերներիս հետ մեկնեցինք Սուրբ Կարապետ, որ յոթ ժամով հեռու էր Մուշից:

ՄՇՈՒ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Կեսօրից հետո հասանք Արածանի գետին, որի խոնավության և ջրերին պապակում էր այդ մեծ և արևից խանձվող դաշտը: Գետն անցնելով սկսեցինք զիզգազ բարձրանալ լեռը: Երեկո էր, երբ հասանք Սուրբ Կարապետ: Պարսպից ներս մտնելով առաջին ուժեղ տպավորությունն ստացա զանգակատնից, որ մի սքանչելի ճարտարապետություն էր և կառուցված մոտ հարյուր քայլ հեռու եկեղեցուց: Մեծ պատերազմից անմիջապես հետո, ականատեսները պատմեցին, որ վերոհիշյալ զանգակատունը դինամիտով քանդել էին:

Վանքը շինված էր եռանկյունի մի լեռնավայրի արևելյան անկյունը հին կռատան տեղը, որի առջև բացվում էր մի վիթխարի տեսարան, այնչափ ընդարձակ, որքան մի սրատես աչք հնարավորություն չուներ ընդգրկելու: Այդ հոյակապ դաշտը հյուսիսից եզերված էր Արածանիով, հարավից՝ ամենհի Սասնա լեռներով, արևելքից՝ հեռու մշուշի մեջ նկատվում էին Գրգուռի և Ներքովթի սիլուետները, որոնք պատնեշում էին Վանի ծովի ավելի հրապուրիչ տեսարանները:

Այդ եռանկյունի սարի ծայրին նստելս ու քարանալս մեկ եղավ: Իմ նստած տեղից դեպի աջ՝ առաջին պլանի վրա Քարքե լեռն էր, որի բարձունքների և հարավային փեշերի վրա տակավին կմնային հին դարերի դիցանվեր անտառների մնացորդները և մեջ ընդ մեջ ավերակների նմանվող փլվածքներ, որոնք ինձ ընկղմեցին պատմական հիշողությունների և խոր խոկման մեջ: Իմ աչքիս առաջին էին հին հայոց աստվածների և աստվածուհիների բնակավայրերը: Այստեղ էր քաջության աստուծո՝ «վիշապաբաղ» Վահագնի տաճարը և այդ անպարտելի դյուցազնի գեղեցկուհու՝ «ոսկեծույլ» Աստղկան տաճարը: Այդտեղ էր նույնպես «ոսկեմայր» Անահիտի տաճարը:

Այդ երեք մեծագույն տաճարների խումբը ներկայացնում էր հայոց «Հաշտից տեղերը», ուր Նավասարդի սկզբին կատարվում էին ընդհանրական տոնախմբություններ: Այդ տոներին այտեղ էին հավաքվում հայոց թագավորը, մեծ քրմապետ և նախարարներ իրենց շքախմբերով:

Այդտեղ կատարվում էին հանճարի և քաջության մրցությունները: Բանաստեղծը իր հորինած երգերն էր երգում, երաժիշտը ածոււմ էր իր բամբուխի վրա, ըմբիշը իր բազուկների ուժն էր ցույց տալիս, իսկ վարպետը իր գեղարվեստի արդյունքը: Լինում էին գինախաղեր, լինում էին մենամարտություններ, քաջը քաջի հետ և մարդը՝ կատաղի ցուլի կամ գազանի հետ: Լինում էին արշավանքներ՝ ձիերով, կառքերով կամ ոտով՝ արագավազ եղջերուների հետ: Հաղթողը ստանում էր այն վարդյա պսակներից մեկը, որոնցով զարդարված էր լինում Աստղկա վարդերով վառված տաճարը: Այդ պատճառով տոնախմբությունը կոչվում էր «Վարդավառի» տոնախմբություն (Բաֆֆի, «Սամուել»):

Այդ հին ու դարավոր սովորություններով մեծ քրմապետը Արածանիի սուրբ ջրերով մկրտում էր ժողովուրդը, մաքրելով նրան սխալներից ու մեղքերից: Նույն օրերին ուխտավորները ճերմակ աղափնիներ էին թուցնում, սիրո աստվածուհու ի պատիվ, որք մեծամեծ խմբերով ճախրում էին Աստղկա տաճարի վերև:

Բազմաթիվ դարեր կատարվում էին այդ հանդիսավոր սովորությունները՝ պաշտամունքի առարկա դարձնելով կենարար արևը:

Այդ ժամին, երբ ես, պատմական հիշողություններով տարված, երազանքի մեջ էի, նույն հայ ժողովրդի բեկորները, ճխլտված բռնապետների կրունկների տակ, հիմար ու անհիմաստ պաշտամունքով կորցրած իրենց ըմբոստանալու հպարտ ունակությունները՝ անզգա և անտարբեր էին նույնիսկ սուլթանական մի քոսոտ ոստիկանի աքացիներին ու հայհոյությունաց: Ահա թե որքան ցած էին գլորված այս հին դարերի վեհապանծ հայ ժողովրդի ժառանգները:

Մոտիկից մի խումբ կաքավների ֆոռալեն թռչելը ինձ արթնացրեց իմ երազանքից: Երբ ես վանք վերադարձա, տե-

սա, որ ուխտի էին եկած սասունցիները, որոնց մեծ մասի վրայի հագուստը մի քրքրված կտավե շապիկ էր, գույն ու ձևը կորցրած, բայց ամենքն էլ մի դաշույն ունեին մեջկապին խրած և մի չախմախլի հրացան ունեին ուսերից կախված, քայլում էին հպարտ ու լեռնցու մեծ մեծ քայլերով:

Տեսա Ֆարդինցիներ, քղեցիներ, երզնկացիներ և նույնիսկ Ռուսաստանից եկածներ՝ նախիջևանցիներ, որոնցից տեղեկություններ առի իրենց միջավայրից և ձգտումներից:

Մոտ երեսուն հազար ուխտավորներ կային. մեծ տոնավաճառ էր: Այդ խառնիճաղանճ հասարակության մեծ մասը ապրում էր վանքի պարիսպներից դուրս, զանազան բարաքների ու վրանների տակ:

Եկած էին մեծ թվով կոլջիներ՝ Հանրային պարտուց վարչության դետեր, որոնք հսկում էին գաղտնի ծխախոտ վաճառողների և գործածողների վրա: Նրանք մի գլանակի համար կաշառքներ էին վերցնում և զեղծումներ ու բռնություններ էին գործածում վայրենի կոպտություններ և հայհոյանքներով: Իրենք բացեիբաց կաշաղ ծխախոտ էին գործածում: Սուլթանական ոստիկանությունն էլ նրանց ընկերակցում էր թե օգտվելու և թե այն մտայնության շնորհիվ, որ գյավուրներին (անհավատ հայերին) պետք է ամեն տեսակ բռնության ու ծաղրի առարկա դարձնել: Մանավանդ դետերի քաշալ հիսնապետը մի լիրբ ու անխիղճ սրիկա էր, որ գուլում էր գործում, մեկին մտրակելով, մյուսին՝ ոտնահարելով և հայհոյելով:

Վանեցի երիտասարդներս միասին էինք պտտում և ամենքս էլ վրդովված էինք դետերի վարմունքից: Ես չէի ծխում, բայց խնդրեցի կաշաղ թուլթունի մի գլանակ տալ ինձ և սկսեցի ծխել քաշալ հիսնապետի դիմաց: Առաջ նա չտեսնալ ձևացրեց, հետո նկատելով իմ գրգռիչ ձևերը, համբերությունից ելավ և հանկարծ բերնիցս խլեց ծխախոտը, բայց այն վայրկյանին իմ ճանապարհորդական ծանր մահակը նրա ճակատին իջավ և սև արյուն ակոսեց նրա դեմքը ու վազեց հագուստների վրա: Վազեցին կարգապահության հսկիչներն այն վայրկյանին, երբ հիսնապետ յուր սուրն էր քաշեր և ես ու ընկերներիցս մի քանիսը՝ ռևուլյու-

ԱՐԱԲՈՆ ԵՎ ԼԵՎՈՆԸ

Մուշում ես իմացա, որ ազատագրական տենդով բռնված Արարոն և Լևոնը Առաքելոց վանքում են: Այդ երկու անձնավորություն մասին ես լսած էի: Պայմանավորվեցի ընկերներիս հետ, թե որ գյուղում մենք իրար պիտի գտնենք և ինքս առանձին գնացի Առաքելոց վանք և գտա նրանց:

Արարոն, որը տակավին որևէ կուսակցության չէր պատկանում, լավ կազմվածքով, բարձրահասակ և թխադեմ մի երիտասարդ էր, ավագակային հակումներով: Խոշոր աշխատանք էր հարկավոր նրան ընտելացնելու և լայնորեն ըմբռնել տալու ազատագրական շարժման իմաստը, որին նա բնազդորոն միայն հարած էր: Լևոնը փոքրիկ մի մարդ էր, ոչ գեղադեմ, բայց զարգացած, գիտակից և նվիրված իր գործին: Երկու ժամվա չափ իրար հետ խոսելուց հետո, որոշվեց, որ նրանք կապ պիտի ունենան Մշի Ստեփանի հետ: Ես վեր կացա արձակեցի իմ կաման ու կապեցի Արարոյի մեջքին՝ իբրև նվեր և համբուրելով նրանց հեռացա:

Վեց օրից, առանց պատահարների հասանք Վան: Կարծեմ վեց ամիս դեռ չէր անցել, երբ ես Մուշից ստացա մի նամակ, որ գուժում էր Մշո Ստեփանի հարյուր մեկ տարվա բերդարգելության դատապարտվելու և Մարգար վարժապետի կախաղան բարձրացնելու մասին: Այդ վշտալի գույժը շանթահարիչ էր:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՍԵՐԸ

Սանդխտյան դպրոցի ավարտական դասարանի աշակերտուհիներից մեկն՝ Յողիկին ես սիրում էի չափազանց բուռն կերպով: Մեր մեջ նախկին ուսուցչի և աշակերտուհու հարաբերություններից զատ որևէ խոսակցություն կամ նույնիսկ հասարակ ակնարկ տեղի ունեցած չէր: Այդ աղջկան մեկ քույրը մեր դրացու՝ Բաշկալանցունց հարսն էր, որոնց տան և այգու պատը մեր այգու վերջին մասն էր եզերում:

Մեր այգին ոռոգելու ջուրն անցնում էր Բաշկալանցունց այգուց, հետևապես մի ջրի փոքրիկ դուռ կար, որով կուզեկուզ անցնում էինք նրանց այգին ջուր կապելու (արձակելու) կամ ջրին հսկելու:

Երբ ջրի դուռը բաց էր, և ես այն տեղերն էի գտնվում, Յողիկը, որ հյուր էր եկել իր քրոջ մոտ, մոտենում էր ջրի դռան և մի ժպտուն բարևից հետո նստում քարերի վրա ու սկսում էր շաղակրատել: Ամբողջ ժամերով խոսում էր և զվարթորեն ծիծաղում: Իսկ ես, երանության հքստագի մեջ, լսում ու քաղցր երազանքով գինովցած, կախարդված՝ պապանձվում էի, չկարողանալով ծպտուն հանել: Նրա հեռանալուց բավական ժամանակ հետո միայն երազանքից ուշքի էի գալիս ու հարցնում ինձ, թե արդյոք թափառող մոլորակներին դիտող արևը ուրիշ այս տեսակ չքնաղ ու քաֆուր վարդի պես բացված աղջիկ տեսած է:

Յողիկը դրախտային շուշանների ճերմակությունը չուներ, սևուկիկ էր, բայց իր թուխ աչքերը գիշերային աստղիկների նման կայծկտում էին: Նա իր ամբողջությունը արևից պոկված մի պստիկ ցուլքի պես կիզիչ, վառվռուն ու շարժուն էր:

Վերջին աշունն էր արդեն, այգեկուլթը վաղուց էինք կատարել, թրձած կավե կարասների մեջ փրփրացող մուգ կարմիր գինու խմորումն ու եռը անցել էր: Չմեռնուկ մալաչի, մալաղի և աբասիկ տանձերի մեկաղները կախված էին խզանի, էծի պտուկի և մյուս խաղողների մեկաղների կողքին:

Մնացած տանձերը, խնձորները, սերկևիլները և խաղողները փռված էին մրգատանը՝ խսիրների վրա: Վանում խաղողի թուփերը չէին թաղվում ձմեռը, հետևապես ինձ Հաղողվում էր երբեմն կարմրած տերևների մեջ թարմ խաղողներ գտնել: Կզաքիսի ճարպիկությունը հաստ տանձի ծառերն էի մագլցում, նրանց դեղնած և դեռ հովերից չպոկված տերևների մեջ պահված սաթի գուլյնով տանձեր հայտնաբերելու:

Դեռ այն օրերին էլ ես խենթանում էի ոսկեգօծ աշնան գեղեցկությունը ու անոր պարզեւած սքանչելի մրգերով:

Ավելի ուշ, երբ առաջացած աշնան ցուրտը, անձրևները և լուլխիսը (ձյունախառն անձրև) սկսել էին, մի օր մայրս ասաց, որ Յողիկը իր քրոջ մոտն է: Զարմանալին այն էր, որ մայրս առանց մի բառ անգամ ինձնից լսած լինելու իմ սիրո մասին, գայն կզգար:

Նույն օրը երեկոյան գնացի այգու ծայրը՝ այն հույսով, որ Յողիկին տեսնեմ: Թեև մոտեցող ձմռան ցուրտը խածնում էր, բայց իմ խնդուն սրտում գարուն կար և ես սիրուց արբած՝ երկար թափառեցի ցեխերի մեջ, բայց ինձ չհաջողվեց Յողիկին տեսնել: Մոտեցա նրա քրոջ տան պատին, որի տակ մի մատ ցեխախառն ձյուն կար: Մեծ երկյուղածությամբ ձեռքս քսեցի պատին, սրտումս մի ջերմություն զգացի, որովհետև պատի մյուս կողմ Յողիկն էր գտնվում: Մթնեց, և ես կամացուկ նստեցի պատի տակ, թաց գետնին: Երջանիկ էի, որ մոտ էի գտնվում իմ սիրածիս, թեև նա ոչ մի լուր չունեի. ու այդտեղ քնեցի ամբողջ գիշեր: Առավոտյան, երբ սառած անդամներս շփելով տուն էի գալիս, ճանապարհին թեր ու դեմ մտքերով չարչարվում էի: Միտքս թելադրում էր ինձ, թե դու չես կարող այդ աղջկան քաշ տալ քո հեղափոխականի հետևից, խրճիթների պատերի տակ, լեռներ, ձյունների մեջ քարայրներում և այլն, իսկ սիրտս և զգացմունքներս պնդում էին, որ պետք է մոտ լինել այդ աղջկան. առանց նրա քեզ համար արևը խավար է և կյանքը տառապալից մի բեռ ու սիրտս միշտ հաղթանակող էր:

Անցնում էին ժամանակներ: Ես արդեն փախստական էի դարձել և ծանրաբեռնված մի շարք ի բացակայություն եղած դատապարտություններով:

Հանկարծ լսեցի, որ հայտնի տեր Թիվոնոսիոս գրագետ քահանան, չգիտեմ ինչպես, հոտ էր քաշել իմ՝ դեպի Յողիկն ունեցած ձգտումների մասին և, որպեսզի հեղափոխականի ձեռքն ընկնելով չկորչի այդ զվարթ աղջիկը, անմիջապես հարմարեցնում է, որ նրան ամուսնացնեն առաջնորդ Պողոս եպիսկոպոսի լրտեսի հետ:

Բարեկենդանի շաբաթ օրն էր. մամուսպատ Հայ եկեղեցու օրենքով պսակ չէր թույլատրվում, բայց առաջնորդ Պողոսի աջ թևը՝ տեր Թիվոնոսիոսը, կարգադրած էր պսակել: Այդ կարգադրության տեղեկանալու պես՝ պահված տնից դուրս վազեցի, պատերից ցատկելով և այգիներ կտրել անցնելով հասա Սանդխտյան դպրոց: Այնտեղ գտնելով վարժուհիներին, որոնք թե իմ և թե Յողիկին մոտիկ բարեկամներն էին և պիտի մեկնեին Յողիկենց տուն կարգադրություններին և հարսանիքին մասնակցելու ու խոսում էին այդ նյութի վրա, նրանք շշմած ընդհատեցին իրենց խոսակցությունները, երբ տեսան որ ես ընկած մի աթոռի վրա, սկսեցի երեսայի նման հեկեկալ: Ոչ մի հարցումի չէի կարող պատասխանել, զի հուզումս, հեծկտուքս և արցունքներս ինձ խեղդում էին: Վերջապես ես ինքս մի քիչ գտա և խնդրեցի օրիորդներից մեկին, որ շտապի Յողիկի մոտ և իմանա, թե Յողիկն իմ սերս բաժանում է, եթե այդ ինձ շուտափույթ լուր հայտնե, որպեսզի այս երեկո պսակի արարողության ժամանակ ես գնամ եկեղեցի, ուր ոչ ոք չպիտի համարձակեր ձայն հանել ու շարժում անել, երբ ես Յողիկի ձեռքից բռնած դուրս պիտի տանեի: Իմ արտասուքներին միջից լսեցի նրա պատասխանը, որը լավ չհասկացա և մեկնեցի նորից իմ թաքստոցը: Միայն տանը ես մտաբերեցի վարժուհու ասածը. «Պան չկա, եթե այդ չյաջողվի էլ, մի սիրտ կա, որ քեզ համար կայրվի»: Իհարկե, նա ինձ պատասխան չբերավ, և այդպես դադարվեց իմ առաջին սերը:

Բայց ինչ բան է այդ կույր սերը, որ դատողության ու Հաշիվների չի ենթարկվում: Ես նրա մասին ոչ մի բավարար բացատրություն չեմ կարողացել: Գալիս եմ այն եզրակացության, որ մարդկային սահմանափակ միտքը անկարող է նրան պայծառ կերպով բացատրելու:

Տալիս եմ մի օրինակ, թողնելով հետաքրքրվող մտածողներին զբաղվելու այդ խնդրով:

Վասպուրականում կար Մուկուրցոց քրդական մի մեծ ցեղ, որի պետն էր Թամուր աղան: Այդ պատկառելի գեղեցկությամբ մարդը, երբ իր կատաղի ձիու վրա, ոսկեթել բանված հագուստներով ու մզրախը (նիզակ) ձեռքին անցնում էր, ամենքի հիացման առարկան էր: Սարայի ասորի գեղեցկուհիները հաստատում էին նրա առնական անսպառ կարողության մասին: Թամուր աղան ուներ մի շատ գեղեցիկ, բարձրահասակ, կապուտաչյա և փարթամ կին. այդ գեղեցկուհին աղջիկն էր Ալի Ջազեցի քուրդ հայտնի ցեղապետին, որ թյուրք պարսկական սահմանազլխի լեռներում ծվարած տասն և հինգ տարի շարունակ կռված էր Պարսից շահերի դեմ: Այդ կինը իր ամուսնուն՝ Թամիր աղային չէր սիրում, այլ սիրում էր իրենց ախոռում ծառայող կոլոտ, քաչալ և քրտնած մի քյուրդի: Ինձ թվում էր, կրկնում եմ, որ սիրային խնդիրները անկարելի լինելու չափ դժվար են բացատրվում:

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑ

Վանում մի հիմար սովորություն կար, որ այս թաղի երիտասարդությունը մյուս թաղի երիտասարդության սահմանը անցնելիս, իրար դեմ կռվում էին, մանավանդ Վարդավառի տոնին, խումբեր կազմած իրար վրա էին հարձակվում և արյունլի վերադառնում: Պոլսումն էլ այդ սովորությունը շունչերն ունեին, այս թաղի մի կամ մի խումբ շներ, երբ մյուս թաղի սահմանն էին մտնում, զարհուրելի ոռնոցով և հաչոցով իրար վրա էին հարձակվում և գզգզում իրար:

Վանի՝ քիչ-շատ ուսում առած երիտասարդությունը, Մկրտիչ Թերլեմեզյանի ղեկավարությամբ, սկսեց պայքարել վերոհիշյալ վնասակար բարքերի դեմ: Բաց արավ մի կիրակնօրյա դպրոց: Մեծ պրոպագանդայով, միջնորդություններով և երբեմն ստիպմամբ նույնիսկ հեռավոր թաղերի երիտասարդությունը և պատանեկությունը հավաքվում էին Հանկույսներ, ուր հաստատված էր կիրակնօրյա դպրոցը: Հանկույսները մեծ տարածություններ ուներ իր շրջակայքը խաղալու, մրցումների և ձիավարության համար: Դպրոցում սովորում էին երեք ժամ և մնացած ժամերը խաղի և մրցույթների էին հատկացնում: Շուտով այդ զանազան թաղերի երիտասարդները իրար հետ եղբայրացան և նույնիսկ ամաչում էին հիշելու իրենց նախկին բարքերի մասին:

Այդ դպրոցը բարերար ազդեցություն գործեց և մասսային գրագետ դարձնելու օժանդակեց: Բայց երբ դպրոցը սիրվել սկսվեց ժողովրդից և հասարակական խնդիրներում ազդեցիկ և ազատամիտ դիրք զբաղեց, հետադիմական աղաները չհանդուրժեցին դրան: Օրին մեկը Հանկույսների թաղական աղաները կուսակալին դիմեցին բողոքելով, որ այդ կիրակնօրյա դպրոցը փակվի, որովհետև հեղափոխական մտքեր են տարածվում ժողովրդ մեջ: Չգիտեմ իրենց այդ մատնության գիտակից էին թե ոչ: Բայց մի պայծառ օր

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԵՌՈՐԸ

Երկար տարիների և անհաշտ պայքարների պատմութիւն ունեն Պողոսյան և Ապողոսյան կուսակցութիւնները Վանում: Ապողոսյան կուսակցութեան առաջնորդն էր Խրիմյանը, իսկ Պողոսյան կուսակցութեան լիդերն էր Պողոս եպիսկոպոսը, որի համոզմունքն էր թուրքերի հետ ապրելու լեզու գտնել: Ըստ իս, այդ թարգմանի՝ կառավարութեան ողորմածութեան ապավինել: Բայց բոլորին լավ հայտնի էր, որ կառավարութիւնները առհասարակ այնքան կողորման, որքան իրենց ձեռնատու է:

Պետք է ասել, որ թյուրքերը վստահում էին Պողոս եպիսկոպոսին և փոքրիկ խնդիրներում նրան զիջումներ էին անում:

Երբ արդեն Պողոսը վազուց քաշված էր իր պաշտոնից և զառամելու չափ ծերացած, հանկարծ հնչակյաններն նրան սպանեցին՝ ցուլց տալու համար, թե իրենք էլ գործի վրա են:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՄԵԿՆԵԼՍ

Կարծեմ 1890-ի վաղ գարնանն էր. մտածեցի մեկնել Պարսկաստան՝ կապ հաստատելու և տեղեկանալու, թե ուսահայ և պարսկահայ գիտակից տարրերը ինչ ձգտումներ ունեն:

Մենք Վանում խմբեր ունեինք, որոնց մոտ հերթով խոսում էինք քաղաքական պայքարների մասին և գրագիտութեան դասեր էինք տալիս: Այդ խմբերից մեկի երկու երիտասարդներ, Արմենակ Եկարյան և Գաբրիել Զրվանդյան, որին վերջերս հանդիպեցի Լոս-Անջելեսում, լսած լինելով իմ Պարսկաստան մեկնելու մտադրութեան մասին, եկան ինձ մոտ, թե՛ մենք էլ ենք ուզում գալ քեզ հետ. համաձայնեցինք: Ես հազա մի քրդական հնացած օյմա, մի քոլոզով ծածկեցի այն ժամանակվա սև ու թավ մազերս և նրա վրա մի կտրտած յազմա ոլորեցի, հազա չուռից գործած մի հին շալվար ու տրեխներ: Ընկերներս էլ, նույնանման հագնված, ճանփա ընկանք և անվտանգ հասանք Սալմաստ: Այդ ճանապարհին ես ծանոթ էի արդեն: Այնտեղ Հավթվան գյուղում հավաքեցի մի քանի խելքը գլուխ մարդկանց, խոսեցի մեր հարստահարվող ժողովրդյան ծանր կեցութեան մասին և ուզեցի գիտենալ, թե արտասահմանի մեր ցեղակիցները ինչ վերաբերմունք ունեն:

Ներկա եղողները ջերմ ու հուսատու տրամադրութեամբ պատմեցին, որ հնչակից ի գատ, կազմվել է մի ուրիշ դաշնակ կուսակցութիւն, որի ներկայացուցիչը արդեն հասել է Թավրիզ:

ԴԵՐԻԿԻ ՎԵՐԱԲՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այդ ժողովին ներկա էր Սիբիրից փախած Իշխանյան ազգանունով տարիքոտ մի դարաբաղցի: Նա ժողովի պահին ոչ մի խոսք չասաց, իսկ հետո դիմեց ինձ, ասելով. «Պարոն տաճկահայեր, վերապահ պետք է լինել այդ հեղափոխական կոչվող կուսակցությունների հանդեպ, մի տեսնենք, թե դրանք ի՞նչ բանի ընդունակ են և ի՞նչ են ուզում անել: Եկեք միասին մի իրական գործ անենք: Դուք Դուշմանով անցնելիս Դերեկի վանքը տեսաք, երթանք այդ վանքը, շենցնենք, որ Սալմաստի խալխը մի լավ ուխտատեղի ունենա»: Ես մտածկոտ ու մեքենայորեն պատասխանեցի. «Դերեկը թյուրքայաց սահմանագլխի ամենամոտիկ կետն է, եթե այնտեղ հայ գյուղ հաստատվի, Վասպուրականի հետ հաղորդվածությունը զգալիորեն դյուրանում է»: Իշխանյանը իր նստած տեղից վեր ցատկեց ու ասաց. «Ողորմի հորդ, լավ, որ այդ էլ դու ասիր, վաղը մենք չորսովս երթանք այնտեղ, ես մի քիչ փող ունիմ և հրացան գործածել իմանում եմ»: Հավթվանցի մի չիլաջի վաճառական միջամտեց, թե վարի Դերեկ գյուղի և թե վերին Դերեկ գյուղի հողերը կառավարական են. Մենք կարող ենք Թավրիզի հայոց առաջնորդի միջոցով ոչնչով գնել այդ հողերը և, եթե համաձայն եք, ես էլ այդ գործով կզբաղվեմ:

Հաջորդ օրը, մենք՝ երեք վանեցի երիտասարդներս, մի-մի տոպրակ ալյուր ու գործիքներ շալակած, Իշխանյանի հետ գնացինք Դերեկ, որը մոտավորապես չորս ժամվա ճանապարհ էր: Վանքի երբեմնի ախոռի մեջ մի քյուրդ ընտանիք էր ապրում, Իշխանյանը նրան ասաց, որ քեզ ոչ ոք չի անհանգստացնում. ընտանիքով այստեղ կապրես, ինքդ էլ մի փոքրիկ ամսական կստանաս և վանքի նորաթղար (պահակ) կդառնաս: Նորաթղարի հետ քսան ընդհանրաբարձրացանք մինչև վերի Դերեկ գյուղը, որի առջև մի ավազան կար տաք, հանքային բուժիչ ջրերի շատրվաններով: Վերադար-

ձանք և սկսեցինք քանդված տների գերանները հավաքել: Վանքի դռնից ներս կար մի թոնրատուն և մառան, իսկ սանդուղքով վեր՝ երկու կիսաքանդ սենյակներ: Անմիջապես սկսեցինք պատերի փլած մասերը շարել ու կարկատել և գերանները պատերի վրա մոտ մոտ դնելով ամրացնել: Իշխանյանը հաճախ Քյոյնաչհար կամ Հաֆթվան էր գնում մեզ ու տելիք, թերթեր և լուրեր բերելու:

Աշխույժ աշխատանք էր գնում Դերեկում: Դուշմանաձորում մենք բավական կամիչներ կտրտեցինք ու շալակով փոխադրեցինք վանք, որոնք գերանների վրա փռելով ցեխով ծածկեցինք: Մենք չորսս էլ այդ վերի սենյակներումն էինք ապրում: Այդպես դրվեց Դերեկի հիմքը:

Շուտով լուր առինք, որ երկու Դերեկ գյուղերն էլ գնված են Պարսից կառավարությունից հայոց կողմից:

Դերեկը շենցնելու գործը Իշխանյանին ձգելով, մենք երեքս էլ վերադարձանք Հաֆթվան: Այնտեղի ուսուցչին խնդրեցի, որ իշապան Ռահիմ խանի հետ մեզ արտասահմանի թերթեր ղրկեն Վան: Ընկերներս ըստ իրենց ցանկություն, մեկնեցին Ուրմի: Ես Բարդուղիմեոսի ճանապարհով ուզեցի մեկնել Վան, այդ ճամփան ուսումնասիրելու նպատակով: Հեռագրի սյունները Քյոյնաչհարից ճանապարհի եզերքով շարունակվում էին մինչև Բարդուղիմեոսը, որոնցով ես առաջնորդվում էի:

Հաջորդ առավոտ, արշալույսը չբացված, ես սկսեցի արագորեն առաջանալ դեպի մեր երկիրը: Ճանապարհին, դեռ տաճկական սահմանագլուխ չհասած, երկու քյուրդ ձիավորների հանդիպեցի, որոնցից մեկը արագ քշեց ձին և, դառնալով իմ հետև, հայհոյեց և պահանջեց, որ հագուստներս հանեմ: Ես արագորեն հետև դարձա ու հարձակվեցի, որ ստրոպայով հարվածեմ ձիու ճակատին, զայն շնեցնելու կամ գլորելու նպատակով (ստրոպան 10-15 բարակ և ճկուն պողպատյա լարերի գլխին ամրացրած կապարյա գունդ է, վրան բարակ սիջիմով գործված):

Քյուրդը յուր սրի կեսը հագիվ էր դուրս քաշել, երբ վտանգն զգալով, սուրը թողեց և ձիու գլուխը շուռ տվավ: Իմ ցատկածս ժամանակ հովից օյմայիս փեշերը բարձրա-

ցան, և նա նկատեց ատրճանակս: Մի քիչ հեռանալով ասաց ընկերոջ. «Տղա, այս խենթ է»: Այդ խելոքները ձիերը քշելով անցան:

Ես վագելով հասա սահմանագլխի ճերմակ ու ժայռոտ բարձունքին: Այնտեղ աղբյուրի մոտ թափած էր Տաճկաստան գնացող պարսկական կարավանը, որի հետ միասին անցա տաճկաց հող Խանասորի դաշտը:

ԽԱՆԱՍՈՐ

Այդ դաշտը հետո հայտնի դարձավ դաշնակների խելահեղ արշավանքով: Դաշնակները, փոխանակ Համիդի բռնությանց ենթակա քրդերի հետ համերաշխելու, սխալ փորձ արին նրանց հետ կռվելու, որի հետևանքն այն եղավ, որ իրենց լավագույն ընկերը՝ Ռոստոմի եղբայր Հարոն (Արիստակես) վիրավորվեց ոտքից, և կռվողները նրան լքելով, փախուստի դիմեցին:

Այդ արշավանքի կազմակերպումը Սալմաստի մեջ ամիսներ տևեց, որին գիտակ եղել էին Սալմաստի արմենականները, որովհետև նրանց առաջարկվել էր միանալ արշավին, բայց նրանք մերժել էին: Թիֆլիսումն էլ հայտնի է եղել, որովհետև այնտեղ էլ կամավորներ են հավաքել նույն նպատակով: Նույնպես գիտակ են եղել ռուսական և թյուրքական ազենտները, որոնցից յուրաքանչյուրը իր հաշվով քաջալերում և ծափահարում էր այդ անմտությունը:

Ցարիզմն ուզում էր, որ Տաճկաստանը միշտ խռովություն մեջ լինի, որպեսզի ինքը միջամտելու և կողոպուտի առիթ ունենա: Թյուրքերն էլ ջանք էին թափում, որ հայերն ու քյուրդերը իրար թշնամի լինեն: Այդ քաղաքականություն փայլուն ապացույցը Մուշի քյուրդերից առևանգվող Գյուլուզարի պատմությունն է: Այդ դեպքը սուլթանական կառավարությունը այնքան ուռցրեց, բռնտեց Գյուլուզարին փախցնողներին և տարավ Պոլիս, եվրոպական դեսպանների ներկայությամբ դատավարություններ սարքեց և այլն, և այլն, միմիայն այն նպատակով, որ հայերն ու քյուրդերը իրար դեմ հանի:

Կարավանը անցավ Խանասորի դաշտով, և հեռագրասյուների հետ երբ պիտի մտներ այն ձորը, որը տանում էր դեպի Բարդուղիմեոս, որտեղ թյուրքական սահմանապահներն էին, ես թեքվեցի աջ, անցա փշոտ դաշտերով դեպի արևմուտք: Այնտեղ երեք քաղվորների հանդիպելով

Այդ բոլորին դուռը բացվեց, ներս մտավ իմ ամենասիրելի ընկերս, տաղանդավոր գինագործ ուստա Փանոսը: Նա բերած էր մի ունդվեր, գեների պահարանում տեղավորելու, երբ հանկարծ ինձ տեսավ: Զարմացած ձեռները և ոտները իրարից հեռացրեց, աչքերը չոեց, բերանը բաց «ը՛ր՛...» բացականչեց, ու պահ մի քարանալուց հետո վրաս հարձակվելով գրկեց համբուրեց և ուրախությունից արտասովել սկսեց: Ես նրան երբեք այդպես հուզված չէի տեսել: Պատճառը հարցրի: Նա հանգստացավ և ծալապատիկ նստեց ջուլի վրա ու սկսեց պատմել. «Դու գիտես, որ Վալի փաշայի բոլոր գեները ես եմ նորոգում: Մի օր փաշան ինձ կանչեց ցույց տվավ քո մարտինի հրացանը և հարցրեց. «Այս ո՞վ է շինել»: Պատասխանեցի. «Փաշա էՖենտի, ես եմ շինել»:

- Որի՞ համար:
- Փանոս Թերլեմեզյանի համար:
- Նա որտե՞ղ է:
- Լսել եմ, որ Պարսկաստանում է:
- Նրան սատկացրել են և հրացանը բերել:
- Ինչ որ պիտի ասեմ, լավ լսիր: Դուն կարող ես որսի հրացաններ շինել վատահելի մարդոց համար, բայց երբ մի անգամ էլ լսեցի, որ դու պետական հրացան ես շինել, այն էլ մյուզեր (կասկածելի) մարդոց համար, գլուխդ թռցնել կտամ: Հասկացա՞ր: Կորիր այստեղից:

Ընկերներիս պատմեցի եղելությունը: Մենք բոլորս խորշակահար մարդոց նման խորին տխրությունը մոայլվեցինք: Մեր ջիգարները մրմռում էին, քո հիշատակներից էինք փսփսում, անկարող լինելով զսպել մեր արտասուքները:

Բայց մի շաբաթ հետո բողասքյասանցի Ավագն եկավ պատմեց բոլորը: «Դու հարություն առիր, բայց ուրիշ ոչ նվազ տխրալից մահեր մեզ խորովեցին»: Ավագն ասաց, որ իրենց գյուղացի Վարդանի հետ Սալմաստ են գնացել հրացան բերելու: Անձանոթ լինելով Պարսկաստանի ճանամարհներին, խնդրել են ընկերներին, որ մինչև Կոտոլ իրենց ուղեկցեն: Կազար, Սև տղեն և Հայոցձորցին համաձայնել են, բայց գեներ չունենալով, դու քո հրացանն ես տվել: Բողասքյասանցոց հասցրել են մինչև Կոտոլա ձորը: Այդ ձորի մի

կողը անառիկ բարձրանում է լեռը, իսկ մյուսը Տղմուտ գետն է՝ խոշոր քարքարոտներով: Վարդանն ու Ավագը հաջողել են գետն անցնել, որպեսզի առանց Կոտոլ մտնելու, Թյուրքիա երթան: Իսկ մյուս երեքը հանկարծ հարձակման են ենթարկվում մի Ֆեռդալ քյուրդ աղայի և իր խոլամների (ծառանների) կողմից, որոնք փախստական կերպով խոյից աղ էին տեղափոխում Թյուրքիա, ծախելու համար: Մեր երեք պատվական ընկերները այնտեղ սպանվում են, և նույնիսկ գետի մյուս ափը լեռան լանջին թեթև վիրավորվում է Բողասքյասանցի Վարդանը, որ վիրավոր վիճակով մի ամբողջ գիշեր քալելով Ավագի հետ հասնում է իրենց գյուղը ու այնտեղ առողջանում է:

Հետաքրքիր չէ, թե քյուրդերից քանի մարդ է սպանվել: Միայն թե այդ մարդիկ Հայ թե քյուրդ, լեռների մեջ իրար հանդիպելիս, անիմաստ կերպով հարձակվում էին միմյանց վրա: Ինչպես, երբ օձը մարդու մոտիկությունն է տեսնում, հաճախ վախից հարձակվում ու թունավորում է նրան: Քյուրդի ու հայի այդ վատառողջ մտայնությունը միշտ վառ էր պահվում Թյուրք կառավարության գրգռումով, որպեսզի այդ ժողովուրդները միշտ գժտված մնան, հետո այդ բանին նպաստում էր երկուստեք եղած ծայրահեղ անհասկացողությունն ու տգիտությունը:

ՉԱԹՈՆ ԵՎ ՇԵՐՈՆ

Կարծում եմ՝ 1890 թվին էր, երբ մի օր Քաղաքամիջից լուր բերին, որ այնտեղի «Հեղափոխական» կոչված ընկերները երկու կաճեացի երիտասարդներ բերել են և ուզում են սպանելով անհայտացնել: Այդ կատարվելիք ոճրի պատճառը այն էր, որ կաճեացիներին դրդել էին քրդերի ջորիները գողանալ բերել Վան, որոնք արդեն ծախվել էին այդ չակերտավոր Հեղափոխականների կողմից: Բայց խնդիրը բացվել էր, և որովհետև կուսակալը Հետամուտ է եղել ավազակությունը հայտնաբերելու, ծախողները և փող գրպանողները կուզեին գողութայան Հեղինակներին ոչնչացնելով խնդիրը ծածկել:

Նույն երեկոյան, հրացանս վերցնելով, կողմնակի ճանապարհով մտա Քաղաքամեջ և բախեցի խմբի ղեկավար Սամվելի դուռը:

Երբ նրա ընկերները հավաքվեցին, պահանջեցի, որ կաճեացի երիտասարդներն էլ ներկայանան: Երբ բոլորը ներկա էին, ձաղկեցի նրանց հակահեղափոխական և վնասակար գործունեությունը, վերցրի կաճեացի երիտասարդներին և Այգեստան մեր տունը բերի:

Ընթրիքից հետո երկար խոսեցա իրենց հետ ավազակութայան վնասակարություն մասին և ջանացի հասկացնել, որ եռանդն ու կարողությունը պետք է գործադրել իրենց ճնշված եղբայրակիցների ազատության համար:

Նույն երեկոյան ինձ մոտ եկավ ընկերներիցս մեկը՝ վաստակավոր ուսուցիչ Կուլոյլյան Հովհաննես: Խորհրդակցելուց հետո, երբ ճամփա էի դնում, նա ասաց, որ այդպես չի լինիլ, դու քո մոտ վաստակած ամենասուղ միջոցներն ես ծախսում այդ ընկերների վրա, էս էլ թող իմ մասնակցությունը լինի, երկու օսմանյան ոսկի հանեց և առաջարկեց, որ վերցնեմ: Ես կարմրեցի և զայրույթից չկարողացա պատասխանել, մտածում էի, մի՞թե Հեղափոխականը ուրիշից

փող է վերցնում...: Օ՛հ, ինչքան միամիտ և փողն ատող ու իդեալիստ էի այն ժամանակները:

Մյուս գիշեր ես տեղափոխեցի կաճեացիներին Կարմրվորա վանք, ուր Օհան անունով ընկեր ունեի և հարմարություն կար, որ իբրև բանվորներ մի միջոց այնտեղ առանձնացած ապրեն:

Մեր տնից մեկնելիս Շերոն իմ ունվերի պատրոնները գողացել և տարել տվել էր Օհանին նվեր: Չորս օրից հետո նրանք ետ եկան, թե այնտեղ գործ չկա, ձանձրանում ենք: Այս անգամ Շերոն Օհանի պատրոնները գողացել էր և բերել ինձ նվեր: Ես նրա ներկայությունը Օհանից ինձ զրկված իմ պատրոնների կողքին դրի իր նվերը: Նկատում եմ, որ նա ապուշ կտրած իմ պատրոնների վրա է նայում և երբ ուզեցի դեմքին նայել, նա գլուխը դարձրեց:

Թե Չաթոն և թե Շերոն քրդերեն ավելի լավ էին խոսում, քան հայերեն: Շերոյին տվի մի այգեստեր հայրենակցի մոտ, իբրև քյուրդ նոբաթդար (պահակ): Կարծեմ հինգերորդ օրն էր, որ նրանց խալին գողացավ և բերեց մեր տուն: Քաղցրությունը նրան բացատրեցի, որ ես պատասխանատու եմ այդ մարդու մոտ և այլն ու հետո խալին տվի շալակը ու նորից վերադարձանք նույն այգին, որ նա շարունակի իր պաշտոնը:

Չաթոն տարիքոտ, անվախ, առողջ դատողություն տեր և վստահելի էր, իսկ Շերոն մոտ քսան տարեկան, արջի չափ ուժեղ, հանդուգն և ավազակային բնագրով բռնված մեկն էր: Նրանց բնագրը փոխել ու նոր ազգային Հեղափոխական գաղափարներով տոգորելը մի շարք օրինակների, ժամանակի և համառ աշխատանքի գործ եղավ:

Հետագային նրանք գործունյա, նվիրված մարդիկներ դարձան և ազատագրական պայքարի ճանապարհին էլ զոհվեցին:

Երբ իմ միջոցով Չաթոն և Շերոն հարկադրաբար մեկնեցին Կարմրվորա վանք, Շերոն ինձ հարցրեց, ինչու ես չեմ գողացել նրանց նվերը: Ես պատասխանեցի, որ ես չեմ գողացել նրանց նվերը, որովհետև ես չեմ ուզում ինչևէ զոհվել նրանց նվերի համար: Ես չեմ ուզում ինչևէ զոհվել նրանց նվերի համար, որովհետև ես չեմ ուզում ինչևէ զոհվել նրանց նվերի համար:

ԳՈՐԵՆ ԵՎ ՇԱՔԻՐ

Գորեն այն քյուրդն էր, որ իր կատարած երկար շարք ոճիրների համար, թյուրք կառավարութիւնից մահւան էր դատապարտւած: Նա իբրև թե փախստական, բայց իրա համար ազատ, ապրում էր Շատախում:

Օրեն մեկ գայմազամանիստ թաղում Գորեն տեղի հայ հայրենասերներից Մուղդուսի Սախոյին հրապարակավ խողխողում է, որովհետև Սախոն համարձակել էր բողոքել վերի մարմիններին Շատախում տեղի ունեցած պլան թալանի և բռնութիւնի մասին: Դրանից հետո՝ փոխանակ այդ մահւան դատապարտւած բազմաոճրագործին հետապնդելու՝ Վանի կուսակալը նրան հրավիրեց քաղաքը, մի ամբողջ օր հյուրասիրութիւններ կատարեց և զուռնայով ու նաղարայով փողոցները պտտեցնելուց հետո՝ մի շալ էլ նվեր տալով՝ վերադարձրեց Շատախ:

Պատվազգաց մարդիկ կարող են երևակայել, թե ինչպես մեր հոգիները արտասպում էին և մեր սրտերը՝ ցավից կծկւում: Բայց ինչ կարող էինք անել, երբ երկրի կառավարութիւնն էլ ոճրագործ էր: Մենք ոչ մի միջոց չունեինք գեթ մեղմելու կամ նվազեցնելու կատարվող խժժութիւնները, ու զայրույթից վրեժի էինք ղիմում, որ իհարկե անօգուտ էր, որովհետև անհատների ոչնչացումով կառավարութիւնի քաջալերած ոճիրները չէին վերջանար:

Շաքիրն էլ Գրավցոց շատ հայտնի ցեղապետն էր, որ բազմաթիւ ավազակներ ունէր իր հրամանի տակ, և անզուսպ կերպով կեղեքում ու բռնութիւններ էր գործում:

Թյուրք կառավարութիւնը այդ Ֆեռզալիզմի մնացորդներին պաշտպանում էր, որովհետև նրանք տիրողների դասակրգին էին պատկանում և իրենց բացարձակ տգիտութեամբ կույր գործիքներ էին դառնում սուլթանական գործակալների ձեռքին:

Իսկ ինչ էին անում այն ժամանակվա մեր նոր արթնա-

ցած ազատամիտ հայերը: Նրանք ճառեր էին խոսում և օղային դղյակներ կառուցում: Ես դեռ այն օրերը չէի սիրում այն ազատամիտ ճառերի ասպետներին, որովհետև նրանց մոտ խոսքն ու գործը միացած չէին:

Այդ պատճառով՝ սուս ու փուս վճռեցի Շատախ երթալ և դիմադրութիւն կազմակերպել Շաքրիի ու Գորեի դեմ:

1891-ի ամառը առաջարկեցի Չաթոյին և Շերոյին ինձ ընկերակցել դեպի Շատախ: Նրանք շատ ուրախութիւնով ընդունեցին: Նույնպես մեզ ընկերացավ Քյանքյան Փանոյի Ավանեսը, որ Չրաղյանի տերրորիստն էր: Առաջին գիշերը մենք կտրեցինք Հայոց ձորը և անցանք Քուլա սարը: Ցերեկին մտանք Քուլ գյուղը, որը մի մեծ տնից էր բաղկացած. այդ ռես Սարգսի տունն էր: Ռես Սարգիսը վեց հասած տղաներ ունէր, որոնք թե վար ու ցանքի, թե ինքնապաշտպանութիւն ընդունակ էին:

Երեկոյան կողմ արևով ճամփա ընկանք դեպի Շատախ և կեսգիշերին մտանք Թաղ:

Այնտեղ ընկերները շատ ուրախացան, որ մենք եկել ենք նրանց կազմակերպութիւնները կանոնավորելու և նրանց զինման մասին մտածելու: Երկար խորհրդակցութիւնից ու կարգադրութիւնից հետո Գորոյի և Շաքրի մասին խոսվեց:

Պահանջ դրվեց հակահարված տալ այդ ժողովրդական թշնամիների գործունեութեան: Ընկերները ցանկանում էին, բայց սարսափում էին թե՛ նրանց մեծ ուժերից և թե՛ կառավարութիւնից, որ նրանց հովանավորում էր:

Լուսո դեմ մեզ տարան, փակեցին մի հարդանոցի մեջ, որպեսզի մյուս ցերեկին չնկատվենք:

Շատախում մենք լուր առինք, որ Շաքրին և Գորեն, երկու դյուլթին քյուրդ ավազակներով միասին, Ծիծանցն են գնացել, որ տասներկու տնից բաղկացած մի հայ գյուղ էր:

Մյուս երեկո մենք էլ քալեցինք դեպի Ծիծանց, որ Առնոս լեռան հարավային փեշի վրա էր տեղավորված: Այդ գյուղին մոտիկ ուրիշ 3-4 տնից բաղկացած հայ գյուղեր էլ կային՝ անտառոտ լեռների մեջ ցրված: Ցերեկին լեռներում մենք հանդիպեցինք երկու հայ որսորդ գյուղացիների, որոնք Չաթոյին ծանոթ էին: Նրանք պատմեցին, որ Շաքրին իր մար-

դերով Միծանցն է գտնվում և այդ գյուղի բոլոր ցորենները հավաքել է, քսանչորս ջորիներ էլ պատրաստ են, որոնք վաղ առավոտ պիտի մեկնեն բեռնավորված: Մեր տեսակցությունը պարզեց, որ այդ լուրեր տվող գյուղացիներն էլ՝ մեր վրիժառուության գաղափարները բաժանում էին. դրանով քաջալերված՝ ես նրանց խնդրեցի, որ մեզ ընկերանան մինչև Միծանց՝ թե իբրև ճամփաներ լավ գիտցողների և թե իբրև մարտական ուժի:

Մուժն ընկնելուն պես՝ մենք վեց հրացանավորներս, ուղղվեցինք դեպի Միծանց: Հասանք գյուղի մոտ ավերակ մի ջրաղացի, ուր հանգստանալով սկսեցինք խորհրդակցել: Առաջնորդողները մեզ տարան, քրդերի տեղը ցույց տվին և վերադարձան: Քրդերը, որ ոչխարներ խորովել և կերուխումից հետո սկսել էին քնանալ:

Առաջնորդողները խորհուրդ տվին մի ինչ-որ կիրճ բռնել, որտեղից պիտի անցնեին վաղ այդ քյուրդերը և վրա տալ: Շերոն և Ավանեսը՝ տատանվող տարրեր լինելով՝ համաձայնվեցին, իսկ Չաթոն հարցրեց, թե ինչ է իմ կարծիքը, ես ասի, որ հազիվ ենք գտել այդ անզգամներին, պետք է անմիջապես վրա տալ: Չաթոն համաձայնեց: Երկու առաջնորդները, կարծում եմ, մտածելով, որ եթե սպանվեն, իրենց գյուղը կործանման պիտի ենթարկվի, դուրս եկան և փախան: Գյուղի շներն ընկան նրանց ետևից. մենք ավելի ապահովվեցինք:

Ոգևորելու նպատակով՝ ասացի, որ մեր նախորդները միշտ արդարություն են մուրացել, իսկ տիրողները թքել են նրանց աղբսներն վրա և ոտնահարել: Այժմ մենք համոզվել ենք, որ միայն ուժով հնարավոր է հավասարության իրավունք ձեռք բերել և հակառակ մեր նախորդների մտածելակերպին, հանդգնել ենք գալ այստեղ, պայքարելու մեր ժողովրդասիրական պարտականությանց համար, մինչև որ մի օր՝ մեզ հաջողվի տապալել այս նեխած հասարակական կառուցվածքը: Բայց այսօր մեր վճռական որոշումն է՝ ապացուցել հաստատակամություն և անընկճելի արիություն, որ օրինակելի և վարակիչ լինի Շատախի մեր ընկերների համար, որոնք համարձակ լինելու անհրաժեշտություն ունին:

Պայքարը սկսված է, պետք է, որ հեղափոխական գործունեությունը զարգանա: Աշխատավոր ժողովրդի բարօրության և ազատության հաղթանակի համար չպիտի ափսոսանք մեր արյունը, թեկուզ այդ գաղափարների և ձգտումների իրականացումը մեր մահից հետո կատարվի:

Որոշելուց հետո ամեն մեկիս անելիքը՝ ուշիկ-ուշիկ մոտեցանք այն տեռասին, ուր քյուրդերը մեծ կրակ էին վառել և նրա շուրջ քնացել: Չաթոն և ես մեջտեղ եղած կրակի լույսի օգնությամբ դիտում էինք մուժի մեջ պառկողներին, երբ Շերոն ու Ավանեսը մոտեցան ու մի մի հրացան պարպելով՝ հեռացան, առանց որոշված նշանին սպասելու: Մենք ևս ստիպվեցինք մեր հրացանները նշված մարդոց վրա արձակելու և հետևելու մեր ընկերներին:

Հետո իմացանք, որ Գորեն և քոչարների աղայի տղան սպանվել են, իսկ զարհուրած Շաքրին ճերմակեղեն էր պահանջել՝ փոխվելու համար...:

Քյուրդերը լուսաբացին, առանց բեռների, իրենց ջորիները քշել հեռացել էին այդ գյուղից:

Այսպես՝ առաջադրված խնդիրների սահմանափակ լուծումը մեզ պարտավորեց՝ ավելի եռանդով հետևելու հաջորդող գործողությանը:

Երկու օր լեռներում մնացինք քաղցած, խոտերը, ծառապտուղները ու սառնորակ աղբյուրներն էլ սնուցում են: Երրորդ գիշերը մենք հասանք Կաճես, որ արծվի բույնի պես կառչած էր մի բարձր լեռան լանջին: Այդ լեռը շեղակի իջնում էր մի խոր անդունդ, որի հատակը չէր երևում, բայց այնտեղից թավալող Տիգրիսի գոռգոռոցը լսվում էր:

Այդ գյուղացիները ժայռերի արանքների ընկած փոքրիկ տարածությունները կացինով փորփրում էին և այն տեղեր կորեկ էին ցանում, երբ ցանքսը բարձրանում էր, գիշերները միշտ կրակ էին վառում նրա շուրջը, որպեսզի արջերը չփչացնեն:

Այդ կորեկի հացը երկրորդ օրը այնչափ էր պնդանում, որ պետք էր մի բանով ջարդել՝ ուտելու համար:

Այդ մարդիկ, կարելի է ասել, անմիջականորեն իրենց շրջապատող բնության մի մասնիկն էին: Հայելիի, արդյունա-

բերական ապրանքների մասին գաղափար չունենին: Իրենք էին գործում իրենց ոտնաման ուղղիկները այժի մազից և նրանց չուռիցն էլ շալ ու շալվար: Քյազախի, քոլոզներ և թաղիքներ ոչխարի բրդից էր շինվում: Իրենք ապրում էին վայրի գազաններին մոտիկ և իրենց ոչխարների հետ հաճախ խառնվում էին լեռների եղնիկներ:

Տարին մեկ կամ երկու անգամ Վանա քաղաքն էին տանում իրենց ավելացած ոչխարները, ծախում և նրանց փողով չիթ, շիլա և կտավ էին առնում իրենց հազուստների համար: Երբեմն էլ Հայոց Ձորից ցորեն էին գնում տոն օրերի համար:

Շատ մարդեր կային, որ իրենց կտավի շապիկը միայն այն ժամանակ հանում ու ձգում էին, երբ աղտից սևացած և ծվիկ-ծվիկ էր եղած:

Քյուրդերի հետ լավ հարաբերության մեջ էին. թե հայ և թե քյուրդ թյուրքերին չէին սիրում:

Երեք երիտասարդներ մեզ ընկերացան որսի գնալու, շախտանին կոնակին ձգած և մեջքին էլ կապած վառողի ու գնդակի ամանները: Երբ վայրի ոչխարի կամ այժի միս հրացանի շիշերի վրա անցկացրած խորովում էինք, նրանք մսի կտորներ բռնում էին բոցից վեր ծուխի վրա և նույնիսկ չտաքացած ուտում էին:

Նրանց փոխադրության միջոցը գլխավորապես մարդկային կոնակն էր, հետո՝ էշեր: Լեռնային կածաններում անփոխարինելի փոխադրողը ջորին էր, որ աղքատ գյուղացիության, եթե չասիմ անկարելի, գեթ դժվարահաս էր:

Վճռեցինք վերադառնալ Վան: Ծանապարհին հանդիպեցինք երկու թյուրք ժանդարմների, խլեցինք նրանց պետական հրացանները, որոնց շատ կարիք ունեինք և առանց միջադեպի, զգուշությամբ մտանք քաղաք:

ՆՈՐԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Իմ վերադարձից մոտ մեկ ու կես ամիս անց ուղտապանի փափախով մի գեղադեմ պարսիկ եկել էր մեր թաղ ինձ հարցնելու: Առաջնորդել էին մեր տուն:

Երբ մեր այգում առանձնացանք, նա պատմեց, որ ինքը շամախեցի հայ է, իրեն ղրկած է Մկրտիչ Թերլեմեզյանը, որպեսզի միասին Պարսկաստան մեկնինք, միայն թե երեկ կարավանը մեկնեց, մենք ստիպված ենք սպասել 15-20 օր հաջորդ կարավանին: Նա ինձ մոտ ապրեց մինչև կարավանի գալը: Հակառակ մորս դժգոհության ու թափած արցունքին, մենք որոշյալ օրը մեկնեցինք և առանց միջադեպի հասանք Կոտոլ՝ պարսկական առաջացած պահականոց և գյուղաքաղաք Տղմուտի ափին: Կոտոլից նորից անցնում ենք տաճկական հողը ու, երկու գյուղ հանդիպելուց հետո, մտնում ենք Դուլմանա ձորը, որ նորից պարսկական հող է:

Սալմաստի Հաֆթվան գյուղում մեզ ընդունեց իմ նախկին ուսուցիչ Մկրտիչ Թերլեմեզյանը:

Ես իմացա, որ Մարսելում կազմվել է «Հայոց Հայրենասիրաց միություն», և Մկրտիչը ղրկված էր այդ միության կողմից:

Ես, որ ծարավի էի հեղինակավոր բացատրությանց, կուսակցությունների մասին արագորեն մի քանի հարցեր տվի: Նա հանդարտորեն սկսեց բացատրել: Նախ, վերին աստիճանի զգուշ պետք է լինել, որ թյուրքերը որևէ բան չկուսահեն, հետո բնավ հույս չպետք է ունենալ դրսի օգնության, մանավանդ՝ եվրոպացոց խոստումների վրա: Մեր ժողովուրդը անպատրաստ է, պետք է նա գիտակցության գա, զինվի և սպասի ապագայի պատեհ առիթներին: Դաշնակները թմբկահարում են իրենց թերթում մի աննշան գործի, երբեմն էլ իրենց չկատարած գործերի մասին, որպեսզի հովանավորող հարուստներից փող կորզեն: Հնչակյանները նույնպես թյուրքերին գրգռող հոգվածներ են գրում ու

դաշնակների նման ցույցերից չեն ուշանում: Այդ բոլորը սպառնալիք է պատրաստում անապավեն հայ ժողովրդի համար:

Իհարկե, որտեղ գործունեություն կա, վտանգավոր մոմենտներ էլ են հանդիպում, բայց զգուշ ու հեռատես գործիչները հարյուրից մի անգամ են վտանգվում:

Պարոն Մկրտիչը ինձ տասն օսմանյան ոսկի տվավ, երկու տեղ փոքրիկ կայաններ ունենալու համար, այսինքն՝ մեր վստահելի ընկերներից երկու հոգու հինգական ոսկի տվին, որ նրանցից յուրաքանչյուրը մի հարմար կետում մանրածախի խանութ բանա, զենք փոխադրողներին պատուպարելու հնարավորություն տալու համար:

Այս ազգայնական կուսակցությունները, մին՝ անզգուշ, մյուսն՝ զգուշ, ողջ մեկ էր: Իսկ ինձ նման անփորձ իզեալիստ և ոգևորվող երիտասարդներն էլ այն էպոխային հասկացողություններ և այն միջավայրի մեջ հասած պտուղներ էին:

ԹԱՎՐԻՉՈՒՄ

Մկրտիչ Թերլեմեզյանը Սալմաստում ապրում էր մի ուսուցչի տանը, որը Ալփասլան ծածկանունով հայրենասիրական ոտանավորներ էր գրում «Արմենիա» - ի մեջ: Այդ ուսուցիչը Թավրիզի էր, ես նրանից մի հանձնարարական առիթավրիզում գտնվող մի ուրիշ ուսուցչի վրա ու հաջորդ առավոտ ձիով մեկնեցի Թավրիզ, ուր հասա երեք օրից: Հարցնելով, փնտրելով գտա ինձ պետք եղած հասցեն: Այն ուսուցիչը զվարթ բնավորությամբ, լավ երգող մի հնչակյան տղա էր՝ Ռաֆայել անունով:

Ես այն ժամանակ հագիս ունեի շալվար, քյազախիկ, գլխիս քոլոզ և մեջքիս խրած մի կեռ խանչալ՝ փղոսկրյա կոթով ու կոշիվում էի մշեցի Մինաս: Եկած էի Թավրիզ՝ իմանալու համար, թե հրացաններ կարելի՞ է գնել և թե դրանց ինչ տեսակները կան և ինչ արժեն:

Մյուս օրը Ռաֆայելն ասաց, որ բոլորի զինավաճառանոցները քեզ տանելու եմ, բայց մի շտապիր, այսօր զնալու ենք Մուշտեյիտի գեղեցիկ բաղը, մանավանդ որ դաշնակները այնտեղ բաց ժողով ունեն, հետաքրքիր է լսել նրանց: Բավական երկար քալեցինք մինչև հասանք Մուշտեյիտի այգին և զնացինք ուղղակի այնտեղ, ուր հավաքված էին 20-25 մարդ՝ մեծ մասամբ ուսուցիչներ: Ամենքը իրենց հայացքը հառեցին ընկերոջս վրա հարցական կերպով, թե՛ այդ ջանավարն ով է: Հավանաբար Ռաֆայելի համբերությունը հատավ, հայտարարեց, թե երկրի խորքից եկած մի հայրենասեր է, մշեցի Մինաս ախպեր անունով:

Ժողովն սկսվեց: Ենկ մորուքով մի երիտասարդ, ոտքի կանգնելով, խոսեց մոտավորապես մեկ ժամու հափ ու երբ վերջացրեց, մի թխաղեմ երիտասարդ, որի կուզը աննշան չափով դուրս ընկած էր, բարձրացավ իր տեղից և առաջարկեց, որ երկրից նոր եկող Մինաս ախպերն էլ մի բան ասի: Ես քաշվում էի խոսել, բայց Ռաֆայելն ստիպեց: Վեր կա-

ցա ու ասացի. «Ախպերներ, ես այն խոսող պարոնի ասածների մի մասը չհասկացա, ի՞նչ բան է սոցիալիզմ, որ նա շատ անգամ կրկնեց: Նա շատ հարձակվեց Բուլղարիո նախարարապետ Ստամբուլովի վրա: Իմ գեղացու խելքով՝ Ստամբուլովը լավ արեց, որ չթողեց Բուլղարիան կցվեր ցարերի երկրին: Ախպեր Չան, առաջին գործը սուլթանական ռեժիմի խորտակումն է, որպեսզի քիչ-միչ ազատություն ձեռք բերենք, հետո երբ հայ Ստամբուլով և պատասխանատու նախարարություն լինի և երբ նրանք ժողովրդի վնասակար բաներ անեն, նրանց հախից գալը հեշտ է»:

Հիշյալ թխադեմ և չոր մարդը սկսեց ժպտալ և ծափահարել: Հետո իմացա, որ այդ մարդը Դումանն էր, որ դաս էր տալիս Թավրիզում, իսկ խոսող շեկ երիտասարդը Հովնան Դավթյանն էր:

Բոլորի հետ ծանոթացա: Ուսուցիչների մեջն էին Սաթենիկ Մատինյան, Իշխան Արղության և կարծեմ՝ Ռոստոմ:

Այնտեղ էր նույնպես արմենական պարոն Սարաֆյան, որ Ամերիկայի հայոց կողմից շահնշահին շնորհակալության կոնդակ էր բերել: Նրա հետ էլ ծանոթացա՝ ամերիկահայության և նրանց ձգտումների մասին տեղեկություններ ունենալու համար:

Ես Սալմաստ վերադառնալով կարավանին էի սպասում՝ վան մեկնելու համար, երբ բնակավայրս եկավ մի պարոն և ցանկություն հայտնեց ինձ հետ առանձին տեսնվելու:

Այդ մարդը, որ նոր եկած էր Թավրիզից, ինքզինք ներկայացրեց. նա դաշնակցության ներկայացուցիչ Պետոն էր: Ուրիշներից իմանալով իմ մասին՝ այսպես սկսեց խոսել. «Մենք կուզեինք օգնել հայ տանջված ժողովրդի ազատության գործին և խնդրում ենք, որ մեզ աջակցեք»: Մոտավորապես այս մտքերով էր, որ նա դիմեց ինձ, հետո բացատրեց, որ ինքը իբրև վաճառականի ծառա վան պիտի գա գործելու:

Արդեն Թերլեմեզյան Մկրտիչը ինձ նկարագրած և պատրաստած էր զանազան կուսակցությունների գործելակերպին, այդ հիման վրա ես ըսի Պետոյին, որ լսածովս դուք ցույցերի բարեկամ եք, գուցե նրա համար, որպեսզի ձեր ըն-

կերները աղմկելու նյութ ունենան: Բայց մենք, բռնապետությունից տառապելով հանդերձ, մինչև մեր պատրաստվելը՝ թյուրքերի հետ յուրա ենք գնում: Բնավ ցանկալի է և անտեր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը վտանգի ենթարկել: Նա պնդեց, որ վանում ամեն զգուշություններ ձեռք պիտի առնե:

Այն ժամանակներ «Հնչակ» թերթը Սալմաստում չէին սիրում, ճիսկրտում էին առանց կարգալու: Այնուամենայնիվ ես հնչակյանների հրատարակած Լաֆարգի «Մուլանալու իրավունք» գրքից մի քանի օրինակ դրած էի իմ խուրջինս մեջ, դինամիտների և երկու ատրճանակների կողքին:

ՎԵՐԱԴԱՐՁ

Հաջորդ օրը Քոյնաշահարից կարավանի հետ ճամփա ելա: Կարավանի մեջ էր մի չարվազար Ակոբ անուևով տղա, որի հետ ծանոթ էինք, հետո իմացա, որ նրան Պետոն է ուզարկում Վան, որ նա այնտեղ բնակարան վարձի, մինչև որ գարնան ինքն էլ գա: Հետզհետե Դուշմանաձորով բարձրանալով, շուտ եկանք թրքական հողը: Սահմանին մոտիկ էր քրդական մեծ կանիկ գյուղը: Կարավանը թափեց այդ գյուղի մոտ գիշերելու:

Այդ օրը այնտեղ եկած էին յոթանասուևի չափ թյուրք ձիավոր զինվորներ, հետապնդելու պարսկական քյուրդավազակներին, որոնք չգիտեմ որ գյուղի ոչխարի հոտերը քջել տարել էին:

Ես ունեի ձեռքիս մի շատ գեղեցիկ գիլանի փայտ, կարավանի մեջ ման էի գալիս, երբ մի քանի զինվորներ իրենց սպայի հետ մոտեցան ինձ, և սպան պահանջեց, որ ձեռնափայտս իրեն տամ. մերժեցի. նրանք ինձ օղակեցին և ուզեցին բռնի վերցնել: Երբ ես տեսա, որ հնարավորություն չունեմ սիրածս ձեռնափայտս ազատելու, զայն ծուևկիս տվի, ջարդեցի և ձգեցի նրանց առաջ ու արագորեն մտա մեզ հյուրընկալող քյուրդերի տունը: Ռահիմ խանն այնտեղ էր, միասին մտանք մի ջուլի տակ և ուզեցինք քնանալ: Քիչ հետո հանկարծ հարվածներ եմ ստանում թևիս ու կունակիս վրա: Այդ զինվորների սպան էր, որ սուրը քաշած, նրա բուխ կողմով խփում էր: Ռահիմ խանը պառկած տեղից բողբոջեց, թե իրավունք չունես պարսկահպատակներին ձեռնելու. այդ խոսքի վրա ինքն էլ չորս-հինգ հարված վայելեց: Քյուրդի կինը, որ խմոր էր հուևցում, տեղից վեր ցատկեց, հասավ, ցցվեց սպայի դեմ և ասաց՝ «Դուք ինչպե՞ս հանդգնում եք իմ տան կեցողներին ձեռնել», գրկեց սպային և տարավ դռնից դուրս շարտեց ու դուռը փակեց:

Հաջորդ առավոտ ճամփա ելանք և հասանք Կոտոյ: Մյուս օր, արշալույս չբացված, նորից մտանք թրքական հողը և Սարայի դաշտն անցնելով երեկոյան մոտեցանք Մուլա Հասան քրդական մեծ գյուղին, բայց նախքան գյուղը մտնել, ես իմ խուրջինը վերցրի Ռահիմ խանի էջի վրայից և ձգեցի մի ոչ խոր հորի մեջ և հորի գերանի մոտ, ձյունի վրա մի սև մեծ քար դրի [իբրև] նշան:

1890 դեկտեմբերի տասն էր, և դաշտերը ծածկված էին ձյունով, երբ մեր կարավանի առաջնորդ ուղտը մտավ գյուղ: Անմիջապես կարավանը շրջապատվեց ոստիկաններով և սկսեցին խուզարկել: Նույն ժամանակ ես նստեցի և աննկատելի կերպով իմ պարսկական անցագիրը խրեցի ձյունի մեջ: Երբ ինձ մոտեցան, ասացի, որ այս մոտակա Սաթմանց գյուղիցն եմ գալիս, ապահովության համար կարավանին միացա: Բայց այնուամենայնիվ ոստիկանական պետը հրամայեց ինձ տանել Մուկուրդոց աղայի տունը, ուր իրենք պիտի գիշերեին:

Աղայի գյուղում կային երկու զինագործներ, որոնք իմ ընկերներն էին, ես նրանց բացատրեցի խուրջինիս տեղը. գիշեր նրանք գնացին, գտան ու բերին և պահեցին իրենց մոտ:

Գիշերն ընթրիքից հետո, ինձ նորից մանրակրկիտ խուզարկության ենթարկեցին. գրպանիս տասն ոսկին վերցրին և մյուս առավոտ ինձ տվին ձիաների առաջ և տարան Արճակ գյուղը, այնտեղից էլ Հաջորդ օրը՝ Վան և ուղղակի կենտրոնական բանտը:

ՎԱՆԻ ԲԱՆՏԸ

Այդ շենքը Շամիրամյան պարիսպներով շրջապատված Քաղաքամեջն էր և նրա հարավ արևելյան անկյունը: Դրսից ներս մտնելիս աջ ու ձախ անմիջապես բանտապետի և պահապանների զորանոցներն էին. այդ մասը բաժանված էր բուն բանտից բախտով, որի արևելյան կողմը կար մի կորրիդոր. այդ կորրիդորի մեջն էին կարգերներ և արտաքնոցներ: Ինձ տարան այդ կարգերներից մինի մեջ ներս հրեցին, և դռան կողպեքը չըխկալեն փակվեց վրաս: Նոր մտնողի համար ներսը մուկն էր, հետո երբ աչքերը վարժվում էին, լուսանում էր, որովհետև բաց և փոքրիկ երդիկից թե ձյուն և թե լույսն էր մաղում վար: Հատակը թաց էր: Այդ քառակուսի խուցը մոտավորապես մեկ մետր և քառորդ լայնություներն պետք է ունենար: Ես ամբողջ օրը ոչինչ չէի կերած և ցուրտից դողում էի, մանավանդ որ Մոլլա Հասանում քյուրդերը գուլպաներս հանեցին ոտքերիցս: Մթնեց. բերին թիթեղից շինված մի ճրագ, որի մեջ նավթ էր վառվում և խեղդող ծուխ էր հանում. բայց պետք էր, որ գիշերները վառվեր այդ ճրագը: Ոչ հաց տվին և ոչ էլ ծածկոց: Ծիծաղեցի և սկսեցի մարմնամարզություն անել, որ քիչ տաքանամ: Երկու շապիկ ունեի վրաս. մեկը հանեցի փաթաթեցի մերկ ոտներիս, պզգեցի մի չոր անկյուն և հոգնածությունից անմիջապես քնեցի:

Հաջորդ առավոտ կանուխ խուցիս դուռը բացվեց: Ինձ առաջնորդեցին արտաքնոց, ուր պատահաբար աղտոտ պոզիկի մեջ ջուր կար, որ բերել էին նամագի համար: Ես ուրախությամբ լվացվեցի, խմեցի այդ ջրից և սկսեցի այդ արձակ տեղը շարժումներ անել, սառած մարմինս շփել և փորձել տաքանալ: Նորից փակվեցի խուցումս: Մի ժամանակ հետո դուռը բացվեց. բերին մի կտոր խսիր, մի երեխայի դմփիկ, մի երեխայի վերմակ, մի բարձ: Դրանք ուղարկել էին իմ Քաղաքամեջի ընկերները: Մեր տունից բերած ան-

կողինը և կերակուրները ինձ չտվին: Քիչ հետո նորից դուռը բացվեց, բերին ընկերներին զրկած երկու օխա հաց և նրա համեմատությամբ էլ պանիր, ամնիջապես հարձակվեցի և ամբողջ հացը միանգամից կերա: Մի քիչ պանիր ավելացավ, դրի բարձիս տակ, ես էլ վերմակը քաշեցի վրաս ու պառկեցի, որպեսզի տաքանամ: Հագիվ աչքերս խփել էի, տեսնեմ ականջիս ամենափափուկ տեղը կծեցին, աչքերս բանամ, որ ինչ հարյուրավոր մուկեր վազվզում են: Հասկացա, որ Գյորանդաշտի պանրի սուր հոտն է նրանց դուրս քաշել իրենց բներից: Գտա մի վառված լուցկի և ամրացրի պատի ճեղքի մեջ. շապիկիցս մի թել քաշեցի, նրա մի ծայրին կապեցի պանիրը, իսկ մյուսը ամրացրի լուցկու ծայրի վրա, որով պանիրը կախվեց օդի մեջ: Մոտեցան մկները, բարձրացան իրենց հետևի ոտների վրա, հոտոտեցին, բայց չկարողացան հասնել պանրին: Նրանցից մեկը փորձեց բարձրանալ խորդուբորդ պատի վրա, հասավ մինչև պանիրը, մի ոտը դրավ պանրի վրա, բայց պանիրը հետ գնաց, և մուկը գլուխկոնձի տվեց. մյուսները հերթով այդ փորձը կրկնեցին՝ գլուխկոնձի տալով: Զվարճալի էր, քահ-քահ ծիծաղեցի: Ես մենակ չէի այլևս:

Սկսեցի իմ մարմնամարզությունները. ոտներս մեկը՝ մի պատին, մյուսը՝ մյուս պատին դեմ տալով՝ բարձրանում էի մինչև երդիկը, լայնածավալ բնությունից մի կաթիլ ազատություն և մաքուր օդ որսալու, և երբ ոտներս հոգնում էին, վար էի իջեցնում:

Հանկարծ լսեցի մի դուրալի ձայնով երգեցողություն, շատ մոտիկից և քրդերեն լեզվով: Ուրախալի էր, որ բոլորովին մոտ ընկերներ ունեմ: Կեսօրին, երբ կողպեքս չըխկաց, և դուռը բացվեց, որ արտաքնոց գնամ, իմացա, որ կողքիս կարգերը քյուրդ ցեղապետ Այիֆ խան բեյի երգիչն էր տեղավորված, նա բանտում իրեն լավ չէր պահած, բերել ձգել էին կարգեր: Ես ջերմ բարևներ ուղարկեցի նրան և շաբաթներով նրա հրապուրիչ երգերի վայելքն ունեցա:

Կարցերում պատահում էր, որ երեք օրով ոչ հաց և ոչ ջուր կտային: Մի օր սոսկալի հարվածից կատաղած՝ դուռը ծեծում և անվայել հայհոյություններ եմ անում, հանկարծ

դուռը բացվեց և միաչքանի չափուչ (փոխհիսնապետ) իր ոտների մեջ ունենալով աննկարագրելիորեն կեղտոտ ու պողը ջարդված մի պողիկ և ձախ ձեռքով էլ խաղալով իր լվացվելիք տեղերի հետ, ասաց. «Անհավատ, ինչու ես հայհոյում»:

- Զուր եմ ուզում:

Պողիկն առավ ու ինձ պարզեց: Վերցրի պողիկը և պինդ փակեցի աչքերս, որպեսզի չտեսնեմ աղտոտ բծերը, ամբողջ ջուրը քամեցի մինչև վերջին կաթիլը և պողիկը հեռուն շարտելով ներս մտա:

Հինգ շաբաթ էր, որ ես կարցերումն էի. հարցաքննիչ դատավորը այդ ժամանակամիջոցում իրեն ցանկալի խոստովանությունը չկարողացավ կորզել ինձանից: Ես մեր նահանգի մի գյուղից եկածս ժամանակ բռնվել էի. ոչ մի փաստ չկար, որ ես հակապետական արարք կատարած լինեմ: Ինձ փոխադրեցին ներքին բանտը, ուր մեր հանդիպումը իմ ընկերներին հետ ուրախալի և հուզիչ եղավ:

Բանտարկված էին նույնպես Հինգ Հայտնի քյուրդ ցեղապետներ, նրանցից մեկը՝ Սարի-սուի Մահմուդ աղան, որ մի գեղեցիկ և պարթև տղամարդ էր, հետաքրքրվեց ինձնով, և բարեկամացանք:

Իմ կյանքումս առաջին անգամ այդ անգրագետ մարդն էր, որ ինձ բացատրեց արտաքին քաղաքականության մասին, այնքան հստակ կերպով, որ ես թե հիացա և թե երախտապարտ զգացի ինքզինքս:

Որչափ հիշում եմ՝ ասաց, որ հայերը սխալվում են, կարծելով, թե ռուսաց ցարը քրիստոնյա է, այդ պատճառով պիտի գա քրիստոնյա հայերին ազատելու: Քրիստոնեությունը մի փարդա է (վարագույր) ստոր նպատակներ ծածկելու համար: Նա ուզում է նոր հողերի և նոր հպատակների տեր դառնալ. այդ պատճառով կաշխատի, որ հայերն էլ արյուն թափեն, որ ինքը հասնի յուր նպատակին: Մյուս պետություններն էլ նույն բանն անում են: Ես զարմանում էի, որ մենք այդպիսի պարզ բաների մասին չէինք մտածում:

Այն կամերայում, որ ես տեղավորվեցի, կեսը հայեր էին, կեսը քյուրդ: Ցերեկները դուռը բաց էր լինում, իսկ երեկո-

ները գոցվում էր մինչև առավոտ. գիշերվա համար մի տակառ դրված էր մեր կամերայի մեջ, որ մարդիկ իրենց պետքը հոգան:

Առաստաղի գերանների և մարդակների արանքներից կախված էին սարդի ոստայններ, որոնց վրա լեփ-լեցուն ոջիլ էր քաշված: Երբեմն ծանրությունից այդ սարդի ոստայնների մի կտորը խաղողի ողկույզի նման պոկվում, վայր էր ընկնում: Այն ժամանակ ամեն ուղղությունը ոջիլները քաշվում էին դեպի մարդիկ: Պատահում էր, որ բանտարկյալներից մի քանիսը հարձակվում էին և ընտրում ընկած ոջիլները մեծերը ու դնում իրենց թևերի տակ սնուցանելու, որ հետո կռվեցնեն կամ վագեցնեն ուրիշների հետ: Այդ բոլորը, իհարկե, ժամանակ սպանելու համար:

Այդ օրերը մի ուժեղ երկրաշարժ եղավ. դա առավոտ նոր լույսը բացված ժամանակն էր: Ես, որ անմիջապես պատուհանն էի ցատկել հաստ պատից օգտվելու համար, տեսնում էի, թե ինչպես գերանները պատից դուրս ու ներս էին անում: Մեկ էլ՝ աղմուկ ու գոռգոռոցներ, պղինձներ ու դռներ ծեծել, դրսից հրաձգություն, այս բոլորը երկիր շարժող սատանաներին փախցնելու համար էր:

Դատավորը տաս ոսկի կաշառք ստացավ իմ փեսայից, հետո կուսակալի համաձայնությունն էլ առած էր Նաթանյանը, երրորդ, որևէ հանցանքի ապացույց չուներնալով, մոտ վեց ամիս բանտ պահելուց հետո ազատ արձակվեցի:

ԱՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՈՒՄՄԱԽՅԱՆ

Այս կարող, ընդունակ և պատրաստված մարդը կրոնական գործերը թողած, հասարակական և գրական աշխատանք էր տանում: Ընդհանրապես նա ամբողջ գիտակից ժողովրդի վերափոխելու գործին էր նվիրված: Քարոզներ էր տալիս աշխարհիկ խնդիրների շուրջը, Շատախի և Վանի բարբառներն էր ուսումնասիրում և այդ բարբառների բառգիրքեր էր կազմում: Նույնպես Հայաստանի ճոխ բուսականության տեղական անունների անտիպ բառարան էր կազմել: Նրա գրած գրքերը. «Հայրենիքի պահանջներ և Հայ գյուղացին» ու «Մասիս լեռների հարավային ստորոտներ» շինիչ ու այժմեական խնդիրներ հուզող գրվածքներ են:

1881 և 82 թվերին Թոխմախյանը Թիֆլիսում հրատարակային դասախոսություններ է կարդացել, որոնցից մեկի համար «Մշակի» 1881 հունիս 2 համարում քննադատը, գնահատելով Արսենի բերած տնտեսական փաստերը թյուրքահայ ժողովրդի կենցաղի մասին, ավելացնում է. «Թոխմախյանը այն միտքը հայտնեց, որ հայոց ազգության նեցուկը ոչ կրոնն է, ոչ էլ հայոց ինտելիգենցիան, այլ հայ գյուղական դասակարգն է, որ, չնայելով բոլոր տառապանքներին, կապված է մնացել հայոց հողին, հավատարիմ է մնացել հայրենիքին, այն ինչ ամբողջ արիստոկրատիան գաղթել է Հայաստանից և հետո անհետացել ջնջվել է: Դասախոսը այն համոզմունքին է, որ շատ հեշտ կլիներ կապ հաստատել հայերի, քրդերի և ասորիների մեջ»:

Իմ բանտարկվելուց առաջ նա երկար ժամանակ բանտարկված է եղել Վանում և նույնիսկ ՅազՂյան Գարեգինի հետ միասին խաչվել էին բանտի կարցերների պատերի վրա: Այդ կատարված է հետևյալ ձևով. չորս ցից էին զարկել պատի վրա իրարից բավական հեռու, վերի ցցերից կապել էին տարածված ձեռները, իսկ վարի ցցերից՝ տարածված ոտները: Հետո կայսերական ընդհանուր ներումն եղած էր քաղա-

քական բանտարկյալների համար, որով հիշյալ երկուքն էլ այդ ներման շնորհիվ բանտից ազատվել էին:

Արսեն Վարդապետը Խրիմյանի աշակերտն էր և կարող կարապետ աղա Նաթանյանի էլ բարեկամ: Նրա՝ բանտից ազատվելուց որոշ ժամանակ հետո, Նաթանյանին հաջողվում է մի անցագիր հանել տալ, որ Արսեն վարդապետը գնա էջմիածին և գրականություն գրադրի: Բայց Արսենի էջմիածին հասնելուց առաջ լուրեր հասած էին էջմիածին, որ նա ազատամիտ է կրոնական խնդիրների վերաբերյալ և հակադաշնակցական իր քաղաքական հայացքով. ուրեմն նրան էջմիածնում ոչ թե դյուրություն չեն տվել աշխատելու, այլ, բոլոր հարաբերությունները խզելով, դնում են բանտարկյալի վիճակի մեջ:

Կարծեմ 1892 թվին Արսենը անլեզալ անցնում է Պարսկաստան, սահմանին մոտիկ գտնվող Սուրբ Ստեփանոսի վանք:

Այնտեղ դաշնակցական «հերոս» Հունոն իր երկու կարսեցի ընկերների հետ նրան կապում, դնում են բուխարին և նավթ լցնում վրան, կենդանի այրում են: Հունոն և յուր երկու ընկերները անուն էին հանած Այաջաղաղի կովում:

1893-ի ձմեռն էր, որ ես էջմիածին գյուղում մի աղքատիկ տան մեջ գտա Հունոյին մահամերձ հիվանդ: Որովհետև շատ էի ցանկանում իմանալ Արսենի դժոխային սպանության դրդողների անունները, առանց նկատի առնելու հիվանդի ծանր վիճակը, հարցրի արդեն կատարված սպանության մասին: Հունոյի աչքերը արտասովակալեցին, և նա դժվարությամբ պատասխանեց. «Այդ տխուր դեպքի մասին մի հարցնեք»: Այս դեպքն էլ կազմում է դաշնակցության բացասականապես հարուստ պատմության մի դրվագը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1891 թվին բացի արմենականներից, Հնչակյանների և դաշակցականների ներկայացուցիչներն էլ սկսեցին երևալ Վասպուրականի բեմի վրա: Նրանք քիչ ծանոթ լինելով թյուրք հոգեբանություն և մեր կացություն, չզգուշացան թյուրքերը գրգռելուց՝ թե իրենց ճառերով և թե իրենց գործունեությունները: Նրանց սեպարատիզմի ձգտումները անուղղակի կերպով քաջալերվում էին ցարիզմից և Անգլիայից, որովհետև թյուրքի խառնակ վիճակից օգտվողները միայն նրանք կարող էին լինել: Ուրեմն 1891 ից հետո Վասպուրականում երեք կուսակցություններ կային:

Առաջին. Հնչակյան կուսակցություն, որ պլեխանովյան սոցիալ դեմոկրատական ծրագրերից շատ բան փոխ առնելով՝ ինքզինք սոցիալիստ էր ներկայացնում, մինչդեռ երբ Պլեխանով այդ Աշխատանքի ապահովության խմբի ծրագիրը պատրաստել էր, արդեն Ռուսաստանում 300 000 բանվորություն կար, որոնցից մի մասը կոփված էր հեղափոխական ավանդույթներով: Իսկ Հնչակը հայ աշխատավորական ժողովրդի հետ կապ չուներ, որով հող չուներ իր ոտքի տակ: Նա ջերմոցի ծաղկի նման սկսեց բուսանել Աթենքում և հաստատվել Զվիցերիայում:

Հնչակյան ծրագրի սկզբնական փոխ առնված մարքսիստական մասերը լավ նորություններ էին մեր կյանքում, բայց նույն ծրագրում ասվում էր, որ այդ նորությունները հեռավոր նպատակի համար են, իսկ մոտավոր նպատակը ծանոթ հայրուկային կռիվներ էին ազգայնական բնույթով:

1890-ին Վանից դուրս Հնչակյանները ամենաուժեղ կուսակցությունն էին, բայց Վանում նրանք շատ աննշան թիվ էին կազմում, որովհետև այդ քաղաքի բնակչության ստվար մեծամասնությունը արմենականներ էին:

Հնչակյաններն իրենց գոյություն առաջին տարիներին ագրեսիվ ուժը չկրցին պահել. հետզհետե թուլացան և բաժանվե-

ցին երկու հատվածների: Իրարից բավական թվով երիտասարդներ սպանեցին և նրանց նոր հատվածը ինքզինք անվանեց Վերակազմյալ: Այդ վերակազմյալներից առաջ եկավ Արզույան և Մարտուկեայան ավազակախումբը, որը փող կորզելու համար Ամերիկայում սպանեց թավչանջյանին և եգիպտոսում էլ նրանց քննադատող մեծատաղանդ Արփիար Արփիարյանին:

Երկրորդը Արմենական կուսակցությունն էր: Արմենական անվանում էին այն ամենին, որոնք Փորթուգալյանի՝ Վանում հաստատած կենտրոնական դպրոցի աշակերտներն էին եղած, կամ «Արմենիա» թերթի հետ կապ ունեցողներին և կամ Մարսելում կազմված «Հայրենասիրական միություն» անունով կազմակերպության անդամ էին: Այդ հայրենասիրական միությունը ծրագրային բրոշյուր էր հրատարակել «Վարդապետական Հայաստանի» անունով, որը իր չափազանց միամիտ և ազգայնական թեզիսներով հազիվ թե հնարավորություն ունենար մասսաներին առաջնորդելու: Արմենական ազգայնական կուսակցության իսկական ծրագիրը կազմվել է Վանում 96-ի կռիվների ժամանակ Մկրտիչ Թերլեմեզյանի ղեկավարությամբ:

Այդ կուսակցության գլխավոր ձգտումն է եղել՝ հնար եղածին չափ քիչ գրգռել թյուրքերին և զինել, պատրաստել ժողովրդին ու պատեհ առիթի սպասել:

Երրորդ կուսակցությունն էր Դաշակցությունը:

Այդ կուսակցություններից առաջ Կովկասում կար «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը, որը 90 թվին կազմակերպեց Կուկունյանցի խմբի երեխայական արկածախնդրությունը: Այդ խմբի Ֆինանսավորողը եղավ Գրիգոր Արծրունին: Նույն խմբի անդամները, տակավին թրջա Հայաստանի սահմանը չանցած, ստիպվեցան կազակների հետ կռվել, որով Կաղզվանի այգիներում բռնվելով՝ ուղարկվեցին Սախալին կղզին տաժանակիր աշխատանքի, իրենց պետի հետ:

Այդ ժամանակները ցանկություն կար հրապարակի վրա եղած «հեղափոխական» կուսակցությունները միացնել դաշակցային սկզբունքներով: Հնչակյան և Արմենական կուսակցությունները չմիացան, իսկ «Երիտասարդ Հայաստանից» սերեց Դաշակցությունը: Եվ այդ էր պատճառ, որ

Դաշնակցությունը միշտ պարծենում էր Կուկունյանցի խմբի ձեռնարկություններով:

Դաշնակցության առաջին կազմակերպողներն եղան Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, զոկտոր Լորիս-Մելիքով, Ռոստոմ և մի քանի ուրիշներ:

Հիշյալ պարոնները նարողնիկական հասկացողությամբ ռոմանտիկ հայրենասերներ էին: Նրանք մինչև 92 թվին հազիվ կարողացան ընդհանուր ժողով ունենալ և վավերացնել իրենց թրքահայ բարբառով ծրագիրը:

Այդ ծրագիրն էլ հեռավոր ու մոտավոր նպատակներ ուներ: Հեռավորի մեջ՝ հարուստներին չխրտնեցնելու համար՝ քողարկված էին սոցիալիստական մտքեր, բայց մոտավոր նպատակը զուտ ազգայնական, հայդուկային ձգտումներ ուներ: Ուրեմն այդ երկերեսանի ծրագիրը թե սոցիալիստական հակում ունեցողներին և թե թրքահայ ազգայնական խմբապետներին հրավիրում էր յուր գիրկը:

Դաշնակցության առաջին գորավիզը բուրժուազիայի իդեոլոգ Գրիգոր Արծրունին եղավ: Սկզբից «մշակական ոգևորված երիտասարդությունն անցավ այդ կուսակցության շարքերը. հետո կամաց-կամաց նորդարական մտավորականները և հարուստ «հայրենասերներն» էլ տեղավորվեցին Դաշնակցության մեջ: Իհարկե, հարուստների հայրենասիրությունը մեր հասկացած հայրենասիրության հետ խոտոր կհամեմատի, որովհետև նրանց հայրենիքն այնտեղ է, որտեղ դյուրություն կա աճեցնելու իրենց կապիտալը:

Այդ կուսակցությունը առինքնեց ավելի խոշոր հարուստներին էլ.՝ օրինակ, միլիոնատեր Մելիք Ազարյանը եղավ Դաշնակցության գանձապահը: Մեծահարուստ Համբարձում Մելիքյանը թողեց հնչակյան շարքերը, մտավ Դաշնակցության մեջ և սկսեց հրատարակել կուսակցության թիֆլիսի կենտրոնական օրգանը և այլն...: Այդ կուսակցության կենտրոնը եղավ թիֆլիսը և մասամբ Բաքու՝ հեռու բուն հայ միջավայրից:

Հիշյալ երեք կուսակցություններն էլ իրենց գործունեությամբ ապացուցեցին, որ իրենք թունդ ազգայնականներ են: Նրանց գործելակերպերը ավելի կամ պակաս միատեսակ էին:

ԱՅԴ ԵՐԵՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՑ ՍԿՂԲՆԱԿԱՆ ՉԳՏՈՒՄՆԵՐԸ

Սկզբում երեք կուսակցություններն էլ հայրենասիրական ոգևորությամբ և օգտակար լինելու գաղափարով կազմված էին: Կային բավականաթիվ կուսակցություններ, որոնք զոհվելու պատրաստ էին և ազատագրական գաղափարով շատ զոհվողներ էլ եղան:

Բայց այդ կուսակցությունները իրենց ամբողջությամբ չկարողացան մնալ սկզբունքային բարձրության վրա: Առաջին հայրենասիրական ոգևորությունները հետզհետե թուլացան, և նրանք իրար դեմ պայքարող և յուրաքանչյուրը իր հիգեմոնիան պարտադրող հաստատությունների վերածվեցին:

Քանի առաջացան, ավելի վար գլորվեցին և հասան այնտեղ, երբ դեռ չէր ճանաչված սովետական կառավարությունը Ֆրանսիայում և ուրիշ տեղերում, այնտեղերի մի կարգ դաշնակցական տղաները, պահելով հանդերձ իրենց կուսակցականի հանգամանքը, ով որ իրենց պես չէր մտածում, նրան մատնում էին նույն երկրի ոստիկանության՝ իբրև բոլշևիկների: Այդ ապացույց էր նրանց հակահեղափոխական ու լրտեսական բանդաների վերածվելու պրոցեսին:

ՀԻՇՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԱՆՈՒՄ

Վանում առաջներ այդ կուսակցություններին պատկանող անձինք Հայտնի էին իրենց նիստ ու կացով: Արմենականները թեյ էին խմում, դաշնակցականները՝ գինի, Հնչակյանները՝ օղի:

Ոստիկան Ագյա Հէֆենդին, ճանապարհի վրա նստած, անցնողների մասին գրեթե անսխալ կերպով ասում էր, թե անցնող մարդը ո՞ր կուսակցության է պատկանում՝ դատելով նրանց քայլվածքից ու շարժումներից: Բազմաթիվ ընտանիքներ կային, որոնցից Հայրը արմենական էր, մի տղան՝ Հնչակյան և մյուս տղան՝ դաշնակցական: Դրանք Հաճախ իրար հետ էլին խոսում և ճաշում՝ մեկը մյուսին հակառակորդ համարելով:

Թե թյուրքիայում և թե Կովկասում Հայ գյուղեր կային, որոնք իրար մեջ պառակտված կռվում էին, կամ դրացի գյուղացիների հետ կռվում էին՝ տարբեր կուսակցության պատկանած լինելու համար:

Գնալով այդ կուսակցությունների ներհակությունները ավելի սաստկացան: Դաշնակցականները, որպեսզի մյուս կուսակցություններից ավելի տիրապետող դիրք ունենան, սկսեցին հակառակ կուսակցության աչքառու անդամներին և ինտելիգենցիային սպանել՝ ինչպես Աճեմյան Գրիգորին, որ Նորաշեն դպրոցի կրթական տեսուչ և մի պայծառ մտածող ու պայքարող դեմք էր: Մուրադ-Ռաֆայելյան դպրոցն ավարտած և զարգացած ու Հայրենասեր Գավաշի Մանուկին էլ սպանեցին: Ինտելիգենցիային սպանում էին, որովհետև նրանք Հանդեսում էին քննադատել դաշնակների ձախորդ գործունեությունը: Հետո ավելի խմբովին սպանություններ սկսեցին կատարել՝ յուրացումների համար, ինչպես Աղթամարի կաթողիկոսական փոխանորդի, նրա զրազ-

րի և զրազրի տասներկու տարեկան երեխայի սպանությունն էր: Դրանց Իշխանը իր խումբով սպանեց մի գիշեր՝ այդ դարավոր հաստատություն և նրա հարստություններին տիրապետելու համար: Բարեգործական միության Վանի ներկայացուցիչ Պետրոս բեյ Գափամաջյանին սպանեցին, որովհետև նա արգելք էր Հանդեսանում, որ Բարեգործականի միջոցներով կառավարվող Կենտրոնական դպրոցի աշակերտությունը, իր կրթական գործը թողած, դաշնակցության զորանալուն չձառայեր և այլն և այլն:

Արմենականները Վանից դուրս քիչ էին Հայտնի: Երբ արտասահմանում Ռամկավար կուսակցությունը կազմվեց, արմենականների մի մասը ձուլվեց այդ նորակազմ կուսակցության մեջ:

Ռամկավարների երբեմնի լիզերներից մեկն էր մեր Հայտնի ու տաղանդավոր բանաստեղծ Վահան Թեքեյանը, որի մի աչքը Հանեցին դաշնակցականները:

Ռամկավարների և դաշնակների գաղափարախոսություն մեջ գրեթե տարբերություն չկա: Ամերիկայում երկու կուսակցություններն էլ մի տիրացուի կամ քահանայի համար կռվում են. երկուքն էլ հարուստների բարեկամներն են, հետևապես երկուքն էլ բանվոր դասակարգի թշնամիներ: Միայն մի տարբերություն կա, որ ռամկավարները դաշնակների պես թշնամի չեն եղած Խորհրդային Հայաստանին:

...սխալմամբ զյանալիս միջոցաւ լաճ սնոյ ուս իրմմ...
...ան բն զյանալիս միջոցաւ լաճ սնոյ ուս իրմմ...
...սպալ յայոյ զոյնալաճ իսմմ...
...ոյնալիս մի մնա իրմմանն և իրմմանայն յոտամմ...
...դժ կար մնմն միմբսաճ իրմմանայն յայոյ լաճ սնոյ...
...ոյնալ մախաղոյնից քնառմ: Գանաճ իրաքար յալճան դմմ...
...միմբսաճ իրմման յոյնալիս միմբ գրաճ...
...այոյնիս զյանալ զյանալիս զյանալիս յայոյ լաճ սնոյ...
...գնալիս միմբսաճ իրմմանայն միմբ գրաճ...

**ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՆՉԱԿՅԱՆՆԵՐԻ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՋԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Հրապարակի վրա հնչակ և դաշնակ կուսակցություններն էին ակտիվ, որք իրար հետ խիստ մրցման և պայքարի մեջ էին: Դրանք երկուքն էլ Հայաստանն ազատելու երկու ողբալի միջոցներ ունեին: Մեկը՝ ֆիզայական կռիվները, որ ժառանգություն էր մնացել ցարիզմից քաջալերվող բուլղարական հայդուկային գործունեությունից: Մյուսը այն անհիմն և տխմար հավատքն էր, որ իբր թե եվրոպական պետությունները պիտի միջամտեն հայկական հարցին և մեզ անկախություն պիտի բերեն:

Առանց քաշվելու պետք է ասել, որ այդ երկու ցավազար հասկացողություններն էլ որոշ չափով նպաստեցին թրքահայության ոչնչացման:

Այդ ցնորամիտ կուսակցության «փրկիչները» բնավ չկրցան ըմբռնել, որ Գլատստոն և նմանները սրբություն չունեն, նրանք իրենց երկրի կոպիտ շահի համար հայկական հարցը շահագործում էին և շնական կերպով ստում էին: Երբեք չկարողացան հասկանալ, որ եվրոպական պետությունների՝ առ երես հայ հարցին միջամտելը հետևապես պանիսլամիստ և տիրող թյուրքերին կատաղեցնելը մեզ մահացու հարված տալ էր: Նույնիսկ «Հայասեր» լորդ Բրայսների, Անատոլ Ֆրանսների և նմանների ամեն մի վիրավորանք ֆեոդալ քյուրդ վարիչների հասցեին մի-մի դամ էր մեր մահվան դազաղի համար: Առանց զինվորական կոպիտ ուժի՝ բոլոր ասված խոսքերը և գրված ծրագրերնեքը շնական ծաղր էին կոտորվող հայերի հասցեին:

Թյուրք կառավարությունը բնաջնջեց հայերը եվրոպական դիպլոմատների և հայասերների օգնությամբ:

**ՍԱՄՆՈ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ
ԾՐԱԳԻՐԸ**

1894 թվին հնչակյան Մուրադի կազմակերպած Սասնո ըմբոստացումը ճգնվեց սուլթան Համիդից դաժան կերպով: 8-10 000 հայեր խողխողվեցին:

Եվրոպան իբր թե հուզվեց: Հակառակ Գերմանիայի, Իտալիայի և Ավստրիայի ձեռնպահության, Անգլիա, Ֆրանսիա և Ռուսաստան միացան և իրենց հյուպատոսները ուղարկեցին Սասուն քննության: Այնտեղ հաստատվեց, որ անմեղ ժողովուրդը կոտորված է մի քանի ֆիդայիների պատճառով:

Հիշյալ հյուպատոսները, իրենց կառավարությունների թելադրությամբ, կազմեցին մի չափազանց համեստ բարենորոգման ծրագիր, որի ընդունելը սուլթանը ձգձգեց մինչև 95 թիվ՝ զանազան նպատակներով:

95 թվի աշնան հնչակյանները, որ սուլթանի ձգձգումից դժգոհ էին մնացել, առաջ բերին Բաբ Ալիի ցույցը:

Հրապարակված ժամանակ Անգլիայից ասել է, որ այս պահի վրա արևմտյան կատարածք մեր մասը պարսկական պայքարն է և թույլ լավ է ասելու, որ զույգ էլ մեր էր: Այս ուրբ անգլիական թեյի մեջ է: Թվում է, թե այսպես վարարեց այսուհետ պետք էր ինչից բնեք մեր ավանակ ազգային փրկիչներին, որ թուրք կառավարան միջամտության վրա: Ասկալն ամառ, այլ «Տեղ» փոխակառուցերը ինչից չեկան, և մեր այսուհետ շարունակեց հուսել կրքուն զանգով, երբեմն աստիակներով, մինչև որ Մեծն Հոգևորների կրթանք գտվախը՝ սնտյա նարեթի կոյնիսերը հայտնվեց Հայաստանում: Ահա այդ որվանից դեռ մեր երակները փակվեցին, այլևս այսուհետ չհասց, և հայ աշխարհը կազմեցրեք բազմացրեք, ուսուսյան և անձրևակայից կերպով հարավ աղիվելին ասեն ուղղությունը:

ԲԱԲ ԱԼԻԻ ՑՈՒՑՑԸ ԵՎ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

Այդ անգնն և խաղաղ ցույցը հայության խոշոր դժբախտությունն բերեց: Այս անգամ սուլթանը դեսպանների աչքերի առաջ սկսեց կոտորել հանդիպած հայերին և այդ արյան ճապաղիքների մեջ վավերացրեց մայիսյան ծրագիրը, որպեսզի Շաքիր փաշայի հետ ուղարկի զավառները գործադրելու:

Շաքիրը նախ Տրապիզոն հասավ և սկսեց կոտորել տալ հայերին: Հետո հետգհետե բոլոր զավառների հայության արժեքավոր մասը սկսեցին կոտորել: Ահա այսպես գործադրվեց մայիսյան ծրագրի զավեշտը եվրոպական դիվանագետների գործակցությամբ մինչև 1896 թ. վերջերը: Այդ կոտորածների ընդհանուր թիվը 300000 էին հաշվում այն ժամանակ:

ԲԱՆԿ ՕԹՈՄԱՆԻ ԴԵՊԶԸ

Հայաստանի կոտորածները դեռ բոլորովին չէին վերջացած, երբ 1896-ի օգոստոսին Պոլսում գործադրվեց Բանկ Օթոմանի ցույցը դաշնակցության կողմից: Այդ գործակցությունը նրա համար էր, որ դեսպաններն ստիպվեն գործադրել տալ մայիսյան ծրագիրը:

Այդ առթիվ սուլթան Համիդը Պոլսո բոլոր փողոցները հայ արյան ճապաղիքով ծածկեց, իսկ Պոլսո եվրոպական դեսպանները բոլորովին անտարբեր և լպիրշ կերպով ծիծաղում էին այս ուշացած տխմարության վրա: Վերջապես ռուսաց դեսպանատան քարտուղար Մաքսիմովիչ Բանկ Օթոման է գնում և «հեղափոխականներին» առաջարկում է հեռանալ, ասելով, որ դեսպաններն պիտի գործադրել տան մայիսյան ծրագիրը, իսկ դուք, եթե կամենաք, ես ձեզ առաջնորդում եմ նավ՝ ապահով կերպով Մարսել մեկնելու համար: Անմիջապես համաձայնություն գոյանում է: Նավի վրա բաժանված ժամանակ Մաքսիմովիչը ասել է. «Պոլսո այս սարսափելի կոտորածը ձեր սխալ գործունեության արդյունքն է, և թույլ տվեք ասելու, որ դուք էշեր եք»:

Այս լուրը անգլիական թերթերից է: Թվում է, թե այսքան վարարող արյունը պետք էր խելքի բերեր մեր ավանակ ազգային փրկիչներին, որ թքեին եվրոպական միջամտության վրա: Սակայն, ավաղ, այդ «հեղափոխականները» խելքի չեկան, և մեր արյունը շարունակեց հոսել երբեմն գետերով, երբեմն՝ առվակներով, մինչև որ Մեծն Հոկտեմբերի կրտսեր զավակը՝ սևաչյա Կարմիր Նոյեմբերը հայտնվեց Հայաստանում: Ահա այդ օրվանից դեսը մեր երակները փակվեցին, այլևս արյուն չհոսեց, և հայ արյուն կրողները բազմացան, ուռճացան և աներևակայելի կերպով հառաջադիմեցին ամեն ուղղությամբ:

Պոլսո կոտորածների ժամանակ, երբ փողոցների արյունը դեռ չէր չորացած, Վիլհելմ կայսրը իր ականակուռ պորտրեն ուղարկեց դահճապետ սուլթան Համիդին՝ ի քաջալերութիւն: Եվ նրան պաշտպանելով, մոտենալով ու շոյելով՝ Բաղդադի երկաթուղու կոնցեսիայի պես մի չաղ պատառ կորզեց ոճրագործ սուլթանից:

Այսպես հայկական հարցը և արյունը շահագործվում էր ամենքից:

Այդ կոտորածների գլխավոր դրդողը՝ ռուսաց դեսպան Նելիտով ասել էր սուլթանին. «Կոտորեցեք, Չերդ մեծութիւն, կոտորեցեք» (Massacrez, Majeste, massacrez): Այդ Նելիտովի և սուլթան Համիդի խոսակցութիւնը Ամֆիթեատրով հրապարակեց այն ատենվան Ռուսաց թերթերում:

Այս խնդրում ստոր ցար Նիկոլա 2-րդի մասին թողնում եմ գրել պատմագիրներին:

ՆՈՒՐԻՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ ՎԱՆՈՒՄ

1893 թվին էր, լուր բերին իմ պահվտած տեղս, թե տերրորիստները փոլիսների գլխավոր կոմիսեր դաժան Նուրի բեյին հետապնդելիս՝ նա խուսափել է, իսկ նրա օգնական շեյխ Հեյդարի Նուրի էֆենդին սպանվել է:

Սպանվողը կարվածատեր և շեյխի տղա էր, որի ոչխարները և եղջուրավոր անասունները պարտավոր էին ձրի պահել հայ գյուղացիները: Զուբարայով (կոռ) նրա ծառերը պիտի տնկեին և կտրատված ծառերը պիտի բերեին իրենց սայլերով հայ գյուղացիները:

Նուրի էֆենդիի պաշտոնն էր՝ իր ագենտներով միասին հսկել հայերի մեջ եղած ամեն մի շարժումին: Նա լավ հայերեն էր իմանում և միշտ ուտել-խմելու մեջ էր որոշ դասակարգի հայերի հետ:

Այս դեպքը կառավարութիւնը շատ մեծացրեց, բազմաթիվ հայեր բանտարկվեցին: Շատվորյանենց փողոցում և նրանց տան մոտիկ կատարված լինելով սպանութիւնը՝ նույն ընտանիքի բոլոր արու անդամները բանտ լցվեցին և դաժանորեն խոշտանգվեցին: Երիտասարդ բանվոր Մանուկ Շատվորյանը, բանտի մեջ տեսնելով իր ծերունի հոր և հորեղբայրների չարչարանքները, նրանց ազատելու համար մի փոքրիկ խոստովանութիւն է անում, որպեսզի ինքը մենակ մեղավոր ճանաչվի: Նա ցուցմունք է տալիս, որ ինքը մի շաբաթ առաջ հանդիպել է այդ տերրորիստներից մեկին և նրա հետ խոսել է:

Թեև սպանողները հայտնի էին ամենքին, որովհետև սպանվածի հետ եղող հայ տղան սպանողների անունները տվել է, բայց Մանուկի այդ մի խոսքը կառավարութիւնի համար բավական եղավ, որ կուսակալը անմիջապես կանչի հայոց առաջնորդին, վարչական մարմիններին, քաղաքի

երևելիներին և այդ բոլորի ու ժողովրդի ներկայութեան ազնիվ Մանուկին կախել տա՝ քաղաքի Յենի Գափոււի անցքի վրա: Մի բոլորովին անմեղ մարդու վերաբերմամբ գործված այդ ոճիրը մեծ ցավ և վրդովմունք պատճառեց Վանի ժողովրդին:

Հիշյալ ոճրից ի գատ՝ բազմաթիվ տներ խուզարկվեցին և անմեղներ բանտ լցվեցին: Որոշ գաղափար կազմելու համար՝ ստորև առաջ եմ բերում խուզարկութեան մի օրինակ:

Ես, որ դատապարտված փախստական էի, մի դիշեր լուստ դեմ մորաքրոջս տունը մտա քնանալու, իհարկե առանց պենքեր արձակելու և կոշիկներս հանելու: Երբ դեռ արևը չէր բարձրացել, քնիս մեջ ինձ թվաց, թե ոտնաձայներ լսեցի, միևնույն ժամանակ մորաքույրս, որ պատուհանից դուրս էր նայում, ինձ դարձավ և ասաց. «Վե՛ր կաց, շատ ձիավորներ երևացին փողոցում»: Մի ակնթարթի մեջ ցատկեցի տանիքը, այնտեղից ավելի մի ցած տանիք, հետո այդին ու թուփերի միջից շուլուկվեցի դեպի այգիի գլուխ եղած ծառաստանը, այնտեղից անցա դրացիի ծառաստանը և բարձրանալով մի ճյուղի վրա՝ սկսեցի գննել մորաքրոջս տունը, որ այդ ըոպեին գինվորներով չըջապատվեց: Երկու ժամ հետո գինվորները հեռացան, ես ուշիկ-ուշիկ մոտեցա, իմանալու համար, թե խուզարկությունը ինչպես է կատարվել:

Նրանք ինձ պատմեցին, որ յոթանասուն ձիավոր գինվորներ էին եկողները, նրանցից մի մասը տունը չըջապատեց, իսկ մյուս մասը գնդապետի առաջնորդութեամբ խուժեցին տուն և ինձ հարցրին: Ամենից առաջ նրանք բարձրացան վերի սենյակ, ուր քիչ առաջ ես պառկած էի: Գնդապետը մի տասնհինգ գինվորով հրացանները պատրաստ ներս է մտնում: Պատահմամբ կողենքը (ծալք) փուլ է գալիս. «Հա՛յ, դուրս եկավ» ասելով՝ գնդապետին ոտքի տակ տալով սրտապատառ սենյակից դուրս են վազում, հետո տեսնելով, որ ոչ ոք չկա, նորից ներս մտնելով ամեն բան տակն ու վրա անում և իջնում են վար՝ շիրախանա, մառան, տանտունը, ուր գտնում են մի քանի լաթի կտորներ արնոտ բծերով: Հարցնում են, թե այս ինչ արյուն է, մորաքույրս բա-

ցատրում և աղջիկը կանչելով՝ նրա ձեռները ցույց է տալիս, որոնք ցրտին ուռչում ու ճաքճքելով արյունոտում էին. այդ լաթերով նա սրբել է յուր ձեռների արյունը:

Հետո մեծ խմբով գնում են ախոռը խուզարկելու: Այնտեղ անկյունում կլորված մի խսիր է լինում կանգնեցրած, կասկածում են, որ ես պահված կարող եմ լինել այդ խսիրի մեջ. պահանջում են երկար ձող, հեռվից խրում են խսրի մեջ, բայց խսիրը չի պատասխանում:

Իրենց հետ բերած քահանային հրամայում են, որ խսիրը բանա: Քահանան հարցնում է մորաքրոջս, թե Փանոսը այստե՞ղ է: Նա պատասխանել է, որ երկար ժամանակ է, որ Փանոսին չենք տեսել: Քահանան նույնութեամբ թարգմանում է և համարձակ մոտենում ու բաց է անում խսիրը: Ոչ մի կասկածելի բան չգտնելով՝ այնուամենայնիվ գնդապետը այն արյան բծերով ծածկված լաթի կտորը և մորաքրոջս փոքր տղան ուղարկում է բանտ քննութեան համար, ուր նա վատ վերաբերմունքի պատճառով հիվանդանալով՝ արձակում են բանտից: Այդ տղան մի շաբաթից հետո մեռնում է:

Մի վրաց Մարտիրոսյանը այդպես է պատմում իր փորձերը: Մեծից զբոսը շաբաթ երեք գտնվեց ինձ մոտ: Երբ ես չտեսիցի այդ արվեստը և հետցա:

Այդ մանուկները ես արգեն ծանոթացել էի Քրիստի Բանելիվանցիայի մի մասի հետ, որտեղից հիշում եմ Ասորպետը, Ն. Մատրնյան և ուրիշներ: Ասորպետի մտ ձանթոցա Շոշակյան Մարտիրոս հետ, որ բնւ առաջարկեց անցնել Մասուն իմ երկու բնակարանների և միասին գործել: Ես չհամար-

ԲԱԺԱՆՈՒՄ

1893-ի ուշ աշնան ես և երկու ընկերներս՝ Չաթոն ու Շիրոն, գիշերով, երբ մեր տնից մեկնում էինք դեպի Պարսկաստան, այս անգամ մայրս չարտասովեց և քարացած ու տխուր մեզ էր նայում: Ընկերներս մոտեցան և ասին. «Մարե, ձեռք տուր, պաչենք»:

Նա նրանց ճակատը համբուրեց: Երբ ես մոտեցա, նա երկու ձեռքով գլուխս բռնեց և խեղդվող ձայնով ասաց. «Ամուսնացած լինելի, մի թող ունենայի, դու ո՛ր ջահնամ կերթայիր, երթայիր»:

Մայրս տեսնում էր, որ իր միակ սիրասուն և մահվան դատապարտված զավակը՝ իրանից հեռացած՝ բոլորին է պատկանում, այդ պատճառով ուզում էր իմ էությունից մի մասնիկ, մի թող ունենալ, որի վրա խորացներ իր քնքույշ սիրո բոլոր ուժը:

Աշնան երկար ու ցուրտ գիշերներին, երբ լեռների յայլաղչիները արդեն իջել էին իրենց գյուղերը, մեզ համար ճամփորդել դյուրական և ապահով էր: Այս անգամ էլ առանց պատահարի հասանք Սալմաստ: Սալմաստում մենք մեր գեները պահ տվինք Հավթվանի մեր բարեկամներին և Դիմանում անցազիր գնեցինք: Այնտեղ պետական պաշտոնյան անցազրեր սլայի մեջ լեցրած՝ ծախում էր, ինչպես չամիչն էին ծախում: Շուտով մեկնեցինք Թիֆլիս՝ բանվորություն անելով ապրելու համար:

ԹԻՖԼԻՍՈՒՄ

Թիֆլիս հասնելուս պես՝ կայարանի դիմաց փայտավաճառներ կային, նրանց քով փայտ ճեղքելու գործ կարողացանք գտնել՝ նախորդ ձմեռների նման և ապրում ու գիշերում էինք բացօթյա մեր աշխատանքի վայրը: Ճերեկները ուտում էինք պորսին յոթ կոպեկնոց պորշ՝ առատ հացով միասին: Երեկո-առավոտ էլ կծովի թեյ և սև հաց:

Հետո ընկերներս գնացին ապրելու ուրիշ բանվորների հետ, իսկ ծանոթ Հայրենակիցները եկան, ինձ տարան թոփալ Մարխասի տրակտիրն ապրել: Մարխասը հասարակական աշխատանք տարած մարդ էր և որոշ կերպով մասնակցած էր Պոլսո Գում Գափուի դեպքին: Նա Սալդատսկի բազարում մի տրակտիր ուներ: Երբ ես պիտի մտնեի տրակտիրը, դռան վրա մի ցուցանակ տեսա, որի վրա նկարված էր մի բիլյարդ, երեք գունդեր և երկու քիվեր: Զարմացած հարցրի, թե ով է նկարել, ինձ տարեք այս ուստայի մոտ: Ընկերներս ստիպեցին ներս մտնել, չայ խմել ու տեղավորվել, հետո հաջորդ օրը տանելու էին այդ նկարողի մոտ:

Մյուս օրը գնացինք ցուցանակ նկարողի մոտ: Ծանոթանալուց հետո ցանկություն հայտնեցի նրա մոտ սովորել: Վարպետը նայեց հին հագուստներիս և կարկատած չուստերիս, ասաց. «Քեզ նման մարդոց այս սուրբ արվեստը չի սազի, գնա՛ ուրիշ գործ փնտրի»:

Մի միջոց Մարտիրոսյանի տպարանում գրաշարություն սովորեցի: Սկսեցի գրքեր շարել: Իրենք գոհ էին ինձնից, բայց ես չսիրեցի այդ արվեստը և հեռացա:

Այդ ժամանակները ես արդեն ծանոթացել էի Թիֆլիսի ինտելիգենցիայի մի մասի հետ, որոնցից հիշում եմ Ատրպետը, Ն. Մատինյան և ուրիշներ: Ատրպետի մոտ ծանոթացա Հնչակյան Մուրադի հետ, որ ինձ առաջարկեց անցնել Սասուն իմ երկու ընկերներով և միասին գործել: Ես չհամար

ձայնեցի, որովհետև ունեի գործի բազմաթիվ ընկերներ, որոնք արդեն վաղուց գործում էին:

Զգիտեմ ինչու հանկարծ ես հիվանդացա. 39 աստիճան տաքության մեջ Չուխարիթի սենյակում աչքս բացի և տեսնեմ՝ Մուրադը կողքիս նստել է ջերմաչափը ձեռքին: Ասում եմ. «Արժեք նեղություն քաշել» և շնորհակալություն եմ հայտնում: Մուրադը այդ գիշեր մինչև լուսաբաց ինձ հսկեց:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՆԿԱՐԻՉ
ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ ՀԵՏ

94 Թվի փետրվարին էր, կարծեմ, որ Գալավինսկիի վրա, խանութում տեսա մի անտառի նկար, որը ինձ հիացրեց: Հաջողեցա ծանոթանալ հեղինակի հետ, որի անունն էր Գևորգ Բաշինջաղյան:

Մի առավոտ, երբ ես Գևորգի մոտ էի, ծանր հանցանք գործողի նման և հուզմունքով ու ամոթխածությամբ ասի նրան, որ շատ կուզեի մի քիչ նկարչություն սովորել: Նա պատասխանեց. «Տեսնենք, ինչ կարող ես անել»: Բերեց մի ձու, թուղթ ու մատիտ տվեց, որպեսզի նկարեմ: Ասի, որ կյանքումս ընական առարկաներից երբեք չեմ նկարած: Նա ցույց տվեց, որ ընդհանուր կոնտուրն անեմ, հետո լույսի և ստվերի սահմանները որոշեց ու գնաց իր գործին: Ամոթից կարմրած ու վրդոված էի, որ չկարողացա նկարել: Գևորգը վերադարձավ, նայեց նկարին ու ասաց. «Շատ դժվար պիտի լինի այդ տարիքիդ մեջ առանց ուսուցչի գիտնալու, մանավանդ առանց փողի, գնալ սովորել»: Տխուր էր այդ եզրակացությունը, բայց ամեն անհաջողությունն ինձ ավելի համառ ու եռանդուն էր դարձնում, որով սովորելու գաղափարը ավելի արմատացավ մեջս:

ՆՈՐԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Վրաստանի այդ գեղեցիկ քաղաքը հասնելուս պես վազեցի Մարխասի տրակտիրը, բարեկեղև հետո խնդրեցի, որ ինձ գործ գտնի: Հաջորդ օրը իբրև թերթի ցրիչ մտա «Մշակ» - ի խմբագրատունը ծառայելու: Թեթև էր աշխատանքս՝ ռոճկիս պես, որով ժամանակ ունեի օրվա երեք քառորդը կարդալով զբաղվելու:

Վերայում Հովհաննես Նալբանդյան անունով մի հայրենակից ունեի, որ ինձ հաճախ հրավիրում էր իրենց տունը ճաշի: Դրանով ես ծանոթ էի նրա ընտանիքի բոլոր անդամներին: Նրա տղան՝ Վահանը, Գերմանիո համալսարանն ավարտելով՝ վերադարձած էր Թիֆլիս: Նրա հետ ես մտերմացել էի: Մի օր ես խնդրեցի, որ միջնորդի իր ուսուցիչ Ստեփանոս Մալխասյանի մոտ, որ նա ինձ հայերենի դասեր տա: Վահանը ոգևորվում էր իմ սովորելու ձգտումով, հետևապես ուրախությամբ միջնորդեց, բայց Մալխասյանից մերժում ստացավ:

Մի ժամանակ, երբ Մալուձյանն էր վարում «Մշակ»-ի խմբագրության գործերը, թերթը խիստ կամպանիա էր տանում Խրիմյանի դեմ, և ես իմ նամակներս խմբագրության միջոցով էի ստանում: Անսպասելի կերպով տեսնում եմ, որ էջմիածնի ընկերներիցս ստացած իմ նամակներն մեկը մյուսի հետևից բացվում էին՝ ինձ հանձնելու առաջ: Բողոքեցի և հրաժարվեցի ցրիչության պաշտոնիցս: Թեև տիկին Արծրունին երեք ուրբալի ավելացնելով ամսավճարս՝ ստիպեց, որ հրաժարականս հետ վերցնեմ: Չհամաձայնեցի և պաշտոնս թողի:

Անգործությունս և Ստեփան Մալխասյանի մերժումը սովորելու ցանկությունս ուժեղացրին:

Մի քիչ փող հավաքել էի, որոշեցի գնալ Պետերբուրգ՝ նկարչություն սովորելու և մտածում էի՝ երբ իմ ճղճիմ դրամազուլեսս վերջանա, այնտեղ բանվորություն կանեմ: Նկարչ-

չուկություն սովորելու որոշումս երկու պատճառ ունեի՝ առաջինը՝ սիրում էի այդ արվեստը, երկրորդը՝ այդ ազատ գործ էր, այնպես որ այս ու այն խազեխնի հրամանի տակ չէի լինում, զի լեռներում ազատության քաղցր զգացումը արմատացած էր մեջս:

Գնացի նկարիչ Բաշինջաղյանի մոտ և հայտնեցի որոշումս: Այս անգամ նա էլ քաջալերեց և գրեց մի նամակ Պետերբուրգի իր առևտրական եղբոր վրա, որ ինձ օգնեն և թղթի վրա գծեց ու բացատրեց, թե ինչպես պիտի գտնեմ նրա խանութը, երբ կայարանից դուրս գամ: Այդ՝ դրա համար էր, որ ես բոլորովին ուսներեն չէի իմանում:

Երբ Բաշինջաղյանի մոտից դուրս եկա, մտա իմ՝ Վանի որսի ընկեր Ազնավուրյանի խանութը և խնդրեցի միասին երթալ դեռ Վանից ծանոթ Խրիմյանի մոտ, որը այդ օրերին Թիֆլիսումն էր, մտածելով, որ նա կարող է մի հանձնարարակով ինձ օգնել:

[Faint bleed-through text from the reverse side of the page is visible in this section.]

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՈՏ

Խրիմյանը մեզ ընդունեց իր ննջարանում, ուր նա անկողնի վրա ընկողմանած երգում էր: Մի քիչ սպասեցնելուց հետո՝ դադարեցրեց իր դուրեկան երգը և գլուխը մեզ դարձնելով՝ հարցրեց, թե ինչու եմ եկել: Պատասխանեցի, որ գնում եմ Պետերբուրգ նկարչություն սովորելու, եկա Վեհափառությունը ցուցմունքներ ստանալու:

«Ա» արավ և տեղից բարձրացավ ու շեշտակի ինձ նայելով ասաց. «Մո, ապո՛ւշ, նկարչությունը պատանեկությունից են սկսում, դու՛ երեսունոց մարդ և հետո, հրացան և մատիտ իրար հետ ի՞նչ կապ ունեն: Ընկերներ ունես, գործ ունես»:

Պատասխանեցի. «Վեհափառ տեր, ես կարծում եմ, որ կարող եմք վնասակար լինել: Մինչև այսօր զգուշորեն, գաղտնի աշխատում էինք հետզհետե գինեղ և արթնացնել ժողովրդին, աշխատում էինք, որ նրանք իրար հետ կապ ունենան, միացած լինեն և ուսում առնեն, բայց Դաշնակցությունը դրդում է անգն ու անպատրաստ ժողովրդին՝ բուռն ցեղերով գնալ սուլթանի ունեցած Կրուպի թնդանոթների դեմ, որպեսզի Եվրոպան մեզ օգնի: Ես Եվրոպայի օգնությունն այլևս չեմ հավատում: Սասնո և մյուս կոտորածները ցույց տվին, որ մեր ժողովուրդը ավելի մեծ դժբախտության պիտի հանդիպի: Չեմ ուզում բաժին ունենալ վաղվա պատասխանատվության մեջ»:

Խրիմյանը մի քիչ մտածկոտ ման եկավ սենյակի մեջ, և ինձ դառնալով ասաց. «Հա, փիլիսոփայում ես: Հայդե՛, անմիջապես գնա էջմիածին: Ես չուտով պիտի վերադառնամ, այնտեղ քեզ պաշտոն կտամ»:

Ընկերոջս հետ դուրս եկա առաջնորդարանից, մնաք բարով ասացի նրան ու գնացի բնակարան: Հաշիվներս մաքրեցի տան տիրոջ հետ, աղքատիկ անկողինս և իրերս կապկպելով՝ շալակս առի, քայլեցի դեպի երկաթուղու կայարանը: Այնտեղ գնացք նստելով՝ չվեցի Պետերբուրգ:

**ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆՍ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ**

Գևորգ Բաշինջաղյանի գծագրության Համեմատ Պետերբուրգում գտա նրա եղբայրը, որն ազնվորեն ինձ օգտակար եղավ: Նա ինձ Հանձնարարեց քանդակագործություն պարապող Թաշչյան անունով մի ուսանողի, որը Պետերբուրգի հայոց գերեզմանոցի կառավարիչն էր: Գերեզմանոցը գտնվում էր Վասիլևյան կղզու արևմտյան ծայրում: Այդ կղզու ծայրին մի սենյակ վարձեցինք ինձ համար՝ չորս ուռլի ամսականով: Սենյակի տերը պարտավոր էր առավոտ երեկո ինձ սամավար տալու, որով սև հացի հետ կծովի չայս և սենյակս ապահովվեց:

Նույն Վասիլևսկու մեջտեղը կար «Ֆոնդերվիզ» անունով մի բարեգործական ճաշարան, ուր ճաշում էին մեծ թվով ուսանողներ: Թաշչյանն և նկարչության ուսանող Տեր-Մինասյանն էլ այնտեղ էին ճաշում: Ես էլ այդ ճաշարանի հաճախորդ դարձա: Խնայության համար ես ուտում էի միայն կրեչովի կաշա, որ արժեք հինգ կոպեկ, երկու կոպեկի էլ սև հաց:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏ

Հաջորդ օրը Տեր-Մինասյանը ինձ տարավ կայսերական նկարչական դպրոցը, ուր ինքը սովորում էր: Ընդունվեցի նույն դպրոցի առաջին նախապատրաստականում:

Այդ օրերին կացությունս այսպես էր. հազիս ունեի վանում կարմիր ոչխարի բրդից գործված բավականին երկար և մաշված չակետ, որը միևնույն ժամանակ և վերարկու էր, պարուսինից մի անդրավարտիք, որ վաղուց էր գույնը կորցրած իր կեղտից: Օձիք չէի գործածում: Ամսին ես ծախսում էի մաքսիմում ինն ուրբի: Հետևապես իմ ունեցած դրամագլխովս ես կարող էի հինգ ամիս սովորել ու հետո բանվորություն անել: Պետք է անկեղծորեն ասել, որ ամեն տեսակ զրկանքներ ես սիրով էի տանում, միայն թե սովորելու և առաջ գնալու հնարավորություն լիներ:

Վառ ոգևորությամբ և եռանդով սովորել էի սկսել, երբ ձմեռը վրա հասավ: Զիաբարչ չէի նստում երեք կոպեկի խնայողության համար: 35 աստիճան ցուրտ էր, փողոցների անկյուններում կրակ էին վառում կառապանների և անցորդների համար, ես էլ օգտվում էի տաքանալով այդ կրակներից և արագորեն շարունակելով ճամփաս մինչև դպրոց, կամ մինչև Զոհրաբյանի բնակարանը, ուր նրա կինը շաբաթը երկու անգամ ինձ ձրի ուսերենի դաս էր տալիս:

Ընդհանուր մի քիչ մասնկուտ մաս եկավ սենյակի մեջ, և ինձ գրանցվեց ասաց. «Հա, փրկությունում ես: Հայդե՛, անփնտրելու գնա Երևանին: Ես չուտով պիտի վերադառնամ, այնտեղ քեզ պաշտոն կտան»:

Ընդհանուր ձեռ գույս նկա առաջորդներից, մտաք բարով ասացի երան ու գնացի բնակարան: Հարիսներս մաքրեցի տան տիրոջ հետ, աղբատեղ անկողնիս և իրերս կապակայլով շարժեցի առի, քայլեցի գնալի երկաթուղու կայարանը: Այնտեղ գնացք նստելով չվեցի Պետերբուրգ:

ՅՈՒԿԱՆԵՍՈՎ

Բաշինջաղյանի եղբոր խորհրդով գնացի մի երևանցի արհեստավոր նկարչի մոտ, որ խանութ ուներ շրջանակներ շինելու ու զարդեր նկարելու բարձերի և ուրիշ իրերի վրա: Այդ պարոնը կոչվում էր Յուկանեսով:

Նա իր ձեռքի տակ ուներ մի վարպետ և երկու աղջիկ գծագրողներ: Մտա խանութը և բարեկեցի: Յուկանեսովը, որ կզված սեղանի վրա աշխատում էր, բավական ժամանակ հետո գլուխը բարձրացրեց ու ասաց. «Աստուծո բարին, ի՞նչ ես ուզում»: Պատասխանեցի. «Եկած եմ այս քաղաքը նկարչություն սովորելու. ուզում եմ ազատ ժամերիս ձրի ձեզ մոտ աշխատել, որպեսզի մի բան էլ այստեղ սովորեմ: Եթե ինձ ընդունեք իբրև աշակերտ, երախտապարտ պիտի մնամ»: Նա խոսեց իր ուս վարպետի հետ: Երկուքը միասին ինձ և հագուստներս զննեցին, շուրջս դարձան, նորից դիտեցին, ապա պարոն Յուկանեսովը լռությունը խզեց՝ ասելով, որ իր մեծ հայրը շատ էր սիրում միշտ կախեթի գինի խմել, բայց ձեռք չէր ընկներ, եթե ճամփու ծախս ունես, անմիջապես վերադարձիր այնտեղ, որտեղից եկար: Ես ուսերս թռթվելով խանութից դուրս ելա, իսկ խանութպանն ու վարպետը նույնպես խանութից դուրս եկան և ինձ նայելով սկսեցին հռհռալ:

«Գնալի չում մախարոմաստ, քեզ

ԽՐԻՄՅԱՆԻ ՊԵՏԵՐՐՈՒՐԳ ԺԱՄԱՆԵԼԸ

Իմ՝ Պետերբուրգ հասնելուց երեք թե չորս ամիս անց Խրիմյան կաթողիկոսը մայրաքաղաք ժամանեց: Ես զնացի տեսության: Նրա առաջին հարցը եղավ. «Հը՛, ինչի ես այդպես նիհարել, հիվանդ խո չե՞ս»:

Բացատրություններս անելուց հետո՝ թե ինչ եմ անում, կանչեց եկեղեցական խորհրդի նախագահ Վարդանյանին և պատվիրեց, որ ինձ իբրև ուսանողի թոշակ տան:

Հայոց եկեղեցին՝ Նևսկի պրոսպեկտի վրա քաղաքի կենտրոնում էր գտնվում և շրջապատված էր հինգ հարկանի տներով: Այդ տները եկեղեցու սեփականությունն էին, որոնց բերած եկամուտներով ուսանողներ էին պահվում: Այդ եկեղեցու բակում էր, որ ուսանողները հավաքվում էին կիրակի օրերը՝ իրար տեսնելու համար: Ես էլ զնացի կիրակի առավոտ և խորհրդարան մտնելով՝ իմացա, որ ինձ երեսուրդ ուրբի ամսաթոշակ են նշանակել: Երբ խորհրդարանից դուրս եկա, երկինքը, մարդիկը, շենքերը և ամեն բան արտաքո կարգի գեղեցիկ էին երևում: Ուրախությունից ինձ թվում էր, թե ոտքերս գետնին չեն դիպչում, ուրեմն ես պիտի կարողանայի ուսումս շարունակել: Փողոցով անցնելիս՝ շուրթերս լսելի ձայնով մրմնջում էին. «Ողջո՛ւյն քեզ, ուսանողական նոր կյանք»:

ԹԱԽԻԾՍ

Թեև ես ոգևորված սովորում էի, բայց թախիծ կար հոգումս, որովհետև միջավայրն անծանոթ էր, լեզուն չէի հասկանում, չկային իմ հեղափոխական գործի ընկերներս, մանավանդ պաշտելի մայրիկիս բացակայությունը կակիծ էր պատճառում:

Հանկարծ այդ օրերին ինձ մոտ եկավ [իմ] նախկին ուսուցիչ Մկրտիչ Թերլեմեզյանը: Նրա ներկայությունը փարատեց հոգիիս թախիծը, և կարծես թե հայրենաբաղձություն այն ահավոր պարսպը լեցվեցավ:

Այդ հեռավոր հյուսիսում մեր երկրի կայծկլտացող սև աչքերը չէի տեսնում, այդ ցուրտ փողոցներում հանդարտորեն զբոսնող ուս կանանց աչքերը, հոնքերը, մազերն ու մորթը այնչափ միագույն և միապաղաղ էին, որ դժվարավ էի զանազանում:

Հայտնի Կարապետ Եզյանը ստիպեց ուսուցչիս, որ նա, իբրև լեզուների գիտցող, ընկերանա միլիոնատեր Ծատուրյանին՝ Լոնդոն գնալու և այնտեղ պրոպագանդ անելու հայկական հարցի համար, նա մերժեց, առարկելով, որ ինքը Ատրպատականի դպրոցների կրթական տեսուչը լինելով, իր գործը ավելի իրական և ավելի օգտակար է համարում: Ի ցավ ինձ՝ Մկրտիչը շուտով մեկնեց Պարսկաստան:

Ներքին գործերի այդ հին նախնականի պոպային, բարձր աշխատանքից և աղքատությունից հեռավոր մեզով երիտասարդ տարիքի մեզ:

Գարրիեյանը, որ ապրում էր Վարշավայում, Կյուլմիքյանցի հրատարակած «Արարտ հանդեսում», հրատարակեց իր՝ օլուրդերի և Հայ դրամայիների շատ սիրուն էությունները:

ԴԻՄԻՏՐԻ ԿԱՎԿԱԶՍԿՈՒ ԱՇԽԱՏԱՆՈՅՈՒՄ

Երկրորդ տարին, բացի դպրոցից, ես սովորում էի Դիմիտրի Կավկազսկու աշխատանոցում, որտեղ սովորում էին ուրիշ չորս հայեր էլ Իշխանուհի Արղուլթյան, Օքրոյան, Միրզոյան և Ախիկյան:

Դպրոցում մի ամսվա մեջ երկու նախապատրաստականներից ինձ փոխադրեցին ուսումնարանի 1-ին դասարանը, հետո ամեն վեց ամիս մի դասարան էի փոխում, այնպես որ երկրորդ տարվա վերջերը ինձ տարան 4-րդ Ֆիզուլերնի դասարանը, ուր սովորում էր նաև պարոն Յուկանեսովի վարպետը:

Կիրակի առավոտ, երբ հայերի ժամադրավայր եկեղեցու բակը գնացի, Յուկանեսովը ինձ մոտեցավ և ասաց. «Երեկ իմ վարպետս իմացրեց, որ Ձեզ փոխադրել են Ֆիզուլերնի դասարանը, շնորհավորում եմ»: Ես ուսերս թոթվելով՝ անցա: Դեռ հինգ քայլ չէի անցել, երբ նա ետևիցս հասավ ու ուսերիցս բռնելով հարցրեց. «Ասա՛, կամ դու ես խենթ, կամ ես»: Պատասխանեցի. «Ոչ դուք եք խենթ, ոչ էլ ես, այլ ձեր խանութում արած հուսահատեցնող և արհամարհական խոսքերը, և այս շնորհավորանքները ինձ համար միևնույն արժեքն ունեն» - և հեռացա:

...

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ

Պետերբուրգի հայ ուսանողները, որոնք ինչպես հիշել եմ, կիրակի օրերը մեծ մասամբ հավաքվում էին եկեղեցու բակը, որոնցից մեծ մասը գորավարների նման կրում էին խոշոր պագոններ իրենց ուսերի վրա: Նրանցից քիչ ծանոթներ ունեի, թեև հետաքրքրվում և տեղեկանում էի նրանց կենցաղի և ինչպես սովորելու մասին: Ես բոլորովին ազատ ժամանակ չունեի ծանոթություններ մշակելու: Զոհրաբյանին մոտ էի, որովհետև նա պարապ ժամանակ չէր կորցնում, լավ էր սովորում ու հեղափոխականի խմոր ունեւր, որ ապացուցեց իր հասարակական աշխատանքով՝ ցարի անկման միջոցին:

Իմ ամենամոտիկ ընկերներս նկարչական ուսանողներն էին՝ Տեր-Մինասյան, Գաբրիելյան, Օքրոյան, Շահնազարյան, երգիչ Մամաջան, երաժիշտ Սյունին և այլն: Դրանցից ամենատաղանդավորը Տեր Մինասյանն էր, որ բոլորովին աղքատ լինելով հանդերձ՝ գիշեր-ցերեկ աշխատում էր հաճախ սնունդ ունենալով միայն սև հաց և կծովի թեյ: Նա հետո փայլուն կերպով ավարտեց նկարչական ակադեմիան: Ռեպին պարծենալով՝ ասաց. «Ահա մենք էլ ունենք մեր Տրայոնը»: Տրայոնը Ֆրանսիայի հայտնի կենդանիների նկարիչ էր:

Տեր-Մինասյանը՝ այդ հին Նախիջևանի գյուղացին, չարաչար աշխատանքից և աղքատությունից հյուժված, մեռավ երիտասարդ տարիքի մեջ:

Գաբրիելյանը, որ ապրում էր Վարչավայում, Գյուլամիրյանցի հրատարակած «Արաքս» հանդեսում, հրատարակեց իր՝ քյուրդերի և հայ գյուղացիների շատ սիրուն էությունները:

...

**ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԸ**

Պետերբուրգը այն ժամանակները երեք նկարչական հաստատություններ ուներ և երկու օժանդակ աշխատանոցներ, որոնք էին. առաջին՝ նկարչական ակադեմիան, որ բարձրագույն հաստատություն էր: Երկրորդ՝ Շտիգլիցի դպրոցը, որ արդյունաբերական թեքում ուներ: Երրորդ՝ Կայսերական նկարչական դպրոցը, որ ընդհանուր նկարչական կրթություն էր տալիս և պատրաստում էր աշակերտներ ակադեմիան մտնելու համար: Հետո իշխանուհի Դենիսովայի և Դիմիտրի Կավկազսկու օժանդակ աշխատանոցները:

Պետերբուրգում երկու թանգարաններ կային. մին Գեղարվեստից ակադեմիայի թանգարանը, որի վարի հարկի արձանների գալերեաները լեցված էին Հին կլասիկ գործերի կոպիներով, իսկ երկրորդ հարկի նկարչական դահլիճներում փայլում էին արվեստի ժամանակակից գործեր, որոնք թե ուսանողության և թե ժողովրդի հաճախակի այցելությանը ժամադրավայրն էին:

Երկրորդն էր՝ էրմիտաժի սքանչելի թանգարանը, որ շատ էր հարուստ հուանդական և անգլիական դպրոցների գործերով և չափազանց աղքատ վերածննդյան ժամանակի իտալական գործերով: Բայց այդ մյուզեոն իր մուտքով և ներքին սարքերով ու հրապուրիչ մալախիտ քարից շինած սեղաններով և ուրիշ զարդերով հիացք էր պատճառում:

Ցարանիստ քաղաքի նկարչական ասպարեզի վրա փայլող աստղերը, ինչպես Ռեպինը, Մակովսկին, Շիշկինը, Կավալեսկին, Ռուբոն, Պալենովը, հայկական ծագումով Այվազովսկին և այլ մեծ թվով ուրիշները 1900-ի Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում, ուր հավաքված էին աշխարհի նկարչական կարիֆենների գործերը, կարելի է ասել, որ

բոլորովին ուշադրության չարժանացան, մանավանդ քանդակագործությունը, որ շատ էր հետամնաց, չնկատվեց: Հիշյալ Ռուբոն, որ Ֆրանսիական ծագում ուներ, բայց ուսուցանված էր, ի միջի այլոց, տված է մի մոնումենտալ, հետաքրքիր և բարդ գուրծ՝ «Սևաստոպոլի պանորաման»:

Խրիմու փտախտով բռնված ցար Նիկոլա 1-ինի բանակները ջարդվեցին, բայց Ռուբոն այդ պանորամայի մեջ գրեթե հաղթող է դուրս բերել ցարական բանակին:

ԷՍՏՆԱՆ ԴԻԱ

Ես ծանոթացել էի մի քանի լատիշ և լեհ նկարիչ-ուսանողների: Մի լատիշ ինձ առաջարկեց 1897-ի ամառը գնալ Էստլանդիա՝ էստլոններ անելու: Ես սիրով համաձայնեցի:

Բալթիկ ծովի ափին, անտառների մեջ ծածկված մի երկհարկանի տան ապրում էին ընկերոջս ազգականները, իսկ էստոնացի տան տերը քաշված էր իր գյուղատնտեսական շենքում ապրելու: Այդ շենքից հարյուր քայլ հեռու, անտառում տան տիրոջ բաղնիքն էր, որի կողքի կորրիդորի մեջն էլ ես տեղավորվեցի: Իսկ իմ լատիշ ընկերն իր ազգականների մոտ էր ապրում:

Այդ երկիրը գեղեցիկ էր. ծովը տեղ-տեղ անտառների ու ժայռերի մեջ թափանցելով՝ թերակղզիներ էր կազմում, որոնք ասեղնագործված սփռոցների նման, միջամուխ լինելով ծովի կապույտում, հրապուրիչ տեսք էին ընդունում:

Հուլյն-թրքական պատերազմը սկսված էր: Թիֆլիսից իմ ընկեր Գարեգին Յազժյանից մի նամակով ներփակ ստացա Բուլղարիայի Արմենական վեցերորդ շրջանակի հրապարակած մի պոռոտախոս պոռկկամացիա: Դրանով հայտարարում էին, թե հուլյները արևմուտքից և հայերն էլ արևելքից խփելով՝ սուլթան Համիդն ու իր ուժերը ջարդ ու փշուր պիտի լինեն և այլն: Որովհետև ես Փորթուղայանի աշակերտն էի, թյուրիմացաբար ենթադրում էին, որ համակիր պիտի լինեմ արմենական քյալագյոզ շարժումներին: Ընդհակառակը, խիստ հանդիմանական մի նամակ գրեցի Թիֆլիս Գարեգինին՝ այդ անմիտ ու ցուցամուլ շարժումների մասին, որքանզեքն ու անկազմակերպ հայ ժողովրդին միմիայն վնասել կարող էին:

Այդ ժամանակ Թիֆլիսում Գարեգին Յազժյանին ժանդարմները ձերբակալում են և իմ «Պզտիկ» ստորագրությամբ նամակս, որի մեջ կար էստլանդիայի հասցես, գտ-

նում են նրա գրպանում: «Պզտիկ» ստորագրությամբ Պուստ «Հայրենիք» թերթին Աղբակից և Սալմաստից գրածս հոգվածները, կարծում եմ, ժանդարմերիային ծանոթ էին:

Մի գիշեր հանկարծ ժանդարմներով շրջապատվեց բաղնիքը, ուր ես գիշերում էի: Ներս մտան, և ժանդարմերիայի նաչալնիկը հրամայեց, որ ձեռներս վեր բռնելով՝ անկողնից վար իջնեմ: Ես կիսամերկ կանգնեցի հատակի վրա, մինչև որ նրանք անկողինս, պայուսակս ու շենքը խուզարկեցին և իմ քով գտնված բոլոր թղթերը գրավեցին: Հետո ինձ թուլ-լատրեցին հագնվել: Այն ժամանակ նաչալնիկը հարցրեց. «Սա ի՞նչ թղթեր են»: Պատասխանեցի, որ Պզտիկ անունով մի հայրենակից Լոնդոն էր մեկնում, ինձ խնդրեց պահել այդ թղթերի կապոցը՝ մինչև իր վերադարձը: Ես իմ պարսկական անցագիրը ցույց տվի, որի մեջ անունս էր Ստեփան Գրիգորյան: Նաչալնիկը տատանվեց, բայց հայտարարեց, որ հսկողության տակ եմ և հեռացան: Երեք օրից հետո՝ նորից վերադարձան և ինձ ու իրերս կառք դնելով տարին մինչև Ռևելի բանտը:

ԷՍՏՆԱՆ ԴԻԱ

Ես ծանոթացել էի մի քանի լատիշ և լեհ նկարիչ-ուսանողների: Մի լատիշ ինձ առաջարկեց 1897-ի ամառը գնալ Էստլանդիա՝ էտյուդներ անելու: Ես սիրով համաձայնեցի:

Բալթիկ ծովի ափին, անտառների մեջ ծածկված մի երկհարկանի տան ապրում էին ընկերոջս ազգականները, իսկ էստոնացի տան տերը քաշված էր իր գյուղատնտեսական շենքում ապրելու: Այդ շենքից հարյուր քայլ հեռու, անտառում տան տիրոջ բաղնիքն էր, որի կողքի կորրիդորի մեջն էլ ես տեղավորվեցի: Իսկ իմ լատիշ ընկերն իր ազգականների մոտ էր ապրում:

Այդ երկիրը գեղեցիկ էր. ծովը տեղ-տեղ անտառների ու ժայռերի մեջ թափանցելով՝ թերակղզիներ էր կազմում, որոնք ասեղնագործված սփռոցների նման, միջամուխ լինելով ծովի կապույտում, հրապուրիչ տեսք էին ընդունում:

Հուլյն-թրքական պատերազմը սկսված էր: Թիֆլիսից իմ ընկեր Գարեգին Յազճյանից մի նամակով ներփակ ստացա Բուլղարիայի Արմենական վեցերորդ շրջանակի հրապարակած մի պռոտոտախոս պռոկլամացիա: Դրանով հայտարարում էին, թե հուլյները արևմուտքից և հայերն էլ արևելքից խփելով՝ սուլթան Համիդն ու իր ռեժիմը ջարդ ու փշուր պիտի լինեն և այլն: Որովհետև ես Փորթուզալյանի աշակերտն էի, թյուրիմացաբար ենթադրում էին, որ համակիր պիտի լինեմ արմենական քյալագյոզ շարժումներին: Ընդհակառակը, խիստ հանդիմանական մի նամակ գրեցի Թիֆլիս Գարեգինին՝ այդ անմիտ ու ցուցամուլ շարժումների մասին, որքանզեքն ու անկազմակերպ հայ ժողովրդին միմիայն վնասել կարող էին:

Այդ ժամանակ Թիֆլիսում Գարեգին Յազճյանին ժանդարմները ձերբակալում են և իմ «Պզտիկ» ստորագրությամբ նամակս, որի մեջ կար էստլանդիայի հասցես, գտ-

նում են նրա գրպանում: «Պզտիկ» ստորագրությամբ Պոլսո «Հայրենիք» թերթին Աղբակից և Սալմաստից գրածս հոգվածները, կարծում եմ, ժանդարմերիային ծանոթ էին:

Մի գիշեր հանկարծ ժանդարմներով շրջապատվեց բաղնիքը, ուր ես գիշերում էի: Ներս մտան, և ժանդարմերիայի նաչալնիկը հրամայեց, որ ձեռներս վեր բռնելով՝ անկողնից վար իջնեմ: Ես կիսամերկ կանգնեցի հատակի վրա, մինչև որ նրանք անկողինս, պայուսակս ու շենքը խուզարկեցին և իմ քով գտնված բոլոր թղթերը գրավեցին: Հետո ինձ թույլատրեցին հագնվել: Այն ժամանակ նաչալնիկը հարցրեց. «Սա ի՞նչ թղթեր են»: Պատասխանեցի, որ Պզտիկ անունով մի հայրենակից Լոնդոն էր մեկնում, ինձ խնդրեց պահել այդ թղթերի կապոցը՝ մինչև իր վերադարձը: Ես իմ պարսկական անցագիրը ցույց տվի, որի մեջ անունս էր Ստեփան Գրիգորյան: Նաչալնիկը տատանվեց, բայց հայտարարեց, որ հսկողութայն տակ եմ և հեռացան: Երեք օրից հետո՝ նորից վերադարձան և ինձ ու իրերս կառք դնելով տարին մինչև Ռևելի բանտը:

ՌԵՎԵԼԻ ԲԱՆՏԸ

Այդ բանտի միջնադարյան շենքը չափազանց ճնշող և տխուր էր: Նրա կամերաների պատերը առնվազն մեկ և կես մետրի չափ հաստ էին: Պատուհանները թե դրսի և թե ներսի կողմից հաստ երկաթյա վանդակացանցներ ունեին, որոնք կարծես հարմարեցրած էին, որ արդար, բայց իրավագուրկ և հուսահատ բանտարկյալը ինքզինք կախելու փորձեր աներ: Պատուհանից քսան քայլ հոռու մի բարձր պատ էր քաշված՝ դրսի աշխարհի և երկնքի հետ բանտարկյալի տեսողական հարաբերությունները արգելակող:


Կամերայի դուռը ներսից երկաթապատ էր: Դռան մեջտեղ քառակուսի, մի քիչ դուրս ընկած երկաթյա ցանցով տեղ կար, որ դրսից բացվող երկաթյա դռնակ ուներ: Այդ նրա համար էր, որ երեկոները դրսից լամպ դնեին դռան մեջտեղ հաստատված վանդակում: Դա անհրաժեշտ էր նույնպես, որ բանտարկյալն իր ձեռքը չկարողանա դիպցնել լամպին: Հատակին հաստ փայտերով մի թախտ կար հաստատված, որի վրա թալիսի մեջ խոտով լեցված ներքնակն էր փռված, որը ամեն առավոտ դուրս էին տանում, որպեսզի բանտարկյալները ցերեկները չհանգստանան: Ներքնակը ծածկված էր մի շինելի կտորով, որ աղյալի տեղ էր ծառայում: Մի բոլորովին փոքրիկ սեղան հիշեցնող առարկայի վրա դրված էր փայտից շինած կոտ և կողքին՝ մի փայտե գդալ: Բանտարկյալի ցերեկվա սուպը այդ կոտի մեջ էին լցնում, նույնպես առավոտյան և երեկոյան չայը, որ մենք խմում և ուտում էինք սև, մի քիչ թթու գինվորական հացի հետ:

Սուպը պատրաստում էին 120 բանտարկյալի համար 18 ֆունտ ոսկորից, որի մեջ մի քիչ կրուպա էին գցում: Այդ սուպից հավասարապես ուտում էին թե քաղաքական և թե այլ բանտարկյալները:

Ցերեկը բանտարկյալներին բակն էին տանում զբոսան-

քի, իսկ ինձ, մթնելուց հետո, կես ժամով դուրս էին տանում, որպեսզի ոչ ոք չհանդիպի և չխոսի:


Ես խորապես տխուր և հոգեպես անհունորեն տանջվում էի՝ մտածելով՝ մի՞թե այլևս չպիտի կրնամ շարունակել ուսումս: Խնդրեցի, որ ինձ գրքեր տան կարդալու: Միայն Աստվածաշունչ թուլյատրեցին կարդալ: Այդ՝ հակասութուններով լի հրեական պատմության մեջ ամենից ավելի հետաքրքիրը Երգ Երգոցն էր: Խնդրեցի նույնպես, որ իրե-



Ռևելի բանտ. 1897

Ռևելի բանտ. 1897
(Հայաստանի ազգային պատկերասրահ)

ղեններիս մեջ եղած ներկերը ինձ բերեն և թույլատրեն նկարել: Ներկեր չտվին, ասելով, որ կարող ես ինքզինքդ թունավորել նրանցով, բայց տվին թուղթ, մատիտ, չինական մելան և գրիչ: Պահապաններից մեկը ինձ մի կտորված հայելիի կտոր բերեց, որ ձիու դոշից կախվող հմայիլի մեծութուն ուներ: Չախ ձեռքով այդ կտորը դես ու դեն տանելով՝ սկսեցի գլուխս նկարել:



Ինքնադիմանկար, Ռեալի բանտ. 1897
(Հայաստանի ազգային պատկերասրահ)

Բանտարկությունս ինձ խիստ ցավ էր պատճառում, որովհետև ես ոուսաց դեմ չէի մեղանչած: Ժանդարմակի նաչալնիկը ինձ ասաց, որ դու բռնված ես սուլթան Համիդի պահանջով:

Դժվարանում էի բացատրել ոուսաց արտաքին գործոց նախարար Լորանով-Ռոստովսկու այս քծնանքն ու կամակատարությունը հանդեպ սուլթան Համիդին: Գուցե թանձրամիտ Լորանովը ենթադրում էր սուլթանին իրա ազդեցություն ենթարկել՝ կատարելով նրա քմահաճույքները:

Իմ հարցաքննություններից մեկում ես հարց տվի ժանդարմակի նաչալնիկին. «Ձե՞ որ ես ոչ մի հանցանք չունեմ գործած ոուս պետության հանդեպ և նույնիսկ սկսում եմ ըմբռնել, որ թյուրքիայում մեր արած շարժումները ձեզ ավելի ձեռնտու էին, որովհետև առիթ կունենայիք քրիստոնյա հայերի հալածանքների պատճառով միջամտելու թյուրքիո ներքին գործերին և օգտվելու նրանցից»: Նա պատասխանեց. «Քեզ նման մարդիկ, իբր հեղափոխական տարր, վնասակար են, հետո՝ այն երկիրը, որի համար դուք աշխատում էիք, նա արդեն մեր աշխարհագրական քարտեզի մեջ է արձանագրված»:

Շարաթ մի անգամ այդ տեղի երիտասարդ պրոկուրորոր գալիս պտտում էր բանտում: Նրա միջնորդությունը խնդրեցի՝ կարգալու գրքեր ստանալու համար: Նա իր սեփական գրքերից ինձ բերավ մի քանի թարգմանական հատորներ, որոնցից հիշում եմ Բրետ Լարտի մի գեղեցիկ գիրքը Կալիֆորնիայի կյանքից և Շեքսպիրի «Համլետը», որոնք սփոփանք էին պատճառում մտքիս:

Վեց ամիս հետո վճռված էր ինձ տեղափոխել Թիֆլիս՝ լրացուցիչ քննությանց համար: Պետերբուրգի, Մոսկվայի, Ռոստովի և Վլադիկավկազի բանտերն այցելելուց հետո՝ ձմեռային խիստ ցրտին իմ ամառային թեթև հագուստներովս Ռազմավիրական ճանապարհով ժանդարմները բաց տրոյկայով ինձ հասցրին Թիֆլիս: Գիշեր էր: Թիֆլիսի Միքայելյան փողոցում, երբ ժանդարմները վար իջան տրոյկայից և սկսեցին փնտրել ժանդարմերիայի նաչալնիկի տունը, ես, վճռած լինելով փախչել, վար իջա տրոյկայից, բայց,

օ՛ գարմանք, ոչ մի քայլ չկրցի անել, որովհետև ոտներս ցրտից փայտացել էին: Ծնկներիս վրա բարձրացա տրոյկայի մեջ: Հետո ինձ ուրիշ ժանդարմներով ուղարկեցին Մետեխի բանտը:

Վերջը իմացա, որ երբ ես Ռեվելի բանտումն էի, թյուրք պարսկական սահմանի վրա փախստականների մեջ ընդհարումներ պատահած լինելու առթիվ՝ մի քանի զինվոր և սպա սպանված լինելով՝ կասկածել են, որ դա իմ գործն է, հետևապես նորից հրորոգ անգամ ինձ մահվան վճիռ են տվել:

ՄԵՏԵՆ

Այդ պատմական շենքը, որ ուսաները բանտի էին վերածել, մի սքանչելի դիրքով և սիրուն տեսարաններով պալատ էր: Կամերաները, մեծ և սրտաբաց էին. դուրս նայողները հեռավոր և մոտավոր տեսարաններից աչքերով գեղեցկություն էին որսում: Հաջորդ օրը ինձ առաջնորդեցին մի ընդարձակ դահլիճ, որի դուռը քառակուսի ծակ ուներ: Ինձ կանգնեցրին վեց քայլ հեռավորությամբ, երեսս դեպի դուռը, որի ծակից միշտ նոր աչքեր էին երևում: Հետո իմացա, որ բանտում եղած բոլոր ընկերներս հաստատել են, որ ես Փանոս Թերլեմեզյանն եմ: Ուրեմն՝ Ռեվելում իմ տված հարցաքննություններիս համաձայն, որ իբր թե Պզտիկ անունով մի հայրենակից, իր թղթերի կապոցը ինձ մոտ ձգելով, Լոնդոն էր մեկնել և կեղծած գրություններս ու բոլոր այդ ստերը հրապարակ ելան, որոնք ինձ ճնշում էին ամոթալից հուզմունքի ծանր բեռի տակ: Այնուամենայնիվ Ռեվելում տվածս հարցաքննությունները նույնությամբ կրկնեցի:

Առաջին անգամ Մետեխում ինձ բանտարկյալի հագուստ հագցրին:

Մի առավոտ, երբ պետքարան էի առաջնորդվում, մյուս կորպուսից մի ոչ քաղաքական բանտարկյալ, որ ավլում էր այդ տեղերը, աննշմարելի կերպով մի թղթի կտոր խոթեց ձեռքս ու հեռացավ: Թղթի վրա գրված էր, թե իմ [կողքի] երկու կամերաներում ովքեր էին ապրում և դիմացիներում՝ ովքեր: Պետք էր պատ ծեծելով խոսել նրանց հետ:

Մետեխում ոչ մի գիրք չտվին կարդալու: Պատեր ծեծելով իրար հետ կցկտուր խոսակցել մի զբաղմունք եղավ:

Վերջապես, յոթ ամիս էլ Մետեխում մնալուց հետո ճամփա հանեցին մեզ, իրար հետ շղթայած, այսինքն՝ էտապով: Ծանապարհին մեր շղթային կապված մի մարդ հիվանդ լինելով՝ չէր կարող լավ քայլել, երբ պահապան զինվորը հրացանի կոթով այնպես խփեց նրա մեջքին, որ նա ընկավ այլևս

ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԸ

Մեզ պիտի արտաքսեին Պարսկաստան՝ իբրև պարսկահպատակներ: Այն տարիներին երկաթուղի չկար, իսկ ամառը էտապով չէին ուղարկում, որովհետև իրար շղթայված մարդիկ արևահար ընկնում էին: Ուրեմն պիտի մնացինք Երևանի բանտում մինչև աշնան ամիսներին: Բանտապետը մի թաթար խան էր՝ կատարելապես վայրենի, անխիղճ, անբարոյական: Իբրև քաղաքական հանցավոր՝ մենք երկուքս բանտարկված էինք մի առանձին կամերայում: Բանտում կարգ-կանոն չկար: Այն կես ժամը, որ բակում մեզ պտույտի էին հանում, միշտ կարողանում էինք տեղեկանալ ուրիշ բանտարկյալներից գիշերային ձեռքերի և լացերի մասին:

Մի օր, երբ պրոկուրորը քննության էր եկած, բանտապետի ներկայության պատմեցի այդ ձեռքերի և անբարոյական արարքների մասին, որոնք ես լսել էի վստահության արժանի բանտարկյալներից: Պրոկուրորը ուշի ուշով լսում էր, բայց բանտապետը չկարողացավ ինքզինք զսպել և սկսեց հայհոյել և սպառնալ ինձ: Պրոկուրորը հրամայեց մեր խուցի դուռը փակել ու հավանաբար բանտապետի սանձը քաշեց, որովհետև դրանից հետո գիշերները շատ քիչ էին լավում ձեռի և լացի ձայներ:

Ինձանից խանն իր վրեժը ուրիշ կերպով առավ, որի մասին հետո:

Իմ հագուստներն այնչափ մաշված ու պատառոտված էին, որ կարելի էր ասել, կիսամերկ էի: Բրյուկիս ու ճեմակեղենիս ճեղքվածքներից տեղ-տեղ մարմինս երևում էր:

Ընկերոջս հորեղբոր տղան մեզ օգնելու տրամադրություն էր ցույց տալիս: Նրան լուր ուղարկեցի, որ գտնի իմ իրեղեններս ու նրանց մեջ եղած նոր բրյուկը ինձ ուղարկի: Հաջորդ օրը նա ինձ ուղարկեց բոլորովին հին և նեղ բրյուկ, որ հագնելուս պես երեք տեղից ճեղքվածքներ տվեց:

Հետագային, երբ ես Պարսկաստանից վերադարձա, տեսա, որ մեզ այդ օգնող պարոնը հագած էր իմ նոր բրյուկը:

Վրաս կապույտ սատինե պլաշ ունեի, որի փեշերից կտրտելով սկսեցի կարկատել նոր ստացածս բրյուկը, այնպես որ մի փոքր ժամանակ հետո պլուզիս մեջքիս վեր մասը միայն մնաց:

**ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՍ ԵՐԵՎԱՆԻ
ԲԱՆՏՈՒՄ**

Այդ ժամանակները ես հիվանդացա, և ինձ փոխադրեցին բանտի հիվանդանոցը, ուր ծառայողները բանտարկյալներ էին: Այդ հիվանդանոցում, օրը մի փոքր բաժակ կաթ էին տալիս յուրաքանչյուր հիվանդին, բայց բանտարկյալ ծառայողները այդ կաթը խմում էին և բաժակի մեջ ջուր էին լցնում, որ մի քիչ պղտոր կաթնագուլյն էր դառնում և բաժակը դնում էին հիվանդի գլխի մոտ: Ես տեսնում էի, թե ինչպես կողքիս պառկած հիվանդները, որոնք մեռնում էին, նրանց մի ոտից բռնած վար էին քաշում գրմփալեն հատակի վրա ու այդպես քաշեքաշ դուրս էին տանում թաղելու:

Դիպենտերի ունեի, տասնվեցերորդ օրը կատարելապես ուժասպառ և գրեթե անզգայացած աչքերս փակ պառկել էի, երբ բանտի բժիշկը եկավ, գարկերակս քննելով՝ ասաց, որ սրա գործը վերջացած է: Ուշքս վրաս էր: Ափսոսում էի, որ մահանալուս լուրն էլ չպիտի առնեն բարեկամներս: Այդ գրեթե անզգա դրուժյանս մեջ մտածում էի չմեռնել: Հանդգնեցի աչքերս բանալ ու նայել շուրջս: Ծիշտ գլխիս մոտ հաց տեսա: Կատարելապես թույլ լինելով՝ մեծ դժվարությամբ ձեռքս մոտեցրի հացին և մի փշուր նրա միջուկից պոկելով՝ դրի բերանս, շարունակ կրկնելով այն միտքը, թե չպիտի մեռնեմ: Ուշագնաց էի, քիչ հետո, երբ ուշքս վրաս եկավ, բացի աչքերս և տեսա, որ բերանս դրած հացի կտորը ընկած էր կզակիս մոտ և շուրթերս շարունակում էին մրմնջալ, թե չպիտի մեռնեմ: Նորից այդ հացի փշրանքը բերանս խոթեցի և ահռելի դժվարությամբ ծամելով՝ կլլեցի: Քիչ հետո ուրիշ մի փոքրիկ կտոր ուժասպառ ստամոքսիս ուղարկեցի, վրան էլ մի քառորդ բաժակ կաթնաջուր:

Հանձին բժշկի գիտությունը կարծեմ թե սխալվեց, զի ես տակավին ապրում եմ:

Աչնան ամիսներին հազիվ մի քիչ կազդուրվեցի: Մեր երկուքիս ունեցած փողերը Գարեգնի մոտ էին, բայց նրան արդեն ուղարկել էին Պարսկաստան:

Հասավ այն օրը, որ ինձ պիտի ուղարկեին: Բանտի բժիշկը գրուժյուն էր թողել, որ ինձ հտապի վրա եղած սայլի վրա միայն կարող են տանել, բայց բանտապետը ասաց, որ բժշկի գրուժյուն չկա մեջտեղը, ուրեմն իմ ձեռքը հտապի շղթային կապել տվեց և մյուսների հետ ոտքով ճամփա հանեց: Ահա թե բանտապետը իր վրեժը ինչպես լուծեց:

Այդ օրը մենք տասներկու վերստ ճամփա քալեցինք: Ունեքս մինչև ճանները խրվում էին փոշիի մեջ և առջևիս ընկերոջ, որ ինձանից կես արշինից պակաս հեռավորություն ուներ, չէի տեսներ՝ գետնից բարձրացած փոշիի պատճառով: Երբ մեր հանգստյան վայրը հասանք, անմիջապես գլորվեցի գետին մինչև պորտս հասնող մորուքովս և տեսա, որ շուրթերիս եզերքները կես մատի հաստություն փոշիից հաստատուն թուժբեր էին կազմվել: Բայց այնուամենայնիվ՝ կարծես՝ դոսի օդից ավելի աշխուժացել էի:

Վերջապես հասանք Նախիջևան: Այնտեղ վերադարձրին Ռեվելում ինձնից վերցրած վեց ուռբլին: Հինգնոց ոսկին ես կարեցի ճերմակեղենիս հարյուրավոր կարկատաններից մեկի մեջ: Վերադարձրին նույնպես իմ վերմակը և պալտոն, որովհետև այլևս հտապով չէր, որ պիտի գնայինք, հետևապես սայլ չպիտի լիներ:

Ես չափազանց թույլ էի, բայց ստիպված հագա պալտոս և շալակեցի վերմակս ու ստրաժնիկների ձիերի առջևն ընկած՝ մյուս բանտարկյալների հետ քալեցի մինչև Զուլֆա:

ԲՈՍՖՈՐ

Երկրորդ օրն էր, երբ արչալուսին կամրջակի վրա բարձրացա, արդեն փոթորիկն անցել էր և խաղաղ ծովի կապույտ ջրերը արևի առաջին ժպտուն ճառագայթներից շոյվում էին: Մեր նավը մտավ Բոսֆորի նեղուցը: Գավակները անցնելուց հետո՝ ձախ թևի վրա եղած բերդերը իրենց թնդանոթներով վախ էին ազդում, որոնց վրա բարձրանում էր Ուշադիդի՝ առասպելական ավանդույթուններով պարուկված լեռը: Անշարժ ջրերի վրայից նավն առաջանում էր հանդարտորեն՝ պատեհություն տալով իր կամրջակի վրա հավաքված մարդոց հիանալու Բոսֆորի գանազանակերպ և աննման գեղեցկություններով: Աջ կողմ ճոճ ջրերի անտառակն էր, հետո Բեյուք դերեի գորշ դեղնագույն պալատները՝ ցողաթարմ կանաչների մեջ ցանցված, որոնք վայրի կապույտ ջրերի հետ ակնապարար ներդաշնակություն էին կազմում: Ձախ կողմը՝ Ասիական ափը՝ Բեյքոզի պալատը և Աբրահամ փաշայի անտառները ու ուրիշ հնամենի գյուղեր: Հետզհետե նավը նագանքով մոտենում էր Բոսֆորի ամենանեղ տեղին՝ Անատոլի Հիսարին: Այդ տեղիցն էր, որ Մուհամեդ 2-րդ 1452 թ. անցավ Եվրոպական ափ և անմիջապես եզերքի բարձրությունների վրա սկսեց շինել նշանավոր բերդեր՝ Մուհամեդ բառի արաբական տառերի գծագրությունը հատակագիծ ընդունելով և օրական բանեցնելով 4000 բանվոր: Երեք ամսվա մեջ վերջացրեց այդ ամուր բազան ու հետո հարձակվելով գրավեց բյուզանդական մայրաքաղաք Կ. Պոլիսը:

1900-ական թվականներին հիշյալ բերդերը հնագիտական գեղեցկություններ էին միայն, իսկ նրանց իբրև բարձունքի վրա հոյակապորեն բարձրանում էր մշակույթի վառ օջախ Ամերիկյան Ռոբերտ քոլեջը, որը զանազան ժողովուրդների զավակներից հազարավոր գիտակից կադրեր պատրաստեց:

Անցանք երկնագույն ջրերի և Բեյլար-բեյի պալատները, մոտեցանք տաղանդավոր Բալյան ճարտարապետի շինած սքանչելի Ջրաղանի պալատին, որ այրված էր՝ երեսուն հատ Այվազովսկիի նկարներով միասին: Անցանք նույնպես սուլթանի բնակած Դոլմա-բաղչի պալատի առջևից, որ մյուս պալատների նման՝ շինված էր ժողովրդների արյունով ու քրտինքով և որոնց մեջ մարդկային ազատություն ու մտածելու ատակ հոգիները գազանային խրախճանքով բզկտվում էին:

Մեր նավը կանգ առավ Ղալաթիո մոտ, որի վրայից շրջապատի տեսարանները առանձնապես գեղեցիկ էին իրենց ինքնատիպությունով: Պոլսո մասին հետագային առիթ պիտի ունենամ խոսելու:

Նավը իր պակասորդները լցրեց ու շուռ եկավ դեպի Հարավ՝ ձախ կողմ թողնելով Բրգ-գուլիսին, Իսկուդարի բարձունքները և Գաղբ-գյուղը. աջ կողմից քերելով Թոփ-Գափու սարայը, որի մեջն էր պահվում Մուհամեդի մորուքի մի մասը, նավն անցավ Մարմարա ծովը՝ ձախ կողմ թողնելով Իշխանաց և մյուս կղզիները և ուղղվեց դեպի արևմուտք: Գիշերով անցանք Դարդանել, մյուս օրը Միջերկրականի մութ կապույտ ջրերում էինք լողում, ուր ցրված էին հունական կղզիները:

Բնակարանավոր՝ Մոլոյի
 ԲԵՐ՝ ցղայմանի
 Միլաբրա (մատույն)
 (նաղապարակ)

ՄԵՍԻՆԱ

Մի գիշեր մտանք Մեսինայի նեղուցը, ուր հրաշալի տեսարանի հանդիպեցինք՝ էտնա լեռան գագաթից ժայթքող բոցերը և բաց նարնջագույն լավան հոսում էր դեպի վար՝ ոչնչացնելով անտառներ, գյուղեր և ամեն տեսակ կենդանություն իր ճանապարհի վրա:

Անցանք Միջերկրականի արևմտյան մասը, աջ թևի վրա թողինք գեղեցիկ Ստրոմբոլի կղզին, որ մշտապես ծխում էր, նույնպես հետևե թողինք Կորսիկան ու հասանք Մարսել, որ հանգուցային դուռն էր արևելյան ճանապարհներին:

Այնտեղ գտա Մկրտիչ Փորթուգալյանին, որ տակավին հրատարակում էր իր խեղճուկ «Արմենիա» լրագիրը՝ վերին աստիճան ազդատու թղթի մեջ: Իր տպարանի աշխատողներն էին ինքն ու իր աղջիկները:



Մկրտիչ Փորթուգալյանի դիմանկարը. 1914 (Հայաստանի ազգային պատկերասրահ)

ՓԱՐԻՉ

Վերջապես հասա Փարիզ, այդ ավանդական հեղափոխությանց օրրանը, կուլտուրայի կենտրոնը և «քաղաքակրթության սիրտը»:

Այնտեղ ծանոթացա հայ նկարիչ ուսանողների, որոնք ինձ նման լեզու չգիտցող մի անծանոթ գավառացու սիրալիկ օգնություն ցույց տվին: Նրանք ընկերացան ինձ՝ այցելելու մյուզեոններ, թատրոններ և ուրիշ շատ կուլտուրական վայրեր, որոնց ուժեղ տպավորությունները հեղեղի պես խուժում իմ՝ համարյա թե կուսական ուղեղումս և զայն գերում էին:

ԱԿԱԴԵՄԻ ԺՅՈՒԼԻԱՆ


Մի փոքր ժամանակ Լուվրի մյուզեոնում արձաններից նկարելուց հետո՝ Տիգրան Եսայանի հետ գնացի Ակադեմի ժյուրիան, որպեսզի ընդունվեն իբրև ուսանող: Այնտեղ բացատրեցին, որ օրական երկու սեանս կարելի է աշխատել՝ չորս ժամ առավոտ, չորս ժամ ճաշից հետո և երկու սեանսի համար կրկնակի պետք է վճարել: Տիգրանը, որ թարգմանում և բացատրում էր ինձ, ստիպում էր, որ միայն մեկ սեանսի համար պետք է իրավունք վերցնել, որովհետև երկու սեանս անհնարին է աշխատել: Ես իհարկե երկու սեանսի համար արտոնություն առի:

Այս և ուրիշ դեպքեր ինձ համոզեցին, որ պոլսեցի ուսանողների մեծ մասը համառ և հարատև աշխատանքի ընդունակ չեն. ավելի սիրում են թեթև և զվարճալի աշխատանք:

Բացի ժյուրիանի ակադեմիից, երեկոները ես գնում էի Քալարոսի ակադեմիին, երկու ժամ էլ այնտեղ էի աշխատում և նրանից հետո էլ գիշերային դպրոց էի գնում Ֆրանսերենի դասի համար: Վերջը չափազանց հոգնած և թուլացած՝ յոթերորդ հարկի փոքրիկ խցիկս էի բարձրանում ու միակ ու պատվական սնունդս՝ հաց, պանիր, թեյ վայելելու ժամանակ՝ աչքերս խփվում էին ու հաճախ առանց հանվելու անկողնիս վրա գլորվելս ու քնանալս մեկ էր լինում:

Ակադեմիում նոր ընդունվողները մյուս աշակերտներից ամեն տեսակ կատակի ու ծաղրի առարկա էին, և նորեկը գրեթե չէր կարող աշխատել, մինչև որ բոլորին անխտիր չհյուրասիրեր: Հյուրասիրելուց հետո միայն ուսանողական կոլեկտիվի իրական անդամ էր դառնում:

Երբ ես ակադեմի ընդունվեցի, ամառ էր. ուսանողների մեծագույն մասը ցրված էին գյուղերը կամ ծովեզերքները՝ բացօթյա աշխատանքի համար: Մեր պրոֆեսորները՝ Ժան-Պոլ Լորանս և Բենժամեն Կոնստանը, նույնպես ամառները բացակայում էին, և այդ ամիսներին նրանց փոխարինում էր




Փանոս Թերլեմեզյանը Փարիզի ժյուրիան ակադեմիայի արվեստանոցում

Ձախից երկրորդը թիկունքով նստածը, Փանոս Թերլեմեզյանն է (Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

մի ուրիշ վարպետ նկարիչ: Իսկ ուսանողներից տասնմեկ հոգի էին մնացել, ուրեմն իմ արած հյուրասիրությունս շատ թեթև անցավ:

Ակադեմիից մի վկայական առնելով՝ ուղարկեցի հայոց կաթողիկոս Խրիմյանին՝ հիշեցնելով նրան Թիֆլիսում իր արած խոստումը: Շուտով պատասխան ստացա, որ ամսական հիսուն ռուբլի թոշակ է հատկացված ինձ ուսանողությանս ընթացքին: Շատ խոր ուրախություն զգացի, որ միջոց ունեցա ուսումս շարունակելու:



ՄԻ ՊԱՏԱՆԻ ՆԿԱՐԻՉ

Այդ օրեր ակադեմի բերին 14-15 տարու շեկավուն մի ֆրանսիացի տղա, որ իր եռոտանին իմ կողքին դրավ և սկսեց աշխատել: Նա այնպես լավ էր գծում, այնպես գիտակ էր գեղարվեստից պատմություն, այնպես լավ էր երգում բոլոր մեծագույն կոմպոզիտորների գործերը և այնչափ բարի, կիրթ ու ազնիվ էր, որ ինձ մտածել էր տալիս, թե հավանաբար նա իր մոր կաթի հետն էր ծծել այդ խոշոր կուլտուրան, որովհետև իր տարիքի համաձայն՝ դժվար թե ժամանակ ունենար այդքան բան սովորելու: Ամեն ըոպսին նրան տեսնելիս՝ հուսահատ կերպով ինքնիրանս հարց էի տալիս. «Մի՞թե հնարավոր է, որ երբևիցե այս տղայի պես կարողանամ նկարել, նրա պես կարողանամ ըմբռնել արվեստի խնդիրները»: Հոգիս մրմռում էր իմ չափազանց հետամնացություն և սոցիալական համար: Ակամա հիշում էի մեր հնագույն ժողովրդական բանաստեղծությունից այն տենչանք արտահայտող նախադասությունը. «Մ՛ տայր ինձ գծուխն ծխանի և զառավոտն նավասարդի...»:

Աշուն էր: Ուսանողներն և պրոֆեսորները վերադարձել էին: Նորմալ աշխատանքն սկսվել էր: Գրեթե բոլոր ժողովուրդների ծաղիկ երիտասարդությունից նմուշներ կային այդ ծաղկաստան ակադեմիում: Մեծամասնությունը հյուսիսային ամերիկացիներ էին: Ֆրանսիայից գեղարվեստի բարձրագույն ակադեմիան աշխատողները և կազմակերպված նկարիչներն էին այդտեղ գալիս վարժությունների: Կային ինադադականի Փիլիպյան կղզիներից, Չինաստանից ծանրաբարո և արիստոկրատ ուսանողներ, ճարպիկ ու աշխատասեր ճապոնացիներ, պորթուգալցիներ, սպանիացիներ, իտալացիներ, լեհեր, գերմանացիներ, անգլիացիներ, ռուսներ, թյուրքեր և այլն:

Այդ ակադեմիան միջազգայնական մի կենտրոն էր, ինչպես Փարիզն է:

Պրոֆեսորներից ամեն մեկն հերթով մի շաբաթ գալիս էր ակադեմի՝ տեսնելու ու ցուցմունքներ տալու ուսանողներին: Շաբաթվան մեջ միայն երկու անգամ էր գալիս՝ չորեքշաբթի և շաբաթ օրերը: Յուրաքանչյուր շաբթու պրոֆեսորը մի նյութ էր տալիս, գլխավորապես հին հունական դիցաբանությունից, որ ուսանողները այդ թեմայով էսքիզ նկարեն և շաբաթ օրը ներկայացնեն ի քննություն:

Առաջին անգամ Բենժամեն Կոնստանն եկավ: Այդ՝ անգլիական թագուհու, պապերի և աֆրիկյան շարիֆաների նկարիչը, այդ մեծ քննադատ և օրատորը, որ բեղերն ածիլած ակնոցավոր և սիրուն պառավի դեմք ուներ, ի միջիայլոց մոտեցավ ինձ, նայեց նկարիս, հետո դարձավ, ինձ նայեց և հարցրեց. «Դուք պարսիկ եք»: Ես պատասխանեցի. «Ոչ, ես հայ եմ»: Նա ասաց. «Միևնույն բանն է»: Հետո պատվիրեց՝ մարմնո զանազան մասեր միայն նկարել և որ թե ամբողջ մարմինը և ավելացրեց. «Անհանգիստ մի՛ լինիր, գալու է»:

Երբ պրոֆեսորը հեռացավ, ես ուշի ուշով դիտեցի իմ ու ընկերներիս նկարները և եկա այն եզրակացություն, որ նկարել չգիտեմ: Այդ գիտակցությունը ձգտում ու մի քիչ կամք ունեցող մարդու համար առաջ մղող ուժ էր, որ պարտադրում էր՝ նախ գծագրել իմանալու անհրաժեշտությունը:

Այդ ակադեմիան միջազգայնական մի կենտրոն էր, ինչպես Փարիզն է: Պրոֆեսորներից ամեն մեկն հերթով մի շաբաթ գալիս էր ակադեմի՝ տեսնելու ու ցուցմունքներ տալու ուսանողներին: Շաբաթվան մեջ միայն երկու անգամ էր գալիս՝ չորեքշաբթի և շաբաթ օրերը: Յուրաքանչյուր շաբթու պրոֆեսորը մի նյութ էր տալիս, գլխավորապես հին հունական դիցաբանությունից, որ ուսանողները այդ թեմայով էսքիզ նկարեն և շաբաթ օրը ներկայացնեն ի քննություն: Առաջին անգամ Բենժամեն Կոնստանն եկավ: Այդ՝ անգլիական թագուհու, պապերի և աֆրիկյան շարիֆաների նկարիչը, այդ մեծ քննադատ և օրատորը, որ բեղերն ածիլած ակնոցավոր և սիրուն պառավի դեմք ուներ, ի միջիայլոց մոտեցավ ինձ, նայեց նկարիս, հետո դարձավ, ինձ նայեց և հարցրեց. «Դուք պարսիկ եք»: Ես պատասխանեցի. «Ոչ, ես հայ եմ»: Նա ասաց. «Միևնույն բանն է»: Հետո պատվիրեց՝ մարմնո զանազան մասեր միայն նկարել և որ թե ամբողջ մարմինը և ավելացրեց. «Անհանգիստ մի՛ լինիր, գալու է»:


Երբ պրոֆեսորը հեռացավ, ես ուշի ուշով դիտեցի իմ ու ընկերներիս նկարները և եկա այն եզրակացություն, որ նկարել չգիտեմ: Այդ գիտակցությունը ձգտում ու մի քիչ կամք ունեցող մարդու համար առաջ մղող ուժ էր, որ պարտադրում էր՝ նախ գծագրել իմանալու անհրաժեշտությունը:

ԻՄ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ՊՐԻՆ

Այն երկու տարին, որ ես Պետերբուրգում սովորել էի, բավարար չէր մի նկարչական գործ կառուցելու կամ համեմատութեանց ու տարածութեաններին ներդաշնակութեանը գտնելու համար: Սկսեցի ութ ամիս օրական ութ ժամ համառորեն միայն ածուխով նկարել, մինչև որ երկու պրի (մրցանակ) ստացա՝ գծագրելու համար:

Առաջին գծագրութեան պրին հետևյալ կերպով պատահեց: Ես ընտրած էի մոդելին մոտիկ բոլորովին դժվար մի տեղ, շատ ցած տաբուրետկայի վրա նստած՝ նկարում էի: Մոդելը կանգնած էր մոտ յոթանասուներեք բարձրութեան մի թախտի վրա, այնպես որ այդ բարեկազմ և սև մորուքով իտալացու մի ոտքը իմ աչքին շատ էր մոտ. այդպիսով խիստ ռակուրսի դիրքի մեջ վարից վեր էի նայում:

Շաբաթ օր էր: Պրոֆեսոր Ժան-Պոլ Լորանսը երևաց: Նա բարեխիղճ կերպով յուրաքանչյուր ուսանողի տեղը նստելով՝ ուսումնասիրում էր, հետո իր դիտողութեաններն անում: Երբ ինձ մոտեցավ, դժվարութեամբ տեղավորվեց իմ ցած և փոքր տեղս, երկար նայեց նկարին ու մոդելին, ու հետո ինձ դառնալով՝ ասաց. «Լավ է»: Ես ցույց տվի ծունկներից և ուսերից վար սահող լույսերը և ասի, որ, հակառակ չարչարվելուս, չկարողացա հասնել կատարելության: Նա նորից նայեց ու կրկնեց, որ հաջող է: Հետո ինձ դառնալով ասաց, որ կատարելությունը սահման չունի, արվեստը մի սանդուխ է, որի վարի ոտները դրված է գետնի վրա, իսկ վերի ծայրը կորչում է եթերի մեջ, նրա մատների վրա տեղավորված են զանազան մարդիկ, մի մատ վեր, մի մատ վար, այսքան: Նա բարձրացավ տեղից և հրամայեց պաշտոնյային, որ կնքի նկարս՝ մրցութեանց դրվելու համար: Ահա այդ նկարով ես ստացա գծագրության իմ առաջին պրին:



Ակադեմիայի պրոֆեսոր Ժան-Պոլ Լորանսի լուսանկարը՝ Փանոս Թերլեմեջյանին ուղղված ընծայագրով՝ «Իմ աշակերտ Փանոս Թերլեմեջյանին իր ծեր ուսուցչից»: (Փանոս Թերլեմեջյանի հավաքածու)

Իմ հիշողությունների մեջ առիթը ներկայանալիս շատ համառոտ կերպով պիտի խոսվի արվեստի բազմազան խնդիրների մասին: Հետևյալ հատվածը դրանցից մեկն է:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՏԱՐԲԵՐ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐ

Արվեստի գործը կերտելու համար մարդիկ գլխավորապես երկու տեսակ մոտեցում ունեն: Առաջին՝ այդ խնդրին բոլորովին լուրջ մոտեցողներ նրանք կարող են լինել, որոնք օժտված են խոր դիտողական և զգացողական կարողություններ, որոնք ըմբռնում են իրենց ուշադրության առարկա եղած մարդկանց ու բնության երևույթների բազմակողմանի ձևերն ու բնույթը և անկեղծորեն ճշնում են ազնիվ խնդրավառությամբ զայն ներկայացնել առանց հավակնությունների՝ շեշտելով նրանց առանձնահատուկ կողմերը:

Երկրորդ՝ ավելի մեծ թվով մարդիկ էլ կան, որոնց համար դժվար է արվեստի խնդիրներում լրջորեն խորանալ, ուրեմն ինչ որ իրենց ուսուցիչներից լսել կամ կարդացել են, առանց այդ մտքերը տրորելով մարսելու՝ ստացական ու պատրաստի ֆորմուլաներով են առաջնորդվում: Ապահովաբար այս վերջինները թյուրիմացության մեջ են: Ձի արվեստի գործը նախ և առաջ՝ զգայական հույզանքի արտահայտություն է, և նա նախապես ստանդարտ միօրինականցման չի կարող ենթարկվել:

Ամենից առաջ անհրաժեշտ է, որ նկարիչը ուժգնորեն սիրի բնությունը, որից իր աչքերում լեցված գեղեցկությունները իր հոգու քուրայում հուզականության կրակի մեջ զտելով՝ պիտի տա իր երկի հիմնական բնույթը, նրա խառակտերը, նրա հարաբերական մասերի անսամբլը և նրա տիրապետող գաղափարը:

Թեև նկարչությունն ու քանդակագործությունը նմանողական արվեստներ են, բայց այդ չի նշանակում, որ նրանց նպատակն է լուրջ արտաքին նմանողություն տալ, բնավ երբեք, այլ նրանց նպատակն է՝ բնությունը բանաստեղծորեն բացատրել:

Ստեղծագործող արվեստագետը մշակման է ենթարկում իր երկը, մի տեղ ավելորդություններ գեղջում կամ ստվերի մեջ թողնում, իսկ մյուս տեղ, առանձնահատուկ մասերը շեշտելով, ցայտուն է դարձնում: Եթե նրա մտածողության, չափի և ներդաշնակության զգացումը պակաս է, նա դիսոնանս է առաջացնում իր ստեղծագործության մեջ այնպես, ինչպես օրկեստրի մեջ անհասկացողությամբ նվագողը:

Մի որևիցե նյութ վերարտադրելիս՝ նրա միմյանց հետ կապակցված մասերի ամբողջականության ներդաշնակ գյուտը և շատ մտածված ու ճաշակավոր դասավորությունը ապացույց են իսկական արվեստագետի ներկայության, որովհետև միայն լավ կատարող լինելը քիչ է:

«Իրերի և էականների ոգին», նրանց շարժումները, նրանց կենսունակությունը և նրանց գեղեցկությունները որսալու համար՝ շատ ու շատ տանջալից ու հարատև աշխատանքից ի գատ՝ պետք է որ ստեղծագործողը օր ու գիշեր և նույնիսկ երազի մեջ հետամտի իր շինարար մտքերին, մինչև որ հաջողացնի հարկադրել նրանց հպատակվելու իրեն:

Ավելի պարզորոշ խոսելով՝ նախ նկարիչը պիտի զգա, որ մարմնի յուրաքանչյուր մասի ստվերը, կիսաստվերը և լուսավոր մասերը շրջապատից բազմաթիվ թեթև, ուժեղ և զանազանագույն ցուլացումների են ենթակա և պիտի զգա, թե որտեղ պիտի շեշտի մթույթները և որտեղ մի քիչ ավելի ծոփ կոնտուրը, որ իր մտքերը ցայտուն կերպով արտահայտվեն: Հետևապես արվեստագետի որոնող ու տանջվող հոգին պիտի գտնի և տա պայծառորեն այդ նուրբ տարբերությունները, որպեսզի կատարված գործը ոչ միայն տպավորիչ լինի, այլև գերի դիտողի հոգին՝ ամեն տեսակետից ներդաշնակություն երգող իր ստեղծագործությունով:

Նշված պայմաններից ի գատ՝ կա և մի ուրիշ հանգամանք. դա այն է, որ օժտված մարդոց մոտ պատահում են երբեմն ենթագիտակցական հղացումների մոմենտներ, երբ հավաքված տարտամ մտքերը դուրս են պոռթկում ստեղծագործվելու ձգտումով: Բայց երբ արվեստագետը գործի է անցնում և սկսում է իր մտքերը մշակել և իր աշխարհայացքից բխող վերաբերմունքը ցույց տալ, հետզհետե նախնա-

կան տարտամ մտքերը կոնկրետանում են ու երբեմն անսպասելի կերպով լավագույն գործեր են ստեղծվում:

Վերոհիշյալ մեր համեստ կարծիքներից հետո՝ նորից բուն նյութին դառնալով՝ տանք արվեստի գործին երկրորդ տեսակ մոտեցողներից մի անհատի գործնական օրինակը, որ ավելի հասկանալի է դարձնում խնդիրը:

Ակադեմիում իմ կողքին կանգնած աշխատում էր մի գնդապետ, որ բարձր կրթություն ուներ և կարգացած մարդ էր, բայց տեսական հաշիվներով էր առաջնորդվում՝ ստեղծագործելու համար: Նա նախ իր պալիտրի վրա առաջուց պատրաստում էր մարմնի ստվերների, կիսաստվերների և լույսերի համար գույներ ու զինվորական խառնվածքով կազմ ու պատրաստ՝ սպասում էր մոդելի երևալուն: Նախորդ օրը նա արդեն կոնտուրը գծած էր, ուրեմն կմնար այդ պալիտրի վրայի նախապես պատրաստված մտացածին ներկերով ծածկել մարմինը:

Մի անգամ, երբ սրամիտ պրոֆեսոր Բենժամեն Կոնստանը մոտեցավ գնդապետին, չարաճճի ուսանողները հավաքվեցին լսելու պրոֆեսորի դիտողությունները: Բենժամեն նախ նկարը համեմատեց մոդելի հետ, հետո անհանգիստ իր կանգնած տեղում՝ դարձավ դեպի գնդապետը ու մի վայրկյան լուռ նայելուց հետո, պերճախոս հուետորի առողանությամբ՝ մոդելի ուսերը ցույց տալով, ասաց. «Այն բիրտ ուրբենայան ուսերը, որոնց վրա ցոլանում է երկնքի կապտագույն լույսը, դուք ինչի՞ եք վերածել: Բոլորովին օտար և կեղտոտ ներկերով եք ծածկել այն նուրբ ու վարդագույն մարմինը, որի ստվերները թափանցիկ և գունագեղ են: Մոդելի փոքր երկարավուն ոտներն էլ փղի ոտներ եք շինել: Հավատացեք, պարոն, մի օժտված երեխա ձեռք ժամանակ ձյունի վրա միգելիս ձեզանից ավելի մտածված և լավ է նկարում»:

Պրոֆեսորի հեռանալուց հետո էլ ուսանողները ծիծաղում էին, բայց շատ կարգացած գնդապետը, որ ջերմ խանդավառության փոխարեն ձգտում էր միայն մեխանիկական ստանդարտ ձևերով աշխատել, քրտինքի մեջ էր: Նա չէր ստեղծագործում, այլ արհեստագործում էր:

Այս օրինակը մեզ թելադրում է նկատի ունենալ, որ արվեստի ասպարեզում գիտությունը, հաշիվը և սովորությունները բավական չեն գեղարվեստական երկ արտադրելու, այլ դրա համար անհրաժեշտ է նույնպես հուզականություն, խանդավառություն և կիրք:

Պետք է որ արվեստագետը չտրվի ուրիշներին նմանվելու կամ ինքն իրեն կրկնելու հիվանդության, այլ միշտ իր աչքերը հռոած պիտի մնան դեպի բնությունը և դեպի կենդանի ապրված կենցաղը, որի մեջ եղած վշտի, ուրախության, հերոսականության ու այլ մոմոնտները պիտի ներկայացնի պարզությամբ, ուժգնությամբ, հուզականությամբ: Այդ ամենը նա պիտի կատարի բարեխղճորեն՝ իր բոլոր հնարավոր կարողությունները ի գործ դնելով և չըջապատի իրականության մեկնաբանումով:

Պետք է, որ արվեստագետը համոզված լինի, թե արվեստի գործի մեջ մի կաթիլ հուզականությունը անհամեմատ ավելի արժե, քան մի շարք սիստեմներ և մանեվրներ միասին առած:

Այս ստալինյան վեհապանծ դարաշրջանի ոգով զինված արվեստագետը պետք է որ կրքոտությամբ ճզնի գեղարվեստական ապրող գործեր տալ միլիոններին, որոնք ծարավի են ճշմարտին, ազնվին և գեղեցկին:

ԻՄ ՓԱՐԻԶՅԱՆ ԿԵՆՑԱՂԸ

Վանի կենտրոնական դպրոցում իմ սովորած ֆրանսերենը խղճով բան էր: Միայն այս վերջին տարին Փարիզում քիչ-միչ կարդալ, հասկանալ ու հասկացնելու չափ առաջացա: Հետևապես սկսեցի լսել Լուվրի հնագիտական դպրոցի դասախոսությունները: Նույնպես գեղարվեստից ակադեմիի պատմություն, անատոմիայի և կերպարվեստի դասերին էլ հաճախում էի, երբ հնարավոր էր լինում ժամանակ գողանալ իմ չափազանց զբաղմանց մեջ:

Այսպես ժրաջան և հեզիկ կերպով առաջ էր գնում ուսանելս: Զմեռային կիրակի օրերը մեկ-մեկ կոնսեր Ամուրոն էի գնում, կամ թատրոններ, իսկ ամառային կիրակիներ՝ մեկ-մեկ Փարիզի շրջանակները պտույտի, ուր ամառ ժամանակ փարիզցիները իրենց ուտելիքներով ու հոծ բազմությունը նույնպես զբոսանքի էին գնում ու ամբողջ ճանապարհին ծանոթանձանոթ միասին երգում էին հյուսիսի ստիկ երգեր, մանավանդ երկաթուղու կայարանապետների վրա հորինվածները:

Հաճախ կիրակի օրերը Լուվրի չափազանց հարուստ մյուզեոն էի գնում, ուր գեղեցկություններով տարված՝ աննկատելի կերպով անցնում էին ժամեր և երբ հիացմունքից արբշիռ և հոգնած ուղեղս անընդունակ էր դառնում այլևս զգալու, դուրս էի գալիս պալատից և աշխատում Փարիզին ծանոթանալ, որ գրեթե Լուվրի մյուզեոն ծանոթանալու չափ դժվար էր:

Պարտեզի կողմի դռնից դուրս գալով՝ անցնում էի Տյուլիերի պարտեզը, որ ուներ բազում ավազաններ և շատրվաններ, պուրակներով ու ծառերով շրջապատված, բազում արձաններ՝ պատմություն, մեծ մարդիկ և կենդանական աշխարհ պատկերող:

Ուղիղ շարունակում էի ճանապարհը դեպի արևմուտք և դուրս էի գալիս Համաձայնության հրապարակը (Place de la Concorde):

PLACE DE LA CONCORDE
ՇԱՆՁԵԼԻՁԵ ԵՎ ՀԱՂԹԱԿԱՆ ԿԱՄԱՐԸ

Պլաս դը Լա Կոնկորդի մեջտեղ, մի բարեձև պատվանդանի վրա ցցված էր դեպի երկինք Եգիպտոսի Լյուկսորյան հիանալի օբելիսկը, որ միակտոր քարից մոտ տասնհինգ մետր երկար, քառակուսի տաշված հետզհետե սրվում էր դեպի վեր: Նրա չորս երեսների վրա քանդակված էր հիերոգլիֆներով: Այդ նապոլեոնյան արշավանքի կողպուտն էր Եգիպտոսից:

Հրապարակի շատրվաններից զովացող բրոնզյա արձանները, զանազան նահանգները ներկայացնող մարմարի արձանները և ամբողջ այդ մեծ ու սքանչելի հրապարակի ճաշակավոր ձևավորումը գայն իրավացիորեն դարձնում են աշխարհիս ամենագեղեցիկ հրապարակը:

Շարունակելով ճամփաս՝ մտնում էի Շանզելիզեի չքնաղ ծառուղին, լայն ու ընդարձակ, ամեն տեղ ծաղիկներ, տրուպիկ բույսեր, պուրակներ, ծառեր և արձաններ՝ եզերված մեջ ընդ մեջ հոյակապ պալատներով: Շանզելիզեն երկարում էր մինչև Աստղածև հրապարակը, որի մեջտեղ կառուցված էր տիտան Հաղթական կամարը՝ իր տեսակի մեջ ամենից մոնումենտալը, որ ես տեսել եմ, որի պատերի զարդն էին հանճարեղ Ռյուտի քանդակած հեղափոխական գրուպաները:

Այդ բոլորը այնքան ապշեցնող ու աննման գեղեցկություններ էին, որ իրավամբ պետք է գիտակից մարդկությունը գլուխ խոնարհի ֆրանսիական հանճարին:

Նկատի ունենալով նկարագրելու համեստ ուժերս՝ ես անցողակի եմ մոտենում Փարիզի գեղեցկությանց, մանավանդ, որ իմ նպատակից էլ դուրս է այդ: Միայն այնքանով պիտի նշվեն նրանք, որքան շփման մեջ են եղել իմ ուսանողական կյանքիս հետ:

Ես բնակվում էի Պանթեոնի և Լյուքսեմբուրգի պարտեզին շատ մոտիկ ուսանողական թաղամասում: Դա դյուրացնում էր հաճախակի այցերս երկու տեղերն էլ:

ԼՅՈՒՔՍԵՆԲՈՒՐԳԻ

ՊԱՐՏԵՂԸ

Այդ պարտեզն իր սքանչելի գեղեցկեւթյամբ և կենտրոնական բնույթով՝ լայն հասարակութեան ժամադրավայրն էր, մանավանդ երաժշտութեան օրերին: Ուսանողներն այնտեղ էին իրար հանդիպում, այնտեղ էին սովորում ու կարդում և իրենց ֆիլիտան անում: Ամեն մի անկյուն, ծաղկանոցների ու դափնեկարգերի կողքին, միշտ մեկը կար կծկված, որ նկարում էր մարդիկ ու տեսարաններ: Մարդկային երևակայութիւնը՝ պարտեզի մտերմիկ և առանձնացած աղբյուրների ու ոգեշնչող արձանների կողքին՝ լիցք էր ստանում: Մեջտեղը ավելի ցած՝ մի ընդարձակ տարածութիւն կար, ուր գտնվում էր մեծ ավազան՝ իր շատրվանով, ընդարձակ ու ազնվագգի ծաղկանոցներով շրջապատված: Բնագործն այնտեղ էին հավաքվում երեխաները իրենց մայրերի հետ:

Այդ մեջտեղի ծաղկանոցների կողքին էր բազմած Լյուքսեմբուրգի վեհ պալատը: Նրա արևելյան կողմը բարձրանում էր արձանազարդ Մեդիչիի աղբյուրը՝ բարձրասաղարթ ծառերի ստվերների տակ, որի շուրջն էին հավաքվում տարիքոտ նկարչուհիներ՝ նկարելու ու հանդիպումներ ունենալու և այդ գեղեցիկ աղբյուրի զովութիւնից թարմանալու ձգտումով:

Լյուքսեմբուրգի պալատի արևմտյան կողքին էր Դըլակերուայի արձանը, դրված աղբյուրի գլխին, և շրջապատված ծաղկանոցներով ու բարձր ծառերով: Այդ արձանից անմիջապես հետո նույն ուղղութեամբ գտնվում էր Լյուքսեմբուրգի մյուզեի համեստ շէնքը, որի մուտքը փողոցից էր: Լյուքսեմբուրգի մյուզեն Փարիզի ժողովրդի համար շատ սիրելի էր իր հարուստ ու մոդեռն բովանդակութեամբ, հետևապես չափազանց հաճախված:

ՊԱՆԹԵՈՆ (PANTHEON)

(ԴԱՄԲԱՆԱՐԱՆ ՀՈՅԱԿԱՊ ՄԱՐԴԿԱՆՑ)

Լյուքսեմբուրգի պարտեզի արևելյան դռնից դուրս գալով և Սեն-Միշելի ծառուղին անցնելով՝ մտնում էի Պանթեոնի լայն ու կարճ պողոտան, որի ծայրի հրապարակի մեջտեղը վեհափառոքն բազմած է հոյակապ ճարտարապետութեամբ Պանթեոնի սքանչելի շէնքը: Նրա նկուղներում տեղավորված են զանազան գեղեցկութեամբ մարմարե սափորներ, որոնք պարունակում են Ֆրանսիայի մեծագույն մարդկանց աճյունները:

Պանթեոնի ճակատը սյունազարդ է: Դռան աջ կողքին դրված է Ռոդենի հոյակապ «Մտածողը» արձանը, որը իր կառուցվածքով և բովանդակութեամբ կատարելապես համապատասխան է շէնքի վեհութեան:

Երբ մարդ ներս է մտնում այդ գեղարվեստի պատկառելի տաճարը, անհնարին է, որ հիացմունքից որևէ բացականչութիւն դուրս չթռչի նրա բաց մնացած բերանից: Այնտեղ է, որ Ֆրեսկոների և ճարտարապետութեան շոյող ներդաշնակութիւնը հասկանալի է դառնում և սինթետիկ արվեստի վեհութիւնն զգացվում: Այնտեղ է, որ այցելուն, տեսնելով 19-րդ դարու մեծագույն դեկորատորը՝ Պյուլիս դը Շավանի գործերը և շէնքի գեղեցիկ ճարտարապետութիւնը, վերհիշում է Բախի մեծ պատարագի աննման երաժշտութիւնը և այդ բոլորով միասին մի քիչ մոտիկցած է զգում ինքզինք հին հոյակապ եգիպտական արվեստին:

Պանթեոնի Ֆրեսկոները կատարած են մի կարգ շատ խոշոր նկարիչներ, ինչպես Շավան, Հյուլմբեր, Տետար, Ժան-Պոլ Լորանս, Բոնա և ուրիշներ, որոնք արվեստի ճակատում այսօրվա մարդկութեան առաջավոր ավանդարդն են:

Հիշյալ այժմեական Ֆրեսկոները տեսնելիպես չպիտի չփոթել հին Իտալիայում գործադրված Ֆրեսկոների հետ:

ԹԱՏՐՈՆՆԵՐ

Թատրոններից ես սիրում էի Անտուանի թատրոնը, որովհետև նա ունալիստական ուղղութիւն ուներ: Մեծ օպերան, որի հոյակապ ճարտարապետութիւնը, միջի նկարները և դրսի պատերի վրա հանճարեղ Կարպոյի գորելիքները հիացք էին պատճառում: Կոմեդի Ֆրանսեզը, որի հետ մասսաները ավելի կապված էին և նրա պլաֆոնը նկարած էր իմ ուսուցիչը՝ Բենժամեն Կոնստան: Օդեոնը, որի մեջ բացի ներկայացումներից, տեղի էին ունենում մեծ մասշտաբի կոնցերտներ և որի պլաֆոնը նկարած էր իմ ուսուցիչ ժան-Պոլ Լորանսը:

Արժև հիշատակել մի փոքրիկ և համեստ կաֆե, ուր երեկոները շատ լավ երաժշտութիւն էր լինում և այդ պատճառով կոչվում էր Կոնցերտ ուոթ: Նա մոտիկ էր Լյուքսեմբուրգի պալատին և իմ սիրած վայրերից մեկն էր: Այնտեղ փոքր, բայց լավ խմբով լավագույն երաժշտական կտորներ էին նվագում: Ընտիր հասարակութիւն էր հավաքվում, մի սուրճ էին խմում, որ ընդամեն արժեք մեկ ֆրանկ քսանհինգ սանտիմ և հանդարտ ու անաղմուկ լսում էին երաժշտութիւն:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՍ ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍԱԼՈՆՈՒՄ

1901-ին էր, որ իմ առաջին նկարս ընդունվեց Ֆրանսիական նկարիչների պաշտոնական սալոնում: Այդ նկարը ներկայացնում էր մի պրըդոն բանվորուհի, որ իր հող կրելու հատկացված ձեռքի սայլը քշած էր ջրհորի մոտ, որից ջուր վերցրած, իր ցամաք հացը այդ ջրի մեջ թաթխելով ուտում էր:

Երկրորդ տարվա վերջն էր, մրցութայն մեջ իմ նկարած յուղաներկ մարմինը պատվավոր հիշատակութայն արժանացած էր: Այդ կոնկուրսի առթիվ Փարիզից մի թղթակցութիւն տպված էր պոլսական թերթի մեջ, որը հայոց կաթողիկոսը կարդացած լինելով՝ մի երկար, ինքնաձեռագիր նամակով ինձ ուղղած՝ մեղադրում էր, որ իբր թե ես ծածկում եմ հաջողութիւններս, որպեսզի երկար տարիներ դեգերեմ արտասահմանում: Ծամփու ծախս ուղարկելով՝ պահանջած էր, որ անմիջապես վերադառնամ Էջմիածին:

Վերադառնալով Էջմիածին, այդ ամառ կաթողիկոսի ճամփորդութայնց ընկերացա, գնացինք Սևան, Դիլիջան, Հաղարծնի վանք, Ալեքսանդրապոլ, որտեղից ես գնացի Անի և մի քանի ուրիշ տեղեր:

Աշնան ինձ հաջողվեց կաթողիկոսին համոզել, որ գոնե երկու տարի էլ սովորելու գնամ և համաձայնութիւն առնելով՝ նորից Փարիզ մեկնեցի:

Այս անգամ ես սկսեցի ավելի եռանդուն աշխատել, որովհետև ժամանակը կարճ էր: Սկսեցի հին կլասիկների, վերածնութայն դարի կլասիկներին ու մոդեռն պրոգրոսիվ վարպետներին ուսումնասիրել:

Միևնույն ժամանակ կոպիներ էի անում, ուսումնասիրելու համար մեծագույն վարպետներին, ինչպես Ռեմբրանտ, Տիցիան, Վերոնեզ, Ռուբենս, Բրուտոն և այլն: Այդ կոպիները միայն այն ժամանակ կարող էին օգտակար լինել, երբ կոպիստը խորացած էր արվեստի մեջ:



Սանահին գյուղը (1904)



Տուտեղրդու դամբարանը (1904)



Սանահին գյուղը (1904)



Զաքարիա սպասալարի դամբարանը (1904)



Լոռեցի հովիվը (1904)




Միհրան Թերլեմեչյանի
դիմանկարը (1905)




Ծառը (1906)



Ուխտավորների ժամանումը Սեւան (1907)




Սևանի կղզին (1907)




Ապաշխարողը (1907)




Ալեքսանդրիացի Ֆելլահ (1908)



Փարիզ. Նոր կամուրջը
(1909)




Փարիզ.
Աստղադիտարանի
մոտի շատրվանը
(1909)



Հարդարանք (1910)



Նոճիներ (1911)



Կոմիտաս (1913)



Սելջուկների մայրաքաղաքը, Քյոթահիա (1913)



Բրուսա (1913)



Սիփան սարը Կտուց կղզուց (1915)

(Չայաստանի ազգային պատկերասրահի հավաքածու)

1904-ԻՆ ԺՈՒԼԻԱՆ ՊՐԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱՑ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

մայրամուտի գոյությունը, այսինքն, այսինքն

1904-ի գարնան էր, որ ժուլյանի յոթ ակադեմիկները մրցություն եղավ, այդ յոթ ակադեմիկների միացյալ կոնկուրսին առաջին պրինես ստացա: Նյութը մի կնոջ մերկ մարմին էր, որ տպված է այն ժամանակվա Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր Հայ գրականության» գրքերից մեկի մեջ:

Այն օրերին Փարիզում արևելագիտաց ցուցահանդես բացվեց: Ես մասնակցեցի այդ ցուցահանդեսին մի Հայ գաղթականի նկարով և ընտրվեցի արևելագիտաց միության անդամ: Այդ նկարը հետո համակովկասյան ցուցահանդեսին էլ դրի, որը այժմ գտնվում է Թիֆլիսում:

Նկարիչ Գրիգորյանը սալոնում ցուցադրած էր մի նատյուրմորտ: Երբ սալոնը փակվեց, ես նրա նկարի շրջանակը փոխ առնելով՝ նույն մեծությամբ մի նկարով Սենի շրջանում բացված նկարչական ցուցահանդեսին մասնակցելով՝ ստացա մանսիոն օնորաբլ (պատվավոր հիշատակություն) տիտղոսը:

Ուսման երկրորդ երկամյակն էլ լրացել էր և ես պարտավոր էի վերադառնալ:

Երբ մնաք բարովի գնացի Ժան-Պոլ Լորանսին, նա հարցրեց. «Մ՞եր և ինչո՞ւ համար կերթաս»: Ասի, որ պիտի գնամ իմ հայրենիքի նյութերն ուսումնասիրելու: Նա պատասխանեց. «Դու այնտեղ միջոցներ չես ունենա ուսումնասիրություններ կատարելու, բայց այստեղ ապագա ունես, մնա՛ Ֆրանսիա»: Երբ նա իր մակագրված լուսանկարը ինձ հանձնեց, ես պինդ սեղմեցի նրա հայրական ձեռքը և ոգևորված մեկնեցի Կովկաս, մեծ հույս ունենալով, որ օգտակար պիտի լինեմ իմ ժողովրդին:

ՎԵՐԱԴԱՐՁ Ի ԿՈՎԿԱՍ

Փարիզից Կովկաս հասնելով՝ խոշոր փոփոխություն նկատեցի հայ ժողովրդի մտայնություն և հոգեբանություն մեջ: Առաջ, երբ ես «Մշակի» ցրիչ էի, «բարի» բուրժուականեր այդ թերթին բարեգործություն անելով՝ բաժանորդ էին գրվում միմիայն նրա համար, որ այդ հայ թերթը իրենց դոնապաններն ու ծառաները կարդային, իսկ իրենք՝ իբրև ավելի «քաղաքակրթյալ» տարր՝ ուսուց թերթերն էին կարդում: Հիմա այլ էր: Բուրժուակաները շնորհ էին անում հայերեն սովորել և հայ թերթեր կարդալ ու նույնիսկ հայ կյանքով զբաղվել:

Այդ հսկայական փոփոխությունը արդյունք էր գալիցիկյան խելագար հայահալած քաղաքականության:

Կովկասի փոխարքա իշխան Գալիցինը իր կոպիտ և տմարդի հալածանքներով մեր այլասերված ազգայիններին գիտակից հայեր դառնալուն բավական նպաստից:

... զարմուկս
... ստորոպ սմ մ զյ յնքապլ յն միանայիմ քոզոցիմ մանալլ
... յանտարադմի ի՛ն զոյ
... քոզ... սմ միմայա... յոթ-ման վրանք իրոզայ գամն պոմ
... կամք յոտիք ու իմն : ստեղծմի գանա՞... ոչնչ մ զ... ինչ
... անտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...

ԹՈՒԼԱՑԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՐԱՆԱԼԸ

Թյուրքիայում 94-96-ի ապարդյուն կոտորածներից հետո հայոց՝ եվրոպական պետությունների վրա ունեցած կուլյր սերը և անհիմն հավատը կամաց-կամաց սկսել էր պակասել, հետևապես հեղափոխական կուսակցություններն սկսվեցին լքվել ժողովրդից:

Ինչպես առաջ ասել եմ, Հնչակյան կուսակցությունը, մանավանդ իր ներքին երկպառակություններով, թուլացավ: Դաշնակցության ճրագն էլ սկսած էր մարել:

Իշխան Գալիցին թյուրք կալվածատերերը և վրաց ֆեոդալ կնյազները գրգռած էր հայերի դեմ, փակած էր մեր դպրոցները և հետո տխմար Նիկոլա 2-րդից հրաման բերել տված էր՝ մեր եկեղեցական կալվածների գրավման համար:

Հիշյալ սարսափելի հալածանքների պատճառով հայ բուրժուազիան, իբրև ինքնապաշտպանության միջոց, սկսեց ուժեղացնել հյուժված Դաշնակցությունը: Ուրեմն ցարական ոճրագործ քաղաքականության հալածանքները մղեցին կովկասահայության արդեն թուլացած Դաշնակցության գիրկը, որով ավելի զորացրին նրան: Այդպիսով Դաշնակցությունը կովի երկու ճակատ ունեցավ՝ թե թյուրքիայի և թե ուսանների դեմ:

... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...
... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա... յանտարա...

ԳԱԼԻՑԻՆԻ ՏԵՌՈՐԸ

1903-ին նվազած Հնչակյան կուսակցությունը տեղոր էր կատարած Գալիցիայի վրա, որ միայն վերադարձված էր: Այդ տեղորը լուսկյան հավանություն էր գտած հայ ժողովրդյան մեծագույն մասի կողմից:

Սարսափած Գալիցիայի ուրիշ դժոխային միտք էր հղացած հայ ժողովրդին ոչնչացնելու համար: Նա, ապահովելով կառավարության աջակցությունը, Բաքվի թյուրք ազալարներին դրդած էր հարձակվելու, կոտորելու և թալանելու հայերին: Բայց 1904-ի սկզբներին Մանջուրիայում ճապոնացիների հասցրած հարվածները, շփոթության մատնելով ցարական կառավարության, այդ իսկ պատճառով մի միջոց Գալիցիայի հալածանքները ընդհատված էին: Նույն թվին Գալիցիայի հանված էր պաշտոնից:

1904-ի սկզբները Դաշնակցությունը Յրջրգի մահափորձը կատարեց, որ անհաջող անցավ, որովհետև սուլթանը համիդ չսպանվեց:

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

1905 փետրվարին էր Բաքվի թյուրքերի առաջին հարձակումը հայերի վրա: Դրանով սկսվեցին հայ-թյուրքական ընդհարումները, որ տեղեց մեկ և կես տարի:

Ցարական կառավարության կազմակերպած այդ ազգամիջյան ավերիչ կոտորածները բազում գյուղեր և ավաններ մոխրակույտի վերածեցին և բազում, բոլորովին անմեղ, ըտանիքներ ու մարդիկ բզկտվեցին ու արյան բաղնիք ընդունեցին: Այդ բոլորը պետք էր ոճրագործ ցարական կառավարության իր նողկալի տիրապետությունը ամրացնելու համար: Որովհետև Պետերբուրգի տանջված բանվորությունը ըմբոստության էր մղված, Բաքվի բանվորության ու վրաց գյուղացիության մեջ նույնպես խլրտումներ կային, ուրեմն պետք էր կողմնակի ոչ-մարդկային արյունոտ գործերով քնացնել և շեղել մասսայի ուշադրությունը ազատագրական շարժումներից:

1905-ին էր, որ Կովկաս ուրիշ տիպի փոխարքա ունեցավ: Դա կոմս Վարանցով-Դաշկովն էր, մի նուրբ, փորձառու ազվես, որ գալուն պես ինքզինք ներկայացրեց խաղաղարար: Դեռ ճանապարհից նա խոստացել էր դադարեցնել հայ-թյուրքական կոտորածները, բայց նա խաբեց, որովհետև իր օրովն էր, որ Նախիջևան և այդ խանության մեջի գյուղերը կոտորվեցին ու թալանվեցին, երբ ցարական բոլորովին անտարբեր բանակը այդտեղ հանդիսատես էր: Կոմս Վարանցով-Դաշկովի օրովն էր, որ Բորջալուի թյուրքերը հարձակվեցին և ուժգին կռիվներ կային Թիֆլիսում թյուրքերի, և հայերի մեջ, բայց «խաղաղարար» կոմսը մատը մատին չդիպրեց և այլն, և այլն: Դեռ առիթ պիտի ունենամ անդրադառնալու «հայասեր» կոմս Դաշկովի գործունեությունը և խաղերին:

Կոմսը էր որ շատ ցրուն կաշեք և արջեցիք:
Ես իմ «Մանուկ» գրքից նկարս պրոպեդեա էլ նկարել եմ:

ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Թիֆլիսից մեկնեցի էջմիածին: Այնտեղ վանքի համար երկու նկար նկարեցի: Մեկը մինչև այժմ տաճարում կախված է, իսկ մյուսը հեռացող եպիսկոպոսներից մեկի սնդուկում գտել են փաթաթված և ասում են, որ այժմ Գայանեի տաճարումն է:

Իմ երկու կոպիները՝ Ռեմբրանտի «Ս. Մաթեոս» և Բրուտոնի «Խաչելությունը»՝ էջմիածնի մատենադարանում են: Այնտեղ է նույնպես Լուվրի մյուզեոնում եղած հայոց Տրդատ թագավորի արձանից մի մետր մեծությամբ գծագրությունս:

Երբ հասա էջմիածին, այնտեղ մի փոքրիկ սենյակում ես գտա 30 - 40-ի չափ նկարներ, որոնք չգիտեմ երբ հանված էին տաճարի պատերից և առանց ունի շրջանակի և պաղ-րամկանների, անխնամ կերպով ծալծլված ու իրար վրա թափթփված էին, որոնց մեջ կաին շատ արժեքավոր հայկական և հոլանդական նկարներ: Այդ բոլորը ես մաքրեցի, ուղղեցի և փոելով հատակի վրա՝ ծածկեցի: Հետո ես զբաղվեցի Խրիմյանի շինած մյուզեի զանազան իրերի դասավորելու գործով:

Այնտեղ ես նկարեցի Խրիմյանին: Այդ նկարը վանի դեպքերին գտնվում էր Վարազա դպրոցում, որը դպրոցի շենքի հետ այրվեց: Ինձ համար ես նկարեցի մի քանի տիպեր, ճեմարանական աշակերտ և տեսարաններ:

Էջմիածնում կատարած ամեն աշխատանքները, Մայր տաճարի համար եղած նկարները, Եվրոպայից բերած կոպիները, պորտրեն և այլն, այդ բոլորը կատարած եմ իմ ներկերով և կտավներով՝ բացարձակորեն ճրի՝ այն երախտագիտական զգացմունքով, որ Խրիմյանը, իհարկե ազգային միջոցներով, իմ ուսանելուս նպաստածն էր:

ՍԱՆԱՀԻՆՈՒՄ

Վաղուց ես ցանկություն ունեի հայ գյուղը և գյուղական կյանքը ուսումնասիրել: Սիրում էի տեսնել այդ հողի հետ չարչարվող արևավառ դեմքերը, նրանց քշած արորի կամ գուլթանի կողքից քայելը, նրանց անուշ հորովելը լսել, միևնույն կոտից նրանց հետ մածուն ուտել և մերվել նրանց կենցաղին: Այն ժամանակ գործարանային բանվորության մասին իմ հասկացողությունս սահմանափակ էր:

Էջմիածնից մի հանձնարարական առնելով՝ մեկնեցի Սանահին գյուղը: Երբ Ալավերդու կայարանից մի գյուղացի իմ իրերս վերցնելով՝ միասին բարձրանում էինք դեպի գյուղը, նա գյուղի վանքի և վանահոր մասին շատ բան պատմեց, այնպես որ ես կիսով չափ ծանոթի պես մտա վանք: Տարիքոտ վանահոր մագերը թեև ճերմկած, բայց ինքը աշխույժ էր: Վանքում կար մի միաբան վարդապետ, որ անմրցելի կերպով տգետ էր և դժվարությամբ էր կարդում:

Մի անգամ, երբ եկեղեցում օտար մարդ չկար, և վարդապետը ավետարան կարդալիս հաճախ կանգ էր առնում և չէր կարող կարդալ, ես, որ պատահամբ եկեղեցի մտած էի, նրա գեղեցիկ ճարտարապետությունը դիտելու, հեռվից իրոնիկ կերպով ասի. «Էլի էն մոմ բռնող փուճ երեխաները մոմ են կաթեցրել տառերի վրա, որով ձեր կարդալը դժվարացնում են»: Նա դասի միջից մի պահ ընդհատեց իր աղոթքը ու պատասխանեց. «Հա՛, հա՛, էլ մի՛ ասեր»:

Այնտեղ էլ պառավ կնիկներ մխմել (չարչավ) էին քաշում գլխների վրա ու այնպես գալիս եկեղեցի, ինչպես Վանում մայրս էր անում: Թե պառավ կնիկների և թե ծերունիների մեծ մասը եկեղեցին չէին մտնում, այլ գավթումն էին կանգնում աղոթելու՝ այն հին հասկացողությամբ, թե անոնք որ ինքզինքնին կատարյալ հավատացյալներ չէին համարում, պետք էր որ «առ դրունս կացեք և աղոթեցեք»:

Ես իմ «Սանահինի գավիթ» նկարս այդպես էլ նկարել եմ:

Այդ գավիթը ծառայել է նույնպես իբրև պանթեոն: Սանահինի տեսարանները հարուստ էին գեղեցկությամբ և դյուլթիչ: Երբ մեկը կանգնեի վանքի պատի տակ և նայեր հյուսիս, առջևը բացվում էր գյուղի փոքր և թեք սարահարթը, որ կարծես մի գեղեցիկ գորգի նման էր՝ շրջանակված գորշ վարդագույն ժայռերով, որոնք գրեթե ուղղահայաց իջնում էին անդնդախոր ձորերը: Այդ ձորերի միջով էր, որ վիշապի պես Ֆշշալով հոսում էր Դեբետ գետը: Չախ կողմը, ձորի մյուս ափին, Ալավերդու պղնձաձուլարանների հորդ ու դեղնավուն ծուխերն էին բարձրանում, որոնց շարունակությունն էր կարծես տարածական ու տափակ գագաթներով Լալվարա ծաղկավետ սարը, որ իր ընդերքում թաքցրած ուներ առատորեն ոսկեզօծ պղնձաքարեր: Աջ կողմը՝ Հաղպատի անտառածածկ ու գեղեցիկ լեռը: Դիմացն էր Աթոռիկ կոչվող քարափը, որի վրա երկու արտեր միայն կային: Արտերին կից բարձրանում էին կտրտված եզերքներով լեռնաշարքերը: Ավելի հեռու, պարզ օրերին նկատվում էր Կովկասյան լեռնաշղթան, իսկ վանքի անմիջապես ետևից բարձրանում էին անտառոտ լեռներ, որոնք հասնում էին մինչև Եղնախաղաց սարը:

Այդ անտառների, ձորերի և ծմակների մեջ վխտում էին կխտարներ, պախրաններ և արջեր:

Սանահինի վանքը, որ 1904-5-ին ծառայում էր իբրև գյուղական եկեղեցի, կառուցված է 967-979 ին: Կառուցողները եղել են Սմբատ և Կյուրիկե Բագրատունիները:

Հիշյալ վանքի ճարտարապետությունը վայելչագեղ է և համաչափության օրենքները՝ կատարյալ: Վանքին կից է գավիթը, որ ունի չորս հատ միակտոր քարից սյուներ՝ արձանագրություններով ծածկված: Այդ գավիթը ծառայած է իբրև պանթեոն այն ժամանակվա մեծ մարդկանց համար: Գավթի արևմտյան պատը կամարակապ անցքեր ունի, որք այժմ քարերով շարված են: Դրսից այդ պատի տակ պատվանդանի վրա կանգնեցրած են երկու խաչքարեր, որոնցից մեկը արվեստի գործի մի սքանչելի նմուշ է:

Վանքի հյուսիսային պատին կից կա մի կորրիդորի նմանող տեղ, որի մի կողմի վրա քարերից սաքուններ կան պատ-

րաստված, որոնց վրա նստելիս են եղել Տուտեվորդու աշակերտները սովորելիս: Այդ մասը կոչվում է Տուտեվորդու ճեմարան: Նույն կորրիդորի միջիցն է բացվում շատ սիրուն գրադարանի շենքի դուռը:

Գյուղի տների ճարտարապետությունը գրեթե մեր լեռնային հայրենիքի ամեն տեղերին նման է: Կիսագետնափոր տան դռնից ներս ես մտնում թոնրատուն: Պատահում է, որ այդ ընդարձակ թոնրատան մի կողմի վրա անասուններ էին կապում, իսկ մյուս կողմի վրա մարդիկ էին քնում: Բայց Սանահինում և Հաղպատում պատահում էին այնպիսի տներ, որոնց թոնրատան կենտրոնը քառակուսի մի տեղ կար, ուր առաջները միշտ կրակ է վառվելիս եղել: Գոմեշներով մեծ ծառերի ծայրերը քաշում էին այդ կրակարանի վրա, երբ ծառերի մեծ մասը մնում էր դռնից դուրս: Ամեն առավոտ գոմեշները լծում և տան միջից այդ ծառերը առաջացնում էին կրակի վրա՝ մշտական կրակ ունենալու համար: Կրակարանի վրա էր տան միակ երդիկը, որից ծուխը դուրս էր գալիս և լույսը ներս էր խուժում: Տան տանիքը տաշտած էր, որովհետև խաչածե գերաններ իրար վրա դրվելով՝ առաստաղը բարձրանում էր մինչև երդիկ:

Վարը, ձորի մեջ Դեբետ գետով անցնում էինք մի համարձակ ճարտարապետությունով շինված կամուրջից, որը կառուցված էր 1234 թվին՝ Աբբաս Բ թագավորի կին Նանայի կողմից: Այդ Նանան քույրն էր Ջաքարե և Իվանե Սպասալարներին:

**ՍԱՆԱՀԻՆՈՒՄ ԶԱՎԱՐՑԱՆԻՆ
ՀԱՆԴԻՊԵԼՍ**

1905 թվի մեծ պաշարի առաջին շաբաթն էր: Տեղ-տեղ ձյուն կար, հորդ լյուլախ (ձյունախառն անձրև) թեև դադրած էր, բայց մի քիչ էլի շաղում էր՝ իմ բացօթյա աշխատանքը խանգարելու չափ: Ես կանգնել էի վանատան պատշգամբը, մեկ էլ տեսնեմ քարափից երկու մարդ բարձրացան, որոնք գյուղացիներ չէին: Ինքնիրենս մտածեցի. «էս ինչ վանք գալու օր են գտել»: Տեսնեմ՝ շորորալով և ցեխեր տրորելով առաջանում են: Երբ բոլորովին մոտեցան, ճանաչեցի: Մեկը Միմոն Զավարյանն էր, իսկ մյուսը՝ Քոչարյանը: Վանահայրը նրանց ղեմավորեց և բերեց պատշգամբ: Նրանք պատմեցին, որ Ալլավերդու զավոդում էին, մոտիկությունից օգտվելով՝ ուզեցին գալ վանքը տեսնել: Սովորական խոսակցությունից հետո, հարցրի պ. Զավարյանին, թե ինչ վիճակի մեջ է Հայրիկյան Փոնդը, որի համար ես մի նկար էի պատրաստել և հինգ ուլբլի պարտք անելով իմ բաժինս էի մուծել, այն հույսով, որ Վարագում գյուղատնտեսաական դպրոց պիտի բացվի:

Նա նայեց Քոչարյանին և ասաց. «Այդ փողերը այս անպիտանի մոտ էր, իմ բացակայության՝ նա ուրիշ բաների վրա է ծախսել»: Հետո հարցրի, թե քաղաքական նորություններ չկան. ինչպես չէ, Սերոբ Մշի դաշտում ապստամբություն է բարձրացրել: Ասացի. «Ուրեմն՝ էլի կոտորած, մի քանի մարդով և մի քանի օրվա զինամթերքով ի՞նչ պիտի լինի»: Նա պատասխանեց. «Մի՛ ասիր այդ, այս անգամ Եվրոպան պիտի միջամտե ի նպաստ մեզ»: Ես սարսափահար տեղիցս վեր ցատկելով՝ ասացի. «Տակավին հավատո՞ւմ եք Եվրոպայի միջամտության»: Միմոնը իբրև պատասխան՝ ավելացրեց. «Շուտով երկու ջորիի բեռներով շորշաղ պիտի ուղարկենք, որ վառող պատրաստեն և մի ժամա-

նակ ղեմանան, մինչև Եվրոպան գործի խառնվի»: Ես ապշած ու հուսահատ զնացի խուցս փակվելու, զի գանգս ճայթում էր այս մոտեմենտալ տխմարությունից հասնող միամտությունից: Վրդովմունքից խեղդվում էի, որովհետև պարզ էր, որ նորից մեր արյունատար երակները պիտի բացվեին ու կարնիր պիտի ներկվեին մեր արդեն սգավոր ձորերը, ժայռերն ու դաշտերը:

**ՍԱՆԱՀԻՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾՍ
ԱՇՆԱՏԱՆՔՆԵՐԸ**

Սանահինում չորս թե հինգ ամիս մնացի և առանց ժամանակ կորցնելու աշխատեցի անընդհատ: Այստեղ նկարել եմ գրեթե բոլոր ժանրերի գործեր՝ գյուղական տիպարներ, պորտրեներ, ընդհանուր տեսարաններ, ճարտարապետական օբյեկտներ, գորգագործներ, հայտնի գիտնական Տուտերդիի դամբարան-խաչքարը, Ջաքարիա Սպասալարի դամբարանի վրա եղած մատուռը: Միջանկյալ ասեմ, որ վանքի վանահայր Գարեգին եպիսկոպոս Սաթուռյանը ամեն առթիվ կուզի ցույց տալ, թե ինքը կուլտուրական մարդ է և հայկական հնուկությունները սիրող, բայց այդ մարդը Ջաքարիա Սպասալարի դամբարան-մատուռի մի խարխլած պատը քանդել էր տվել և քարերը գործածել վանքի բակի պատերը շարելու համար: Նկարել եմ նույնպես գրադարան կոչված շենքի շատ գեղեցիկ օրիգինալ սյուներ, որի մոտ կանգնած էր մի չբուխ ծխող գյուղացի հիացական դիրքով: Այդ նկարը Փարիզումն է գտնվում: Նկարել եմ գոմեշներ, ոչխարներ, գյուղացի երեխաներ, աղջիկներ ծաղկավոր արտերի մեջ և այլն: Այդ նկարներից երեքը՝ «Սանահինի գավիթը», «Գառնարածը» և «Ընդհանուր տեսարանը», գտնվում են մեր Պետական թանգարանում: Նկարել եմ գյուղի քահանան հայ ճարտարապետական ֆոնով, որ մեծ պատերազմի ժամանակ կորսվել է Օդեսայում:

**1905-Ի ԹԻՖԼԻՍԻ ՏԵՂԱԿԱՆ
ՑՈՒՑԱՀԱՆ ԴԵՍԸ**

Նույն աշնան վերջերը, վերադառնալով Թիֆլիս Սանահինի և էջմիածնի նկարներովս, մասնակցել եմ տեղական ցուցահանդեսին, որի մասին խոսել են այն ժամանակվա վրաց, ռուսաց և հայոց թերթերը:

Այդ ցուցահանդեսում երեք հարյուր ռուբլիով մի նկար ծախեցի, որով նյութապես հուսահատական դրուժյունս բարվոքվեց և ես այդ ձեռքով օրերին այլևս առանց գուլպայի չէի ման գալ:

Հիշյալ ցուցահանդեսին մասնակցում էին վրացիներից՝ Գաբաև, հայերից՝ Թադևոսյան, Հակոբյան, Փիրադյան և քանդակագործ Միքայելյան: Ռուսներից՝ Ֆոգել, Ջոմեր, Շմերլինգ, Կրինևսկի, Սկրիֆաստովսկի և ուրիշներ, որոնց անունները մոռացել եմ:

Պետք է համարձակ ասել, որ այդ մի փունջ նկարիչների մեջ ամենից ավելի աչքի ընկնողներն էին՝ Գաբաև, Հ. Հակոբյան, Թադևոսյան և Ֆոգել, որոնց բնութագրել մի քանի պարզ խոսքերով անհրաժեշտ է:

Գաբաևը մեծ կալիբրի դասական նկարիչ էր և համակրելի ընկեր: Հ. Հակոբյանը Մյունխենյան դպրոցն ավարտած, լուրջ պատրաստությամբ պորտրետիստ էր, բայց իր դյուրագրգիռ բնավորությունը նպաստում էր նեղցնելու այն շրջանակը, որի մեջ նա ապրում էր: Եղիշե Թադևոսյանը, քրիստալի պես վճիտ հոգիով, ընկերական, լույսի ու ճշմարտության սիրահար, աշխատանքով բոցավառվող մի երջանիկ արվեստագետ էր: Եղիշեն, հակառակ իր սահմանափակ զարգացման, շատ նուրբ ճաշակ ուներ, որ զարգացած էր հայտնի ռուս նկարիչ Պոլենովի ընկերակցությամբ կատարած ճամփորդություններով և այն խոշոր ծանոթությամբ, որ նա ուներ հին կլասիկ և մոդեռն արվեստի գործերին:

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՆ

Երբ Երևանից Թիֆլիս վերադարձա, բանկի ղերեկտորը՝ Պ. Կամբարյանը առաջարկեց, որ Եղիշե Թադևոսյանի հետ միասին հայկական ոճով զարդարենք նոր շինված բորսայի մուտքը: Երկուքս էլ համաձայնեցինք: Ես զարդարեցի մուտքի առաջին սրահի պլաֆոնն ու պատերը, իսկ Թադևոսյանը՝ զբաղված լինելով դասերով՝ նրա էսքիզով նկարվեց երկրորդ հարկը տանող սանդուղքի վրայի պլաֆոնը: Թեև այդ բորսան վաղուց քանդվել է, բայց ես այդ գործի հսկողը լինելով՝ հիշյալ երկու պլաֆոնների էսքիզներն էլ պահեմ եմ:

Կովկասից դարձյալ վերադառնալ ուզեցի Փարիզ՝ նկարչական արվեստի նորագույն նվաճումներն ուսումնասիրելու ձգտումով:

Բայց, նախքան Փարիզ հասնելս, պարտականություն համարեցի Եգիպտոս հանդիպել՝ խորապես ծանոթանալու համար նրա հնագույն արվեստին:

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

1907-8-ի ձմեռն էր, որ Բաթումից Մանթաշուվի նավթատար նավով մեկնեցի Եգիպտոս:

Ինձ համար առհասարակ հնարավոր չէր պարապ մնալ, ուստի բացի տեսարաններից՝ նավի վրա ես նկարեցի հնոցապանին, տեխնիկին, մի գաղթականի և երկու էտյուդ էլ արի Եգիպտոսի նավահանգստում:

Նավից դուրս գալով, մտա հարուստ ու գեղեցիկ Ալեքսանդրիա քաղաքը, որ հնում գիտություն կենտրոն էր եղել: Շրջան անելով ծովափնյա զովասուն մասերը՝ անցա հասարակաց պարտեզը: Այնտեղ առաջին գեղեցիկ գործը, որ ես տեսա, այդ Նուբար փաշայի հոյակապ արձանն էր՝ ճերմակ մարմարից կերտված և վրան էլ գրված. «Հայր Նուբարին Եգիպտոսի երախտագետ գյուղացիությունից»:

Նուբար փաշան Եգիպտոսի առաջին մինիստր եղած ժամանակ նոր օրենքներ էր սահմանած, որով Ֆելլահ գյուղացիները պաշտպանվում էին կալվածատերերի կեղեքումներից. Այդ պատճառով գյուղացիությունը կանգնեցրել էր այդ գեղեցիկ արձանը:

Լսածովս Նուբար փաշայի պապը՝ Ղարաբաղից փախած մի հայ, առաջին անգամ հաստատվել է Ջմյուռնիայում, հետո իր տղաները և թոռները տեղափոխվել են Կահիրե և իրենց աշխատանքով, գիտությունով ու ժառանգական կարողություններ հասած են բարձր պաշտոնների:

Ալեքսանդրիայից մեկնեցի Կահիրե: Այդ փարթամ քաղաքը, որ եղել է հին եգիպտական արվեստի կենտրոններից մին, հետագայում արաբական արվեստի օրրան, այժմ եգիպտական բազմազգի ժողովուրդների թե՛ կուլտուրական և թե՛ քաղաքական կենտրոնն էր: Նրա ձմեռային սքանչելի կլիման և զով գիշերները տարվա այդ եղանակին, աշխարհիս ամեն կողմերից, մանավանդ աշխատավորությունից քրտինքով ապրողներին այնտեղ է քաշում՝ վայելելու համար

ձմեռային զմրուխտյա կանաչի ու հազարազեղ ծաղիկների ակնապարար տեսարանը և հղփանալու բնության ամեն տեսակ բարիքներով:

Կահիրեի կեղտոտ, նեղլիկ, ծուռ ու մուռ փողոցները լեցուն էին տարօրինակ հագնված խաժամուժ ամբոխով: Իրար են հրմշտկում ճերմակ հագնված և սև աբաններով արար տղամարդիկ, երեսնին ծածկած արաբ կանայք, եկվոր եվրոպացիներ, ասիացիներ, փարիկեցիներ, բերբերներ, կիսամերկ սևամորթներ. Դրանց մեջ անցնում էին հպարտ ձևերով ու բարեձև կազմվածքով գյուղից եկած բնիկ եգիպտացի ֆելլահները՝ իրենց մուժ հագուստներով ու կապույտ աբաններով: Սուլն աղմկող ամբոխին խառնված էին էշեր, ձիեր, հանդարտ առաջացող բեռնված ուղտերը, կառքերն ու ավտոները: Խանութների վրա տարբեր լեզուներով ցուցանակներ կային՝ արաբերեն, ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն, հունարեն, գերմաներեն և ուրիշ անծանոթ լեզուներով: Ամբողջ այդ խայտարեղիտ կյանքը եգիպտական արևի ուժեղ ու կուրացնող լույսով է ողողված, որ ստիպում է մարդոց հաճախ կոպերը հավաքելով նայել: Ուժեղ լույսի պատճառով այնտեղի սովերները մուգ սևության էին մոտենում:

Կահիրեի երեկոները չափազանց կարճ տևողությամբ սքանչելի վերջալույսներից հետո շուտով մթնում էին, և կարծես մի գերբնական ձեռք մուգ կապտավուն և աղամանդազարդ վարագույրով ծածկում էր երկինքը, որի խորհրդավոր խորության մեջ՝ սլացիկ արմավենիները, անծայրածիր անապատները իրար խառնվում ու նույնանում էին:

Նախապատմական ժամանակներից մինչև այսօր մարդկային սեռի գեղարվեստական ստեղծագործությունների արքայից արքան է եգիպտական արվեստը, որը կարելի է ուսումնասիրել Կահիրեում և Վերին Եգիպտոսում: Կահիրեում նրա համար, ուր կա եգիպտական արվեստների աշխարհիս ամենահարուստ թանգարանը: Կա նաև մեծ սֆինքսի նախապատմական մեծ արձանը, որի պատվանդանի մի մասը արդեն ծածկված է քամիից բերված անապատների ավազներով և որը գտնվում է Գիզայի 136 մետր բարձրությամբ պիրամիդների կողքին:



Պրոֆ. Կ. Բ. Երևանցի
«Պրոֆ. Փ. Թերլեմեզյանի
հիշատակը հարգելով»
Մոսկվա, 1970 թ.

Պողոս Նուբար փառայի լուսանկարը՝ Փանոս Թերլեմեզյանին ուղղված ընծայագրով՝ «Պրոֆ. Փ. Թերլեմեզյանին ի հիշատակ իմ դիմանկարի շատ հաճելի բնորոշության ժամերի»:
(Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

Երբ չորս հազար տարիներ առաջ այդ տարօրինակ և վեհ հուշարձանները կառուցվում էին, իբրև դամբարան ծառայելու փարավոններին, նրանց կողքին գտնված մեծ սֆինքսի աստվածային արձանը արդեն թվականն անծանոթ հնություն էր, իսկ նրա տակի գետնափոր գալերեան շինելիս այն ժամանակները սյուների խոյակի կամ խարսխի մասին գաղափար չեն ունեցել, որովհետև այդ գալերիայում տնկված սյուները հսկայական կարմիր գրանիտներ են՝ քառակուսի տաշված առանց խոյակի և խարսխի: Եգիպտական սյուների լոթյուն ծաղիկի ոճով կազմված սքանչելի խոյակները, սյունի ձևը և խարսխը հետագա դարերում է առաջ եկել ու զարգացել:

Գիզայից վերադառնալիս՝ պետք է անցնել սուրբ և բեղմնավորող Նեղոսի կամուրջներից և մտնել խոնարհ դասի ու դպտիների (copte) թաղամասերը: Այդ թաղամասում են իջա դպտիների մի գետնափոր եկեղեցի, որի դասերը ժամկորների տեղից բաժանող երեսոսյան տախտակները հատված և քանդակված էին հին հայկական ձեռագրերի ընտիր ոճով: Մկրտարանները և բեմն ու խորանները նույնպես հայ եկեղեցու ձևով էին: Չարմացած հարցրի դռնապանին, նա ոչինչ չկարողացավ ասել: Այժմ մենք չունենք հինգերորդ դարից առաջ ձեռագրեր, իսկ դպտիների յոթերորդ դարու ձեռագրերը են տեսած եմ Վատիկանի մատենադարանում: Նրանց նկարների ոճը մերինին մոտիկ է, բայց նման չէ: Նրանց գույների մեջ տիրապետողը ձիթապտղագույն կանաչն է, որոնցից մի քանի փոքր ընդօրինակություններ ունեն:

Այաշում նահատակված դոկտոր Տաղավարյանը մի գիրք ունի Եգիպտոսի հայ գաղութի մասին, որի մեջ նա արաբ աղբյուրներից քաղելով, ասում է, որ մեմլուկների ժամանակ հայերը երեսուն եկեղեցի են ունեցել Կահիրեում: Ուրեմն խոշոր հայ գաղթականություն է եղել այնտեղ: Հավանաբար իմ վեր հիշած դպտիների եկողեցին հետագային հայերից գնված պիտի լինի:

Կահիրեն ունի երկու հուշակավոր մյուզեոններ: Առաջինը հին եգիպտական արվեստի ճոխ և ունիկում մյուզեոն է: Երկ-

րորդ՝ արաբական նույնպես հարուստ մյուզեոն, որոնց երկուքի էլ նկարագարը կատալոգները իմ գրքերիս հետ Պոլիս են մնացել դժբախտաբար:

Վերև եգիպտական արվեստը են իրավամբ արքայից արքա որակեցի, որովհետև նա, իբրև առաջնեկ, նույնպես արքայից արքա ասորական արվեստի հետ միասին՝ բազում տարերքներով աջակցեց հունական արվեստի ստեղծման, որը իր հերթին նույնպես հետզհետե արքայից արքա արվեստ դարձավ: Իսկ հետագայում՝ աշխարհիս բոլոր մանուկ արվեստները և քաղաքակրթությունը ծծեցին իրենց կուլտուրական սնունդը հիշյալ երեք արվեստների ստիւնքներից:

Եգիպտական ճարտարապետությունն ու քանդակագործությունը իսկական և հանդիսավոր ստեղծագործություններ են: Նրանց որմնանկարները՝ ինչպես ասորական արվեստի մեջ՝ ծառայում են ճարտարապետության արժեքավորման: Նրանց արդյունաբերական արվեստը զարդերը անմրցելի գեղեցկություն ունեն և այդպես էլ պիտի մնան:

Կահիրեում երբ մտնում եք հին եգիպտական արվեստից մյուզեոն, մի տեսակ ճնշվում եք և ինքզինքերդ փոքր զգում՝ նրանց մեծամեծ հղացումների և մոնումենտալ ճարտարապետության ու քանդակագործության ի տես, որոնց ազնիվ հատկությունները մարդկանց հոգիները նսեմացնում են:

Հին դարերի դամբարան-պիրամիդներից հետո՝ համեմատաբար ավելի նոր՝ հետագա դարերում՝ արաբական շրջանում կառուցված են խալիֆների դամբարաններ՝ հին մեջիթների նման, որոնք մեծապես հետաքրքիր են: Այդ երեսունի չափ դամբարաններից ամենամեծի վրա՝ հին արաբական տառերով մի արձանագրություն կա, որ է. «Կառուցեց Սամուել ճարտարապետ արճիչեցի»:

Կահիրեում կա մի մեծ համալսարան՝ էլ-Ահզար անունով, որ կրոնական թեքում ունի:

Կահիրեից դեպի հյուսիս է գտնվում Մանուրա քաղաքը, ուր բանտարկված է մեր Լևոն Չ Ռուբինյան վերջին թագավորը:

Եգիպտոսից նավ նստա՝ Ֆրանսիա մեկնելու համար, բայց առիթից օգուտ քաղելով՝ հանդիպեցի Ալֆր՝ տեսնե-

լու համար այն ճերմակ քաղաքը, որ Ճրանսիայի ամենամոտ աֆրիկյան գաղթավայրն է:

Երբ Ալժիր դուրս եկա, նրա՝ եվրոպական ձևով շինված քաղաքամասը նվազ հետաքրքիր գտա: Անմիջապես բարձրանալ սկսեցի բլուրն ի վեր՝ տեսնելու արաբական թաղամասերը, որոնք նեղ ու ծուռտիկ փողոցներ ունեին: Նրանք վերին աստիճանի հետաքրքիր էին թե՛ իրենց ճարտարապետությունը և թե՛ բնակիչների բացօթյա կյանքով: Ամեն տեղ սրճարաններ, հարբեցողության վայրեր և պոռնկատներ: Պարզ տեսնվում էր, որ քաղաքակիրթ եվրոպան ամեն միջոցների դիմում է՝ գաղութների ժողովուրդները մղելու դեպի հաշիշ, արբեցողություն և պոռնկություն, որպեսզի նրանք ժամանակ չունենան իրենց անկախության մասին մտածելու:

Ալժիրից անմիջապես վերադարձա Փարիզ՝ դրած նպատակիս ծառայելու:

Այնտեղ իմացա, որ թյուրքիացի հեղափոխականները միացյալ կոնֆերանս պիտի ունենան՝ թյուրքիայում իրենց հեղափոխական գիծը որոշելու համար:

ԹՅՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ՓԱՐԻՉՈՒՄ

Համիդյան ռեժիմի ժամանակ միայն հայերը չէին, որ խողխողվում էին: Այդ հրեշը՝ Համիդը, հազարներով թյուրք երիտասարդներ և ուսանողներ ծովի մեջ խեղդել էր տալիս՝ ազատություն խոսքը շնչած լինելու համար: Հպատակ ժողովուրդների հետ թյուրք ժողովուրդն էլ ճխլտվում էր նրա կրունկների տակ: Ուրեմն՝ դժգոհությունը ընդհանուր էր, պետք էր, որ այդ բոլոր դժգոհները միացած պայքարեին բռնակալության դեմ: Ահա այս ուշ հասկացված հեղափոխական գործի համար էր, որ 1907-ի վերջերը ժոն թյուրքերի «Միություն և հառաջադիմություն» անունով կուսակցությունը նախաձեռնություն ունեցավ ժողովի հրավիրելու հայ «Հեղափոխական» կոչված կուսակցությունները Փարիզում: Այդ ժողովին մասնակցեց միմիայն Դաշնակցությունը և Մարսելում հրատարակվող «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուզալյանը, իսկ Հնչակյան կուսակցությունը ինքզինք հեռու պահեց:

Փարիզի այդ ժողովը տևեց երեք օր: Նա հետո հրատարակեց մի հայտարարություն, որից բերում եմ հետևյալ հատվածները.

«Թյուրքիայում գործող կուսակցությունների կոնգրեսը՝ դեկտեմբեր 27-29 գումարված Փարիզում, հայտարարում է, որ ընդունում է թյուրք կայսրության բոլոր ժողովուրդների համերաշխությունը, որոնք հավասարապես տառապում են երկրի վրա ծանրացող բռնակալ ռեժիմից, որ գարշելի է դարձել ամբողջ աշխարհի աչքին ներկա վեհապետի՝ Ապտյուլ Համիդ 2-րդի հրեշային ոճիրներով:

Ահա ինչու մենք պահանջում ենք.

- 1. Ապտյուլ Համիդի գահընկեցությունը:
2. Ներկա ռեժիմի արմատական փոփոխություն:

3. Մի ներկայացուցչական ռեժիմի հաստատում (պարլամենտ)»:

Կոչ էին անում ձեռք ձեռքի տալ և սուլթանի դեմ կռվել ամեն միջոցներով:

Սա մի հոյակապ խոստում և սկզբնավորություն էր, իսկապես եղբայրական կապեր հաստատելու համար՝ մինչև այդ իրար ատող տարբեր ազգությունների ճնշված ու շահագործված ժողովուրդների միջև:

Սակայն, դժբախտաբար, այդ միացած ուժերի հեղափոխական գործունեությունը հաստատուն հիմք չունեին: Նախ՝ թե՛ ժյոն թյուրքերը և թե՛ Դաշնակցությունը՝ նեղմիտ ազգայնական կուսակցություններ էին՝ իրենց ուրույն ձգտումներով, որոնք հակասում էին եղբայրական մերձեցման: Երկրորդ՝ ժյոն թյուրքերը շատ էին կառչած 1876-ի միտհատյան հնացած սահմանադրության՝ առանց նկատի առնելու, որ միևնույն կեղեքող ու տիրող դասակարգն է, որ պիտի մտնի պարլամենտ օրենսդնելու:

«Միություն և հառաջադիմություն» կուսակցության լիդեր Ահմետ Ռիզայի համոզումն ու ձգտումն էր՝ նախ և առաջ օսմանցի մկրտել թյուրքիայում ապրող բոլոր տարբեր ազգություններին:

Ահմետ Ռիզայի հետ մի քանի անգամ տեսնված եմ և մի անգամ էլ ինտերվյու արած եմ թիֆլիսում հրատարակվող և այն ժամանակ ձախ ուղղություն ունեցող մի թերթի կողմից:

Ժյոն թյուրք, այսինքն՝ «Միություն և հառաջադիմություն» կուսակցությունը, ավելի մեծ մասշտաբով ճիշտ նույն դերն ու մտայնությունն ունեն թյուրքերի մեջ, ինչ որ Դաշնակցությունը՝ հայերի մեջ: Ժյոն թյուրքերի մեջ միայն մի մարդ երևցավ ավելի լայնախոհ, դա իշխան Սապահետտինն էր, որը փորձեց ապակենտրոնացման ծրագրով մի կուսակցություն կազմել, բայց «Միություն և հառաջադիմություն» կուսակցությունը ամեն կերպ արգելք հանդիսանալով՝ նրան ասպարեզից հեռացրեց:

ԹՅՈՒՐԿԱՑ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես արդեն Փարիզում էի և մխրճված աշխատանքի մեջ: Ազատ ժամերին՝ էս ցուցահանդեսից էն ցուցահանդեսը, մյուզեից մյուզե, ընկերների մոտ՝ հեվիհե վազում էի, տեսնելու նրանց նոր ստեղծագործությունները, այնպես որ երբեմն նույնիսկ ճաշելու ժամանակ դժվարանում էի գտնել:

Հանկարծ հեռագիրներն ավետեցին, որ թյուրքիայում սահմանադրական ռեժիմ է սահմանվել: Այդ 1908 հուլիսի 10-ին էր: Ի՛նչ բերկրալի օր էր, ի՛նչ հրճվանք: Վերջապես՝ համիդյան գարշելի ռեժիմը տապալված: Թե՛ թյուրք ժողովուրդը և թե՛ հպատակ՝ դարերով տրորված ազգությունները իրավահավասար արևի ջերմություն ու լույս պիտի վայելեին: Օհ, էս ինչ կախարդական փոփոխություն...: Ամեն գործ մոռացած, պոլսեցի հայ և թյուրք ընկերների հետ ողջագուրվում և շնորհավորություններ էինք փոխանակում: Զերմապես ողջունելի էր կատարված այդ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որովհետև դա առաջին էտապն էր սոցիալական հեղափոխության հասնելու համար: Հեղափոխություն կատարող ժյոն թյուրքերը, որք ծաղկող բուրժուազիայի հառաջընթացներն էին, պաշտամունքի առարկա էին դարձել անխտիր:

Այն ժամանակ կուսակցությունը այսպես էր. թյուրքական նավատորմը, բանակի մեծ մասը, Պոլսո շրջանակից դուրս մնացած գավառները ժյոն թյուրքերի կողմն էին. միայն մայրաքաղաքի ու շրջակայից բանակն էր Համիդի հետ, որոնք զսպվում էին նավատորմի կողմից: Սակայն սուլթան Համիդը առայժմ՝ մի սև բծի պես մնաց իբրև սահմանադրական վեհապետ:

**ԹՅՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԱՐՅՈՒՆ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

Հեղափոխությունը թյուրքիայում բոլորովին հեշտ ու անարյուն կատարվեց նրա համար, որ այն ժամանակներ երկու հզոր կառավարությունների ներկայացուցիչներ՝ Անգլիո և Ռուսաց մինչ այդ անհաշտ կայսրերը Ռևելի տեսակցություն մեջ կարողացան համաձայնության գալ Մակեդոնիայի և Պարսկաստանի խնդիրներով: Ուրեմն թյուրքի համար ստեղծվեց մի մոտալուտ վտանգ: Այդ հայտնի վտանգի պատճառով էր, որ Սելանիկի բուրժուականորեն հեղափոխականացած երրորդ գորաբանակի ճնշման տակ՝ Համիդը ստիպված միտհատյան սահմանադրությունը նորից հրապարակ հանեց: Այդ սահմանադրությամբ ժյոն թյուրքերը միանգամից երկրի կառավարությունը իրենց ձեռքը վերցնելով՝ Համիդին էլ հսկողության տակ առին:

Ժյոն թյուրքերի դեկզն էր. «Թյուրքիան թյուրքերին»: Նրանք դեն շարտեցին համիդյան պանիսլամիզմը և նրա տեղ ընդգրկեցին պանթյուրքիզմը, որ առնվազն մինչև Միջին Ասիայի արևելյան եզերքները՝ մեծ թյուրքական կայսրություն ստեղծելու մի ցնորամիտ երազ էր: Ծիշտ այնպես, ինչպես դաշնակցությունը ցնորամիտ երազ ուներ՝ ծովից ծով Հայաստան:

Տեսնում եք, նեղ ազգայնական կուսակցությունների մեջ նման մտածողություններ հաճախ են պատահում:

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՅՈՆ ԹՅՈՒՐՔԵՐԻ
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ**

Դաշնակցությունը Փարիզի համաձայնություններից ելնելով, հաստատվեց Պոլսում կարևոր դիրքով: Մնում էր, որ նա վերանորոգվեր: Այսինքն՝ թողուր Եվրոպայի պաշտամունքը և հայդուկային գործելակերպը ու լծվեր թյուրքիայի ներքին բարենորոգման գործին, որից հավասարապես օգտվեին հայերն էլ: Դաշնակցությունը այդ բանը չանելով հանդերձ՝ շատ սերտ բարեկամական հարաբերություններ սկսեց ժյոն թյուրքերի հետ:

Երիտասարդ թյուրքերի կուսակցությունը և թյուրք մամուլը ցանկություն ունեին Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը ոչնչացնել, որպեսզի այդ դաշնագիրն ստորագրող պետություններից որևէ մեկը պատեհություն չունենար միջամտելու թյուրքիայի ներքին գործերին: Բայց «Դաշնակցությունը չուզեց զրկվել այդ անպետք ու արյունոտ ժառանգությունից»:

Այս վարմունքը մի կաթիլ կասկած խառնեց թյուրք և դաշնակ բարեկամության մեջ: Թյուրքերը մատնանշում էին, որ սահմանադրության վերականգնումից հետո, երբ իբր թե հայկական խնդիրը լուծված է, ավելորդ է դաշնակցության հեղափոխական անուն կրելը: Դաշնակցությունը չնդունեց այդ էլ:

Դաշնակցությունը սկսեց թյուրքիայում «սոցիալիստական» գործունեություն, որովհետև երկրորդ ինտերնացիոնալին միացել էր ձևականորեն:

Մեծ տաղանդով օժտված Երվանդ Օտյանը իր՝ «Առաքելություն մը ի Մալվար» սքանչելի գործին մեջ իրավացիորեն կծու կերպով ծաղրած է Դաշնակցության սոցիալիստական գործունեությունը:

Հանգուցյալ Լեոյի «Անցյալից» անվանված գրքից բերում եմ մի փոքրիկ հատված՝ այն ժամանակվա Դաշնակցությանը բնորոշող.

«Եվ այսպիսով՝ ապագայի համար հուսատու հանգամանքներ շատ չէին երևում: Դաշնակցությունը չէր գիտակցում, թե ինչ ահագին պատասխանատվություն էր վերցրել իր վրա՝ իբրև միակ խոշոր քաղաքական կազմակերպություն, որ իր ձեռքն էր առել ամբողջ հայության ճակատագիրը: Ստեղծագործող միտք նա առաջ չբերեց և այս անգամ, երբ նորից ու նորից հայ ժողովրդի կյանքի ու մահվան առեղծվածն էր դրված: Նա էլի շարունակեց հին հայդուկային կազմակերպությունը և Եվրոպայի՝ արդեն հարյուր անգամ արատավորված պաշտամունքը: Դաշնակցականները զինում էին հայ ժողովուրդը: Նրանցից հետ չէին մնում և հնչակյանները:

«Դրոշակ»-ի խմբագրությունից Պոլիս էին ուղարկվում հայդուկային գրականություն և նկարներ: Վերանորոգվում էր հին կյանքը, անջատ ազգային ինքնօրինակության գաղափարը ուռճացնում էր: Թյուրքերը իհարկե տեսնում էին այս բոլորը:

Դաշնակցությունը մտել էր ամեն տեղ, տիրացել էր բոլոր ազգային, հասարակական, կրթական հաստատություններին: Ազգային ժողովի մեջ նա էր ուղղություն սփռողը: Եվ նրա ուժը առաջվա պես հենվում էր զինվորական կազմակերպության վրա: Հաջողություններից ամբարտավանության ծայրը հասած՝ նա երևակայում էր իրեն ռազմական մեծ կարողության տեր, պատրաստ կռիվ սկսելու ամեն տեղ:

Պարոն Մալումյանը (Ակնունի) Կ. Պոլսի ազգային ժողովի նիստում ողջունելով նորընտիր Իգմիրլյան կաթողիկոսին, խորհուրդ էր տալիս նրան, Ռուսաստան գնալուց հետո, կռվել ռուսական բռնակալության դեմ, ասում էր, թե այդ կռվի համար նրա տրամադրության տակ կլինեն Ռուսաստանում եղած դաշնակցական բոլոր ուժերը: Ծիշտ որ դոնքիշտությունը ավելի հեռու գնալու տեղ չունեն:

Երբ Ակնունին Պոլսում այդպես էր խոսում, թյուրքերին հաճելի լինելու և իրենց արտոնյալ դիրք ստեղծելու համար էր: Ակնունին ըստ իր խառնվածքին չէր կարող ամբոխավարություն չանել:

ՀԱՄԻՂԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏ ԽԼԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԵՎ ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Ժյոն թյուրքերն ու դաշնակցությունը իրենց բարեկամության մեղրալուսնի մեջ էին, երբ հանկարծ Յըլդըզին հսկող այլբանացի կաշառված զորագունդը և Պոլսի ռեակցիոն սահմանադրականները մեծ ցույց արին՝ պահանջելով ջնջել սահմանադրությունը: Պոլսո շրջակայքի զինվորական մասերն էլ միացան այս ցույցին, որը կատարվեց 1909 թվի մարտի 31-ին:

Համիդի սարքած այս հարվածը պառլամենտական ռեժիմի դեմ՝ մեծ սարսափ առաջացրեց ժողովրդի մեջ: Բայց Սելանիկի երրորդ զորաբանակը կայմակի արագությունը հասավ և ճգմեց այդ ըմբոստությունները: Ծիշտ այդ ատեններն սկսեց Ադանայի կոտորածը:

Երեսուն հազար անմեղներ սրախողխող եղան: Ժյոն թյուրքերը լուր տարածեցին, թե Համիդի հրամանով կատարված է այդ եղեռնը, բայց իրենք ձգտեցին ծածկել այդ խնդիրը: Դաշնակցական մեպուսները (պառլամենտի պատգամավորներ) լուրջությամբ պահանջեցին պառլամենտի մեջ: Այդ առթիվ «Բյուզանդիոն»-ի կարող խմբագիր Քեչյանը գրեց. «Եթե խոսելն արծաթ է, լուին էլ ոսկի է, որ դաշնակ մեպուսներ ամեն ամսու ստանում են պետական գանձարանից»: Այդ տողերի համար դաշնակցական խուժանը, հարձակվելով Քեչյանի վրա, նրան ծեծի ենթարկեց և վիրավորեց: Միայն հայոց պատրիարք Դուրյանը բողոքեց և իր հրաժարականը ուղարկեց Բարձրագույն դուռ: Դաշնակցությունը զայրացած՝ պահանջեց պատրիարքից, որ իր հրաժարականը հետ վերցնի, բայց Դուրյան եպիսկոպոսը անդրդվելի մնաց:

Ժյոն թյուրքերը խոստացան դաշնակցության՝ պառլամենտի մեջ նրանց ունեցած տասնմեկ մեպուսների թիվը

քսանի բարձրացնել՝ առանց աղմուկի փակելու համար Ադանայի սարսուզողեցիկ կոտորածի խնդիրը:

«Թայմզ»-ի Պոլսո թղթակիցը իր թերթի մեջ Ադանայի եղեռնը հասհատ տվյալներով ժյոն թյուրքերին վերագրեց:

Երիտասարդ թյուրքերը լիովին չուզեցին կատարել իրենց՝ դաշնակցական մեպուլանների թիվը քառասունի բարձրացնելու խոստումը:

Կարծես թե ժյոն թյուրքերի և դաշնակցության բարեկամության մեղրալուսինը դժգունում էր:

Թյուրքիայի հայերը, որք մի պահ ուրախության օրեր ապրեցան, Ադանայի ջարդով հանկարծ տխրեցին և կասկածամիտ դարձան: Նրանցից շատերն սկսեցին մտածել, չլինի թե մենք նորից Համիդին փնտրենք:

Համիդի սարքած դավը սահմանադրության դեմ՝ ստիպեց պառլամենտի անդամներին ապաստանել Սան-Ստեֆանո և այնտեղ նավատորմիդի պաշտպանության տակ ժողով գումարել, այդ ժողովը միաձայնությամբ վճռեց Համիդի գահընկեցությունը: Ընտրվեց երեք անձերից բաղկացած պատգամավորություն՝ մեկ թյուրք, մեկ հույն և մեկ հայ անդամներից, որոնք մեկնեցին Պոլիս՝ սուլթանին հայտնելու պառլամենտի որոշումը: Պատվիրակության պետը թյուրք անդամը, որին հանձնարարված էր հայտնել սուլթանին ժողովի որոշումը, ճանապարհին խնդրում է իր հույն ընկերոջ, որ նա խոսի սուլթանին՝ առարկելով, թե ինքն իբր իսլամ երկար տարիներ հարգել է մարգարեի փոխանորդ Համիդին, հիմա չի հանդգնիր նրա ներկայության հայտարարություն անել: Հույն ընկերը մերժում է, որովհետև իր թյուրքերեն արտասանությունը շատ վատ է, հետևապես խնդրում է պատվիրակության հայ անդամ Երեմ Բեյին, որ նա հայտարարի: Նա համաձայնում է: Պատվիրակությունը մտնում է կայսերական պալատը, ապահովված Յըլդըզի վրա ուղղված զրահավորների թնդանոթներով: Համիդը գահընկեց է լինում 1909 թվի ապրիլի 14 ին:

Ադանայի վշտառիթ կոտորածների ոճրագործներից ոչ մի մարդ պատժվեց և արդեն կանոնավոր քննություններ էլ չթույլատրվեցին:

Ես աշխատել եմ, որ իմ սուբյեկտիվ մտածումները չարտահայտվեն, բայց ճշմարտությունը պարտավորեցնում է ասել, որ թե՛ սուլթանական և թե՛ ժյոն թյուրքերի թյուրքիան հայերի արդար պահանջներին երբեք չի պատահել, որ բավարարություն տան:

Ժյոն թյուրքերն էլ, իրենց նախորդների նման, միայն արտաքին քաղաքականությամբ զբաղվեցին և ներքին բանորոգումների խնդիրներին բնավ չմոտեցան:

Ժյոն թյուրքերը իրենց դիրքերն ամրացնելու պետք ունեին, պայքարելով պահպանողականների և ազատամիտ Սաբահետտինին համակրողների դեմ: Այդ պայքարների համար Դաշնակցության գործակցությունը պետք էր իրենց: Ուրեմն Դաշնակցության և ժյոն թյուրքերի բարեկամությունը շարունակվում էր: Նույնիսկ Ակնուուու և մեծագույն ստախոս Թալաթի բարեկամությունը սերտ ընկերական էր: Հետո ապագան ցույց տվավ, թե ինչ սոսկալի կեղծիք կար այդ բարեկամության մեջ:

Կ. ՊՈԼՍՈՒՄ

Օսմանյան սահմանադրության հռչակվելուց հետո այլևս բոլոր քաղաքական «հանցավորներն» իրավունք ունեին վերադառնալու իրենց հայրենիքը: Ես էլ 1910 ին Փարիզից ճամփա ելա դեպի Պոլիս, բյուզանդական արվեստի այդ մեծ օրրանը, որի մասին շատ էի կարդացած:

Երբ մեր նավը, Մարմարա ծովուց դուրս ելնելով, մոտենում էր Ղալաթիո, ես նավի կամրջակի վրա կանգնած, հուզումնալից ուրախությունով արբշիռ, ի տես այդ շրջապատող գեղեցկությունների, այրվում էի նրանք շուտով վայելիլու ու նկարելու տենչանքից:

Տեղավորվեցի Բերայի կողմնակի փողոցներից մեկում: Առաջին օրերը գտա իմ պատանեկության և դպրոցի ընկեր Մարտիրոս Պոլյանին, որ Պոլսո գեղարվեստի դպրոցն ավարտելով՝ Յըլզըզի հախճապակյա գործարանի վարպետ էր դարձած: Նրա հետ առավոտից մինչև երեկո թափառում էինք Պոլսո զանազան տեղերը՝ առայժմ ծանոթանալու բոլոր աննման և գեղատեսիլ անկյուններին, որոնք ես պիտի նկարեի:

Ման էինք գալիս Ոսկեղջյուրի հիանալի ափերը, ուր էյուլպի գեղեցիկ գերեզմանոցից հոյակապ տեսարան էր բացվում: Հոգնելիս՝ մտնում էինք խորովածի խանութը՝ մեր սպառած եռանդի փոխարեն նոր սնունդ ստանալու: Նրանք թարմ մսի փոքրիկ կտորները խորովում էին կարճ ու բարակ փայտյա շշերով, յուրաքանչյուրի վրա անցկացնելով երեքական կտոր: Մենք, հոգնած ու քաղցած, սեղանի մոտ նստելով՝ պատրաստ էինք ոչնչացնելու այդ կերակուրների թագավորը այնպես, ինչպես ցանկանում էինք ոչնչացնել աշխարհիս բոլոր թագավորներին: Մատուցողները մեկը մյուսի ետևից բերում էին այդ տաք, ծխացող ու բուրմունքավետ խորովածը շշիկների վրա, որոնցից շատ հեշտությունամբ տասնյակներով կարելի էր ուտել՝ սառ գարեջրի ըն-

կերակցությունամբ: Պետք է ասել, որ էյուլպի կողմերը մեծ մասամբ մատուցողները պատկառելի ծերունիներ էին, որոնց մորուքով ու ժպտացող դեմքերը դուրեկան էր տեսնել, բայց ես նստած ճնշվում էի, երբ նրանք ոտքի վրա ծառայում էին:

Նույնպես Ոսկեղջյուրի ափին է Գահրիբ Ջամին: Այդ մզկիթը հին հունական եկեղեցի է եղել, հետո այրվել է, ներկայիս այդ մզկիթի մեջի պատերը ճերմակ են, միայն պատերից մեկի վրա բրոնզով մի ոտքի տակ (ներբան) կար նկարված:

Մզկիթը հարավից և արևելքից լայն գալերիներ ուներ, որոնց պլաֆոնները բյուզանդական շրջանից մնացած և Քրիստոսի կյանքը ներկայացնող մոզայիկով կառուցված նկարներ էին ծածկում: Այդ գալերիների մոզայիկները, ազատվելով հրդեհից, մինչև այսօր մնում են թարմ տեսքով: Նրանք գիտական և արվեստի աշխարհի սքանչացման առարկա են, որովհետև աշխարհիս լավագույն մոզայիկներն են: Այն տարիներին Պոլսում կար ցարական Ռուսաստանի մի ինստիտուտ, որ Գահրիբ Ջամիի այդ մոզայիկները լավագույն կերպով հրատարակեց՝ Պետերբուրգի կայսերական փողեր (դրոշմաթղթեր) հրատարակող գործարանում:

Հաջորդ օրերը մենք Բոսֆորի գեղեցկությունները դիտելով էինք զբաղված, հետո հոյակապ Իշխանաց կղզիների տեսարանները և ուրիշները, որոնք մեկը մյուսի հետ մրցում էին:

ՊՈՒՍՏԻ ՄՅՈՒՋԵՆԵՐԸ

Պուստում կար երեք մյուզե. մեկը՝ ենիչերինների՝ պատմական, մյուսը՝ գեղարվեստական հնագիտական, և երրորդ՝ կրոնական (իվգաֆի): Գեղարվեստական մյուզեն իր արձանների, դամբարանների, բարիլեֆների նմուշներով՝ եվրոպայի առաջնակարգ մյուզեներից մեկն է:

1820 թվին Հունաստանում Միլո փոքր գյուղից մի Գաստրոն անունով երկրագործ հող վարելիս բացավ Վենուսի զարմանալի գեղեցիկ արձանը, որ այժմ Լուվրի թանգարանի զարդն է կազմում:

1887 թվին Սիրիայի Լիբանան գավառում Սայիդա (Սիդոն) քաղաքի շրջակայքը գտնվող մի գյուղում՝ Մեհմետյանի անունով գյուղացին իր արտը փորած ժամանակ մի նկուղ բացավ, որի մեջ բացի ուրիշ գործերից, հայտնվեց Աղեքսանդր Մեծի աշխարհահռչակ դամբարանը:

Օրհնյալ լինեն այդ գյուղացիները և իրենց աշխատանքը:

Աղեքսանդր Մեծի դամբարանը, որ այժմ Պուսո գեղարվեստական մյուզեումն է գտնվում, համաշխարհային արվեստի հազվագյուտ սքանչելիքներից մեկն է: Սքանչելի են նրա քանդակները, սքանչելի է նրա ճարտարապետությունը և սքանչելի նրա բազմերանգությունը (polichromie): Ուրեմն այդ աննման գործը սինթեզն է երեք արվեստների:

Այդ մարմարիոնը բարձրորեն հայտարարում է իր աստվածային գեղեցկությունը հավիտենականությունը:

Այդ դամբարանը աշխարհումս գտնված աննկարագրելի գեղեցկությունը յոթից ութ մեծագույն գլուխգործոցներից մին է:

Փոքր Ասիայի քիչ պեղումների ենթարկված կուսական հողը ով գիտի ինչ գեղարվեստական գանձեր ունի իր ընդերքում:

Ով է այն հանճարը, որ իր կայծակնալից ստեղծագործու-

թյամբ կերտել է այդ գործը, որոշապես հայտնի է: Փոքրիկ տվյալներով Լիսիպին և Լեոչարիսին են վերագրում, որը շինված պետք է լինի Աթենքում:

Դամբարանի մի երեսի և երկու ճակատների վրա Մեծն Աղեքսանդրի և Պարսից Դարեհի կուրսերն են քանդակված, իսկ մյուս երեսի վրա՝ պարսիկների և հույների միասնական որսորդությունն է՝ առյուծների, հովազների և եղջերուների վրա: Ենթադրվում է, որ այդ գործը Աղեքսանդր Մեծի կենդանությունն է սկսել կերտվել:

ԵՐՎԱՆԻ ՕՏՅԱՆ

Այն ճաշարանը, ուր ես շուտ-շուտ էի այցելում, այնտեղ ծանոթացա Երվանդ Օտյանի և Արամ Անտոնյանի հետ, ուր ճաշերին հաճախ էինք հանդիպում: Օտյանը, տեսնելով, որ ձեռներս դողում են, խորհուրդ էր տալիս օղի խմել: Ասում էր, որ առավոտներ իր ձեռներն էլ դողում են. «Բայց երբ սկսում եմ այս պատվական նեկտարը՝ օղին խմել, այլևս դողը դադարում է և սկսում եմ գրել»: Ապացուցելու համար, թե ինչպես օղի խմելուց հետո իր ձեռների դողը բոլորովին դադարում է, նա օղիի ըմպանակը լեցուն դնում էր աջ ձեռքի երեսի վրա, զայն օղի մեջ պտտեցնելուց ու խաղացնելուց հետո՝ մոտեցնում ու խմում էր՝ առանց ըմպանակը բռնելու:

Այդ մեծատաղանդ հումորիստը օրական առնվազն երեք հոգված էր գրում զանազան թերթերի մեջ, գլխավորապես ապրուստի համար: Իր գրելու ձևն էր՝ տառերը առանձին առանձին գրել և մաքուր առանց սրբագրելու: Նրա գրածները այս ու այն թերթի կողմից եկած մարդիկ, կարելի է ասել, խլիլելով տանում էին տպարան:

Երբ ես ծանոթացա Օտյանին, նա ի միջի այլոց զբաղված էր թարգմանելով Ռենանի գրած «Բրիտտոսի կյանքը»:

Լինելով անհավատ՝ երգիծանքի էր ենթարկում թե կրոններն և թե աստվածություններն, ճիշտ այնպես, ինչպես սուր երգիծանքի էր ենթարկել իր անմահ «Մապլվար»-ով Դաշնակցության սոցիալիստական գործունեությունը:

ՀԱՅ ԿԱԹՈՒԼԻԿ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ կաթոլիկ մտավորականությունը ընդհանուր առմամբ նկարչական արվեստը ավելի էր սիրում և հասկանում: Սուլթան Համիդը, նրանց ավելի վստահելով, ազատություն էր տվել ճամփորդել և սովորել Եվրոպայում ու շփվել եվրոպացոց հետ: Այդ վստահության շնորհիվ կաթոլիկ զարգացած տարրերը պետական բարձր պաշտոնների էին կանչվում, որով նրանց նյութական վիճակն էլ ավելի լավ էր:

Սագրզ Օհանես Փաշայի տղան՝ Արմենակ բեյը, օսմանյան ընդհանուր հաշվակալության նախագահը, որ մեծ էրուզիցիա ուներ իսլամական արվեստների մասին, և որը «Պարսկական մինիատյուրաներ» անունով մի խոշոր գիտական և արժեքավոր գիրք ունի հրատարակած, այդ համակրելի մարդը մի առավոտ անակընկալ կերպով սենյակս մտավ: Բարեկուց ու ինքզինք ծանոթացնելուց հետո թույլտվություն խնդրեց նկարներս տեսնելու: Նա ուշի-ուշով բոլոր նկարները դիտեց և գոհունակություն հայտնելով՝ հեռացավ: Ահա այդ մարդն էր, որ ինձ գուրգուրանքով շրջապատեց և ծանոթացրեց կայսեր արարողապետ Իսմայիլ Զենանի բեյին և ուրիշ բարձրաստիճան մարդկանց ու հայ կաթոլիկ բարձր հասարակության հետ: Ես ծանոթացա Փորթուզալ փաշայի արիստոկրատ ընտանիքին, այն Փորթուզալ փաշայի, որ Նարեկացին թարգմանած էր աշխարհաբարի: Մորլիների ընտանիքին, գեղեցկուհի և ամիրայական շառավիղ մադամ Տյուզին, որը Փարիզի համալսարանում երկու ֆակուլտի էր ավարտած: Նրա պորտրեն նկարելով՝ մասնակցեցի տեղական նկարիչների ցուցահանդեսին: Ահա այդ ցուցահանդեսումն էր, որ ես ծանոթացա գեղարվեստի դպրոցի ուսուցչության և թյուրք նկարիչների հետ:

ԹՅՈՒՐՔ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԻՑ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

Թյուրք նկարիչների ամենակարկառուն դեմքը՝ Համտի Բեյը վախճանել էր: Մնացածները երկրորդական աստիճանի արվեստագետներ էին: Իսկ Թյուրք երիտասարդությունը մեջ արժեքավոր ուսանողներ կային, որոնցից լավ նկարիչներ ասպարեզ եկան, ինչպես՝ Չուլի Իբրահիմ, Ֆայհան Բեյ, Սամի Բեյ և մի քանի ուրիշներ, որոնց անունները մոռացել եմ: Թյուրք ուսանողության սովորեցրել էին իտալական կրթությունը մարդիկ, և հանգուցյալ Համտի Բեյը:


Ուսուցչական կազմի մեջ երեք հայտնի մարդիկ կային՝ երկու իտալացի և մի հայ քանդակագործ Ոսկան անունով: Նրանցից էր տաղանդավոր ճարտարապետ Տը-Վալերին: Հետո յուզանկարիչ Վալերին, որը մի քանի տասնյակ տարիներ թե գեղարվեստից դպրոցում և թե գահաժառանգ Մեջլիս էֆենդիին դաս էր տվել: Աշակերտները պատմում էին, թե երբ մենք ազատորեն սկսեցինք աշխատել, Վալերին գալիս, պահանջում էր դանակով քերթել այդ քսվածները, ու հետո լիզած աշխատանք տանել, ուրեմն երկար տարիներ այդ ուսուցիչը սպանել էր աշակերտների ազատությունն ու նախաձեռնությունը:

Թյուրք նկարչական արվեստի ուսանողներից շատերը մտերմացան ինձ հետ և ես նրանց սիրեցի, ապա իմպերիալիստական պատերազմը եկավ խանգարելու ամեն ինչ:

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ

Այդ ժամանակները ես փոխադրվեցի Բանկալթի ուղիղ փողոցի վրա, տաղանդավոր կոմպոզիտոր Կոմիտասի հետ միասին բնակվելու մի տան մեջ, որը ամբողջովին երկուսիս էր պատկանում:

Այդ տան վարի հարկում, փողոցի վրա մի սիրուն սենյակ կար, որ ճաշարան դարձրինք, հետո վեստիբյուլ, արևմտյան կողմ խոհարարի սենյակ և խոհանոց, որք նայում էին փոքրիկ ծաղկանոցի վրա: Երկրորդ հարկում մի մեծ սենյակ փողոցի վրա, դուրս ընկած, բայց սենյակի մաս կազմող պատշգամբով: Այդ սենյակը Կոմիտասի աշխատանոցը և ընդունարանն էր, ուր տեղավորված էր նրա մեծ պիանոն և Ֆիդ-հարմոնը: Կոմիտասի սենյակից դեպ արևմուտք՝ նորից վեստիբյուլ, ու հետո երկու սենյակներ, որք հատկացված էին իմ նկարներին:



Կոմիտասը քնած. 1910-12
(Չայաստանի ազգային պատկերասրահ)

Երկրորդ հարկում փողոցի կողմ կար երկու սենյակ, որոնց մեջտեղի պատը քանդել տալով՝ աշխատանոցի վերածեցի: Աշխատանոցիս արևմտյան կողմ եղող երկու սենյակները ննջարանների հատկացրինք:

Կոմիտասի հետ մենք վաղուցվա բարեկամներ էինք: Միասին եղել էինք կաթողիկոսների ամառանոց Բյուրականում, ուր Եղիշե Թադևոսյան մի ծառաստան պարտեզում իր կնոջ Ֆրիգուերան էր նկարում: Այդ նկարը հիմա գտնվում է մեր պետական թանգարանում: Երեքուկ միասին ճաշերից հետո Ծոփանեսս կոչվող գետակի ափերն էինք զբոսնում: Այնտեղ էր, որ Կոմիտասը իր զգայուն ու զմայլելի երգերով



մրցում էր Ծոփանեսսի խոխոջացող ջրերի հետ: Այնտեղ էր, ուր ես առաջին անգամ ծանոթացա մեծ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին, որ Համբերդ որսի գնալիս մեզ հանդիպեց:

Կոմիտասի հետ վարդավառին մենք միասին եղել ենք Մասիսի փեշերի վրա Զորավանքի ավերակներում, երբ Սուրմալուի գյուղացիութունը ուխտի էր գալիս և 5-6 օր շարունակ հարս ու աղջիկներ և երիտասարդություն երգում ու պարում էին, որոնց ուշի ուշով հետևում ու ձայնագրում էր Կոմիտասը:

Կոմիտաս. 1910-12 ծանց ցատու (Հայաստանի ազգային պատկերասրահ)

Նրա հետ միասին եղել ենք եզդիների ցեղապետանիստ Ասլանլու գյուղում, ուր Մուսուլից՝ եզդիների կրոնական կենտրոնից, տարին մի անգամ գալիս էրն կավալներ (կրոնական երաժիշտներ) երգելու ու նվագելու իրենց գրեթե հեթանոսական երգերը, որոնցմով ոգևորում և կապում էին իրենց հոտը կենտրոնին և նվերներ հավաքում նրա համար:

Եզդիների ցեղապետը, սովորած լինելով ճեմարանում, ընկեր էր Կոմիտասին: Ես նրանց երկուքին միասին նկարեցի մի աղբյուրի գլխին: Այդ նկարը ծախված է Պոլսո իմ ցուցահանդեսում:

Կոմիտասի հետ միասին եղել ենք Կողբա աղահանքերում աշխատող բանվորների մոտ, ուր նա նրանց աշխատանքի երգերն էր ձայնագրում, և ես էտյուդներ էի անում:

Ուրեմն՝ տարիներ անց սուլթանների մայրաքաղաքում մենք նորից ընկերացանք՝ ապրելով մի տան մեջ, ուր սնվում էինք միևնույն սեղանից, և ուր մեր հոգիներն էլ հիշողություններով հագուրդ էին ստանում մեր դարավոր կուլտուրայի ավանդույթներից:

Այնտեղ, այսպես ասած՝ մեր անկուսակցական տունը մշակույթի օջախ դարձավ զանազան ազգությանց կուլտուրական անհատների համար:

Հուլյն գիտնականներ կային, որոնք գալիս էին Կոմիտասի հետ խորհրդակցելու եկեղեցական խազերի ծագման մասին: Թյուրքեր կային, որոնք գալիս էին խորհրդակցելու Պոլսում երաժշտանոց և օպերա ստեղծելու մասին և այլն, և այլն:

Կոմիտասը երեք հարյուր մարդուց բաղկացած երգեցիկ խումբ կազմեց, որոնց կեսը իրական սեռին էին պատկանում: Մոտ վեց շաբաթվա մեջ սովորեցրեց նրանց երգել: Այդ խմբի անդամներից կային այնպիսիներ, որոնք երաժշտության այբուբենին անծանոթ էին: Նա թե գիտության և թե կառավարելու արվեստի տեսակետից շատ ուժեղ լինելով՝ իր չափազանց զվարթ բնավորությամբ բոցավառեց աշակերտների սերը դեպի հուզական երաժշտությունը և համակեց նրանց հոգիները ճաշակավոր և ազնվացող արվեստով:

Նրա կոնցերտների վեցամսյակին արդեն Պոլսո և շրջապատի ժողովուրդները սկսեցին կրքոտ կերպով երգել հայ

գեղջուկ երգեր: Կարելի է համարձակորեն ասել, որ մինչ այդ ժամանակ երգված գուեհիկ ու վավաշոտ երգերը դուրս վոնդվեցին գործածությունից:

Դա մի վիթխարի հաջողություն էր կուլտուրայի զարգացման տեսակետից:

Մասսաները սիրում էին կոմիտասյան երաժշտությունը, որի հմայքը հսկայական էր:

Լավ հիշում եմ, որ օսմանյան հանրային գործոց մինիստրի տեղակալը՝ Ֆրանսացի Պ. Հյուսթերը, որ հաճախ այցելում էր մեզ, «Քելեր ցոլեր» երգելով էր բարձրանում մեր սանդուղքները: Իտալացի համբավավոր պիանիստներ կային, որոնց հաճախակի հանդիպում էի Կոմիտասի սենյակում՝ խառնված նրա աշակերտների հետ, ունկնդրելիս նրանց փորձերը:

Կոմիտասի աշակերտները պաշտում էին նրան և դրա համար խղճամիտ կերպով աշխատում, սովորում և առաջադիմում էին: Նրա աշակերտներից ութ հոգի կարող խմբավարներ դարձան, որովհետև Կոմիտասը նրանց հետ մասնավոր զբաղվում էր: Նրանք մինչև այսօր Պոլսում, Ափրիկայում և Եվրոպայում հայ արվեստը մասսաներին տալու իրենց օգտակար գործը շարունակում են:

ԿՈՄԻՏԱՍԻ ԾԱԳՈՒՄԸ, ԱՌԱԾ ՈՒՍՈՒՄԸ ԵՎ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոմիտասը ծնվել է Փոքր Ասիայի Քյոթահիա քաղաքում, որ հնում եղել է Սելջուկյանների մայրաքաղաքը, իսկ այժմ Պրուսայի կուսակալության մեջ է մտնում: Հիշյալ քաղաքի փոքրաթիվ հայերը ութ հարյուր տարի առաջ գաղթած են Ագուլիսի Յղնա գյուղից, հասնելով Վանի լճի ափին, երկու տարի մնացել են Արճեշում, ապա նորից գաղթել և հասել են Քյոթահիա:

Այս տեղեկությունները ես քաղել եմ Քյոթահիո եկեղեցում եղած մի հին երկաթագիր ավետարանի հիշատակարանից:

Քյոթահիո հայերը մի մասնագիտություն ունեին՝ նրանք քարի մի տեսակ կար, որ մշակելով խմորի էին վերածում և նրանից վազեր ու ամաններ շինում (Ֆայանս): Այդ ամանների վրա նրանց հարսն ու աղջիկները նկարում էին այն գույներով, որոնք ստանում էին բույսերից ու քարերից: Այդ բոլորը գաղտնիք էր, որ իրենց մեջ էին պահում: Ոչ ուրիշ տեղի հայերին և ոչ էլ թյուրքերին չէին հաղորդում: Նրանց գծագրության և գույների մեջ ըստ իս պարսկական արվեստի տարրեր կային:

Քյոթահիո հայ գաղութը թրքախոս էր, որովհետև թյուրքերը նրանց պապերի լեզուները կտրած էին ժամանակին՝ հայերեն խոսած լինելու համար: Ուրեմն Կոմիտասը մանկությունից թրքախոս էր և աղքատ ընտանիքի և հարբեցողի զավակ:

Պոլսո պատվիրակը, ըստ Գևորգ կաթողիկոսի հրամանին, ընդունակ աշակերտները ուղարկում է էջմիածնի նոր բացված ճեմարանում սովորելու համար: Կոմիտասն էլ այդ ընտրյալների մեջն է ընկնում և ճեմարան հասնելուց հետո, շուտով հայերեն է սովորում ու մեծ ընդունակություն է ցույց տալիս եկեղեցական երաժշտության մեջ:

Հետո նա Սողոմոն սարկավագ անունով վանքի երաժշտական խմբի վարիչն է դառնում:

Ճեմարանն ավարտելուց հետո վարդապետ է ձեռնադրվում ու մի քանի ժամանակ թափառում է գյուղացիների մեջ՝ սովորելու համար նրանցից և միևնույն ժամանակ ուսումնասիրում է գեղջուկ երգերը: Ի վերջո նա մեկնում է Բեռլին, ուր ժրջան աշխատությամբ երաժշտության հետ սովորում է և լեզվաբանություն: Վերադառնալով Կովկաս՝ նա ինքզինք նվիրում է ժողովրդական երաժշտության ուսումնասիրման:

Կոմիտասը չափազանց ուրախ և չափազանց աշխատասեր էր: Նրա բնավորությունը միալար չէր, նա խիստ դյուրագրգիռ և երբեմն էլ բարկացող էր: Սակայն նրա բարկությունը նման էր քամիներից քշվող ամպի ծվեններին, որոնց միայն մի վայրկյան է հաջողվում արևի լույսը խափանել, բայց այդ ծվենների արագորեն անցնելուց հետո՝ նորից արև, նորից զվարթություն և նորից ծիծաղ է տիրապետում:

Կոմիտասի զգայուն հոգին տառապում էր ուրիշների վշտերով: Նա հեռուներ գտնվող իր ընդունակ, բայց չքավոր աշակերտներին օգնում էր հնարավորին չափ:

Կոմիտասը մի մեծություն էր, որ լուսատու գիսավորի նման երևաց մեր գեներթի վրա և անցավ, բայց թողուց մի լուսավոր հետք, որ չի ջնջվիր:

Մի անգամ, երբ ես իմ աշխատանոցումն էի, խոհարարը եկավ, թե ոսկի զարդերով մի կառք կա կանգնած դռան և քեզ են հարցնում: Վար իջա, տեսնեմ կայսեր արարողապետը՝ Իսմայիլ Ջանանի բեյը, որ կառքի միջից թույլտվություն խնդրեց նկարներս տեսնելու:

Բարձրացանք մեր տան երկրորդ և երրորդ հարկերը, ուր նա ուշի-ուշով դիտեց բոլոր նկարները: Վար իջնելիս, երբ Կոմիտասի սենյակի դռան առջևից էինք անցնում, ասի որ չէի՞ք բարեհաճում Կոմիտաս էֆենդիին ծանոթանալ: Նա պատասխանեց. «Կուզեի, բայց կրնա լինել, որ խանգարեմ»: Ասացի. «Բնավ չեք խանգարի» և Կոմիտասի սենյակի դուռը բանալով՝ ներս հրավիրեցի: Նրանք ծանոթացան և արարողապետը ոտքի վրա դիտեց այդ սենյակում կախված իմ

նկարները: Սուրճ խմելուց հետո ինձ դարձավ. «Ձեմ համարձակում, թե ոչ պիտի խնդրեի Կոմիտաս էֆենդիին որևէ մի բան նվագել կամ երգել»:

Կոմիտասը, լսելով այդ կամացուկ և ֆրանսերենով ասված նախադասությունը, անմիջապես գնաց պիանոյի մոտ և ինքն իրեն ակոմպանրման անելով՝ երգեց Շուբերտից գերմաներեն մի երգ, այնչափ խորունկ զգացումով, որ մենք քարացել էինք: Նրա վերջացնելուց հետո էլ բավական ժամանակ լուռ էինք, երբ Թյուրքիո այդ նուրբ դիվանագետը, ինքզինք չկարողանալով զսպել, ձեռքը սեղանին խփեց և ասաց. «Sapristi! (սափրիստի) Ութ հարյուր տարվա պետությունն ենք և ցարդ այդպիսի մի արվեստի և արվեստագետների տաճար չունեցանք»:

Այդ սուլթանական գործերը վարող դիվանագետը մեկնեց սրտմտած: Իսկ նրա մեկնելուց հետո ես շնորհավորեցի Կոմիտասին այդ հաղթանակի համար, և վեր կացանք երկուքս միասին «չալիմոնո» պարեցինք:

Այդ պարը նա սովորել էր Կոտայքի Գրբգբուլաղ գյուղում՝ ճեմարանի աշակերտ եղած ժամանակ և դեպի ձախ էր գնում:

Ի դեպ՝ միջանկյալ ասեմ, որ մի ժամանակ Հայաստանի ժողովրդական պարերի վարիչ Սրբուհի Լիսիցյանը, տարեկան հաշվետվության ժամանակ, իր ճառի մեջ ասաց, թե Շատախում այսինչ քյուրդ բեգի աջ թևը կուվի մեջ կտրել էին, և նա սկսեց դեպի ձախ գնալով պարել, և դա սովորություն դարձավ: Այդ տգետ ու ծանծաղ ասացվածքը վրդովիչ էր: Դարավոր կուլտուրայի և կոլեկտիվ ստեղծագործությունները մի անհատ չէր կարող փոփոխության ենթարկել: Երևանի մոտիկ Բջնիում և Գրբգբուլաղում մինչև այսօր էլ ժողովուրդը, առանց թե կտրած քյուրդ բեգի, պարելիս դեպի ձախ է գնում:

**ԿՈՄԻՏԱՍԻ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ՀԱԿԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Կոմիտասի աննման համերգները և բովանդակալից դասախոսությունները Պոլսո առաջադեմ տարրերին ոչ թե միայն ուրախացնում ու հիացնում էին, այլև ոգևորում: Այդ օտար գաղթավայրում եղած մտավորականության ազնիվ ու հայրենասեր մասը սկսեց փառավորվել և պարծենալ, որ ինքը հայ է: Սկսեց գիտակցել, որ իրենց արհամարհած խոռ և խրմալ գավառացի հայր, որ մեր դարավոր կուլտուրայից մի սաղմնային ժառանգություն ունի իր մեջ, նրա ստեղծագործական միտքն ու զգայնություններն է կերտել նման նուրբ ու հուզիչ երաժշտությունը: Քանի գիտակցությունը խորանում էր, այնքան ավելանում էր իրենց զարմանքը՝ նրա համար, որ վարի դասակարգի անգետ գյուղացիներն էին ստեղծած այդ սքանչելիքները և ոչ թե վերի խժոող ու շահագործող դասակարգի մարդիկ:

Իսկ մեծատաղանդ Կոմիտասը իր գիտության և խոր զգայնության աջակցությամբ այդ տաղերը նրբորեն ներդաշնակում ու մատչելի էր դարձնում հասարակության: Հաճախ նա հում նյութերից, ինչպես էր մի եզի բառաչը, շղթաների ձայները, ջրերի անկումը, ոտքերի դոփյունը և այլն և այլն, ստեղծում էր մոնումենտալ երաժշտական գեղեցկություններ:

Բայց Կոմիտասի գործը առանց պայքարի և միշտ սահուն չէր անցնում, որովհետև հոգևորականության մեծ մասը, որոնց կյանքը անօգուտ էր անցնում և նույնիսկ վնասակար հասարակության համար՝ այդ ողբալիները չէին հանդուրժում, որ մի ուրիշը մեծ հոգեկան շինարարություն տանի, պայծառանա և բարձրացնի մասսաների կուլտուրական մակարդակը:

Կոմիտասի առաջին կոնցերտը չսկսած՝ նա մի պաշտոնական գրություն է ստանում պատրիարքական փոխանորդ

Եղիշե ծայրագույն վարդապետ Դուրյանից, որ ահա. «Կցավինք ի տեղեկություն հաղորդել Ձեր գերապատվության, որ հայոց եկեղեցո սրբազան օրինաց և կարգաց բացարձակ հակառակ է եկեղեցու պատարագի սուրբ երգեցողությունը՝ աշխարհիկ թատերաբեմի վրայից, որպիսին է «Պտի Շանի» բեմը՝ երգել: Հետևաբար կարգելինք ձեր հայտազրի այդ մասը ի գործ դնել»: Եվ այլն:

Կրոնական ժողովն էլ որոշումներ է հանում Կոմիտասին «կարգի բերելու» և նույնիսկ ոստիկանություն է դիմում, որ արգելվեն այն գրամաֆոնի պլաստիկաները, որոնց համար երգած էր նշանավոր երգիչ Արմենակ Շահմուրադյանը՝ Կոմիտասի ընկերակցությամբ և ցուցմունքով: Կրոնական թերթի խմբագիր Ջարմայր քահանան և ուրիշ մի կարգ թերթերի ուղեղագուրկ խմբագիրները ամեն օր զրպարտում էին Կոմիտասին, թե նա «եկեղեցու սեղանը փոխելով թատրոնների բեմերի հետ՝ անպատվություն է բերում», թե «նա պղծում է կրոնական սքեմը», և այլն: Չարժե ավելի գրել այն զազիր բամբասանքների մասին, որոնք ուղղված էին հայ տոհմիկ երաժշտության և Կոմիտասի դեմ:

Վերև հիշված այդ անատամ խաժնումներին հակառակ՝ մի կարգ ինտելիգենտներ զայրույթ և բողոք էին հայտնում թերթերի էջերում այդ ստոր բամբասանքների առիթով:

Հայտնի գրագիտուհի Արշակուհի Թեոդիկը գնահատական հոդվածներ էր գրում ի նպաստ Կոմիտասին: Ազատամիտ թերթերն էլ այդ առիթով զայրույթ հայտնելուց հետո՝ մեծ գոհունակություն էին հայտնում Կոմիտասին:

Կոմիտասը գնում էր Իզմիր և Եգիպտոս ու համերգներ տալիս: Այդ տեղերի եվրոպական և արաբական թերթերը մեծամեծ գովասանքներով են խոսում ու պանծացնում հայ երաժշտությունը:

Պոլսում Կոմիտասը երբեմն գնում էր եկեղեցի՝ խումբ ղեկավարելու համար: Այդ օրերին գրեթե բոլոր դեսպանները գալիս էին հայ սքանչելի երաժշտությունն ունկնդրելու:

Ամերիկյան դեսպանատան մեծ ընդունելությանց ժամանակ Կոմիտասի համերգն էր փայլ տալիս:

**ՔՅՈԹԱՀԻՈ ՀԱՆՔԱՅԻՆ
ՋՐԵՐԸ**

12 թվի ամառը Կոմիտասի հետ իր հայրենիք՝ Քյոթհազի-
ա ուղևորվեցինք: Մի միջոց Քյոթհազիա և շրջակայքը ման
գալուց հետո այնտեղի երիտասարդ ուսուցիչ և գյուղատն-
տես Երեմյանը հետերնիս առնելով՝ քաղաքից բավական հե-
ռու գտնված հանքային ջրերը գնացինք, որոնք իրենց բու-
ժիչ հատկությունց համար կանոնավորվել էին հին ժամա-
նակներ հռոմեացիներից: Հայ և թյուրք հասարակությու-
նը ապրում էին վրանների տակ հանքային ջրերի շրջապա-
տում, բայց մենք մեր վրանը խփեցինք բլուրի ծայրին եղած
անտառում և մեկ ու կես ամսվա չափ ապրեցինք այդ
առանձնություն մեջ:

Կոմիտասին ես այնտեղ նկարեցի: Այդտեղի գործերից է
իմ գույգ այծերի փոքր նկարը, որ Ամերիկայում մի կոլեկցի-
ոնների մոտ է: Նույնպես այնտեղ եմ նկարել գյուղատնտեսի
պորտրեն:

Հանքային ջրերից վերադարձանք Քյոթհազիա, Կոմիտա-
սը անմիջապես մեկնեց Պոլիս, իսկ ես մի ժամանակ էլ մնա-
ցի՝ նկարելու համար գեղեցիկ տեսարաններով վայրերը:
Այդտեղ, ի միջի այլոց, նկարել եմ խալեգործ կինը, որ ծախ-
ված է Պոլսո իմ ցուցահանդեսում:

Աշուն էր. ես շտապեցի Պոլիս իմ աշակերտներն ընդունե-
լու և արվեստի սիրով հրճվող հասարակության ընկերակցե-
լու համար: Ինչքան արվեստագետի համար դյուրալի է
ընություն գեղեցկություններով վերանալ և մի պահ կտրվել
պրոզայիկ կյանքից, նույնքան նա մխիթարվում է արվեստի
ընկերների մեջ: Եվ նույնիսկ հարցասեր, որոնող և ծիծաղող
աշակերտների հետ՝ արվեստագետն էլ սովորում է ճշմար-
տություն ու գեղեցիկի գաղափարին ավելի մոտենում:

ՊՈԼՍՈ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Թյուրքաց սահմանադրությունից մինչև 14-ի համաշ-
խարհային պատերազմը Պոլսո հայ գաղութը ունեցավ իր
փայլուն շրջանը: Մի մեծ խումբ օժտված գրողներ և քննա-
դատներ պանծացնում էին հայ գրականությունը: Ռեալիս-
տական արձակի նշանավոր վարպետներից էր Արամ Ան-
տոնյանը, որը տարագրության մեջ մեծ թվով փաստաթղթեր
էր ձեռք բերել և որոնց հիման վրա հայկական կոտորածնե-
րի մասին մի ցնցող և փաստացի գիրք գրեց: Այդ գիրքը
տպվեց գերմաներեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:
Այդ գրքի մեջ եղած փաստերը նպաստեցին թալաթ փաշա-
յին սպանողին՝ Բեռլինի դատարանում ազատ արձակվե-
լուն:

Այդ ռեալիստական արձակի լավագույն վարպետներից
էին նաև Սրմաքեշ-խանլյանը, Ջիֆթե-Սարաֆը, պերճախոս
Ջոհրապը և Ջարդարյանը, որք գերազանցում և հիացնում
էին:

Մեծատաղանդ Սիամանթոն և Վարուժանը առաջ էին
անցնում մի բույլ տաղանդավոր բանաստեղծներից: Այս
վերջինների ժամադրավայրն էր մեր տունը, ուր արվեստի
մասին բորբոքված վիճաբանություններից հետո նրանց
նրբազգաց հոգիները հանգստանալով հեռանում էին:

Պոլսում էր հայտնի հասարակական և գրական գործիչ
Օրմանյանը, որը զբաղված էր իր «Ազգապատումի», հաս-
տափոր հատորների հրատարակությանը: Պոլսում էին գտն-
վում անվանի ջութակահար հանգուցյալ Դավթյանը և պա-
րուհի Արմեն Օհանյանը, որին ես նկարել եմ Սալովմեի
դերում: Այդ նկարը իմ Պոլսում գտնված գործերի մեջն է:

Այդ ժամանակները ցարական հալածանքներից փախած
ուսասահայ աչքի ընկնող մտավորականներ էլ երևացին Պոլ-
սում: Հիշում եմ դրանցից Ջոհրաբյան, Ջավարյան, Խաժակ,
Դուման և ուրիշներ:

Մեր տուն այցելողների թիվը մեծ էր, ի միջի այլոց՝ կանոնավոր կերպով այցի էին գալիս շաբաթ մի անգամ թյուրքաց լուսավորության մինիստր էլ-Բոստանին, փոստ-հեռագրի մինիստր Ոսկան էֆենդին և ֆրանսական դեսպանուհի մադամ Պոնպարը, որը սիրահար էր նկարչության:

Այդ օրերին գերմանական կառավարության առաջարկով Մյունխենի մեծ նկարչական ցուցահանդեսին թյուրքիան էլ հրավիրված էր մասնակցելու: Ընտրված էին երեք նկարիչներ՝ մեկ թյուրք, մեկ լեհացի՝ գեղարվեստից դպրոցի ուսուցիչներից, հետո երրորդը ես էի: Ընտրյալներից յուրաքանչյուրը պիտի մասնակցեր երեք նկարով: Ես ուղարկեցի մի Բոսֆորի տեսարան, մի պորտրե և մի ինտերիոր: 1913 թվի այդ ցուցահանդեսում գերմանական ժյուրին իմ գործերը գնահատեց ոսկի մեդալով:



Փանոս Թերլեմեզյանը և Կրթանես Փափազյանը
 Բրուսիայի հայկական դպրոցի ուսուցիչների հետ, 1913
 (Փանոս Թերլեմեզյանի հավաքածու)

Այդ Բոսֆորի նկարը անմիջապես ծախվեց, պորտրեն կորսվեց Օդեսայում, իսկ ինտերիորը ես նվիրեցի Հայաստանի պետական թանգարանին: Հնչակյանները սպանած էին Գարագյոզյանին, որի մահից հետո Հայտնվեց, որ սպանվողը կտակ է թողել մի որբանոցի շենք շինել և Հայաստանի որբերից մի մասին ապահովել: Այդ որբանոցը Հաստատվեց Շիշլիում: Նրա համար պատվեր ստացա՝ բարերարի պորտրեն երկու մետր երկարությամբ նկարելու, որը գտնվում է այդ որբանոցում:

Երկու օրիորդների միասին նկարները և Բաթումիի ծովեզերքին եղած Մակ Քարի նկարը նույնպես ծախված է Պոլսում:

Նույն 1913 թվի ամառը գնացի Պրուսա՝ նկարելու, որը գեղեցկության համբավ ունեւր: Երբ ես ծանոթացա քաղաքին ու շրջակայից, զարմացա, որ նրա համբավը շատ աննշան չափով էր մեզ հասած, որովհետև նա գեղեցկագույն վայրերից մին էր:

Քաղաքի հարավ-արևելյան եզրին կալած էր Օլիմպոս ջրառատ լեռը, որից շառավիղաձև ձորեր էին վայր իջնում մինչև քաղաքը և այդ ձորերի մեջտեղերը բլրակներ էին գոյացած, որոնք բոլորը միասին կիջնեին ու մի ընդարձակ, հարուստ ու գեղեցիկ դաշտի մեջ հավասարվում էին: Այդ բոլոր բլրակների ծայրին՝ մի-մի մզկիթ կար շինված և յուրաքանչյուր մզկիթի ճերմակ մարմարից երկինք խորացող մինարեի կողքին՝ երբեմն մեկ և երբեմն մի քանի մուգ ու փարթամ կիպարիսներ էին բարձրանում ու կարծես թե մրցում մինարեի վանչագեղ հասակի հետ: Այսպիսի մի բլուրի ծայրին էր շինված Կանաչ մզկիթը և Կանաչ մատուռը, որի մեջն է սուլթան Մահմուդի դամբարանը: Հիշյալ Կանաչ մատուռի պատերը, մուսուլաբը և միջի երկու դամբարանները ծածկված էին այնպիսի սքանչելի գույնզգույն հախճապակիներով, որոնց գեղեցկությունը համաշխարհային հռչակ ունի:

Այդ գծագրությանց ընդհանուր ոճը արաբականով խառն պարսկական է:

Ահա այդ Կանաչ մատուռի մեջ էր, որ ես երկու գործ նկարեցի. մեկը՝ մոլլան նստած Ղուրան էր կարդում, այդ հսկա մատուռի հախճապակիներով ծածկված ինքնատիպ դռան ներսի կողմը: Այդ նկարը անգլիացի մի հազարապետ Պոլսո իմ ցուցահանդեսից զնելով՝ Լոնդոն տարավ: Իսկ մյուս սուլթան Մահմուդի թանգարանը, որ նատյուրմորտի բնույթ ունի, ինձ մոտ է: Պրուսայում մեծ թվով էտյուդներ էլ արի, որոնք բոլորն էլ ծախված են:

ԱՅՅԵԼՈՒՆԵՐ

Արդեն վերադարձել էի Պոլիս, երբ ինձ այցելության եկան տասներկու ֆրանսիացիներ, որոնց մեծ մասը դեսպա- նատան պաշտոնյաներ էին: Նրանց հետ էր Բանկ Օթոմանի դիրեկտոր պարոն Ստեկը և ժյոն թյուրքերի լիդերներից մե- կը, որ Բերայի կառավարիչն էր (անունը մոռացել եմ):

Ֆրանսիացիք նկարներով շատ էին հետաքրքրվում, իսկ ժյոն թյուրքերի լիդերը, երբ նրանց հանդիպելիս հարցրել էր, թե ուր են գնում այդպես խմբով, նրանք ասել էին, որ գնում ենք տեսնելու նկարիչ Թերլեմեզյանի՝ Պրուսայից բե- րած նոր գործերը: Բերայի կառավարիչ փաշան էլ ցանկա- ցել և ընկերակցել էր նրանց:

Ահա այդ արվեստի սիրահարները՝ ախորժեղի հումորով խառն բարձրաձայն խոսակցելով՝ լցվեցին նկարների սեն- յակները:

Ֆրանսիական դեսպանության մինիստրը, որ ինձանից արդեն երեք նկարներ ուներ, հետևապես իբրև վաղածանոթ, սկսեց ծանոթացնել Պ. Ստեկին, Բերայի կառավարչին և մյուսներին, ասելով. «Այսօր կիրակի է, մենք ազատ լինելով, եկանք հիանալու ձեր հին ու նոր նկարներով»:

Նրանք ծիծաղով ու բացականչություններով լցրին սեն- յակս ու ինչպես ֆրանսիացիները գիտեն, կոմպլիմենտներ սկսեցին տեղալ նկարներիս հասցեին, որոնք անտարբեր էին:

Պրուսայի էտյուդներից չորս հատ գնեց Բանկ Օտտոմա- նի դիրեկտորը, երեք հատ էլ ուրիշները:

Մյուլթասարիֆ փաշան հանդիսավոր կերպով մոտեցավ, ծոնկը գետին մոտեցնելու չափ ձուց ու ձեռքս բռնելով ասաց. «Տվեք այս ձեռքը համբուրեմ, որովհետև առաջին անգամն է, որ իսլամական արվեստը այսպես պատկառելի ներկայացված եմ տեսնում»:

«Քավ լիցի, փաշա էֆենդի», ներողություն խնդրելով՝ ոտքի բարձրացրի նրան:

Պատերազմից հետո Պոլիս վերադառնալով՝ իմացա, որ երբ սկսած էին հայ մտավորականներին տարագրության անվան տակ ուղարկել ղեպի Գողգոթա, այդ ձեռքս համբուրել ուզող փաշան ուղարկել ու հարցրել էր ինձ: Խոհարարը ասել էր, որ նա վան է մեկնել: Նույն գիշերը ոստիկանությունը շրջապատել էր մեր տունը, խուզարկել և ինձ էին փնտռած: Հետո համոզվելով, որ ես բացակա եմ, հաջորդ օր ցերեկին նորից եկել և Կոմիտասին տարել աքսորելու:

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ՄԵՋԻՏ ԷՖԵՆՏԻԻ ՄՈՏ

1914 հունիսին Փարիզում պիտի կայանար Համաշխարհային երաժշտական կոնգրես, որին հրավիրված էր մասնակցելու Կոմիտասը՝ իբրև հայ երաժշտության ներկայացուցիչ:

Այդ ժամանակները Կոմիտասը գահաժառանգ Մեջիտ էֆենտիի կնոջ հետ պարապում էր երաժշտություն: Փարիզի կոնգրեսին մեկնելուց առաջ նա ինձ հայտնեց, թե գահաժառանգը ուզում է, որ դու էլ մի անգամ պալատ գաս՝ իր նկարները տեսնելու:

Մեջիտ էֆենտին տասնհինգ տարի նկարչության դասեր էր առած:

Մի օր Կոմիտասի հետ գահաժառանգի պալատը գնացինք: Նա մեզ շատ քաղաքավարի ընդունեց, սուրճից հետո իր վերջին նկարը բերելով՝ առաջարկեց դիտողություններ անել:

Գահաժառանգի նկարին մոտեցողները, մանավանդ եվրոպացիները, հիացական բացականչություններով էին սկսում իրենց կոմպլիմանները: Իսկ ես հինգ վայրկյան մտատանջվեցի, թե ինչպես վարվեմ: Վճռեցի ասել ճշմարտությունը մեղմ կերպով: Նկարի մեծությունը երկու մետրից ավելի էր: Կտավի վարի կողմը մի փոքրիկ Ֆիգուր կար տեղավորված, դա նրանց հին թագավորներից մին էր, մի թանկարժեք Լահորի շալ քաշած իր ուսերին՝ նստած էր մինտարի վրա և թիկն տված մի բարձի: Այդ միտտարն ու բարձր փուված էին կեղտոտ տախտակամած հատակին: Կարծես, թե նկարված թագավորը երբեք գորգեր չէր ունեցել իր տանը: Այդ պատմական թագավորի առջև ծունկի եկած թոռնիկը դաս էր առնում իր պապիկ կայսրից: Ամբողջ նկարի յոթ տասներորդը բռնված էր մի չքեղ կարմիր թավիշի ոսկեթել բանվածք ունեցող վարագույրով:

Ես ուշիկ-ուշիկ իմ դիտողություններս առաջ տանելով՝ հասա մինչև վարագույրը և ասի, որ կարծես թե վարագույրն է նկարի կենտրոնական մոտիվը, իսկ մյուսները նրան լրացնելու էին ծառայում: Նայեցի Նորին մեծություն, տեսա, որ նա սփրթնած ու գույնն էլ կանաչել էր, իսկույն թուլյալովություն խնդրեցի մեկնելու, նա չկարողացավ խոսել, այլ միայն ձեռքով արավ:

Երբ մենք փողոցումն էինք, Կոմիտասը ինձ հանդիմանեց, որ լավ չվարվեցա:

Նույն օրը Կոմիտասը էքսպրեսով մեկնեց Փարիզ՝ երաժշտական կոնգրեսին մասնակցելու համար:

Գահաժառանգին գնալուց մի քանի օր հետո, երբ Ստամբուլն էի գնացել, հայտնի թեյի վաճառական Իսաբուլյանի խանութի մոտով անցնելիս՝ նա ինձ տեսավ ու հրավիրեց իր խանութը: Հետո հանդիմանելու ոճով ասաց. «Եղբայր, էս ի՞նչ ես արել, մարդիկ աստված կկանչեն և խուճկ ու մոմով կփնտրեն մեծ անձնավորությունների հետ ծանոթությունը, իսկ դու աքացի ես տալիս քեզի եկած բախտավորությունը»: Նա պատմեց, որ գահաժառանգի սենեկապետը մի օր առաջ եկած էր թեյ գնելու, նա ասել էր, թե Կոմիտասի հետ մի նկարիչ եկած էր էֆենդիի մոտ, չգիտեմ այդ մարդը ինչ խոսեց նկարի մասին, բայց իմ տերը այնպես սաստիկ բարկացել էր, որ չկարողացավ խոսել և, առանց տունն իմացնելու, նստեց նավակ ու անցավ ասիական ափ և ահա ութ օր է, որ Իսկյուտարի պալատումն է ապրում առանձնության մեջ: Ավելացրել էր, որ այդ նկարիչը խելք չուներ և երբեք իր կյանքում տան տեր չիպիտի դառնա:

Երբ գահաժառանգը Իսկյուտարից վերադարձել էր իր Օրթագյուղի մոտի պալատը, առաջին գործը եղած էր սենեկապետին հրամայել, որ վերոհիշյալ նկարը բերի: Սենեկապետի պատմելով, նա շատ երկար ժամանակ նկարը դիտելուց հետո՝ ինքն իրեն բարձրաձայն ասել էր. «Ա՛յ, այս ի՛նչ ուղիղ խոսող մարդ է եղել» և դառնալով սենեկապետին, պատվիրել էր, որ անմիջապես գա և ինձ իմացնի, որ ամսի 17-ին առավոտյան ժամի 10-ին էֆենտին ինձ այցելության պիտի գա:

Նշանակված օրին հեռագիր ստացա գահաժառանգից, որ հյուրերի պատճառով այդ օրը չպիտի կարողանա այցելել, այլ չորս օրից հետո միայն կգա: Իսկ ես նավի տոմս վերցրած լինելով՝ այլևս գահաժառանգին չկարողացա սպասել և Կովկասի վրայով Վան մեկնեցի:

1914 թվի հունիսի 1-15 Փարիզում երաժշտական կոնգրեսը կայացավ: Կոմիտասի՝ կոնգրեսում կարդացած երկու դասախոսությունները և տված մի համերգը մեծ հետաքրքրություն էին առաջացրել: Երաժշտության այստեղ հավաքված համաշխարհային կորիֆեները հոտնկայս օվացիա էին սարքել Կոմիտասին և պահանջել, որ Կոմիտասի բոլոր գործերը հրատարակվեն:

Ես տակավին Պոլսումն էի գտնվում, երբ Կոմիտասից ստացա տասնութ երեսով մի նամակ, որով նկարագրում էր իր դասախոսությունների նյութը և թողած տպավորությունը: Ափսոս, որ այդ նամակը մնացել է Պոլսի իմ իրեղենների մեջ, գուցե մի օր հրապարակ գա:

Երբ Կոմիտասը Պոլիս է վերադառնում և տեղեկանում է կրոնական ժողովի զազիր վերաբերմունքի ու բամբասանքների մասին, մի թերթի մեջ հետևյալ տողերն է գրում.

«Ես տարիների աշխատանքով գծել եմ իմ ուղեգիծը, ուրկէ ընթացել եմ մինչև այսօր և պիտի ընթանամ ասկէ ետքն ալ՝ որքան ատեն որ ուժ կա երակներուս մէջ: Ոչ մի խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելութեան մեջ, որուն նուիրականութեան ես համոզուած եմ բոլոր սրտով»:

ՎԵՐՁ ԱՌԱՋԻՆ ՍԱՍԻ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՅԱՐԻՉՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱՅԵՐ ԵՎ
ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԾՆՈՒՆ ԴԸ

1912-ին Թյուրքիո եվրոպական նահանգները վատ կա-
ռավարելու պատճառով Բալկանները միացած պատերազմի
եկան Օսմանյան կայսրության դեմ: Բուլղարական բանակ-
ները Ազրիանապոլիս գրավելով՝ իջան Մարմարա ծովու
ափերը և հետզհետե մոտենալով մայրաքաղաքին՝ սկսեցին
գնդակոծել Պոլսո դռները:

Ցար Նիկոլայ II-ը արգելք հանդիսանալով, չթողեց, որ
Բուլղարիան Պոլիս մտներ, որովհետև նա Թյուրքիո մայրա-
քաղաքը իրեն էր պահում՝ իբրև առյուծի բաժին: Բուլղա-
րիան ուռուցաց ուլտիմատում պահանջով՝ ձեռնունայն ետ
դարձավ:

Բալկանյան պատերազմին, բացի բանակայիններից, մեծ
զոհեր տվեց և անմեղ ժողովուրդը, որի արյունն ճապաղիք-
ներից ու հոշոտված դիակներից Նիկոլի ուռնգերը դյուրե-
կան խորովածի հոտ էին քաշում: Այդ հոտը գրգռեց նրա՝
նոր երկիրներ գրավելու ախորժակը: Ցար Նիկոլն և իր ծա-
ռաները, որք մի փոքր ժամանակ առաջ հայերին բնաջնջելու
համար ամեն տեսակ միջոցների առջև կանգ չէին առնում,
հանկարծ ետ շարտեցին Լորանովի վարած հայատյաց քա-
ղաքականությունը ու վերից վար հայասերները դարձան:

Հրամայվեց Կովկասի փոխարքա կոմս Վարանցով-Դաշ-
կովին, որ զրդի հայոց կաթողիկոսին վտանգի մեջ եղած թր-
քահայությունը համար բարենորոգումներ գործադրել տալու
մասին աշխատել:

Խնելքից աղքատ Գեորգ կաթողիկոսը՝ իբրև ամենայն Հայոց հոգևոր պետ՝ աղերսեց ցար Նիկոլին, որ խիստ վատ պայմանների մեջ գտնվող Թյուրքահայուցության իրական պաշտպանություն ցույց տալու ողորմածություն հանձն առնի:

Նախարարապետ Կոկովցեր պատասխանեց Հայոց կաթողիկոսին, թե թագավոր կայսրը շատ բարեհաճ է դեպի Հայերը:

Այդ օրերին Գերմանիան Պարսից ծոց տանող իր Բաղդատի երկաթուղագիծն էր առաջացնում, Ռուսաստանն էլ մրցության կարգով Հայաստանի բարձրավանդակն ուղեց գրավել, ուստի աջից և թիկունքից ապահով լինի ու ինքն էլ սկսի իջնել Պարսից ծոց:

Պետք զգացվեց Թիֆլիսում Վարանցովի աչքին տակ կազմել Ազգային բյուրո, որի պաշտոնն էր օգնել կաթողիկոսին իր դիվանագիտական հարաբերությունների մեջ: Այդ օգնությունն այս էր՝ գրել թղթեր և պահանջել կաթողիկոսից, որ ստորագրե:

Սկսվեց բանտերից արձակվել թե դաշնակ և թե չեզոք մտավորականությունը:

«Հայասեր» Վարանցով-Դաշկովը խորհուրդ տվեց Ազգային բյուրոին, որ կաթողիկոսը մի ներկայացուցիչ ունենա Եվրոպայի կենտրոնում: Այդ ներկայացուցիչը ընտրվեց մեծահարուստ Պողոս փաշա Նուբար, որի գործը պիտի լինեին պրոպագանդան մղել Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական շրջանակներում, որպեսզի նրանք բարեհաճ լինեին չխանգարելու, երբ Ռուսիան իբրև ռեժիսոր Թուրքա-Հայաստանի բարենորոգմանը խնդիրը միայնակ առաջ տաներ իր կոնտրոլի տակ:

Ռուսաց Պոլսո դեսպան Կիրս և նրա գավառների Հյուսիսայտոսները հրահանգ էին ստացել միջամտելու Թյուրք կառավարության մոտ, որ Հայաձանքների ենթակա Հայերի համար ապահովություն ստեղծվի:

Վանի, Մուշի և մյուս տեղերի Հայուցության կարծիքը ոչ ոք հարցրեց: Ուրեմն Հայ ժողովուրդը, այդ մեծ նահատակը, լուռ էր:

Երկրի տիրոջ՝ Թյուրքիո հետ էլ խոսող չեղավ, մինչդեռ՝ իմ համեստ կարծիքով՝ պետք էր թքնել թե Եվրոպայի և թե Բեռլինի 61-րդ հոդվածի վրա, միասին և անաղմուկ, առանց Թյուրքերին զբաղելու և նրանց համաձայնությունը՝ հավանաբար կարելի պիտի լինեին տանելի վիճակ ստեղծել Թուրքա-Հայաստանում ապրող Հայուցության համար: Որովհետև ինչքան էլ մեր և ռուսաց շահերը զուգադիպում էին, այնուամենայնիվ, եթե Ռուսիան հակառակորդներ չունենար, առանց մեզ հարցնելու արդեն պիտի գրավեր Թուրքա Հայաստանը:

Թիֆլիսի այդ համբավավոր Ազգային բյուրոյի հետևյալ կանգնած էր Դաշնակցությունը: Պոլսումն էլ թե ռուսաց դեսպան Հիրսի մոտ և թե պատրիարքարանում դաշնակցության արևմտյան բյուրոն էր գործում:

Պատրիարքարանը և արևմտահայ մտավորականությունը էլի հին նեյնիմ-նեյնիմով արդեն դեղնած ու բորբոսած Բեռլինի 61-րդ հոդվածը մեջտեղ քաշեցին: Այդ նշանակում էր՝ նորից բխմամտություն ունենալ, որ այդ հոդվածն ստորագրող պետությունները միակամ պիտի գործեն և ստիպեն օսմանյան պետության Հայերին ինքնավարություն տալ:

Փարիզում, Լոնդոնում և Պետերբուրգում Հայ կոմիտեներ ստեղծեցին: Թե այդ կոմիտեները և թե պատրիարքարանը իրենց դիպլոմատիկ գործունեության հաջիտվության իրագրել էին պահում կաթողիկոսին, այսինքն՝ Թիֆլիսի Ազգային բյուրոյին, հետևապես «Հայասեր» Վարանցով-Դաշկովին:

Մի ուրիշ «Հայասեր» էլ՝ Պաուլ Ռոհրբազ անունով գերմանացի, որ չափազանց սիրելով Հայուցությունը՝ առաջարկել էր Թյուրքահայերը հեռացնել ռուսահայերի մերձավորությունից և տեղահանել ու բնակեցնել Բաղդատի երկաթուղու երկայնքին, զի նրանք կուլտուրական ժողովուրդ լինելով՝ ավելի օգտակար կարող են լինել այնտեղ:

Ահա, այսպես, մեկ կողմից՝ անիծյալ Հայասերները և մյուս կողմից՝ Թյուրքահայոց ծանր ու նուրբ կացությունը չըմբռնող վեղարավոր և անվեղար «դիպլոմատները» շնորհիվ՝ Հայկական խնդրի խաղը աշխուժով առաջ էր տարվում այդ օրերին:

Նկարիչ դառնալուց հետո մեծ ցանկություն ունեի իմ սիրած Վասպուրականը տեսնել և այն տեղերի անզուգական գեղեցկություններից գործեր տալ: Ահա այդ նպատակով 1914-ի վաղ գարնան ես վճռել էի իմ հայրենի քաղաքը՝ Վան վերադառնալ և այնտեղ գեթ մի ամառ էտյուդներ անել: Գրող ընկերս՝ Չոկյուրյան և պարոն Գ., ցանկալով տեսնել Հայաստան, ուզեցին ինձ ընկերանալ:

1914-ի մայիսի վերջերը մենք երեք ընկերներով Թիֆլիս հասանք, երբ այնտեղ մեծ ոգևորությամբ վերև նկարագրածս Հայաստանի բարենորոգման ֆարսը խաղացվում էր:

Այն օրերի լրագրերը և հետագայում պատմաբան Լեոյի «Անցյալից» գիրքը օր-օրին տվել են մեր այդ ժամանակվա բարենորոգմանց ձգտումի պատմությունը:

Թիֆլիսում մեզ հաջողվեց Ազգային բյուրոյի անդամներից ճշգրտորեն իմանալ ընդհանուր կացությունը և մի քանի անգամ վեճի բռնվել նրանց հետ: Մի օր, երբ ես ասացի նրանց, թե դուք, որ ձեր տեղական գործերի վերաբերմամբ շատ զգուշ եք, ինչու թյուրքահայերի վերաբերմամբ այդպես հախուռն և անզգուշ կվարվեք, չէ՞ որ նրանց ֆիզիկական գոյությունը վտանգում եք: Ինձ պատասխանվեց. «Մի վախենար, պարոն Թերլեմեզյան, թյուրքերը մեր ափի մեջ են և ոչինչ չեն կարող անել»:

Հայաստան տեսնելու ցանկությամբ Պոլսից ինձ ընկերակցող երկու ընկերներս և ես ուղևորվեցինք Անի, ուր նկարեցի Մայր եկեղեցին: Այնտեղից էլ գնացինք էջմիածին: Ընկերները ծանոթացան վանքերի ճարտարապետության, նույնպես եկեղեցու և Հայրիկյան թանգարաններին: Հետո նրանց առաջարկեցի տեսնելու Զվարթնոցի սքանչելի ավերակները, այդ 5-7-րդ դարու հայկական ճարտարապետության գլուխ գործոցը, որը մեծ հետաքրքրություն առաջացրեց:

Ըկերներիցս մեկը՝ պարոն Գ. (Գյուլբենկյան) վերադարձավ Պոլիս, իսկ բանաստեղծ ընկեր Չոկյուրյանը ինձ հետ Վան եկավ:

ԴԵՊԻ ՎԱՆ

Իգդիրից կառքով ուղևորվեցինք դեպի Վան: Բարձրացանք Մեծն Մասիսի կողքով, կոխտելով նրա բազալտյա քղանցքները՝ իջանք Բայազետի դաշտը: Այնտեղից հարավարևմուտքի ուղղությամբ անցանք մի քանի լեռնաշղթաներ և հասանք Աբաղայի հարուստ ու փարթամ բուսականությունով տափաստանին: Արդեն Բերկրու գետի ափովն էինք գնում, ուր մեր ձախակողմ գոռգոռացող ջրվեժի մոտ կանգ առանք: Երբ կառքից վար իջնելով դարձա հետևս նայեցի, լեռներից վեր տեսա Մասիսի գագաթի փայլը, իսկ դիմացս, արևմուտքում, Սիփանի կտրված և ճյուղապսակ սիլուետն էր ցցվում: Շարունակելով մեր ճանապարհը, հաջորդ օրը հասանք Վանա դաշտը, ուր պատմական բերդն իր հանելուկային բևեռագրերով ու վիթխարի պարիսպներով կանգնած էր դիմացնիս:

Աջից՝ հրապուրիչ ծովակը, իսկ ձախից՝ Վարագա ջուխտակ լեռները՝ այդ իմ վաղուցվա որսորդություն վայրերը, որոնց վրայի հազարերանգ ծաղիկները բուրումնավետ և ցողաթարմ ադամանդազարդ փալփում էին առավոտները: Այդ ամեհի սև ժայռերը իրենց Աստղկա բերդ կոչված բարձրաբերձ գագաթով հաճախ փաթաթված թխորակ ամպերին՝ համբույրներ էին փոխանակում և թարմություն ստանում: Իսկ այժմ, օրվա վերջին պահուն, այդ սեզ լեռները վերջալուսի փրփուր հագած՝ կարծես ժպտալով մեր գալուստն էին ողջունում:

Իմ կարոտաբաղձ Հայրենիքիս ի տես՝ հոգիս նուրբ սարսուռով դողդողում էր՝ և մի անբացատրելի զգացմունքով խոսել ու շնչել չէի կարողանում: Բանաստեղծ ընկերս էլ մի հառաչանքից հետո լռեց, բայց ձիերը կայտուում էին, իսկ կառապանը մի կամացուկ երգով ընկերանում էր այդ չնաշխարհիկ վերջալուսին:

Շրջապատի աննման գեղեցկությունները և իմ մանկության ու պատանեկության ապրած վայրերի մոտիկությունը ավելի էին ուժեղացնում սրտումս փակված և միշտ միացող խորունկ կակիծը, որ արդյունքն էր մորս մահվան սև բոթին:

Վերջապես հասանք ուրարտական թագավորանիստ Վան քաղաքի արևելյան մեծ դռան: Երբ ընկերս, Հիացած շամիրամյան այդ ահռելի պարիսպներով, ուզում էր վայր իջնել նայելու, շոշափելու առասպելազարդ իրականությունը, ես, հետաձգելով այդ երկար գործը, ուղղակի քշել տվի կառքը դեպի Այգեստան, ուր գտնվում էին իմ հայրենի տունը և իմ մտերմիկ վայրերը, որոնց բյուրավոր քաղցր հիշատակների համար սիրտս արդեն տրոփում էր: Երբ հասանք մեր տունը, դրացիները դուրս թափվեցին, և մեր հացթուխ Սրմա տատը վազեց, ձեռքերս բռնեց. «Խեղճ մայրդ»-ասաց ու սկսեց արտասվել: Այդ իմ կյանքի խորագույն վշտի պահն էր, որ անփոխարինելի մորս մահվան սպանիչ ցավը Սրմա տատի անկեղծ արտասուքներին խառնեց ու իմիններս:

Հիշեցի Ավետիք Իսահակյանի հետևյալ քառյակը.

Մեզը առավ դար ու դուրան,
Ազիզ մերիկ, դուռը բաց,
Քո որդին եմ, խոցված կուգամ,
Անուշ մերիկ, գիրկդ բաց:

Ներս մտանք մեր փլվիված ու հնաբույր տունը, ուր ես պարտականություն համարեցի գեթ առաջին գիշերը քնանալ՝ վերհիշելու համար մորս անհուն սիրով ու տառապանքով սրբացած պատկերը, որի պաշտամունքը ինձ ընկերանում է մինչև գերեզման:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վան հասնելուս հաջորդ օրը Կենտրոնական դպրոցի տեսուչ Միհրան Թերլեմեզյանը (որի մասին հետո մի քանի խոսք պիտի լինի), եկավ այցելության և առաջարկեց ինձ գնալ իրենց տուն բնակվելու, որովհետև իմ հայրենի տանը ապրելու հարմարություններ չկային: Նույն օրը ես տեղափոխվեցի նրանց ճոխ ու նահապետական տունը, ուր իրար հաջորդող երեք սերունդներ կողք կողքի ապրում էին: Տանը մեծ Ավետիս աղան, 94 տարեկան, թխսուժների նման իր թևերի տակ առած պահպանում էր երեխաներին և թոռներին: Ինչպես հիշված է, Ավետիս աղայի երեք հայրենասեր տղաները 96-ին շարժումներին սպանված էին, իսկ նրանց այրիները՝ կակիծն ատամների տակ սեղմած՝ մեծացնում էին իրենց բազմանդամ զավակներին անցյալի հեղափախական ավանդույթներով:

Այդ տանը ինձ այցելեցին ծանոթ ու անծանոթ տարբեր համոզմունքների «հեղափոխականներ» և մի կարգ այլ մարդիկ ու հին ընկերներ: Դրանցից մեկը՝ Շատվորյան Ռուբեն էֆենտին, որ իմ դպրոցական անդրանիկ ընկերներից էր և մեր շարժումների պատճառով մեծ տառապանքներ քաշած էր բանտերում, այդ օրերին պետություն գանձապահի պաշտոն ուներ: Երբ ինձ այցելեց, նրա առաջին հարցումն եղավ, թե ինչով եմ զբաղվում, ասացի, որ նկարիչ եմ, բայց նա անմիջապես հարեց. «Այդ ես գիտեմ, բայց բուն զբաղմունքդ ի՞նչ է»: Հավանաբար նրանք արվեստը գործ չէին համարում:

ՔԵՖ ՈՒ ԽՆՋՈՒՅՔ

Ինձ մոտ եկան մի քանի երիտասարդներ, որոնք իմ նախկին այն խմբերից էին, որոնց Հետ առաջները ես պարապել էի պրոպագանդայով և գրագիտության դասերով: Նրանք խնդրեցին, որ ես և պոլսեցի գրող ընկերս մասնակցենք ի պատիվ մեզ սարքած քեֆին: Համաձայնելով, որոշյալ օրը գնացինք մեր դրացի Պալաքներաց Սահակենց տունը: Երեկոյան պահին այգին անցանք, ուր սարքված էր խնջույքը, քաֆուր վարդերով, կակաչներով, մեխակներով, սուսամբարներով և զամպղի ծաղիկերով եզերված մի տարածուն սաքուրի վրա: Շրջապատի ընդարձակ այգիները գրկախառնված էին իրենց պտղատու ծառերով ու խաղողի թփերով, որոնց մուգ դմրուխտյա պարարտ կանաչությունը ծակծկվում էր վերջալույսի շեղ նիզակաձև ճառագայթներից և որոնց ազդեցությամբ փալվիլում էին ամեն տեսակ պտուղներ:

Ծաղիկների բուրմունքից հղի օդը մթնել սկսեց: Շուտով կարծես թե արևն էլ խեղդվեց հեռավոր օվկիանոսների մեջ, որով դադարեց ճյուղերի վրա թառած տատրակների սիրակեզ մրմունջը:

Ջահերը վառվեցին լուսավորելու և այն հեքիաթային վերջալույսի խաբկանքն շարունակելու միտումով:

Հիշյալ սաքուրի շուրջը վճիտ ջրեր էին գլզլում, որոնց մեջ պառկեցրած էին բերանները պինդ խցած գինիով լեցուն կժեր՝ սառեցնելու համար: Սաքուն ջլերով և գորգերով ծածկված էր, որոնց վրա մենք ծալապատիկ բազմեցինք: Կապույտ դաստմալներ փռվեցին նստողների առջև և թարմ ու փափուկ լավաշներ շարվեցին նրանց վրա, որոնց կողքին թթու դրած ախորժակաբեր պուրվածքներ ու պանիրներ քասանների մեջ: Թրծած հողե կուռիկներ դրին ամեն մի մարդու առջև՝ գինիի համար, նույնպես սափորներ ու գդալներ: Դանակ, պատառաքաղ չկար: Երկու մարդով բերին մի մեծ

սինիի վրա ձավարի փլավ՝ յուղաթարմ և շոգեպատ: Հետո պարերով առաջացող խումբին հետևում էր մի աժդահա երիտասարդ, որ պինդ բռնած էր իր գլխի վրայի սինին, որի մեջ պառկեցրած էին թոնրից նոր հանած բուրումնավետ ու գոյորշիններով ծածկված խորոված ոչխարը: Գինիները լցվեցին, տան տերը՝ գինագործ Սահակը, իր մեծակառույց կազմվածքով արձանացավ սաքուրի մեջտեղ, վերցրեց գինիի կուռիկը և, դիմելով իր ընկերներին, ասաց. «Տղեյնե՛ր, այս առաջին թասը խմենք մեր մեծ եղբայր Փ.Թ.-ի կենացը, երբ նա մեր մեջն է, մենք դարդ չունենք»:

Մոտակա թավուտից լավեց կույր Հովհաննեսի խմբի մեղմ երաժշտությունը: Դեմքերը պայծառացան, կուռիկների միջի մութ կարմիր գինին կայծկլտում էր ջահերի լույսերից: Կարճ ու հատու կենացներ վերջ չունեին, ընկերների կատարները տաքացան, և պարերն սկսվեցին: Ինձ թվում է, որ միայն նրանք գիտեին այնպիսի աշխույժ, այնպիսի շնորհալի և այնպիսի զվարթորեն պարել: Իմ պոլսեցի ընկեր Ջյուկյուրյանը, որ առաջին անգամն էր տեսնում այս տարածական գեղեցիկ այգիները, այս ուրախ հայկական պարերը և այս սրտաբուխ անկեղծությունը, ուրախության էքստազի մեջ գալարվելով՝ փորձում էր ճառախոսել, բայց գինիի կուռիկը, որ բնագրով հաճախ հպում էր շուրթերին, նրան արգելակում էր խոսել:

Քեֆը շարունակվեց մինչ ի լուսաբացին: Մասնակիցները շնորհակալություն հայտնելով հյուրասեր Սահակին՝ կամաց-կամաց սկսեցին հեռանալ, թեև ափսոսում էին, որ ավելի երկար չտևեց իրենց ուրախությունը:

Հաջորդ օրը ես այցելեցի իմ ընկեր նկարիչ Վրթանես Ախիկյանին: Նրանց տունը Վոխվի քյահրիզի բարձունքի վրա էր, մի շատ սիրուն և բանաստեղծական տեղ, որի առջևն էր՝ կարծես մի վիթխարի սինիի մեջ դրված՝ Հանկույսների ձորը՝ իր անտառներով և չրխկչրխկացող ջրադացներով, Ագուավի քարը իր Մհերի դռնով, Մուտոտ քարը և Զրմփ-գրմփ մաղարեն:

Ներս մտնելով՝ ես հետաքրքրությամբ դիտեցի նրա գեղեցիկ նկարները և ստեղծագործելու շնորհքով լի պատե-

րազմական էսքիզները ու ձիերի էտյուդները, որոնք նա նկարել էր Պետերբուրգի ակադեմիայում: Գաղթին այդ բուրրը նա թողել էր Վան ու իր հիվանդկախ կյանքը հազիվ կարողացել էր մինչև Կովկաս հասցնել:

Կ. Պոլսում մի ազնիվ բարեկամ ունեի, դա փոստ-հեռագրատան մինիստր Ոսկան էֆենտին էր: Իմ հայրենիք մեկնելուս առթիվ՝ նա ինձ մի հանձնարարական էր տված Վանի կուսակալ Թահսին բեյի վրա: Այդ հանձնարարականով ես ներկայացա կուսակալին: Նա շատ քաղաքավարի ընդունեց և ներկայացրեց իր փոխանորդ Ջեվդեթ բեյին, որ պետք եղած դեպքում ինձ դյուրություններ տրվեն աշխատելու: Հետո, երբ ասի, որ Աղթամար պիտի գնամ նկարելու, նա սիրալիք կերպով մի հանձնարարական տվեց Ոստանի գայմազամի վրա: Դրանց համար շնորհակալություն հայտնելով՝ հեռացա:

Տուն վերադառնալով, տեսա, որ մեծ պատրաստություն մեջ էին: Միհրանը ինձ ծանոթացրեց Ռուբեն «փաշային», որ հետ միասին պիտի մեկնեն Կարին՝ մասնակցելու Դաշնակցության ընդհանուր ժողովին: Ի միջի այլ խոսակցությունց՝ երբ ես ասի, թե մեր կացությունը շատ է փափուկ, պետք է աշխատվի ամեն կերպ, որ թյուրքերը չգրգռեն մեր դեմ, նրանք համաձայն էին այդ ուղղությամբ գործելու իրենց ժողովում: Նույն օրը նրանք մեկնեցին դեպի Կարին, մյուս օրը ես ուղղվեցի դեպի Աղթամար:

ԴԵՊԻ ԱՆԱՎԱՆՔ

Ախավանքը Աղթամարի կղզիի դիմաց ամենամոտ ցամաքն է, որտեղ ծովափի աղբյուրի գլխին շինված էին երկհարկանի տներ, դպրոց, մեծամեծ շտեմարաններ, ախոռներ և մարազներ: Հասցված էին հաստարմատ ծառերով պտղատու այգիներ, բանջարանոցներ և այլն: Ահա այդ տեղ կոչվում էր Աղթամարա վանքի դրսի տուն կամ Ախավանք, ուր կատարվում էին կաթողիկոսական թեմի բոլոր գործառությունները:

Այնտեղ էր նստում կաթողիկոսական փոխանորդը, որի հսկողության տակ հավաքվում էին թեմի բոլոր եկամուտները: Նույնպես այնտեղ էր ամբարվում 500 ոչխարների և մի քանի տասնյակ մատակների ու կովերի կարագն ու սերը, հարյուրավոր փեթակների տված մեղրը, ընդարձակ հողերի ավետիք ցորենը տարեկանը, կտավատը, կանեփն և այգիների ու բանջարանոցների հասույթները:

Ոչ ոք չի կարող պնդել, որ այն դարավոր ու կազմակերպված հաստատություն բոլոր եկամուտները ամբողջապես ծառայում էին իրենց քրտնաջան աշխատանքով այդ անհատակ շտեմարաններ լեցնող ռամիկ ժողովրդի հոգեկան և մարմնական կարիքներին: Հազիվ այդ հասույթների կեսը ծառայում էր ժողովրդյան օգնության և դպրոցների գործին: Այդ նրա համար, որ մեր կրոնն ու հոգևորականությունը մշտապես եղած են հենարան գորբաներին և շահագործողներին, որով իրենց հերթին կրոնավորներն էլ վերածվել էին աշխատավորության հաշվին ապրող պարագիտների, որք իբր թե մեր հոգու փրկության համար կաղոթեին: Նրանք այդ հեքիաթներով էին թմրեցնում ժողովրդի փտակցությունը և իրենք լափում էին այդ հարստության մեծ մասը:

Կացությունն այդ էր, երբ 1904-ին Դաշնակցության «հեռուս» Իշխանը իր խումբով գիշեր ժամանակ խուժում է այդ

Հաստատություններ (ինչպես վերը խոսած եմ), սպանում է կաթողիկոսի փոխանորդ Արսեն վարդապետին, նրա գրագրին ու գրագրի տասներկու տարեկան զավակին և գրավում է այդ բոլոր ազգային Հարստությունները: Հետո կղզին մտնելով՝ կողոպտում է նախնիքներից մնացած արծաթյա և ոսկյա զարդերը, որոնց մեջ թանկարժեք քանդակներով շատ իրեր կային և քանդակազարդ տասներկու հատ ոսկյա և փղոսկրյա կաթողիկոսական գավազաններ, որոնք, Վան փոխադրելով, Դաշնակցության կոմիտեն հանձնում է Կոկե Տիգրան կոչեցյալ ոսկերչին՝ արծաթյա և ոսկյա իրերը հալեցնելու և նրանց արժեքներով չաղացնելու իրենց տղերքին: Այս մի պերճախոս նմուշ էր դաշնակցական Հակահեղափոխական բանդիտային գործունեության:

1914-ի ամռան կուսակալ Թահսին բեյի հանձնարարականով մտա Ոստան և գայնագամին տեսնելուց հետո ճամփաս շարունակելով՝ նույն երեկոյան հասա Ախավանք: Այդ հաստատությունը դաշնակցությունից արյունահեղությունը գրավվելուց հետո, հին բոլոր պաշտոնյաները պահված էին՝ իբրև դաշնակցության գործակալներ, որոնց ռոճիկները սակայն վանքն էր պարտավոր վճարել:

Այնտեղ էին նոր տերերին համակերպող երկու վարդապետներ Եզնիկ և Դանիել:

Վանի ծովակը օվկիանոսի մակերեսից 5000 ոտք բարձրության վրա է: Նրա ջուրը սարսափելի դառնաղի է և բորակով հագեցված: Նա մոտավորապես երկու անգամ ավելի մեծ է Սևանա լճից՝ թե խորությամբ և թե տարածությամբ: Շրջապատված է ձյունածածկ լեռներով, որոնցից մեծ քանակությամբ գետեր ու գետակներ են թափվում ծովակում, հետևապես նրա գոլորշիացումը իր մեջ թափված ջրերի համեմատությամբ նվազ լինելով՝ ծովակը հետզհետե բարձրանում և տիրապետում է իր ամբողջ: Այդ ծովակի ամբողջ մեծ մասը համաշխարհային անմրցելի գեղեցկություններ ունեն: Նրա հարավ-արևելյան անկյունում է գտնվում Աղթամարա կղզին, որից մոտավորապես հինգ կիլոմետր հեռու է նրա դրսի տունը՝ Ախավանքը:

Ախավանքը գեղեցիկ դիրքով, ջրառատ ու այգիներով շրջապատված մի հարուստ անկյուն է: Ահա այդտեղ դարոցի պարապ շենքում տեղավորվեցի ապրելու և ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Ախավանքում իմ չափազանց զգույշ հարցասիրությունս բավարարվեց: Ես տեղեկացա զանազան սպանությունաց, վանքի հասույթների և նրանց ծախսվելու մասին, Ռշտունյաց երկրի կացություն և Դաշնակցության դիրքերի մասին, նույնպես ժողովրդյան և կուսակցությունների կառավարության հետ ունեցած հարաբերությունների մասի: Այդ նյութերը անմիջապես առնչություն չունենալով իմ ինքնակենսագրության հետ՝ ուրիշ անգամ գուցե նրանց վերադառնամ:

ՉԵՌԱԳՐԵՐ

Ես դեռ Ախավանք չեկած՝ շատ էի մտահոգ Աղթամարի ձեռագիրների մասի: Դրսի տունը հասնելուս պես՝ հարցրի, թե ձեռագրերը կղզիում են, թե դուրսը: Եզնիկ վարդապետը, որ կաթողիկոսական տեղապահի պաշտոն էր կատարում, ինձ պատմեց, որ ձեռագրերը մի միջոց լեցված էին զանգակատանը, ուր, չորս կողմից բաց լինելով, անձրև էր ձգում վրանին և քամին էլ պոկոտում էր նրանց թերթերը: Այդ պատճառով բերինք դուրս ու թափեցինք այն փոքր սենյակը, ուր հիմա գտնվում են: Առաջարկեցի, որ անմիջապես ինձ թույլատրվի տեսնել նրանք: Եզնիկ վարդապետը, որի անվան վերջին «նիկ» վանկը սխալմամբ էր պահված, ինձ ընկերացավ, և մենք միասին տեսանք թանձր փոշիների մեջ իրար վրա թափթփված պատվական ձեռագրերը: Այդ բոլորովին փոքր խուցին կից կար մի ուրիշը, որի մեջ լեցված էին աշակերտների այբբենարանները: Այդ երկու խուցերն էլ առաջ հավի բուն էին եղած: Ես մոտեցա և վերցրի այբբենարաններից մի քանիսը և թափ տալով փոշիները՝ բաց արի, տեսա նրանց բոլորի երեսների վրա փակցրած էին մագաղաթներից մկրատված նկարներ: Իմ հուզումնալից վերաբերմունքը զայրույթի փոխվեց, և երբ մենք ճաշի հրավիրվեցինք, ուր սեղանին մասնակից էր «փաշա» մականվանյալ Դաշնակցության լիդեր Արամը: Ես շատ խիստ արտահայտվեցի և պահանջեցի, որ այդ թանկագին ձեռագրերը էջմիածին փոխադրվեն՝ իբրև ավելի ապահով մի տեղ: Արամը, որ միամտություն ուներ կարծելու, թե ինձ նման անկուսակցական մի նկարչի հեշտ է իրենց փարախը մտցնել, սիրալիք էր դեպի ինձ: Բացի դրանից, նա համոզվեց, որ ազգային բարձր կուլտուրայի այդ գանձերը պետք է փրկել և խոստացավ շուտով էջմիածին ուղարկել: Ինչպես շատ գործերում՝ այս անգամ էլ նա իր խոստումը չկատարեց:

Ինն ամիս հետո, երբ Վանի գաղթը եղավ, Ախավանքում

գտնված ձեռագրերը անդուկների մեջ առազաստանավով բերում են Ավանց գյուղի նավահանգիստը և այնտեղ հաջողացնում են երեք անդուկ ուղարկել էջմիածին, իսկ երկու անդուկ ձգում են ծովը, որպեսզի թուրքերի ձեռք չընկնի: Էջմիածին ուղարկված անդուկներից մեկի միջոց Դանիել վարդապետի անկողինն է դուրս բերվում, իսկ մյուս երկու անդուկների ձեռագրերը այժմ գտնվում են մեզ մոտ:

Ախավանքում ես ընդօրինակեցի իննը լավագույն ձեռագրերի նկարները և լուսանցքային զարդերը: Այդ ընդօրինակությունները ինձ հետ լինելով՝ ազատվեցին կորստից: Գաղթից հետո, երբ մի կերպ Թիֆլիս հասա և երբ ոչ հագուստ ունեի վրաս և ոչ փող զբաղանումս, այդ ձեռագրերի ընդօրինակությունները տարա Հայոց ազգագրական միության գրասենյակը, ուր ընկ. Լալայանը վերցրեց այդ կոպիտները՝ իրենց վարչական ժողովին ներկայացնելու: Բայց որովհետև շատ հավանեց, հանեց, երեք ուղբի փող տվեց և մի էջի բեռ էլ խոստում, որ իբր թե իրենց վարչությունը շատ լավ պիտի գնահատի ու հետո փողեր պիտի ստանամ: Իհարկե, ձգձգումի պատճառով ես հեռացա և փող չկարողացա ստանալ: Այժմ իմ այդ իննը ընդօրինակություններից միայն երեք հատ տեսած եմ մեր Պետական թանգարանում, իսկ մյուսները անհետացած են:

Ախավանքում իմ կորցրած ժամանակը ճաշերի, լողորդության և մարմնամարզի ժամեր էին, մնացյալ պահերին ես եռանդով աշխատում էի նկարելու, գծագրելու և ձեռագրերից հին հայկական արվեստի ուսումնասիրությունները:

Իմ ապրած տեղի մոտիկ, ջրերի վրա կանգնած կերերար հնամենի մի առազաստանավ, առավոտները արևածագին ես նկարում էի այդ նավակը և իր վարողը, վարդագույն ֆոն կազմող վեհափառ Սիփանին և ծիծղկտուն ծովակի հետ: Նավավարը ինձ ասաց, որ վաղ առավոտյան այս «գողտրիկ» նավակով մի գյուղացի ընտանիք պիտի փոխադրեմ Կարճկանի գավառը, և ավելացրեց. «Քանի որ բարեկամ դարձանք, առավոտ երկու ժամվա չափ կզբաղեցնեմ, մինչև նրանց էլ նկարես նավին մեջ»: Հաջորդ լուսաբացին

կանուխ ինձ հաջողվեց նկարել այդ գյուղացիներին իրենց հին հայկական տարազներով, երբ արևը նոր էր համբուրում վետվետող ջրերին և երբ թռչկոտող ցուլացումները ակնապարար էին:

Հետագայում այդ նկարս էլ կորսվեց գաղթի ճամփին: Դրանից ի զատ այնտեղ ես նկարեցի գոմեշներ, հորթեր, շներ, կալեր, կալվորներ և այլն, որոնք նույնպես կորսվեցին:

Այդ օրերին ծովափնյա պարտեզում նստած էինք, երբ արևի ամբողջական խավարում տեղի ունեցավ և աստղերը փայլել սկսեցին: Վարդապետները բերին Եֆիմերդին ու կարդացին, որ մեծ արյունահեղություններ էր գուժում և մի կարգ թագավորների էլ գահընկեցություն էր ավետում: Այդ գուշակությունները ամբողջությամբ կատարվեցին 14-ին սկսած իմպերիալիստական պատերազմին:

Վերատեսուչ Հոֆ բեյը Կովկասից դեպի Վան անցնելիս՝ մենք իմացանք, որ «հայերի բարեկամ» փոխարքա Վարանցով-Դաշկովը պաշտոնապես շնորհավորել էր խելքից աղքատ Գևորգ կաթողիկոսին, որ ուսաց դիվանագիտության ազդեցությամբ թյուրքաց սուլթանը հաստատել էր ռեֆորմների ծրագիրը և ընդունել էր պետությունների առաջարկված այս երկու եվրոպացի վերատեսուչներին, որք պիտի հսկեին օրենքների գործադրությունը հայկական նահանգներում:

Ես հետ ցատկեցի վերոհիշյալ չնչված լուրի մասին երկու խոսք ասելու՝ հետևյալ պատճառով:

Այդ օրերին Ախավանք եկան 25-ի չափ ոստիկաններ՝ մի հարյուրապետի գլխավորությամբ: Զորապետը հայտնեց, որ վաղը Հոֆ բեյը այստեղ է լինելու, նրա համար ենք եկել:

Հոֆ և Վեստենիկ վերատեսուչներին դյուրություն տալու համար՝ հայկական նահանգները երկու շրջանների էին բաժանած, որպեսզի բարենորոգող հսկիչներից յուրաքանչյուրը հնարավորություն ունենար իր շրջանի աշխատանքներին հասնել: Արևելյան նահանգները Նորվեգիայի Հոֆ բեյի շրջանն էր:

Հոֆը արդեն հասած էր Վան, բայց իր պաշտոնին համար ընդունելություն չգտնելուց ի զատ, Թալաթ փաշայից էլ հե-

ռագիր էր ստացել, որ շուտով վերադառնա Պոլիս, որովհետև եվրոպական պատերազմի և թյուրքական զորահավաքի պատճառով դադարեցվում է ռեֆորմների խնդիրը, ուրեմն Հոֆ բեյը Վանի ծովի հարավային ափով Պոլիս վերադառնալիս հաջորդ օրը Ախավանք ժամանեց իր շքախմբով:

Ոստանի գայմագամը և զորաց հազարապետը ընկերակցում էին վերատեսուչին: Գայմագամը ինձ ծանոթացրեց Հոֆ բեյին, բայց միշտ աշխատեց խանգարել, որ մենք առանձին խոսակցություն չկարողացանք ունենալ: Նույնիսկ երբ կաթողիկոսական տեղապահը մի ճոխ սեղանով պատվեց հյուրերին, գայմագամը նստեց իմ և Հոֆի մեջտեղը՝ լսելու համար մեր ֆրանսերեն խոսակցությունները:

Ճաշից հետո դուրս եկանք ծովեզերյան այգին, ահա այնտեղ էր, որ Հոֆ բեյը ինձ մոտեցավ, և մենք դյուրություն ունեցանք հինգ րոպեի չափ խոսակցելու: Ես նրան հարցրի, թե արդյոք ճիշտ է, որ Թալաթ փաշայից ձեր Պոլիս վերադառնալու համար հեռագիր էք ստացել, ասաց. «Այո, բայց ինչո՞ւ էք հարցնում»: Պատասխանեցի, թե կարծեմ այդ նշան է, որ տակավին կայունացած չէ մեր երկրի քաղաքական կացությունը: Նա ժպտալով ասաց. «Թե՛ ինք և թե՛ Վեստենիկը բոլորովին անկախ են թյուրք կառավարությունից, և թե մեծամեծ բարենորոգումներ պիտի կատարվին հայկական նահանգներում, ուր օրենքները ճշտությամբ պիտի գործադրվեն և թե երկիրը տնտեսապես պիտի բարգավաճի»: Հետո անմիջապես ավելացրեց. «Ես արդեն մի քանի միլիոն ֆունտ մայրիի և կաղնի ծառերի սերմեր եմ պատվիրել Նորվեգիայում, որ այդ բլուրները (իր երկար թևը պարզելով դեպի մեր բուսականությունից զուրկ լեռները) բոլորն էլ անտառապատվեն» և այլն:

Հետո երբ իմացավ, որ Պոլսում ես նկարչական դպրոց ունեմ և ճանապարհների անապահովության պատճառով չեմ կարող վերադառնալ, առաջարկեց իրեն ուղեկցել մինչև Պոլիս: Ես շնորհակալություն հայտնեցի իր բարյացակամության համար և ասացի, որ չեմ ուզում թյուրքերի մեջ կասկած արթնացնել: Նա ասաց. «Չեմ կարծում, որ այդքան զգուշության պետք կա»:

Փայմագամ բեյը մոտեցավ և հայտարարեց, որ ամեն ինչ պատրաստ է ճամփորդության համար:

Պարտեզից դուրս եկանք, երբ ճամփորդները նստած էին իրենց ձիերը, Հոֆ բեյը ինձ մոտենալով, ջերմ մնաք բարևից հետո, ասաց, որ մենք հետո կտեսնվենք:

Ես իմ կանգնած տեղից հայացքով ուղեկցեցի նրանց, կքած զանազան մտածումների բեռին տակ, մինչև նրանք ծածկվեցին հեռավոր բլուրների ետև:

ԴԵՊԻ ՄՈՒԿՍ

Արամ «փաշան» վանում գտնվող Քաջագնունուն Մոկս էր հրավիրած թե հյուրասիրելու և թե ծանոթացնելու այդ լեռների մեջ կղզիացած աշխարհին: Ես արդեն ծրագրած էի այնտեղ գալ, առիթից օգտվելով ընկերացա նրանց: Ծամփան անցնում էր Ռշտունյաց գավառի ծառազարդ ու զովասուն գյուղերից, ուր անհամար աղբյուրներ, գետակներ և առուներ իրենց վճիտ ու աղմկոտ ջրերով և ծառերի մեջ եղած հազարավոր երգող թռչուններով՝ անցորդին դրախտային տպավորություն էին տալիս: Հետո Եղբրովի լեռնաշղթային հասնելով՝ սկսեցինք ծանր ու հանդարտ բարձրանալ մինչև լեռան մեջտեղ գտնվող Կաթնաղբյուրը: Այնտեղ թողինք մեր ձիերին արածելու ու հանգստանալու և ինքներս էլ այդ սքանչելի աղբյուրի ջրերից մեր ծարավը հագեցնելու:

Այդ սարի կողերի վրա փռված զանազան գույների ոչխարի հոտեր էին արածում, սև ոչխարների հոտը բավական մոտիկ էր մեզ, նրա հոփվին ուղղելով խոսքս՝ գոչեցի. «Տոստո՛, նանե շիր», որ նշանակում է. «Բարեկամ, հաց ու կաթ առատ լինի»: Նա պատասխանեց. «Իմ աչքիս և գլխիս վրա» ու անմիջապես իր պայուսակից դուրս քաշեց մի փայտե կոտ ու մոտենալով ոչխարներին, կթեց ու բերավ դրեց գրեթե 0 աստիճան պաղություն մեջ: Ծառապեղծ կաթը սառելով՝ մոտավորապես նրա կեսը սերի վերածվեց: Հետո իր չանթայից (պայուսակ) դուրս քաշեց սաջի վրա թխած լավաշներ ու դրավ պայուսակի վրա և կաթով լեցուն կոտը ջրից վերցնելով՝ ասաց. «Դուք իմ ազիզ հյուրերն եք, բարո՛վ, հազա՛ր բարի եք եկել, համեցեք, մեր աղքատիկ հյուրասիրությունը մի մերժեք»:

Հովիվները ոչ գդալ ունեն, ոչ բաժակ, պետք է որ յուրաքանչյուր անհատ վերցնեն լավաշ, կրծեր ու հետո կոտից մի ումպ կաթ ըմպեր վրան, և այդպես կարգով կատարվում էր խմելու և ուտելու գործողությունը:

Հավ հանգստանալուց հետո մենք վեր կացանք և շնորհակալություն հայտնելով հովվին, սկսեցինք բարձրանալ: Արդեն հասած էինք մշտական ձյունների սահմանը: Թեև ձիեր առջևնիս արած քշում էինք, բայց նրանք նորից դժվարանում էին բարձրանալ ուղղահայացի մոտեցող թեքությամբ ձյունների վրայով: Վերջապես Եղերովի գավակի վրա էինք, որտեղից բացվում էին սքանչելի և աննման տեսարաններ դեպի ամեն կողմ: Հարավից Առնոսի գագաթը չրջապատված ալիքանման լեռնաշղթաներով, որք աստիճանաբար հեռանալով դեպի Միջագետք, կորչում էին մշուշի մեջ: Արևելքից Արտոսի գագաթն էր դուրս ցցվում, իսկ հյուսիսից և հյուսիսարևմուտքից երկու տիտաններ՝ Միփան և Նեբրովթ երկնքի կուրծքը խրված, սահման էին դնում մեր հեռատեսության: Բայց այդ լեռները սքանչանքով էին դիտում իրենց թևերի մեջ սեղմված Վանի կապուտակ ծովակը, որ մշտապես կժպտար ու կխաղար արևի ճառագայթներին, աստղերի ու հովերի հետ և իր պաղորակ կուրծքի վրա կօրորեր երբեմն հանդարտորեն, երբեմն կատաղորեն, հեռվից ջրուշանների նմանող առագաստանավերը:

Նստած հիացմունքով և խորասույզ լուսթյամբ դիտում էինք այդ հոյակապ տեսարանները, երբ ես ուշքի եկա և պատմեցի հետևյալ տեղական անմեղ անեկղոտը:

«Մի անգամ երկու մոկացիներ իրենց անդնդախոր ձորերից բարձրանում են Եղերովի վրա, նույնտեղ, ուր մենք նստած էինք այն պահին, և հանկարծ տեսնում են Վանի դյուլթիչ ծովակը: Մեկը ցույց է տալիս. «Տու՛ր, ծո՛վ, ծո՛վ, կյամի կա վերեն, տեսե՛ր ես»:

- Համ տես, Համ կերեր եմ:

- Վա՛, ախր տափից է շինած, ի՞նչխ կերար: Մյուսը պատասխանում է. «Հա, ես գիտցա, որ դփախամ կտեր»: (Տափ կամ տրփ շատ հաստ տախտակներին են ասում):

Եղերովի հարավային երեսից զիգզազ ճանապարհով սկսեցինք իջնել դեպի վար: Զորեպաններն ու ձիապանները, նրանց պախուրցներից բռնած, առջևից էին քայլում և հաճախ իրենց արմունկը դիպցնում էին կենդանիների ճակատին, որ նրանք զգաստ և ուշադիր առաջանային, թե ոչ այդ

զառիվայրը այնչափ թեք էր, որ մի անզգույշ քայլից կարող էին գլորվել անդունդ:

Այդ դժվարակոխ ճամփան միակն է, որ Մոկսը Վանին է կապում, ուրեմն ստիպված էինք անցնել նրանով: Երբ զարհուրելի ձորի հատակին մոտ էինք, ճախակողմը բացվեց Փուլթկա Ս. Գևորգի հուշակավոր վանքը, որի եկեղեցին և ընդարձակ շենքերը բոլորովին անշուք էին:

Այդ հայկական վանքը հարգվում և պահվում է նույնպես քյուրդերի կողմից, որովհետև միակ հանգրվանն էր՝ ձմեռվա բուք ու բորանին ապաստանելու և կերակրվելու համար: Վանքի ոչխարներն ու տավարները առանց հովիվների էին արածում, զի ոչ ոք չէր մտածում մեղանչել Փուլթկա սրբավայրի դեմ: Թեև այնտեղ ինձ վստահացրին, որ գայլերն անգամ չեն վնասել Փուլթկա մալին, բայց կարծում եմ, որ գայլերը հոտերի ու նախիրների հետ գնացող ահավոր շներից էին վախենում:

Փուլթկա Ս. Գևորգը մեծապես հարգվում էր Վասպուրականի ամենահեռավոր վայրերում անգամ, մանավանդ ծովազնացներից, որոնք անպակաս էին անում իրենց սրտաբուխ նվերները:

Մենք, Փուլթկա աղբյուրներից զովանալուց հետո, այլևս հեծանք մեր ձիերը և այդ դաժան ու անջրդի ձորի մի նեղ արահետով առաջացանք մոտ երկու ժամ: Հանկարծ նշմարեցինք աջ կողմի լեռնալանջին՝ ծուխի նմանող փոշի էր բարձրանում: Քիչ էլ մոտենալով տեսանք, որ այնտեղ մի մեծ քարայր կար, որից դուրս էր բխում և սկիզբ առնում Տիգրիս գետի արևմտյան ճյուղը: Այդ կանաչավուն ջրերը ընկած ժամանակ հսկա ժայռերին զարնվելով՝ նրանց մասերը փոշիանում ու ծուխի պես օդ էին բարձրանում:

Ահա այդտեղ Արամ «փաշան» իր մոկացի ընկերներով ու կրակի վրա խորովվող ոչխարներով դիմավորեց Քաջադնունուն և իր տղաներին, որոնց դիպվածով ընկերացած էի և ես:

Այդ գետակունքի մոտ մենք հանգստացանք, լսեցինք Մոկաց ժողովրդական գեղեցիկ երգեր և վայելեցինք նրանց հյուրասիրությունը: Հետո ձիեր հեծնելով՝ գնացինք Մոկս,

որ Հեռու չէր: Ճանապարհով անցնելիս ինձ ցույց տվին քաղաքապետի Մոկայ իշխան Մարթուրյա բեկի ապարանքը, և հավատացրին, որ նա բացառաբար սիրում է հայ և քյուրդ աշխատավոր ժողովրդին:

Թեև Մոկար Վանի կուսակալության մասն էր կազմում, բայց բնականորեն նա ավելի դյուրին հարաբերություններ ուներ Ջզիրբի և Միջագետքի հետ:

Մոկացիները պարի և երգի մասնավոր ընդունակություն ունեին: Շատախոցոց պես իրենք էին գործում իրենց շալն ու շալվարը. տարբերությունը միայն ոտնամանների մեջ էր: Նրանք կաշիի սուլեր (չուստեր) էին կարում և հագնում և այդ սուլերի տակը ծածկում էին սրածայր գամերով: Դա ի հարկե ծանր էր և կոպիտ, քան կոշիկը, բայց գետնին, քարերին և սառած ձյան ավելի լավ էր կառչում:

Մոկացիք աշխույժ և աշխատասեր էին, հին սիստեմի կողմնակից մեղվաբուծությունը շատ էր զարգացած այնտեղ:

Ես անմիջապես աշխատել սկսեցի: Մի օր, երբ կամուրջն անցնելով, գետի աջ ափին նկարում էի, տեսա որ դիմացի ափի վերևից անցնող ճանապարհով գնացողները ինձ նշաններ են անում: Գետի ձայնը չէր թողնում, որ ես լսեի, հետևապես ձեռքով արի, որ կամուրջից անցնելով գան ինձ մոտ: Երբ նրանք ինձ մոտեցան, միայն այն ժամանակ ճանաչեցի այդ Պետերբուրգի հնագիտական ինստիտուտի երկու հայ ուսանողներին, որոնք այդ գարնան Պոլսում ինձ հյուր եղան, երբ եկած էին բյուզանդական մոզաիկներն ուսումնասիրելու:

Բարեկիւղ հետո նրանց առաջին խոսքն եղավ հայտնել, որ իմպերիալիստական պատերազմը սկսվել է, և թյուրքիստան էլ պատրաստության մեջ է: Այդ անակնկալներ բերող շանթահարիչ լուրից ընկճված՝ անմիջապես հավաքեցի տուփս, եռոտանիս և նկարը ու միասին վերադարձանք Մոկա: Այդ տեղից ուսանողները անմիջապես մեկնեցին Շատախ, և մենք էլ երեք գյուղ պտտելուց հետո՝ վերադարձանք Ախավանք, ուր պատերազմի ազդեցությունը կզգացվեր: Մարդիկ զգուշ և կասկածամիտ վերաբերմունք ունեին, ճանապարհների վրա երթևեկությունը շատ էր պակաս

սած, և ամեն տեղ ոստիկաններ կերևային, որոնք սովորականից ավելի կոպիտ և հայհոյող էին դարձել:

Մոտիկ գյուղերից մի քանի շրջահայաց մարդիկ հավաքվել էին Ախավանք՝ իբրև կենտրոն տեղ լուրեր առնելու, որպեսզի իրենց դիրքը որոշեն: Այդ եկողների հետ կար ութսունհինգ տարու առույզ մի ծերուկ, որ շրջանի ամենահայտնի ժողովրդական երգիչ և հանկարծաբան բանաստեղծն էր: Այն ի՞նչ սքանչելի հին ու դյուցազնական երգեր ուներ նա: Ամեն անգամին լսելիս հոգիս ցավում էր, որ կոմիտասը ինձ հետ չէ, որ ձայնագրի այդ երգերը: Մի քանի ամսից այդ հազվագյուտ երգիչն էլ սպանվեց, ու կորան նրա երաժշտական գոհարները:

ԱՂԹԱՄԱՐ ԿՂԶԻՆ

**ԻՐ ՆԵՐԿԱ՝ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋՎԱ ԵՎ
ԱՆՑՅԱԼԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

Ես շտապեցի մտնել Աղթամարա կղզին և նկարել, քանի թյուրքիան չէր խառնված պատերազմին: Կղզիում գտնվում էին 94 տարեկան Պողոս վարդապետը, որի աչքերը դժվարանում էին տեսնել, և մի պառավ տնտեսուհի իր թոռնիկի հետ, որոնք գրեթե լքված էին այնպես, ինչպես այդ չքնաղ կղզին:

Նրանք շատ ուրախացան, որ ես մի ժամանակ պիտի մնամ կղզին իրենց հետ: Եվ էլ ավելի ուրախացան, երբ տեսան իմ բերած պտուղները և ուտելիքները: Իսկ ես հաճույքով դարձա այդ մեկուսացած, զրկանքներից ու լքումից կազմված երրորդուլթյան անդամ, այն քաղցր հուսով, որ այդ պատկառելի գեղեցկուլթյամբ վայրերից մի բան կարողանամ կորզել հայ արվեստին համար:

Նրանք իմ ականջները խոշտանգող շատ բաներ պատմեցին Դաշնակցության տիրապետության օրերից: Ի՛նչ սպանություններ, ի՛նչ վանդալություններ, ի՛նչ թալան...:

Կղզու ներկա դրուլթյունը ողբալի էր: Երեսուկ տարի առաջ իմ տեսած պտղատու ծառերի այգիներից երեք հատ քոսոտ և գրեթե չորացած ծառեր միայն մնացած էին, մի քանի հատ էլ բարդիներ կղզու հյուսիս արևելյան ծոցի ափին, ուր կար մի ջրհոր, որից քաղցր ջուր էին վերցնում: Հարավային ափի ջրհորը ավերված էր ծովի աղի ջրով: Շենքերը անտերուլթյունեն ավերածության ու փլվածքների անկյուններ ունեին: Ջարմանալի կերպով բազմացել էին օձերը: Աքանջելի եկեղեցու խորաններից մեկում տասներկու կաթողիկոսական գավազանների պարապ պատյաններ միայն մնացել էին: Տնտեստան մեջ մի երկաթյա ճրագկալ կար, հին դարերից մնացած մի գեղեցիկ իր, որի վրա երեք

ճրագ դնելու տեղ և վերի ծայրին էլ երկաթից շինված մի աքաղաղ կար, որ իր աղոթարանի երգն էր երգում: Իսկ կղզում գտնված երեք անձիքն էլ, որոնց հազվադեպ կերպով հանդիպում էի դրսում, կարծես նույն մրտաված տնտեստան ճրագակալի մասեր էին կազմում: Նրանք որևէ կապ և հետաքրքրուլթյուն չուներին հեռավոր Վարազա սարից ծագող արևի ու կղզում և նրա շուրջ գտնվող գերապայծառ գեղեցկուլթյանց հետ: Նրանք լոկ ստվերներ էին մի որևէ բույսի, քարի կամ վայրի կենդանիների: Թեև նրանք մեռած չէին, բայց դժվար էր ասել, որ նրանք կապրեին:

Երեսուկ տարի առաջ ուխտագնացուլթյան եկածս ատեն, երբ դեռ Խաչատուր վերջին կաթողիկոսը ողջ էր, կղզին անհամեմատ լավ կացուլթյան մեջ էր: Մեծ միաբանուլթյուն կար, այցելուներն անպակաս էին և փարթամ սեղանատուն ուներ: Երկու քաղցր ջրերի հորեր կային: Թեմերի կենտրոնավայրն էր, ուր մեծ եռուզեռ կար: Հարուստ եկեղեցին շատ հարուստ զարդերի ու զգեստների հետ տակավին պահում էր Արծրունի թագավորական մի դրոշակ:

Այդ ժամանակներ կաթողիկոսը ձեռնարկած էր տաճարի ներքին պատերը ներկել տալու գործին: Գուռզյան անունով մեկին հաջողվել էր համոզել տգետ կաթողիկոսին, որ արևմտյան պատը չներկվի, որովհետև նրա վրա հին դարերից կապույտ գծերով նկարված մի պաննո կար: Այդ պաննոն մինչև 1914 թվին մնում էր:

Կղզու արևմտյան պատին բարձրանում էր մի լեռ, որը արևելյան կողմից թեք իջնում էր մինչև կղզու սիրտը՝ երկու այգիները, իսկ այդ լեռնաժայռի արևմտյան երեսը ուղղահայաց կերպով ընկնում էր ծովը, որի ժայռոտ երեսի խորշերի մեջ անհամար թռչուններ բույներ դրած՝ իրենց բյուրավոր ձագերն էին սնուցում ու թուցնում: Կղզու հարավ-արևմտյան անկյունը անջատված մի կղզյակ կար, որի վրա հին դարերում եղած մատուռի հիմքեր ու պատերի մնացորդներ կային, որոնց մեջ այժմ օձեր էին վխտում:

Ավելի հին դարերում Աղթամար կղզին էր «Ի տեղի ապաստանի և զբոսանած»: Տասներորդ դարի սկիզբները Գագիկ Արծրունի իշխանը, երբ թագավոր դարձավ, երկիրը

խառնակ և անիշխանական վիճակի մեջ էր: Գագիկը կորու-
վում և իմաստութեամբ օժտված էր, հպատակեցրեց ըմբոստ-
ներին և խաղաղեցրեց երկիրը: Նա Դվինի վրա գնալով՝
հպատակեցրեց հագարացիներին: Հետո Պարսից թագավո-
րից ստացավ Հայոց և Վրաստանի արքայի տիտղոս:

Այդ Գագիկ արքան, որ ռազմական և պաշտպանողական
շինարարութեամբ մեծապես զբաղվեց, ձեռնարկեց և Աղթա-
մարա շինարարութեան գործին:

Թովմա Արծրունին՝ ժամանակակից պատմաբանը, գրում
է. «Հավուր մեծի արքային հայոց Գագիկ, որ քաջակորով
գիտութեամբ նայեցյալ ի տեղույն զբոսանա և ծանուցյալ
զնա ապաստան լինել աշխարհի ի հինից թշնամյաց, ձեռ-
նարկե հիմն արկանել զնա ահեղ իմն և զարմանալի հիաց-
մամբ»:

Արքա Գագիկ հիմքեր դրեց տվավ Աղթամարա կղզու
շուրջ մի քանի տեղեր ծովի մեջ և նրանց վրա բարձրացրեց
պարիսպներ և կառուցեց Աղթամար քաղաքը: Դրանից հե-
տո հեռավոր տեղերից քարեր բերել տալով՝ հիմնել տվավ
Աղթամարա սքանչելի տաճարը, որ եզակի է իր ճարտարա-
պետութեամբ և գեղեցկութեամբ:

Թովմա Արծրունին գրում է. «Եվ քանզի ճարտարապետ
արվեստին էր Մանուել՝ այր լի իմաստութեամբ և զորավոր
ի գործո յուր՝ հրաշակերտ էր եկեղեցին զարմանագործ ար-
վեստի»:

Այդ տաճարի զանգակատունը հետագա դարերում կա-
ռուցված թույլ գործ էր: Նա շինված էր տաճարի հարավա-
յին դռան կից, որտեղի բարձրից հին ժամանակ մուտք է
եղել տաճարի մեջ՝ նույն դռան վերև կառուցված արքայա-
կան օթյակի համար: Այդ օթյակը մի ամբողջական գեղեց-
կություն էր: Նրա մեջտեղ մի խոշոր փղի գլուխ կար, որ բա-
րեձև կերպով իր կնճիթը ոլորելով՝ պատին էր հենում: Փղի
գլխի երկու կողմեր ուրիշ վայրի գազանների գլուխներ և
կուրծքեր էին քանդակված, որոնք պատից դուրս գալով,
շնորհալի դասավորութեամբ փղի գլխի հետ միասին պա-
հում էին օթյակը օդի մեջ:

Տաճարի դրսի պատերի և գմբեթի վրա կան վերի աստի-

ճանի հետաքրքիր բարձրաքանդակներ (գորելիեֆներ):
Դրանք ներկայացնում են մարդիկ, ֆանտաստիկ կենդանի-
ներ, թռչուններ, կոմպոզիցիաներ, մեղալյոններ և այլն: Կա-
քավների, նռների, ողկույզների ֆրիզներ կան, ինչպես մի
լայն շարան (ֆրիզ) որթատունկերի, այգեգործների, վայրի
կենդանիների, որոնց ամենքն էլ դասավորված են ճաշակով
և նպաստում են շենքի գեղեցկության: Այս հեքիաթային
կառուցվածքի հիմնական գաղափարը մեծությունն ու ներ-
դաշնակությունն է: Մենք իրավամբ կարող ենք պարծենալ
այդ ճարտարապետութեամբ այնպես, ինչպես հույները
իրենց կլասիկ արվեստով: Բայց ափսոս, որ այդ արձանների
մեծ մասը նշանառության առարկա դառնալով՝ կոտորված
էին մեր ոչ կուլտուրական հրացանակիրների կողմից:

Չգիտեմ, որ թվից մնացած երկու բարձր սանդուղքներ
կային՝ հենված տաճարի պատերին: Ես, դրանց վրա բարձ-
րանալով, մոտիկից զննում էի քանդակները: Ասորոց չարու-
թեան աստծո նմանողությամբ մի բարձրաքանդակ կար, որի
մի աչքի մեջ կապույտ հախճապակի էր ազուցված: Ես դրա
ածխանկարն ունեմ: Ուրիշներ կային, որոնց աչքերի մեջ
ապակիի կտորներ էին մնացել: Արձաններից մի քանիսի
թևերի և ոտքերի ներքև, ուր պատը պաշտպանված էր
անձրևներից, երկնային կանաչավուն գույնով ներկված տե-
ղեր էին մնացել: Եթե ամբողջ եկեղեցին իր շինության ժա-
մանակ ներկված լիներ, պետք էր, որ ժամանակակից պատ-
մաբան Թովմա Արծրունին այդ մասին հիշատակեր: Ուրեմն
արժե, որ ապագա ուսումնասիրողներ ուշադրություն
դարձնեն ստուգելու համար այդ յուղաներկերով ծածկված
տեղերի խնդիրը:

«Երկու մեծություններ» անունով մի նկար վերջացրի կղ-
զիում. այդ Աղթամարա տաճարն ու Արտոս լեռն էին: Տա-
ճարը, մեջտեղ ընկած կապույտակ ծովը կտրելով, կղզին կա-
պում էր Արտոսի և Եղբրովի հետ: Կարծում եմ, որ այդ նկա-
րը կարող էր միջավայրի գեղեցկությանց մասին որոշ գա-
ղափար տալ: Խորապես ցավում եմ և այդ նկարի կորստյան
համար: Բայց 8-10 հատ տաճարի վրայի քանդակներից, որ
այլուսիս մեջ գծագրել էի, տակավին կմնան:

Հինգ շաբաթ կղզում առանց ժամանակ կորցնելու աշխատել էի արդեն, երբ մի առավոտ նավակը կղզու բնակիչներին ուտելիք բերեց, ինձ էլ՝ մի տոմսակ, որի մեջ լակոնական ձևով երկու նախադասություն կար գրված. «Թերլեմեզյան, անմիջապես դուրս արի, արյուն է հորդում»:

Խորապես տխրեցի, որ ստիպված եմ անջատվել և ակամա զրկվել այդ տեղերի արբեցնող և հոգին պարուրող գեղեցկություններից: Բաժանվելուս պատճառով լաց էին լինում մամիկն ու թոռնիկը, ծերունի Պողոս վարդապետն էլ վզովս ընկած համբուրում էր:

Միջանկյալ պատմեմ, թե իմ հեռանալուց երկու շաբաթ հետո կղզի էին խուժել տաս թյուրք ժանդարմներ՝ գայն պաշտպանելու պատրվակով: Նրանք այնտեղ մնացել էին երկու ամիս և ամբողջ ժամանակը բռնացել էին զառամյալ վարդապետի վրա, որ նա կատարի իրենց բոլոր ծառայությունները, իսկ մեկնելիս կտրում են նրա գլուխը և չպրտում են ծով: Հետագային պատահամբ ազատվող մամիկն ու թոռնիկն էին պատմել այդ իրողությունը:

Հիշյալ նահատակված Պողոս վարդապետի գլխանկարն ունեմ իմ գործերիս մեջ:

Ես, նույն նավակով մեկնելով, հասա Ախավանք, ուր ծովեզերքումն էր գտնվում Ոստանի զինվորական հազարապետը մեծ թվով զինվորների և ոստիկանների հետ: Ընդհանուր զորահավաքն սկսել էր, և զինվորական մարմինն եկած էր ընդունելու շրջակա հայ գյուղերից բռնություններ հավաքած, հաց, յուղ, ձավար, դավուրմա, փոխնորդ, գուլպա և այլն իրեղենները՝ բանակի կարիքների համար, և այդ բոլորը տեղավորում էին արդեն գրավված դպրոցի շենքի մեջ:

Այնտեղ Բաղեշից վերադարձած մի վանեցի ձիապան էր եկել, որ միամտաբար պատմած էր ճանապարհին իր տեսած բռնությունները՝ կատարված ոստիկանների կողմից: Հազարապետն իմանալով, խիստ զայրացել և մի քանի մտրակի հարված տալով նրան կալանքի տակ էր առել հետագա պատիժների համար: Այդ օրն էր, որ ես կղզուց դուրս եկա և հազարապետին բարևելուց հետո, նկարներս փոխադրեցի շենքի մեջ ու սկսեցի մտածել Վան վերադառնալու մասին,

որի համար միայն մի միջոց կար. դա վանեցի վտանգված ձիապանի հետ մեկնելս էր, եթե հաջողի հազարապետի բարկությունը մեղմել:

Կեսօրին երկու վարդապետներ, հազարապետը և ես ճաշում էինք, երբ հազարապետը ինձ դարձավ և քմիծաղով հարցրեց. «Ի՞նչ է, ճգնավո՞ր կուզեիր դառնալ կղզում»: Ասի. «Էֆենտի, գեղեցկություններով տարվող մարդը ժամանակի տևողությունը չի գգար: Ես հույս ունեմ, որ գիտակից բեյերից պիտի գնահատվեն իմ աշխատանքները»: Հետո անմիջապես հարցրեցի. «Եթե թույլատրեք, ձեզանից մի շնորհ պիտի խնդրեմ, որ ներք այն բանտարկված վանեցի ձիապանին, որ ինձ Ոստան՝ գայմագամ բեյի մոտ հասցնե՞ն»: Բավական մտածելուց հետո՝ դարձավ իմ կողմ և հանդիսավոր կերպով ասաց. «Հայտե, սրգա բաղըչլադըմ» (ձեզ եմ շնորհում):

Ճաշից անմիջապես հետո շնորհակալություն հայտնեցի հազարապետին և նույն օր Ոստան հասնելով ձիապանը իր ձիու և իրեղեններին հետ մոտիկ գտնվող Չազար ս. Նշանի վանքը ուղարկեցի, որպեսզի նա շատ աչքի չընկնի: Ես մտա գայմագամի մոտ խնդրելու, որ ինձ Վան ուղարկելու միջոց հայթայթի: Կառավարության շենքի առաջ հավաքված էին մեծ թվով ջորիներ, որոնք բռնագրավված էին ժողովրդից բանակի համար: Գայմագամը, բաց պատուհանին մոտենալով, կանչեց մի ինչ-որ հիսնապետի տեղակալի և պատվիրեց, որ ինձ մի ջորի տա նստելու և ապահով կերպով Վան հասցնե: Հետո ինձ դառնալով՝ ձեռք տվեց և հանձնարարեց իր հարգանքները հայտնել կուսակալ թուհսին բեյին: Ես, դուրս գալով կառավարչատնից, դիմեցի այն չավուշին, որին հանձնարարված էի: Նա հրամայեց բերել մի ճերմակ ջորի, որի վրա թաղիք կար կապված և երկու կողմից էլ չվանից շինված օղեր՝ փոխան ասպանդակի: Ասաց. «Այժմ կնստես այս ջորին, կերթաս գիշերելու Չազարում, առավոտն էլ կգնաս խառնվելու այս կարավանին, միասին կգնաք Վան»:

Արդեն մայրամուտ էր: Ես հեծա իմ ճերմակ և գեղեցիկ ջորին ու քչեցի դեպի վանք: Տրամադրությունս լավ էր և նույնիսկ երգել սկսեցի: Երկուհարյուր քայլ հազիվ հեռա-

ծանոթ լինելով դաշնակների գործունեության, արդեն սա-
ռած և իրենց բարեկամությունն էլ թշնամության էր փոխ-
ված: Ուրեմն Արամի վարմունքը գուտ ինքնախաբեություն
էր և ուրիշ ոչինչ:

Կացությունն այս էր, երբ այդ օրերին թրքական կայս-
րության արևելյան սահմանների ընդհանուր կոմիսար և
բանակների հրահանգիչ Նաջի բեյ Վան եկավ: Նա արդեն
որոշ չափով մասնակցած էր Դաշնակցության Կարնո ընդ-
հանուր ժողովի որոշումներին:

Ես իհարկե հետո իմացա, որ Նաջի բեյ Վանումն էլ դաշ-
նակցական շեֆերին ժողովի էր հրավիրած: Այդ շեֆերը
խոստացել էին Նաջի բեյին, որ անմիջապես իրենցից մեկ
կամ երկու մարդու ուղարկեն Պարսկաստան, կամավորա-
կան բանակները հետ կասեցնելու համար: Նաջի բեյը Վա-
նում իր գործը կատարած լինելով՝ ինքը մեկնած էր պարս-
կական սահմանադուր գտնվող թրքական բանակը:

ԳՈՐԳԱԳՈՐԾ
ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

Տարիներ առաջ, երբ ես Վանի Սանդխտյան աղջկանց
դպրոցի տեսուչ էի, նույն դպրոցի իմ ընկերակից վարժու-
հիներից Մարինե և Եղիսաբեթ քույրեր տակավին անձնվեր
կերպով շարունակում էին փոքրիկ աղջիկներին ուսուցանե-
լու գործը: Այժմ նրանք Այգեստանում ունեին իրենց դպրո-
ցը և դպրոցին կից իրենց գորգագործական արհեստանոցը,
որի մեջ մի կարգ աշակերտուհիներ սովորում էին և գորգա-
գործություն:

Ես Աղթամարից վերադառնալիս ամնիջապես այցելու-
թյան գնացի իմ նախկին ընկեր ուսուցչուհիներին, ծանո-
թանալու համար իրենց դպրոցին և ապա գորգագործական
արհեստանոցին:

Իրենց դպրոցը այդ միջավայրի հասկացողության բավա-
րարում էր, իսկ արհեստանոցը լավ էր: Նրանք բուսական
հաստատուն գույներով ներկում էին իրենց թելերը ու լավ
գորգեր էին գործում, մեխանիկորեն ընդօրինակելով հին
պարսկական գորգերից: Միատեսակ ոճի հասկացողություն
չկար և չունեին զանազան տեսակ գորգերի հավաքածո,
որոնցից կարողանաին ընտրանոք ներկայացնել մի նոր
գործ: Ինձ թվում է՝ այն բնական կրակն էլ պակասում էր,
նոր ու ճաշկավոր ձևերով հարստացնելու գործը: Անծա-
նոթ էին իրենց հին հայկական մոտիվները, ազգային ձևը
չկար: Այդ բոլորի մասին ես երկար խոսեցի, հետո ասացի,
որ ձեր կատարած գործը այնուամենայնիվ մի նվաճում է:
Ցավում եմ, որ առիթ չի եղել, որ ինձ նման մարդիկ ձեզ
ցուցումներ անեին ու նկարել սովորեցնեին: Քանի որ ես
այստեղ եմ, կաշխատեմ օգնել ձեզ: Խոստացա և տվի իրենց
երկու հայկական ոճով գորգի նկարներ, բայց այդ նկարնե-
րը պետք էր գործեն հատկապես փոքրիկ քառակուսինե-

րով թղթի վրա վերանկարել, որպեսզի գորգի գործողները կարողանային համարելով քառակուսիների մեջ տեղավորել նկարի զանազան մասերը: Նրանք այդ չկարողացան անել: Ես ստիպվեցի այդ գործողությունն էլ կատարել:

Այս գործընթացն այս օր, երբ այդ երեքին թրջական կայսրության արևելյան սահմանների ընդհանուր կոմիսար և քանակաբան Մաքս Կրոպոտկինը ինձ հետ եկավ, այստեղ տեղափոխվեցի և մեզ հետ միասին աշխատեցին: Մաքսը ինձ հետ միասին աշխատեցին, որպեսզի կարողանային համարելով քառակուսիների մեջ տեղավորել նկարի զանազան մասերը: Նրանք այդ չկարողացան անել: Ես ստիպվեցի այդ գործողությունն էլ կատարել:

Այս գործընթացն այս օր, երբ այդ երեքին թրջական կայսրության արևելյան սահմանների ընդհանուր կոմիսար և քանակաբան Մաքս Կրոպոտկինը ինձ հետ եկավ, այստեղ տեղափոխվեցի և մեզ հետ միասին աշխատեցին: Մաքսը ինձ հետ միասին աշխատեցին, որպեսզի կարողանային համարելով քառակուսիների մեջ տեղավորել նկարի զանազան մասերը: Նրանք այդ չկարողացան անել: Ես ստիպվեցի այդ գործողությունն էլ կատարել:

ՎՈՒՄՅԱՆ

Ընդհանրապես անհանգիստ էր դրսի կացությունը, ամենք իրենց կարողությունն չափով գինված՝ սպասում էին խռովություն: Ես էլ նույն զգացումով տարված, հրացանս կողքիս, գորգի վրա թեք ընկած՝ վերև հիշված նկարներն էի պատրաստում, երբ թյուրքական պառլամենտի դաշնակ անդամ Վառամյան էֆենտին սենյակս մտավ: Հարցրի, թե ինչ կա, ինչպես է կացությունը: Նա պատասխանեց որ ամեն տեղ գինվորների խմբեր են ման գալիս՝ հսկողության համար և ավելացրեց.

«Մի բան ինձ համար որոշ է, որ թյուրքերը սաստիկ վախենում են մեզանից»: Հարցնում եմ, թե ինչ հիման վրա է ասում այդ խուսքը: Նա գրպանից մի հեռագիր է հանում ու կարդում: Այդ հեռագիրը Բաշկալեի սահմանազլխից տրված էր թյուրք բանակի կոմիսար, վերև հիշված Նեջի բեյի կողմից, որը կապառնար մեր ծծկեր երեխաներին էլ մորթոտել տալ: Ես խորապես վրդովված՝ ոտքի կանգնեցի և խնդրեցի, որ ասի այդ հեռագրի դրդապատճառը: Նա պատմեց Նեջի բեյի հետ Վանում կայացած ժողովի և իրենց խոստման մասին, որ Պարսկաստան մի ընկեր պիտի ուղարկեն համոզելու համար կամավորական բանակի հրամայատարին հետ կենալու թյուրքերին գրգռող իրենց գործունեությունից: Բայց հետո, ասաց, մենք չկատարեցինք մեր խոստումը, անօգուտ համարելով այն, որովհետև մեր կուսակցությունը Արևելյան բյուրոն է ձեռնարկած այդ գործին, հետևապես մենք համակերպում ենք: Բայց օրերս պարսկական սահմանն անցնող մի բյուրո դուռնվել է, որի քյազախկի օձիքում գտնված է եղել մի նամակ, որ մեր տղերք են ուղարկել Պարսկաստանի կամավորների պետին, խնդրելով նրանց շուտով հասնել այստեղ: Ահա այդ բռնված նամակն է պատճառ այս հեռագրին: Նա նորից կրկնեց, եթե թյուրքերը մեզանից չվախենան, այս տեսակ ամբարտաձան հեռագիր չեն տալիս:

«Մի բան ինձ համար որոշ է, որ թյուրքերը սաստիկ վախենում են մեզանից»: Հարցնում եմ, թե ինչ հիման վրա է ասում այդ խուսքը: Նա գրպանից մի հեռագիր է հանում ու կարդում: Այդ հեռագիրը Բաշկալեի սահմանազլխից տրված էր թյուրք բանակի կոմիսար, վերև հիշված Նեջի բեյի կողմից, որը կապառնար մեր ծծկեր երեխաներին էլ մորթոտել տալ: Ես խորապես վրդովված՝ ոտքի կանգնեցի և խնդրեցի, որ ասի այդ հեռագրի դրդապատճառը: Նա պատմեց Նեջի բեյի հետ Վանում կայացած ժողովի և իրենց խոստման մասին, որ Պարսկաստան մի ընկեր պիտի ուղարկեն համոզելու համար կամավորական բանակի հրամայատարին հետ կենալու թյուրքերին գրգռող իրենց գործունեությունից: Բայց հետո, ասաց, մենք չկատարեցինք մեր խոստումը, անօգուտ համարելով այն, որովհետև մեր կուսակցությունը Արևելյան բյուրոն է ձեռնարկած այդ գործին, հետևապես մենք համակերպում ենք: Բայց օրերս պարսկական սահմանն անցնող մի բյուրո դուռնվել է, որի քյազախկի օձիքում գտնված է եղել մի նամակ, որ մեր տղերք են ուղարկել Պարսկաստանի կամավորների պետին, խնդրելով նրանց շուտով հասնել այստեղ: Ահա այդ բռնված նամակն է պատճառ այս հեռագրին: Նա նորից կրկնեց, եթե թյուրքերը մեզանից չվախենան, այս տեսակ ամբարտաձան հեռագիր չեն տալիս:

Հարց եմ տալիս, թե Նեջին պարզ կերպով ասում է, որ ձեզ պիտի կոտորենք, էլ ինչպես թե վախենում է մեզանից: Նա, գրգռված, իր մյուս գրպանից դուրս է քաշում մի ուրիշ թուղթ, որի վրա գրված է մի ընդարձակ բողոքի հեռագիր՝ ուղղված Թալաթ փաշային, Նեջի բեյի դեմ:

Ես գայրացած գոռում եմ. «Մո, հիմար, եթե դուք կարծում եք, որ Նեջի բեյ հակառակ Թալաթ փաշայի հրահանգներին է գործում, չարաչար սխալվում եք»: Նա բորբոքվելով՝ ասաց. «Նախ՝ Թալաթը մեր շատ մոտիկ ընկերն է, հետո ձեզ համար դժվար է հասկանալ քաղաքական խնդիրները»: Առանց մնաք բարով ասելու՝ դուռն ուժգնորեն վրա քաշելով՝ հեռացավ:

Ես քարացա կանգնած տեղս, սիրտս ճմլվում էր: Նեջի բեյի հեռագրի այն նախադասությունը, թե ձեր ծծկեր երեխաներն էլ կմորթոտենք, հրաշեկ երկաթի պես խրված էր ուղեգումս, և ես սարսուռում էի: Պարզ էր, որ կոտորածի մղձավանջը մշուշից դուրս գալով՝ հսկայական քայլերով մոտենում էր Հայ ժողովրդին:

Օսմանյան պառլամենտի մեպուսի հետ ունեցած խոսակցությունից չորս օր հետո, երբ ես տակավին շարունակում էի աշխատել գորգի նկարների վրա, նորից սենյակ մտավ Վուսայան էֆենդին ու նստեց աթոռի վրա: Ես մոտ տաս րոպե առանց գլուխս բարձրացնելու շարունակեցի իմ աշխատանքը, հետո վերկացա տեղիցս ու հարցրի, ինչ կա, ինչու է եկել: Վուսայանը թախծոտ դեմքով ասաց. «Առաջ պատվիրիր ինձ բան տան ուտելու, քաղցած եմ, հետո եկա ասելու, որ դու հազար անգամ իրավունք ունես, ոչ թե դու, այլ մեր գյուղացիներն էլ մեզանից լավ են ճանաչում թյուրքերին: Թալաթ փաշային տվածս հեռագիրը անօգուտ անցավ, վաղը կուսակալին պիտի գնամ, կանչել է, հավանաբար Թալաթից մի նպաստավոր հրահանգ ստացած կլինի»:

Մյուս օրը Վուսայանը Ջեվդեթ փաշային գնաց, բայց էլ չվերադարձավ: Նրան բռնել ուղարկել էին Բաղեշ ու այնտեղ հրապարակի վրա ոչխարի նման մորթել էին:

Դաշնակցության մեջ Վուսայանի պես մի քանի իդեալիստ և նվիրված մարդիկ կային, որոնք ժողովրդին օգտա-

կար լինելու ձգտում ունեին: Բայց նրանք որևէ դրական արդյունք չկարողացան տալ, նրա համար, որ այդ ազգայնական կուսակցություն քաղաքական վարքագիծը հակասություն մեջ էր ժողովրդյան շահերի հետ: Այդ էր պատճառ, որ նրանք, առիթներ տալով, նպաստեցին մեծապես երիտասարդ թյուրքերի ոճրագործ քաղաքականություն, որ նա բնաջնջի իր երկրի ողջ Հայությունը:

Անմիջապես վար պիտի տեսնենք, որ Հայ կամավորական շարժումը մի ծովի չափ յուղ էր այն կրակը բորբոքելու համար, որի վրա խորովվեց Հայ ցեղը:

Թյուրք կառավարության պաշտոնյաները առիթ չէին փախցնում իրենց Փանատիկ ազգայիններին գրգռելու հայերի դեմ ամեն տեսակ պրովակացիաներով: Հայ ժողովուրդը սպառնալից կացություն մեջ էր: Իսկ ինչ էին անում Հայ դեկավարող շրջաններն այդ օրերին: Պուսի Հայոց պատրիարքարանը ամիջապես Փրկչի ազգային հիվանդանոցի մեջ մեծ թվով մահճակալներ հատկացրեց թյուրք վիրավոր զինվորներին և ամեն կերպ ապացուցեց, որ ինք իր երկրի կառավարության հետ է: Կարնո դաշնակցական ընդհանուր ժողովը թեև մերժեց կամավորական գուճերը հանել ուսանների դեմ, բայց հայտարարեց, որ ինք չեզոք դիրք պիտի բռնի:

Իսկ թյուրքերը եռանդուն կերպով չիթայական խմբեր ու միլիաներ էին կազմակերպում, զինվորական կրթություն ստացած պահեստիներից, բանտից արձակված ոճրագործներից ու համիդյական քյուրդ գորագնդերից, որոնք իբր թե պիտի գործեն ուսանների դեմ, բայց հետո պարզվեց, որ դրանց միայն գործը եղավ՝ բոլորովին անմեղ Հայ կնիկներ, երեխաներ ու գյուղացիներ մորթոտելը:

**ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈՆ ԵՎ
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ**

Դաշնակցության արևելյան բյուրոն համաձայնեց կոմս Վարանցով-Դաշկովի հետ, գործի գլուխ դրեց իր անդամ և կուսակցության արտաքին գործերի վարիչ գոկտոր Զավրիեին. կոպտացիայով հրավիրեց փոխարքայական պալատին բարեկամ Մեսրոպ եպիսկոպոսին, Ալեքսանդր Խատիսյանին և Սամսոն Հարությունյանին, որոնք կոմս Վարանցով-Դաշկովի ցուցումով կազմակերպեցին «Ազգային բյուրո»: Իսկ այս «Ազգային բյուրոն» կրակի դիմաց կակղած մեղրամոմի պես՝ միշտ այն ձևերն ստացավ, ինչ ձև կամեցավ նրան տալ Վարանցով-Դաշկովը:

Ազգային բյուրոյի մշակած և կամավորներին օրհնող, խելքից աղքատ կաթողիկոսից ստորագրված ու Վարանցով-Դաշկովին ուղարկված մի դիմումին մեջ հետևյալ պարբերությունը կար. «Ես երջանիկ եմ հայտարարելու ձեզ, մեծարելի կոմս, նաև այն, որ մեր սահմանից այն կողմ բնակվող հայ ժողովուրդը նույնպես անխախտ հավատարիմ մնաց իր անձնավիրության մեջ մեծ ուս պետություն»:

«Սահմանից այն կողմ բնակվող» հայության քաղաքական ձգտումների մասին կաթողիկոսի ավելորդաբանությունները ճիշտ չէին:

Վարանցով-Դաշկովի ցուցումներով Ազգային բյուրոն կազմակերպեց կամավորական շարժում, առանց նկատի առնելու այն բացառիկ նուրբ կացությունը, որի մեջ գտնվում էր թրքահայությունը:

Այդ կամավորական շարժումը հայերի կողմից պատերազմի հայտարարություն էր թյուրքիային:

Թյուրքիայում գտնվող հայերի հոգեբանական վիճակն ինչ էր այդ կրիտիկական օրերին:

Նրանք, ինչպես 77-ի պատերազմին, մեծավ մասամբ ու-

սասեր էին: Թյուրքը ուժեղացավ չէին սիրում, որովհետև նա մաշող, տարրալուծող, ոչնչացնող ու ստեղծագործ տարրերից գուրկ ուժեղ էր: Նույնպես չէին սիրում և ցարիզմի ուժեղացումը, որովհետև ցարական Ռուսաստանը ազգերի բանտ էր, բայց այդպես լինելով հանդերձ՝ Ռուսաստանում համեմատաբար ավելի էր պահպանվում ժողովուրդների ֆիզիկական գոյությունը: Նա ավելի առաջադիմական երկիր էր: Հիշյալ պատճառներով՝ թյուրքահայությունը ընտրում էր չարաց փոքրագույնը՝ Ռուսաստանը:

Սակայն այդ մոռյալ օրերին թյուրքահայությունը դեմ էր կամավորական շարժման:

Կամավորական խնդրի առթիվ, երբ թրքահայաստանից եկած պատգամավորները պահանջեցին դադարեցնել շարժումը, այդ խստորեն մերժվեց Ազգային բյուրոյի կողմից: Ահա այդ առթիվ ինչ է գրում իրազեկ և այդ գործերին մասնակցող պատմաբան Լեոն իր «Անցյալից» գրքի 298 էջում.

«Վերջ տալ կամավորական շարժման, իսկ ինչ ասել Վարանցով-Դաշկովին, Գորիմիկինին, ինչ ասել հենց իրան՝ դաշնակցության, որ այնքան գեղեցիկ առիթ էր գտել իր կուսակցական եսամոլությունը ծավալելու համար: Վերագրված ու վերադառնում էին այնքան փախած և աքսորված ընկերներ, տեղ էր գրավված փոխարքայական պալատի մեջ, առատ դրամական միջոցներ կային ընկերներին զանազան պաշտոններով տեղավորելու համար: Կարելի էր թողնել մի դիրք, որ ըստ ամենայնի հրամայողական էր»:

Ռուսական բանակների ընդհանուր հրամանատար Նիկոլա Նիկոլաևիչի սրտառուչ կոչը լեհերին ընդունվեց սառնությունով, և նրանք կամավորական գնդեր չհանեցին, վրացիներն էլ անտարբեր մնացին: Հայերը արդեն ուսաց բանակում մոտ 200 000 զինվորներ ունեին, այդ թե օրինական էր և թե բավական:

Դոկտոր Տաղավարյանը, որ նույնպես Պոլսից եկած էր կամավորական շարժումը դադարեցնելու համար, անհաջողության մատնվելով՝ ցանկանում է փոխարքայական միջավայրի կարծիքն իմանալ: Հայտնի ժուռնալիստ և հասարակական գործիչ Համբարձում Առաքելյանին թարգմանելու

Համար իր Հետ տանելով՝ ընդունվում է փոխարքայի օգնական Պիտրսոնից: Տաղավարյանը Հարցնում է, թե մենք՝ թրքահայերս, ի՞նչ դիրք պիտի բռնենք, երբ ձեր և թուրքաց պատերազմն սկսվի:

Պիտրսոն. «Այդ առթիվ արդեն համաձայնած ենք Ազգային բյուրոյի Հետ, հույս ունենք, որ մեր բանակները շուտով պիտի գրավեն Հայկական նահանգները, իսկ դուք այնտեղ ապստամբություններ պիտի բարձրացնեք և նրանց պարենավորման խանգարեք»:

Այդ արդեն ծրագրված գործունեության և լուրջ պետական պաշտոնյայի ցուցում է: Ես խոնարհաբար խնդրում եմ, չեզոք և ազնիվ քաղաքացու խորհուրդ ձեզանից:

Մի քիչ լուռությունից Հետո Պիտրսոնը ասում է. «Ձեր ժողովրդյան շահը կպահանջի, որ դուք բացարձակ կերպով չեզոք չլինեք»:

Դոկտոր Տաղավարյանը, վերադառնալով Պոլիս, կուղարկվի Այաշ և կնահատակվի Հայ Հազարավոր մտավորականների Հետ, իսկ պայքարող Համբարձում Առաքելյանը սկսում է Հանդուզն կերպով կռվել կամավորական շարժման դեմ: Բայց կուսակցության վճռով դաշնակ Դեյի Ղազարը մի դնդակով ընդմիջտ լռեցնում է նրան: Դաշնակցության ուսասհայ քաղաքականապես կույր և ճղճիմ լիդերները՝ պալատական խաղալիք Մեսրոպ եպիսկոպոսի Հետ, միահամուռ կերպով թքեցին թե՛ թրքահայության և թե՛ նրա կամքի վրա ու ենթարկվելով ուսանների, Ֆրանսացիների ու անգլիացիների ստոր խաբեությանց, կատարեցին մի զզվելի դավաճանություն իրենց Հարազատների դեմ:

Կովկասահայ բուրժուազիայի մոլուցքը, որը գուգաղիպում էր ցարական կառավարության ձգտումներին, նկատի չէր առնում իր ցեղակիցների ֆիզիկական գոյության խնդիրը: Դաշնակցությունը՝ այդ շահագործման նոր վայրեր որոնող բուրժուազիայի մարտական կուսակցություն լինելով, ֆինանսավորվում էր նրանցից: Իսկ չափավոր բուրժուական ինտելիգենցիայից որոշ տարրեր, որոնց ձայնը չէր լսվում, արդեն պատկերում էին անխուսափելի կատաստրոֆը:

Թերթերի մեջ արծարծվեց պատերազմից Հետո Հայոց տրվելիք ինքնավարության խնդիրը, որ առաջ բերավ մեծ հակազդեցություն, որովհետև սև Հարյուրյակային ուս պաշտոնյաները սկսեցին ուժեղ պրոպագանդ մղել բանակի մեջ «ավտոնոմիստ» Հայերի դեմ և Հայտարարել, որ իբր թե իրենք եկած են արյուն թափելու Հայաստանի ինքնավարության Համար: Իսկ որ Հայերը Հարյուր Հազարներով զոհեր էին տալիս ուսական տիրապետության Համար, դա այդպես էլ պետք էր որ լիներ՝ գործերը ղեկավարող ուսանների հասկացողությամբ:

Այդ օրերին լղրճուկ ոճրագործ Նիկոլա II ցարը կսպասվեր Թիֆլիսում, որից Հայերը կհուսային լսել մի Հայտարարություն՝ ուսաց իշխանության ներքո իրենց ունենալիք ապագա ինքնավարության մասին: Բայց ցարը բավականացավ ասել մի անորոշ խոսք միայն, թե Հայերի վիճակը կտնօրինվի լավագույն կերպով:

Հետագային միայն, երբ Ֆրանսիական դեսպան Բալիոլոգի օրագիրը Հրապարակ ելավ, իմացվեց, որ թշվառական Նիկոլա II ը Պետերբուրգից Կովկաս մեկնելուց առաջ տեսնվել է Հիշյալ դեսպանի Հետ և ի միջի այլոց ասել է, որ Հայերի խնդրանք իբր պիտի գիջի Ռուսաստանին՝ Կովկասյան ճակատում գրավված նոր երկիրները:

Կամավորական շարժումը, բացի այն զարհուրելի Հետևանքներից, որ ունեցավ թրքահայության Համար՝ Կովկասի ժողովուրդների բարեկամության սուրբ գործին էլ խորապես վնասեց, չափազանց սառն ու թշնամական դարձնելով ատրպատականցիների և վրացիների Հարաբերությունները Հայերի Հետ:

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Եթե ուսաներին կամավորներ հարկավոր էին իբրև առաջընթաց հետախուզական խմբեր, այդ կարող էին կազմակերպել բոլորովին անաղմուկ, առանց «կամավորական գնդեր» կամ «բանակներ» անուն աղմկալից հայտարարությունների: Իսկ եթե այդ կամավորները հարկավոր էին իբրև կուրդ ուժ, որոնք իրոք տեղ-տեղ հերոսություններ կատարեցին և առատորեն թափեցին իրենց արյունը, հապա ինչու հետո, երբ պատերազմը սկսվեց ու երբ գլխավոր հրամանատար գեներալ Յուզենիչը մտավ Ալաշկերտ, տիրապետեց Արածանիի և Եփրատի հովիտներին, անմիջապես իր փոխանորդ գեներալ Օգանովսկու հետ սկսեցին անվանարկել հայ կամավորականությունը ստահոգ հեռագրերով և հյուրասիրել ու պաշտպանել հայերին մորթոտող հայտնի քյուրդ բեգերին: Ինչու հանկարծ ուսու հրամանատարությունից լուրեր էին տարածվում՝ իբր թե երեսուն թյուրքական նոր դիվիզիաներ հասել են թշնամու ճակատը: Այդ գետնից բուսած անգո թյուրք դիվիզիաների լուրը բացարձակ կերպով ժխտվում էր առաջացած խուզարկու խմբերից: Հիշյալ նախամտածված սուտ լուրերի հետևանքով, ցարիզմի բանակները սկսում էին անկարևոր բաներ այրելով՝ հետ նահանջել, իսկ բնիկ հայ ազգաբնակչությունը և նրանց մոտ կուտակված ներսից եկած գաղթականները ստիպված էին թողնել իրենց ամենավերջին ու ամենաանհրաժեշտ ունեցածները՝ հետևելու համար հետ փախչող ցարական բանակներին, որպեսզի թյուրքական հորդաններից չկոտորվեն: Իսկ հետմնացողները կամ հոշոտվում էին գայլերից և կամ ոչնչանում թյուրք ու քյուրդ ձիավորների սմբակների տակ: Մի քանի օր հետո ցարական բանակները նորից էին վերադառնում իրենց նախապես գրաված վայրերը առանց ընդդիմու-

թյան հանդիպելու: Այդպես կրկնվում էր առաջ գնալու և հետ գալու ողբերգական խաղը, միչև որ տեղի ազգաբնակչությունը տրորվեր ու ոչնչանար:

Ավելի հետո բանակների ընդհանուր հրամանատար Յուզենիչը, աղվես Վարանցովի հետ համախոհ, արգելեցին հայերի մուտքը նոր գրավված նահանգները ու սկսեցին այնտեղ հաստատել «եփրատյան կազակությունը»:

Արդյոք սրանք ապացույց չէին, որ առաջուց ծրագրված էր նախ գրգռել թյուրքերին հայությունն ոչնչացնելու ու հետո տիրելու հայկական նահանգներին: Պետք է նշել, որ հայ կամավորների ընդհանուր թիվը 2500 էր, ապա միայն առաջարկվեց բարձրացնել 10000 ի, բայց անմիջապես հետո պահանջվեց լուծել այդ կամավորական խմբերը, իսկ Կովկասյան ճակատում գործող ուսու զինվորների թիվը 800 000 էր:

Այդ օրերին Վանում թյուրքական բանակից փախած հայ զինվորները լուր բերին, որ թյուրքերը Կլըջ Կյատուկի ճակատում գտնված իրենց հայ զինվորներից 250 մարդ հավաքել և կոտորել են: Հետո ուրիշ քյուրդ ականատես փախստականներ հաստատեցին այդ լուրը:

Ռուս թյուրքական ընդհարումները բացառապես պետք է կատարվեին Հայկական բարձրավանդակի վրա, որի պատճառով այն տեղերի հայ գյուղացիները խիստ մտահոգ էին:

Արդեն սահմանագլխի բռնաբարված գյուղացիության սուր ճիչերն էին հասնում Վան: Ալբաքիցն էլ կոտորածների սև լուրեր էին գալիս: Յուրաքանչյուր օր նոր դեպքեր և լուրեր սպանում էին հայ ժողովրդի հավատի մնացորդները դեպի թյուրք կառավարությունը:

Վանում մենք մի աղոտ հույս ունեինք, որ թյուրքիան պատերազմի մեջ չի մտնի, որովհետև մտածում էինք, որ նա իր թշվառ ժողովրդի դեմ ոճիր չգործելու չափ խելք ունի: Բայց հուսախաբվեցինք:

**ԹՅՈՒՐՔԻԱՆ ԷԼ ՄՏԱՎ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ**

Համաշխարհային պատերազմը թեժացել էր: Թյուրքիան Գերմանիայի և Բուլղարիայի դադտնի դաշնակիցը լինելով՝ 1914-ի հոկտեմբերի 18-ին (հին տոմարով) մտավ պատերազմի մեջ ու սկսեց շատ ավելի ուժեղացնել այն պրոպագանդը, որ Գերմանիայի հմայքը բարձրացնելուն էր ծառայում:

Ցամաքի վրա ուսև և թյուրք բանակները մի քանի աննշան ընդհարումներից հետո՝ դեկտեմբերի ցուրտերին լուր հասավ մեզ, որ էնվեր փաշան լեռնային և չսպասված ճանապարհներով անցել է ուսևաց սահմանը և գրավել է Օլթին ու Արգահանը: Այժմ նա իր բանակով դեպի Սարիղամիշ՝ ուսևական բանակի թիկունքն է անցնում: Այդ հանդուգն հարձակումը մեծ խուճապ է առաջ բերել Թիֆլիսում և փախչող-փախչողի է:

Փոխարքայի օգնական գեներալ Մշյաևսկին բանակը թողած փախչում է նույնպես, բայց անմիջապես գեներալ Յուդենիչն է անցնում բանակի գլուխը և սաստիկ սառնամանիքների օգնությամբ կատարելապես ջարդում է թուրքաց բանակը:

էնվեր փաշան ճողոպրում և իր բանակից մնացած երեսուն մարդով փախչում է Կարին: Այդ ձմեռը վրդովմունքի և անձկության մեջ, ականջնիս սրած սպասում էինք լուրի, թե ով եկավ, որտեղից եկավ, ինչ նամակ ստացվեց, թե բանակից նոր դասալիք եղած հայերը, քյուրդերը և թյուրքերը ինչ խաբար են բերել և այլն, և այլն:

Միևնույն ժամանակ աշխատվում էր մեր ինքնապաշտպանության համար, այնչափով, որ ոչինչ չնշմարվեր թյուրքերից: Իսկ թյուրքերը համարձակ աշխատանք էին տանում թե ուսևների և թե հայերի դեմ: Նրանք հայերին հավատարիմ չէին համարում:

Թյուրքերը սկսեցին Համիդի բանակի քյուրդ ճիավորները մորիլիզացիայի ենթարկել և բանտերից արձակել բոլոր ոճրագործներին ու այդ ամենից կազմել զանազան չեթայական խմբեր, որոնք իբրև թե պիտի գործեին ուսևների դեմ: Հետո մենք պիտի տեսնենք, որ այդ պատրաստությունները հայերին բնաջնջելու համար էին: Մոտկանցի հայտնի Բշարեչաթո ցեղապետը, որ իր կատարած ոճիրների պատճառով մահվան էր դատապարտված և հետապնդվում էր թյուրք կառավարությունից, իրեն հետապնդող թյուրքական բանակից գերեց տաս գինվոր և մի հազարապետ, անմիջապես զինվորներին գնդակահարել տվեց ու հազարապետին էլ կախեց: Ահա այդ Բշարեչաթոն էլ՝ ի թիվս հազարավոր բանտարկված ոճրագործների՝ ներման արժանացավ: Նա իր վեց հարյուր հետևորդներով ճանփա ընկավ դեպի ուսևական ճակատը՝ իհարկե պատվեր ստանալով թյուրք կենտրոնական կառավարությունից, որ հանդարտորեն իր ճանապարհի վրա հանդիպած հայկական գավառները մաքրելով առաջանա:

Նա Ալջավազի և Խլաթի հայերը մաքելուց հետո հասնում է Արճեշ և իջևանում է Հարություն ու Հասպրսինակ իրար բոլորովին մոտ հայ գյուղեր:

Հիշյալ երկու գյուղի հայությունը այնպիսի փառահեղ հյուրասիրություն են ցույց տալիս այդ վեց հարյուր այրուձիին, որ կարծես թե խուժան հյուրերը գոհ պիտի լինեին: Բայց Բշարեչաթոն, լսած լինելով, որ իրեն հյուրասիրող ու ծառայող տանուտերը մի տասնվեց տարու գեղեցիկ աղջիկ ունի, որ այժմ գյուղում չի գտնվում, և կասկածելով, որ տան տեր Սեղրակ աղան այդ աղջիկը փախցրած է գյուղից Բշարեչաթոյի տոփանքներից ազատելու համար, հրամայում է խորովածի շամփուրները կրակը խոթել և շիկացած երկաթով նախ դաղել այդ Սեղրակ աղայի աչքերը, ապա նրա մարմնի մյուս տեղերը, մինչև որ նա մահանա, հետո հրամայում է սպանել գյուղում գտնվող տասնչորս տարեկանից վեր բոլոր արուներին և գայմագամի ու զինվորական գոմանդանի հանդիսավոր անտարբերությունից քաջալերված՝ ընտրել է տալիս իրենց համար գեղեցկուհիներ ու մեկ-

նում Բերկրի, Պատիկ գյուղ և ավելի հեռուներ՝ ստրկաբար կատարելու կենտրոնական կառավարութունից իրենց վրա դրված պատվերները:

Այդ հայ ժողովրդի «լինել-չլինելու» զարհուրելի օրերին Վանա կուսակալ Ջեվդեթ փաշան գավառներում կազմակերպում էր հայ անմեղ ժողովրդի ահավոր ջարդեր: Բաշգալին և սահմանագլխի հայ գյուղերը առաջուց կոտորված էին: Նա սկսեց Բերկրից, Տիրամորից, Վերին և Վարի Թիմարներից, անցավ Առճակ, Խառակոնիս, Սարայ, Խոշապ և Վերի Հայոց ձոր: Այդ տեղեր իր ստոր պաշտոնը կատարած լինելով՝ Վան մտավ, Թեմուրլենկի և ուրիշ բարբարոսների նախանձր շարժելու համար իր ապագա շշմեցուցիչ ոճիրների պլաններով:

Նա իր հետ բերած էր վեց հարյուր չեքքեզ ձիավորներ, երեք թնդանոթ և 3000 հետիոտն զինավորներ: Վանում նրա առաջին գործը եղավ 160 չեքքեզներ տեղավորել Համուտ աղայի պարսպ զորանոցում, որը կառուցված էր հայկական թաղերի կենտրոնում:

Այդ օրերին Ջեվդեթ փաշան միշտ ժպտում էր հայերին ու նրանց հաճախ այցելության էր գնում:

Վրա հասավ անակնկալներով հղի գարունը: Մարտ ամիսն էր, երբ իմացանք, որ շատախցիները, չկարողանալով դիմանալ բռնութուններին, զենք վերցնելով՝ ամրացել էին իրենց թաղերում կառուցած դիրքերի մեջ ու հարաբերություններ խզել էին տեղական կառավարության հետ: Որովհետև այնտեղի գայմազամը, հավանաբար կենտրոնի հրահանգով, կանչում էր ակնառու հայ երիտասարդներին կառավարչատուն ու նրանց բռնոտել տալով՝ սպանել էր տալիս:

Շատախցոց ըմբոստության առթիվ Վանի կուսակալ Ջեվդեթ փաշան պահանջեց քաղաքի երևելիներից և դաշնակցական լիդերներից, որ մի քանի ազդեցիկ մարդիկ գնան ու հանգստացնեն Շատախի ժողովուրդը, որպեսզի բարդություններ առաջ չգան:

Դաշնակցական Իշխանը, ուրիշ երեք ընկերներով միասին, որոնք էին Խուռնի Վահանը, Քոթոթ Պողոսը և Շատախցի Միհրանը, ուղևորվեցին դեպի Շատախ՝ հանգսնե-

լու այն կայծերը, որոնցից հրդեհ պիտի բռնկեր:

Նրանց ընկերացան Վանի ոստիկանապետ Վաֆիկ բեյ և կոլջի բաշի Արիֆ, իրենց տասներկու զինված չեքքեզ թիկնապահներով:

Առաջին երեկոն այդ չորս զինված հայ ձիավորները, իրենց ուղեկիցների հետ, իջևանում են Հայոց Ձորի Հիրճ գյուղը՝ գիշերելու: Միևնույն տան մեջ թյուրքերը թոնրատանը նստելիս են եղել, իսկ հայերը՝ մառանում: Փոլիս կոմիսները՝ իր զենքերը և վրայի հագուստները հանած՝ մի երկու անգամ մտնում է հայ տղաների մոտ՝ սսելու համար, թե իրենք արդեն զենքերից ազատված՝ ուտում ու հահագստանում են, որպեսզի հաջորդ առավոտ մութով ճամփա ընկնեն և խորհուրդ է տալիս հայ տղաներին, որ նրանք էլ ուտեն և հանգստանան ու ավելացնում է. «Շուտ պառկեք, որ շուտ ելնեք»:

Տան տերերը, որ երկու խումբերին էլ ուտելիք էին հայթայթում, նրանք են լսել այս խոսակցությունը: Երբ չորս հայերը՝ իրեն զենքերից ազատված՝ սկսում են հանգիստ ընթրել, այն ժամանակ իրեց թյուրք ուղեկիցները հանկարծ ներս են խուժում ու չորսին էլ սպանում: Այդ դեպքը պատահում է 1915 ապրիլի 3-ին:

Խաղաղասեր հայերի բարյացկամության փոխարեն՝ թյուրք կառավարության այդ ամենաստոր և ցնցող ոճիրը Վանի հայության հոգու արիությունն ու վճռականությունն ամրապնդեց:

Այդ դեպքը Վանում սկսվելիք կոտորածների ազդանշանն էր:

Նույն հուլիսից օրերին, երբ կուսակցականներն խեթ էին նայում ինձ, անկուսակցական լինելուս համար, ես, ինքնամիտի, արշալույսից մինչև երեկո նկարում էի: Արդեն վերջացրել էի 94 տարեկան Հաջի աղայի պատկերը և սկսած էի մի գուշակող կնոջ տիպ տալ: Արշալույսներին և մայրամուտներին էլ տեսարաններ էի նկարում: Աշխատում էի, որովհետև շրջապատի ժպտուն գեղեցկությունները խուժում էին աչքերիս մեջ և հույզեր առաջացնելով հոգուս՝ ինձ դրդում էին աշխատելու:

Յերեկները պտույտներիս ժամանակ դիտում էի պաշտպանութեան համար կատարվող գործերն, երեկոներն էլ տարբեր կուսակցութեան պատկանող անհատներից հետամուտ էի իմանալու, թե ինքնապաշտպանութեան ինչ միջոցներ էին ձեռնարկվում: Կարելի է ասել, որ գիտակ էի կատարվող շարժումներին և մեծավ մասամբ ծանոթ այն անհատների անվան, որոնք առանց աղմուկի սրբազան ձգտում ունեին ժողովրդին ծառայելու:

ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Միծղկտուն գարնանային առավոտ էր: Ապրիլ ամիսը նոր էինք մտել: Պողոտու ծառերի կոկոնները սկսել էին ճաքճքել, և նրանց միջից հախուռն կերպով իրար հրհրելով դուրս էին խուժում քնքուշ ու ճերմակ վարդագույն ծաղիկների թերթիկներ: Նրանք անուշահոտությամբ բեռնավորում էին օդը և հեզանքով ժպտում շրջապատի խոժոռ լեռների կատարներին մնացած փայլվիացող ձյուններին, կարծես հակադրել ուզելով իրենց չքնաղ անբժուկությունը նրանց անապական ճերմակության:

Այդ առավոտ ես մեր տափարակ տանիքը բարձրացել էի՝ նկարելու համար: Այնտեղ ծաղկազարդ այգիների բուրմուռներից ու շրջապատի շմեցնող գեղեցկություններից արբեցած՝ գմայլանքի մեջ էի, երբ ինձ կանչեցին: Վար իջնալով իմացա, որ թյուրքերը հենց այդ գիշեր այրել են Ջանոյանենց տունը և նրանց թաղը: Թաղի բնակիչները տեղափոխվելով՝ ազատվել էին: Բայց իմ երկու մետրանոց տակավին չավարտած նկարս, եռոտանին և նկարելու պարագաները այրվել էին Ջանոյանենց տան մեջ, ուր մի ամսից ի վեր ամեն օր ես գնում էի աշխատելու: Նկարս ներկայացնում էր գարուն: Առաջին պլանի վրա ծաղկած ծառեր, երկրորդ՝ Հանկույանների սքանչելի ձորը, երրորդ՝ Ջրմի-Ջրմի մազարայի վեհանիստ ժայռը: Այդ ծաղկած ծառերի տակ՝ նոր ծիլ ու բողբոջ արձակած վարդենիների այլելում խաղում էին դպրոցական աղջիկներ իրենց շների հետ: Իհարկե այդ վառված նկարի համար միայն իմ սիրտն էր կսկծում:

Վերոհիշյալ դեպքից մի քանի օր անցած, ապրիլի 7 ի արշալույսին, ես նորից բարձրացա տանիք՝ նկարելու: Մինչև որ տուփս բացի, ներկերս շարեցի պալիտրի վրա և տեղավորվեցի այն կետում, որտեղից լավ էին դասավորվում այգիներ և հեռաստաններ, արդեն արևի առաջին ճառագայթները շեղակի դիպան ծառերի կարմիր կոկոններին և

փթթող բողբոջներն, որով այնպիսի դյուլթիչ գունագեղություն ստեղծվեց, որ դիտողը ակամա շունչը պահում էր՝ իր տեսողությունից չփախցնելու համար շրջապատող զմայելի տեսարանները, որոնց իբրև ֆոն ցայտուն էին դարձնում Ս. Խաչի՝ կանաչ թավիշով ծածկված լեռները: Այգիի առվակում ջուր էր գլգլում, մի տեղ փոքրիկ ու տատանվող լճակ էր կազմված, այդ շարժուն ջրի վրա արևի ցուլքը փարած շրջապատի ծաղիկներին՝ պար էր գալիս: Այգիի մեջտեղ հում աղյուսներից կառուցված էր մի քյոշկ, որի պատահաններից ամառ ժամանակ այգեպանը հսկում էր, որ գողություն չլինի: Այդ քյոշկի գորշ օխրայի գույն պատին ընկած ճառագայթները այնպիսի հաճելի դեղնություն էին առաջ բերում, որ հիանալիորեն ներդաշնակում էր՝ արևից վառվող կարմիր կոկոնների և վարդագույն ծաղիկների հետ:

Հանկարծ այդ քյոշկից լսվեց բուռի երկու վայոց, որք իմ արգեն պրկված ջղայնությունս ավելի լարեցին: Ես դարձա և նայեցի Զրմփ-զրմփ մաղարային, որի գլխի վրա հավաքված թյուրք զինվորները դիտակներով զննում էին Այգեստանի զանազան մասեր: Տրամադրությունս ավելի ընկավ: Ես փակեցի տուփս, վար իջա, վերցնելով հրացանս դուրս եկա փողոց և քալեցի դեպի արևելք Նորատունկները:

Ճանապարհին հանդիպեց այդ թաղի մուխթար Բալաքներիաց Ավանես ու ասաց. «Ամա՛ն, քի մեռնիմ, Փանոս աղա, դու շուտ-շուտ գնա այն վերի եզերքները, աչք տու»:

Թագաքյահրիզից վեր մի նեղ փողոց կար, ծովից դեպի աջ, և ես այդ նեղ փողոցով դուրս եկա դեպի դաշտ, ուր քանդված պատերի մոտ երեք փոքրիկ պատանիներ էին կծկված, որոնցից մեկը վազեց դեպի ինձ և պահանջեց, որ պատի տակից քալեմ: Ցույց տվավ քիչ հեռուն գտնվող արյան ճապաղիքները և սկսեց պատմել, թե մի քանի բոպե առաջ ինչ էր պատահել: Նա ասաց, որ Նուշանց գյուղի երկու կնիկներ իրենց էջերով ցան էին բերում քաղաք ծախելու, երբ ճանապարհին մոտիկ եղած փոսերից թյուրք և քյուրդ զինվորներ դուրս վազեցին՝ բռնաբարելու մտք: Այդ միջոցին այս պատերի հետև՝ սույն շրջանի հերթապահ պահակախմբից ռամկավար Դյուրգյան Հակոբ և Նաղշուն-

յան Եղիան ատրճանակներ քաշելով՝ դիրքերից դուրս վազեցին գեղացի կնիկներին ազատելու: Դեռ չորսից-հինգ քայլ առած էին, երբ այս կողմի հորի բերանում թաքնվածները գյուլեցին նրանց և երկուսին էլ տեղն ու տեղը սպանեցին: Կերևի, թե թյուրք զինվորները գիշերն են եկել այն տեղերը պահվտել: Եղիայի և Հակոբի ընկերները, որ այն վերի այգիներում էին հսկողություն անում, եկան և դիակները շալակելով տարան:

Այդ երեք պատանիներից ամենափոքրը տեղից ցատկեց և ցույց տվեց քիչ առաջվա մարդասպան զինվորներին, որոնք ուրիշ փոսից դուրս գալով՝ սկսեցին վազել դեպի հյուսիս՝ իրենց մեծ խմբերի մոտ: Իսկույն խնդրեցի պատանիներին, որ հասնեն Թագա-քահրիզ և կանչեն Բեղազքյասանցի Ավագին, որը եղել էր առաջ իմ խմբում, իսկ ինքս, որսորդ եղած ժամանակից լավ ծանոթ լինելով նորատունկներին սկսեցի վազել շեղ և կարճ ուղղությամբ, որ հասնեմ և գուցե կարողանամ սպանել այդ երկու ոճրագործներին, որոնք վազում էին դեպի հյուսիս:

Ես բավական տեղ վազեցի թուփերի և բացատների արանքով, հետո իջա մի ցեխոտ առվի միջով վազելու, որ արևելքից պաշտպանված էր պատով: Հասա այնտեղ, ուր պատը վերջանում էր, գլխարկս վար առնելով՝ ուզեցի զգուշությամբ դուրս նայել՝ տեսնելու համար հյուսիս վազող թյուրք զինվորներին, երբ դեռ միայն ճակատս էր դուրս եկել պատից, երեք գնդակ խփվեց գլխիս մոտ եղած պատին, վար իջեցրի գլուխս և հասկացա, որ այդ բոլոր այգիները շրջապատված են, հետևապես դարանակալ թյուրք զինվորները ինձ հսկողության տակ էին առել: Բայց չափազանց կուզեկուզ, գրեթե սողալով, այդ փոս առվի ցեխերի միջով անցա մի ուրիշ այգի, որտեղ քյոշկ կար: Մտա այդ քյոշկը և կամացուկ բարձրացա նրա երկրորդ հարկը՝ զննելու համար շրջապատը: Պատերի ետևից կրակի ծուխեր էին բարձրանում, բայց որևէ թյուրք զինվորի չկրցա տեսնել:

Հեռուից նկատեցի, որ Ավագ և Բալաքներիաց Խաչոն միմի փայտ բռնած գալիս են: Վար իջա և խիտ ծառերի միջից մոտեցա նրանց ու հարցրի. «Ապա ո՞ւր են ձեր հրացանները»:

Նրանք սրտմտած պատասխանեցին, թե՛ ո՞վ է մեզ հրացան տվել: Հետո խնդրեցին, որ միջնորդեմ, գուցե իրենք էլ հրացան ստանան:

Այդ շրջանի հսկողները սպանվածների դիակները փոխադրելու պատճառով հեռացել էին իրենց դիրքերից: Ավագն ու խաչոն վազեցին իմացնելու, որ պահապաններ ուղարկվեն, իսկ ես ավելի ապահով այգիներով վերադարձա այնտեղ, ուր սպանված էին երկու երիտասարդները: Այն կետին բոլորովին մոտիկ գտնվում էր գերմանական որբանոցը, որի տեսուչը՝ հեր Սպերրին, միևնույն ժամանակ գերմանական կառավարության ազնետն էր և հայերեն գիտեր: Այդ տեսչի հետ ծանոթանալուց հետո՝ հարցրի՝ արդյո՞ք ձեր շենքի դիմաց կատարված դեպքերը տեսաք: Պատասխանեց, որ վերի պատուհանից ինքը բոլորը տեսել է: Նախ թյուրք զինվորներն էին, որ հարձակվեցին գյուղացի կանանց վրա, հետո երբ երկու երիտասարդները վազեցին կնիկներին ազատելու, սպանվեցին: Ես այդպես էլ պիտի տեղեկագրեմ:

Արդեն թյուրք զինվորներով շրջապատված՝ Այգեստանի բոլոր կողմերից սկսվեց բյուրավոր սուլող, ճչացող ու սողացող զնդակներ թափվել: Տակավին լրջորեն չկազմակերպված վանեցիները՝ տեղ-տեղ աշխուժորեն պատասխանում էին:

Ահա այսպես սկսեցին Վանի դյուցազնական կռիվները:

Միջանկյալ ասեմ, որ Լեոն իր «Անցյալից» շատ արժեքավոր գրքի մեջ մեր կռիվները անվանել է Վանի ապստամբություն: Այդ սխալը նրանիցն է, որ Ազգային բյուրոն Վարանցովին խոստացել էր Թրքահայաստանում ապստամբություններ առաջացնել, երբ պատերազմն սկսվեր, հետևապես Վանի ինքնապաշտպանությունը անվանվում էր ապստամբություն: Բայց երբ թյուրքերը, հետին մտքերով, իրենց բոլոր թերթերում և նույնիսկ եվրոպական թերթերում աղմկում էին Վանի ապստամբության մասին, այդ բոլորը իրենց կատարած և կատարելիք անլուր կոտորածները արդարացնելու միտումով էր:

Թեև վանեցիները հնարավորին չափ աշխատեցին, որ խաղաղությամբ անցնի այդ փոթորկալից շրջանը, նրանք

զիջումներով դադարեցրին թիմարի կռիվները և անվահեր տղաներ ուղարկեցին Շատախի հայոց բռնություններից առաջացած ըմբոստությունն հանդարտեցնելու. դրանց արդյունքը, ինչպես վերև տեսանք, եղավ Թրքական նամարդությունը:

Հետո, երբ դրսից մեզ մոտ փախած ակնատեսները պատմում էին Վասպուրականի և շրջապատի կոտորածները և ամայացումը, Վանի հայությունը իր զգացած խոր վշտի հետ, նաև համոզվեց, որ թյուրք կառավարությունը վճռել է ամբողջապես բնաջնջել մեր ցեղը: Ուրեմն, կռիվը անխուսափելի դարձավ: Ահա այդ պայմանների մեջ էր, որ Վանի հայությունը բնականորեն կատաղի ցասումով չուզեց իր վիզը դնել Թրքական յաթաղանի դիմաց ու վճռեց կռվել: Որովհետև հերոսական կյանքը թե՛ պատվավոր և թե՛ պարտավորիչ էր:

Վ Ա Ն Ի
ԴՅՈՒՑԱԶՆԱՄԱՐՏԸ

Նորատունկներում թափառելիս ես, ամբողջովին ցեխոտված և ուժասպառ, տուն վերադարձա իմ քաղցը հագեցնելու: Ծանապարհին այնքան մտազբաղ էի, որ չէի զգար ու տեսներ իմ շրջապատը: Տանն էլ արագորեն ման էի գալիս, առանց կարողանալու մի տեղ հանգստանալ: Այդ խռովյալ վիճակա շարունակվեց մինչև գիշերը, երբ թյուրքերը ամեն կողմից միլիոններով գնդակներ և ռումբեր էին թափում մեր վրա:

Ժամը գիշերվա 12-ի մոտ էր, երբ փողոցի դուռը բախեցին: Ես վազեցի և դուռը բացի, տեսնեմ մաթեմատիկայի ուսուցիչ Կարապետ Աջեմ խաչոյանը, վառած լապտերը ձեռքին, մի քանի մշակներ հավաքած, եկել էր մեր մշակն էլ տաներ՝ ամբուլժուհիներ շինելու: Նա անտարբեր էր, որ գնդակները նրա շուրջ պատերին էին խփվում: Մի քանի քայլ անելուց հետո՝ ինձ դարձավ և ասաց. «Դու պետք էր այդ գործի մեջ լինեիր»: Ես մոտեցա նրան, գրկեցի և ձեռքը պինդ-պինդ սեղմելով՝ ասացի. «Միշտ պատրաստ եմ ինքնապաշտպանության գործին նվիրվել»:

Հաջորդ առավոտ Միացյալ կուսակցություններից մի դելեգացիա եկավ և ինձ առաջարկեց գնալ կենտրոն՝ ասելով, «Դուք արդեն ընտրված եք զինվորական ժամանակավոր կառավարության անդամ»: Ես, իհարկե, ուրախությամբ ընդունեցի այդ առաջարկը: Անմիջապես վրձիններս փակեցի տուփիս մեջ, և նրանց փոխարեն հրացանս վերցնելով՝ վազեցի կենտրոնը և սկսեցի կատարել պարտականություններս հանդեպ իմ անիրավված ժողովրդին, զի ես ապրում էի և ապրում եմ նրա հետ և նրանով:

Կենտրոն կոչվածը զինվորական ժամանակավոր կառավարության շտաբն էր: Այդ կառավարության անդամները հետևյալներն էին.

- ա. Արմենակ Եկարյան
- բ. Գարրիել Սեմերձյան Արմենականների կողմից:
- գ. Հրանտ Գալիկյան Հնչակյանների կողմից:
- դ. Կայծակ Առաքել
- ե. Բուլղարացի Գրիգոր Դաշնակցության կողմից:
- զ. Ես էի՝ որ ինձնից ի գատ ուրիշ ոչ ոք չէի ներկայացնում: Բայց հետո ապացուցվեց, որ հայ ժողովրդի պաշտպանության գործը նույնքան մոտիկ էր իմ սրտին, ինչքան ղեկավարող կուսակցությունների սրտին:

Երբ դաշնակցության լիդեր Արամը, սգահան լինելով, եկավ զինվորական կառավարության մեջ, այն ժամանակ դաշնակցության խմբի ընդհանուր ղեկավար Բուլղարացի Գրիգորը հեռացավ կառավարությունից, որովհետև նա Արամի գործելակերպին հակառակ էր: Ուրեմն նորից դաշնակցականները մնացին երկու անձ:

Այդ ժամանակավոր զինվորական կառավարության առաջին գործը եղավ որոշել, թե ով ինչ գործ պիտի անի: Արմենակ Եկարյանը նշանակվեց զինվորական գործերի վարիչ, որովհետև նա անվախ կովող էր: Բայց նրա կազմակերպչական ընդունակությունը թույլ լինելու պատճառով ուրիշներ ձեռներեցություն ունեցան հավասար չափով վարել և զինվորական գործը:

Մեր երկրորդ գործը եղավ հաշվառման ենթարկել կուսակցությունների և չեզոքների զենքերը: Բոլոր փամփշտավոր հրացանների թիվը 400-ի էր հասնում: Ատրճանակներն և որսի հրացանները հաշվառման չենթարկվեցին, թեև հետագային մենք նրանցից հաճախ օգտվեցինք:

Կառավարության մի քանի անդամներին էլ, ընդհանուր հսկողությունից գատ, մասնավոր պաշտոններ տրվեց[ին]: Դրանց հետ միասին լայնորեն հայտարարվեց, որ ծայրահեղ խնայողություն պիտի արվի պատրոնների գործարկման առթիվ:

Ուրեմն, Այգեստանը շրջապատող և լիովին զինված

թյուրք բանակի ու նրա նոր և հին սիստեմի 13 թնդանոթների դիմաց մենք ունեինք 400 հրացան, որոնցից մի մասը ժանգոտված էր՝ խոնավ տեղերում պահված լինելով, մի այլ մասն էլ շատ քիչ փամփուռտ ունենալու համար՝ մեր վերև բերած 400 թվից կրճատվում էին:

Բացի Այգեաստանից, թյուրքերը շրջապատել էին Քաղաքամեջի հայությունը, որ քաշվելով բերդի տակ՝ արիաբար դիմադրում էր: Այդ կռիվների մասին հետո պիտի խոսվի:

Ջինվորական կառավարության երրորդ գործն եղավ կովողներին պարենավորելու խնդիրը: Այդ գործը հիանալիորեն կազմակերպեց Մկրտիչ Աջեմյանի նախագահությամբ գործող կոմիտեն:

Չորրորդ գործունը եղավ ամրաշեն խմբեր կազմակերպել, մեզ մոտ ապաստանած 18 հազար գյուղացիներից, որոնց մեծագույն մասը անգեն էր:

Մեր դիրքերը կամ տունների և այգիների պատերի հետևն էին հաստատված, կամ գիզգազ փորված խրամատների մեջ: Այն դիրքը, որ ցերեկային կռիվներին թյուրքաց թնդանոթներից կործանվում էր, նույն գիշերը մեր ամրաշեն խմբերը առաջնորդվում էին փլատակների մոտ, որոնք ետևի առողջ տները քանդելով՝ նրանց աղյուսները գործածում էին առջևի թնդանոթներից փլված պատերը վերակառուցելու, կամ ավերված ու անհարմար եղած խրամատների փոխարեն նորեր փորելու: Պատահել է, որ այդ աշխատանքին մասնակցել են և մեր կնիկները:

Մեր հինգերորդ գործն եղավ Կարմիր խաչի խումբը կազմակերպել, որին լրջորեն օժանդակեց ամերիկացի դոկտոր Ըշքը, իր անձնակեր աշխատանքը, գիտությունը և իրենց դեղատուներ ի սպաս դնելով մեր վիրավորներին դարմանելու գործին: Դոկտոր Ըշքրի կինն էլ անձնավիրաբար հիվանդներին խնամելիս տիֆով վարակվեց և մահացավ:

Տեղին է հիշատակել այն խոշոր ծառայությունը, որ ամերիկյան միսիոներությունը մատուցեց Վանի հայությանը:

Սկզբի բանակցությունների շարթում, երբ դեռ կռիվը չէր սկսած, Ջեվդեթ փաշան առաջարկեց ամերիկացիներին, որ նրանք տեղափոխվեն քաղաքի թյուրքական մասերը, որ-

պեսզի չվնասվեն և թույլ տան իրենց շենքերի մեջ տեղավորել հիսուն զինվորներ: Ամերիկացիները անվախ կերպով մերժեցին թե մեկ և թե մյուս առաջարկությունները, ասելով. «Տարդ հայոց հետ ենք ապրել, եթե հարկ լինի, նրանց հետ էլ կմեռնենք»:

Վեցերորդ գործը եղավ կազմակերպել զենքերի նորոգման արհեստանոց:

Յոթերորդ գործը եղավ զենքերի մթերման և մատակարարման կոմիտեի կազմակերպումը:

Հիշյալ բոլոր գործերի ստեղծագործական նախաձեռնությունը բխում էր ժողովրդից: Վանի ժողովուրդը գիշերները լուսացնում էր՝ իր համառ պայքարը թևավորելու համար և ցերեկներին իր փշուր հացի կտորն էլ ազնվորեն բաժանում էր մեզ մոտ ապաստանած ու ամեն բանից զուրկ ասորի ու հայ գյուղացիների հետ:

Ի՛նչ էնտուզիազմ և ի՛նչ զոհողություն ծավալուն ոգի էր դրսևորում վանեցին:

Առաջին օրը սպանված հերոս եղիայի մայրը, որ արտասուքից խխմած մի կռեթի պլոկի էր նման, այդ չքավոր կինը ամեն օր իր ունեցած միակ այծը քշում էր կովողների դիրքերը, տեղին վրա կթում ու աղաչում էր ռազմիկներին խմելու:

Մի մռայլ, անձրևոտ օր, երբ վազում էի դեպի Նորատունկների դիրքերը, փողոցում հանդիպեցի բազմաթիվ տարիների բեռան տակ կքած դրացուս, որ անկողիները շալակած գնում էր: Հարցնում եմ. «Մուկուչ ախպեր, է՞դ ուր այդպես»: Նա իր բեռան տակ ծռած գլուխը դարձուց դեպի ինձ ու պատասխանեց. «Չե՞ս տեսներ, ձյունախառն անձրև է գալիս, այս իմ անկողինը տանում եմ ցեխոտված ու թաց խրամատները, որ կովողները փաթաթվեն ու տաքանան»:

Ուրիշ մի օր փողոցի աջ պատի տակից շտապում եմ վառողի գործարանը, այդ փողոցի ձախ պատին գնդակներ էին կարկտում: Տեսնում եմ մի քանի 5-7 տարեկան երեխաներ մոտենում են պատի գնդակ դիպած տեղերին, եղունգներով պճկորում ու գնդակներ հանելով՝ վազում են ինձ մոտ, լեցնում են ափիս մեջ, ասելով. «Տարեք, ձեր գործարանում

պետք կգան»։ Հուզմունքից չեմ կարող պատասխանել, և աչքերս արցունքոտում եմ։ Հազարավոր նման դեպքեր մեզ ստիպում էին և ստիպում են շատ բան սովորել ժողովրդից։

Վանի ժողովրդյան սեղմող այն հրախառն, մահառիթ օղակը չկարողացավ ընկճել նրա պայքարի ոգին, նրա անսահման ազատասիրությունը և նրա խոր արհամարհանքը դեպի մահը։ Այդ կորովի ու անձնվեր կեցվածքը՝ իրավամբ նրան բարձրացրեց մինչև այն պատվանդանը, որ ցարդ միմիայն սպարտայի լեոնիդասյան երեք հարյուր անմահ քաջերին էր հատկացված։

Ութերորդ գործն եղավ դատարան, միլիցիան և առողջապահական մի մարմին կազմակերպել։

Իններորդ գործն եղավ Կենտրոնական դպրոցի երաժշտական խմբից մի Ֆանֆաու կազմակերպել, որի պաշտոնն էր՝ հասնել նեղված դիրքերը և իրենց երաժշտությունը օգնել կովողներին։

Երրորդ օրը այս բոլոր գործերը արդեն կատարված էին։

Առաջին օրից պրոֆեսոր Մինասյանը, որ մասնագիտությունը Ամերիկայում սովորած քիմիկոս էր, պրպտեց ամերիկյան գրքերը և գտավ ածուխ ու ճերմակ վառող շինելու գաղտնիքը ու մեծ հաջողություններ գայն իրագործեց։

Վանի ոսկերիչները կազմակերպոցին մի գործարան և սկսեցին մեքենայացված ձեռով շինել նորագույն սիստեմով հրացանների գիլդեր։

Մի գործարան էլ կազմակերպվեց սև վառող պատրաստելու համար, որպեսզի մարթենի, բերտանկա և կափածիլի հրացանների փամփուռներ լեցվեին։ Գնդակներ ձուլելու համար պետք եղած կապարը ձեռք բերվեց եկեղեցիներում կախված ջահերին պահող կապարյա ծանրոցներից։

ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԿՈՎՈՒՄ

Ես հաճախ հիշում էի և հիշում եմ, ժողովրդական այն իմաստալից ասացվածքը, որ «Գեղ կանգնի՝ գերան կկոտրի»։ Այդ գերան կոտրող գյուղը, այսինքն՝ ժողովուրդը, առանց բացառություն կովի էր կանգնել։

Նրա առաջին և հիմնական գործը միջկուսակցական համերաշխություն հաստատելն էր։ Այդ դժվարին գործը գլուխ եկավ՝ հակառակ նեղմիտ ու տգետ կուսակցական անհատների։ Իսկ կովելու վճռականությունը առաջ էր գալիս այն ըմբռնումից, որ պատվավոր մահը նույնպես հաղթություն է։ Ահա այդ գիտակցությունն էր, որ վանեցոց կուրծքերից պրոնգե պատնեշներ կերտեց և անհնարին նկատված հաղթանակը հնարավոր դարձավ։

Այդ տարին ապրիլ ամսում եղանակը վատ անցավ։ Հաճախ լյուլախ (ձյունախառն անձրև) էր գալիս և ցուրտ ու քամի էր անում։ Ցեխոտ խրամատներում շատերը տաք հագուստ և վստահելի հրացաններ չունեին, բայց էլի սիրով կովում էին։

Չուիկ աղբյուրին մոտիկ մի բլուր կար, որ թյուրքական կավալերիայի դիրքն էր։ Մի ցերեկ ես նկատեցի, որ հիշյալ թյուրքական դիրք եղող բլուրի շուրջը շատ եռ ու զեռ կար։ Կասկած արթնացավ մեջս, որ գուցե այդ գիշեր հարձակում սկսեն կամ դեպի Վարագի դիրքերը, կամ դեպի Նորատունկների համեմատաբար ավելի թույլ դիրքերը։ Այդ կասկածոտ մտածողությունը գիշերվա ժամի տասին սկսեցի քայլել դեպի Այգեստանի արևելյան-հարավային անկյան խրամատը։

«ՋԱՐՉԱՆ Դ» ԴԻՐՔԵՐԸ

Չափազանց մոլթ էր, գետինը ցեխոտ և ոռնացող քամին էլ կիսահալ ձյան փաթիլները խփում էր աչքերիս ու դեմքիս: Հարեցողի պես այս ու այն պատ, ծառ ու քար շոշափում էի, ճամփաս գտնելու համար: Վերջապես ուշիկ-ուշիկ մոտեցա խրամատին՝ ստուգելու համար, թե արդյո՞ք քնած չեմ: Հանկարծ խավարի միջից քթիս մոտ մի շարժում տեսա, որին ընկերացավ հարցում, թե՞ դու ո՞վ ես: Նա իմացավ իմ ով լինելս, երբ խրամատի մեջտեղից հարց տվին. «Տո, Ակո, դու քամու հե՞տ ես խոսում»: Նա անմիջապես պատասխանեց. «Խա, ես քամու հետն եմ երգում»:

Մոտեցա կենտրոնին: Տեսնեմ խրամատի հողի պատի մեջ քանդված խորշում փոքր կրակներ են պեծին տալիս, որոնց աղոտ լույսով լուսավորված մի քանի կետեր են երևում փոսի խավարին մեջ: Իջնում եմ խրամատ և մոտենում եմ այդ խմբին: Այնտեղ տեսնում եմ մի պատկառելի պառավ, որը նստել է մի թաց կռեթի վրա և որի ձախ ձեռքին գինու պողկե, իսկ աջ ձեռքին հողի կուռիկ (թաս) բռնած, գինի է բաշխում ռազմիկներին: Հատակին էլ մի փոքրիկ կտոր թուղթի վրա նոր խորոված տառեխ ձուկ էր և սոխեր կային: Իմ բարևին խմբապետը պատասխանում է. «Հազար բարով եկար»: Գինիի կուռիկը իր մայրիկի ձեռքից առնելով՝ պարզում է ինձ, որ խմեմ: Ես կիսաստվերի մեջ, տպավորված այդ երիտասարդի ահարկու կառուցվածքով, մի պահ դիտել սկսեցի նրա սև ու թավ հոնքերի տակ կայծկտացող խոր աչքերը ու հովից տատանվող նրա գիսախուրի խուրձ մագերը, հետո վերցնելով նրա ձեռքից կուռիկը, ասի. «Տղերք, ձեր թանկագին կենացը, որ պաշտպանում եք հայ ժողովրդի պատիվը և կյանքը»: Ազահորեն դատարկելով կուռիկը՝ սկսեցի կրծել լավաշի մեջ փաթաթված տառեխն ու սոխը, որք այդ բոպեին ամենահամեղ ուտելիքն էին: Կրակին շատ մոտ նստած էր մի երիտասարդ և խզզում էր: Հարցնում եմ.

«Մաքո, խո հիվանդ չե՞ս»: Պատասխանում է. «Խիստ հարբուխ ունիմ ու մարմինս մըսում է»: - «Լավ, վեր կաց, գնա տունդ, քնիր: Այս գիշեր քո փոխարեն ես կմնամ այստեղ», ասացի: «Յա, ծուռ ե՞ս, քեզ քիչ գործ կա, չէ, ախպեր, լավ է էստեղ կռվում սպանվեմ, քան թե տան իմ անկողնում մեռնեմ»:

Այդ դիրքի երկու ծայրերին գտնված պահապանները եկան մեզ մոտ և նրանց տեղերը ուրիշներ գնացին գրավելու:

Մեր գտնված դիրքը նայում էր հարավ-արևելք, իսկ նրա մոտիկ կար մի ուրիշ դիրք, որ նայում էր հյուսիս արևելք: Այդ երկու դիրքերը հաղորդակցում էին իրար հետ մի փոքրիկ ձորակով: Ռազմիկները հիշյալ երկու դիրքերին տալիս էին Զարգանդ անունը: Ահա այդ երկու դիրքիցն էր, որ մենք հարաբերում էինք մոտակա Շուշանց գյուղի հետ, որ Վարազա լեռան շուրջը գտնվող մեր զինվորական ուժերի օղակումն էր:

Դեպի Շուշանց՝ հետևապես Վարազ տանող այդ ճամփան, որ մասամբ միայն մեր հսկողության տակն էր, կարող եմ ասել շատ թույլ կերպով պաշտպանելու հնարավորություն ունեինք, հետևաբար, եթե թյուրքեր չուզեցին բոլորովին կտրել այդ ճամփան, ինձ թվում է, որ նրանց նպատակն էր մեզ շրջապատող կրակի օղակից դուրս փախչելու հնարավորություն տալ, որով ճանապարհին այդ ճողպրածներին ոչնչացնել դյուրին պիտի լիներ իրենց համար և հետո՝ Այգեստանի դիմադրական ուժն ու զենքերն էլ պակասում էին:

Այդ դիրքից ես անցա հյուսիս արևելք նայող մյուս դիրքը, որ նույնպես «Զարգանդ» էր կոչվում:

Այդ տեղի խմբապետի հետ բավական ժամանակ խոսեցինք: Հարցրի, թե նա ցերեկին ինչ շարժումներ է նկատել թյուրքերի կողմից և թե իր ընկերները ինչ հատկություններ են ցուցաբերում և այլն:

Ուշ գիշերին ես տուն վերադարձա՝ մի կարճ ժամանակ քնանալու:

ՍԱՀԱԿ ԲԵՅԻ ԴԻՐՔ

Մյուս օր ցերեկին սուրհանդակ հասավ ու հայտնեց, որ Սահակ բեյի դիրքի վրա խիստ հարձակում կա, օգնութեան հասեք: Շտաբում մնաց միայն մի մարդ, իսկ Արամը, մի քանի ուրիշներ և ես շտապեցինք վերոհիշյալ դիրքը: Մինչև մեր հասնելը բավական թվով ռազմիկներ էին եկել օգնութեան, ու թյուրքերը, յոթ դիակ թողնելով, նահանջել էին, որոնց հարձակման կաջակցեր և իրենց մի թնդանոթը, որ լավ քողարկված էր:

Մենք խմբով բարձրացանք վերի հարկը, Արամը, մյուսները կանգնած՝ խոսակցում էին այդ ընդարձակ դահլիճի ետևի պատի մոտ, երբ ես առաջացա և առջևի պատի հրացանի համար շինված թափուր ծակին մոտ նստեցի, որպեսզի քննեմ թշնամու դիրքերը և գուցե նրանցից մեկին տեսնեմ: Բացի մի ձիուց, որի համար ափսոսացի իմ գնդակը, մարդու չտեսա:

Այդ միջոցին մի տասնութ տարու մոտ երիտասարդ մտեցավ ինձ, ծովեց ու իմ գլխի մոտով ծակից դուրս էր ուզում նայել, երբ թնդանոթի գնդակը պատը պատռելով՝ փշրեց գանգը և գետին գլորված նրա խոխոացող ուղեղի արյունը սկսեց տաքացնել ծունկս: Ես շտապով մաքրեցի պատի ավազները, որոնք գնդի ուժգին հարվածից օդի հոսանքի հետ շարված էին մորթիս մեջ և բոլորովին ուշադրութիւն չդարձնելով ծունկիս մոտ տակավին շարժվող ցրված ուղեղին՝ համառորեն սկսեցի ճեղքված պատից դուրս նայել՝ թնդանոթի տեղը որոշելու և մի մարդ տեսնելու ցանկութեամբ. թեև ծխից կռահեցի թնդանոթի տեղը, բայց, ավաղ, ոչ ոք չկարողացա տեսնել:

Դարձա ետևս նայեցի և տեսա, որ ամենքն էլ անհայտացել էին, իսկ անկյունի ծակի մոտ մի տարիքոտ մարդ, ատրճանակը ձեռքին, բոլորովին անտարբեր անցած-դարձածին, նստած նայում էր: Ես տեղիցս բարձրացա և նրան մոտենա-

լով՝ ճակատը համբուրեցի: Վայր իջա և երկրորդ անգամ փախած խմբապետին հանդիմանելով՝ պատվիրեցի, որ աղյուս պատրաստեն, որպեսզի գիշերը վարի հարկի պատերը ամրացվեն և ծակեր բացվեն, որովհետև վերին հարկը այլևս վտանգավոր էր գործածել:

Այգիի փլած պատից փողոց անցա ու մտա թովմաս աղայինց դիրքը: Այնտեղ տեսա, որ վերի հարկը բոլորովին քանդված էր թյուրքերի թնդանոթներից, և մի խումբ հնչակյան զինվորներ վարի հարկը ամրացնելով՝ քաջաբար կռիվը շարունակում էին:

Նույն երեկոյան ես գնացի Խաչ փողոցի կողմը՝ Նալբանդենց դիրքը, որը իշխում էր չորս ուղղութեամբ գնացող փողոցների վրա: Այդ փողոցների երեք անկյունը թյուրքերի ձեռքն էր, իսկ չորրորդը՝ տիրապետող անկյունը՝ հայոց:

Ռազմիկները բոլորն էլ իրենց դիրքերում էին, բայց որովհետև տաք կռիվ չկար, ձանձրույթից նրանք, մի շուն բռնելով, նրա պոչից ամուր կապեցին մի ամերիկյան դատարկ տապո ու պատից ձգեցին փողոց, որը գառիվեր էր և կլոր քարերով հատակված: Շունը կաղկանձելով ընկավ ու վազել սկսեց դեպի վար: Նրա պոչին կապած դատարկ տապոն քարերին դիպչելով՝ սարսափելի աղմուկ հանեց: Այն պոն քարերին դիպչելով՝ սարսափելի աղմուկ հանեց: Այն ժամանակ երեք անկյունների թյուրքական դիրքերից լսվեցին. « Հա գայալըլաբ» (հարձակվեցին): Սկսվեց անհաշիվ գնդակներ տեղալ պատերի վրա և օդի մեջ: Մեր դիրքում եղած ռազմիկները ծիծաղից թուլացած՝ ծափ էին տալիս ու պարում:

Մի միջոց Շահպանտարենց դիրքը, որ շրջապատված էր երեք կողմից, թրքական խիստ գրոհներին չկրճալով դիմանալ լքվեց, բայց այժմ ռազմիկները կասկածելով, որ այդ դիրքը տակավին գրավված չէ, նորից ցանկացան վերադրավել:

Փողոցը, որից անցնելով պիտի մտնեին այդ դիրքը, Համուտ աղայի գորանոցից գնդակոծվում էր: Երիտասարդները չհամարձակվեցին իրենց կյանքը ռիսկի ենթարկել, իսկ մի աղջիկ, Սևո մականունով, իր տասնոց ատրճանակը

արձակում է ու տալիս տղաներին, ասելով. «Վերցրեք, եթե ես սպանվեմ, թող սա թշնամու ձեռք չընկնի», ու ինքը վազելով՝ անցնում է փողոցը ու զգուշությամբ թափանցում է տան մեջ: Հետո այգին էլ գննելով՝ վերադառնում է: Նրա հագուստը երկու տեղ ծակված էր թշնամու գնդակներից: Նա լուր է տալիս, թե ոչ ոք կա ներս: Երեկոյան մութին տղաները ներս մտնելով՝ նորից վերագրավում են այդ իշխող դիրքը: Սևոն իր անձնվիրություն համար մեր ոսկերիչներին շինած մի շքանշանով վարձատրվում է:

ՇԻՐՈՅԱՆԻ ԴԻՐՔԸ

Ցերեկ էր: Հանկարծ դուռը շրխկալեն բացվեց ու մի հրացանակիր ներս ընկավ. «Հասե՛ք, Շիրոյանի դիրքի վրա մեծ հարձակում կա»: Շտաբում եղած պահեստի զինվորները քիչ առաջ Արարուց թաղին օգնություն գնացած լինելով՝ կռվող ուժ էր մնացել շտաբում: Ստիպված՝ ես մենակ ընկերացա հրացանակրին: Երբ հասանք, այնտեղի մարտիկները, պատիվ իրենց, տասից ավելի թյուրք զինվորներ սպանած ու մյուսներին փախցրած էին: Այժմ էլ սպասում էին մթնելուն, որպեսզի դուրս գան և ընկածների գնքերն էլ հավաքեն: Նրանցից մին՝ Ջաբուրյան ազգանունով, դիրքից դուրս թռչելով իր տասնոց ատրճանակով սկսած էր հնձել թշնամուն:

Ես շնորհավորեցի իրենց հաղթանակը ու հետո տեղեկություն հարցրի ուրիշ բաների մասին: Խմբապետը մոտեցավ ու հրացան արձակելու ծակից ցույց տվեց, որ Ջրմփ-Ջրմփ մաղարայի կողքի վրա թյուրքերը թնդանոթ էին տեղավորում՝ մոտ երկու կիլոմետր հեռավորության վրա: Նրանք հինգ հոգի էին, որոնցից մին ըստ երևույթին սպա էր և միայն կարգադրություններ էր անում: Ես քնազրկությունից հարբածի պես էի, բայց նստեցի պատին մեջ փորված ծակի դեմ և բավական ժամանակ հաշիվներ արի, թե այդ հեռավորության վրա իմ մոդել հրացանի նշանգյաղը ինչքան պետք էր բարձրացնել, որ ուղիղ խփեր: Վերջապես կրակեցի: Թնդանոթ տեղավորողների գլխավորը ընկավ հանգստանալու հրանոթի կողքին, իսկ մյուսները անմիջապես անհայտացան: Նույն տեղը այլևս չկարողանալով դիմանալ քնի պահանջին, գլորվեցի գետնին ու հրացանների անուշ սինֆոնիի նվազակցությամբ անմիջապես քնացա:

ՀԱՄՈՒԴ ԱՂԱՅԻ ԶՈՐԱՆՈՅԸ

Վանի կուսակալ Ջևղեթ փաշային ժողովուրդը անվա-
նում էր «Նալբանդ» փաշա: Այդ նրա համար էր, որ նա մի
քանի հայերին պայտեղ էր տվել չարչարելու համար ու հե-
տո սպանել: Երբ այդ «Նալբանդ» Ջևղեթը Վան վերադար-
ձավ, Համուդ աղայի գորանոցը կար, բայց չէր օգտագործ-
վում: «Նալբանդ» Ջևղեթը, ինչպես վերև նշել ենք, նրա մեջ
տեղավորեց 160 զինված չերքեզներ, որոնք մեր կռիվների
օրերին շատ նեղութուն էին պատճառում: Թագա քյահրե-
զի քանքանները ուղեցին այդ կշյան վառել:

Բուլղարացի Գրիգորը, որ զինվորական կառավարու-
թյունից հեռացավ՝ Արամի գործունեությունն չհավանելու
համար, մի քննադատական նամակ գրած էր, որ Արամի
գործունեությունը քննվի: Այդ նամակը ինձ հանձնեցին, որ
կանչեմ, քննեմ այդ գործը և հաշտեցնեմ նրանց: Այդ սար-
սափելի զբաղմանց ու գրեթե անքնություն դատապարտված
օրերին խառնվել օտար կուսակցական գործի մեջ ինձ չժպ-
տաց, որով նամակը թաղված մնաց գրպանիս մի անկյու-
նում:

Բուլղարացի Գրիգորը այդ օրերին ազատ լինելով՝
զբաղված էր մի խաղալիք թնդանոթի կառուցումով: Նա,
երբ լսեց գորանոց վառելու շատ հրապուրիչ խնդրի մասին,
տարվեց այդ խնդրով ու սկսեց ղեկավարել այդ գործը:

Քանքանները բավական հեռվից լաղըմ զարնելով՝ Հա-
սան գորանոցի տակը: Այնտեղ Գրիգորը տեղավորեց դինա-
միտ ու հեռանալով՝ կրակ հաղորդեց նրան: Դինամիտը
կրակն առավ, փոթաց, բայց չպայթեց, ինչպես երևում է նա
իր ուժը կորցրած էր:

Զորանոցի հատակի վրա լցված էր մեծ քանակությամբ
հարդ (դարման) և այդ հարդի վար պառկեցրած էին այն
չերքեզների դիակները, որոնք ընկած էին պատերի ծակերից
անցնող հայերի գնդակներից:

Հրդեհողները այդ երեկո հուսահատվելով՝ դուրս են գա-
լիս լաղըմից: Մի քանի ժամ հետո՝ հանկարծ զորանոցը սկ-
սում է վառվել՝ ի մեծ ուրախություն զայն չրջապատող հայ
ուսուցիչների, որոնք այդ կերպով ազատվեցին մի ծանր մղ-
ձավանջից:

ԴԵԼԵԳԱՅԻԱ

Մի օր լուր ստացանք, որ վաղը այսինչ ժամին ժողովրդյան կողմից դելեգացիա պիտ գա ժամանակավոր կառավարութեան հետ խոսելու: Շտաբում վճռվեց, որ դելեգացիային ընդունենք և պատասխանենք ես:

Դելեգացիայի ընդունելութեան՝ շտաբի անդամներից ներկա էին Գալիկյան և Սեմերջյան:

Որոշյալ ժամին դելեգացիան երեւաց որը բաղկացած էր չորս անձից: Իրանցից մեկը Մարտիրոս Նալբանդյանն էր՝ Երեմյան դպրոցի փոխտեսուչը, երկրորդը՝ Ամերիկյան դպրոցի պրոֆեսոր Ռշտունին, երրորդը՝ վաճառական Ա. Թերզիբաշյանը, իսկ չորրորդը՝ Հարություն Շալջյանն էր: Ես անմիջապես գործի անցա, նրանց հարցնելով, թե ինչ է իրենց այցելութեան նպատակը: Այն օրերին, երբ տակավին սոցիալիզմ չկար, դրամական միջոցներ ունեցողների լեզուն երկար էր, ուրեմն նախ խոսել սկսեց վաճառական Ավետիս Թերզիբաշյանը: Նա ասաց.

«Թյուրքերը լավ են իմանում, որ մենք հացից նեղվում ենք, հենց այդ պատճառով նրանք ամեն օր բռնի կերպով մեզ մոտ են քշում որբեր, պառավներ ու ճմռթված կնիկներ, որպեսզի բերդը ներսից գրավելու պայմաններ ստեղծեն: Նրանք Բուլղարիայում էլ քաղաքներ պաշարելիս նույն կերպ վարվեցան, այսինքն՝ ջանացին սովի միջոցով ստիպել անձնատուր լինելու: Մենք եկած ենք ձեր ուշադրութեանը հրավիրելու այդ շատ կարևոր խնդրի վրա, որ արգելեք այդ թափթփած գաղթականների մուտքը մեր ինքնապաշտպանութեան շրջանը»: Հարցրի. «Երբ ետևից թյուրքական շտիկներն են նրանց մղող, իսկ դիմացից ի՞նչ կերպ արգելենք»: «Պետք է դիմել,- պատասխանեց,- ամենախիստ միջոցի»: «Այսինքն՝ գնդակահարել նրանց, այնպես չէ՞», - հարցրի: «Այո,- պատասխանեց,- երբ թյուրքերը ներս խուժեն ձեր քրոջ և իմ աղջկա համար է, որ կզան և ոչ թե նրանց համար»:

Ես դարձա և հարցրի դելեգացիայի մյուս անդամներին՝ իրենց կարծիքը: Նրանք ցավ հայտնելով մեկտեղ՝ ասացին, որ իրենք ուրիշ միջոց չգիտեն:

«Մեր այս կռիվը,- պատասխանեցի,- ժամանակավոր և արդար գործ է, ես բնավ համաձայն չեմ նրան խառնել դաժանութիւններ դեպի մեր ժողովուրդը: Ավելորդ ցորեն ունեցողներ կան, որք մի քիչ թանկ գնով համաձայն են ծախել, հետևապես չքավորները պիտի հաց ունենան: Միան առատ է և կաթնեղենի նեղութիւն չունենք: Գայով այն խնդրին, որ Թերզիբաշյան էֆենդին ասաց, թե թյուրքերը իմ քրոջ և նրա աղջկան համար են գալիս, դա մազաչափ չի փոխում կացութիւնը, որովհետև մենք այդ տանջված խլայակների համար է, որ կռվում ենք և ոչ թե միայն իմ քրոջ և Թերզիբաշյանի աղջկա համար: Այնուամենայնիվ, վստահ եղեք, որ ձեր առաջարկը ժամանակավոր կառավարութեանը պետք է քննենք»:

(Ձեռագիրն այսպէս ընդհատվում է)

Ծանոթագրություններ

Փանոս Թերլեմեզյանի «Կյանքիս հուշերը» գիրքը ծավալով մեծ չէ, բայց խիտ և տարողունակ շարադրանք է, այն լի է անուններով, քվականներով, միջադեպերով և իրադարձություններով: Թերլեմեզյանի լեզուն թեպետ կանոնական գրական լեզվի համեմատությամբ որոշ «մեղանչումներ» ունի, մանավանդ շարակարգության և շարահյուսության առումով, բայց դա նրա պատմելաձևին տալիս է հետաքրքրական և գրավիչ գուներանգ: Իր շարադրանքի տողերի միջից լսելի են Շատախի բարբառի և Վանի խոսվածքի ինքնօրինակ շեշտադրությունն ու առոգանությունը, նկատելի է բարբառային խոսքի գրավիչ ազդեցությունը: Այդ պատճառով խմբագրական միջամտությունները եղել են նվազագույն: Թերլեմեզյանի շարադրանքի մեջ առկա են բազմաթիվ օտար բառեր՝ պարսկերեն, թուրքերեն, ֆրանսերեն, ռուսերեն, քրդերեն, ինչպես նաև բարբառային բառեր և անվանումներ: Այս բոլորը ընթերցողին բացատրելու-ներկայացնելու համար հարկ էր գիրքն օժտել անհրաժեշտ ծանոթագրություններով: Թերլեմեզյանի նկարագրած բազմաթիվ դեպքերն ու իրադարձությունները, հայկական կյանքի և իրականության առանձին կողմերի և երևույթների հանդեպ իր ունեցած վերաբերմունքը, ինչպես նաև առանձին անձանց իր տված բնութագրումները չեն ծանոթագրվել: Նկատի առնելով այս հրատարակության բնույթն ու նպատակը, ծանոթագրությունները, որ հիմնականում տեղեկատվական են, հասցված են նվազագույնի: Օտարալեզու բառերը բացատրված են ոչ թե ըստ արմատական ստուգաբանության, այլ ըստ այն լեզվի (թուրքերեն, ռուսերեն և այլն), որից դրանք անցել են հեղինակին:

Առաջաբան

Էջ 22.- ...սկսեցի գրի առնել հիշողություններս փոքրիկայից կյանքի, միջավայրի և էպոխայի մտայնության մասին... – Էպոխա – ռուս. эпоха բառից: Ժամանակ, ժամանակաշրջան, դարաշրջան:

Սկիզբը

Էջ 25.- ...Թերլեմեզյան, որի հայերենն է անքիրոյան: – Թուրք. terlemek, քրտնել, մարմնից քրտինքի արտազատվելը:

...բնակություն են հաստատել Վանի Այգեպրան արվարձանում, Ախքեսեն քյահրիզի գլխին: – Ախքեսեն – ենթադրաբար՝ թուրքերեն «ճերմակ ափսե» (ավազան):

Քյահրիզ, նույնն է, ինչ քյահրեզ – պարսկ. kahriz բառից: Ստորգետնյա ջրուղիով բերված ջուր, որ դուրս է գալիս սարքված ջրավազանը:

Երկրի կացությունը մորս ամուսնության տարիներին

Էջ 27.- Այդ պատճառով գայմազանը հրամայել է... – Գայմազան – թուրք. kaymakam, գյուղաքաղաքի կառավարող ամենաբարձր պաշտոնյա, գյուղաքաղաքի պետ:

Հանկույսների ձորը

Էջ 28.- Անմիջապես եկեղեցու կռնակից բարձրանում էր Չըմփ-Չըմփ մադարա կոչվող հազար մետրից ավելի բարձր մի հսկա ժայռ... – Մադարա – թուրք. magara, քարայր, քարանձավ: «Չըմփ-Չըմփ» արձագանքվող ձայնի նմանաձայնությունն է:

Էջ 29.- Իսկ արևմուտքում Վանի բերդաժայռի գորշ կապրազույն սիլուեթն էր երևում... – Սիլուետ – ֆր. silhouette, 18-րդ դարի մինիստր Է. դը Սիլուետի անունից, որին ծաղրանկարել էին ստվերային կիսադեմով: Ուրվագիծ, ուրվանկար, ուրվապատկեր:

Էջ 30.- Մի քիչ հեռու՝ մութ Վոխվի քյահրիզ... – Վոխվի – պարսկ. «վախվի» բառից: Ժառանգված, կտակված, համընդհանուրին պատկանող: Այստեղ պարզապես անվանում է:

...տեղ-տեղ երևում էին հում աղյուսով կամ մյոհրայով շինած տները... – Մյոհրա – հարող խառնած սվաղի կավի հետ:

... որոնց մեջ գնեբբուկ, կակաչ և մանուշակը նրբորեն սարսուռում էին... – Գնեբբուկ – նույնն է, ինչ գինարբ, գինարբուկ, գինեբբուկ, նաև՝ պատառոտուկ, արջականչ: Դաշտային բույս, որ աճում է ճախճախտ տեղերում, թգաչափ բարձր ցողունով, փնջածև անուշահոտ դեղնորակ կամ կապտակարմիր ծաղիկներով (Ստեփան Մալխասեանց, «Հայերեն բացատրական բառարան»):

... որոնց վրա բուսած ախպրանց առունը և դեղին սուսունը գրկախառն համբուրվում էին: – Ախպրանց առուն – ճիշտը՝ աղբրանց արուն, աղբրանց արյուն: Հայաստանում տարածված բույս, անտերև, անհոտ, խիստ գեղեցիկ՝ թավշանման, կարմիր չորսթերթանի ծաղկով:

Սուսուն – նույնն է, ինչ սոսունը, հոտավետ գեղեցիկ ծաղիկ:

Վարժարան-սպանդանոց

Էջ 32.- ... այն էլ երեկոյան մեկնելիս դուրսը գյառի վրա ավազների մեջ թաղեցի ու գնացի Կուն: – Գյառ – հավանաբար թուրքերեն kir բառից: Աղտ, աղտոտություն, աղբ:

Էջ 33.- ... և ես գեյրնի վրա գալարվելով գրկում էի Կունի սի գեյրնի սուլերը... – Սուլ – թուրք. չուստ, նաև՝ ամենապարզ ոտնաման:

Յուրաքանչյուր աշակերտ մտրեկում էր վերակացուին, քամանդա անելուց հետո... – Թամանդա – թուրք. «թեմանա» բառից: Աջ ձեռքը նախ բերանին, ապա ճակատին տանելով խոնարհ ողջույն տալը, թուրքական բարևը: Այստեղ՝ խոնարհվելով խնդրել:

Մարշինոնի այրը

Էջ 34.- Այդ ժամանակները մեր վարժարան աշակերտները փոխադրեցին Նորաշենի դպրոցը, Քոլոզ վարժապետի մոտ, որ նույնպես գարհուրելի ծեծող էր: – Քոլոզ վարժապետ – Վանի Նորաշեն թաղի ծխական վարժարանի ուսուցիչ, Համբարձում Երամյանի վկայությամբ՝ «Երուսաղեմի վանքին մէջ ուսում առած ու քաջ գրաբարագէտ Յովհաննէս անուն վարժապետ մը՝ Քոլոզ (թաղիքէ կլոր կամ կոնածեւ գլխարկ) մականունով»:

Կասեին, որ Մարշինոնին փեշով Մկոն (Խրիմյան) է հրավիրել Վան... – Մկրտիչ Խրիմյան, Մկրտիչ Ա Վանեցի, Խրիմյան Հայրիկ (1820-1907) – Ամենայն հայոց կաթողիկոս 1892-1907 թվականներին: 1862-1869 թվականներին՝ Տարոնի և 1879-1885 թվականներին Վանի հոգևոր թեմերի առաջնորդ: «Փեշով Մկո» արտահայտությունը ցույց է տալիս ժողովրդի ջերմ ու անմիջական վերաբերմունքը անվանի

հոգևորականի հանդեպ: Վանի ժողովուրդը նրան մտերմությամբ կոչել է նաև «Կունցունց Մկո»:

... նոր ուսուցիչներ հրավիրվեցին, որոնցից հիշում եմ Տիգրան Ամիրջանյանի կարկառուն և սև մորուքով դեմքը: – Տիգրան Ամիրջանյան (1835-1897) – գրող, դրամատուրգ, բանաստեղծ: Ծնվել է Վանում, նախնական կրթությունը ստացել է Վարազա վանքի Ժառանգավորաց վարժարանում, այնուհետև ուսումը շարունակել է Կ. Պոլսում: Վերադարձել է Վան, աշխատել է որպես ուսուցիչ, զբաղվել է գրականությամբ: Հեղինակել է «Ողբերգութիւն Մեծին Վարդանայ և Տրդատայ» չափածո պիեսը (1862), «Ուսեալ պանդուխտը» (1873) դրաման, «Կիլո Մրտօ» և «Վեց անհամաձայն եղբայրներ» կատակերգությունները: Հրատարակել է բանաստեղծությունների ժողովածու՝ «Մրմունջք» խորագրով:

Սնահավառ Սրմա Տառն

Էջ 36.- Երեքը միասին նստեցին թոնիրի մոտ, ջուլի վրա: – Ջուլ – թուրք. Ըսլ բառից: Մթար, տապճակ, գետնին փռված հնամաշ շորեր, որոնց վրա նստում են, ինչպես նաև՝ հնամաշ, քրքրված հագուստ:

... մեջտեղը դրավ ժածիկով ու պանիրով լեցուն հողե քյասեն, մի պոզիկ գինի և երեք շարգյուլ էլ դրավ հորս կողքին: – Ժածիկ – պանրանման նյութ, որ ստացվում է թանր եփելուց և քամելուց և որը աղելով ու հետը անուշահամ բանջարներ խառնելով՝ պահում են կճուճների մեջ և պանրի տեղ գործածում (Սրեպիան Մալխասեանց, «Հայերեն բացատրական բառարան»):

Քյասե, նույնն է, ինչ քյասա – կավե ափսե, պնակ:

Պոզիկ – լայն փորով ու պոզով (ծորակով) կավե աման:

Չարգյուլ – տե՛ս բնագրի նույն էջում: «Չարգյուլը չինական թաս էր, վրան չորս հատ կապույտ վարդ նկարած»:

Կնոջ մեզի մեջ յոթ ժանգոտած խալաղա էին լվացել... – Խալաղա – թուրք. halka-«հալգա» բառից: Օղ, օղակ (շոթայի):

Ներսիկ ախպեր

Էջ 39.- Արհեստով երկաթագործ, կողքից կախվող դանակներ էր շինում և հայրը փաս փարայի (փաս փարա – երկու կուպեկ) ծախում: – Կուպեկ – ռուս. копейка բառից: Ռուսական մանրադրամի անվանումը:

... սասում էր. «Որդիդ լավ սանահաթքյար պիպի լինի: – Սանահաթքյար – թուրք. zanaatkar, «արհեստավոր»: Zanaat – թուրք. արհեստ:

Չոջ Թալամազենց տունը

Էջ 41.- ...*որ մեծ բվով շիավոր քրդեր իրենց խոլամներով հյուր էին գալիս և մնում էին շաբաթներով*: – Խոլամ, ման՝ զոլամ – քրդ՝ ծառա, նվիրված ու հավատարիմ սպասավոր:

Էջ 42.- *Նրա գործն է եղել Հայաստանի անկախության համար աշխատել Վեցհազարյակով*: – Վեցհազարյակ – Մոզոթյան և գուշակությունների միջնադարյան ձեռագիր մատյաններ: Կարծիք կա, որ Նոստրադամուսը ծանոթ է եղել հայկական Վեցհազարյակին:

Հին օրերի հարսանիքները

Էջ 44.- ...*ամուրիները հավաքվում և ընկրում էին իրենց գլխավորը՝ ազաբաշին*: – Ազաբաշի – թուրք.՝ asap-«ամուրի» և bas, այստեղ՝ «գլխավոր, առաջնորդ, ղեկավար» բառերից: Ազաբաշի – ամուրիների գլխավոր:

Էջ 45.- ...*դռան կողքին ձեռները կրծքին կանգնած պարանիները իրար հետ մրցելով՝ մանդալներից ունելիքով կրակ էին հասցնում*... – Մանդալ – թուրք. mangal բառից: Թիթեղյա կամ պարզապես մետաղական շարժական կրակարան:

Էջ 46.- *Այդ նուրբ երաժշտության գործիքներն էին քամանչեն, փող, պյուֆ և փամպլապազը*: – Տյուֆ – նույնն է, ինչ «տեֆ»: Թուրքերենի մի խոսվածքով՝ դափ:

Տամպլապազ – թուրքերենի մի խոսվածքով՝ թմբուկ:

Էջ 48.- *Քե նուշ, ամպար ենք բերե...* – Ամպար, նույնն է, ինչ համպար – անուշահոտ նյութ:

Էջ 49.- *Նվագում էին Առավոտ լուսոն և Սրհարին...* – Սրհարի, սահարի – երաժշտություն, որ նվագում են արևածագից առաջ, ցայգանվազ:

Վանի մեջ գործադրված արհեստները

Էջ 47.- ...*սուկարություն, ներկարարություն և փապաղություն*: – Սուկարություն – կոշկակարություն:

Տապաղություն – տապաղ, նույնն է, ինչ դարաղ: Հայերեն՝ խաղախորդ, արհեստավոր, որ մորթը մշակելով կաշի է ստանում:

...*նրանք լավ քյոսալաներ չէին կարող պատրաստել*: – Քյոսալա – թուրք. «քյոսեկ» բառից: Ընտիր կաշի, ընտիր մորթի:

Մեր հագուստները

Էջ 54.- *Տալմախի փակից՝ լավ սիրիական գործվածքից անթարի*: – Անթարի – թուրք. entari բառից: Արևելյան երկար, մինչև ոտները հասնող զգեստ:

Գլուխը փաթաթում էր մուգ գույնի յազմայով: – Յազմա – թուրք. yazma բառից: Ծաղկանկար գլխաշոր, ման՝ զանազան գույնի նուրբ գործվածք:

...*որ հասնում էր մինչև ոտների ճաները և ձեռնակ փաթիսկայից էր*: – Փաթիսկա – թուրք. patiska բառից: Բատիստ, ման՝ վուշի ճերմակ կերպաս:

...*որի փակից արախչի կար*: – Արախչի – թասակ, գունավոր թելերով գործված գլխարկ:

Էջ 55.- *Ես հագնում էի կարմիր զպուն, <...>, վրայից հագնում էի կապույտ ասվիե սաթա...* – Չպուն, նույնն է, ինչ զբուն – բաճկոն, ինչպես նաև երկար, մինչև ծնկները հասնող կանացի կամ տղամարդու վերնազգեստ:

Սաթա – կարճ վերարկու կամ կարճ պիջակ, կուրտիկ, կնոջ թանկ հագուստ:

Վանի արդյունաբերությունը

Էջ 57.- *Շմշիր փայտի վրա ոճավորված ծաղիկներ էին փորագրում*... – Շմշիր, նույնն է, ինչ շիմշիր կամ շիմշատ – տոսախ, մշտադալար կանաչ թուփ (ծառ)՝ դեղին կարծր փայտով, շատ հարգի է քանդակների ու երաժշտական գործիքներ սարքելու համար:

Էջ 58.- *Շուրով մրուքների դուրեկան չխշիկոցը սկսեց լավել*: – Մքուք, նույնն է, ինչ մաքուք:

Նրանք գործում էին ամենագեղեցիկ նախշերով ու գույներով շավլարներ, շալիք այծերի ջուռ մազից... – Ջուռ – նույնն է, ինչ չուռ: Այծի մի տեսակի նուրբ, ընտիր մազ: Նաև՝ գոռոզ բուրդ:

Էջ 58.- *Այն ժամանակները մեր կողմերը եվրոպական ալիզարի գույները մուրք չէին գործել*: – Ալիզարի – ֆր. alizarin, «տորոն» բառից: Այստեղ՝ արհեստական ներկանյութ:

Էջ 59.- ...*չեջիմ, ջյուլ և գորգեր*: – Չեջիմ – թուրք. gegim բառից: Բրդից կամ մետաքսից խիտ գործվածք, կարպետի նման և գործածվում է իբրև կարպետ:

Ջյուլ, նույնն է, ինչ «ջուլ» և «չուլ» – թուրք. cul բառից: Այստեղ՝ հասարակ կտոր, ընդհանրապես բրդից կամ մազից հասարակ գործվածք:

Տուրքերը

Էջ 59.- *Ծնված օրիցս ես պարտավոր էի գլխահարկ տալ 40 դուրուշ...* – Ղուրուշ – թուրք. gurus բառից: Թուրքական դրամ:

Մորս բանտարկությունը և Վանի հրդեհը 1876-ին

Էջ 60.- *Այդ գիշերներից մեկին, երբ դեռ նստած խոսում էիք, բերդից մի բռնուի շայն լսեցի՛նք:* – Բռնու – թուրք. boru բառից: Փող, շեփուր, խողովակ: Նաև՝ գիշակեր թռչուն:

Էջ 61.- *Խրիմյանը մի քրոշյուրով սարսուզոցիցիկ մի բռու ջուր է քսվում մոխրակույրի վրա իր «Վան գույժով» – «Վան գույժ» – նկատի ունի Սկրտիչ Խրիմյանի «Վանգուժ» խորագրով գրքույկը, որ տպագրվել է 1877 թվականին Կոստանդնուպոլսում (տպագր. Արամյան):*

Չեղծումներս

Էջ 62.- *Երբորդ զեղծումս այն էր, որ սնդուկից մի ձոք (ռուսական 20 կուպեկանոց) վերցրի ու մատիկներ գնեցի, որոնցով մեր փան ձեռագիրներից մինիստրություն էր ընդօրինակում:* – Կուպեկ – ռուսական մանրադրամի միավոր:

Մինիատյուր – իտ. miniatura բառից: Այստեղ՝ մանրանկար:

Այգեգործ և որմնադիր

Էջ 65.- *Փորեկ, ուրեկ, աշոշխար անել...* – Ռտել, նույնն է, ինչ հոտել – կտրել, էտել:

Աշոշխար անել – Աշոշ – խաղողի նորածիլ ընձյուղ: Ազոշխար անել – էտել, կտրել:

Մեր տունը

Էջ 66.- *...և մտնում էին քակը, որ շրջապատված էր մոհրայով շինած բարձր պատերով:* – Մոհրա, նաև՝ մյոհրա – տես 28-րդ էջի ծանոթագրությունը:

Այդ բարձր դռան դիմացն էր ցանցախի փունը... – Ցանցախի տուն – վառելիք՝ ցան և ցախ պահելու տեղ:

Հարակի՛ն բոլորովին մոտիկ երկու նշաշև պատիսանների կային, իսկ թոնրի մոտ, մի մեկրի շափ բարձր, 2 փոլապներ... – Պատիսան, նույնն է, ինչ պատրիսան – ակնատ, պատի վրա պատուհանի պես փորվածք, որ գործածվում է իբրև դարակ կամ պահարան:

Տոլապ, նույնն է, ինչ դոլաք – պարսկ. dolab բառից: Պատի մեջ բացված պահարան, դռով:

Այդ փոսիկ մեջ լցնում էին այրված լաթի կտորներ, քար, շախմախ, ցողեր: – Չախմախ – թուրք. cakmak բառից: Կայծհան, հրահան:

Էջ 68.- *Թառնան մեկ ու կես մեկր բարձր էր գեպնից, որի փակ սափնաններով կիջնեինք մաղազան (պաղվալ)...* – Մաղազա – թուրք. magaza, «խանութ» բառից:

Պաղվալ – ռուս. подвал, «նկուղ» բառից:

Շիրախանա

Էջ 69.- *Շիրախանա* – թուրք. «շիրա», cira – քաղցու, նոր ճնլած խաղողի հյութ և «խանա», hane, «տուն» բառերից: Տեղ, որտեղ խաղող են ճնլում և նոր ճնլված խաղողի հյութ են ստանում, հնձան:

Մեր սնունդը

Էջ 70.- *Թորվան մոտ դրվում էր 40 սանփիմեկր բարձրությամբ, քառակուսի պախր...* – Թորվան – թոնրի:

Պախր – պղինձ, նաև՝ պղնձ: Այստեղ՝ պղնձե քառակուսի առարկա, պղնձե աման, որ ծառայում է իբրև պատվանդան:

Երեկոյան ընթրիքի մենյուն... – Մենյու – այստեղ՝ ֆրանս. menu բառից: Դաշագանկ, կերակրացանկ:

Ռուս-թուրքական պատերազմը 1877-78

Էջ 73.- *Խիզանը, որ մինչև 1800-ին հայ կուլփուրայի վայր էր եղել...* – Խիզան – քաղաք Մեծ Հայքի Մոկք նահանգի Մյուս Իշայք գավառում, Բաղեշ քաղաքից 35 կմ հարավ-արևելք, Վանա ծովի հարավ-արևմտյան կողմում: Այսօր անվանվում է Հիզան: Ժամանակին հայտնի է եղել իր վարպետ մանրանկարիչներով:

Էջ 75.- *Մինչդեռ այդ թվից քսան փարի հեկո, երբ Խրիմյանի և Փորթուգալյանի պրոպագանդն ու օրինակները արդեն որոշ չափով արթնացրած էին ժողովրդին...* – Խրիմյան – տես 32-րդ էջի ծանոթագրությունը:

Սկրտիչ Փորթուգալյան (1848-1921) – խմբագիր և հրապարակախոս: Մարտելում հիմնադրել է «Արմենիա» պարբերականը (1884), որի անունով նրա հետևորդները կոչվել են արմենականներ: Համարվում է Արմենական կուսակցության հոգևոր հիմնադիրը: Խմբագրել է «Ասիա» լրագիրը: Վանում հիմնել է Հայկազյան կենտրոնական

վարժարանը և «Սև խաչ» ազատագրական կազմակերպությունը:

1914 թվականին Կ. Պոլսում Փանոս Թերլեմեզյանը նկարել է Սկրտիչ Փորթուգալյանի դիմանկարը (ստվարաթուղթ, թուղթ, մատիտ, սանգինա, կավճամատիտ, 25,3 x 30,4): Այժմ գտնվում է Հաստանի ազգային պատկերասրահում:

Պրոպագանդա բառից: Քարոզում, քարոզչություն, մտքերի և գաղափարների տարածում:

– *Ասիկանա կողմից ռուսական բանակի կենտրոնը Կարինումն էր...* – Ասիկանա – գտնվում է Գյումուշհանեից, Տրապիզոնի կողմից հարավ: Այսօրվա Ջիգանա բնակավայրն է:

Էջ 76.- *...որը պեղք էր ուլտրաանգլիսներ պատրիարք Ներսես Վարժապետյանին և դիպլոմատ համարված Չերագներին...* – Ներսես Բ Վարժապետյան (1837-1884) – Պոլսոց պատրիարք 1874-1884 թվականներին:

Մինաս Չերագ (1852-1929) – գրող, հրապարակախոս: Սկրտիչ Խրիմյանի, Խորեն Նար-Պեյի (Գալֆայան) և Ստեփան Փափագյանի հետ եղել է Բեռլինի կոնգրեսին մասնակցելու մեկնած պատվիրակության կազմում իբրև քարտուղար և թարգմանիչ: Հայ պատվիրակության գործունեության մանրամասնություններն ու արդյունքները Մինաս Չերագը շարադրել է «Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովն» աշխատության մեջ (1878): Հայոց հարցի առնչությամբ պատրիարք Ներսես Վարժապետյանի հետ հանդիպել է Գլադսթոնին, Ռուսաստանի կայսր Նիկոլայ Երկրորդին և այլ նշանավոր պետական այրերի:

Կենտրոնական դպրոցը

Էջ 81.- *Երբ նոր պատմության մեջ երիտասարդ ուսուցիչ Սկրտիչ Թերլեմեզյանը պատմում էր Չեյթունի ապստամբության մասին...* – Սկրտիչ Թերլեմեզյան (Ավետիսյան, 1864-1896) – մանկավարժ, ազգային-ազատագրական շարժման գործիչ: 1885-ին ստեղծել է Արմենական կազմակերպությունը: 1896-ին կազմակերպել է Վանի հերոսական ինքնապաշտպանությունը: Իր ջոկատով, մոտ ութ հարյուր հոգի, փորձել է անցնել Պարսկաստան, Ս. Բարդուղիմեոսի վանքի մոտ ջոկատը կռվի է բռնվում թուրքական զորքի հետ և այդ կռվում էլ Սկրտիչ Թերլեմեզյանը զոհվում է արմենական իր վեց հարյուր մարտիկների հետ:

Մի փոքրիկ դեպք

Էջ 82.- *Ես մեծացրի Գրիգոր Արծրունու, Բաֆֆիի և Միքայել*

Նալբանդյանի ֆոտոգրաֆները... – Ֆոտոգրաֆ – ֆր. fotograf բառից: Լուսանկար:

Իրենց քայֆայական հասկացողության զոհ գնացին իմ նկարները: – Թայֆա – թուրք. tayfa, «անձնակազմ» բառից: Այստեղ խումբ, խմբավորում, կողմնակից:

Այդ ժամանակները ես ռուսական կոնսուլ Կամսարականի լուսանկարն էլ մեծացրի և իրեն նվիրեցի: Նա շար ուրախացավ և ինչ րվեց Քյուրքչյանի հանած Անիի 44 լուսանկարները՝ սերբոսկոպով միասին: – Կոնսուլանտին Կամսարական (1840-1922) – դիվանագետ, գեներալ-լեյտենանտ: 1877-78 թվականներին մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին: 1878 թվականից եղել է Ռուսաստանի փոխյուպատոսը Վանում: 1884 թվականին նրան տեղափոխել են Սիրիա:

Հովհաննես Քյուրքչյանց (1855-1903) – լուսանկարիչ, հայ իրականության մեջ պատմական հուշարձանների լուսանկարման գործի հիմնադիրն ու սկզբնավորողը: 1877-78 թվականներին իբրև լուսանկարիչ մասնակցել է ռուս-թուրքական պատերազմին ռուսական բանակի կազմում, բանակի հետ մտել է Անի և լուսանկարել պատմական հուշարձանները: 1879 թվականին ուղեկցող խմբով՝ օգնականներով, հասել է Անի և նկարել հինավուրց քաղաքի համայնապատկերը: Հրատարակել է Անիի հուշարձանների շարք (42 լուսանկար), «Աներք Հայաստանի» խորագրով: Թերլեմեզյանի խոսքը այդ լուսանկարների մասին է:

...Միքայել Նալբանդյանի «Երկրագործություն» գրքուկը... – Միքայել Նալբանդյանի գիրքը կոչվում է «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»: Հրատարակել է 1862 թվականին Փարիզում, «Միմեն Մանիկեան» ստորագրությամբ:

Խրիմյան և Փորթուգալյան

Փորթուգալյան – տե՛ս 75-րդ էջի ծանոթագրությունը:

Էջ 87.- *Կենտրոնական դպրոցի րարեկան մրցանակաբաշխության հանդեսին, Փորթուգալյանի կարգադրությամբ, ես արտասանել եմ Գամառ Զաքիայի «Ո՞վ է հայ» ուրանավորը, կուսակալի և օլթար հյուպարոսների ներկայությամբ:* – Թերլեմեզյանը նկատի ունի Ռափայել Պատկանյանի (1830-1892) «Հայ և հայություն» վերնագրով բանաստեղծությունը (1855).

Ո՞վ է հայը. մի՞թե նա է, որ խոսում է հայ լեզվով, Եվ կամ՝ որի մականունը հանգում է յան մասնիկով,

Որ ուտում է ամենայն օր ճաշին տղմա ու փրլավ,
Կամ՝ պարծանք միշտ հագնում է հայի գրդակ ու հալավ...

Կենտրոնականի աշակերտության մարզանքները

Էջ 85.- *Հեյրո կարդում էինք թարգմանական գրքեր՝ Վիկտոր Հյուգոյի «Թշվառները», «Գաղտնիք Փարիզին», «Երեք հրացանակիրները», Էժեն Սյուի գրքերը և այլն:* – «Գաղտնիք Փարիզի» բազմահատոր վեպի հեղինակը Էժեն Սյուն է (1804-1857), «Երեք հրացանակիրներ»-ի հեղինակը՝ Ալեքսանդր Դյումա-հայրը (1802-1870):

Առաջնորդարանի բունտը

Էջ 88.- *...բունտըր – Բունտըր – ռուս. бунт բառից:* Խռովություն, ընդվզում, ապստամբություն:

Էջ 89.- *Ծո, բյութուն փեղ արուն և կողոպուտ է, դուք հալա փելեգրաֆ կուրաք...* – Բյութուն – թուրք. бутун բառից: Բոլոր, ամբողջ:

Տելեգրաֆ – այստեղ՝ ռուս. телеграф բառից: Հեռագիր:

Երեմյան

Էջ 92.- *Երեմյան* – Համբարձում Երամյան (1857-1929) – մանկավարժ: Տասնմեկ տարեկանում կուրացել է, գիտելիքներ է ձեռք բերել ինքնակրթությամբ: 1878 թվականին հիմնադրել է Վանի Երամյան վարժարանը: 1914 թվականից եղել է Եգիպտոսի Սիսուան, ապա՝ Պողոսյան վարժարանների տեսուչ: Հեղինակել է «Յուշարձան Վան-Վասպուրականի» (1929) երկհատոր աշխատությունը:

Որսորդություն

Էջ 93.- *Ես սառած և անթի իջա լեռան սրորոտը, բյոլ աղբյուրից ջուր խմեցի...* – Բյոլ – թուրք. bol, «շատ, հորդ, առատ» բառից:

Չուխ Կյատուկի դեպքը 1889 մայիսին

Էջ 96.- *Իմ ավագ ընկեր, մի վանեցի վառվում և նվիրված երկրասարդ, Օհանես Ազրիպասյան, իր հեյր առնելով երկու ընկերներ՝ Զոլոշյան (թիֆլիսեցի) և Կուլաքսյան՝ վանեցի...* – Հովհաննես Ազրիպասյան (մոտ. 1866-1889) – ազգային-ազատագրական շարժման գործիչ: 1888-ին Սալմաստում Հովհաննես Ազրիպասյանը, Վարդան Գոլոշյանը և Կարապետ Գուլակսյանը կազմում են զինված խումբ և 1889 թվականի մայիսին Հավթվան գյուղից դուրս գալով անցնում են պարսկա-թուրքական սահմանը և շարժվում են դեպի Տարոն: Չուխ Գյատուկ կոչված լեռնանցքում անհավասար կռվի են բռնվում

թուրքական զորքի հետ: Հովհաննես Ազրիպասյանը և Վարդան Գոլոշյանը զոհվում են, Կարապետ Գուլակսյանի ճակատագիրը անհայտ է:

Վարդան Գոլոշյան (Ալեքսանդր Գոլոշյան, 1867-1889) – ազգային-ազատագրական շարժման գործիչ: Ծնվել է Թիֆլիսում, սովորել է Ներսիսյան դպրոցում, 1883-ից ազգային-ազատագրական գործունեություն է ծավալել Արևմտյան Հայաստանում (Վան, Սասուն, Մուշ):

Կարապետ Գուլակսյան (նաև՝ Կուլաքսյան, Ակնջատյան, 1867-?) – ազգային-ազատագրական շարժման գործիչ, առաջին ֆիդայիներից մեկը:

Կարնո և Գում-Գափուի դեպքերը

Էջ 98.- *Այդ ցույցի ղեկավարն էր վանեցի մի խանութպան՝ ֆանափրիկ հայրենասեր և հեղափոխական խառնվածքով՝ Ջանկյուլյան ազգանունով:* – Գում-Գափուի ցույցի գլխավոր կազմակերպիչը եղել է Հնչակյան կուսակցությունը, իրագործողները՝ վանեցի Հարություն Ջանկյուլյանը (Կայծիկ, 1855-1915) և հաճնցի Համբարձում Պոյաջյանը (Մեծն Մուրադ): Ջանկյուլյանը ձերբակալվել է ցույցը ղեկավարելու համար, ուրիշ 26 գործիչների հետ, ենթարկվել է ահավոր տանջանքների ու խոշտանգումների, ապա դատապարտվել մահվան, սակայն նրան հաջողվում է փախչել բանտից:

Ավոյի փախուստը

Էջ 99.- *Մեր բանտում մի հայրնի կաշաղ կար...* – Կաշաղ – թուրք. kacak բառից: Փախստական, դասալիք:

Երիտասարդության ակտիվությունը և հեղափոխական շարժման վերելքը

Էջ 100.- *...ցանկանում էին ղեկավարվել թեորիայով...* – Թեորիա – ռուս. теория բառից: Տեսություն, քննական գիտելիք:

Ուրեմն դիսցիպլինա և կենդրոնից բխող ղեկավարություն չէր կարող լինել... – Դիսցիպլինա – ռուս. дисциплина բառից: Կարգուկանոն, ենթակարգություն:

– *Խոթերի և անհասարկի թե պրոպագանդը և թե գործունեությունը անկոնկրորդ էր:* – Պրոպագանդ – տե՛ս 75-րդ էջի ծանոթագրությունը:

Անկոնտրոլ – ռուս. контроль, «վերահսկողություն» բառից: Անվերահսկողություն, նաև՝ չվերահսկվող:

Դեպի Մուշ

Էջ 102.- *Բարերախարար կարաշեխը խիստ չէր...* – Կարաշեխ – թուրք. karaseyh բառից: Չյունամրրիկ, բուք, նաև սաստիկ ուժեղ քամի, հողմ:

Էջ 100.- *...դրանք բաղեցի ուխտավորներ են, որոնցից յուրաքանչյուր տղամարդ երկու դաշույն և մի ազալի հրացան ունի:* – Ազալի – հավանաբար թուրք. «իզալի» բառից, որ նշանակում է «ջնջել, վերացնել»: Այստեղ՝ ժողովրդական լեզվով՝ ջնջող հրացան, այսինքն՝ սարսափելի զենք:

Մշու Սուլթան Սուրբ Կարապետ

Էջ 107.- *...բայց ամենքն էլ մի դաշույն ունեին մեջկապիև խրած և մի չախմախի հրացան:* – Չախմախի – չախմախով, կայծահանով, հրահանով:

– *Այդ իստեղիմանքն հասարակության մեծ մասը ապրում էր վանքի պարիսպներից դուրս գանազան բարաքների ու վրանների տակ:* – Բարաք – այստեղ՝ ոռու. ճարակ բառից: Ժամանակավոր փայտե կացարան:

Իրենք բացեհրաց կաշաղ ծխախոտ էին գործածում... – Կաշաղ – այստեղ՝ մաքսանենգ, գաղտնի բերված:

Մանավանդ դեպերի քաչալ հիսնապետր... – Քաչալ – թուրք. ճաղատ, անմազ:

Էջ 108.- *Երկու տեղ փահիլաններ էին խաղում...* – Փահիլան – այստեղ՝ լարախաղաց:

Նրանց տակի մասխարաները իրենց սրամիտ խոսքերով ու բացկանչություններով... – Մասխարա – այստեղ՝ ծաղրածու, խեղկատակ:

...չափազանց աշխուժորեն տարուբերվում էին Մշո խրոի ցնցող տենպերով: – Մշո խրո – պարի տեսակ: Եղել է նաև Շատախի խրո: «Մշո խրո»-ը ռազմական պար է, որ «նժույզի ընթացք է պատկերում» (Մրբուհի Լիսիցյան, «Հայկական հինավուրց պարեր», Երևան, 2013, էջ 186):

Տենպ – այստեղ՝ ոռու. темп բառից: Թափ, արագության աստիճան:

...որտեղ հաճախորդները, ծալապատիկ նստած խաիրների վրա, սուրճի մինյոն բաժակներից... – Մինյոն – ֆր. mignone<mignon, փոքրագույն, մանրագույն, շատ փոքրիկ, մանրիկ: Մինյոն բաժակ – այս-

տեղ՝ փոքրիկ բաժակ:

Արաբոն և Լեոնը

Էջ 109.- *Արաբոն* (Առաքել, Մխիթարյան Ստեփանոս, 1863-1893) – ազգային-ազատագրական շարժման գործիչ, առաջին ֆիդայիներից մեկը:

– *Ես վեր կացա, արշակեցի իմ կաման ու կապեցի Արոյի մեջքին...* – Կամա, նույնն է, ինչ դամա – թուրք. kema բառից: Դաշույն:

Իմ առաջին սերը

Էջ 111.- *Իսկ ես, երանության էքստրազի մեջ...* – Էքստազ – հուն. extasis, «հիացում» բառից: Ծայրահեղ հիացման, սքանչացման վիճակ:

Կիրակնօրյա դպրոց

Էջ 116.- *Ջրիդ գարկոդ լավ ձիավորներ ունեցանք...* – Ջրիդ – արաբ. gerid բառից: Մականախաղ:

Պարսկաստան մեկնելու

Էջ 119.- *Այդ խմբերից մեկի երկու երիտասարդներ, Արմենակ Եկարյան և Գաբրիել Ջրվանդյան...* – Արմենակ Եկարյան (1870-1925) – հայ ազատագրական շարժման գործիչ: 1888-ին մտել է Արմենական ազգային-ազատագրական կազմակերպության մեջ: 1896-ի ջարդերից հետո քառասուն զինված մարտիկներով եկել է Վան և ստանձնել քաղաքի ինքնապաշտպանությունը: 1915-ի ապրիլին եղել է Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը, քաղաքի մարտական ուժերի և հետագայում հայկական ոստիկանության պետը:

– *Ես հագա մի քրդական հնացած օյնա, մի քրդով ծածկեցի այն ժամանակվա սև ու քավ մագերս և նրա վրա մի կրքորած յազմա ոլորեցի, հագա չուռից գործած մի հին շալվար...* – Օյնա – բարբառ. փեշ: Զոլոզ – քրդական գլխարկ, դժտիկից պատրաստված, որի վրա փաթաթում են փուշի:

Յազմա – նուրբ գործվածքից ծաղկավոր գլխաշոր:

Չուռ – տե՛ս 58-րդ էջի ծանոթագրությունը:

Դերիկի վերաբնակությունը

Էջ 120.- *Հաֆթվանցի մի շիլաջի վաճառական...* – Շիլա – կարմիր

կտավ, նաև՝ այս կտավից կարված շապիկ, որ հագնում են կանայք զգեստի վրա:

...ինքն էլ մի փոքրիկ ամսական կտրանաս և վանքի նորաթղար կղառնաս: – Նորաթղար – թուրք. պահակ, ժամապահ:

Էջ 121.- *Դուրմանաչորում մենք քավական կամիչներ կտրապեղիցնք ու շալակով փոխադրեցինք վանք...* – Կամիչ – թուրք. `kamis բառից: Եղեզն:

...պողպարյա լարերի գլխին ամրացրած կապարյա գունդ է, վրան քարակ սիջիմով գործված: – Սիջիմ – թուրք. sicim բառից: Առասան, քարակ թոկ, քուջ:

Խանասոր

Էջ 123.- *Նույնպես գիտակ են եղել ռուսական և բյուրքական ազենյունները...* – Ազենտ – ռուս. агент բառից: Լրտես, գործակալ, գաղտնի ծառայության աշխատակից:

Բարդուղիմեոսի վանքը

Էջ 126.- *Մեր շիգարները մրսնում էին...* – Ջիգար – պարսկ. giger, այստեղ՝ թուրքերենից: Թոք, թոքեր:

Չարոն և Շերոն

Էջ 129.- *Մեր փնից մեկնելիս Շերոն իմ ռեուլիերի պարրոնները գողացել և փարել փվել էր Օհանին նվեր:* – Պատրոն – ռուս. патрон, փամփուշտ:

Գորեն և Շաքի

Էջ 134.- *Քյազախի, քյոլոզներ և քաղիքներ ոչխարի բրդից էր շինվում:* – Քյազախի, նույնն է, ինչ քազախիկ – կարճ և անթև զգեստ մազից, բաճկոնի մի տեսակ:

Քյոլոզ, նույնն է, ինչ քոլոզ – տես 110-րդ էջի ծանոթագրությունը:

– *Երեք երիտասարդներ մեզ ընկերացան որսի գնալու, շաշաանին կոնակնին չգած...* – Շաշաանա – խոհանոց: Այստեղ՝ ճանապարհի խոհանոց, պարենամթերք:

Նորից Պարսկաստան

Էջ 136.- *Իհարկե, որտեղ գործունեություն կա, վրանգավոր մոմենտներ էլ են հանդիպում:* – Մոմենտ – այստեղ՝ ռուս. момент բառից: Պահ, ակնթարթ, ժամանակ:

Թավրիզում

Էջ 137.- *Ամենքը իրենց հայացքը հատեցին ընկերոջս վրա հարցական կերպով, թե այդ ջանավարն ով է:* – Ջանավար – պարսկ. ganvar բառից: Այստեղ՝ թուրքերենից: Ընդհանրապես գործածվում է վայրի գազան նշանակությամբ:

Էջ 138.- *Նա շար հարչակվեց Բուլղարիոն նախարարապետ Սրամբուլովի վրա:* – Ստեֆան Ստամբուլով (1854-1895) – 1887-1894 թվականներին՝ Բուլղարիայի նախարարապետ: Հաստատել է դիկտատորական ռեժիմ և կողմնորոշում է ունեցել դեպի Ավստրո-Հունգարիան և Գերմանիան:

– *Հեյրո իմացա, որ այդ մարդը Դումանն էր, որ դաս էր փայխա Թավրիզում, իսկ խոսող շեկ երիտասարդը Հովման Դավթյանն էր:* – Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան, 1867-1914) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1895-ին իր խմբով (հիսուն հոգի) անցել է Վան:

Հովման Դավթյան (Հոնան Նանոյան, 1865-1918) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: 1895-96 թվականներին Ժնևում խմբագրել է «Դրօշակ»-ը:

Ուսուցիչների մեջ էին Սաթենիկ Մարինյան, Իշխան Արղության և կարծես՝ Ռուսրու: – Հովսեփ Արղության (Իշխան, Խանասորի Իշխան, 1863-1925) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ հիմնադիրներից:

Ռոստոմ (Ռոստոմ Աբրահամյան, Ստեփան Չորյան, 1867-1919) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ գլխավոր հիմնադիրներից մեկը:

...*նա Դաշնակցության ներկայացուցիչ Պետրոն էր:* – Պետո (Ալեքսանդր Պետրոսյան, ?-1896) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, սկզբում Հնչակյան կուսակցության, ապա ՀՅԴ անդամ: Վանի 1896 թվականի ինքնապաշտպանության ժամանակ, երբ երեք կուսակցությունները միավորել էին իրենց ուժերը, եղել է դաշնակցականների ղեկավարը:

Էջ 139.- *Այն ժամանակներ «Հնչակ» թերթը Սալմասրում չէին սիրում...* – «Հնչակ» – Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակ-

ցության պաշտոնաթերթը: Հիմնել է Ավետիս Նազարբեկը (Նազարբեկյան, 1866-1939): Հրատարակվել է 1887-1915-ին, 1935-40-ին՝ Ֆրանսիայում, Հունաստանում, Անգլիայում, ԱՄՆ-ում:

Այնուամենայնիվ ես հնչակյանների հրապարակած Լաֆարգի «Ծուլանալու իրավունք» գրքից մի քանի օրինակ դրած էի իմ խորթիկս մեջ... – Պոլ Լաֆարգ (1842-1911) – ֆրանսիական և միջազգային քանվորական շարժման գործիչ: Պոլ Լաֆարգի գրքի հայերեն թարգմանությունը վերնագրված է «Իրավունք ծուլանալու. Հերքում 1848-ի «Աշխատելու օրենքին»»: Տպագրվել է Աթենքում 1893 թվականին: Հրատարակել է Հնչակյան կուսակցությունը: Գրքույկը 61 էջ է:

Վերադարձ

Էջ 140.- *Կարավանի մեջ էր Ակոբ անունով մի չարվադար տղա... – Չարվադար – պարսկ. անասնապահ, հովիվ:*

Ես ունեի չեռքիս մի շար գեղեցիկ գիլանի փայլ... – Գիլանի – նույնն է, ինչ գիլենի, լատիներեն՝ gillenia trifolata:

Վանի բանոթ

Էջ 142.- *...որի արևելյան կողմը կար մի կորրիդոր... – Կորրիդոր – ռուս. корридор բառից: Միջանցք:*

- Ինչ փարան այդ կարգերներից միևի մեջ ներս հրեցին... – Կարցեր – ռուս. карцер, պատժախուց:

Էջ 143. - *Քիչ հեկո նորից դուռը բացվեց, բերին ընկերներիս դրկած երկու օխա հաց... – Օխա – թուրք. okka, թուրքական ծանրության չափ, հավասար է մոտ 400 գրամի:*

Էջ 144.- *Այն կամերայում, որ ես տեղավորվեցի, կեսը հայեր էին... – Կամերա – ռուս. камера բառից: Այստեղ՝ պահասենյակ, բանտախուց:*

Արսեն վարդապետ Թոխմախյան

Էջ 146.- *Արսեն վարդապետ Թոխմախյան (ավագանի անունով)՝ Հարություն, 1843-1901, սպանվել է Ատրպատականի Մուրթ Ստեփանոս Նախավկայի վանքում) – բանասեր և թարգմանիչ:*

Նրա գրած գրքերը... – Արսեն վարդապետ Թոխմախյանը հեղինակել է «Հայրենիքի պահանջներ ես հայ գիտացին» (1881), «Մասին լեռներու հարաւային ստորոտները» (1882) գրքույկները արևելահայերին արևմտահայության ծանր կացությունը ծանոթացնելու նպատակով:

...1881 և 82 թվերին Թոխմախյանը Թիֆլիսում հրապարակային դասախոսություններ է կարդացել, որոնցից մեկի համար «Մշակի» 1881 հունիս 2 համարում քննադատը գնահատելով Արսենի բերած տնտեսական փաստերը թուրքահայ ժողովրդի կենցաղի մասին, ավելացնում է. «Թոխմախյանը այն միտքը հայրենեց, որ հայոց ազգության նեցուկը ոչ կրոնն է, ոչ էլ հայոց ինտելիգենցիան...» – «Մշակ» թերթը 1881 թվականի հունիսի 2-ին (N 98) «Նամակ խմբագրին» ընդհանուր խորագրի ներքո, ի թիվս այլ նյութերի, տպագրել է անասորագիր հաղորդում-տեղեկություն Թոխմախյանի կարդացած դասախոսության մասին: Թերլեմեզյանի մեջբերումը այդ հաղորդումից է:

Ինտելիգենցիա – ռուս. интеллигенция բառից: Մտավորականություն:

Կուսակցությունները

Էջ 148.- *Նրանց սեպարատիզմի չգրությունները անուղղակի կերպով քաջալերվում էին ցարիզմից և Անգլիայից... – Սեպարատիզմ – լատ. separatus, «անջատված» բառից: Այստեղ՝ ռուս. сепаратизм բառից: Անջատողականություն, առանձնանալու, տարանջատվելու մղում:*

...որ պելիանովյան սոցիալ-դեմոկրատական ծրագրերից շարքան փոխ առնելով... – Գեորգի Պելիանով (1856-1918) – ռուսական և միջազգային սոցիալ-դեմոկրատական շարժման նշանավոր գործիչ, փիլիսոփա, մարքսիզմի քարոզիչ:

Հնչակյաններն իրենց գոյության առաջին փարիներին ազդեսիվ ուժը չկրցին պահել... – Ազդեսիվ – ռուս. агрессивный բառից: Հարձակողական, ուժային գերազանցություն ունեցող:

Էջ 149.- *Այդ կուսակցություններից առաջ Կովկասում կար «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությունը, որը 90 թվին կազմակերպեց Կուկունյանցի խմբի երեխայական արկածախնդրությունը... – «Երիտասարդ Հայաստան» – հայրենասիրական կազմակերպություն, որ ստեղծվել է Թիֆլիսում 1889 թվականին: Հիմնադրել են Պետերբուրգում և Մոսկվայում կրթություն ստացած հայ երիտասարդները:*

Սարգիս Կուկունյան (1863-1913) – ազգային-ազատագրական շարժման գործիչ: Կովկասում կազմել է զինված ջոկատ (78 հոգի) և 1890 թվականի սեպտեմբերի 22-ին փորձել է Կարսի մարզից անցնել Արևմտյան Հայաստան՝ հուսալով, որ արևմտահայերը կմիանան

իրեն: Արշավանքը ձախողվել է: Կուկունյանը ձերբակալվել է և դատապարտվել քսան տարվա բանտարկության: 1905-ին ընդհանուր ներմամբ ազատվել է: 1909 թվականին դարձյալ ձերբակալվել է և երեք ամիս հետո ազատ է արձակվել: 1910-ին նորից ձերբակալվել է, բայց հաջողել է փախչել բանտից: Նորից է ձերբակալվել, դատապարտվել է տասնհինգ տարվա տաժանակրության և երեք տարի անց իր մահկանացուն է կնքել Օրյոլ քաղաքի բանտում:

Էջ 150.- *Դաշնակցության առաջին կազմակերպիչներն եղան Քրիստափոր Միքայելյանը, Միմոն Չավարյանը, դոկտոր Լորիս-Մելիքով, Ռոսարոն և մի քանի ուրիշներ:* – Քրիստափոր Միքայելյան (1859-1905) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիրը, առաջնորդը և տեսաբանը:

Միմոն Չավարյան (1866-1913) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ գլխավոր հիմնադիրներից մեկը:

Լորիս-Մելիքով (Հովհաննես Լոռու-Մելիքյան) – բժիշկ, ՀՅԴ հիմնադիրներից:

Ռոսարոն – տե՛ս 138-րդ էջի ծանոթագրությունը:

Հիշյալ պարոնները նարողնիկական հասկացողությամբ ռոմանտիկ հայրենասերներ էին... – Նարողնիկ – ռուս. народ, «ժողովուրդ» բառից: Նարողնիկականություն – շարժում և գաղափարախոսություն, որ 1861-1895 թվականներին մեծապես տարածված էր Ռուսաստանի մտավորականության մեջ: Նարողնիկները արտահայտում էին հասարակ ժողովրդի, մասնավորապես՝ գյուղացիության շահերը, կոչ էին անում զնալ դեպի ժողովուրդը, ծառայել ժողովրդին և այլն:

Դաշնակցության առաջին գորավիզը բուրժուազիայի իդեոլոգ Գրիգոր Արծրունին եղավ: – Իդեոլոգ – ռուս. идеолог բառից: Գաղափարաբան:

Գրիգոր Արծրունի (1845-1892) – հրապարակախոս, գրաքննադատ, հասարակական գործիչ, մասնագիտությամբ՝ տնտեսագետ: 1872-1892 թվականներին եղել է «Մշակ» թերթի հիմնադիր-խմբագիրը: «Եռանդուն մասնակցություն է ցուցաբերել սուլթանական բռնապետության դեմ կազմակերպվող հայ ազատագրական խմբակների և կազմակերպությունների աշխատանքներին, նյութական և բարոյական աջակցություն ցույց տվել նրանց»:

Սկզբից «Մշակ»-ական ոգևորված երիտասարդությունն անցավ այդ կուսակցության շարքերը. հետո կամաց-կամաց նորդարական մտավորականները... – Մշակական – «Մշակ» թերթում արձարծվող գաղափարների համակիր, «Մշակ»-ի ջատագով:

Մեծահարուստ Համբարձում Մելիքյանը թողեց հնչակյան շարքերը, մտավ Դաշնակցության մեջ և սկսեց հրապարակել կուսակցության Թիֆլիսի կենտրոնական օրգանը և այլն... – Խոսքը վերաբերում է «Հորիզոն» թերթին, որի բաժնետիրական ընկերության նախագահն էր Համբարձում Մելիքյանը:

Այդ երեք կուսակցությանց սկզբնական ձգտումները

Էջ 151.- *Այդ սպացույց էր նրանց հակահեղափոխական ու լրդեասական բանդաների վերածվելու պրոցեսին:* – Բանդա – ռուս. банда բառից: Ավազակախումբ:

Պրոցես – ռուս. процесс բառից: Ընթացք:

Դաշնակների և հնչակյանների՝ հայությանն ազատելու միջոցները

Էջ 154.- *Այդ ցնորամիտ կուսակցության «փրկիչները» բնավ չկրցին ըմբռնել, որ Գլխավորն և նմանները սրբություն չունեն...* – Ուխյան Գլխաքոն (1809-1898) – Անգլիայի վարչապետ 1868-74-ին, 1880-85-ին, 1886-ին և 1892-94-ին: Անգլո-հայկական ընկերության համահիմնադիր:

Նույնիսկ «հայասեր» լորդ Բրայսների, Անարոլ Ֆրանսների և նմանների ամեն մի վիրավորանք ֆեոդալ բյուրդ վարիչների հասցեին մի-մի գամ էր մեր մահվան դագաղի համար: – Ջեյմս Բրայս (1838-1922) – անգլիական պետական գործիչ, իրավաբան, պատմաբան: Հայտնի է իր հայանպաստ գործունեությամբ:

Անատոլ Ֆրանս (1844-1924) – ֆրանսիացի գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1921): Քանիցս ցատումով բողոքել է հայերի դեմ կատարված ոճիրների և մասնավորապես հայոց ցեղասպանության դեմ:

Բար Ալիի ցույցը և համատարած կոտորածները

Էջ 156.- *Բար Ալիի ցույցը* – 1895 թվականի սեպտեմբերի 18-ին հայերը Կ. Պոլսում, սուլթանի նստավայր Բարը Ալիի շրջակայքում, խաղաղ ցույց են կազմակերպում: Կազմակերպիչները եղել են հնչակյան կուսակցության ներկայացուցիչները: Յույցին մասնակցել է մոտ 4 հազար հոգի: Չնայած ցույցի խաղաղ բնույթին՝ բուրքական իշխանությունները արյունալի ջարդ են կազմակերպում՝ սպանելով շուրջ 2 հազար մարդ: Կ. Պոլսում դրանով սկսում է հայերի կոտորածը:

Բանկ Օթմանի դեպքը

Էջ 157.- *Բանկ-Օթմանի դեպքը* – 1896 թվականի օգոստոսի 14-ին 31 հայ ֆիդայի (ինչակյաններ և դաշնակցականներ), Բաբկեն Սյունիի (Պետրոս Փարլան, 1873-1896) գլխավորությամբ, գրավում են Կ. Պոլսի Օսմանյան բանկը՝ եվրոպական պետությունների ուշադրությունը Հայկական հարցի վրա հրավիրելու և հայկական բարենորոգումների ծրագիրը արագացնելու նպատակով:

Էջ 158.- *Պոլսո կոտորածների ժամանակ, երբ փողոցների արյունը դեռ չէր չորացած, Վիլհելմ կայսրը իր ականակալու պորտրեն ուղարկեց դահնապետ սուլթան Համիդին՝ ի քաջալերություն:* – Վիլհելմ կայսր (1859-1941) – Գերմանիայի կայսր (1888-1918), Պրուսիայի թագավոր (1861-1888):

Պորտրե – ֆր. portrait, «դիմանկար» բառից:

Սուլթան Համիդ – Արդուլ Համիդ II (1842-1918) – թուրքական սուլթան 1876-1909 թվականներին:

- *Այդ կոտորածների գլխավոր դրոշողը՝ ռուսաց դեսպան Նեխիբով ասել էր սուլթանին. «Կոտորեցեք, Չերդ մեծություն, կոտորեցեք» (Massacrez, Majeste, massacrez):* – Ալեքսանդր Նեխիբով (1835-1910) – ռուս դիվանագետ, 1883-1897 թվականներին եղել է Ռուսիո դեսպանը Թուրքիայում: Գեսպան Նեխիբովի՝ ռուսական ցինիզմով լեցուն խոսքերը հիշում է նաև Լեոն իր «Անցյալից» գրքում:

Այդ Նեխիբովի և սուլթան Համիդի խոսակցությունը Ամֆիթեատրով հրապարակեց այն արեւմտյան ռուսաց թերթերում: – Ալեքսանդր Ամֆիտեատրով (1862-1938) – ռուս գրող, քննադատ, խմբագիր: Անաչառության և համարձակության համար նրան անվանել են «ռուսական Էմիլ Զոլա»: 1889 թվականից աշխատել է Թիֆլիսի ռուսալեզու «Նովոյե օրոգրենիե» («Новое обозрение»-«Նոր տեսություն») թերթում:

Նուրիի սպանության դեպքը Վանում

Էջ 159.- *1893 թվին էր, լուր բերին իմ պահված տեղս, թե տերրորիստները փոխանների գլխավոր կոմիսեր դաժան Նուրի բեյին հեղապնդելիս՝ նա խուսափել է...* – Տերրորիստ – ռուս. террор, «ահաբեկում» բառից: Ահաբեկիչ:

Փոլիս – ֆր. police բառից: Ոստիկան:

Կոմիսեր – ֆր. commissaire բառից: Այստեղ՝ հրամանատար:

Արմենակ Եկարյանը վկայում է, որ Նուրիին սպանողը, Արմենակյան դեկավարների որոշումով, եղել է հենց ինքը՝ Փանոս Թերլեմեզյանը (տե՛ս «Յուշեր Արմենակ Եկարեանի», Պէյրուք, 1985, էջ 48):

Բաժանում

Էջ 162.- *Աշնան երկար ու ցուրտ գիշերներին, երբ լեռների յայտաչինները արդեն իջել էին իրենց գյուղերը...* – Յայլաչի – թուրք. yaylak, «արոտ, արոտատեղի» բառից: Հայերեն՝ սարվոր:

... *«մի թոռ ունենայի, դու որ ջահնամ կերթայիր, երթայիր»:* – Ջահնամ, նույնն է, ինչ «ջհանամ» – արաբ. gehennem, «դժխտք» բառից: Այստեղ՝ թուրքերենից:

Այստեղ պետական պաշտոնյան անցագրեր սլալի մեջ լեցրած՝ ծախում էր... – Սլալ, նույնն է, ինչ սալա – ուռենու բարակ ճյուղերով հյուսված կտր կամ քառակուսի տափակ, ցածրակող աման. գործածվում է զանազան նպատակների համար:

Թիֆլիսում

Էջ 163.- *Յերեկները ուտում էինք պորսին յոթ կոպեկեց պորշ՝ առաք հացով միասին...* – Պորսի – ռուս. порция, կերակրաբաժին, չափաբաժին:

Պորշ, նույնն է, ինչ բորշ – ռուս. борщ բառից: Ռուսական ճաշատեսակ:

... *ինչ փարան Թոփալ Մարիասի փրակփիրն ապրել:* – Թոփալ – թուրք. topal բառից: Կաղ, կաղիկ:

Տրակտիր – ռուս. трактор բառից: Գինետուն, պանդոկ:

Երբ ես պիտի մտնեի փրակփիր, դռան վրա մի ցուցանակ տեսա, որի վրա նկարված էր մի քիլյարդ, երեք գունդեր և երկու քիվեր: – Քիվ – այստեղ՝ ռուսերեն кий բառից: Խաղաձող:

Այդ ժամանակները ես արդեն ծանոթացել էի Թիֆլիսի ինտելիգենցիայի մի մասի հետ, որոնցից հիշում եմ Արրպետը, Ն. Մարինյան և ուրիշներ: Արրպետի մոտ ծանոթացա ինչական Մուրադի հետ... – Ատրպետ (Մարգիս Մուրաթյան, 1860-1937) – գրող, վիպասան, հասարակական գործիչ:

Ն. Մատինյան – հավանաբար՝ Նիկոլայ Մատինյան, լրագրող, մամուլի թղթակից:

Մուրադ – տե՛ս 98-րդ էջի ծանոթագրությունը:

Ծանոթություն նկարիչ Բաշինջաղյանի հետ

Էջ 165.- *Գևորգ Բաշինջաղյան (1857-1925) – գեղանկարիչ:*

Նա ցույց տվեց, որ ընդհանուր կոնտուրն անեմ... – Կոնտուր – ֆր. contour, «շրջագիծ»: Այստեղ՝ ռուս. контур բառից, որ նշանակում է որևէ առարկայի շրջագծային պատկեր:

Գաշնակցության առաջարկը

Էջ 166.- *Հիշյալ դիլեգացիայի անդամներն էին...* – Դելեգացիա – ռուս. делегация, «պատվիրակություն» բառից:

Մալմաստի ընկերներիցս կանչվելս

Էջ 167.- *...ու երկու անգամին Վանում պիտի թողնեինք վեց բերրական կա հրացաններ...* – Բերտանկա – միլիցիանի հրացան, որի կառուցվածքը ստեղծել է ամերիկացի գյուտարար Հ. Բերդանը: Ռուսները այն կատարելագործել են 19-րդ դարի կեսերին և 19-րդ դարի 2-րդ կեսին ռուսական բանակը զինել են այդ հրացանով: Բերդանկա անվանումը հրացանի անունի ռուսական ձևն է, որ կազմված է գյուտարարի անունից:

Նորից թիֆլիսում

Էջ 172.- *Վերայում Հովհաննես Նալբանդյան անունով մի հայրենակից ունեի:* – Վերա – թիֆլիս քաղաքի քաղամասերից մեկը:

Նրա տղան՝ Վահանը, Գերմանիո համալսարանն ավարտելով՝ վերադարձած էր թիֆլիս: – Վահան Նալբանդյան (1876-1902) – գրականագետ և գեղագետ:

Մի օր ես խնդրեցի, որ միջնորդի իր ուսուցիչ Սյրեփանոս Մալխասյանի մոտ... – Ստեփան Մալխասյանց (1857-1943) – բանասեր, լեզվաբան, բառարանագիր և մանկավարժ:

Մի ժամանակ, երբ Մալումյանն էր վարում «Մշակ»-ի խմբագրության գործերը: – Հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս Խաչատուր Մալումյանը (Է. Ակնունի, 1863-1915) աշխատակցել է «Մշակ» թերթին, եղել է խմբագրության քարտուղարը:

...բերքը խիստ կանաչակա էր փանում Խրիսյանի դեմ... – Կանպանիա – ռուս. кампания բառից: Այստեղ՝ կազմակերպված-մտադրված գործողություն, պայքար, հալածանք:

Թեև տիկին Արծրունին երեք ռուբլի ավելացնելով՝ արիպեց, որ հրաժարականս հեղու վերցնեմ: – Տիկին Արծրունի – Գրիգոր Արծրունու այրին, օրիորդական ազգանվամբ՝ Մարիամ Մելիք-Աղամալյան, առաջին ամուսնությամբ՝ Քոչարյան:

Էջ 173.- *...այդ ազար գործ էր, այնպես որ այս ու այն խազեինի հրամանի փակ չէի լինում...* – Խազեին – ռուս. хозяин, «տեր, գործատեր» բառից:

Կաթողիկոսի մոտ

Էջ 174.- *...բայց Գաշնակցությունը դրդում է անզեն ու անպարասար ժողովրդին բռունցքներով գնալ սուլթանի ունեցած Կրուպի բնդանոթների դեմ...* – Կրուպա (Крупп) – 1811 թվականին հիմնադրված մետաղամշակման, մետաղագործության և մեքենաշինական խոշոր ընկերություն Գերմանիայում, որը շատ հայտնի էր նաև իր ռազմական արտադրությամբ:

Ուսանողություն Պետերբուրգում

Էջ 175.- *Նա ինչ հանձնարարեց քանդակագործություն պարսպող Թաշյան անունով մի ուսանողի...* – Աբրահամ Թաշյան (ծննդյան և մահվան թվականներն անհայտ են, 19-րդ դարի վերջ – 20-րդ դարի սկիզբ) – քանդակագործ, սովորել է Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում, կերտել է Բաֆֆու, Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի դիմաքանդակները:

Թաշյանն և նկարչություն ուսանող Տեր-Մինասյանն էլ այնպեղ մաշում... – Խաչատուր Տեր-Մինասյան (1870-1906) – գեղանկարիչ: Սովորել է Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում, 1896 թվականին աշակերտել է նշանավոր նկարիչ Իլյա Ռեպինին պատմական նկարչության արվեստանոցում: 1907 թվականին Պետերբուրգում կազմակերպվել է Խաչատուր Տեր-Մինասյանի ստեղծագործությունների հետմահու ցուցահանդեսը:

Խնայության համար ես ուրում էի միայն կրեչովի կաշա... – Կրեչովի – ռուս. греча, гречиха բառից: Հնդկացորեն, արինճ: Կաշա – ռուս. каша բառից: Քաշովի, շիլա:

Կայսերական նկարչական դպրոցի աշակերտ

Էջ 176.- *...հազիս ունեի կարմիր ոչխարի բրդից Վանում գործված բավականին երկար և մաշված չակեպ, որը միևնույն ժամանակ և վերարկու էր, պարուսիների մի անդրավարտիք...* – Չակետ – ֆր. jaquette բառից: Վերնագգեստ:

Պարուսին – այստեղ՝ ռուս. парусина բառից: Կտոր վուշից կամ կեսվուշից՝ շատ խիտ և ծանր գործվածքով:

Անսին ես ծախսում էի մաքսիմում ինն ռուբլի: – Մաքսիմում – այստեղ՝ ռուս. максимум, «առավելագույն» բառից:

Չիաքարչ չէի նստում երեք կոպեկի խնայողության համար: – Չիաքարչ – հանրակառք, որ գործում է ձիերի միջոցով, որոնք քաշում են հանրակառքը:

Թախիծս

Էջ 179.- *Հանկարծ այդ օրերին ինչ մտք եկավ [իմ] նախկին ուսուցիչ Մկրտիչ Թերլեմեզյանը...* – Մկրտիչ Թերլեմեզյան – Արմենական կուսակցության հիմնադիրը: 1894 թվականին, իբրև «Արմենիա» լրագրի թղթակից, եղել է Մկրտիչ Խրիմյանին ուղեկցողների խմբում:

Հայոց եկեղեցին Նևակի պրոսպեկտի վրա, քաղաքի կենտրոնում էր գտնվում... – Պրոսպեկտ – ռուս. prospect բառից: Պողոտա:

Նևակի պրոսպեկտ – Պետերբուրգի հռչակավոր կենտրոնական պողոտան:

Հայրնի Կարապետ Եզյանը սրիպեց ուսուցչու... – Կարապետ Եզյան (1835-1905) – բանասեր, պատմաբան, մանկավարժ, բարերար: Հովանավորել է Կարինի Սանասարյան վարժարանի, Նոր Նախիջևանի Գոգոյան, Թիֆլիսի Հովանյան օրիորդաց միջնակարգ դպրոցների գործունեությունը:

Գմիտրի Կավկազսկու աշխատանոցում

Էջ 180.- *Դմիտրի Կավկազսկի* – իրականում մարդը կոչվում է Լև Դմիտրև-Կավկազսկի (Արսլան, 1849-1916) – ռուս նկարիչ, գրավյուրի, գծանկարի և օֆորտի վարպետ:

Երկրորդ տարին, քացի դպրոցից, ես սովորում էի Դմիտրի Կավկազսկու աշխատանոցում, որտեղ սովորում էին ուրիշ չորս հայեր էլ – իշխանուհի Արդուբյան, Օբրոյան, Միրզոյան և Ախիկյան: – Իշխանուհի Արդուբյան – հայ նկարչության մեջ հետք չի թողել, հայ գեղանկարչության պատմությունը իշխանուհի Արդուբյանին չի հիշում:

Դավիթ Օբրոյան (1874-1943) – գեղանկարիչ: Սովորել է Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում, Պավել Չիստյակովի (1832-1919) և Իլյա Ռեպինի (1844-1930) դասարանում: Ակադեմիան ավարտել է 1909 թվականին:

Ալեքսանդր Միրզոյան (1868-1928) – գեղանկարիչ, 1901 թվականին ավարտել է Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան:

Վրթանես Ախիկյան (1872-1936) – գեղանկարիչ: Տասը տարի սովորել է Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում, Իլյա Ռեպինի, Պավել Կովալսկու (1843-1903), Ֆրանց Ռուբոյի (1856-1928), Նիկոլայ Մամոկիշի (1864-1944) մոտ:

...այնպես որ երկրորդ տարվա վերջերը ինչ տարան 4-րդ ֆիգուրնի դասարանը... – Ֆիգուրնի – այստեղ ռուս. фигура, «մարմին, առարկա, պատկեր, տեսք, ձև» բազմիմաստ բառից: Այստեղ նկարչական միջավայրի խոսվածքով՝ մարդկային մարմին նկարելու դասարանը:

Հայ ուսանողություն

Էջ 181.- *Իմ ամենամտրիկ ընկերներս նկարչական ուսանողներն էին՝ Տեր-Մինասյան, Գաբրիելյան, Օբրոյան, Շահնազարյան, երգիչ Մամաջան, երաժիշտ Մյունին և այլն:* – Տեր-Մինասյան – տե՛ս 172-րդ էջի ծանոթագրությունը:

Գրիգոր Գաբրիելյան (1862-1898) – գեղանկարիչ: Սովորել է Սանկտ-Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայում և ավարտել է 1893 թվականին: Ապրել է Վարշավայում և դասավանդել միջնակարգ դպրոցներում: Վախճանվել է Վարշավայում:

Շահնազարյան – անհայտ անձ է:

Մամաջան – անհայտ է, թե ով է:

Մյունի – Գրիգոր Մյունի (Միրզայան, 1876-1939) – երաժիշտ, կոմպոզիտոր, խմբավար: Ավարտել է Պետերբուրգի կոնսերվատորիան (1904):

Ռեպին պարծենալով՝ ասաց. «Ահա մենք էլ ունենք մեր Տրայոնը» – Իլյա Ռեպին (1844-1930) – ռուս գեղանկարիչ:

Կոնստան Տրոյան (Տրուայոն, 1810-1865) – ֆրանսիացի նկարիչ, բնանկարիչ, բարբիզոնյան դպրոցի ներկայացուցիչ:

Գաբրիելյանը, որ սպրում էր Վարշավայում, Գյուլամիրյանցի հրատարակած «Արաքս» հանդեսում հրատարակեց իր՝ բյուրդերի և հայ գյուղացիների շար սիրուն էջերունը: – «Արաքս» գրական-գեղարվեստական հանդեսը հրատարակվել է Պետերբուրգում 1887-1895 և 1896-1897 թվականներին: 1890 թվականից իր էջերում արժարծել է հայկական հարցը: «Արաքս» հանդեսի մուտքը Թուրքիա արգելված է եղել:

Մայրաքաղաքի նկարչական միջավայրը

Էջ 182.- *Երկրորդ՝ Շրիգլիցի դպրոցը, որ արդյունաբերական թեքում ուներ:* – Տեխնիկական նկարչության Շրիգլիցի ուսումնարանը հիմնադրվել է 1876 թվականին, գործել է 1879 թվականից: Կոչվել է հիմնադրողի՝ հայտնի մեկենաս և արվեստների հովանավոր բարոն Ալեքսանդր Շրիգլիցի (1814-1884) անունով:

...որի վարի հարկի արշանների գալերեաները լեցված էին հին կլասիկ գործերի կոպիներով... – Գալերեա – ֆր. galerie բառից: Այստեղ՝ ռուսերեն галерея բառից: Մրահ:

Կլասիկ – այստեղ՝ ռուս. классик բառից: Դասական:

Կոպի – ռուս. копия բառից: Պատճեն, կրկնօրինակ:

Բայց այդ մյուզեոն իր մուրքով... – Մյուզե – ֆր. musee բառից: Թանգարան:

Յարանհատ քաղաքի նկարչական ասպարեզի վրա փայլող ասպրեզերը, ինչպես Ռեպինը, Մակովսկին, Շիշկինը, Կովալևսկին, Ռուբոն, Պալենովը, հայկական ծագումով Այվազովսկին և այլն... –

Կոնստանտին Մակովսկի (1839-1915) – ռուս գեղանկարիչ, գեղանկարիչ Վլադիմիր Մակովսկու (1846-1920) եղբայրը:

Իվան Շիշկին (1832-1898) – ռուս գեղանկարիչ և գրաֆիկ:

Պավել Կովալևսկի – (1843-1903) – ռուս գեղանկարիչ:

Ֆրանց Ռուբոն (1856-1928) – ռուս գեղանկարիչ, մարտանկարիչ:

Վասիլի Պոլենով (1844-1927) – ռուս գեղանկարիչ:

Հովհաննես Այվազովսկի (1817-1900) – գեղանկարիչ, ծովանկարիչ:

... ուր հավաքված էին աշխարհիս նկարչական կարիֆենների գործերը... – Կարիֆե – այստեղ՝ ռուսերեն корифей բառից: Նշանավոր գործիչ, նշանավոր դեր:

Էջ 183.- *Հիշյալ Ռուբոն, որ ֆրանսիական ծագում ուներ, բայց ռուս նկարիչ էր, ի միջի այլոց, րված է մի մոնումենտալ, հեղաբարձիչ և բարի գործ՝ «Սևաստոպոլի պանորաման»:* – Մոնումենտալ – ռուս. монументальный, «կոթողային» բառից:

«Սևաստոպոլի պանորամա» – Պանորամա – ռուս. панорама, «համայնապատկեր»: «Սևաստոպոլի պանորամա» ասելով Թերլեն-մեզյանը նկատի ունի Ֆրանց Ռուբոնի «Սևաստոպոլի պաշտպանությունը» (1902-1904) վիթխարի համայնապատկերը:

- *Խրիմու փրահարով բռնված ցար Նիկոլա 1-ինի բանակները ջարդվեցին...* – Խրիմու փոսախտ – ակնարկում է 1853-56 թվականների ռուս-թուրքական պատերազմը, որն ավարտվել է ռուսաց բանակի խայտառակ պարտությամբ:

Նիկոլայ Առաջին (1796-1855) – ռուսական կայսր, Ռուսաստանի արքա 1826 թվականից:

Էստլանդիա

Էջ 184.- *Էստլանդիա* – Ռուսական կայսրության Մերձբալթյան երկրամասի ամենախուսափան նահանգը կոչվում էր Էստլանդական նահանգ (Էստլանդիա): Այսօրվա Էստոնիայի նախկին անվանումն է:

...մի նամակով ներփակ արացա Բուլղարիայի Արմենական վեցերորդ շրջանակի հրապարակած մի պոռոտախոս պռոկլամացիա:

– Պռոկլամացիա – ռուս. прокламация բառից: Թռուցիկ:

...որ համակիր պիտի լինեմ արմենական քյալազոզ շարժումների: – Զյալազոզ – թուրք. kellegoz բառից: Բառացի՝ մեկ աչք ունե-

ցող հրեշ, փոխաբերական իմաստով՝ ճարպիկ, արկածախնդիր, ամբարիշտ, խաբերա: Այստեղ՝ անպատասխանատու, արկածախնդիր գործողություններ:

Էջ 185.- *Ներս մրան, և ժանդարներիայի նաչալնիկը հրամայեց...* – Ժանդարներիայի նաչալնիկ – ռուս. начальник жандармерии, «ոստիկանության պետ»:

...նորից վերադարձան և ինչ ու իրերս կառք դնելով փարին մինչև Ռեել: – Ռեել – Էստոնիայի մայրաքաղաք Տալլինի նախկին անվանումը: 1219-1917 թվականներին պաշտոնապես կոչվել է Ռեել:

Ռ-և-եյի բանոց

Էջ 186.- *...որի վրա բալխաի մեջ խորով լցված ներքնակն էր փրված...* – Թալխա – բրդյա կամ բամբակյա հասարակ կտոր, լայն պարկի նման կարված:

Ներքնակը ծածկված էր մի շինելի կտորով, որ աղյալի փեղ էր ծառայում: – Շինել – ռուս. шинель բառից: Չինվորական վերնագլխոս, որ կարում էին հաստ կտորից, հիմնականում մահուդից:

Աղյալ – ռուս. одяло բառից: Վերնակ, ծածկոց:

Բանդարկյայի ցերեկվա սուպը այդ կտորի մեջ էին լցնում, նույնպես առավորյան և երեկոյան չայը... – Սուպ – ռուս. суп բառից: Ապուր:

Չայ – ռուս. чай բառից: Թեյ:

Սուպը պարարասրում էին 120 բանդարկյայի համար 18 ֆունտ ոսկորից, որի մեջ մի քիչ կրուպա էին զցում: – Ֆունտ – գերմ. Pfund, «կշեռք, կշռաքար» բառից: Այստեղ՝ ռուսերենից: Չանգվածի և կշռի միավոր տարբեր երկրներում տարբեր չափերով: Ռուսական ֆունտը (1918 թվականին կշռի այդ միավորը վերացվել է) հավասար էր 0,4095 կիլոգրամի:

Կրուպա – ռուս. крупа բառից: Չավար:

Էջ 188.- *Պահապաններից մեկը ինչ մի կտորված հայելիի կտորքերեց, որ չիու դոշից կախված հնայիլի մեծություն ուներ:* – Զիու դոշից – ակնհայտորեն անհաջող արտահայտություն է: Ուզում է ասել՝ ծիու պարանոցից:

Էջ 189.- *Դժվարանում էի բացարթել Ռուսաց արարքին գործոց նախարար Լոբանով-Ռոստովսկու այս թմանքն ու կամակարարությունը հանդեպ սուլթան Համիդին:* – Ալեքսեյ Լոբանով-Ռոստովսկի

(1824-1896) – ռուս դիվանագետ: 1895-96 թվականներին եղել է Ռուսաստանի արտաքին գործոց նախարար: Նրան համարում են «Հայաստանն առանց հայերի» կարգախոսի հեղինակ:

Շարաք մի անգամ այդ տեղի երկրասարդ պրոկուրորը գալիս պարտում էր քանկում: – Պրոկուրոր – ռուս. прокурор բառից: Դատախազ:

Նա իր սեփական գրքերից ինչ բերավ մի քանի թարգմանական հատորներ, որոնցից հիշում եմ Բրեյր Հարթի մի գեղեցիկ գիրքը Կալիֆորնիայի կյանքից և Շեքսպիրի «Համլետը»... – Ֆրենսիս Բրետ Հարթ (1832-1902) – ամերիկացի գրող, բազմաթիվ վեպերի, պատմվածքների և պիեսների հեղինակ, համաշխարհային ճանաչման է հասել կալիֆորնիական ոսկեխույզների կյանքին մվիրված ստեղծագործություններով:

Թերլենեզյանի հիշած ժամանակում Բրետ Հարթի մեկ թարգմանություն կար առանձին գրքով՝ «Իմնսուն և ութը տարի առաջ» (թարգմ. Ստեփան Լիսիցյանի, Թիֆլիս, 1902, 56 էջ):

Նույն ժամանակում «Համլետ»-ի հինգ հրատարակություն կար. «Համլետ» (թարգմ. Գարեգին Բաբազյան, Վիեննա, 1899), «Համլետ. Դանեմարքի իշխան» (անգլ. թարգմ. Հովհաննես խան Մասեհյան, Թիֆլիս, 1894), «Համլետ» (թարգմ. Սենեքերիմ Արծրունի, Թիֆլիս, 1889), «Համլետ. Իշխան Տանըմարքայի» (թարգմանիչը և թարգմանության տարեթիվը նշված չեն) և «Համլետ. Դանիայի իշխան» (արձակ թարգմանությունը Սեյադ Ամիրյանցի):

Թերլենեզյանը, ըստ ամենայնի, կարդացել է Հովհաննես Խան Մասեհյանի թարգմանությունը:

Էջ 188.- *...Ռազմավիրական նանապարհով ժանդարմները բաց փրոյկայով ինչ հասցրին Թիֆլիս:* – Տրոյկա – ռուս. тройка բառից: Եռածի սահնակ, եռանդակ:

Մտեխ

Էջ 191.- *...մյուս կորպուսից մի ոչ քաղաքական բանվարկյալ...* – Կորպուս – այստեղ ռուս. корпус բառից: Մասնաշենք:

Գիլիջանից Երևան

Էջ 193.- *Ճանապարհը զիզզազ բարչրանում էր դեպի վեր:* – Զիզզազ – ռուս. зигзаг բառից: Կեռման, ոլորուն:

Երևանի բերդը

Էջ 194.- *Բրյուկիս ու ձերմակեղենիս ձեռքվածքներից տեղ-տեղ մարմինս երևում էր:* – Բրյուկ – ռուս. брюки բառից: Տաբատ:

Էջ 195.- *Վրաս կապույր սատրինն պլաշ ունեի...* – Պլաշ – ռուս. плащ բառից: Թիկնոց:

...այնպես որ մի փոքր ժամանակ հեպոտ պուրգիս մեջքիս վերի մասը միայն մնաց: – Պլուզ – ռուս. блуза բառից: Վերնաշապիկ:

Հիվանդությունս Երևանի բանտում

Էջ 196.- *Դիզենտերի ունեի...* – Դիզենտերի – ռուս. дизентерия բառից: Թանջք, արնալուծ:

Էջ 193.- *Այդ օրը մենք տասներկու վերստ ճանապարհվեցինք: Ուրներս մինչև ճաները խրվում էին փոշիի մեջ և առջևիս ընկերոջ, որ ինչանից կես արշինից պակաս հեռավորություն ուներ...* – Վերստ – ռուս. верст բառից: Ռուսական երկարության չափ, հավասար 1,0668 կիլոմետրի: Գործածական էր մինչև 1918 թվականը:

Արշին – ռուս. аршин բառից: Երկարության չափ, որ հավասար է 71,12 սանտիմետրի: Գործածական էր նույնպես մինչև 1918 թվականը:

Ես չափազանց թույլ էի, բայց ստիպված հագա պալլոս և շալակեցի վերմակս ու սրբաձևիկների չիերի առջևն ընկած՝ մյուս բանփարկյալների հետ քայլեցի մինչև Ջուլֆա: – Պալլոս – ռուս. пальто բառից: Վերարկու:

Ստրաձնիկ – ռուս. стражник բառից: Պահնորդ, պահապան:

Պարսկաստան

Էջ 198.- *Նույն օրը պարունով անցկացրին մեզ...* – Պարոն – ռուս. паром բառից: Լաստ, լաստանավ:

...մրանք չայխանան... – Չայխանա – թուրք. çayhane բառից: Թեյարան:

Այդ գիշերը ես իմ գրեթե նոր պալլոսն ծախեցի երկու տյուհազարհով...

Տյուհազարի – պարսկերեն նույնն է, ինչ դոհեզար, դոզար – 20-րդ դարասկզբին պարսկական շատ մանր դրամ:

Առավուր դուրս ելա և տեսա, որ մի ֆուրդուն գնում է Թավրիզ: – Ֆուրդուն – ֆուրգոն (ֆրանսերեն՝ fourgon) բառի բարբառային ձևն է: Այստեղ՝ ռուսերեն ֆургон բառից: Բեռներ կրելու քառանիվ կառք, որին լծում են սովորաբար չորս ձի:

Սպանատում

Էջ 199.- *Ածիված ու կապույտ ակնոցով Շայթախից անցա Կովկաս*: – Շայթախտ, նույնն է, ինչ Շահթախտ – գյուղ Նախիջևանում, Արաքսի ձախափնյակում, հարթավայրում:

Բոսֆոր

Էջ 202.- *Գավակները անցնելուց հետո...* – Գավակ – թուրք. kavak, «բարդի» բառից: Նկատի ունի Բոսֆորը եզերող բարդիների անտառը: Այսօր էլ Ստամբուլում Բոսֆորի եզերքի մի թաղը կոչվում է Գավակլար (Բարդիներ):

Երեք ամսվա մեջ վերջացրեց այդ ամուր բազան... – Բազա – ֆրանս. base: Այստեղ՝ ռուսերեն ոՆՉՈ բառից: Այստեղ՝ հենակետ, ամրակետ:

...հոյակապորեն բարչրանում էր մշակույթի վառ օջախ Ամերիկյան Ռոբերտ քոլեջը... – Ռոբերտ քոլեջ – հիմնադրվել է 1869 թվականին Կ. Պոլսում, ամերիկացի մեծահարուստ Քրիստոֆեր Ռոբերտի նվիրատվությամբ: Համարվել է Նյու Յորքի համալսարանի մասնաճյուղը:

Էջ 203. – *Անցանք երկնագույն ջրերի և Բեյլար-Բեյի պալատները, մոտեցանք փառանդավոր Բալյան ճարտարապետի շինած սրանչեյի Չրադանի պալատին...* – Բեյլար-բեյ, նույնն է, ինչ Բեյլերբեյը – Պոլսի ասիական մասի թաղամասերից մեկը:

Անցանք նույնպես սուլթանի բնակած Դոլմա-Բաղչի պալատի առջևից... – Դոլմա-Բաղչի պալատ, նույնն է, ինչ Դոլմաբահչեյի պալատ – Կ. Պոլսի ամենագեղեցիկ կառույցներից մեկը: Կառուցել է ճարտարապետ Կարապետ Պալյանը (1800-1866): Ավարտել է 1836 թվականին:

...աջ կողմից քերելով Թոփ-Գափուի սարայը... – Սարայ – թուրք. saray բառից: Պալատ, ապարանք:

Ակադեմի Ժյուլիան

Էջ 206.- *Ակադեմի Ժյուլիան* (Academie Julian) – գեղարվեստների մասնավոր ակադեմիա Փարիզում: Հիմնադրել է նկարիչ Ռոդոլֆո Ժյուլիանը 1868 թվականին: 19-րդ դարի երկրորդ կեսին եղել է Փարիզի Գեղեցիկ արվեստների դպրոցի գլխավոր մրցակիցը:

Մի փոքր ժամանակ Լուվրի մյուզեոն արչաններից նկարելուց հետո Տիգրան Եսայանի հետ զնացի Ակադեմի Ժյուլիան... – Տիգրան

Եսայան (1874-1921) – գեղանկարիչ: Մովորել է Պոլսի Գեղարվեստի ուսումնարանում: 1895 թվականին ընդունվել է Փարիզի Ժյուլիեն ակադեմիան:

Այսպեղ բացարթեցին, որ օրական երկու սեանս կարելի է աշխարել... – Սեանս – ռուս. сеанс բառից: Այստեղ՝ նկարաժամ:

Բացի Ժյուլիանի ակադեմիայից, երեկոները ես զնում էի Քալարոսի ակադեմիան... – Քալարոսի ակադեմիա – նկատի ունի Կոլարոսսի ակադեմիան (Academie Colarossi) – գեղարվեստի մասնավոր դպրոց Փարիզում: Հիմնադրել է իտալացի քանդակագործ Ֆիլիպպո Կոլարոսսին 1870 թվականին:

Հյուրասիրելուց հետո միայն ուսանողական կոլեկտիվի իրական անդամ էր դառնում: – Կոլեկտիվ – ռուս. коллектив բառից: Այստեղ՝ ընկերություն, միություն:

Մեր պրոֆեսորները՝ Ժան-Պոլ Լորանս և Բենեժամեն Կոնստանտին... – Ժան-Պոլ Լորանս (1838-1921) – ֆրանսիացի գեղանկարիչ, քանդակագործ, գրաֆիկ և նկարազարդող:

Բենեժամեն Կոնստանտին (1845-1902) – ֆրանսիացի նկարիչ, նկարել է պատմական թեմաներով կտավներ, տեղային տեսարաններ (հարեն և այլն), դիմանկարներ և այլն: 1888 թվականից դասավանդել է Ժյուլիեն ակադեմիայում:

Մի պատանի նկարիչ

Էջ 208.- *Կային Խաղաղականի Փիլիպյան կղզիներից...* – Փիլիպյան կղզիներ – Ֆիլիպինյան արշիպելագի կղզիները:

Էջ 209.- *Այդ անգլիական թագուհու, պապերի և աֆրիկյան շարիֆաների նկարիչը, այդ մեծ քննադատ և օրատորը...* – Շարիֆա – պարսկ. «շարիֆ» բառից: Շարիֆն – ազնվագարն, շարիֆա – ազնվագարմուտի:

Օրատոր – ռուս. оратор բառից: Հնետոր, ճարտասան:

Իմ գծագրության առաջին պրին

Էջ 210.- *...գծագրության առաջին պրին:* – Գծագրություն բառը այստեղ գործածված է «նկարչություն, նկարել» իմաստով:

Պրի – ֆր. pris բառից: Մրցանակ:

...շար ցածր տաբուրեղայի վրա նստած նկարում էի: Մոդելը կանգնած էր... – Տաբուրետկա – ռուս. табуретка բառից: Առանց թիկնակի փայտե հասարակ աթոռակ:

Մոդել – ռուս. модель բառից: Այստեղ՝ բնորդ:

...այսպիսով խիստ ռակտիկ դիրքի մեջ վարից վեր էի նայում: – Ռակտիկ – ֆր. raccourcir, «կարճացնել» բառից: Այստեղ՝ ռուսերեն ракурс բառից: Անսովոր հեռանկար, երբ առարկան դիտում են այնպիսի անկյունով, որ նրա ձևաչափերը խախտվում-կրճատվում են:

Ստեղծագործելու տարրեր ըմբռնումներ

Էջ 208. - ...առանց այդ մրքերը փորձելով մարտելու սրացական ու պարբապարի ֆորմուլաներով են առաջնորդվում: – Ֆորմուլա – այստեղ՝ ռուս. формула բառից: Բանաձև, դրույթ:

...և նա նախապես սրանդարտ միօրինականացման չի կարող ենթարկվել: – Ստանդարտ – անգլ. standard: Այստեղ՝ ռուս. стандарт բառից: Օրինակելի մոդել:

...պիրի փա երկի հիմնական բնույթը, նրա խարակերտը, նրա հարարերական մասերի անսամբլը... – Խարակետեր – ռուս. характер բառից: Բնավորություն, այստեղ՝ բնութագրություն:

Անսամբլ – ռուս. ансамбль, «համույթ» բառից: Այստեղ՝ համադրություն:

Էջ 213.- ...չափի և ներդաշնակության զգացումը պակաս է, նա դիտման է առաջացնում իր սրեղծագործության մեջ այնպես, ինչպես օրկեստրի մեջ անհասկացողության նվազողը: – Դիտմանս – ռուս. диссонанс բառից: Աններդաշնակություն:

Օրկեստր – ռուս. оркестр բառից: Նվագախումբ:

Էջ 214.- Նախորդ օրը նա արդեն կոնյուրը գծած էր, ուրեմն կենար այդ պալիտրի վրայի նախապես պարբապարված մրացածին ներկերով ծածկել մարմինը: – Կոնյուր – ռուս. контур բառից: Ուրվագիծ, եզրագիծ:

Պալիտր – ռուս. палитра բառից: Ներկապնակ:

Էջ 215.- ...թե արվեստի գործի մեջ մի կաթիլ հուզականությունը անհամեմատ ավելի արժի, քան մի շարք սխտեմներ և մանրներ միասին առած: – Սխտեմ – ռուս. система բառից: Համակարգ:

Մաներ – ռուս. маневр բառից: Չորաշարժ, զորախաղ:

Իմ փարիզյան կենցաղը

Էջ 216.- Նույնպես գեղարվեստից ակադեմիայի պարմության, անարմոնիայի և կերպարվեստի դասերին... – Անատոմիա – ռուս. анатомия բառից: Կազմախոսություն:

Չմեռային կիրակի օրերը մեկ-մեկ Կոնսեր-Ամուրոն էի գնում... – Կոնսեր-Ամուրոն – Փարիզում գործող նվագախումբ, որ նվագել է միայն դասական երաժշտություն: Գործել է մինչև 1970-ական թվականները:

Պարտեզի կողմի դռնից դուրս գալով անցնում էի Տյուլիերի պարտեզը... – Տյուլիերը, նույնն է, ինչ Տյուլիերի – ֆր. Tuileries: Տյուլիերն պալատ էր Փարիզում (1564-1670) Լուվրի հարևանությամբ, ֆրանսիական արքաների նստավայրերից մեկը: Ավերվել է փարիզյան կոմունայի ժամանակ: Պալատի տեղում այժմ ընդարձակ այգի է՝ նույն անունով:

Place de Concorde, Շանգելիզե և Հաղթական կամարը

Էջ 217.- ...մի բարեչև պարվանդանի վրա ցցված էր դեպի երկիրը Եզիպոսի լուկտրյան հիանալի օբելիսկը... – Օբելիսկ – ռուս. обелиск բառից: Հուշասյուն, հուշակոթող:

...իր փեսայի մեջ ամենից մոնումենտալը, որ ես փեսել եմ, որի պարտեզի գարդն էին հանճարեղ Ռյուսի քանդակած հեղափոխական գրուպաները: – Մոնումենտալ – ռուս. монументальный բառից: Այստեղ՝ հոյակապ, հոյաշեն, փառահեղ, վիթխարի, մեծղի:

Ռյուս, նույնն է, ինչ Ռյուդ – Ֆրանսուա Ռյուդ (Rude, 1784-1855) – ֆրանսիացի քանդակագործ: Հաղթական կամարի վրա հեղափոխական ոգեշնչվածությամբ քանդակել է իր «Մարտելոգը»:

Գրուպա – այստեղ՝ ռուս. группа բառից: Խումբ:

Լյուքսեմբուրգի պարտեզը

Էջ 218.- Ուսանողներն այնպեղ էին իրար հանդիպում, այնպեղ էին սովորում ու կարդում և իրենց ֆլիրտն անում: – Ֆլիրտ – անգլ. flirt: Այստեղ՝ ռուս. флирт բառից: Սիրախաղ:

Լյուքսեմբուրգի պալատի արևմտյան կողքին էր Դելակրուայի արչանը: – Էժեն Դելակրուա (1798-1863) – ֆրանսիացի գեղանկարիչ և գրաֆիկ, գեղանկարչության մեջ ֆրանսիական ռոմանտիզմի ամենանշանավոր դեմքը:

Լյուքսեմբուրգի մյուզեոն Փարիզի ժողովրդի համար շար սիրելի էր իր հարուստ ու մոդեռն բովանդակությամբ... – Մոդեռն – ֆր. moderne բառից: Արդիական, արդի, ժամանակակից:

Պանթեոն (Pantheon) (Գամբարան հոյակապ մարդկանց)

Էջ 219.- Դռան աջ կողքին դրված է Ռոդենի հոյակապ «Մրաժո-

դը» արչանը... – Օգյուստ Ռոդեն (1840-1917) – ֆրանսիացի քանդակագործ և գրաֆիկ: «Մաածողը» (1888, բրոնզ) Ռոդենի լավագույն գործերից մեկն է:

Այսրեղ է, որ ֆրեսկոների և ճարտարապետության ներդաշնակությունը հասկանալի է դառնում... – Ֆրեսկո – իտալ. fresco, այստեղ՝ ռուս. фреска բառից: Որմնանկար:

Այսրեղ է, որ այցելում, տեսնելով 19-րդ դարի մեծագույն դեկորատորի՝ Պյուիս դը Շավանի գործերը... – Դեկորատոր – ռուս. декоратор բառից: Չնավորող:

Պիեռ Պյուի դը Շավան (1824-1898) – ֆրանսիացի նշանավոր գեղանկարիչ:

Պանթոնի ֆրեսկոները կարարած են մի կարգ շարք խոշոր նկարիչներ, ինչպես Շավան, Հյուսթեր, Տերայ, Ժան-Պոլ Լորանս, Բոնա և ուրիշներ: – Պյուի դը Շավան – տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

Հյուսթեր – այս անունով հայտնի նկարիչները մի քանիսն են: Խոսքը կամ Անդր Հյուսթերի (1879-?), կամ Ժակ Հյուսթերի (1842-1934) և կամ Ժան Հյուսթերի (1813-1881) մասին է: Ավելի հավանական է վերջին Հյուսթերը:

Տետար – Պիեռ Հենրի Թետոր Տետար (1828-1908) – գերմանացի գեղանկարիչ, ջրանկարի վարպետ, օրինատալիստ:

Ժան-Պոլ Լորանս – տե՛ս 206-րդ էջի ծանոթագրությունը:

Լեոն Բոննա (1834-1922) – ֆրանսիացի նկարիչ, ջրաներկի և գծանկարի վարպետ: Նկարել է պատմական թեմաներով կտավներ, դիմանկարներ և այլն:

Սորբոնի ամփիտատր

Էջ 221.- Այդ բոլորն պարուրված են գորշ դեղնավուն մթնոլորտով և գերագույն գեղեցկությանը պեյզաժով: – Պեյզաժ – ռուս. пейзаж բառից: Բնանկար:

Թատրոններ

Էջ 222.- ...դրսի պատերի վրա հանձարեղ Կարպոյի գորելիեֆները հիացք էին պարմատում: –

Ժան Բատիստ Կարպո (1827-1875) – ֆրանսիացի քանդակագործ և գեղանկարիչ: Իր գործերից առավել հայտնի է «Պարը» (1869), որ նա ստեղծել է Փարիզի «Գրանդ-Օպերայի» ճակտոնի համար (բնօրինակը պահվում է դ՛Օրսե քանդարանում):

Գորելիեֆ – ռուս. горельеф բառից: Բարձրաքանդակ:

Կոմեդի Ֆրանսեզը, որի հետ մասաները ավելի կապված էին և նրա պլաֆոնը նկարած էր իմ ուսուցիչը՝ Բենժամեն Կոմորոն: Օդեոնը, որի մեջ բացի ներկայացումներից, տեղի էին ունենում մեծ մասշտաբի կոնցերտներ... – Կոմեդի Ֆրանսեզ (Comedie Francaise) – ֆրանսիական դրամատիկական թատրոն, հիմնադրել է Լյուդովիկոս 14-րդը 1680 թվականին: Կոչել են նաև «Մոլիերի տուն»: Այսօր պաշտոնական անվանումն է «Տետար Ֆրանսե»:

Մասսա – այստեղ՝ ռուս. масса բառից: Չանգված:

Պլաֆոն – ֆր. plafond: Այստեղ՝ ռուսերեն плафон բառից: Նկարազարդված, գեղազարդված առաստաղ կամ առաստաղի մի մասը:

Օդեոն – երաժշտական ներկայացումների հայտնի թատրոն Փարիզում: Հիմնադրվել է 1797 թվականին:

Մասշտաբ – ռուս. масштаб բառից: Այստեղ՝ չափ:

Կոնցերտ – ռուս. концерт բառից: Համերգ:

Իմ առաջին ցուցադրությունը ֆրանսիական նկարիչների սալոնում

Էջ 223.- 1901-ին էր, որ իմ առաջին նկարն ընդունվեց ֆրանսիական նկարիչների պաշտոնական սալոնում: Այդ նկարը ներկայացնում էր մի պրոդոն քանվորուհի... – Սալոն – ֆր. salon: Այստեղ՝ ռուս. салон բառից: Այստեղ՝ սրահ, որտեղ ցուցադրվում կամ վաճառվում են գեղարվեստական գործեր:

Պրոդոն – Բրետոն տեղանունից:

Այդ կոնկուրսի առթիվ... – Կոնկուրս – այստեղ՝ ռուս. конкурс բառից: Մրցույթ:

Սկսեցի հին կրասիկներին, վերածնության դարի կրասիկներին ու մոդեռն պրոդոնսիվ վարպետներին ուսումնասիրել: – Կրասիկ – ռուս. классик բառից: Դասական:

Պրոդոնսիվ – ռուս. прогрессивный բառից: Առաջադեմ:

Միևնույն ժամանակ կոպիներ էի անում, ուսումնասիրելու համար մեծագույն վարպետներին, ինչպես Ռեմբրանդ, Վերոնեզ, Ռուբենս, Բրուտոն և այլն: – Ռեմբրանդ Հարմենս վան Ռեյն (1606-1669) – հոլանդացի մեծ գեղանկարիչ, օֆորտիստ և գծանկարիչ:

Պաոլո Վերոնեզե (1528-1588) – իտալացի նկարիչ:

Պիտեր Պաոլ Ռուբենս (1577-1640) – ֆլամանդացի գեղանկարիչ, ձևավորող և դիվանագետ:

Բրուտոն – Պիեռ-Պոլ Պրուտոն (1758-1823) – ֆրանսիացի գեղանկարիչ, որին կոչել են «ֆրանսիական Կարավաջո»:

Քրիստափոր Միքայելյան

Էջ 224.- ... դու պեպր է գնաս «Պրո-Արմենիա»-ի խմբագրարուն... – «Պրո-Արմենիա» («Pro-Armenia») – ֆրանսերեն երկշաբաթաթերթ, հրատարակվել է 1900-1914 թվականների միջև (խմբագիր՝ Պիեռ Քիյար):

1904-ին Ժուլիան Պրին և արևելագիտաց ցուցահանդեսը

Էջ 225.- ... այդ յոթ ակադեմիկոսների միացյալ կոնկուրսին առաջին պրին ես սրացա: – Կոնկուրս – տե՛ս 223-րդ էջի ծանոթագրությունը: Պրին – տե՛ս 210-րդ էջի ծանոթագրությունը:

... որ Կոնկուրսը է այն ժամանակվա Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր հայ գրականության» գրքերից մեկի մեջ: – Պարբերականը կոչվել է «Բանբեր գրականության եւ արուեստի. Հանդես վեցամսեայ»: Հրատարակվել է Պետերբուրգում, Նիկողայոս Ադոնցի (1871-1942) խմբագրությամբ:

Փանոս Թերլեմեզյանի նկարը, որ ինքը կոչել է «Էտյուդ», տպագրվել է «Բանբեր»-ի առաջին գրքում, 1903 թվականին, եվրոպացի, ռուս և հայ նշանավոր նկարիչների գործերի շարքում:

Նկարիչ Գրիգորյանը ցուցադրած էր մի նատյուրմորտ: – Հավանական է՝ գեղանկարիչ Արմենակ Գրիգորյանն է: 20-րդ դարի սկզբին մասնակցել է Փարիզի սալոններին: Ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն:

Վերադարձ ի Կովկաս

Էջ 223.- Կովկասի փոխարքա իշխան Գալիցիներ իր կոպիտ և փմարդի հալածանքներով մեր այլասերված ազգայիններին գիրակից հայեր դառնալուն քավական նպաստեց: – Գրիգորի Գոլիցին (1838-1907) – Կովկասի փոխարքա՝ 1896-1905 թվականներին: Հայտնի էր փոքր ժողովուրդներին ձուլելու, ռուսացնելու իր բիրտ մեթոդներով և խիստ հայաստանաբաստարկությամբ:

Թուլացած կուսակցությունների գործնալը

Էջ 227.- Իշխան Գալիցին թյուրք կալվածատերերը և վրաց ֆեոդալ կնյազները զրգոած էր հայերի դեմ... – Կնյազ – ռուս. князь, «իշխան»:

Գալիցիների տեռորը

Էջ 228.- Նա, ապահովելով կառավարության աջակցությունը, Բարվի թյուրք աղալարներին դրոշմ էր հարչակվելու, կոպորելու և քալանելու հայերին: – Աղալար – թուրք. «աղա»՝ «մեծահարուստ» բառից: Մեծահարուստներ:

Նույն թվին Գալիցիներ հանված էր պաշտոնից: – Փոխարքա Գոլիցինը պաշտոնանկ է եղել ոչ թե 1904, այլ 1905 թվականին:

Հայ-քաթարական կոտորածներ

Էջ 229.- 1905-ին էր, որ Կովկաս ուրիշ փոխարքա ունեցավ: Դա կոմս Վարանցով-Դաշկովն էր... – Իլյարինոն Վորոնցով-Դաշկով (1837-1916) – ռուսական պետական գործիչ, կոմս: 1905-1915 թվականներին եղել է Կովկասի փոխարքան:

Էջմիածնում

Էջ 230.- Այնպեղ վանքի համար երկու նկար արեցի: – Թերլեմեզյանը Էջմիածնում մնացել է երեք ամիս և Մայր տաճարի համար նկարել է երկու նկար՝ «Մարիամ Աստվածածին» և «Ամարատ հղիություն» (Մուրիլլոյի մի նկարի մնացություն-ընդօրինակություն):

... և առանց ունե շրջանակի և պաղրամկանների... – Պաղրամկա – ռուս. подрамник բառից: Եմբաշրջանակ, որի վրա ձգում են կտավը:

Սանահինում

Էջ 231.- ... հեռվից իրոնիկ կերպով ասի: – Իրոնիկ – ռուս. ирония, «հեզմանք» բառից: Հեզմական:

Ես իմ «Սանահինի գավիթ» նկարս այդպես էլ նկարել եմ: – Խոսքը «Սանահինի վանքի գավիթը» (1904, կտավ, յուղաներկ, 99x81) նկարի մասին է, որը 1905 թվականին Մյունխենի միջազգային ցուցահանդեսում արժանացել է ոսկե մեդալի: 1930 թվականին նկարիչը այդ կտավը նվիրել է Հայաստանի պետական պատկերասրահին:

Էջ 232.- Մուրքի հյուսիսային պարին կից կա մի կորրիդորի մնանող րեղ, որի մի կողմի վրա քարերից սաքուներ կան պարաստված... – Սաքուն – պատի երկարությամբ թախտ կամ քարից պատրաստված բարձրություն, որի վրա մտնում կամ քնում են:

Սանահինում Չավարյանին հանդիպելս

Էջ 234.- Նրանք պարմեցին, որ Ալլավերդու գավոդում էին... – Չավոդ – ռուս. завод բառից: Գործարան:

«Շուրով երկու ջորիի բեռներով շորշաղ պիտի ուղարկենք, որ վառող պատրաստեն...» – Շորշաղ – մի տեսակ հող, որ օգտագործում են վառող պատրաստելու համար:

Սանահինում կատարած աշխատանքները

Էջ 236.- *Գյուղական տնտեսներ, պորտրետներ, ընդհանուր տեսարաններ, նարարապետական օբյեկտներ: Գորգագործներ, հայրնի գիտնական Տուրեորդիի դամբարան-խաչքարը...* – Չաքարիա Սպասալարի դամբարանի վրա եղած մատուռը: –

Պորտրե – ֆր. portrait բառից: Դիմանկար:

Օբյեկտ – ռուս. объект բառից: Այստեղ՝ շինվածք, կառուցվածք: Գրիգոր Տուտեորդի (ծն. և մահ. թվականները անհայտ են) – 12-րդ դարի Հայաստանի «Հյուսիսային կողմանց» նշանավոր վարդապետներից, Հաղպատի եպիսկոպոս, Սանահինի վանքի վանահայր:

Չաքարիա Սպասալար – 11-14-րդ դարերում Հայաստանի իշխանական նշանավոր տոհմերից մեկի նախահայրերից: Նրա անունով տոհմը հայ մատենագրության մեջ անվանվում է Չաքարյան: 1170-ական թվականներին Չաքարիան և իր որդի Սարգիս Մեծը դառնում են Լոռիի տերերի՝ Օրբելյան իշխանների վասալ հողատերերը:

Սպասալար – գինված ուժերի գլխավոր հրամանատարի անվանումը միջմադարյան Հայաստանում (պահլավերենից՝ spah-գորք և salar-գլուխ): 1904 թվականին Փանոս Թերլեմեզյանը նկարել է «Չաքարիա Սպասալարի դամբարանը» (կտավ, յուղաներկ, 40x61) կտավը, որ ներկայումս գտնվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

Նկարել են նույնպես գրադարան կոչված շենքի շար գեղեցիկ օրիգինալ սյուներ... – Օրիգինալ – ռուս. оригинальный բառից: Ինքնատիպ:

Այդ նկարներից երեքը՝ «Սանահինի գավիթը», «Գառնարածը» և «Ընդհանուր տեսարանը» գրնվում են մեր Պետական քանգարանում: – «Սանահինի գավիթը» – տե՛ս 231-րդ էջի ծանոթագրությունը: «Գառնարածը» – նկատի ունի «Լոռեցի հովիվը» (1905, կտավ, յուղաներկ, 93x70) կտավը, որը նկարիչը 1934 թվականին մվիրել է Հայաստանի պետական պատկերասրահին:

«Ընդհանուր տեսարան» – հավանաբար նկատի ունի «Սանահին գյուղը» (1904, կտավ, յուղաներկ, 54x80) նկարը, որ նույնպես գտնվում է Հայաստանի ազգային պատկերասրահում:

1905-ի Թիֆլիսի տեղական ցուցահանդեսը

Էջ 237.- *Հիշյալ ցուցահանդեսին մասնակցում էին վրացիներից՝ Գարսև, հայերից՝ Թադևոսյան, Հակոբյան, Փիրադյան և քանդակագործ Միքայելյան:* – Գարսև – նկատի ունի վրացի դիմանկարիչ Գեորգի Գարաշվիլուն (1862-1936):

Եղիշե Թադևոսյան (1870-1936) – գեղանկարիչ:

Հմայակ Հակոբյան (1871-1939) – գեղանկարիչ և գրաֆիկ:

Վասիլի Փիրադով (Փիրադյան, 1865-1918) – գեղանկարիչ:

Միքայել Միքայելյան (1879-1943) – քանդակագործ:

Ռուսներից՝ Ֆոգել, Չուներ, Ըներլինգ, Կրինսկի, Սկրիֆասովսկի և ուրիշներ... – Բորիս Ֆոգել (1872-1961) – գեղանկարիչ:

Ռիխարդ-Կարլ Չոմմեր (1866-1939) – գեղանկարիչ:

Օսկար Ըներլինգ (1863-1938) – գեղանկարիչ:

Կրինսկի, նույնն է, ինչ Գրինսկի – Հենրիկ Գրինսկի (1869-1938) – գեղանկարիչ:

Նիկոլայ Սկրիֆասովսկի (1870-1935) – գեղանկարիչ:

Գարսևը մեծ կալիբրի դասական նկարիչ էր... – Կալիբր – ռուս. калибр, «տրամաչափ» բառից: Այստեղ՝ չափ, տեսակ:

Եղիշե Թադևոսյանը քրիստոսյալ պես վճիռ հոգիով... – Քրիստալ – ռուս. кристалл բառից: Բյուրեղ:

...որ զարգացած էր հայրնի ռուս նկարիչ Պոլենովի ընկերակցությամբ կարարած ճանփորդություններով... – Վասիլի Պոլենով (1844-1937) – ռուս գեղանկարիչ:

Էջ 238.- *Ֆոգել գերմանական ծագումով, տակտով ու տեխնիկայով զինված և կարողացած մի նկարիչ էր:* – Տակտ – ռուս. такт բառից: Նրբազգացություն, պատշաճության զգացում, նաև՝ կշռույթ (երաժշտական):

Տեխնիկա – ռուս. техника բառից: Այստեղ՝ հմտություն, ունակություն, վարպետություն:

Կովկասյան գեղեցիկ արվեստները քաջալերող միությունը

Էջ 239.- *Кавказское общество поощрения изящных искусств* – Ռուս. Կովկասյան Գեղեցիկ արվեստները քաջալերող միություն:

Թիֆլիսի բորսան

Էջ 242.- *Թիֆլիսի բորսան:* – Բորսա – այստեղ՝ ռուս. борса բառից: Սակարան:

Եգիպտոսում

Էջ 243.- *Այնրեղ առաջին գեղեցիկ գործը, որ ես տեսա, այդ Նուբար փաշայի հոյակապ արչանն էր...* – Նուբար փաշա (Նուբար Նուբարյան, 1825-1899) – պետական, քաղաքական գործիչ, ազգային բարերար: Կրթությունը ստացել է Փարիզում (1844-1849): Վերադառնալով Եգիպտոս՝ 1850 թվականից անցել է պետական ծառայության: Վարել է բարձր պաշտոններ՝ 1866-74, 1875-76, 1878-79 և 1881-88-ին եղել է արտաքին գործոց նախարար, 1878-79, 1884-89 և 1894-95 թվականներին՝ վարչապետ: 1904 թվականին Ալեքսանդրիա քաղաքում կանգնեցվել է Նուբար փաշայի արձանը:

Նրա շնորհիվ սրանչեյի կլիման... – Կլիմա – ռուս. клима բառից: Եղանակ:

Էջ 244.- *...որ գրնվում է Գիզայի՝ 136 մետր բարձրությամբ պիրամիդների կողքին:* – Պիրամիդ – ռուս. пирамида բառից: Բուրգ:

Էջ 246.- *Այաշում նահապետական դոկտոր Տաղավարյանը մի գիրք ունի Եգիպտոսի հայ գաղութի մասին...* – Նազարեթ Տաղավարյան (Չատրըճյան, 1862-1915) – գյուղատնտես, բնագետ, բժիշկ, հասարակական գործիչ, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիրներից:

Առաջինը հին եգիպտական արվեստի մոխր և ունիկում մյուզեոն է: – Ունիկում – ռուս. уникум բառից: Եզակի, անկրկնելի, միակ, բացառիկ:

Էջ 247. *...արարական շրջանում կառուցված են խալիֆների դամբարաններ՝ հին մեջիթների նման...* – Մեջիթ – արաբ.՝ մզկիթ:

Կահիրեից դեպի հյուսիս է գրնվում Մանուրա քաղաքը, ուր բանվորական է մեր Լևոն Զ Ռուսինյան վերջին թագավորը: – Լևոն Զ Լուսինյան (1340-1399) – Կիլիկիայի վերջին հայոց թագավորը: Թագավորել է 1374-1375 թվականներին: 1375 թվականին գերեվարվել է Եգիպտոս, ուր մնացել է մինչև 1382 թվականը:

...հանդիպեցի Ալժիր՝ տեսնելու համար այն ձերմակ քաղաքը, որ Ֆրանսիայի ամենամոտ աֆրիկյան գաղթավայրն է: – Նկատի ունի Ալժիրի հյուսիս-արևմուտքում գտնվող Օրան քաղաքը:

Էջ 248.- *...որ բյուրքիացի հեղափոխականները միացյալ կոնֆերանս պիտի ունենան...* – Կոնֆերանս – ֆր. conference բառից: Հավաք, ժողով:

Թյուրքիայի հեղափոխականների ժողովը Փարիզում

Էջ 249.- *...որ 1907-ի վերջերը ժյոն բյուրքերի «Միություն և հառաջադիմություն» անունով կուսակցությունը...* – Ժյոն – ֆր. jeune բառից: Երիտասարդ:

Էջ 250.- *Երկրորդ ժյոն բյուրքերը շար էին կառչած 1876-ի միլիտարյան հնացած սահմանադրության...* – 1876 թվականի դեկտեմբերի 23-ին Թյուրքիայում հռչակվում է Սահմանադրություն, որի նախանձախնդիրը եղել է Միդհատ փաշան: Երկու տարի անց՝ 1878 թվականի փետրվարի 13-ին Աբդուլ Համիդը չեղյալ է դարձնում այդ Սահմանադրությունը:

«Միություն և հառաջադիմություն» կուսակցության լիդեր... – Լիդեր – այստեղ՝ ռուս. лидер բառից: Առաջնորդ, ղեկավար:

...և մի անգամ էլ ինքերկու արած եմ Թիֆլիսում... – Ինտերվյու – այստեղ՝ ռուս. интервью բառից: Հարցազրույց:

Թյուրքիայի սահմանադրությունը

Էջ 251.- *...որովհետև դա առաջին էրապն էր սոցիալական հեղափոխության հասնելու համար:* – Էտապ – ռուս. этап բառից: Փուլ, ժամանակամիջոց:

Թյուրքիայի անարյուն հեղափոխությունը

Էջ 252.- *Ժյոն բյուրքերի դեկզն էր...* – Ժյոն բյուրք – ֆր. jeune turc արտահայտությունից: Այստեղ՝ երիտթուրք: Նկատի ունի երիտթուրքերի կուսակցությունը:

Դեկզ – ռուս. девиз բառից: Կարգախոս:

Դաշնակցության և ժյոն բյուրքերի բարեկամությունը

Էջ 254.- *«Դրոշակ»-ի խմբագրությունից Պոլիս էին ուղարկվում...* – «Դրոշակ» – ՀԶԴ պաշտոնաթերթը: Առաջին երկու համարները լույս են տեսել 1891-ի մայիսին և սեպտեմբերին Թիֆլիսում, երրորդը՝ 1892-ին Ռուսինիայում: Այնուհետև խմբագրությունը տեղափոխվել է Ժնև, որտեղ «Դրոշակը» լույս է տեսել մինչև 1914 թվականը:

Պարոն Մալումյանը (Ակնունի) Կ. Պոլսի ազգային ժողովի նիստում՝ ողջունելով նորընտրված Իզմիրյան կաթողիկոսին... – Է. Ակնունի (Խաչատուր Մալումյան) – տե՛ս 171-րդ էջի ծանոթագրությունը:

Մատթոս Բ Կոստանդնուպոլսեցի (Իզմիրյան, 1845-1910) – Ամենայն հայոց կաթողիկոս 1908-1910 թվականներին: 1894-1896 թվականներին՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը:

Համրի՛ Սահմանադրությունը հետ խելու փորձը և Ադանայի կոտորածը

Էջ 255.- *Այդ առթիվ «Բիզանդիոն»-ի կարող խմբագիր Քեչյանը գրեց...* – Բյուզանդ Քեչյան (1859-1927) – լրագրող, պատմաբան, խմբագիր: Հրատարակել է «Արևելք» (1844-1894) և «Բիզանդիոն» (1896-1918) օրաթերթերը:

Էջ 257.- *Ես աշխատել եմ, որ իմ սուբյեկտիվ միտածումները շարքահայրվեն...* – Սուբյեկտիվ – ռուս. субъектив բառից: Այստեղ անձնական, կրավորական, անհատական:

Կ. Պոլսում

Էջ 258.- *Ման էինք գալիս Ոսկեղջյուրի հիանալի ասիերը, ուր Էյուսի գեղեցիկ գերեզմանոցից հիանալի տեսարան էր բացվում:* – Ոսկեղջյուր – ծովախորշ Բոսֆորի նեղուցի հարավային մուտքի կողմից, եվրոպական ասիերի մոտ:

Էյուսպ, նույնն է, ինչ Էյուս – Կ. Պոլսի արևմտյան թաղամասերից մեկը, որ կրում է իբր թե արաբների կողմից Կոստանդնուպոլսի առաջին պաշարման ժամանակ (668 թ.) զոհված Էյուսի՝ Մուհամմեդի դրոշակակրի անունը:

Էջ 259. - *...Քրիստոսի կյանքը ներկայացնող մոզայիկով...* – Մոզայիկ – ֆր. mozaïque: Այստեղ՝ ռուսերեն мозаика բառից: Խճանկար:

...որ Գահիրե Չամիի այդ մոզայիկները լավագույն կերպով հրատարակեց... – Կ. Պոլսի ամենահայտնի մզկիթներից մեկը:

Հաջորդ օրերը մենք Բոսֆորի գեղեցկությունները դիտելով էինք գրադված, հետո հոյակապ Իշխանաց կղզիները... – Մարմարա ծովում կղզիների խումբը կոչվում է Իշխանաց կղզիներ: Չորս կղզի է՝ Գնալը, Բուրկազ, Հեյբեյի եւ Բոյուք Ադա, հունարենն հին անվանումներով՝ Բրոդի, Անտիկոնի, Հալքի և Բրինքիբո:

Պոլսի մյուզեոնները

Էջ 260.- *Գեղարվեստական մյուզեոն իր արշանների, դամբարանների, բարիեյեֆների նմուշներով...* – Բարիեյեֆ, նույնն է, ինչ բարեյեյեֆ – այստեղ՝ ռուս. барельеф բառից: Բարձրաքանդակ:

1887 թվին Սիրիայի Լիբանան գավառում... – 1887 թվականին Լիբանանը, ինչպես նաև Սիրիան, գտնվում էր Օսմանյան կայսրության գերիշխանության ներքո:

Ուրեմն այդ աննման գործը սինթեզն է երեք արվեստների: – Սինթեզ – ռուս. синтез բառից: Համադրություն, միասնություն:

Էջ 262. - *Փորրիկ տվյալներով Լիսիպին և Լեոշարիսին են վերագրում...* – Լիսիպաոս – հույն քանդակագործ Ք. ա. 4-րդ դարի երկրորդ կեսին, Ալեքսանդր Մակեդոնացու պալատական նկարիչը:

Լեոշարիս, նույնն է, ինչ Լեոքարիս – հույն քանդակագործ Ք. ա. 4-րդ դարում: Ուշ դասական արվեստի ներկայացուցիչ, «Բելվեդերյան Ապոլլոն»-ի հեղինակը:

Երվանդ Օտյան

Էջ 262.- *...այնպեղ ծանոթացա Երվանդ Օտյանի և Արամ Անգրոնյանի հետ...* – Երվանդ Օտյան (1869-1926) – գրող, վիպասան, խմբագիր:

Արամ Անտոնյան (1881-1952) – գրող, հրապարակախոս, խմբագիր:

Երբ ես ծանոթացա Օտյանին, նա ի միջի այլոց գրադված էր Ռոնանի գրած... – Ռոնան – Ժոզեֆ Էռնստ Ռեման (1823-1892) – ֆրանսիացի գրող, կրոնի պատմաբան, բանասեր-արևելագետ:

Հայ կաթոլիկ մտավորականությունը

Էջ 263.- *...որ մեծ էրողիցիա ունենր...* – Էրողիցիա – այստեղ՝ ռուսերեն эрудиция բառից: Խոր գիտելիքներ, լայն իմացություն:

Ես ծանոթացա Փորթուզալ փաշայի արիստոկրատ ընտանիքին... – Միքայել փաշա Փորթուզալյան (1842-1897) – հայ հասարակական գործիչ, բանասեր-հայագետ:

...գեղեցկուհի և ամիրայական շառավիղ մաղամ Տյուզին, որը Փարիզի համալսարանում երկու ֆակուլտի էր ավարտած: – Տյուզյան ընտանիքը 1800-ական թվականներին եղել է Օսմանյան կայսրության ամենապատկառելի ընտանիքներից մեկը: Ընտանիքի ավագը՝ Հովհաննես ամիրա Տյուզյանը, եղել է կայսերական փողերանոցի պետը և արքունի ոսկերչապետը:

Ֆակուլտի – ֆր. faculte բառից: Այստեղ՝ բաժանմունք:

Թյուրք նկարիչները և Գեղարվեստից դպրոցի ուսուցչությունը

Էջ 264.- *...և մի հայ քանդակագործ՝ Ոսկան անունով:* – Երվանդ Ոսկան (1855-1914) – քանդակագործ: 1872 թվականին ավարտել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, սովորել է Հռոմի Կայսերական ակադեմիայում, կատարելագործվել է Փարիզում: 1881 թվականին վերադարձել է Պոլիս և հաստատվել է Պոլսում: Եղել է Պոլսի Գեղարվեստի ուսումնարանի տնօրենը և քանդակագործու-

բյան պրոֆեսոր նույն ուսումնարանում: Ունեցել է բուռն ստեղծագործական կյանք: Վերականգնել է Ալեքսանդր Մակեդոնացու սարկոֆագը, որի մասին գրում է Թերլենեզյանը:

Կոմիտասի հետ

Էջ 265.- *Այդ ժամանակները ես փոխադրվեցի Բանկալքի...* – Պոլսի հին կենտրոնի՝ Բերայի մի թաղամասը:

...հեյրո վեարիբյուլ... – Վեստիբյուլ – ֆր. vestibule: Այստեղ՝ ռուսերեն вестибюль բառից: Նախասենյակ:

Էջ 268.- *Իրալացի համբավավոր պիանիստներ կային...* – Պիանիստ – ֆր. pianiste: Այստեղ՝ ռուսերեն пианист բառից: Դաշնակահար:

Կոմիտասի ծագումը, առած ուսումը և բնավորությունը

Էջ 269.- *...որ մշակելով խմորի էին վերածում և նրանից վազեր ու ամաններ շինում (ֆայանս)...* – Վազ – ռուսերեն ваза բառից: Սկահակ:

Պոլսո պարվիրակը, ըստ Գևորգ կաթողիկոսի հրամանին... – Գևորգ Դ Կոնստանդնուպոլսեցի (Քերեստեճյան, 1813-1882) – Ամենայն հայոց կաթողիկոս 1866-1882 թվականներին:

Էջ 271.- *...և ինքն իրեն ակոմպանրման անելով՝ երգեց:* – Ակոմպանրման – ֆր. accompagnement բառից: Նվագակցում, նվագակցելը:

...չեռը խիեց սեղանին և սասց. «Sapristi»... – Sapristi – ֆր. գրող տանի:

...վեր կացանք երկուքս միասին «չալխոնո» պարեցինք: – Չալխոնոն – Վասպուրականի ուրախ պար:

...Հայաստանի ժողովրդական պարերի վարիչ Սրբուհի Լիսիցյանը... – Սրբուհի Լիսիցյան (1893-1979) – ազգագրագետ, արվեստաբան: 1923 թվականից զբաղվել է հայկական պարերի ուսումնասիրությամբ, 1932-ից՝ պարային շարժումը գրանցելու համակարգի ստեղծմամբ:

Կոմիտասի կատարած գործի ազդեցությունն ու հակազդեցությունը

Էջ 272.- *...որ իրենց արհամարհած խոռ և խըմպլ գավառացի հայր...* – Խոռ, նույնն է, ինչ հոռ – կոպիտ, բռի, անկիրթ:

Խըմպլ, խըմպլը – չնչին, չքոտի, աննշան, տգետ (մարդ):

...սրեղծում էր մոնումենտալ երաժշտական գեղեցկություններ: – Մոնումենտալ – լատ. monumentalis, այստեղ՝ ռուս. монументальный բառից: Հուշարձանին (մոնումենտին) բնորոշ, չափերով, համամասնություններով, վեհությամբ տպավորիչ ազդեցություն թողնող (արվեստում):

Կոմիտասի առաջին կոնցերտը չկա՞ծ՝ նա մի պաշտոնական գրություն է սրանում պարրիարքական փոխանորդ Եղիշե ծայրագույն վարդապետ Դուրյանից... – Թերլենեզյանի ձեռագրում սխալմամբ գրված է «Ղևոնդ ծայրագույն վարդապետ Դուրյանից»: Պետք է լինի «Եղիշե»: Եղիշե ծայրագույն վարդապետ Դուրյան (ավագանի անունով՝ Միհրան, 1860-1930) – բանասեր և բանաստեղծ, Պետրոս Դուրյանի կրտսեր եղբայրը: 1878 թվականին ընդունել է հոգևորական կարգ: 1909-1911 թվականներին՝ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը:

Էջ 273.- *...որպիսին է «Պրի Շանի» քեմը...* – «Պտի Շան» – Կ. Պոլսի «Petit Champ» («Փոքր դաշտ») կոչվող թատրոնի շենքը, որ հայերը հաճախ վարձում էին:

...որ արգելվեն այն գրամաֆոնի պլաստիկաները, որոնց համար երգած էր նշանավոր երգիչ Արմենակ Շահնուրադյանը: – Գրամաֆոն – սարք, մեքենական սկզբունքով ձայնագրված ձայները (երաժշտությունը) ձայնասկավառակներից վերարտադրելու, վերարձակելու համար:

Պլաստիկա – ռուս. пластинка բառից: Չայնապակ, ձայնասկավառակ:

Արմենակ Շահնուրադյան (1878-1939) – երգիչ (տենոր): 1906-ին ընդունվել է Փարիզի կոնսերվատորիան, 1910-ին՝ հրավիրվել է «Գրանդ Օպերա»: 1912-ից նվիրվել է համերգային գործունեության՝ տարածելով հայկական ժողովրդական, ազգային-հայրենասիրական և հոգևոր երգեր: Ստացել է «Տարոնի տխակ» պատվանունը:

Կրոնական քերթի խմբագիր Չարմայր քահանան... – Նկատի ունի «Տաճար» (Կ. Պոլիս) երկշաբաթաթերթի խմբագիր Չարմայր քահանա Կեղյուրյանին:

Հայրնի գրագիրուհի Արշակուհի Թեոդիկը... – Արշակուհի Թեոդիկ (օրիորդական ազգանունով՝ Ճեզվեճյան, 1875-1922) – գրող և բանասեր: Թեոդիկի (Թեոդորոս Լապճինյան, 1873-1928) կինը:

Քյոթահիո հանքային ջրերը

Էջ 274.- *12 թվի ամառը Կոմիտասի հեյր իր հայրենիք՝ Քյոթահի-*

ա ուղևորվեցինը: – Բյուրահիա, հայերեն՝ Կուտինա – Կոմիտասի ծննդավայրը:

Կոմիտասին ես այնպեղ նկարեցի: – «Կոմիտաս» (1913, կտավ, յուղաներկ, 80x53) գործը ամերիկահայ գաղութը 1926 թվականին նվիրել է Հայաստանի քանդարանին:

Թերլենեզյանը Կոմիտասին նկարել է մի քանի անգամ: Հայաստանի ազգային պատկերասրահում պահվում է ես մեկ յուղանկար՝ «Կոմիտասը գետափին» (1911, ստվարաթուղթ, յուղաներկ, 14x22) և երկու գծանկար՝ «Կոմիտաս» (1910-1912, մատիտ, 35x21,6) և «Կոմիտասը քնած» (1910-1912, սանգինա, 20,5x29):

Այդպեղի գործերից է իմ գույզ այծերի փոքր նկարը, որ Ամերիկայում մի կոլեկցիոնների մոտ է: – Կոլեկցիոներ – ֆր. collectionneur բառից: Հավաքածուորդ, հավաքածու կազմող անձ:

...և մի պահ կորվել պրոզայիկ կյանքիցս... – Պրոզայիկ – ռուս. проза բառից: Այստեղ՝ անբանաստեղծական, գորշ, ձանձրալի:

Պոլսո հայ գաղութը

Էջ 275.- *...որոնց հիման վրա հայկական կոլորաձների մասին մի ցնցող և փաստացի գիրքը գրեց*: – Թերլենեզյանը նկատի ունի Արամ Անտոնյանի «Մեծ ոճիրը» գիրքը (Բոստոն, 1921):

Այդ ռեալիստական արձակի լավագույն վարպետներից էին Մյունաքեշխանյանը, Չիֆթե-Սարաֆը, պերճախոս Չոհրապը և Ջարդարյանը... – Երուխան (Երվանդ Մյունաքեշխանյան, 1870-1915) – գրող, արձակագիր:

Հովհաննես Չիֆթե-Սարաֆ (Օննիկ Աբխաղովյան, 1874-1932) – գրող, արձակագիր:

Գրիգոր Չոհրապ (Չոհրապյան, 1861-1915) – գրող, արձակագիր: Ռուբեն Ջարդարյան (1874-1915) – գրող, խմբագիր:

Պոլսում էին գրվում անվանի ջութակահար հանգուցյալ Դավթյանը և պարուհի Արմեն Օհանյանը... – Դավիթ Դավթյան (1880-1911) – ջութակահար:

Արմեն Օհանյան (Տեր-Օհանյան, բուն անունով՝ Սոֆյա Փիրբուղայան, 1887-1976) – պարուհի, դերասանուհի:

Հիշում եմ դրանցից Չոհրապյան, Չավարյան, Խաժակ, Դուման և ուրիշներ: – Չոհրապյան – եթե Գրիգոր Չոհրապը (Չոհրապյան) չէ, անհայտ է, թե ում մասին է խոսքը:

Միմոն Չավարյան – տե՛ս 200-րդ էջի ծանոթագրությունը:

Գարեգին Խաժակ (Խաժակյան, 1867-1915) – գրական-հասա-

րակական գործիչ:

Նիկոլ Դուման (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան, 1866-1914) – ազատագրական շարժման գործիչ:

Էջ 277.- *Հիշյալ Կանաչ մայրուղի պարերը, մունպարը և միջի երկու դամբարանները...* – Մունպար – մզկիթի այն մասը, որ ուղղված է դեպի Մեքքա:

Գահաժառանգ Մեջիտ էֆենդիի մոտ

Էջ 281.- *Գահաժառանգի նկարին մուրեցողները, մանավանդ եվրոպացիները, հիացական քացականություններով էին սկսում հրեկն կոնպլիմանները*: – Կոնպլիման – ֆր. compliment բառից: Հաճոյախոսություն:

...մի քանկարծեք Լահորի շալ քաշած իր ուսերին նսրած էր մինպարի վրա... – Լահոր – քաղաք Պակիստանի արևելյան մասում, հնուց հայտնի է ժողովրդական արհեստների մուշներով, մանավանդ բրդի ու մետաքսի հյուսվածքներով:

Շալ – պարսկ. šal բառից: Բրդի թելից տանը գործված հասարակ և պինդ կտոր:

Մինտար, մույնն է, ինչ մինդար – թուրք. minder բառից: Բրդով լցված, բարակ ներքնակի պես սարքված, գետնին փռելու և վրան նստելու համար նախատեսված իր:

Էջ 281.- *Երաժշտության այսպեղ հավաքված համաշխարհային կորիֆեաները հորնկայս օվացիա էին սարքել Կոմիտասին...* – Կորիֆե – տե՛ս 182-րդ էջ ծանոթագրությունը:

Օվացիա – ռուս. орация բառից: Բուռն ծափահարություն, խելահեղ հրճվանք:

Երբ Կոմիտասը Պոլիս է վերադառնում և տեղեկանում է կրոնական ժողովի զագիր վերաբերմունքի ու քամբասանքների մասին, մի քերթի մեջ հեղեղյալ տողերն է գրում.

«Ես տարիների աշխատանքով գծել եմ իմ ուղեգիծը, ուրկե ընթացել եմ մինչև այսօր և պիտի ընթանամ ասկե ետքն ալ՝ որքան արե՛ն որ ուժ կա երակներու մեջ, որուն նվիրականության ես համոզված եմ բոլոր սրտովս...»: – «1914 թուականի յունիսին Բիլմենթալ եղբայրները թողարկում են Արմենակ Շահմուրադեանի կատարումով և Կոմիտասի նուագակցութեամբ մի քանի եկեղեցական երգերի ձայնասկառառակը, որը յարուցում է «պոլսահայ տիրացուների» զայրոյթն ու վրդովմունքը, և նրանք, սրբապղծութիւն համարելով այդ, բողոքով դիմում են Կրօնական ժողովին: Կրօնական ժողովը յունիսի

18-ին կայացնում է հետևեալ որոշումը. «Նկատելով, որ Տ. Կոմիտաս Վարդապետը Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ սեպիական և Աստուծոյ տաճարին յատկացեալ սրբազան երգերն իր երգեցողութեամբ ի վաճառս հանած է, որոնք կրամաֆօնի միջոցով կ'երգուին ամենուրեք, մանաւանդ կրօնական զգացմունքները վիրատորող անպատշաճ վայրերու մէջ, որոշեց Սրբազան Պատրիարք Հօր յանձնել պարտ ու պատշաճը տնօրինելու և խնդրել Սրբազան Կաթողիկոսէն նկատողութիւն ընել Տ. Կոմիտաս Վարդապետին հայ եկեղեցականի բոլորովին անվայել ընթացքը»: Կրօնական ժողովի այս որոշումը դատապարտում է Արշակ Չօպանեանը՝ «Բիզանդիոն»-ում հրապարակելով «Անկրօն որոշում մը» յօդուածը, ուր մասնաւորապէս գրում է. «Կրօնական ժողովին որոշումը հայիոյանք մըն է գեղեցկութեան դէմ, և զուրկ է արդարութեան յետին նշոյլէն» (Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, Գիրք Բ, Երևան, 2007, էջ 480):

Խոսքը վերաբերում է Կոմիտաս վարդապետի «Հայ երաժշտութեան յաղթանակը» խորագրով հարցազրույցին, որ տպագրվել է «Ազատամարտ» օրաթերթում (Կ. Պոլիս, 1914, 9/22 հուլիսի, թիվ 1557): 1941 թվականին այդ հարցազրույցը լեզվաճանաչական որոշ տարբերություններով տպագրվել է «Կոմիտաս, Հոգևածներ և ուսումնասիրություններ» (Երևան) գրքում: Փանոս Թերլեմեզյանը վստահաբար մեջբերումը արել է հիշյալ գրքից, որտեղ Կոմիտասի խոսքերը բերված են հետևյալ տեսքով. «Ես տարիներու աշխատանքով շինեմ եմ իմ ուղեգիրը, ուրկէ ընթացել եմ մինչև ցարդ և պիտի ընթանամ ասկե ետքն ալ, որքան ատեն որ ուժ զգամ երակներուս մեջ. ոչ մեկ խոչընդոտ չի կրնար կասեցնել զիս իմ առաքելությանս մեջ. որու նվիրականությանը համոզված եմ ես բոլոր սրտովս»:

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

Յարիզմի քաղաքականության փոփոխությունը դեպի հայեր և Ազգային բյուրոյի ծնունդը

Էջ 285.- *Բուլղարիան ռուսաց ուլտիմատում պահանջով չեղնունայն եր դարչալ:* – Ուլտիմատում – ռուս. УЛТИМАТУМ բառից: Վերջնագիր:

Էջ 286.- *Նահաարարապետ Կոկովցե պարասիսանեց հայոց կաթողիկոսին...* – Վլադիմիր Կոկովցե (1853-1943) – Ռուսաստանի վարչապետ 1911-1914 թվականներին:

Այդ ներկայացուցիչը ընդրվեց մեծահարուստ Պողոս փաշա Նուբար... – Պողոս փաշա Նուբար (1851-1930) – հասարակական-քաղաքական գործիչ, Եգիպտոսի երկաթուղիների վարչության ընդհանուր տնօրեն, բարեգործ, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիր նախագահը: 1913 թվականին Ամենայն հայոց կաթողիկոսը նրան կարգում է Ազգային պատվիրակության ղեկավար:

...երբ Ռուսիան իբր ռեժիսոր Թուրք-Հայաստանի բարենորոգմանց խնդիրը միայնակ առաջ տաներ իր կոնկրորտի տակ: – Կոնտրոլ – ռուս. КОНТРОЛЬ բառից: Ստուգում, վերահսկողություն:

Ռուսաց Պոլսո դեսպան Կիրս... – Սիխայիլ Գիրս (1856-1932) – Ռուսաստանի դեսպանը Կ. Պոլսում 1911-1914 թվականներին:

Էջ 287.- *Մի ուրիշ «հայասեր» էլ՝ Պաուլ Ռոհրբախ անունով գերմանացի, որ չափազանց սիրելով հայությունը առաջարկել էր բյուրքահայերը հեռացնել ռուսահայերի մերչանտրությունից և տեղահանել ու բնակեցնել Բաղդադի երկաթուղու երկայնքին, զի նրանք կուլտուրական ժողովուրդ լինելով՝ ավելի օգտակար կարող են լինել այնպեղ:* – Պաուլ Ռոհրբախ (1869-1956) – գերմանացի ճանապարհորդ, հրապարակախոս և լրագրող, փիլիսոփայության դոկտոր: Հայտնի է Հայաստանին նվիրված աշխատություններով, ինչպես, օրինակ, «Ինչի՞ կարիք ունի հայ եկեղեցին», «Հայ եկեղեցու ներքին հիմնախնդիրները», «Հայկական բարենորոգչական ձգտումների արտաքին դժվարությունները» և այլն, ինչպես նաև իբրև թե հայանպաստ գործունեությամբ:

Ռոհրբախի կեղծհայանպաստ գործունեության մասին ցավով և ցասումով գրում է նաև Լեոն իր «Անցյալից» գրքում. «...իսկ այժմ, 1913-ին, մի «հայասեր» էր (օ՛, հայասեր) Պաուլ Ռոհրբախ, որ առաջին անգամ սրիկա-հայասիրական խորհուրդ էր տալիս թուրքերին, որ հայերին Ռուսաստանի ազդեցությունից ազատելու համար պետք

է նրանց հեռացնել ռուսական Հայաստանի հարևանությունից և, հանելով իրենց երկրից, բնակեցնել Բաղդադի երկաթուղու երկարությամբ՝ գետին մշակելու և գերմանական փողատերերի համար նույնպիսի ստրուկներ դառնալու համար, ինչպիսին էին նեգրերը Գերմանիայի աֆրիկյան գաղութներում» (Լեո, «Անցյալից», Թիֆլիս, 1925, էջ 261-262): Լեոն նույն գրքում Ռոհրբախի այդ ծրագիր-առաջարկի մասին խոսում է երկու անգամ, երկրորդ անգամ դառնությամբ նկատելով, որ Ռոհրբախը դեռ «մերն էր հաշվում»:

Էջ 288.- *Գրող ընկերս՝ Չոկյուրյան և պարոն Գ., ցանկանալով տեսնել Հայասրան...* – Տիգրան Չոկյուրյան (1884-1915) – գրող, խմբագիր:

Պարոն Գ. – գավառական թերթի թղթակից Գարեգին Գյուլբենկյան:

Այդ 5-7-րդ դարու հայկական ճարտարապետության գլուխգործոցը... – Չվարթնոցը (Վաղարշապատի Մուրբ Գրիգոր) կառուցվել է 641-661 թվականներին:

Քեֆ ու խնջույք

Էջ 291.- ...և զանազի ծաղիկներով եզերված մի փարածուն սարուի վրա: – Չամպը, նույնն է, ինչ զամբյուղ – շեփորածն ծաղիկներով բույս՝ եղեգնի տերևների մման տերևներով:

Կապույտ դասարանյալներ փովեցին նարողների առջև... – Դաստամալ – սփռոց, նաև՝ սրբիչ, նաև՝ թաշկինակ:

...որոնց կողքին թքու դրած ախորժակաբեր պովածքներ ու պանիրներ քասաների մեջ: – Պովածք – «բռնվածք» բառն է Շատախի բարբառով: Թքու:

Թրծած հողի կուռիկներ դրին ամեն մի մարդու առջև... – Կուռա – լայն ու ծանծաղ կավե աման, ափսե: Կուռիկ – փոքր կուռա՝ գինի խմելու համար:

Էջ 293.- ...էքստրազի մեջ գալարվելով... – Էքստազ – ռուս. экстаз բառից: Հափշտակություն, սքանչացում, զմայլանք:

Հաջորդ օրը ես այցելեցի իմ ընկեր նկարիչ Վրթանես Արիկյանին: – Վրթանես Արիկյան (1872-1936) – գեղանկարիչ:

Էջ 294.- ...մի հանձնարարություն փվեց Ոսրանի գայմազամի վրա: – Գայմազամ – տե՛ս 25-րդ էջի ծանոթագրությունը:

Միհրանը ինչ ծանոթացրեց Ռուրեն փաշային... – Ռուրեն փաշա – Ռուրեն Տեր-Մինասյան (1881-1951) – ազատագրական շարժման

գործիչ: Եղել է Ազգային խորհրդի անդամ, Հայաստանի Առաջին Հանրապետության պաշտպանության նախարար: Թողել է բազմահատոր հուշեր:

Դեպի Ախավանք

Էջ 295.- ...իրենց հերթին կրոնավորներն էլ վերածվել էին աշխարավորության հաշվին ապրող պարագիտների... – Պարագիտ – ռուս. паразит բառից: Մակարյոյծ:

Էջ 296.- Այս մի պերճախոս նմուշ էր դաշնակցական հակահեղափոխական քանդիտային գործունեության: – Բանդիտ – ռուս. бандит բառից: Ավազակ:

Չեռագրեր

Էջ 298.- ...ուր սեղանին մասնակից էր «փաշա» մականվանյալ Դաշնակցության լիդեր Արամը: – Արամ Մանուկյան (1879-1919) – Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիրը: Եղել է Առաջին հանրապետության ներքին գործոց նախարարը:

Էջ 299.- ...ուր ընկ. Լալայանը վերցրեց այդ կուպիները... – Երվանդ Լալայան (1864-1931) – ազգագրագետ, բանահավաք: 1921 թվականից եղել է Հայոց ազգագրական ընկերության կազմակերպած թանգարանի առաջին վարիչը:

Էջ 300.- Վերատեսուչ Հոֆ բեյը... – Նիկոլայ Հոֆֆ (1867-1958) – նորվեգացի գեղապետ, 1914 թվականին Արևմտյան Հայաստանում հայկական բարեօրոգումների ծրագիրը վերահսկելու կարգված պաշտոնական երկու անձերից մեկը:

- Հոֆ և Վեստենիկ վերաբեռույններին դյուրություն փալու համար... – Վեստենիկ – Լուիս Կոնստանտ Վեստենենկ (1872-1930) – հոլանդացի հայտնի դիվանագետ, Արևմտյան Հայաստանում հայկական բարեօրոգումների ծրագիրը վերահսկելու կարգված երկրորդ անձը:

Դեպի Մոկս

Էջ 303.- Արամ «փաշան» Վանում գրկնվող Քաջազնունուն Մոկս էր հրավիրած... – Հովհաննես Քաջազնունի (Տեր-Հովհաննիսյան, 1868-1938) – հասարակական-քաղաքական և պետական գործիչ, ճարտարապետ: ՀՅԴ անդամ: 1911-1914 թվականներին հաստատ-

վել և գործել է Վասպուրականում, Վանում նախագծել և կառուցել է Աշխատանքի տունը:

Էջ 301.- ...*որ գայլերն անգամ չեն վնասել Փոթկա մալին...* – Մալ – թուրք. mal բառից: Տավար, անասուն:

Աղթամար կղզին իր ներկա՝ երեսուն տարի առաջվա և անցյալի թագավորական շրջանում

Էջ 308.- *Ի՛նչ սպանություններ, ի՛նչ վանդալություններ, ի՛նչ քալան...* – Վանդալություն – ռուս. вандал բառից: Բարբարոս:

Էջ 309.- ...*երբ դեռ Խաչատուր վերջին կաթողիկոսը ողջ էր...* – Խաչատուր Բ Շիրոյան – Աղթամարի կաթողիկոս 1864-1895 թվականներին:

...*որովհետև նրա վրա հին դարերից կապույր գծերով նկարված մի պաննո կար:* – Պաննո – ֆր. panneau: Այստեղ՝ ռուսերեն панно բառից: Պատի մի մասը կամ ամբողջ պատը, որ շրջանակված է հատուկ ծեփվածքով և որի վրա նկարված է որևէ տեսարան կամ տեղադրված է բարձրաբանդակ:

Էջ 310.- *Թովմա Արծրունին՝ ժամանակակից պարմարանը գրում է. «Հավուր մեծի արքային հայոց Գագկա, որ քաջակորով զիպոթյանը նայեցյալ ի տեղվոյն զքուսանս և ծանուցյալ զնա ապապրան լինել աշխարհի ի հինից բշնամյաց, չեռնարկե հիմն արկանել զնա ահեղ իմն և զարմանալի հիացմամբ»:* – Փանոս Թերլեմեզյանը վկայակոչում է Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» աշխատության Անանուն մատենագրին վերագրվող հատվածի Ը գլխի տողերը: Բնագիրը այսպես է. «...մինչև յաուրս արքային Հայոց Գագկայ, որ քաջակորով զիտութեամբ նայեցեալ ի տեղոյն զքուսանս և ծանուցեալ զնա ապաստան լինել աշխարհի ի հինից բշնամեաց՝ ձեռնարկե հիմն արկանել զնա ահեղ իմն և զարմանալի հիացմամբ» (Թովմա Արծրունի և Անանուն, «Պատմություն Արծրունյաց տան», Երևան, 1985, էջ 454):

Թովմա Արծրունին գրում է. «Եվ քանզի ճարտարապետ արվեստին էր Մանուել՝ այր լի իմաստությանը և գորավոր ի գործս յոր՝ հրաշակերտ էր եկեղեցին զարմանազորձ արվեստիլ»: – Բերված տողերը բնագրում հետևյալ ձևով են. «Եւ քանզի ճարտարապետ արուեստին էր Մանուէլն, գոր ի վեր անդր ցուցաք, այր լի իմաստութեամբ և գորատր ի գործս իւր՝ հրաշակերտէ զեկեղեցին զարմանազորձ արուեստիւ» (Թովմա Արծրունի և Անանուն, «Պատմություն Արծրունյաց տան», Երևան, 1985, էջ 460):

Էջ 311.- *Դրանք ներկայացնում են մարդիկ, ֆանդաստիկ կենդանիներ, թռչուններ, կոնյոզիցիաներ, մեդալյոններ և այլն:* – Կոնյոզիցիա – ռուս. композиция բառից: Հորինվածք, ճարտարակազմություն, կառուցվածք:

Մեդալյոն – ֆր. medaillon: Այստեղ՝ ռուսերեն медальон բառից: Ոսկերչական զարդարանք, սովորաբար կլոր, շրջանաձև կամ օվալաձև տափակ տուփի տեսքով կամ թե օվալաձև կամ կլոր շրջանակ որևէ պատկերի կամ զարդարանքի համար:

Վանի կացությունը

Էջ 311.- ...*մինիմում մի ժամ պիտի անցնեին քյուրքական քաղերի միջով...* – Մինիմում – ռուս. минимум բառից: Նվազագույն, առնվազն:

...*Դաշնակցության լիդեր Չավրիկն էր քարենորոգմանց ծրագիր ներկայացնում ցարի Պոլտո դեսպան պ. Կիրսին...* – Հակոբ Չավրիկ (1865-1920) – բժիշկ, ազատագրական շարժման գործիչ:

Կիրս – տե՛ս 286-րդ էջի ծանոթագրությունը:

...*որի վերջին ֆազը լիներ ռուսական տիրապետություն:* – Ֆազ – ռուս. фаза բառից: Փուլ:

Վռամյան

Էջ 319.- *Արշակ Վռամյան (Օննիկ Դերչակյան, 1870-1915)* – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ:

Էջ 321.- *Իսկ թուրքերը եռանդուն կերպով չիթայական խմբեր ու միլիսներ էին կազմակերպում...* – Չիթայական խումբ – նույնն է, ինչ չեթեական խումբ: Չեթե – թուրք. ավազակախումբ, թեև երբեմն գործածվում է պարզապես զինյալ խումբ իմաստով:

Միլիսներ – զինված անհատներ, որ միավորվում են անկանոն խմբերով:

Դաշնակցության Արևելյան բյուրոն և կամավորական շարժումը

Էջ 322.- ...*կոպտացիայով հրավիրեց փոխարքայական պալապին քարեկամ Մեսրոպ եպիսկոպոսին, Ալեքսանդր Խարխայանին և Սամսոն Հարությունյանին...* – Կոպտացիա – ռուս. кооптация բառից: Ընտրյալ որևէ մարմնի անդամների համալրումը նոր անձերով, սեփական որոշմամբ, առանց նոր կամ լրացուցիչ ընտրությունների:

Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսեսյան (1865-1939) – հայագետ,

հասարակական գործիչ: Ազգային բյուրոյի պատվավոր նախագահ:

Ալեքսանդր Խատիսյան (1874-1945) – Հայաստանի Առաջին Հանրապետության վարչապետ (1919-1920):

Մամսոն Հարությունյան (1869-1941) – Կաղեսական կուսակցության անդամ, 1917-ից՝ Հայ ժողովրդական կուսակցության անդամ, ապա՝ փոխնախագահ, Կովկասի հայոց բարեգործական ընկերության նախագահ, Ազգային բյուրոյի նախագահ, Հայոց ազգային խորհրդի անդամ: Քաջազունու կոալիցիոն կառավարության մեջ եղել է արդարադատության նախարար, պարենավորման նախարարի պաշտոնակատար:

Թյուրքիայում գրկվող հայերի հոգեբանական վիճակն ինչ էր այդ կրիտիկական օրերին: – Կրիտիկական – ռուս. критический բառից: Եզնաժամային:

Էջ 323.- *Ռուսական բանակների ընդհանուր հրամանատար Նիկոլա Նիկոլայևիչի սրբառույզ կոչը...* – Նիկոլայ Ռոմանով (1856-1929) – ցարական ընտանիքի անդամ: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում եղել է ռուսական զորքերի գլխավոր հրամանատարը, հետագայում նշանակվել է Կովկասյան զորքերի ընդհանուր հրամանատար և Կովկասի փոխարքա (1915-1917):

Հայրնի ժուրնալիստ և հասարակական գործիչ Համբարձում Առաքելյանին թարգմանելու համար... – Համբարձում Առաքելյան (1855-1918) – գրող, հրապարակախոս, խմբագիր: Գրիգոր Արծրունու մահից հետո Ալեքսանդր Բալանթարի հետ միասին խմբագրել է «Մշակը»: Եղել է քարտուղար Կովկասի հայ բարեգործական ընկերության և Մատենադարանի վարիչ, նաև Թիֆլիսի Գայանյան և Հովնանյան դպրոցների հոգաբարձու, Կովկասյան ժողովրդական համալսարանի հայկական ճյուղի նախագահ: Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիրներից:

...արդեն պարկերում էին անխուսափելի կատասարոֆը: – Կատասարոֆ – ռուս. катастрофа բառից: Աղետ, կործանում:

Էջ 325.- *...սկսեցին ուժեղ պրոպագանդ մղել բանակի մեջ «ավտոնոմիստ» հայերի դեմ...* – Ավտոնոմիստ – ռուս. автономия, «ինքնավարություն» բառից: Ինքնավարության կողմնակից, ջատագով:

Հեղազային միայն, երբ ֆրանսիական դեսպան Բալիսլոզի օրագիրը հրապարակ էլավ... – Մորիս Պալեոլոզ – 1914-16 թվականներին Ֆրանսիայի դեսպանը Ռուսաստանում:

Կամավորություն ստեղծելու շարժառիթները

Էջ 326.- *...երբ գլխավոր հրամանատար Յուդենիչը մտալ Ալաշկերտ...* – Նիկոլայ Յուդենիչ (1862-1933) – ռուս զեներալ, 1912 թվականից պաշտոնավարել է Կովկասում, 1915 թվականի հունվարից եղել է Կովկասյան բանակի հրամանատարը:

...անմիջապես իր փոխանորդ զեներալ Օզանովսկու հետ... – Օզանովսկի – Կովկասյան Չորրորդ բանակի հրամանատարը, ազգությամբ՝ լեհ:

Էջ 327.- *Ալբաքիցն էլ կոտորածների սև լուրեր էին գալիս:* – Ալբաք, նույնն է, ինչ Աղբակ – գավառ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհում: Տարածված էր Տիգրիսի ձախակողմյան վտակ Մեծ Զավ (կամ Զաք) գետի վերին հոսանքի շրջանում:

Թյուրքիան էլ մտավ պատերազմի մեջ

Էջ 328.- *...որ Էնվեր փաշան լեռնային և չապաված ճանապարհներով անցել է ռուսաց սահմանը...* – Էնվեր փաշա (1881-1922) – թուրք պետական և ռազմական գործիչ, հայերի ցեղասպանության գլխավոր իրագործողներից մեկը:

Էջ 329.- *Թյուրքերը սկսեցին Համիդի բանակի բյուրոյ չիավորները մորթիլիզացիայի ենթարկել...* – Մորթիլիզացիա – ռուս. мобилизация բառից: Չորահավաք, զորաշարժ:

...զինվորական գումանդանի հանդիսավոր անարարերությունից քաջալերված... – Գումանդան – ֆր. commandant բառից: Հրամանատար:

Էջ 331.- *Նրանց ընկերացան Վանի ոստիկանապետ Վաֆիկ քեյ և Կոլջի բաշի Արիֆ...* – Կոլջի բաշի – թուրք. ոստիկանական կամ զինվորական զորախմբի հրամանատար: Այստեղ՝ հանրային պարտուց դետերի պետը:

Փոլիս կոմիսերը՝ իր զենքերը և վրայի հագուստները հանած... – Փոլիս կոմիսեր – ֆր. police-«ոստիկան» բառից: Ոստիկանական կոմիսար:

Արշալույսին

Էջ 333.- *Առաջին պլանի վրա ծաղկած ծառեր...* – Պլան – ռուս. план բառից: Այստեղ՝ տեսանելի հարթություն, կողմ:

...վարդենիների ալեյում խաղում էին դպրոցական աղջիկներ... – Ալեյ – ռուս. аллея բառից: Ծառուղի:

... ներկերս շարեցի պալիտրի վրա... – Պալիտր – տե՛ս 210-րդ էջի ծանոթագրությունը:

Էջ 334.- Այգիի մեջտեղ հում աղյուսներից կառուցված էր մի քոշկ... – Քոշկ – պարսկ. kosk բառից: Պարտեզում շինված հովանոց: Նաև՝ ապարանք:

Թագա-քյահրիզի վեր մի նեղ փողոց կար... – Թագա-քյահրիզ – Թագա – թուրք. նոր:

Քյահրիզ – տե՛ս 25-րդ էջի ծանոթագրությունը:

Էջ 335.- ... այս կողմի հորի բերանում բարձրվածները գյուլեցին նրանց... – Գյուլլա – թուրք. gulle բառից: Գնդակ, արկ:

Վանի դուցազնամարտը

Էջ 338.- Ես վազեցի եւ դուռը բացի, տեսնեմ մաքեմարիկայի ուսուցիչ Կարապետ Աճեմ Խաչոյանը, վառած լապտերը ձեռքին... – Կարապետ Աճեմ-Խաչոյան – Սկրտիչ Փորթուգալյանի աշակերտներից և արմենական գործիչներից: Վարել է ուսուցչական և տեսչական պաշտոններ Վանի Ս. Թարգմանչաց վարժարանի մեջ: Վանի ապրիլյան հերոսամարտի օրերին Ջինվորական մարմնին կից բաժանմունքի մեջ վարել է զանազան աշխատանքներ: Վանի հուլիսյան մեծ զաղթի ընթացքին հասել է Երևան, ուր վախճանվել է 48 տարեկան հասակում:

Հաջորդ առավոտ Միացյալ կուսակցություններից մի դելեգացի եկավ... – Դելեգացիա – տե՛ս 166-րդ էջի ծանոթագրությունը:

Էջ 339.- Արմենակ Եկարյան, Գաբրիել Մեմիջյան, Հրանտ Գալիկյան, Կայծակ Առաքել, Բուլղարացի Գրիգոր... – Արմենակ Եգարյան – տե՛ս 119-րդ էջի ծանոթագրությունը:

Գաբրիել Մեմիջյան – Արմենական կազմակերպության գործիչ: Հրանտ Գալիկյան (1889-1938) – հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան, Հնչակյան կուսակցության անդամ: 1915-ին եղել է Վանի ինքնապաշտպանության զինվորական մարմնի անդամ:

Կայծակ Առաքել (Տիգրան Աբաջյան, 1869-1917) – ազգային-ազատագրական շարժման գործիչ, ֆիդայի, Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության անդամ: 1915-ին եղել է Վանի ինքնապաշտպանության զինվորական խորհրդի անդամ:

Բուլղարացի Գրիգոր (Գրիգոր Կյոզեյանց, ծն. թվ. անհայտ-1922) – ազգային-ազատագրական շարժման մարտիկ: 1915-ին եղել է Վանի ինքնապաշտպանության զինվորական մարմնի անդամ:

Արտատպում Երևանի «Երևան» տպատեղում – (մլխ)

Էջ 340.- Մեր հինգերորդ գործն եղավ Կարմիր խաչի խումբը կազմակերպել, որին լրջորեն օժանդակեց ամերիկացի դոկտոր Ըշըր... – Վանում ամերիկյան միսիոներական ընդհանուր ղեկավարը եղել է դոկտոր Ռեյնոլդսը, որի օգնականը եղել է երիտասարդ բժիշկ դոկտոր Ըշըրը: Նա Վանում բացել է հիվանդանոց՝ քսան մահճակալով: Դոկտոր Ըշըրը Վանում գործել է մոտ տասնյոթ տարի: Վանի ժողովուրդը շատ սիրել և հարգել է դոկտոր Ըշըրին:

Էջ 341.- Ի՛նչ է նպուզիազմ... – Էնտուզիազմ – այստեղ՝ ռուս. энтузиазм բառից: Խանդավառություն:

Առաջին օրը սպանված հերոս Եղիայի մայրը, որ արդաստուքից խիստած մի կռեթի պլոկի էր նման... – Կռեթ – կոշտ, քարացած հողակտոր: Կռեթի պլոկ – քարացած հողակույտ:

Էջ 342.- Իններորդ գործը եղավ Կենտրոնական դպրոցի երաժշտական խմբից մի ֆանֆառ կազմակերպել... – Ֆանֆառ – ֆր. fanfare բառից: Փողային նվագախումբ:

...և սկսեցին մեքեմայացված չեով շինել նորագույն սիստեմով հրացանների զիլզեր... – Գիլզ – ռուս. гильза բառից: Պարկուռ:

...որպեսզի մարթենի, բերրանկա և կափածոյի հրացանների փամփուշտները լեցվեին: – Մարթենի – ամերիկյան «մարտիմի» համակարգի հրազեն, գործածվել է 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը:

Բերրանկա – տե՛ս 167-րդ էջի ծանոթագրությունը:

Կափածոյի – ենթադրաբար՝ պետք է լինի «կափակլի», թուրք.՝ փականավոր:

Ինչպես էին կովում

Էջ 342.- ...մի բլուր կար, որ թյուրքական կավալերիայի դիրքն էր: – Կավալերիա – ռուս. кавалерия բառից: Հեծելազույն:

Սահակ բեյի դիրք

Էջ 347.- ...նրանք, մի շուն բռնելով, նրա պոչից ամուր կապեցին մի ամերիկյան դալարի փապո... – Տապո – կարելի է ենթադրել, որ սա բարբառային «դաբո» բառն է, որ նշանակում է դատարկ աման:

Շիրոյանի դիրքը

Էջ 349.- ...թե այդ հեռավորության վրա իմ մողել հրացանի նշանգյաղը ինչքան պետք էր բարձրացնել... – Մողել – այստեղ՝ հրացանի տեսակի անվանում:

Նշանգյաղ – բարբառ.՝ նշանահատիկ:

Համուղ աղայի գորանոցը

Էջ 350.- ...*ժողովուրդը անվանում էր «Նալբանդ փաշա»:* – Նալբանդ – թուրք. nalbant բառից: Պայտար:

Թագա քյահրեզի քանքանները ուզեցին այս կշիսն վառել: – Քանքան – արհեստավոր, որ ջրհոր, ստորգետնյա ջրուղի է փորում:

Կշիս – թուրք. keshak բառից: Չմեռոց, ձմեռանոց, գորանոց:

Էջ 351.- *Քանքանները բավական հեռվից լաղըմ զարնելով...* – Լաղըմ – թունել, ստորգետնյա անցք: Այստեղ՝ թունել փորելով:

Դեկեզացիա

Էջ 320. - ...*ուրեմն նախ խոսել սկսեց վաճառական Ավետիս Թերզիբաշյանը:* – Ավետիս Թերզիբաշյան (1873-1947) – ազգային, քաղաքական և հասարակական գործիչ: 1902 թվականից եղել է Վանի Ազգային խորհրդի անդամ, հետագայում վեց տարի եղել է խորհրդի նախագահը: Եղել է Ռամկավար-ազատական կուսակցության նշանավոր դեմքերից մեկը, վարել է պատասխանատու պաշտոններ և ծավալել է արդյունավոր գործունեություն:

...երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... – Շտիկ – ռուս. штык բառից: Սվին:

Էջ 330 - *Արևածաղկի սերունդը միայն չէր հարուստացնում, այլ և ծաղիկներ էր բերում:*

Սուրբ Գրիգորի անունով կառուցված շինությունները, որոնք հիմնականում կառուցվել են 19-18-րդ դարերում, հիմնականում կառուցվել են քարով:

Սուրբ Գրիգորի անունով կառուցված շինությունները, որոնք հիմնականում կառուցվել են 19-18-րդ դարերում, հիմնականում կառուցվել են քարով:

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող... Երբ կրկնից թյուրքական շրիկներն են նրանց մղող...

Բովանդակություն

Երվանդ ՏԵՐ-ԽԱՉԱՏՈՒՅԱՆ.

ՆԿԱՐԻՉԸ, ԻՐ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԻՐ ՀՈՒՇԵՐԸ 5

ԿՅԱՆՔԻՍ ՀՈՒՇԵՐԸ 21

ԱՌԱՋԱՔԱՆ 23

ՍԿԻՋՔԸ 25

ԵՐԿՐԻ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՐՍ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 27

ՀԱՆԿՈՒՅՄՆԵՐԻ ՉՈՐԸ 28

ՎԱՐԺԱՐԱՆ-ՍՊԱՆԴԱՆՈՑ 31

ՄԱՐՇԻՄՈՆԻ ԱՅՅԸ 34

ՄՆԱՀԱՎԱՏ ՍՐՄԱ ՏԱՏԵՆ 36

ՀՈՐՍ ՄԱՀԸ 38

ՆԵՐՍԻԿ ԱՆՊԵՐ 39

ՋՈՋ ԹԱԼԱՍԱՋԵՆՑ ՏՈՒՆԸ 41

ՄԱՏԱՂ 43

ՀԻՆ ՕՐԵՐԻ ՀԱՐՄԱՆԻՔՆԵՐԸ 44

ՎԱՆԻ ՄԵՋ ԳՈՐԾԱԴՐՎԱԾ ԱՐՀԵՍՏՆԵՐԸ 52

ՄԵՐ ՀԱԳՈՒՄՏՆԵՐԸ 54

ՎԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆԸ 57

ՏՈՒՐՔԵՐԸ 60

ՄՈՐՍ ԲԱՆՏԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ՎԱՆԻ ՀՐԴԵՀԸ 1876-ԻՆ 61

ՋԵՂԾՈՒՄՆԵՐՍ 63

ԱՅԳԵԳՈՐԾ ԵՎ ՈՐՄՆԱԴԻՐ 65

ՄԵՐ ՏՈՒՆԸ 66

ՇԻՐԱԽԱՆԱ 69

ՄԵՐ ՄՆՈՒՆԴԸ 70

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱԿՈՒՄՆԵՐՍ 71

ՈՒՒՄ-ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄԸ 1877-78 73

ՔՅՈՒՐԴԵՐԸ 77

ՍՈՎԸ 78

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՊՐՈՑԸ 79

ՄԻ ՓՈՔՐԻԿ ԴԵՊԸ 82

ԵՐԵՔ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 83

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ 84

ԽՐԻՍՅԱՆ ԵՎ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆ 85

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԻ ԱՇԿԵՐՏՈՒԹՅԱՆ

ՄԱՐՋԱՆՔՆԵՐԸ 88

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԲՈՒՆՏԸ 89

ԵՐԵՄՅԱՆ 92

ՈՐՄՈՐԴՈՒԹՅՈՒՆ 93

ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՍ 94

ՉՈՒԽ ԿՅԱՏՈՒԿԻ ԴԵՊԸ 1889 ՄԱՅԻՍԻՆ 96

ԿԱՐՆՈ ԵՎ ԳՈՒՄ ԳԱՓՈՒԻ ԴԵՊԸԵՐԸ 98

ԱՎՈՅԻ ՓԱԽՈՒՄՏԸ 99

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ

ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ 100

ԴԵՊԻ ՄՈՒՇ 101

ՄՇՈՒ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ 105

ԱՐԱՔՈՆ ԵՎ ԼԵՎՈՆԸ 110

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՄԵՐԸ 111

ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԳՊՐՈՑ 115

ՉՐԱՂՅԱՆ ԵՎ ԹԵՐՁԻՔԱՇՅԱՆ 117

ՊՈՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԵՌՈՐԸ 118

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՄԵԿՆԵԼՍ 119

ԴԵՐԻԿԻ ՎԵՐԱՔՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 120

ԽԱՆԱՍՈՐ 123

ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍԻ ՎԱՆՔԸ 125

ՉԱԹՈՆ ԵՎ ՇԵՐՈՆ 128

ԳՈՐԵՆ ԵՎ ՇԱՔԻՐ 130

ՆՈՐԻՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 135

ԹԱՎՐԻՉՈՒՄ 137

ՎԵՐԱԴԱՐՉ 140

ՎԱՆԻ ԲԱՆՏԸ 143

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԹՈՒՄԱԽՅԱՆ 146

ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 148

ԱՅԴ ԵՐԵԶ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆՑ ՍԿՋԲՆԱԿԱՆ
ՉԳՏՈՒՄՆԵՐԸ 151

ՀԻՇՅԱԼ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆՈՒՄ 152

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՀՆՉԱԿՑԱՆՆԵՐԻ
ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՋԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ 154

ՍԱՄՆՈ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ 155

ԲԱԲ ԱԼԻԻ ՑՈՒՅՑԸ ԵՎ ՀԱՄԱՏԱՐԱԾ
ԿՈՏՈՐԱԾՆԵՐ 156

ԲԱՆԿ ՕԹՈՍԱՆԻ ԴԵՊՔԸ 157

ՆՈՒՐԻԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ ՎԱՆՈՒՄ 159

ԲԱԺԱՆՈՒՄ 160

ԹԻՖԼԻՍՈՒՄ 161

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ՆԿԱՐԻՉ
ԲԱՇԽԱՋԱՂՅԱՆԻ ՀԵՏ 165

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿԸ 166

ՍԱԼՄԱՍՏԻ ԸՆԿԵՐՆԵՐԻՑՍ ԿԱՆՉՎԵԼՍ 167

ԸՆԿԱՆՔ ՃԱՄՓԱ ԴԵՊՒՎ ՎԱՆ 168

ՎԵՐԱԴԱՐՉ Ի ՍԱԼՄԱՍՏ 169

ԴԵՐԻԿՈՒՄ 171

ՆՈՐԻՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ 172

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՈՏ 174

ՈՒՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆՍ ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ 175

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏ 176

ՅՈՒԿԱՆԵՍՈՎ 177

ԽՐԻՍՅԱՆԻ ՊԵՏԵՐՔՈՒՐԳ ԺԱՄԱՆԵԼԸ 178

ԹԱԽԻԾՍ 179

ԴԻՄԻՏՐԻ ԿԱՎԿԱՋՍԿՈՒ ԱՇԽԱՏԱՆՈՑՈՒՄ 180

ՀԱՅ ՈՒՄԱՆՈՂՈՒԹՅՈՒՆ 181

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ 182

ԷՍԼԱՆԴԻԱ 184

ՈՒՎԵԼԻ ԲԱՆՏԸ 186

ՄԵՏԵՆ 191

ԴԻԼԻՋԱՆԻՑ ԵՐԵՎԱՆ 193

ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԸ 194

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՍ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆՏՈՒՄ 196

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ 198

ԹԱՎՐԻՉ 200

ՍԱԼՄԱՍՏՈՒՄ 201

ԲՈՍՖՈՐ 202

ՄԵՄԻՆԱ 204

ՓԱՐԻՉ 205

ԱԿԱԴԵՄԻ ԺՅՈՒԼԻԱՆ 206

ՄԻ ՊԱՏԱՆԻ ՆԿԱՐԻՉ 208

ԻՄ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊՐԻՆ 210

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ՏԱՐԲԵՐԸՄՔՈՆՈՒՄՆԵՐ 212

ԻՄ ՓԱՐԻՉՅԱՆ ԿԵՆՑԱԳԸ 216

PLACE DE LA CONCORDE ՇԱՆՋԵԼԻՉԵ ԵՎ
ՀԱՂԹԱԿԱՆ ԿԱՍԱՐԸ 217

ԼՅՈՒՔՍԵՆՔՈՒՐԳԻ ՊԱՐՏԵՉԸ 218

ՊԱՆԹԵՈՆ (Pantheon) 219

(ԴԱՄԲԱՆԱՐԱՆ ՀՈՅԱԿԱՊՄԱՐԿԱՆՑ) 219

ՍՈՐՔՈՆԻ ԱՄՓԻԹԵԱՏՐ 221

ԹԱՏՐՈՆՆԵՐ 222

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՍ ՖՐԱՆՍԱԿԱՆ
ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՍԱԼՈՆՈՒՄ 223

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ 224

1904-ԻՆ ԺՈՒԼԻԱՆ ՊՐԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱՑ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ 225

ՎԵՐԱԴԱՐՉ Ի ԿՈՎԿԱՍ 226

ԹՈՒԼԱՑԱԾ ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՋՈՐԱՆԱԼԸ 227

ԳԱԼԻՑԻՆԻ ՏԵՈՒՐԸ 228

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ 229

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 230

ՍԱՆԱՀԻՆՈՒՄ 231

ՍԱՆԱՀԻՆՈՒՄ ԶԱՎԱՐՅԱՆԻՆ ՀԱՆԴԻՊԵԼՍ 234

ՍԱՆԱՀԻՆՈՒՄ ԿԱՏԱՐԱԾՍԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 236

1905-ի ԹԻՖԼԻՍԻ ՏԵՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ 237

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՐՎԵՍՏՆԵՐԸ 239

ՔԱԶԱԼԵՐՈՂ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ 239

ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՍ ՀՈՎՆԱՆՅԱՆ ԵՎ 240

ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 241

ՄԵՎԱՆՈՒՄ ԵՎ ԳԵՂԱՐԴՈՒՄ 242

ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՆ 242

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 243

ԹՅՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԸ ՓԱՐԻՉՈՒՄ 249

ԹՅՈՒՐՔԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 251

ԹՅՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԱՐՅՈՒՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 252

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՅՈՆ ԹՅՈՒՐՔԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ 253

ՀԱՄԻԴԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏ ԽԼԵԼՈՒ ՓՈՐՁԸ ԵՎ ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ 255

Կ. ՊՈԼՍՈՒՄ 258

ՊՈԼՍԻ ՄՅՈՒՉԵՆԵՐԸ 260

ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ 262

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 263

ԹՅՈՒՐՔ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԻՑ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ 264

ԿՈՄԻՏԱՍԻ ՀԵՏ 265

ԿՈՄԻՏԱՍԻ ԾԱԳՈՒՄԸ, ԱՌԱՇ ՈՒՍՈՒՄԸ ԵՎ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 272

ԿՈՄԻՏԱՍԻ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ 272

ՔՅՈՒՐՔԱՀԻՈ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԸ 274

ՊՈԼՍՈ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ 275

ԱՅՑԵԼՈՒՆԵՐ 279

ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ՄԵՋԻՏ ԷՖԵՆՏԻ ՄՈՏ 281

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՑԱՐԻՉՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱՅԵՐ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԾՆՈՒՆԴԸ 285

ԴԵՊԻ ՎԱՆ 289

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 291

ՔԵՖ ՈՒ ԽՆՉՈՒՅՔ 292

ԴԵՊԻ ԱԽԱՎԱՆՔ 295

ՉԵՌԱԳՐԵՐ 298

ԴԵՊԻ ՄՈԿՍ 303

ԱՂԹԱՄԱՐ ԿՂՋԻՆ ԻՐ ՆԵՐԿԱ՝ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋՎԱ ԵՎ ԱՆՑՅԱԼԻ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 308

ՎԱՆԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ 315

ԳՈՐԳԱԳՈՐԾ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ 317

ՎՈՒՄՅԱՆ 319

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈՆ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԸԱՐԺՈՒՄԸ 322

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԸԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ 326

ԹՅՈՒՐՔԻԱՆ ԷԼ ՄՏԱՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵՋ 328

ԱՐՇԱԼՈՒՅՄԻՆ 333

ՎԱՆԻ ԴՅՈՒՑԱԶՆԱՄԱՐՏԸ 338

ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ԿՈՎՈՒՄ 343

«ՋԱՐՋԱՆԴ» ԴԻՐՔԵՐԸ 344

ՍԱՀԱԿ ԲԵՅԻ ԴԻՐՔ 346

ՇԻՐՈՅԱՆԻ ԴԻՐՔԸ 349

ՀԱՄՈՒԴ ԱՂԱՅԻ ՋՈՐԱՆՈՅԸ 350

ԴԵԼԵԳԱՅԻԱ 532

Ծանոթագրություններ 354

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՍԵՉՅԱՆ


ԿՅԱՆՔԻՍ ՀՈՒՇԵՐԸ

Ձևավորումը՝ Արամ Ուտուտյանի
Շարվածք՝ Անահիտ Խղաթյան

Տպագրվել է

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:

010
72-53
in



ՓԱՆՈՒ
ԱՆՐԵՍԵՆՉՅԱՆ
Կյանքիս հուշերը